

ԱԿՆԱՐԿՆԵՐ
Մ Ի Ջ Ի Ն
Գ Ր Ա Կ Ա Ն
Հ Ա Յ Ե Ր Ե Ն Ի
Պ Ա Տ Մ ՈՒ Ձ Յ Ա Ն

Բ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

ОЧЕРКИ ПО ИСТОРИИ
СРЕДНЕАРМЯНСКОГО
ЛИТЕРАТУРНОГО ЯЗЫКА

2

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН
1975


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԿՆԱՐԿՆԵՐ
ՄԻՋԻՆ ԳՐԱԿԱՆ
ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Բ

A $\frac{III}{4366}$

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԿԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԾՐԵՎԱՆ 1975



Ներկա հատորում ամփոփված են Ձևաբանություն բաժնից՝ Հովվույմը և Շա-
րանյուսություն բաժնին ամբողջությամբ, որն ընդգրկում է պարզ և բարդ նախադա-
սության ուսումնասիրությունը: Առաջին բաժնում ներկայացված են միջին հայերենի
անվանական և դերանվանական հոլովման համակարգերը, նկարագրվում են հոլով-
ման տիպերը, հոլովի, թվի, արոշյալության ճերձկանական կարգերը: Երկրորդ բա-
ժնում ներկայացված է միջին հայերենի պարզ նախադասության կառուցվածքը՝ միա-
կազմ և երկկազմ, լրիվ և թերի նախադասությունները և նախադասության տար-
րական միավորների շարահյուսական հարաբերությունները: Բարդ նախադասու-
թյան ճննության մեջ ուսումնասիրվում են բարդ-համադասական և բարդ-ստորա-
դասական նախադասությունները, ինչպես նաև շտրահարական կապով բարդ նա-
խադասությունները:

Խ մ բ ա ղ ր ու թ յ ա մ բ
Դ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆԻ

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս Հ Ո Վ Ս Ե Փ Յ Ա Ն

Հ Ո Ւ, Ո Վ, Ո Ւ Մ

ՀՈՒՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեզվի քերականական համակարգի մեջ հոլովումը ենթադրում է յուրաքանչյուր բառի՝ միմյանց հետ որոշակի և կայուն համակարգային հարաբերակցության մեջ գտնվող ղանաղան ձևերի առկայություն, որոնց ամբողջությունը կազմում է տվյալ բառի հոլովման ձևաբանական հարացույցը:

Հոլովման քերականական կարգը հայերենում ընդհանրապես կապվում է անվան, դերանվան և որոշ դերբայների հետ:

Ըստ անունների և դերանունների հոլովման առանձնահատկությունների տարբերակվում են անվանական և դերանվանական հոլովումներ: Անվանական հոլովման մեջ միավորվում են գոյականները, ածականները, թվականները և դերբայները: Ի տարբերություն գրաբարի, միջին հայերենում հոլովման է ենթարկվում հիմնականում միայն գոյական անունը՝ Ածականները, թվականները, դերբայները, կորցնելով գոյականի հետ թվով և հոլովով համաձայնելու շարահյուսական առանձնահատկությունը, այլևս չունեն հոլովման սեփական հարացույցներ, ի հայտ չեն բերում հոլովման միայն իրենց հատուկ օրինաչափություններ և ձևականորեն չեն տարբերվում գոյականներից: Ներքանք հոլովվում են միայն փոխանունաբար, ըստ ընդհանուր կանոնների: Այդ պատճառով էլ բնության ընթացքում հիմնականում նկատի են առնվում գոյականները, թեև անհրաժեշտ դեպքերում բերվում են նաև օրինական ածականների, դերբայների և թվականների համապատասխան հոլովաձևերից:

Անվանական հոլովման հարացույցի մեջ իրենց ձևական արտահայտությունն են գտնում հոլովի, թվի և որոշյալության քերականական կարգերը: Դերանվանական հոլովման մեջ այդ կարգերին ավելանում է և դեմքի քերականական կարգը:

Այդ քերականական կարգերը միջին հայերենում զրոսեորվում են հիմնականում այնպիսի միջոցներով, որոնք հատուկ են հայոց լեզվին նրա զարգացման բոլոր փուլերում: Դրա հետ միասին, միջին հայերենի քերականական կառուցվածքը հանդես է բերում նաև միայն իրեն հատուկ առանձնահատկություններ: Գրաբարի համեմատությամբ այն բնորոշվում է թերականության և համադրականության խիստ սահմանափակումով և ի հաշիվ դրսի՝ կցականության (մենիմաստ ձևույթների բաղադրությամբ կազմված ձևերի) տարածմամբ: Գրաբարից ստացած ժառանգության հետ զուգընթաց միջին հայերենի

հոլովման համակարգում ի հայտ են գալիս այնպիսի նոր ձևեր, որոնք լեզվի պատմական զարգացման ընթացքում աստիճանաբար դերակշռող դիրք ձեռք բերելով ի վերջո հանդեցնում են լեզվի կառուցվածքի հետագա որակական փոփոխություն:

Նորակազմությունների տարածման և անկանոնությունների մասնակի վերացման հետևանքով լեզվի համակարգը զգալիորեն ձգտում է պարզեցման: Սակայն նորմայի տեսակետից լեզուն դեռևս կայունացած չէ իր քերականական ձևերի մեջ: Լեզո պատճառով էլ միջին հայերենի հոլովման համակարգը աչքի է ընկնում ներքին անմիօրինակությամբ, թերությունների բազմազանությամբ և նրանց տարբերակների միջև փոխանցումների ազատությամբ: Միևնույն քերականական իմաստն ունեցող ձևայինների այդ բազմազանությունը ստեղծվում է ի հաշիվ գրաբարից և միջին հայերենի տարբեր բարբառներից եկող լեզվական իրակությունների խառն ու առանց ընտրության օգտագործման: Գրաբարյան ձևերը որպես լեզվի մեջ գործուն օրինաչափություն դեռևս գերակշռող են (մանավանդ 1 ենթաշրջանում): Լեզո վերաբերում է հատկապես հոգնակի թվին, որտեղ մեծ չափով պահպանված է հոլովման համադրական կառուցվածքը՝ կցական կազմությունները, շնայած նոր տիպի մասնիկների առատությանը, ամբողջությամբ վերացրած մեծապես դիջում են համադրականներին: Մյուս կողմից, սակայն, հոգնակի թև հոլովների կցական կազմությունը հատուկ է գործածման մեծ հաճախականություն ունեցող բառերին (այսպես կոչված հիմնական բառաֆոնդին): Դրանով միջին հայերենը զրականության մեջ որոշ թվացող հավասարակշռություն է ստեղծվում գրաբարյան ձևերի և նորակազմությունների միջև:

Հոգնակի թվի թև հոլովների կցական կազմությունների տարածումը նրա պատճառով է այն բանին, որ հոգնակի հոլովումը ավելի ու ավելի է նմանվում եզակիին, քանի որ երկու դեպքում էլ անունները ստանում են նույն հոլովանիչ ձևայինները և միմյանց հակադրվում են միայն թվանիշ ձևայինների առկայությամբ (հոգնակի հոլովում) կամ բացակայությամբ (եզակի հոլովում):

Միջին հայերենում խախտվում է պարզ և խառն հոլովումների միջև եղած այն հստակ անջրպետումը, որ հատուկ էր գրաբարին: Այլևս համարյա չկան խառն հոլովումներ գրաբարյան իմաստով, երբ հոլովները եզակի սեռական-տրական-բացառականում ստանում էին մեկ հոլովիչ, իսկ եզակի գործիականից սկսած և հոգնակի բոլոր թև հոլովներում մեկ այլ հոլովիչ: Սակայն կարելի է ասել, որ միջին հայերենում չկա նաև գրաբարյան պարզ հոլովումների տիպը: Միջին հայերենի հոլովման համակարգում սակավ դեպքերում է պահպանվել այն վիճակը, երբ միևնույն հոլովիչը հետևողականորեն ի հայտ է գալիս բոլոր թև հոլովներում: Ավելի հաճախ հոլովման ընթացքում յուրաքանչյուր հոլով հանդես է բերում վերջավորության միայն իրեն հատուկ ձայնավորում (ինչպես՝ սեռական-տրական՝ ի, բացառական՝ է, գործիական՝ ով, ներդրական՝ ում): Լեյս դեպքում նույնիսկ «հոլովիչ» տերմինի գործածությունը պայմանական է պատճառով: Ստեղծվում է մի այնպիսի վիճակ, երբ հոլովումների զատակարգումը ըստ առանձին տիպերի հնարավոր է միայն սեռական-տրական հոլովաձևերի հիման վրա: Հոլովումները ճանաչվում են միայն այդ ձևերից, մինչդեռ գրաբարում բավական է վերցնել ցանկացած հոլովաձևը և հավանականության մեծ տոկոսով կարելի է սրոշել, թե հոլովման որ տիպին է պատկանում տվյալ բառը: Միջին հայերենում համակարգային

ընդհանրություններն ավելի շատ են հոլովման տարբեր տիպերի պատկանող բառերի միևնույն հոլովի ձևավորման, քան միևնույն տիպին պատկանող բառերի տարբեր հոլովաձևերի կազմության մեջ:

Բացի ամբողջ համակարգին վերաբերող այս առանձնահատկություններից միջին հայերենի հոլովումը զրաբարից տարբերվում է նաև մի շարք մասնակի դժերով, որոնք լեզվական նոր որակ ստեղծելու պրոցեսում բավական մեծ դեր են խաղացել: Փաստորեն սրանցից է սկսվել լեզվական համակարգի արմատական փոփոխության այն պրոցեսը, որը ի վերջո հանդեպից զրաբարից միանգամայն տարբեր կերպարանք ունեցող աշխարհաբարի կառուցվածքին: Այդ տեսակետից առանձնապես նշելի է եզակի գործիական հոլովի ու վերջավորությունների կիրառման սահմանների ընդլայնման փաստը: Այդ վերջավորությունները ինքնին նորություն չէր հայոց լեզվի հոլովման համակարգի համար, սակայն միջին հայերենի շրջանում, երբ ու տարրը այլևս չի գիտակցվում առանձնակի՝ որպես հոլովիչ, ի հակադրություն Վ(ւ) հոլովակազմիչի, այս ձևի տարածումը պետք է դիտել ոչ միայն որպես մի ուարդ քանակական պրոցես, այլ որպես համակարգի նախկին հավասարակշռությունը խախտող հիմնական ազդակներից մեկը: Սրանով է, որ սկսվում է պարզ և խառն հոլովումների վերացումը, որի մասին խոսվեց վերևում: Այդ նույն դերը, թեև ավելի նվազ չափով, խաղացել է նաև բացառականի է վերջավորությունը:

Սեռական-տրականի ոչ վերջավորության տարածումը կին հիմքից բացի նաև մի քանի այլ անունների վրա սկիզբ է տալիս ոչ հոլովմանը, որը նորակազմ վրան հոլովման հետ միասին հնարավորություն է ստեղծում հայերենի հոլովումների նոր դասակարգման, որի հիմքում ընկած է նաև իմաստային չափանիշը:

Ինչ վերաբերում է ներդոյական հոլովի նոր ձևավորմանը (ու՛մ վերջավորությամբ), ապա այդ ձևին հետագայում վիճակված էր դառնալ աշխարհաբար լեզվի երկու գրական տարրերակների հիմնական սահմանազատիչ հատկանիշներից մեկը:

Դերանվանական հոլովումը միջին հայերենում, պահպանելով հանդերձ իր հիմնական առանձնահատկությունները (միասնական հոլովիչի բացակայություն, արմատի յուրատեսակ փոփոխություններ, սուպլետիվիզմ և այլն), հանդես է բերում և որոշ փոփոխություններ: Այսպես՝ որոշ դեպքերում վերանում է անվանական և դերանվանական հոլովումների միջև եղած տարբերությունը, մասնավորապես, անվանական հոլովմանը հատուկ՝ գործիականի ու՛մ և բացառականի է վերջավորությունները տարածվում են նաև դերանունների համապատասխան հոլովաձևերի վրա, բացառականը և գործիականը սկսում են կազմվել տրականից, փոփոխություններ են նկատվում դերանունների տիպերի և նրանց կազմության առանձնահատկությունների մեջ և այլն:

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

ՀՈԼՈՎՄԱՆ ՏԻՊԵՐԸ

Անունների հոլովումը միջին գրական հայերենում իրադրծվում է մասնիկավորման (նյութական ձևությունների կցման) և հիմքի՝ ձևաբանական արժեք ունեցող հնչյունական հերթադալությունների միջոցով, ընդ որում, հայերեն-

նի համար բնորոշ է, որ ձեռլվանները բառին կցվում են վերջից, իսկ հնչյունական հերթագայությունների ենթարկվում է հիմքի միակ կամ վերջին վանկի վանկարար տարրը:

Ըստ հոլովների ձևավորման այդ առանձնահատկությունների միջին հայերենում տարբերվում են ներքին և արտաքին թեքումները: Ներքին թեքման դեպքում հիմքի հնչյունական հերթագայությունների տարրեր աստիճանները ծառայում են հոլովների քերականական ձևավորմանը: Իրանք քերականական իմաստ ունեն և որոշ դեպքերում հանդես են գալիս որպես հոլովների տարբերակման միակ միջոց: Ներքին թեքմամբ հոլովված բառը հանդես է գալիս որպես մեկ միասնույլ ամբողջություն, այն չի կարելի տրոհել ինքնուրույն ձևաբանական իմաստ ունեցող հատույթների: Դրան հակառակ, արտաքին թեքման դեպքում մասնիկավորման միջոցով ստեղծվում է հիմքի և վերջավորություն հակադրություն, հոլովների ձևավորման և տարբերակման ֆունկցիան կատարում են վերջավորությունները, իսկ հիմքը կամ մնում է անփոփոխ, կամ ենթարկվում է այնպիսի հնչյունափոխության, որ քերականական որևէ ծանրաբնույթվածություն չունի: Այս դեպքում հիմքակազմ տարրերի հնչյունափոխությունները կա՛մ շեշտի դիրքի փոփոխության հետևանք են, կա՛մ կախված են լեզվի մեջ հնչյունների կապակցության կանոններից, կամ էլ արտացոլում են նախկինում զործող հնչյունական օբյեկտները: Բացի այդ, ներքին թեքման ժամանակ առաջացող հնչյունական հերթագայության երկրորդ աստիճանը (որը համապատասխանում է սեռական-տրական հոլովի ցուցին) նույնական է և ընդհանուր հոլովման տվյալ տիպին պատկանող բոլոր անունների համար և միաժամանակ բացառվում է թեքման մյուս տիպերին պատկանող հիմքերի համար: Մինչդեռ արտաքին թեքման ժամանակ առաջացող հիմքի հնչյունափոխությունների տիպերը տարբեր են ու բաղմամբիլ, տարբեր հոլովումների ենթարկվող անուններ կարող են ունենալ հիմքի հնչյունափոխությունների մեկնույն տիպը, որ կախված է նրանց ընտրության նույնական պայմաններից:

Միջին հայերենում հոլովման տիպերը, կամ ինչպես ընդունված է ասել հայագիտության մեջ, հոլովումները որոշվում են եզակի սեռական-տրական հոլովաձևով: Եզակի ուղղական հոլովը բնորոշվում է մաքուր անվանական հիմքով և սեռական-տրականին (ինչպես նաև մյուս թեք հոլովաձևերին) հակադրվում է հոլովի և թվի քերականական զրո ձևությամբ: Այսպիսով, ուղղական և սեռական-տրական հոլովների միջև ստեղծվում է ձև-իմաստային հակադրություն, որը տարբեր հիմքերի դեպքում ձևաբանական տարրեր դրսևորում է ստանում: Ըստ այդմ էլ դասակարգվում են միջին հայերենի անունների հոլովման տարբեր տիպերը: Ամենից առաջ, ինչպես արդեն նշվեց, ըստ թեքության բնույթի (հիմքի հերթագայություններ և վերջավորություններ) հոլովման տիպերը բաժանվում են երկու հիմնական ձևական խմբերի՝ արտաքին թեքման հոլովումներ և ներքին թեքման հոլովումներ: Այնուհետև, յուրաքանչյուր խմբի մեջ ըստ հերթագայությունների և վերջավորությունների տարբեր տիպերի առանձնացվում են հոլովման տարբեր տիպերը կամ հոլովումները:

Հոլովումներն անվանվում են ըստ ուղղական և սեռական-տրական հոլովաձևերի ձևաբանական հակադրության երկրորդ անդամի, որը և հանդես է գալիս որպես սեռական-տրական հոլովի ցուցիչ: Այդպիսի անվանումը պետք է

հակասությունից, քանի որ արտաքին թերման դեպքում ևս ունենք հոլովա-
կազմիչ տարրերի հերթագայություն. սեռական-տրականի՝ նյութականորեն
արտահայտված ձևույթը հերթագայվում է ուղղականի զրո ձևույթի հետ:

Միջին հայերենում հոլովման տիպերի դասակարգումը ըստ սեռական-
տրական հոլովաձևի ներկայացնում է հետևյալ պատկերը:

Աղյուսակ 1

Ներքին թերմ		Արտաքին թերմ	
1. ու	արեղակն-արեղական	1. ի	ազգ-ազգի
2. ի	ունն-ուննի	2. ո	աթոռ-աթոռոյ
3. ի	դուստր-դատեր	3. ու	այդի-այդու
4. օ	կորայր-կորօր	4. ա	Աղամ-Աղամայ
5. ևա	արիւն-արեան	5. աւ	այրիկ-այրկան
6. աւու	օր-աւուր ¹	6. ևաւ	գալուստ-գալատեան
		7. ոջ	տիկին-տիկնոջ
		8. վաւ	ցորեկ-ցորեկվան

Ներքին թերման ժամանակ ստացվում են ուղղական և սեռական-տրա-
կան հոլովաձևերի հիմքակազմ տարրերի հերթագայությունների հետևյալ տի-
պերը (տրվում են ըստ առանձին հոլովումների):

Աղյուսակ 2

Հոլովում- ներ	Հերթագայութ- յուններ	Օրինակներ
ա	ը/ա	արեղակն-արեղական
ի	ը/ի	ակն-ակին
ե	1. ը/ե	մեղր-մեղի
	2. իւ/ե	ալիւր-ալեր
	3. ոյ/(ե)ւե	թոյր-թեւեր (բեր)
..	այ/օ	հայր-հօր
ևա	իւ/ևա	միւն-մեան
աւու	օ/աւու	օր-աւուր

Այս հերթագայությունները արդյ դեպքերում ուղեկցվում են նաև հիմքի
նախավերջին վանկի հնչյունափոխությամբ, որը ձևաբանական արժեք չու-
նի: Այս վերջին տիպի հնչյունափոխությունները հանդես են գալիս ոչ թե որ-
պես անունների հոլովման ակտիվ միջոց, այլ որպես թերման ժամանակ
ստացված կողմնակի արդյունք: Սակայն սրանց քննությունը կարևոր է միջին
հայերենի հոլովման համակարգի սպառիչ նկարագրության տեսանկյունից: Այս
տիպի հերթագայությունները, մեծ մասամբ լինելով շեշտի դիրքի փոփոխու-

¹ Հոլովման այս տիպը պետք է ընդունել որոշ վերապահությամբ կամ համարել անկանոն,
որովհետև նախ այն սահմանափակվում է միայն մեկ բառով, բացի այդ, սեռական-տրական
հոլովաձևը մոտենում է սուպյնտիվ կազմության. խախտված է ուղղական և սեռական-տրական
հոլովների միջև եղած նախկին հնչյունական հարաբերակցությունը, քանի որ միջին հայերենում
հիմքի ձայնավորը որոշակիորեն ուներ օ հնչյունը (հմտ. էջ 76-ի ծանոթագրությունը) գրա-
բարյան աւ երկբարբառի դիմաց: Միևնույն ժամանակում այս բառը օրինալափոքն կարող էր
համարվել ներքին թերման օ հոլովման պատկանող՝ աւր-աւուր, որտեղ ուղղականի և սեռա-
կանի հիմքերը այնքան ընդգծված տարբերություն չունեն, որքան միջին հայերենում:

թյան հետևանք, հատուկ են արտաքին թևքման հոլովումներին, բայց երբեմն հանդիպում են նաև ներքին թևքման ժամանակ:

Միջին հայերենում հնչյունափոխությունների կարող են ենթարկվել համարյա բոլոր ձայնավորները: Նույնիսկ ա, ո, է ձայնավորները իրենց կայունություններ պահպանել են միայն միավանկ հիմքերի դեպքում: Բաղմավանկ հիմքերն մեջ նրանք կարող են սղվել կամ փոխվել ը-ի, ինչպես ի. ու ձայնավորները: Սակայն ի տարբերություն վերջիններիս, ա, ո, է ձայնավորները կարող են մնալ նաև անփոփոխ, այնպես որ հանդիպում ենք միևնույն հիմքի և՛ մարուր, և՛ հնչյունափոխված ձևին, ինչպես՝ բեռանի-բերնի, ձմռան-ձմռան, ոսկորի-ոսկրի և այլն:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է հիմքերի հնչյունափոխությունների տիպերը, որոնք հատուկ են միջին հայերենի հոլովմանը: Հնչյունափոխություններից շատերը հանդիպում են համարյա բոլոր հոլովումների դեպքում, իսկ մի քանիսը սահմանափակվում են միայն հոլովման մեկ տիպով կամ նույնիսկ մեկ բառով:

Աղյուսակում նշվում են հնչյունափոխությունների ընտրության պայմանները և բերվում են օրինակներ: Ներքին թևքման հոլովումների դեպքում բերվում են միայն հոլովակազմիչ տարրին նախորդող վանկի հնչյունափոխությունները, քանի որ այդ տարրերի հերթադալությունները արդեն ներկայացվել են նախորդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Հնչյունափոխության տիպեր	Հոլովման տիպերը		Հնչյունափոխությունների ընտրության պայմանները	Օրինակներ
	արտաքին թևքում	ներքին թևքում		
1	2	3	4	5
Ի՛Ը	ի		միակ կամ վերջին փակ վանկ	1. թիւ-թւի 2. կարմիր-կարմրի
	ո		»	1. միս-մսոյ 2. արժիւ-արժւոյ
	ու		վերջին փակ վանկ	դարբին-դարբնու
	ա		»	Գաղիկ-Գաղկա
	ան		»	կոլինջ-կոլնջան
	եան		»	հանգիստ-հանգստեան
Ի՛Ս	ոջ		կլիկ հիմքը և նրանով բարդված հիմքերը	1. կին-կնոջ 2. ալբու կին-ալբուկնոջ
		ա	նախավերջին բաց վանկ	մրջիմն-մրջման
		ե	»	լիտր-լտեր
	ի		բաղմավանկ հիմքերի վերջին փակ վանկ	ամիս-ամսի
	ո		1. »	մարդարիտ-մարդարտի
			2. ի հանդեպ բաղմավանկ հիմքեր	ամուսին-ամուսնոյ այգի-այգոյ
Ի՛Ս	ու		»	աղաւնի-աղաւնու
	ա		վերջին փակ վանկ	տիկին-տիկնայ
	ան		»	կնիկ-կնկան
	եան		»	տեսիլ-տեսլեան
	ոջ		տիկլից հիմք	տիկին-տիկնոջ
	վան		տալի հիմք	տաբի-տաբվան

1	2	3	4	5
Ժ/Ը	ո		ի հանդու հիմքեր	Էկեղեցի-եկեղեցու
Ժ/Ը	ո		աղաւնի հիմքեր	աղաւնի-աղաւնու
ա/Ը	ի		բաղմամանի հիմքերի վեր- ջին փակ վանկ	դարպաս-դարպի
	ո		»	հասկայաւ-հասկայու
	ու		»	վանեկան-վանեկու
	ա		»	վահրամ-վահրամայ
ա/Շ	ի		բաղմամանի հիմքերի վեր- ջին փակ	1. մանու զաւ-մանու զի
	ո		իւս հանդու բաղմամանի հիմքեր	2. տկույ-տկուի կիլիկիայ-կիլիկիոյ
	ու		բաղմամանի հիմքերի վեր- ջին փակ վանկ	դամաք-դամաքու
	ան		»	լեղակ-լեղական
աւ/Ը	ի		միակ կամ վերջին փակ վանկ	1. դուր-գրի
	ո		»	2. կիրակմուտ-կիրակմուի
	ու		»	1. սուգ-սուգոյ
	ան		»	2. խորհուրդ-խորհրդոյ
	ան		միավանկ հիմքեր	1. ուղտ-լղտու
	ան		ուստ, ունի, ուլի հանդու հիմքեր	2. կուռնի-կուռնու խուռնի-խուռնու
աւ/Շ		ե	դուստր հիմք	1. դալու ստ-դալստան
		ու	վերջին աղաւնեկին նախորդող վանկ	2. ծնուհ-ծնուհան
				3. ժողովուրդ-ժողովրդ- դան
				դուստր-դստի
				դու զան-զզան
աւ/Շ	ի		սկզբի աղաւնեկով երկվանի բառի վերջին փակ վանկ	պտուղ-պտղի
	ո		բաղմամանի հիմքերի վեր- ջին փակ վանկ	անասուն-անասնոյ
	ու		»	կերակուր-կերակրու
	ան		աշուն, զարուն, մանուկ հիմքեր	1. աշուն-աշնան 2. զարուն-զարնան 3. մանուկ-մանկան
աւ/Շ		ա	ուն հանդու հիմքեր	անկում-անկման
	ի		վերջին բաց վանկ	լեզու-լեզվի
	ի		միավանկ յառ կամ բարդ բառի վերջին միավանկ բաղադրիչ	1. ղեզ-զիզի
	ո		»	2. մարդասէր-մարդա- սիրի
Վ/Ժ			»	1. ձէթ-ձիթոյ
	ու		»	2. Մարմաշէն-Մարմա- շէնոյ
	ու		»	1. զէհ-զիհու
	ոջ		Էլիւ հիմք ուլի հիմք	3. երկց-երկցու ուէր-ուէրոյ

1	2	3	4	5
է/Փ	Ի " ու		զոմէշ հիմք	զոմէշ-զոմշի զոմէշ-զոմշոյ զոմէշ-զոմշու
է/Ը	ոջ		զերետէր հիմք	զերետէր-զերետարոջ
ե/Ը	Ի		բազմավանկ հիմքի վեր- ջին փակ վանկ	հանդեպ-հանդիպ
ե/Փ		ա	ասեղն, վրածեղն հիմքեր	ասեղն-ասղան փածեղն-փածղան
ո/Ը	Ի		բազմավանկ հիմքերի վեր- ջին փակ վանկ	կորկոտ-կորկտի
Իւ/ե	Ի		ուրիւն ածանցով հիմքեր	պաղուծիւն-պաղու- ծիւնի
Իւ/ե-Փ/ջ	Ի		զիւղ հիմք	զիւղ-զիւղի
եւ/ե(է)	Ի		վերջին փակ վանկ	սենեակ-սենեկի
	բրիստոնեայ հիմք			բրիստոնեայ-բրիստոնէի
	"		եւայ վերջապարտությամբ աւ- ջյալ դերբայ	զերեալ-զերելոյ
	ան եան		լուսնեակ հիմք	լուսնեակ-լուսնեկան
		ա	վերջին փակ վանկ եղեամն հիմք	հեծեալ-հեծելեան եղեամն-եղեման
եւ/Փ	ա		բրիստոնեայ հիմք	բրիստոնեայ-բրիստոնայ
ոյ/ու	Ի		վերջին փակ վանկ	պատրոյգ-պատրուգի
	"		միավանկ հիմքեր	բոյս-բուսոյ
	ու		լոյս հիմք	լոյս-լուսու
ույ/ը	ոջ		բոյր հիմք	քոյր-քոջ
ոււ/ու	ա		ստուտած հիմք	ստուտած-ստուտոյ
ոս/ե	ա		նզիպտոս հիմք	նզիպտոս-նզիպտայ
էս/Փ	ա		էս հանգով անձնանուաներ	Դիմոնիգէս-Դիմոնիդոս

Հոլովման տիպերի № 1 աղյուսակում տրված դասակարգումը անհրա-
ժեշտ է ու քավարար միջին հայերենի անունների համար, քանի որ այդ 14 հո-
լովումները (6 ներքին թեքման և 8 արտաքին թեքման) ընդգրկում են բոլոր
անուններն առանց մնացորդի, Պետք է սակայն նշել, որ միջին հայերենի հո-
լովման տիպերը հավասարաթեք չեն իրենց գործածության սահմանների մեջ
մտնող անունների կառուցվածքային և իմաստաբանական միատարրության
տեսակետից, Այդ տիպերից մի քանիսը բնորոշվում են բառերի ձևական կամ
իմաստային ընդհանուր հատկանիշներով, իսկ մյուսները՝ ոչ, նկատելի է, որ
այդպիսի ընդհանուր հատկանիշներով օժտված բառերի խմբերը կարող են
ընդգրկել տվյալ հոլովման տարածման ամբողջ ոլորտը միայն այն դեպքում,
երբ վերջինս խիստ սահմանափակ է, մինչդեռ կիրառման լայն շրջանակներ
ունեցող հոլովումները բացի այդ խմբերից ընդգրկում են նաև մեծ թվով այն-

պիսի անուններ, որոնք միատարր չեն կառուցվածքի և իմաստի տեսակետից:

Հոլովման համակարգի այդ առանձնահատկությունները հնարավորությամբ են տալիս հոլովման տիպերի ձևաբանական-կառուցվածքային դասակարգման հետ զուգընթաց կատարել նաև նրանց ձևա-իմաստաբանական դասակարգումը, ընդ որում, այստեղ արդեն հաշվի են առնվում ոչ թե իրենց՝ հոլովումների, այլ նրանց տարածման ոլորտի մեջ մտնող անունների ձևական և իմաստային հատկանիշները:

Այդպիսի դասակարգում կատարվում է № 4 աղյուսակում: Այստեղ ձևական կամ իմաստային ընդհանուր հատկանիշների բացակայությամբ նշվում է բացասական նշանով (—), իսկ եթե ձևական կամ իմաստային ընդհանրությամբ բնորոշվող բառախմբերը ընդգրկում են տվյալ հոլովման բաշխման ոլորտը միայն մասնակիորեն, ապա այդ հոլովումները նշվում են աստղանիշներով:

Աղյուսակ 4

Հոլովման տիպեր		Բ ա շ Խ մ ա ն ո լ ո Ր տ ն ե ր ը	
աբաբքի թեքում	ներքին թեքում	ձևական ընդհանուր հատկանիշների հիմքեր	իմաստային ընդհանուր հատկանիշների հիմքեր
ի		—	—
ա		ի հանդու հիմքեր	—
ա		»	—
ա		—	անձի հատուկ առուներ և տեղանուններ
ան		ակ իկ, ուկ հանդու հիմքեր	—
ևան		ուստ, իստ, ունդ, ուրդ հանդու մի բանի հիմքեր	—
ոջ		—	անձանց առուներ կամ ազգակցական կապեր նշանակող առուներ
վան		—	մասնականային իմաստ ունեցող առուներ
	ա	բառավերջի բազմայն + ձայնորդ հապակցությունների հիմքեր	—
	ի	»	—
	ե	»	—
	եա	իւն-ուրիւն հանդու հիմքեր	—
	օ	այլ հանդու հիմքեր	նեղ ազգակցական կապեր նշանակող առուներ
	ուսու	—	—

Այժմ մանրամասն կանգ առնենք հոլովման յուրաքանչյուր տիպի բաշխման ոլորտի առանձնահատկությունների վրա, դրանք բնութագրելով ոչ միայն ձևական և իմաստային ընդհանրությունների տեսակետից, այլ նաև հաշվի առնելով յուրաքանչյուրի գործածման հաճախականության աստիճանը մյուսների համեմատությամբ, և միաժամանակ ցույց տալով, թե ինչ պայմաններում և ինչ շափերով անունները կարող են փոխանցում կատարել հոլովման մեկ տիպից մյուսին, այսինքն՝ պարզելով, թե որ դեպքերում են տարբեր հո-

լուծումները հանդես գալիս որպես դիրքային և որ դեպքերում՝ որպես ազատ տարբերակներ:

Ինչպես կարելի է տեսնել № 4 աղյուսակից, թեև հուլիսի տիպերի մեծամասնության կիրառման շրջանակների մեջ մտնող անունները կարելի է խումբավորել ըստ որևէ ընդհանուր հատկանիշի, սակայն այս երևույթը ոչ մի դեպքում բացարձակ բնույթ չի կրում, այսինքն՝ հուլիսի ոչ մի տիպ մի կողմից չի ընդգրկում բոլոր այն անունները, որոնք խմբավորվում են այս կամ այն ընդհանուր հատկանիշով, մյուս կողմից՝ տվյալ տիպի մեջ մտնում են և այլ անուններ, որոնք զուրկ են որևէ ընդհանուր հատկանիշից. կամ բնորոշվում են այլ հատկանիշներով: Այդ վերաբերում է թև՝ ձևական, և թև՝ մանավանդ, իմաստային հատկանիշներին, որոնք փաստորեն այս դեպքում կարող են միայն օժանդակ դեր խաղալ հուլիսի տիպերի բաշխման ոլորտի ընդհանուր բնութագրման համար, բայց չեն կարող ծառայել որպես հուլիսի տարբեր տիպերին պատկանող անունների անսխալ ու միանշանակ ճանաչման և տարբերակման միջոց: Այդ պատճառով էլ, բացի ի հուլիսից, անունների պատկանելությունը հուլիսի այս կամ այն տիպին հիմնականում որոշվում է ցուցակով:

Միջին հայերենում հուլիսի տիպերը իրենց ֆունկցիոնալ ծանրաբեռնվածության տեսակետից միմյանց համարժեք չեն: Անունների բաշխումը խիստ սահմանափակ է ոչ միայն արտաքին և ներքին թեքումների, այլև յուրաքանչյուր խմբի ներսում հուլիսի առանձին տիպերի միջև:

Ի տարբերություն զրաբարի, միջին հայերենում անունների հսկայական մեծամասնությունը պատկանում է արտաքին թեքման: Ներքին թեքումը ունի խիստ սահմանափակ գործածություն, պահպանվել է հիմնականում այն բառերի համար, որոնք կամ ընդհանուր են միջին հայերենի և զրաբարի բառամթերքում, կամ նորարանություն լինելով հանդերձ, ստացել են այնպիսի բառափոխական ածանցներ, որոնք հատուկ են նաև զրաբարի (ումն, ուքիւն):

Բացի այն, որ զրաբարյան ներքին թեքման ենթարկվող բառերի մեծամասնությունը միջին հայերենում անցել է արտաքին թեքման, միջին հայերենյան ամբողջ բառաշերտը՝ նորակազմությունները, մեծ թվով փոխառությունները և զրաբարից չվկայված այլ անուններ, հուլիսվում են բացառապես արտաքին թեքման հուլիսներով:

Ինչ վերաբերում է հուլիսի առանձին տիպերին, պետք է նշել, որ գործածման հաճախականության տեսակետից բացարձակ գերիշխանություն է նրվաճել արտաքին թեքման ի հուլիսը, որը ի դեպ, զրաբարում էլ ամենալայն տարածումն ունի: Թեև այդ հուլիսի բաշխման ոլորտի մեջ կարելի է առանձնացնել որևէ ընդհանուր հատկանիշով օժտված անունների որոշ խմբեր (ինչպես, օրինակ՝ ալ, աւ հանդուլ հիմքերը, ենթակայական և հարակատար դերայինները և այլն), բայց այդ խմբերից դուրս մնացած ձևական և իմաստային անմիատարրությամբ բնորոշվող բառերը այնքան բազմաթիվ են և կառուցվածքի և իմաստաբանական տեսակետից այնքան բազմազան, որ ավելի ճիշտ կլինի ի հուլիսի տարածման սահմանները որոշել բացառապես կարգով՝ միջին հայերենի հուլիսի անունների ամբողջ բառամթերքից դուրս հանելով այն անունները, որոնք պատկանում են մյուս հուլիսներին: Եվ քանի որ դրանք բոլորը միասին վերցրած կազմում են ի հուլիսի պատկանող անունների միայն մի փոքր մասը (մանավանդ եթե հաշվի առնենք, որ ի հու-

յովումը իր մեջ է ներառում այլևայլ հոլովումների պատկանող անունների մի մասը, այդպիսով կիսելով դրանց տարածման ոլորտը և հանդես գալով որպես այդ հոլովումների աղատ տարբերակ), ապա արտաքին թեքման ի հոլովումը կարելի է ընդթաղրել որպես աֆենատարածված, ընդհանուր, նվազագույն սահմանափակումներով, հնարավոր փոխանցումների ամենալայն սահմաններ ունեցող հոլովում, որը կարող է զուգահեռաբար գործածվել հոլովման մյուս տիպերի մեծամասնության հետ, բացի այն դեպքերից, երբ վերջիններս խըստորեն պայմանավորված են իրենց դիրքով: Ի տարբերություն մյուս, ցուցակով որոշվող խմբերի, ի հոլովման պատկանող անունները բաց խումբ են կազմում, որը սահմանափակված չէ. կարող է նորանոր անուններ ընդունել իր մեջ, մասնավորապես միջին հայերենում, երբ այն հարստանում էր մի կողմից՝ ի հաշիվ հարյուրավոր օտար փոխառությունների, մյուս կողմից՝ այլ հոլովումներից թափանցող անունների (ի հոլովման պատկանող անունների ցանկը տե՛ս հավելվածում):

Արտաքին թեքման հոլովումների մեջ գործածության հաճախականության տեսակետից երկրորդ տեղում են ու և ու հոլովումները: Մյուսն տարածման ոլորտները իրենց ծավալի զգալի մասով համընկնում են: Սա բացատրվում է նրանով, որ ծագումնաբանորեն միջին հայերենի ու հոլովման ենթարկվող անունների մեծ մասը կապվում է գրաբարյան ու հոլովման հետ, մինչդեռ դարարի ու հոլովման ենթարկվող անուններից միայն մի քանիսն են պահպանել իրենց հոլովման տիպը, մյուսներն անցել են ի հոլովման, Ու և ու հոլովումների բաշխման ոլորտի մեծագույն մասը զբաղվում է ձևական ընդհանուր հատկանիշ ունեցող բառերի խումբը, որ բնորոշվում է բառավերջի ի ձայնավորով: Կարելի է առանձնացնել նաև անորոշ դերբայների խումբը, որը XII—XIV դարերում հոլովվում էր հիմնականում ու հոլովմամբ, ու-ով դեպքերը դեռևս սակավ են և սկսում են տարածվել միայն երկրորդ ենթաշրջանում:

Այսպիսով, ի հոլովումից հետո միջին հայերենի ամենագործուն և կենսունակ հոլովումներն են ու-ն և ու-ն: Դրա ապացույցն է նաև այն, որ մի շարք օտար փոխառություններ ենթարկվում են այդ հոլովումներին (օր.՝ պայլ-պայլոյ կամ պայլու, անսիզ-անսիզոյ և այլն):

Ստորև բերվում են ու և ու հոլովումներին պատկանող անունների ցանկերը՝ սկզբնաղբյուրային վկայություններով հանդերձ:

Ու հոլովում

ազոաւոյ վԱ—31

աղամորդոյ Ֆր.—303, 307

աթոռոյ Ֆր.—433, վԱ—140, շԹ—201,

ՍՍԴ—69, ԴՂՎ—1—14, էՄԱ—58

Ակորոյ ԴՂՎ—2—112

ահոկոյ ՄՂ—136

աղախնոյ ԴՂՎ—1—71, 3—150

աղաւնոյ ԳՎ—19, ԱՕԲ—85, ԱԱԱ—

152

աղաւնոյ ՄՂ—54, ԳՎ—28

աղէկոյ վԱ—155

աղուեսոյ վԱ—5—156

աղտոյ Ֆր.—304

ամարանոյ ԴՂՎ—1—47

ամբրաւենոյ ՅԿ—153

ամուանոյ ԴՂՎ—1—29, 2—90, 3—45

ամպոյ ՆՇ—613—ՆԲԴ—58, ԱՕԲ—48

ամսոյ ՍՍԱ—71, ԳՎ—10, ՂՀ—416

Այասոյ ՅԿ—153

այգեպարանոյ ԳՎ—55



այգետեղիոյ ԳՎ—60
 այգոյ ՎԱ—6—179, ԳՎ—35, ԽԿ—136
 այգւոյ ՄՀ—44, ԳՎ—114
 այլազգոյ ՎԱ—168
 այնպիսոյ ԱՕԲ—88
 անանխոյ ԳՎ—168
 անասնոյ ՍՍԴ—117, ԳՐ.—120, ՄՆ—
 124
 անսնոյ ՍՍԴ—137
 Անդալիոյ ԳՎ—90
 Անիոյ ԴՀՎ—1—14
 Անոյ Ն. տ.—17
 Անւոյ Ն. տ.—17
 անձրեւոյ ԳՎ—12, 104
 անճարակոյ ՀՍ—141
 անսիզոյ ՍՍԱ—5, 41
 Անտաքոյ ՍՍՏ—104
 անցնելոյ ՅԿ—151
 անօրինոյ Ֆր.—304
 Աշոտոյ ԴՀՎ—1—6, 2—19
 աջոյ Ֆր.—314, ՀԱԳ—191, ՂՀ—415
 առաջնոյ ՎԼ—186, ՎԱ—225, ԷՄԱ—24
 առջնոյ ՍՍԱ—47, ՍՍԴ—104
 առաքելոյ ԷՄԱ—38
 առիծոյ ՎԱ—114, ԳՐ.—67, ԷՄԱ—6,
 ԱՕԲ—213
 առուտրոյ ՍՍԱ—81
 առնելոյ ԳՐ.—4
 Աստուածորդոյ Ֆր.—298
 աստուծոյ ՆՇ—612, Ֆր.—244, ՎԼ—
 158, ԷՄԱ—41, ԱՕԲ—18, ՄՆ—130
 արդարոյ ՀԵ—149
 արժանոյ ՍՍԴ—146
 արծաթոյ ՍՍԴ—117, Ֆր.—258, ՄՆ—
 156
 արծրոյ ՎԱ—80, ԳԱ—189
 արմաւենոյ ՀԹ—195
 արջոյ ՎԱ—105, 114
 արտաքսոյ ԳՐ.—184, 187
 արտոյ ԴՀՎ—3—3
 արևոյ ՎԱ—49
 արօտոյ ԷՄԱ—24
 ատաղբերիցոյ ԴՀՎ—1—47
 քաղկենոյ ԳՎ—206
 քահնոյ ՎԱ—159

քարեպաշտոնոյ ԴՀՎ—3—51
 քարոյ Ֆր.—252, ԿԵ—125, ԳՐ.—110,
 ՀԹ—194
 քարւոյ ՄՀ—18, ԳՎ—11,
 քարտոյ ԳՎ—93
 քերանոյ Ֆր.—368, ՎԱ—211, ԳՐ.—
 68, ՄՀ—7, ԳՎ—93, ԱՕԲ—49,
 ԷՄԱ—59
 քերոյ ԳՎ—67
 քնկենոյ ՅԿ—153
 քոռոյ ԳՎ—210
 քորքոսոյ ԳՐ.—5, 10
 քորենոյ ՎԱ—5—162
 քորոյ ԱՕԲ—182
 քուոյ ՎԱ—5—143
 քուսոյ ԳՎ—28
 զայլոյ Ֆր.—305, ԳՎ—211
 Գառնո ԴՀՎ—3—149
 զարւոյ ՄՀ—50, ԳՎ—32
 զարոյ ՎԱ—21, 3—104, 5—154
 զբոյ ՎԱ—285, ԳԱ—263
 զհհենոյ Ֆր.—420, ՀԱԳ—203
 զեղոյ ԷՄԱ—126, ԳԱ—219
 զետնոյ ԳՎ—17, 39, ԷՄԱ—110
 զետոյ ՎԱ—74, ԷՄԱ—11, ՄՆ—121
 զերելոյ ԳԱ—104
 զերոյ ԽԿ—152, Ֆր.—329, ԳԱ—263
 զերւոյ ՆԲԴ—60
 զինոյ ՍՍԴ—124, ՆՇ—612, ԳՐ.—32,
 ԳԱ—194, Ֆր.—367
 զինւոյ ՄՀ—10, ԳՎ—37
 զիշերոյ ՎԱ—5—139, ԳՎ—11, ՄՆ—
 138, ԳԱ—194
 զիշոյ ՀԹ—181
 զիւոյ ՅԿ—152
 զլխոյ Ֆր.—352, ՎԱ—52, ՍՍԴ—84,
 ՍՍԱ—73, ԳՐ.—4, ՄՀ—3, ԳՎ—205,
 ԳԱ—216
 զոզոյ ԳՐ.—25, ՄՀ—12
 զոյոյնոյ ԳՐ.—4
 զոզոյ ՎԱ—2—87, ՍՍԴ—23
 զսմշոյ ԳՎ—130
 զործոյ Ֆր.—308, ՍՍԴ—143, ՄՆ—
 134, ԳԱ—220, ՀԹ—137
 զրաստոյ ՅԿ—152
 Գրիգորոյ ՂՀ—417, ԴՀՎ—1—12

գրքոյ ԱՕԲ—17
 դալարոյ ՎԱ—5—164
 դղմենոյ ԳՎ—42
 դղմոյ Գր.—143
 դեղոյ Գր.—100, ԳՎ—123
 դժոխոյ ՄՂ—88
 դիպաւածոյ ՀՍ—128
 դիւահարոյ Գր.—165
 դրացնոյ ՎԱ—11
 ելնելոյ ՂՀ—144
 եկեղեցոյ ՍՍԴ—11, ՎԱ—5—175,
 էՄԱ—101, ՄՆ—152
 եկեղեցւոյ ՍՍԴ—24, ՎԱ—212
 երազոյ ՎԱ—106, ՎԱ—2—82
 երամոյ հԿ—137
 երկխոյ Ֆր.—306
 զաֆրանոյ ՀԱԳ—197
 զենոյ Ֆր.—307
 զմասոյ ԳԱ—218
 զեռնոյ ՎԱ—5—155
 ըզտոյ Գր.—45
 ըմպելոյ Գր.—3
 ըստեղծուածոյ ՎԱ—150
 թագոհոյ ԴՀՎ—1—58
 թաղուհոյ էՄԱ—52
 թաղելոյ ՆՇ—614
 թերահաւատոյ ՍՍԴ—24
 թզոյ Գր.—44
 թվենոյ ԳՎ—31
 թթենոյ ՅԿ—153
 թիոյ Գր.—134
 թղթոյ հԿ—136
 թմրհնտոյ ՄՀ—32, 82
 թշնամոյ Ֆր.—279, ԳԱ—138
 թողլոյ Գր.—22
 թոքոյ ՄՀ—53
 թռչնոյ ՄՀ—125
 ժամոյ Գր.—190
 ժողովոյ ԴՀՎ—3—49
 իմաստնոյ ՄՂ—92, ՆԲԴ—86, ԱՕԲ—19
 իշոյ ՎԱ—5, Գր.—58, ԳՎ—28, ՄՂ—
 102
 իջնելոյ Գր.—83
 իրիցոյ ԴՀՎ—3—49
 իւղոյ Ֆր.—317
 լալոյ հԿ—182
 լեզւանոյ ՎԱ—135
 լեղւոյ ԱՕԲ—53
 լեղոյ Գր.—154, ՀԹ—173, ԱՕԲ—53
 լերդոյ Գր.—139
 լուոյ ԳՎ—79
 լուսոյ Ֆր.—245, ԿԵ—125, Գր.—63,
 հԿ—142, ՄՆ—148, ԳՎ—120
 լօռեցոյ ԴՀՎ—1—3
 խաբեցելոյ Ֆր.—329
 խաղողոյ ՄՀ—96, էՄԱ—66
 խայթելոյ Գր.—45
 խիւղոյ Գր.—157
 խնձորոյ ԳՎ—191
 խոտոյ էՄԱ—19
 խորհրդոյ ՎԱ—2—81, ԳԱ—157, Ֆր.—
 331
 խոցոյ ՀԹ—132
 խոփոյ ՎԱ—11
 ժաղկոյ ԳԱ—256
 ժառայելոյ Ֆր.—269
 ժառոյ ՎԱ—31, ՄՀ—37, ԳՎ—36,
 ԳԱ—158
 ժարաւոյ Գր.—131, էՄԱ—6, ԱՕԲ—10
 ժերոյ Ֆր.—330, էՄԱ—80
 ժիրանոյ ՀԱԳ—196
 ժխոյ ԳՎ—79
 ժծոյ Գր.—43
 ժննդոյ ԱՕԲ—42
 ժովոյ Գր.—131
 կաղմխոյ ԳՎ—93
 կաղնոյ ՆՇ—614, ԱՕԲ—64
 կաղնոյ ԳՎ—74
 կաշառոյ ՍՍԴ—30, 73
 կաշոյ Գր.—38
 կարասոյ էՄԱ—126
 կարկտոյ Ֆր.—308
 կարոտելոյ Գր.—4
 կաքոյ ՀԹ—146
 կեղեղոյ Գր.—81
 կենդանոյ Գր.—41, ԳՎ—74, Ֆր.—
 299
 կենցաղոյ ԱՕԲ—8
 կեշառեցոյ հԿ—145
 կերակրոյ ՍՍԴ—157, Գր.—26, ՄՀ—3,
 ՎԱ—79, ԱՕԲ—55
 կերպոյ Գր.—8

- կթելոյ ԳՎ—83
 կժոյ ԽԿ—143
 կենսասենոյ ԳՎ—130
 կիլիկիոյ ԳՎ—74
 կիպարոյ ԳՎ—108
 կիսոյ ՍՍԴ—157, ՍՍԱ—19, Գր.—48,
 ՄՀ—44
 կողոյ ԳՎ—153
 կողջատոյ Գր.—116
 կովոյ ՎԱ—107
 կորոյ (կոր) Գր.—49
 կորոյ (կոյր) Յր.—330
 կորուսելոյ ԳԱ—220
 կովոյ ՎԱ—41, Յր.—302, ՍՍԴ—116,
 ՀԱ—138
 կտրելոյ ԳՎ—157
 կրկնոյ ՍՍԴ—45
 հալոյ Գր.—106
 Հալիձորոյ ԴՀՎ—3—235
 հապալսոյ ԳՎ—130
 հարամոյ ՍՍԴ—143
 հարատոյ ԳՎ—65, ՄՆ—103, ԱՕԲ—83
 հատատոյ Յր.—278, ՄՀ—18
 հաւոյ Գր.—46
 Հեթմոյ ՅԿ—151
 հեծնելոյ Ե. տ.
 հիթոյ ԳՎ—17, ՎԱ—218
 հիւսիսոյ ԳՎ—68, ԽԿ—137, ԱՕԲ—9
 հողոյ Յր.—250, Գր.—10, ՍՍԴ—130,
 ՄՆ—107, ՀԹ—184, ԳԱ—216, ՄՂ—
 85, ԱՕԲ—10
 հողւոյ Յր.—246, ՍՍԴ—130, Գր.—
 89, ՄՀ—16, ԴՀՎ—1—2
 հողածնոյ ԽԿ—152
 հողմոյ ՎԱ—106, ՎԱ—5—165, Գր.—
 4, ՀԱԳ—188
 հողոյ Յր.—434, ՍՍԴ—122, Գր.—17,
 ԳՎ—33, ԳԱ—263, ՆՔԴ—89, ՀԱԳ—
 195
 հովոյ ՎԱ—235, Գր.—4
 հոտոյ ԳՎ—28, էՄԱ—59
 հորթոյ ՎԱ—11
 հորոյ ՎԱ—134, ՍՍԴ—137
 հրոյ Յր.—250, Գր.—29, ՆՇ—616,
 ՎԱ—2—90, ՀԹ—169, ԱՕԲ—50
 ձախոյ ՄՀ—49
 ձիթենոյ ՎԱ—2, ԱՕԲ—262
 ձիթոյ Գր.—211, ՄՀ—40, ԳՎ—185
 ձիոյ ՆՇ—613, ՎԱ—180, ՍՍԴ—170,
 ԳՎ—28, ԽԿ—152
 ձմերայնոյ ԱՕԲ—53
 ղարթոյ ԱՕԲ—172
 ճանաչելոյ ԳՎ—158
 ճանճոյ Գր.—79
 ճաշոյ ՎԱ—244, էՄԱ—64
 ճիճոյ ԱՕԲ—316
 ճլտոյ Գր.—84
 ճորտոյ ՍՍԴ—133
 ճփոյ ԳՎ—79
 ճիւնոյ ԳՎ—81
 մաղձոյ Գր.—5, 109
 մատղենոյ ՍՍԴ—46
 մարախոյ ԳՎ—78
 մարդոյ Յր.—289, ՀԵ—149, ՍՍԱ—5,
 Գր.—12 ԳՎ—28, ՆՇ—614, ԽԿ—147,
 ՀԹ—180
 մարդոյ ՆՔԴ—84
 Մարմաշիւնոյ ԴՀՎ—1—17
 մարմնոյ Յր.—245, Գր.—3, ՄՀ—5,
 ԽԿ—146, ՀԹ—181, ԳԱ—216,
 ԱՕԲ—10, ՎԱ—211
 մաքոյ ՅԿ—153
 մաքւոյ ՄՀ—51, ԳՎ—216
 մեծագնոյ ՎԱ—267
 մեռելոյ էՄԱ—26, ԳԱ—220, ՄՂ—97
 միայնոյ էՄԱ—55
 միոյ Յր.—428, ՎԱ—105, ՍՍՏ—113,
 ԳՎ—102, Գր.—208, ԿԵ—200,
 էՄԱ—11
 միջոյ ԳՎ—130
 միւոյ ԳՎ—224
 մորթոյ ՍՍԴ—44, Գր.—15
 մսոյ Գր.—159
 մրգոյ ՎԱ—66, էՄԱ—10
 մրջիւնոյ ԳՎ—78
 մորենոյ ԳՎ—83, ՀԱԳ—196
 մրտենոյ ՄՀ—44, ՂՀ—150
 մրրոյ ԳՎ—102
 յիշելոյ ՆՇ—632
 յիշուելոյ ՅԿ—151
 յունուարոյ ՀԱ—169

նարկիզոյ ՀԱԳ—196
 նեղոյ Գր.—4, 67
 նկրքսոյ ՂԶ—243
 նշոյ ԳՎ—136, 205
 նորոյ ՀԱԳ—197, էՄԱ—62
 նուկոյ ԳՎ—106
 նստատեղոյ ԱՕՐ—43
 նստոյ ՄԶ—63
 նոնենոյ ԳՎ—130
 շահոյ ՎԱ—231
 շեմոյ ՎԱ—211
 շինոյ ՍՍԴ—16
 շինուածոյ ԱՕՐ—47
 շինոյ Գր.—175
 շնչոյ Ֆր.—307, Գր.—6, ՄԶ—53, ԱՕՐ—10
 շոգոյ ՄԶ—10, 105
 շոգոյ ԳՎ—192
 շոքոյ ՅԿ—153
 ոգոյ ԽԿ—145, ԱՕՐ—49
 ոգրոյ Ֆր.—256
 ոսկոյ Ֆր.—329, ՍՍԴ—117, էՄԱ—38
 ոսկոյ ՎԱ—210, էՄԱ—36
 ոսկրոյ Գր.—54
 որդոյ Ֆր.—248, ՄՆ—140, ԳԱ—107, ՎԱ—146, ՍՍԴ—133, էՄԱ—57
 որդոյ ՍՍԱ—3, ԴԶՎ—1—45
 որթոյ ՎԱ—5—155, ԳՎ—55, Ֆր.—414
 որսոյ ՎԱ—98, ՍՍԴ—154
 ուժոյ ՍՍԴ—166, ՍՍԱ—57, ՄԶ—23, Գր.—7
 ուլոյ ՎԱ—5—161, ՄԶ—131
 ուղղոյ ՄԶ—13
 ուղտոյ ՎԱ—20
 ուղոյ ՎԱ—247
 ուտելոյ ՅԿ—151
 շափոյ ՍՍԴ—11, ԳՎ—15, 55
 պակասելոյ Գր.—87
 Պահլաւունոյ ԴԶՎ—1—48
 պտղատելոյ ՀՍ—141
 պայլոյ ՍՍԱ—41
 պառոյ ՄՂ—100
 պատանոյ ՎԱ—145
 պարդոյ ԳՎ—11
 պիւլպիւլոյ ԳԱ—263
 պղծոյ ՀԲ—162, ՄՂ—90
 պորտոյ Գր.—138, ԳՎ—208
 պտղոյ Ֆր.—304, ԳՎ—124, ԴԶՎ—3—51
 պրքոյ ԴԱ—261
 քալնչելոյ ՅԿ—151
 քերմայնոյ Գր.—48
 քլոյ Գր.—123
 քորոյ Ֆր.—305
 քորոյ ԳՎ—28
 քրոյ ՎԱ—159, Գր.—208, ԳՎ—4, ԴԱ—218, ՄՂ—102, ԱՕՐ—93
 Թոստոմոյ ԴԶՎ—2—86
 Թաւակդիտոյ ԴԶՎ—1—57
 տամարացոյ Ֆր.—316
 Թանդղտոյ ԴԶՎ—3—51
 սգոյ ՎԱ—226
 սեղանոյ Ֆր.—332, ՄՆ—141
 սերկելոյ ՂԶ—442
 սերմանելոյ ԳՎ—159
 սիրելոյ ՎԼ—154
 սիրոյ Ֆր.—244, ՍՍԱ—3, Գր.—67, էՄԱ—46, ՄՆ—122, ԴԱ—105
 Սիւնոյ ԴԶՎ—2—86
 սկիտոյ էՄԱ—135
 սնթերոյ Գր.—139
 ստոյ ՎԱ—209
 սրբոյ ՎԱ—210, ՍՍԴ—36, ԴԶՎ—1—8
 սրբուհոյ ԴԶՎ—3—108
 սրոյ ՍՍՏ—137, ՀՍ—90
 վարդենոյ ԿԵ—155, ԳԱ—131
 վարդոյ ԴԱ—137
 վարձելոյ ՅԿ—151
 վերջնոյ ՍՍԱ—37, ՎԱ—225
 վիրոյ ՀՍ—142
 վճարելոյ ՅԿ—151
 վտակոյ ԴԱ—272
 տալոյ Ֆր.—303
 տանոյ ԱՕՐ—413
 տանոյ ՄԶ—51
 տարոյ ՎԱ—131, ՍՍԴ—86, ՍՍԱ—11, Գր.—114, էՄԱ—41, ԱՕՐ—147
 տարւոյ ՄԶ—49, ԳՎ—64
 տեղոյ ՍՍԴ—14, ԴԱ—262, Գր.—124
 տեղոյ ԳՎ—2, ՄՂ—89
 տեսոյ ՍՍԱ—13, Ֆր.—440, ԿԵ—190, ԴԱ—104

տիկնո 'ԴՀՎ—3—214
 տիվանայաշոյ ՍՍԱ—39
 տկոյ էՄԱ—169
 տղայոյ ՂՀ—243
 տղմոյ ՀՍ—141
 տնկոյ ԳԱ—255, ՀԱԳ—195
 տոլոյ ԳՎ—213
 ցաւոյ Գր.—4, ՄՀ—143, ՎԱ—6, ԳՎ—
 164
 ցեցոյ էՄԱ—83
 ցողոյ ԿԵ—164
 ցորեկոյ ՄՀ—117, 128
 ցորենոյ ՎԱ—34, ՍՍԴ—171, ԳՎ—205
 ցրտայնոյ ԳՎ—48
 ցրտոյ ԳՎ—63, ՀՍ—122
 փարիսեցոյ Ֆր.—417
 փիճոյ ԱՌԲ—31
 փիճւոյ ԳՎ—79, 94
 փնթոյ ՍՍԴ—99
 փոխելոյ Գր.—36
 փողոյ էՄԱ—12
 փոշոյ էՄԱ—24

փոսոյ ԳՎ—9, 54
 փորձելոյ Ֆր.—290
 փորձոյ ԳՎ—15
 փորոյ Գր.—66, ՂՀ—146
 փորվածոյ ԱՌԲ—47
 փքոյ Ն. տ.—50
 քաղցոյ Ն. տ.—10
 քամոյ Գր.—86
 քամւոյ ԳՎ—119
 քապրենոյ ՄՀ—145
 քարոյ ԴՀՎ—3—149
 քերձեկոյ ԳՎ—222
 քերոյ Գր.—38
 քնոյ Ֆր.—435, Գր.—91, ԱՌԲ—57
 քոպիսոյ ՀԵ—154
 քոսոյ Գր.—39
 քրիստոնոյ ՍՍԴ—107
 օղոյ ՎԱ—185, ՄՀ—5, ԳՎ—12, ԱՌԲ—
 32
 օձոյ Գր.—33
 օրհնելոյ ՂՀ—247

Ու հոլովում

ագռաւու ՎԱ—334, ՀԱԳ—217
 ադամորդու հԿ—146, ՀՍ—117
 ահու ՍՍԴ—75, ՀԱԳ—164
 Աղասու ՍՍՏ—128
 աղաւնու ԱՌԲ—136
 Աղեքսանդրու հԿ—180
 աղէկու էՄԱ—29
 աղուեսու ՎԱ—7, 188, էՄԱ—29
 ամուսնու ԴՀՎ—3—61
 ամսու ՍՍՏ—113, ՆԲԴ—110, հԿ—138,
 ԱՌԲ—26
 այգու ԳԱ—282
 այժմու հԿ—139
 այծու ՆԾ—619, ՄՀ—42, ԳՎ—24,
 ԱՌԲ—90
 այնպիսու ՄՀ—12, ՄՂ—108, ԱՌԲ—49
 անընկճահու ՍՍԴ—114
 անտարու ԱՌԲ—176
 ապակու ՄՂ—137
 ապիկու ԿԵ—201
 ապրելու հԿ—135
 առաւօտու Ֆր.—30, ԿԵ—124, ՎԱ—
 22

210, ԳԱ—193, ՄՀ—95, ԳՎ—3,
 ՀԲ—224, ՆԲԴ—52, էՄԱ—11, ԱՌԲ—
 58
 առիծու Ֆր.—344, Գր.—36, էՄԱ—7,
 ՀԲ—217
 առուեղերու ՀԱԴ—196
 աստնվորու ՀՍ—122
 արագլու ՎԱ—319
 Արգրումու ՀՍ—86
 արծըու ՎԱ—110, Ֆր.—396
 արջու ՎԱ—115, ԴՎ—72, ՂՀ—244
 արևորդու ՀԱԳ—197
 արևու Ֆր.—301, ԿԵ—125, ՄՀ—46,
 ԳՎ—44, ԳԱ—216, ՆԲԴ—49, ՀԲ—
 222, ՀԱԴ—163
 աւագու ՎԱ—285
 բաթու ՀԱԳ—227
 բայժու ՂՀ—258
 բարկանալու ԱՌԲ—486
 բարու հԿ—146, ՎԱ—6—180, ՀՍ—
 128
 բարտու ԱՌԲ—274, 364

- քլչարու շԱԳ—196
 քորենու ՎԱ—5—162
 քորու ԱՌԲ—454
 քոցու ՎԱ—305
 զալլու ՎԱ—55, ՂԶ—243
 զալու ՎԱ—77, ԱՌԲ—213
 զալու հԿ—137, ԿԵ—229, ՆՔԴ—74
 զարու ԱՌԲ—112, 144
 զբու ՄՂ—118
 զեհենու հԿ—146, ՄՆ—132, ՇԲ—138
 զետու ՎԱ—306
 զերու ՆՔԴ—44, շԱԳ—173
 զինու Գր.—76, էՄԱ—61, ՄՂ—138
 զիշերու շԱԳ—197, ՆՔԴ—52
 զլիսու Ֆր.—330, Գր.—217, հԿ—169,
 շԱԳ—196, ԱՌԲ—61, ԱԱԱ—154
 զոդու ՂԶ—431
 զոլորշու Գր.—66
 զոդնալու շԱԳ—219
 զոմշու ՎԼ—155
 զոմիշու ՂԶ—244
 զործելու Գր.—32
 զրաստու ՎԱ—255, ՍՍԴ—165, ՍՍԱ—
 63, ԳՎ—212
 զրակնու ՍՍԴ—119, ՍՍԱ—73
 զարբնու ՆՔԴ—71
 զարպսու ՍՍԴ—106, ՍՍԱ—7
 զիհու ԱՌԲ—34, 83
 զրամու ՍՍԴ—45
 հկեղեցու էՄԱ—31
 Երզնկանու շԱԳ—164
 Երիցու ՍՍԴ—45, ՄՂ—94, 106
 ըդտու ՎԱ—202, ԳՎ—130, ԱՌԲ—67
 ընկերու շԱԳ—197
 ընկուդու ՎԱ—149
 Հսպերու շՍ—86
 բրախու ՄՂ—105
 բրգվանու ԱՌԲ—71
 Թափելու Ֆր.—297
 Թմրհնտու ԱՌԲ—263
 Բշնամու ԳԱ—205
 Ժամու ՎԱ—210, Գր.—19, ԳՎ—35,
 ՇԲ—198, ԳԱ—154, ՄՂ—101,
 շԱԳ—221
 Ժմու ՍՍԱ—31, ԱՌԲ—54
 Ժողովու Ֆր.—329
 Իժու Գր.—48
 Իշու ԿԵ—195, ՄԶ—41, ՆՇ—613,
 ԱՌԲ—75, ՎԱ—57
 Իսպահնու ՎԱ—126
 Իրիցու ՍՍԴ—52
 Լալու Ֆր.—291, շՍ—103
 Լալստկու 84—156
 Լեդու Ֆր.—319, ԱՌԲ—76
 Լինալու ՇԲ—228
 Լուսանալու ՆՔԴ—47
 Լուսու ՆՔԴ—43, ԱՌԲ—59
 Լալու Ֆր.—479, ՆՔԴ—56
 Լազու ՍՍԴ—157
 Լուսնակելու ԱՌԲ—91
 Լուսնվելու ԱՌԲ—21
 Լատու ՎԱ—167
 Լիզալու Գր.—209
 Լիբու ՄԶ—27, ԱՌԲ—117
 Լոզու ՆՔԴ—95, ԱՌԲ—184
 Լորու Գր.—38
 Լորատու ՎԱ—162, էՄԱ—38, ՍՍԴ—
 116
 Ժախու Ֆր.—476
 Ժակու ԳՎ—182
 Ժիրանու շԱԳ—196
 Ժովու Ֆր.—365, ՍՍԱ—71, ԿԵ—134,
 Գր.—8, ԳՎ—8, ՇԲ—159, ՆՔԴ—77,
 ՄՂ—176
 Ժոցու շԵ—170, ՆՔԴ—43
 Կախվելու ԱՌԲ—265
 Կաղնու ԱՌԲ—307
 Կաշու ՄԶ—12, ԱՌԲ—60
 Կալու ՍՍԴ—171
 Կապնու ՍՍՏ—127
 Կարօտու հԿ—136
 Կաքվու ՄԶ—51, ՆՔԴ—77, շԱԳ—70,
 ԱՌԲ—67
 Կաֆայու ՄՂ—146
 Կենալու հԿ—143, ՄՆ—134, ՆՔԴ—60
 Կենդանու ԱՌԲ—22
 Կենցաղու ՎԱ—29
 Կերակրու Գր.—134
 Կիպարու ԱՌԲ—110
 Կիսու ՎԱ—307
 Կղրու ՄԶ—119
 Կողցալու Գր.—117

կովու ՍՍԴ—122, ԳՎ—74
 կռնկու նՇ—633
 կովու ԱՕԲ—17
 կտաու ՍՍԱ—85
 հագու ԱՕԲ—504
 համքաու ՄՂ—95
 հայելու ՄՆ—118
 հայու Ֆր.—278, ՀԹ—228
 հարաու վԱ—2—69, ԳԱ—193
 հարկու ՍՍԴ—13
 հաու ԿԵ—141, ՄՀ—10, ԳՎ—205,
 ՆԲԴ—45
 հաւտու ՀԹ—228, ՀԵ—167
 հաքմու ՀԱԳ—176
 հոգալու ՀԹ—137
 հոդու Ֆր.—309, վԱ—319, Գր.—11
 ՄՆ—139, ՆԲԴ—50, ՀՍ—86, ՀԱԳ—
 161, ԱՕԲ—31
 հողու Ֆր.—464, ԽԿ—146, ՀԹ—179,
 ՆԲԴ—40, ՀՍ—115
 հողու ԳՎ—30
 հովու ԳՎ—30
 հորթու ԱՕԲ—95
 հորու վԱ—314, էՄԱ—36
 հրու ՄՂ—118, ՀՍ—115
 ձագու ԱՕԲ—41
 ձիթենու ԱՕԲ—453
 ձիու Ֆր.—305, ՀԵ—168, վԱ—215,
 ԱՕԲ—75, ԱԱԱ—152
 Ղազարու Ֆր.—317, ԴՀՎ—3—35
 ղազու ՀԱԳ—227
 ղաթրճու ՄՂ—95
 ճաղու ՂՀ—246
 ճամփու ԿԵ—162, ԽԿ—143, ՀԹ—185,
 ՄՂ—93
 ճամփու ԱՕԲ—75, էՄԱ—45
 ճաշու ՀԵ—164, վԱ—54, 266, էՄԱ—
 22, ՀԹ—226
 ճկրու ՆԲԴ—64
 ճորաու վԱ—313, ՍՍԱ—5, 11
 ճուկու վԱ—175
 մաու նՇ—610, Ֆր.—245, վԱ—44,
 ՍՍԴ—86, ՍՍԱ—19, Գր.—25, ՄՀ—
 134, ՀԹ—127, ԽԿ—145, էՄԱ—28,
 ՄՆ—128, ԳՎ—5
 մահաբաթամու ՄՀ—32

մասողու ՍՍԴ—44
 մարաջախու ՍՍՏ—130
 մարդու Ֆր.—329, վԱ—309, ԽԿ—146,
 ՆԲԴ—47, ՀՍ—126, ԱՕԲ—28,
 ԱԱԱ—151
 Մարիամու, էՄԱ—55, ԴՀՎ—3—206
 մարմնու Ֆր.—491, ԱՕԲ—170, ՀՍ—
 145
 մարտիրոսու Ֆր.—304
 մէկու Ֆր.—399
 Մշու ՀԱԴ—164
 մոշու ԱՕԲ—352
 մորթու վԱ—319
 Մրուանու ՀԱԴ—197
 լաւելուածու ԱՕԲ—86
 նախանձու ՍՍԴ—37, էՄԱ—48
 նայելու ՀԱԴ—172
 նաու Ֆր.—443
 նեղու Գր.—169
 ներու ՀԹ—222
 նդրկու ՀԹ—156
 նշու ԱՕԲ—130, 182
 նուկու ն. տ.—152
 շաքաթու վԱ—23, ՄՀ—120, ՆԲԴ—46
 շաքթու ՍՍԱ—65, ՄՂ—84
 շահու Ֆր.—307, ԿԵ—210, ՍՍԴ—11,
 ՍՍԱ—83, ՆԲ—85, վԱ—6—184
 շարու ՀԱԴ—196
 շինու ՍՍԴ—139, ԳՎ—79, վԱ—6—
 180, ՀՍ—127, ՀԱԴ—195
 շնչու Գր.—107
 շոգու ԱՕԲ—235
 շոդու ԳՎ—30, ԱՕԲ—456
 սգնու ԱՕԲ—282,
 սսկու Ֆր.—455, էՄԱ—31, ԱԱԱ—155
 որդու ԴՀՎ—1—67, 3—20, էՄԱ—31
 որձու ԳՎ—157
 որսու ՄՆ—103
 ուժու ԱՕԲ—119, 300
 ուլու ՄՀ—19, ԳՎ—220, ԱՕԲ—95
 ուղաու վԱ—197
 ուռելու ԱՕԲ—267
 ուռու ՄՀ—44, ՄՂ—99, ԱՕԲ—129
 Ուոռմհիու ՄՂ—93
 ուրբաթու ԳԱ—144
 չարկմու ՍՍԴ—95

շարժում ԲՂ—86

շափում ՍՍԴ—163, ԳՎ—205

շքում ՅԿ—156

պախում ՄՀ—67, ԱՌԲ—64, ԱԱԱ—150

պահում ՍՍԴ—17, ՄՀ—21, ԳՎ—73,

Գր.—18, ՄՆ—121, ԳԱ—234

պալում ՍՍԱ—73

պապում Ֆր.—476, ՀԵ—169, ՍՍՏ—109,

ԷՄԱ—75, ՀԹ—229, ՀԱԳ—218

պառկելում ԱՌԲ—381

պատանում ն. տ.—49

պէթրմայնում ՄՂ—94

պոհրանում ԱՌԲ—138

պորտում ն. տ.—412

պուրղաղում ՄՂ—111

պսակում ՍՍԴ—107

Պօղոսում Ֆր.—303

պօլանում ՀԹ—221

ջալամում ՎԱ—59

Ջուղայեցում ԴՀՎ—3—160

սաղում ԳՎ—28, ԱՌԲ—109, 243

սալամում ՄՀ—125

Սախալթում ՂՀ—239

սակաում ԳՎ—11

սիրամարդում ԳԱ—195

սիրելում ՀԹ—192

սիրում Ֆր.—381, ՀԵ—156, ԿԵ—141,

ՆԲԴ—44, ՎԱ—163, ԽԿ—145, ՀԹ—

146, ՀԱԳ—165

սովում ՎԱ—34

սուրմայում ՀԱԳ—196

սպասում ՎԱ—161

Ստամպուլում ԲՂ—93

վաճակնում ՍՍԱ—83

վաշխում ՍՍԱ—73

վարդենում ՀԹ—140

վարդում ԿԵ—134, ԳԱ—222

վարձում ՍՍԱ—71, ՎԱ—147, ԷՄԱ—8

վնասում ՍՍԴ—141, ԱՌԲ—167

տաղնապում ՀՍ—85

Տաթևացում ԴՀՎ—2—125

տանելում ՄՆ—146

տարում ՎԱ—43, ՀԱԳ—164, ԱՌԲ—5.

ՆԲԴ—51, ՀՍ—79

Տարսուսում ՍՍՏ—124

տեղում ԱՌԲ—64, 275

տեսում ԽԿ—137, Ֆր.—258, ՎԱ—294,

ԳԱ—197, ՄՆ—180, ՀՍ—68

տէրում ՀԱԳ—196

տիրում ՄՂ—92, ՀԱԳ—219

տրտմելում ԱՌԲ—157

ցամքում ԳՎ—103

ցանում ԳՎ—19, 23

ցաւում ԿԵ—122, ՎԱ—5, Գր.—124,

ՄՀ—45, ՆԲԴ—51, ԱՌԲ—6, ԳՎ—

119, ԱԱԱ—152

ցրտում Ֆր.—290, ԱՌԲ—63

փարսում ԱՌԲ—466

փոկում ՆԵ—620

փողում Ֆր.—452, ՎԱ—17, ՀԹ—181

փորում ՎԱ—6—180, ՀԱԳ—196, ԱՌԲ—

29

փորվածում ԱՌԲ—47

փոքում ԴՀՎ—1—16, ԱՌԲ—7

րամում Գր.—154, ԽԿ—186, ԿԵ—164,

ՀԱԳ—203, ԱՌԲ—124

րառասնում ՀՍ—85

րնում ՄՀ—46, ԱՌԲ—80, 145

ըովում ԱՌԲ—80

օձում ՀԵ—155, ԳՎ—82, Ֆր.—47, ՎԱ—

130, ԷՄԱ—67, ՆԲԴ—55, ԱՌԲ—246

ֆլորում ՎԱ—221

ֆրիկում Ֆր.—331

Ըստ ֆունկցիոնալ ժանրաբեռնվածության հաջորդ տեղում է արտաքին թիքման և հոլովումը, որը զրաբարի համեմատությամբ զգալիորեն սահմանափակվել է և յս հոլովման պատկանող անունների մի մասը անցել է ի հոլովման և Իջին հայերենում, ինչպես և զրաբարում, և հոլովման ոլորտը համարյա ամբողջությամբ բնութագրվում է իմաստային հատկանիշով՝ անձի հատուկ անուններ (քիչ թվով՝ տեղանուններ)։ Դրանցից բացի, և հոլովման են պատկանում նաև մի քանի հասարակ անուններ, որոնք սակայն կարող են

հոլովվել նաև այլ հոլովումներով՝ Ստորև բերվում են ա հոլովման պատկանող անունների օրինակներ.

Աղամայ հի—171, էՄԱ—29
Անթափայ ՍՍՏ—119
Ապղարիպա ԴՀՎ—1—48
Աստուածուրհեայ ՅԿ—158
Արտաւազա ԴՀՎ—1—37
Աւտարկա ԴՀՎ—3—57
Բագարատայ ԴՀՎ—1—37, ԱՕԲ—7
Բէլայ ՄՂ—85
Գագկա ԴՀՎ—1—35, 45
Գէորգա ն. տ.—2, 13, 47
Գնդեվանա ԴՀՎ—3—20
Գրիգորայ ԴՀՎ—1—55, 3—109
Դիմոնիդայ էՄԱ—12
Եգիպտեայ ՄՂ—112
Եսայեայ Ֆր.—303
Երկաթա ԴՀՎ—1—17
Զաքարեա ն. տ.—57
Թենիկա ԴՀՎ—3—53
Իվանէա ԴՀՎ—2—101
Լապաստակա ԴՀՎ—1—37
Խոսրովկա ն. տ.—12, 3—223
Խոցաղեղա ԴՀՎ—3—117
Հայրապետա ԴՀՎ—2—78
Հոռմայ ՍՍՏ—109, էՄԱ—18
Ճամկայ ՀԱԳ—221
Մամբանայ ԴՀՎ—3—51

Մարիամայ Ֆր.—317
Մխիթարա ԴՀՎ—1—43, 67
Մսրայ ՍՍՏ—119, ՂՀ—245, ԳՎ—5, 25
Մրուանա ԴՀՎ—1—31
Յակորայ ԴՀՎ—2—21
Յոհանա ԴՀՎ—1—36
Շահիկայ ԴՀՎ—2—127
Շուշանա ԴՀՎ—1—31, 49
Չինումաշինայ ԳԱ—121
Ուահակայ ՍՍԴ—36
Սմբատայ ՍՍՏ—99, ՂՀ—258, ԴՀՎ—1—45, 2—19, 3—142
սուլթանայ ՀԲ—201
սուլտնայ ՎԱ—312
Սսայ ՀԲ—198
Վահրամայ ԴՀՎ—1—12, 2—127
Վահրմայ ՂՀ—415
Վաղթանկա ԴՀՎ—3—77
Վասակա ն. տ.—41
Վարազա ն. տ.—77
Վարդանայ ԴՀՎ—1—67
Վարդկա ԴՀՎ—3—146
Տիգրանայ ԴՀՎ—1—7
տիկնայ ն. տ.—66, 2—127, 3—16
բումուհեայ ՅԿ—158
ֆուլանայ ՍՍԱ—41 և այլն:

Մնացած հոլովումները ունեն խիստ սահմանափակ դործածություն, նրանց տարածման ոլորտը ընդգրկում է ընդամենը մեկ-երկու տասնյակ անուններ:

Արտաքին թերման ան հոլովման պատկանող անունների մեծ մասը ունի ձևական ընդհանուր հատկանիշ՝ հիմքի իկ. ակ. ուկ հանգը: Բացի այդ հիմքերից ան հոլովման կարող են ենթարկվել (այլ հոլովումների հետ զուգահեռաբար) նաև զարուն, աշուն, խունկ, ուղեղ (ըղեղ, դուղ), կոլինջ և այլ բառեր: Օրինակ՝

Աղբերկան ԴՀՎ—1—67
աղջկան ՎԱ—137, ՍՍԴ—102, ՄՂ—68, էՄԱ—36, ԱՕԲ—129
այրկան ՍՍԴ—84, ՍՍԱ—19, 55
արկան ԱՕԲ—25, 428
երկան ՂՀ—423
անձկան ՆԲԴ—74
աշնան ՄՀ—140, ԳՎ—10, 53, ՀԲ—120

դարնան ՄՀ—65, ԳՎ—10, հի—134, ՄՆ—101, ՆԲԴ—43, ՄՂ—103, ՀԱԳ—199, ԳԱ—157
Դորդկան ԴՀՎ—1—35
Իղրայրկան ն. տ.—4
Երեցկնկան ՍՍԴ—52
Էրիկաման Գր.—158
ըղեղան Գր.—6, ԱՕԲ—47, 84
դրդան Գր.—5, 52

յղեղան Գր.—57, 65, 75

յղղան Գր.—51

շեղկան շԹ—221

լուսնեկան նՔԴ—54

խնկան նՔԴ—68, շԱԳ—176

ծիծեռնկան նՔԴ—78

ծիծռկան շԱԳ—174

կնկան ԿԵ—217, ՍՍԴ—86, ՍՍԱ—19,

ՎԼ—158, ՄՇ—42, էՄԱ—98, շԹ—

188, ԱՕԲ—428

կոլնջան Գր.—111

մանկան Գր.—170, ՂԶ—144, էՄԱ—

23, 62, ՄՆ—103, նՔԴ—51, շՍ—

102

Շուշկան ԴՇՎ—1—49

Պապկան ն. տ.—30

պտղան ԳՎ—196

Ջունդկան ԴՇՎ—1—7

Սարգսկան ն. տ.—47

տըտան ՎԱ—228, 235

փրոան նՇ—622

Արտաքին թերման եւան հոլովումը ունի սահմանափակ կիրառություն՝ իստ. ուստ. ունդ. ուրդ վերջավորություններ մի քանի հիմքերի դեպքում, Սրանք դրաբարում եւ ունեին նույնատիպ հոլովում։ Այսպես՝

զալստեան Ֆր.—244, ԽԿ—134, ԴՇՎ—

1—34

զալստէն ԴՇՎ—3—76

թագստեան ՄՆ—116

ժողովրդեան ՄՆ—115

ծննդեան ՎԱ—5—150, ՍՍԱ—19,

Գր.—34, էՄԱ—62, ԳԱ—107,

ԱՕԲ—26, շՍ—143

կորստեան ՄՆ—116

հանդստեան Ֆր.—264, ՄՆ—113,

ԴՇՎ—1—3, 2—64, 127

հեծեկեան շՍ—92

սննդեան ՎԱ—5—150

տեսլեան ԽԿ—134, ԳԱ—216, Ֆր.—

335

Արտաքին թերման ոչ հոլովումը զրաբարի համեմատությամբ նորակազմություն է միջին հայերենում, թեեւ զ հոլովակազմիչ տարրը վկայված է դեռեւս զրաբարից։ Այն սահմանափակ կիրառությամբ հանդես էր դալիս որպես սեռական, տրական, բացառական հոլովների ձևաբանական ցուցիչ՝ ո կամ ո/ա հիմքով մի քանի անունների դեպքում (կին, մի. ամեղի, այգի, կղզի և այլն)։ Բացի այդ, ի հանդու որոշ հիմքերի համար նրանով կազմվում էր ներդոյական հոլով² (ինչպես կտեսնենք ստորև, հոլովի կարգի քննության ժամանակ)։

Սակայն զ հոլովակազմիչով ձևերը զրաբարում չէին միավորվում հոլովման առանձին տիպի մեջ, քանի որ շունեին հարացուցային ամբողջականություն և ավելի տարածված ու սովորական (ոչ վերջավորությամբ) ձևերի կողքին մնում են որպես սեռական և տրական հոլովների ձևաբանական տարբերակներ։

Միջին հայերենում զ հոլովակազմիչը, միանալով նախկին հոլովիչ ձայնավոր ո-ի հետ, առաջացնում է հոլովման նոր տիպ՝ արտաքին թերման ոչ հոլովումը, որն իր ոլորտի մեջ է առնում մի շարք այլ անուններ։ Այս հոլովման պատկանող անունները խմբավորվում են իմաստային ընդհանուր հատկանիշով՝ նշանակում են անձանց, մի քանիսը ցույց են տալիս ազգակցական կապ։ Այդ խմբից դուրս է մնում ոչ հոլովման պատկանող զին բառը։ Ոչ հոլովումը միջին հայերենում ներկայացված է հետևյալ անուններով.

² Գրաբարի ներդոյական հոլովի մասին տե՛ս Յ. Դ. Туманян, Древнеармянский язык, М., 1971, էջ 195—200.

այրոշ ՎԱ—174

այրակնոջ 34—154

այրուկնոջ ՍՍԴ—85

գերէտրոջ ՍՍԴ—78

գնոջ 34—154

ընկերոջ ՍՍԴ—58, 149, 162, ՎԱ—172, էՄԱ—44

ընկերոշ ՎԱ—149

իւրիցակնոջ ԴՀՎ—1—17

կնոջ ՆՇ—631, Ֆր.—304, 399, ՎԱ—158, 205, ՍՍԴ—84, 130, ԳՎ—76,

ԽԿ—150, ԳԱ—107, ԶԹ—163,

ԱՕՐ—42, 151

կնոշ ՎԱ—135, 191

յարոջ ՆԹ—45

ունեւորոջ 34—154

տիկնոջ ՍՍԱ—37, ԴՀՎ—1—31, էՄԱ—55

տիրոջ ՍՍԴ—120, 148, ՍՍԱ—73, 83, ՍՍՏ—99, 119, ՄՀ—44, էՄԱ—18,

ՄՆ—122, ՆԹԴ—72, ԶԱԳ—200,

ԱՕՐ—142

քուրոջ ՍՍԴ—109, էՄԱ—58, 59

քուրոշ ՎԱ—39, 142

քրոջ ԶԵ—169

քրոշ ԶԹ—229

Արտաքին թերման վան (ուան, ւան) հոլովումը նույնպէս նորակազմ հոլովում է, որ սկզբնական շրջանում խիստ սահմանափակ կիրառութիւն ունի, նույնիսկ այդ հոլովման պատկանող անունների մի մասը միջին հայերենի դարդացման առաջին ենթաշրջանում չի հանդիպում սեռական-տրական հոլովածեով և վերականգնվում է բացառականի միջոցով։ Այս հոլովման սրատկանող անունները խմբավորվում են իմաստային հատկանիշով՝ նշանակում են ժամանակ ցույց տվող անուններ։ Այս հոլովման պատկանող անունների մեջ նույնպէս կա ընդհանուր հատկանիշով շնորոշվող մեկ բառ՝ մահ-մահուան, որը ավելի հին կազմութիւն է, քան ժամանականիշ բառերինը, վկայված է ղեռնս դրարարի ժամանակաշրջանից։ Օրինակ՝

դիշերվան ՎԱ—316, ՄՂ—107, ԱՕՐ—93

եզուցվան՝ ՍՍԱ—15

իւրիւուան ՄՂ—105, ԳԱ—136*

մահուան ՎԱ—139, ՍՍԴ—115, Գր.—192, ՄՀ—143, ԴՀՎ—1—18, ԽԿ—

136, էՄԱ—21, ՄՆ—117

վաղվան՝ ՎԱ—221, ԳՎ—63, ՄՀ—95, ԶԹ—120, ՆԹԴ—70, ԶԱԳ—222

տարվան ԱՕՐ—390

ցորեկվան ԱՕՐ—93

օրվան՝ ՍՍԱ—13

Ներքին թերման հոլովումների մեջ ֆունկցիոնալ ծանրաբեռնվածութիւն տեսակետից առաջին տեղում է եւ հոլովումը, որին պատկանում են իւն, ուրիւն հանգով հիմքերը։ Եթե սրանցից առաջինները թվով քիչ են, ապա ուրիւն ածանցով կազմված բառերը գործնականորեն անսահմանափակ խումբ են կազմում, քանի որ այդ ածանցը հայերենի ամենապորժուկ ածանցներից է լեզվի դարդացման բոլոր շրջանների համար։ Միջին հայերեն մատենագրութիւն մեջ վկայված բազմաթիւ օրինակներից ստորև բերվում են մի քանիսը.

առողջութեան Գր.—14, 135

արեան ՆՇ—611, Ֆր.—252, ՍՍԴ—39,

Գր.—18, ՄՀ—54, ՄՆ—116, ԱՕՐ—

86

արթնութեան ԱՕՐ—57

դիջութեան Գր.—115, ԳՎ—17, 67

դիտութեան ԳՎ—45

երկարկենդանութեան ԴՀՎ—1—1

* Վերականգնված են բացառական հոլովածեից։

Երկրաւորութեան ԳՎ—2
 զուգաւորութեան Գր.—4
 ծերութեան Գր.—28
 կարմրութեան ԱՕԲ—72
 ձկան ԳՎ—27
 մեծութեան ՄՆ—116
 նեղութեան Գր.—6
 շարագրութեան Գր.—12
 ողորմութեան Ֆր.—262
 որսորդութեան ՄՀ—111

ջերմութեան ԳՎ—176
 տաքութեան Գր.—4, ՂՀ—158
 տեսութեան ՄՆ—135
 տէրութեան ԴՀՎ—1—7
 տկարութեան Գր.—190
 փողայեցաւորութեան Գր.—7
 փրկութեան Ֆր.—249, էՄԱ—26
 քաղցրութեան ԳԱ—216
 քչկութեան Գր.—87

Ներքին թեքման ա. ի. և հոլովումները գրաբարի համեմատությամբ ունեն
 սահմանափակ կիրառութիւն։ Սրանք հիմնականում պահպանել են հոլովման
 գրաբարյան պատկերը։ Այդ հոլովման պատկանող անունները միավորվում
 են ձևական ընդհանուր հատկանիշով՝ հիմքի վերջի բաղաձայն + ձայնորդ կա-
 պակցությամբ, այնպէս որ նրանցից յուրաքանչյուրի տարածման սահմաննե-
 րը հնարավոր է որոշել միայն ցուցակով։ Ներքին թեքման ա հոլովումը մյուս-
 ների համեմատությամբ դեռևս ավելի կենսունակ է և նույնիսկ իր մեջ է առել
 որոշ հիմքեր, որոնք գրաբարում հոլովվում էին ի—ա հոլովմամբ, ինչպես՝
 եզին—եզան, գառին—գառան, լեռին—լեռան և այլն։ Այս հոլովումներին պատ-
 կանող բառերի մի մասը միաժամանակ կարող է հոլովվել նաև արտաքին
 թեքման հոլովումներով։ Ներկայացնում ենք անունների բաշխումը ըստ այդ
 հոլովումների։

Ներքին թեքման ա հոլովում

ալան ԽԿ—146
 աղեղան ԿԵ—156, ՀԹ—154, ՆՔԴ—
 102, ՀՍ—93
 ամարան ՄՀ—140
 ամառան ԳՎ—10, 98
 ամրան ՄՂ—113
 ամռան ԱՕԲ—61
 այծեման ԳՎ—199
 անկման ԳՎ—20
 անուվան ԴՀՎ—2—64
 ասխան Գր.—43, 49
 արեղական ԿԵ—125, ՄՀ—13, ԳՎ—3,
 16, ՀԹ—197, ԱՕԲ—9
 արծակման ՍՍԴ—102, էՄԱ—114
 աւանդման ՄՆ—139
 աւերման ՀՍ—93
 բաժանման ՍՍԴ—100
 դադաթան Գր.—54, 91
 դառան ՄՀ—147, ՄՂ—98
 գղձան ԳՎ—39
 գոշման ՀՍ—93

դատման ՍՍԱ—13, ՄՆ—117, ԴՀՎ—
 2—52
 դողման ԳԱ—133
 դրան ՎԱ—210, ՍՍԱ—13, ՂՀ—237
 ԳՎ—57, էՄԱ—49, ՄՂ—87
 դռան ԴՀՎ—1—29, ՀԹ—176, ՆՔԴ—
 69, էՄԱ—43
 եզան ՎԱ—155, ԱՕԲ—33
 եղեղան Ֆր.—319, ԳՎ—32, ԽԿ—135,
 ԳԱ—209
 եղեման ԳՎ—154
 եղնդան ԳՎ—32, 220
 բղնկան ՄՀ—41, ԱՕԲ—446, ԱԱԱ—
 150,
 զենման ՀԱԳ—207
 թաղման ԴՀՎ—1—55
 թրջման ՂՀ—417
 ժամատան ՄՂ—90
 իջման ԴՀՎ—3—53
 լարման ԱՕԲ—122
 լեռան ԱՕԲ—430

լուծման Գր.—74, ՄՀ—127, 148,
ԱՕՐ—61
խառնման ՄՀ—109
խլրդան ԳՎ—82
խնդման ԿԵ—157
խորտակման ԽԿ—143
ծաղկման ՀԱԳ—207
ծծման ԱՕՐ—469
ծիման ՄՂ—128
կանգնման ԱՕՐ—394
կատարման Գր.—184
կողման ԳՎ—3, ՄՆ—103, ՀՍ—93
հալման ՀԱԳ—207
հատման Գր.—19
հարցման ԳՎ—7
հալալուսան ԽԿ—135
հուսան ՀՍ—125
հսկման ԷՄԱ—27
հրախրման ՄՆ—139
ձկան Ֆր.—314, Գր.—38, ՂՀ—422,
ԱՕՐ—25
ձկայն ՎԱ—175
ձմերան ԿԵ—131
ձմեռան ՄՀ—140, ԳՎ—17, 41
ձմռան ԳՎ—10,
ձմրան ՄՂ—104, ՀՍ—122
ճաշակման ԷՄԱ—10
մեծատան Ֆր.—295, ՎԱ—78, ՄՆ—127
մթան ՄՆ—125
մկան ԱՕՐ—190
մրջման Գր.—30, 82, ՀԹ—181,
ԱԱԱ—149
մրջման ՎԱ—82
մոջման ԱՕՐ—188

յիշման ԽԿ—183
նռան ՄՀ—7, 27, ԳՎ—30, ՂՀ—416
նթր—46, ՀԱԳ—176, ԱՕՐ—65
շան ԿԵ—211, ՎԱ—275, Գր.—67,
ԱՕՐ—213
շարժման Գր.—6, ԱՕՐ—54
շինման ՍՍԴ—71
ողան Գր.—189
ոսրան ՄՀ—45, ԳՎ—56, ԱՕՐ—125,
ԱԱԱ—377
որդան ԳՎ—28, Գր.—9
ուսման ՄՀ—18, ՆԹԴ—87
սլաշտման ՄՂ—85
սղտորման Գր.—4
ջերման Գր.—19, ՄՀ—3, ՂՀ—158,
ԱՕՐ—119, ԱԱԱ—375
սերման Գր.—164, ԳՎ—19, ՀԹ—168,
ԱՕՐ—25, 408
սիսոռան ՄՀ—47, 83, ԳՎ—20, ԱՕՐ—73,
ՂՀ—148
սղբնկան ՄՀ—145
սնկան Գր.—144, 172, ԱՕՐ—238,
ԱԱԱ—153
սսկանման ԷՄԱ—121, 17
ստածման ՄՀ—72, ԳՎ—95
ստեղծման ԱՕՐ—31
վաճառման ԷՄԱ—26
տան ՍՍԴ—118, ԳՎ—3, ԱՕՐ—19,
ՂՀ—258
փածղան Գր.—23, 108, 196
փայծղան ՄՀ—125, 145, ԳՎ—163,
ԱՕՐ—33, 150
քրտան ԱՕՐ—79

Ներքին թւքման ի հոլովում

ակին ՎԱ—140, ԳՎ—65, ԷՄԱ—119
անձին ՎԱ—82, ՍՍԴ—31, ՍՍԱ—9, 47,
ԳՎ—85, ԷՄԱ—25, ՄՆ—113, ՀԹ—
158, ՄՂ—92, ԱՕՐ—157
բեռին Ֆր.—315, ՎԱ—58, ՍՍԴ—121,
ԴՀՎ—1—70
դառին Գր.—182, ՄՀ—19, ԳՎ—205,
ԿԵ—173, ԷՄԱ—20, ՀՍ—104, ՀԱԳ—
207, ԱՕՐ—84
եղին ՎԱ—160, ՎԱ—2—83, ՍՍԴ—121,

ԳՎ—19, ԴՀՎ—1—28, ԷՄԱ—12,
ԱՕՐ—75, 213
եղին ԳԱ—202, ՀԱԳ—221
թոռին ՎԱ—77, ՍՍԴ—110, ԴՀՎ—3—
47
լերին ԳՎ—12, ԳԱ—202
կաթին ՀԵ—185, ՍՍԴ—41, Գր.—97,
ՄՀ—42, ԳՎ—205, ԱՕՐ—253, ԱԱԱ—
377

հարսին շն—149, ԴՆՎ—1—46, ՄՆ—103
 մասին ՄՇ—65
 մատին ՂՇ—143, ՄՆ—140, ԱՕԲ—446
 ձեռին Ֆր.—314, ՎԱ—91, ՍՍԴ—68, ողին Գր.—149, ԳՎ—224
 ԳԱ—108, էՄԱ—14, ՄՂ—136

Ներքին թերման և հոլովում

ալեր ԳՎ—32, 81
 աղբեր Ֆր.—316, ՎԱ—5—144
 աստեղ հԿ—186
 դստեր էՄԱ—36
 լտեր ԳՎ—104, 106
 մեղեր ՄՇ—85, ԳՎ—193
 ոսկեր ԳՎ—130
 փոքեր ԳՎ—173, ԱՕԲ—366, ՇԱՏ—210
 քեր էՄԱ—57
 քիւեր ՍՍԴ—111

Ներքին թերման օ հոլովման առանձնահատկությունն այն է, որ այս հոլովման պատկանող անոթների ձևական ընդհանրությունն ուղեկցվում է իմաստային ընդհանուր հատկանիշով՝ այդ անունները նշանակում են նեղ ազգակցական կապեր և միաժամանակ ունեն հիմքի միևնույն այս հանգրվան հոլովման պատկանում են հիմնականում երեք բառ՝ հայր, մայր, եղբայր։ Մյուսները բարդություններ են, որոնց վերջին բաղադրիչը այս երեքից որևէ մեկն է։ Այսպես՝

աղբոր շն—169, ՍՍԴ—111, 112, ՇԹ—229
սլատճառվի Գր.—133
վերակացուի ՄՂ—106
տնվի ՅԿ—191, ՂՀ—258, ՍՍԱ—71

7. ԱՆԻ

ամբողջանի ՍՍՏ—93, ԴՀՎ—3—93
անձրեանի ԳՎ—60
բաղարջանի ն. տ.—32
զամբիդանի ն. տ.—172
զանդականի ԴՀՎ—1—43
թրնջանի ԳՎ—154
ժողովանի ՍՍՏ—135
իրիցանի ԴՀՎ—1—22, 24
Լրիցանի ՄՆ—118, ՄՂ—86
Նլակոտանի ԳՎ—221
Խոյանի ՎԱ—324
ծրարանի ԳՎ—165
կանթեղանի ԳՎ—118
Կարասանի ԳՎ—44, 89
կնանի ՍՍԴ—43, 95
կուղպականի ԴՀՎ—1—44
հաւիճանի ԳՎ—127
պատրուսանի ԳՎ—37
ջաղացանի ՎԱ—191, ԳՎ—183
Քթեթանի ն. տ.—194
Քթոցանի ն. տ.—184

8. ԱՆԲ

խօսանք ԳԱ—201
կուսանք Ֆր.—351, էՍԱ—55, ՀԹ—190
հնտանք ԳՎ—43, 210
մեղանք ՆՇ—610, ՎԱ—43, ՍՍԴ—159, ՍՍԱ—29, ԽԿ—157
մսանք ԱՕՐ—269
մրպանք ՄՀ—108, ԱՕՐ—279
փշրանք Ֆր.—317, ՄՀ—96

9. ՍՊԱՆ

աղեստան ԱՕՐ—32, 37
բմբելեստան ԳՎ—115
լեղեստան ԱՕՐ—218
հայրենեստան ՍՍԱ—21
Հողեստան—ԿԻ—126
շլեստան ՍՍԴ—68, ԳՎ—203
տեղեստան ՂՀ—157, ՄՀ—38, 120, ՍՍԴ—79
քամեստան ԱՕՐ—325, ԱԱԱ—155

10. ԱՅԲ

ամենայք ԳՎ—79
իշխանայք ՍՍԱ—3
կանայք ՍՍԴ—67, էՄԱ—74, ՆՇ—638, ՄՆ—102, Գր.—25, ԱՕՐ—96
պարոնայք ՍՍԱ—59, ՍՍԴ—50, Գր.—47, ՄՆ—123, ՂՀ—247, էՄԱ—82, ՀԱԳ—192, ԴՀՎ—3—74
սուլտնայք ՍՍՏ—119
տանտիկնայք ՄՂ—109
տիկնայք Գր.—47

11. ՈՐԱՅԲ

արտորայք ԳՎ—81
արտորեայք ՎԱ—5—173
րերդորայք ՍՍՏ—113
գեղորայք ՎԱ—181, ՍՍՏ—19
ղեղորայք ԳՎ—72
խանորայք Ֆր.—375
վանորայք ՍՍՏ—38
վանօրեայք ՍՍՏ—17, ՀՍ—88

12. ԻԲ

այծիք ՎԱ—239
արապիք Գր.—29
արծաթիք ԴՀՎ—1—34
ծանօթիք ՍՍԴ—130
մարդիք Գր.—12, 57, էՄԱ—111, ՄՆ—127, ՀԱԳ—217, ՎԱ—79
նմանիք ՄՀ—48, 136, ՄՆ—127
նումայիք ԳՎ—42
պարսիք ԱՕՐ—165

13. ՏԻ

այրկտի ՍՍԴ—43
Երկտի 34—193
ծակտի ԳՎ—82, 145, Գր.—96
մանկտի ՀԱԳ—163

14. ԱԲ

տեղաք ՀԹ—165, Գր.—66
վարպետաք ԱՕՐ—20

15. ԱՃ

իշան ԴՀՎ—1—27
ձիան ՆՇ—617, ՍՍԴ—170, ՀԹ—201

ջորհան ԳՎ—32

գեղան ՂՀ—243

16. Ենի

բախչենի ՀԲ—160, ՀԱԳ—181

դալենի ԿԵ—181

պատրուսենի ՆՔԴ—75

17. Արէֆ

գեղարէք ԴՀՎ—3—211

գիւղարէք ԴՀՎ—2—16

18. Իկ

մարդիկ ՅՐ.—265, ՎԱ—44, ՍՍԴ—

138, ԳՐ.—39, ՄՀ—2, ԳՎ—7,

ԷՄԱ—18, ՀԲ—162

19. Նան

իշկան ՆՇ—626

20. ՈՐ

շատոք ԿԵ—127, ՄՆ—105, 171, ՀԱԳ—

168, ԱՕԲ—19, 322

21. ՈՆԲ

շատոնք ՀԲ—224, ՀԱԳ—197

22. Ունաֆ

ծաղկունաք ԱՕԲ—157, 503

23. Էֆ

աղախենէք ԴՀՎ—2—57

Բաղադրյալ հոգնակերտներ

1. Խրֆ

գետերք ՀԲ—164

դարդերք ՀԵ—229

կշտերք ԱՕԲ—151

մաղձերք ԳՐ.—95

նեղերք ԳՐ.—50, 56

օրերք ԱՕԲ—94

2. Նիֆ

կենկերք ԱՕԲ—70

3. Անիֆ

կնանիք ՍՍԴ—43

սարկաւագանիք ՍՍԴ—67

4. Վիֆ

իւրվիք ՄՀ—131, ԱՕԲ—65, 481

5. Տիֆ

ծակտիք ԱՕԲ—281

կնկտիք ԱՕԲ—85

մանկտիք ՅՐ.—387, ՀԵ—164, ՆՔԴ—

57, ՄՆ—125, ԳՎ—2, ՀԱԳ—188,

ԱՕԲ—52

6. Նանֆ

դրեանք ԱՕԲ—8

7. Իկֆ

մարդիկ ՅՐ.—425, ՎԱ—86, ԽԿ—180,

ՂՀ—251, ՍՍԴ—78, ԷՄԱ—43,

ՀԱԳ—220

8. Նրայֆ

դեղերայք ՄՀ—131

9. Բանֆ

դեղրանք ՄՀ—30, 131, ԱՕԲ—326

10. Վանֆ

իշվանք ՎԱ—22

11. Նրնի

սրտերնի ՀԱԳ—212

ջղերնի ԱՕԲ—31

12. Վնի

աշվնի ԱՕԲ—115, ՀԱԳ—179, ՆՔԴ—75

դովնի ՅՐ.—431

հնովնի ՄՀ—149

ոտվնի ՀԲ—217, 228, ՀԱԳ—165,

ՆՔԴ—75

13. Վանի

իշվանի ՎԱ—22

14. ՎԼԵՐ

ականջվեր Ֆր.—299
աշվեր Ֆր.—308, 399, հկ—183,
նՔԴ—52, ՇԹ—151, ՇԱԴ—180,
ԳԱ—281

15. ՎՆԵՐ

աշվեր ՇԱԴ—180

16. ՎԱԻ

քոյրվտի ՍՍԱ—21, 49
քուրվտի ՍՍԴ—111, ՍՍԱ—19, 21

17. ՎԱՆ

իրվան ԱՕՐ—481

18. ԵՐՎԻ

ղօղուածերվի Գր.—175

19. ՏԻԿ

մանկտիկ ՎԱ—51

20. ՍՈՆԵՐ

լեռնատներ ԳՎ—48, ՅԿ—174
հայրենեստներ ՍՍԴ—89, ՍՍԱ—47

21. ՎՆԱՆԻ

իրվտանք ԱՕՐ—65, 298

Միջին հայերենի հոգնակիի նկարագրությունը չի կարելի լրիվ համարել առանց նշելու հոգնակերանների հնարավոր փոխանցումների սահմանները։ Ինչպես արդեն ասվել է, տարածման ամենալայն ուղորտ ունեցող հոգնակերտները (հիմնականում Բ, ԼԵ, ՆԻ, ՆԵՐ) կարող են զուգահեռաբար գործածվել մյուս հոգնակերտների դիրքում, ընդ որում, Բ ձևույթը համարյա առանց սահմանափակության։ Որքան լայն է տվյալ ձևույթի գործածության սահմանը, այնքան ավելի մեծ թվով այլ հոգնակերտների հետ այն կարող է հանդես գալ որպես նրանց ազատ տարբերակ, ընդ որում, միմյանց հետ ազատ տարբերակների հարաբերության մեջ գտնվող ձևույթների խմբերը կարող են բաղկացած լինել երկուսից մինչև յոթ անդամից, այլ խոսքով՝ մի բառը կարող է ստանալ երկուսից մինչև յոթ տարբեր հոգնակերտներ։ Միջին հայերենում հանդիպում են հոգնակերտ ձևույթների հնարավոր փոխանցումների հետևյալ տիպերը։

1. Բ/ԼԵ

այգնպանք-այգնպներ
արտպանք-արտպներ
այտք-այտեր
անուանք-անվներ
բեռինք-բեռներ
բժշկապետք-բժշկապետեր
գայլք-գայլեր
գառինք-գառներ
գալազանք-գալազաներ
գետք-գետեր
գիշութինք-գիշութեններ
գործք-գործեր
դասք-դասեր
դատատանք-դատատներ
դեզք-դեզեր
դրուներ-դոներ
դարկք-դարկեր
զօրութինք-զօրութեններ
մամք-մամեր
լարք-լարեր

լինաք-լնտեր
ծիծք-ծծեր
կապք-կապեր
կերակուրք-կերակրեր
կերպք-կերպեր
կողք-կողեր
կոպք-կոպեր
հայրք-հայրեր
հայք-հայեր
հարսունք-հարսներ
հալք-հալեր
ձեռք-ձեռներ
ձուք-ձվեր
ճիղք-ճղեր
մասունք-մասներ
մարմինք-մարմներ
մայրք-մայրեր
մուտք-մուտեր
նեղք-նեղեր
նիթք-նիթեր

ործք-ործեր
ունք-ուներ
պահք-պահեր
չիլք-չլեր
չիղք-չղեր
ստինք-ստներ
վաճառականք-վաճակներ
տակք-տակեր
ցալք-ցալեր
ցիցք-ցցեր
փողք-փողեր
թիթք-թթեր
ողք-ողեր

2. Բ/ՆԵՐ

գետինք-գետեններ
դրացիք-դրացներ
հազարք-հազարներ
մեղուք-մեղուներ
ոստք-ոստներ

պտուկը-պտկներ
փիրիսկոպոսը - փիրիսկո-
պոսներ
օրինակը-օրինակներ

3. Բ/Եի

արուեստը-արուեստների
բերանը-բերանների
զանգաստ-զանգտների
զլուխը-զլխների
զոմէշը-զոմշների
զրաստը-զրաստների
նրակը-նրակների
զօղուածը-զօղուածների
ծառայք-ծառայների
կարդացողը-կարդացողների
շրեշտակը-շրեշտակների
մշակը-մշակների
շնչերակը-շնչերակների
ոլոքը-ոլոքների
ջաղաքը-ջաղացների
վկայք-վկայների
տէրք-տէրների
բուռակը-բուռակների

4. Բ/ստուն

աղիք-աղեստան
ընպելիք-ըմբելստան
հոգիք-հոգեստան
չիելիք-չիլեստան
քամիք-քամեստան

5. Բ/անի

անձրև-անձրևանի
թրեշիք-թրեշանի
կանթեղք-կանթեղանի

6. Բ/վի

ներսք-ներսվի
միտք-մտվի
վերակացուք - վերակացվի

7. Բ/այ

ամենք-ամենայք
իշխանք-իշխանայք

8. Բ/ուն

այլք-այլունք
անղամք-անղամունք

9. Բ/եր/ներ

ծառք-ծառեր-ծառների
կոյգք-կոյգեր-կոյգների
հիւանդութիւնք - հիւանդու-
թեանք-հիւանդութեանք

10. Բ/եր/վի

շունք-շներ-շնվի
տունք-տներ-տնվի
ձեռք-ձեռներ-ձեռվի

11. Բ/եր/ուն

զոմք-զոմեր-զոմունք
ղաշտք-ղաշտեր - զաշտունք
նպիսկոպոսք - նպիսկոպո-
սեր-նպիսկոպոսունք
սուրքք-սուրեր-սուրունք

12. Բ/եր/նի

որսորդք-որսորդների - որ-
սորդների

13. Բ/եր/ան

միսք-մսեր-մսանք

14. Բ/եր/ի

այծք-այծեր-այծիք

15. Բ/եր/ն

զայք-զայեր-զայերների

16. Բ/նի/ներ

դուրք-դուրների-դուրների
դրացիք-դրացների-դրացների
նշանք-նշանների-նշանների
ուրիցք-ուրիցների-ուրիցների
տերնք-տերների-տերների

17. Բ/նի/ան

ջաղաքք-ջաղացների - ջաղա-
ցանի

18. Բ/ն/ն

շասք-շասոքք-շատոքք

19. Բ/եր/նի/ներ

ակոռայք-ակոռեր - ակոռանի-
ակոռաներ

20. Բ/եր/նի/վի/ներ

ոտք-ոտեր - ոտանի-ոտվի-
ոտներ

21. Բ/եր/տի/աի

ծակք-ծակեր - ծակտի-ծակ-
տիք

22. Բ/եր/ուն/ան

միրգք - մրգեր - մրգունք-
մրգանք

23. Բ/եր/աի/ոտան

տեղիք - տեղեր - տեղաք-
տեղեստան

24. Բ/նի/ներ/վի

քաղաքք - քաղաքների - քա-
ղաքներ-քաղաքունք

25. Բ/նի/ներ/վի

պատճառք - պատճառների-
պատճառներ-պատճառվի

26. Բ/վի/ան/վտան

իրք - իրվի-իրվան-իրվտանք

27. Բ/եր/նի/ուն/ ուն

ծաղիկք- ծաղկներ-ծաղկների-
ծաղկունք-ծաղկունք

28. Բ/ներ/նի/վի/վեր

ականքք - ականքներ - ա-
կանքների - ականքվի-ականք-
վեր

29. Բ/եր/ուն/վի/վեր/՝ վեր/վեր

աչք-աչեր-աչունք - աչվի-
աչվեր - աչվերներ - աչվերների

30. Եր/ներ

նանապարհեր - նանապարհ-
ներ

սպաննութիւններ - սպաննու-
թեաններ

ոստեր-ոստներ

31. Եր/նի

ամաններ-ամանների
բուհրաներ-բուհրանների

32. Եր/ուն

ազգեր-ազգունք
զորսեր-զորսունք
հոգմեր-հոգմունք
ողրեր-ողրունք
որմեր-որմունք
որսեր-որսունք
պատրիարքեր- պատրիար-
քունք

33. Եր/ուրայ

արտեր-արտորայք
զեղեր-զեղորայք
բերդեր-բերդորայք
վաներ-վանորայք

33. ԵՐ/աճԻ/ուՆԻ	լուսպնի-լուսպներ	42. ԵՆԵ/ուՆԻ
հնտեր-հնտանք-հնտունք	հարեղանի-հարեղաններ	աղջիկներ-աղջկունք
35. ԵՐ/աճԻ/վի	39. ԵԻ/ուՆԻ	իրաներ-իրաունք
խօսեր-խօսանք-խօսվի	ատամնի-ատամունք	43. ԵՆԵ/աՐ
36. ԵՐ/այԻ/նիՆանի	երիկամնի-երիկամունք	վարպետներ-վարպետաք
կներ-կանայք- կաննի-կնա- նի	երիցնի-երիցունք	44. ԵՆԵ/վի
37. ԵՐ/ուՆԻ/կաՆԻ/վի	40. ԵԻ/ուՆԻ/ՆԵՐ	ծնկներ-ծնկվի
գրեր-գրունք-գրեանք- գրվի	պուկնի-պուկունք-պուկներ	45. ուՆԻ/վի
38. ԵԻ/ՆԵՐ	41. ԵԻ/ուՆԻ/ՆԵՐ/անիԻ	
թիվնի-թթուններ	սարկաւազնի - սարկաւա- դունք - սարկաւազներ - սարկաւազանիք	եղնկունք-եղնկվի

ՀՈՒՈՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Հոլովի քերականական կարգի քննության ժամանակ հոլովման հարա-
ցույցի անդամների քանակը և ներքին փոխհարաբերությունները պարզելիս
հաշվի են առնվում մի կողմից՝ յուրաքանչյուր առանձին բառի՝ հոլովի ար-
ժեք ունեցող հնարավոր ձևափոխումների բոլոր դեպքերը (միևնույն բառի
տարբեր հոլովները), մյուս կողմից՝ տարբեր բառերի նույնատիպ ձևափո-
խությունները (տարբեր բառերի միևնույն հոլովը)։ Առաջին դեպքում գործ
ունենք ձևով իրարից տարբերվող և իմաստով միմյանց հակադրվող թեքույթ-
ների (հերթագայությունների և վերջավորությունների) հետ, երկրորդ դեպ-
քում՝ ձևականորեն նույն և իմաստով նույնարժեք թեքույթների հետ։ Սա-
կայն միշտ չէ, որ հնարավոր է հոլովանիշ ձևույթների և նրանց արտահայ-
տած իմաստների քանակի միջև ուղղագիծ համապատասխանություն տեսնել
(որքան ձևույթ, նույնքան և հոլովական իմաստ)։ Արտահայտություն պլա-
նում ձևականորեն իրար հակադրվող թեքույթները բովանդակության պլա-
նում հաճախ ունեն նույն նշանակությունը։ Դա հատկապես բնորոշ է միջին
հայերենի հոլովման համակարգին, որտեղ հոլովական թեքույթների թիվը
շատ ավելի մեծ է, քան հոլովական իմաստներինը։ Այդ բացատրվում է
ներանով, որ միևնույն հոլովը կարող է տարբեր բառերի դեպքում տարբեր
ձևավորում ստանալ, որ պայմանավորված է հիմքի ձևական, իմաստային
կամ այլ կարգի առանձնահատկություններով։

Միևնույն հոլովի՝ ձևականորեն իրարից տարբերվող ցուցիչները հանդես
են գալիս որպես մեկ ընդհանուր նշանակությամբ օժտված և քերականական
նույն արժեքն ունեցող թեքույթի տարբերակներ, որոնք որոշակի դեպքերում
կարող են փոխարինել միմյանց առանց իմաստի փոփոխություն առաջացնե-
լու։ Ըստ այդմ միջին հայերենի հոլովանիշ ձևույթների մարդդությունը բա-
ժանվում է սահմանափակ թվով խմբերի, որոնցից յուրաքանչյուրը կոչված է
արտահայտելու մեկ որոշակի և կայուն հոլովական իմաստ։ Յուրաքանչյուր
առանձին խմբի ներսում նրա մեջ մտնող ձևույթները իրար նկատմամբ գտնը-
վում են դիրքային կամ ազատ տարբերակների հարաբերության մեջ, իսկ յու-
րաքանչյուր խումբ մյուսի նկատմամբ՝ հոլովական անփոփոխականների հարա-
բերության մեջ։ Հոլովական անփոփոխականները որոշում են հոլովների թիվը։

Միջին հայերենում անունների հոլովման հարացույցի մեջ նյութականորեն արտահայտված հնարավոր հոլովաձևերի (անփոփոխականների) առավելագույն թիվը 9 է, զրո հոլովանիշ ձևույթով կազմված հոլովաձևի հետ դրանք կլինեն 10 (ներառյալ և՛ եզակի, և՛ հոգնակի բոլոր հոլովաձևերը)։ Սրանք ծառայում են վեց հոլովի ձևավորման ու տարբերակմանը։ Այդ հոլովներն են՝ ուղղական, սեռական-տրական, հայցական, բացառական, պործիական, ներդրական։ Եզակի ուղղական և հայցական հոլովները ձևականորեն չեն տարբերվում և առանձնացվում են միայն հոգնակի հոլովման հարացույցի հիման վրա։ Ներդրականը հոգնակիի համար առանձին կադմոթյուն չունի, այդ իմաստն արտահայտվում է նկարագրական եզանակով՝ ի նախդիր և հոգնակի հայցական։

Ուղղական հոլով

Ինչպես գրաբարում և աշխարհաբարում, այնպես էլ միջին հայերենում անունների ուղղական հոլովի եզակին որեէ ձևաբանական ցուցիչ չի ստանում և մյուս թեք հոլովներին, ինչպես և հոգնակի ուղղականին հակադրվում է հոլովի և թվի պո ձևույթով։ Եվ քանի որ եզակի ուղղականը իրենից ներկայացնում է մաքուր անվանական հիմք (ի տարբերություն մյուս հոլովների, որոնք հաճախ ի հայտ են բերում հնչյունափոխված հիմքեր), ապա այն կարելի է բնորոշել որպես պո հիմքակազմ տարրով և զրո ձևույթով հոլովաձև։ Այս տեսակետից ուղղական հոլովը կարելի է դիտել որպես յուրատեսակ մեկնակետ, որից հիմքի ձևափոխումներով ու վերջավորությունների հավելումով կազմվում են եզակի թեք և հոգնակի բոլոր հոլովները, ընդ որում, որոշ ձևեր կազմվում են անմիջականորեն ուղղականից, իսկ մյուսների համար հիմք է ծառայում սեռական-տրականը։

Ինչ վերաբերում է հոգնակի ուղղականին, ապա այն եզակիից տարբերվում է միայն թվանիշ ձևույթների առկայությամբ։ Այն նույնպես հոլովանիշ ձևույթներ չի ստանում, պրանով հակադրվելով հոգնակի թեք հոլովներին։

Ուղիղ և թեք հոլովների հոլովանիշ և թվանիշ թեքությունը ստանալու հնարավորությունը կարելի է արտահայտել հետևյալ աղյուսակով։

Աղյուսակ 10			
Հոլովներ	Թեքություն	Հոլովանիշ	Թվանիշ
	ուղիղ	—	—
եզակի	թեք	—	—
	—	—	—
հոգնակի	ուղիղ	—	—
	թեք	+	+

Հոգնակի ուղղական հոլովի կազմությունը արդեն ներկայացված է թվի քերականական կարգի նկարագրության մեջ, և այստեղ այլևս դրան չենք անդրադառնում:

Հայցական հոլով

Միջին հայերենում եղակի հայցական հոլովը նույնպես, ինչպես եղակի ուղղականը, հոլովանիչ ձևույթ չի ստանում և ձևականորեն ուղղականից տարբերվում է միայն զ նախդիր ստանալու հատկանիշով: Այդ հատկանիշը սակայն հայցականը առանձին հոլով համարելու բավարար հիմք չի կարող ծառայել (բանի որ կան նաև այլ նախդրավոր կազմություններ, որոնք հոլով չեն համարվում): Ինչպես արդեն նշվել է, հայցականը որպես ինքնուրույն հոլովական անսխալորեն առանձնացվում է հոգնակիի կազմության հիման վրա:

Հոգնակի ուղղականը ստանում է բազմազան հոգնակերտ ձևույթներ: Այդ ձևույթների մեծամասնությունը հայցական հոլովում պահպանվում է նույնությամբ և ուղղականից որևէ տարբերություն ի հայտ չի բերում: Ուղղական և հայցական հոլովները ձևականորեն տարբերակվում են միայն Բ հոգնակերտի դեպքում, ընդ որում, վերջինս կարող է հանդես գալ ինչպես առանձին, այնպես էլ այլ բաղադրյալ հոգնակերտների կազմում, բայց բոլոր դեպքերում որպես վերջին բաղադրիչ: Այս դեպքում հոգնակի հայցականը ուղղականի Բ-ի դիմաց ստանում է ս մասնիկը, որը հանդես է գալիս և՛ որպես հոգնակերտ, և՛ որպես հոլովակազմիչ թևույթ: Քանի որ Բ-ն ամենալայն կիրառությունն ունեցող հոգնակերտ ձևույթն է, ապա պարզ է, որ Բ-ով հայցականը նույնպես դեռևս շատ կենսունակ և զործուր հոլովաձև է: Ք-ս ձևույթների հակադրությունը ուղղական և հայցական հոլովների տարբերակման համար պետք է գիտել որպես ուժեղ դիրք, մյուս դեպքերը՝ թույլ դիրք, որտեղ ուղղական և հայցական հոլովների ձևական հակադրությունը չեզոքանում է:

Սակայն նույնիսկ Բ հոգնակերտի դեպքում էլ միշտ չէ, որ այն անհրաժեշտորեն և օրինալուսիորեն հայցական կազմվելիս փոխվում է Բ-ի: Սակավ չեն այն դեպքերը, որտեղ Բ-ն պահպանվում է, թեև բացահայտորեն արտահայտվում է հայցականի իմաստը: Ավելին, միջին հայերեն մասնագրության մեջ հանդիպում ենք ս մասնիկով ուղղականի, որը բոլոր ձևի համընկնում է դրարարյան հայցականի հետ, բայց այժմ, դիտվելով որպես պարզ ելակետային ձև, իր հերթին ստանում է հոլովանիչ այլ ձևույթներ և ենթարկվում հոլովման ընդհանուր օրինալուսիություններին, ինչպես՝ երկուսի (ԷԻԻԱ—31, ՆՔԴ—70, ԱՕԲ—32, երկուսով (ԷԻԲԱ—30), երկուսաց (ՂՀ—426) և այլն: Այս երևույթը վկայում է այն մասին, որ վաղուց արդեն սկսվել էր ուղղական և հայցական հոլովների ձևական նույնացման այն պրոցեսը, որ մասնականակից հայերենում արդեն հասել է իր ավարտին:

Սևռական-տրական հոլով

Գրարարի սևռական և տրական հոլովները միջին հայերենում թե՛ իրենց կազմության, թե՛ շարահյուսական կիրառության առանձնահատկությունների տեսակետից միանգամայն նույնացել են և հանդես են գալիս որպես մեկ

հոլով: Այս հոլովի եզակի թվի կազմությունը ներկայացվեց հոլովման տիպերի նկարագրության ժամանակ: Անհրաժեշտ է սակայն նշել, որ բացի բերված տիպերից միջին հայերեն գրականության մեջ հանդիպում են նաև սեռական-տրականի որոշ հոլովաձևեր, որոնք առանձին տիպեր չեն կազմում և դիտվում են որպես շեղումներ ընդհանուր օրինաչափություններից: Այս շեղումները երկու կարգի են. կամ հանդիսանում են հոլովման որևէ տիպի ենթատիպը (հնչյունական զուգաձևությունը), այս դեպքում դրանք կարելի է դիտել որպես խիստ բարբառային հրանդ ունեցող կազմություններ, ինչպես՝ բազուհէ (բազուհեայ), աբեն (աբեան) և այլն. կամ էլ այդ շեղումները մնում են մեկուսի, հոլովման տիպերից և հարացույցներից դուրս, քանի որ վկայված է միայն դրանց սեռական-տրական հոլովաձևը, իսկ մնացած հոլովները կազմվում են ըստ տարածված օրինաչափությունների: Սրանք արդեն փտակցվում են որպես գրաբարից ավանդաբար մնացած հնարանություններ, հանդես են դալիս միայն որոշակի բառակապակցությունների մեջ որպես քարացած կաղապարներ, ինչպես՝ կաթ մի մեղու, մեծի և փոքու, տեառն Աստուծոյ և այլն: Բացի դրանից, այդ հոլովաձևերի գործածությունը խիստ սահմանափակ է. դրանց կողքին կան ավելի զործուն և սովորական զուգաձևերը (մեղրի կամ մեղեր, փոքրի կամ փոքեր, տիւրջ): Այս առանձնահատկություններից ելնելով նպատակահարմար չէ վերը նշված հոլովաձևերը դիտել որպես հոլովման առանձին տիպեր:

Հաշվի առնելով այդ ենթատիպերն ու շեղումները՝ ներկայացնում ենք եզակի սեռ.-տր.-ի կազմության բոլոր հնարավոր դեպքերը..

- | | |
|------------------|----------------|
| 1. արեղայի | 9. առողջութեան |
| 2. աթոռոյ | 9ա. արեն(եան) |
| 3. ազռաւու | 10. անկման |
| 4. Աղամայ | 11. ակին |
| 4ա. թագուհէ(եայ) | 12. եղբօր |
| 5. աղջկան | 13. դստեր |
| 6. գալստեան | 14. ատուր |
| 7. կնոջ | 15. քարին |
| 8. դիշերովան | 16. տեառն |
| 8ա. մահման(ուան) | 17. մեղու |

Հոգնակի սեռ.-տր.-ը նույնպես միջին հայերենում աչքի է ընկնում հոլովա-թվանիշ թեքությների առատությամբ և բաղմաղանությամբ: Ըստ կազմության այդ թեքությունները հիմնականում կարելի է բաժանել երեք տիպի: Առաջին տիպի թեքություններն են՝ աց (եաց, եց), ից, աց, ալց, անց, ց, որոնք համադրականորեն արտահայտում են և՛ թվի, և՛ հոլովի զաղափար: Սրանցից առաջին հինգը օգտագործվում են արտաքին թեքման հոլովումների սեռ.-տր.-ը կազմելու համար, իսկ վերջինը՝ ներքին թեքման հոլովումների համար, ընդ որում, այն ուղեկցվում է հիմքի՝ քերականական արժեք ունեցող հնչյունական հերթադալություններով: Այստեղ փաստորեն սեռական-տրական հոլովի զաղափարն արտահայտվում է այդ հնչյունական հերթադալության և ց տարրի անտրոհելի համադրությամբ, և ց-ի անջատումը որպես առանձին թեքությի, պայմանական բնույթ ունի, արդարացվում է միայն այնքանով, որքանով այն հակադրվում է ուղղականի Բ տարրին: Ճիշտ

նույնպես պայմանականորեն կարելի է տրոհել այց, ոց, ից, ուց թեքություններ, որոնց վերջին ց տարրը համապատասխանում է հոգնակի ուղղականի և ձևության, իսկ ձայնավոր տարրը կամ համընկնում է եզակիի հոլովիչին (ո-ոց, ու-ուց), կամ ի հայտ է բերում օրինաչափ համապատասխանություն (ի-ա, ո-ա): Այսպիսով՝ առաջին տիպի թեքությունների բնորոշությունը հոգնակի սեռական-տրականում պայմանավորված է երկուստեք՝ և՛ եզակի սեռական-տրականի, և՛ հոգնակի ուղղականի կազմությամբ:

Հետևյալ աղյուսակը արտացոլում է հոգնակի սեռական-տրականի առաջին տիպի թեքությունների կազմությունն ու գործածության սահմանները:

Աղյուսակ 11

Թեքություններ	Դրանց բնորոշյալ պայմանները	Օրինակներ
1. աւ	1. Արտ. թեքման ի հոլովում, հոգնակի ուղղականը՝ և	ազգի-ազգր-ազգաց
(եւց)	2. Արտ. թեքման ո հոլովման ի հանգով բառեր, հոգնակի ուղղականը՝ և	բարոյ-բարիք-բարեաց
(եց)	3. »	այգոյ-այգիք-այգեց
2. ոց	1. Արտ. թեքման ո հոլովում, հոգնակի ուղղականը՝ և	զետոյ-զետք-զետաց
	2. Արտ. թեքման ու հոլովում, հոգնակի ուղղականը՝ և	հայու-հայք-հայաց
3. ից	Արտ. թեքման ի հոլովում, հոգնակի ուղղականը՝ և	աղօթի-աղօթք-աղօթից
4. ուց	Արտ. թեքման ու հոլովում, հոգնակի ուղղականը՝ և	առիւծու-առիւծք-առիւծուց
5. աւց	1. Արտ. թեքման ի հոլովում, հոգնակի ուղղականը՝ աւն	մսի-մսանք-մսանց
	2. Արտ. թեքման ի հոլովում, հոգնակի ուղղականը՝ ուն	մրգի-մրգունք-մրգանց
	3. Արտ. թեքման ու հոլովում, հոգնակի ուղղականը՝ ուն	երիցու-երիցունք-երիցանց
	4. Արտ. թեքման ոց հոլովում, հոգնակի ուղղականը՝ ալ	կնոց-կանայք-կանանց
	5. Արտ. թեքման աւ հոլովում, հոգնակի ուղղականը՝ ուն	մանկան-մանկունք-մանկանց
6. ց	1. Ներքին թեքման ա հոլովում, հոգնակի ուղղականը՝ և	մկան-մկունք-մկանց
	2. Ներքին թեքման ի հոլովում, հոգնակի ուղղականը՝ և	ակին-ակունք-ականց
	3. Ներքին թեքման եւ հոլովում, հոգնակի ուղղականը՝ և	տարութեան-տարութիւնք-տարութեանց
	4. Ներքին թեքման է հոլովում, հոգնակի ուղղականը՝ և	տարեր-տարերք-տարերց
	5. Ներքին թեքման ո հոլովում, հոգնակի ուղղականը՝ և	հօր-հարք-հարց
	6. Ներքին թեքման աւու հոլովում, հոգնակի ուղղականը՝ և	աւուր-աւուրք-աւուրց

Հոգնակի սեռական-տրականի երկրորդ տիպի թեքությունները առաջիններին տարբերվում են ոչ միայն կառուցվածքով, այլև մյուս հոլովածների հետ (տվյալ դեպքում եզակի սեռ.-տր. և հոգնակի ուղղ.) իրենց հարաբերակցության առանձնահատկություններով: Այս խմբի թեքությունները բաղադրյալ կազմություններ են, որոնց բաղադրիչները պահպանում են իրենց հատուկ իմաստն ու ֆունկցիան: Բաղադրյալ թեքությունները կազմված են երկու ձևով: Թից, որոնցից առաջինն արտահայտում է թվի, երկրորդը՝ հոլովի իմաստը: Այս դեպքում հոգնակի սեռական-տրականը հանդես չի բերում միայն իրեն հատուկ ձևություններ, այլ օգտագործում է արդեն հայտնի՝ եզակի սեռական-տրականի և հոգնակի ուղղականի ցուցիչները, այսինքն՝ թվի իմաստը կրող բաղադրիչները ուղղականի հոգնակերտներն են, իսկ հոլովի իմաստն արտահայտողները՝ եզակի սեռական-տրականի հոլովանիչ ձևությունները: Հոգնակի սեռ.-տր.-ի բաղադրյալ թեքությունների կազմում կարող են հանդես գալ բոլոր հոգնակերտ ձևությունները (պարզ կամ բաղադրյալ), որոնք է մասնիկը չեն պարունակում: Այդ հոգնակերտներն են՝ եր, նի, ներ, վի, անի, ստան, տի, ան, ենի, իկ, երնի, վնի, վեր, վտի, երվի, ստներ: Մինչդեռ որպես հոլովի ցուցիչ գործածվում են եզակի սեռ.-տր.-ի բազմաթիվ ցուցիչներից միայն երեքը՝ ոյ, ու, ի, ընդ որում, վերջինս դեռևս անհամեմատ սահմանափակ, իսկ առաջին երկուսը հավասարապես լայն կիրառությամբ: Սրանք դիրքային որևէ պայմանավորվածությամբ միմյանցից չեն տարբերվում և հանդես են գալիս որպես ազատ տարրերական: Երկրորդ տիպի ձևություններով կազմված հոգնակի սեռական-տրականը այս երեք ձևություններից որևէ մեկը ստանում է անկախ այն բանից, թե տվյալ բառը եղակիում ինչ հոլովման է պատկանում: Սրանով էլ բաղադրյալ թեքությունների ընտրությունը պայմանավորված է լինում միայն հոգնակի ուղղականի կազմությամբ:

Բաղադրյալ թեքությունների կազմի մեջ մտնելով՝ ուղղականի հոգնակերտներից մի քանիսը ենթարկվում են շեշտից կախված հնչյունափոխության: Եր, վի, տի, անի, վնի, ենի, երնի, երվի, վտի հոգնակերտների վերջահանդ ի-ն, ոյ, ու, ի հոլովակազմիչներից առաջ ընկնում է, անի հոգնակերտի ի-ն որոշ դեպքերում փոխվում է լ-ի:

Հոգնակի սեռական-տրականի կազմում որոշ հոգնակերտներ կարող են բաղադրվել ոյ, ու կամ ի հոլովակազմիչներից միայն մեկի հետ, մյուսները՝ երկուսի կամ նույնիսկ բոլոր երեքի հետ: Այսպես՝ հոգնակերտներից երկուսը՝ եր և նի, բաղադրվում են նշված երեք հոլովակազմիչ տարրերից յուրաքանչյուրի հետ, ընդ որում, նի-ի կապակցությունը վերը նշված հնչյունափոխության հետևանքով դառնալով նի, շեղոքացնում է հոգնակի ուղղական և սեռական-տրական հոլովների ձևական հակադրությունը, ինչպես՝ «ուղից-նի՛ն, որ ի տաքութենէ լինին» (ուղղ.) Գր.—32 և «ուղիցնի՛ն տաքութինն հասնի ի յղուղն» (սեռ.-տր.) Գր.—57: Ներ և անի հոգնակերտները կապակցվում են ոյ և ու հոլովակազմիչների հետ: Ստան, ան, վնի, ենի, երնի հոգնակերտները հանդիպում են միայն ու-ի հետ կապակցված, իսկ վի, վեր, ստներ, եր-վի, վտի ձևությունները՝ միայն ոյ-ի հետ:

Հոգնակի սեռական-տրականի բաղադրյալ ձևությունները, նրանց կազմությունը և բաղադրիչների կապակցելիության առանձնահատկությունները կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով:

Բաղադրիչներ	Թեքույթներ	Օրինակներ
$\begin{array}{c} \text{ոյ} \\ \text{եր} - \text{ու} \\ \text{ի} \end{array}$	1. երոյ 2. երու 3. երի	ազգերոյ աշերու զոգերի
$\begin{array}{c} \text{ոյ} \\ \text{նի} - \text{ու} \\ \text{ի} \end{array}$	4. նոյ 5. նու 6. նի	առաիգնոյ ծագիւնու երկնի
$\begin{array}{c} \text{ոյ} \\ \text{նեք} - \text{ու} \\ \text{ի} \end{array}$	7. ներոյ 8. ներու	կարասներոյ մեղուներու
$\begin{array}{c} \text{ոյ} \\ \text{անի} - \text{ու} \\ \text{ի} \end{array}$	9. անոյ (անուոյ) 10. անու	կուսանոյ կարասանոյ իրիցանու
$\begin{array}{c} \text{ոյ} \\ \text{վի} + \text{ոյ} \\ \text{տի} + \text{ոյ} \\ \text{վաի} + \text{ոյ} \\ \text{երվի} + \text{ոյ} \\ \text{վեր} + \text{ոյ} \\ \text{ստներ} + \text{ոյ} \end{array}$	11. վոյ 12. տոյ 13. վաոյ 14. երվոյ 15. վերոյ 16. ստներոյ	իրվոյ այրկտոյ քոյրվաոյ զոյգուածերվոյ ականջվերոյ հայրենեստներոյ
$\begin{array}{c} \text{ու} \\ \text{ան} + \text{ու} \\ \text{ստան} + \text{ու} \\ \text{ենի} + \text{ու} \\ \text{վնի} + \text{ու} \\ \text{երնի} + \text{ու} \end{array}$	17. անու 18. ստանու 19. ենու 20. վնու 21. երնու	ձիանու լեզետանու զայենու ոտվնու ջղերնու

Երրորդ տիպի թեքույթները նույնպես բաղադրյալ են. կազմված են երկրորդ տիպին հատուկ հոգնակերտ ձևերից և սեռ.-տր.-ի այն ցուցիչներից, որոնք ամբողջությամբ համընկնում են առաջին տիպի թեքույթներին: Երրորդ տիպի թեքույթներն են՝ եր + աց, (ի)կ + աց, այվ(ի) + օց, վտ(ի) + օց, (ի)կ + անց և անի + ց: Սրանք համապատասխանում են հոգնակի ուղղականի այն բաղադրյալ հոգնակերտներին, որոնց վերջին բաղադրիչը՝ ձևույթն է: Սեռական-տրական հոլովաձևում փաստորեն հոգնակիության իմաստն արտահայտված է լինում կրկնակի անգամ՝ և՛ հոգնակերտի, և՛ հոլովանիչ տարրի միջոցով: Նկատելի է, որ այս թեքույթները անհամեմատ սակավ գործածություն ունեն, քան նախորդ երկու տիպին պատկանողները: Բերում ենք միջին հայերեն գրականության մեջ հանդիպող օրինակներ.

հնգերաց ՍՍԴ—127

սաղերաց ՎԱ—193

սօլերաց ՎԱ—233

վաներաց ՀՍ—165

մարդկաց Ֆր.—372, ՍՍԴ—148,

ՍՍԱ—39, Գր.—36, ՄՀ—108, ԱՕԲ—

382

մարդկանց ՎԱ—44, Գր.—28, էՄԱ—45, ԱՕԲ—69

կանայվոց Գր.—151

կնանից ՍՍԴ—43

քոյրվտոց ՍՍԴ—108, 128

Վերջապես պետք է նշել նաև հոգնակի սեռական-տրականի կազմության երկու այլ տիպ, որոնք իրենց տեսակի մեջ եզակի են: Դրանցից մեկը վկայված է ղեռնեց գրաբարից՝ մաբղկան, և ավելի սակավ է հանդիպում, քան իր մյուս տարբերակները (մաբղոց, մաբղկաց, մաբղկանց): Այս կազմությունը որոշ վերապահությամբ թերևս կարելի է կցել երկրորդ տիպին, որպես բաղադրյալ թեքությով կազմված ձև (ընդ որում, առաջին բաղադրիչը հանդես է գալիս որպես հոգնակերտ, երկրորդը՝ հոլովանիչ տարր):

Մյուս տիպը՝ տիրոջոց, վկայված է Սմբատ Սպարապետի «Դաստաստանագրքում» (էջ 16): Իր կազմության առանձնահատկություններով մնում է մեկուսի՝ բաղադրյալ թեքությի առաջին բաղադրիչը եզակի սեռական-տրականի ցուցիչն է, իսկ երկրորդը՝ հոգնակի սեռական-տրականինը. այստեղ էլ հոլովի իմաստն է, որ արտահայտված է լինում կրկնակի:

Բացառական հոլով

Բացառական հոլովը գրաբարի համեմատությամբ հիմնականում պահպանել է թե՛ իր իմաստային, թե՛ կառուցվածքային առանձնահատկությունները, թեև ի հայտ է բերում նաև միջին հայերենին հատուկ որոշ իրողություններ: Մասնավորապես այն դեռ մեծ չափով հանդես է գալիս ի(յ) նախդրի ուղեկցությամբ: Ավելին, բավական հաճախակի է կրկնակի նախդիրների գործածությունը, որը որոշ չափով հատուկ էր նաև գրաբարին, բայց միջին հայերենում, թերևս նախդրի իմաստի ոչ հստակ դիտակցման հետևանքով, ավելի մեծ չափերի է հասնում: Միաժամանակ պետք է նշել, որ արդեն սակավ չեն նաև առանց նախդրի կազմությունները, մանավանդ երկրորդ ենթաշրջանում:

Բացառական հոլովի ցուցիչներն են ի(յ) նախդիրը՝ համակցված մի կողմից՝ է, ոյ, ու, այ, ի վերջավորությունների, մյուս կողմից՝ հիմքի հերթագայությունների հետ: Ընդ որում, վերջավորություններից միայն առաջինն է (է), որ հատուկ է միայն բացառականին, մյուս վերջավորություններն ու հերթագայությունները փաստորեն եզակի սեռական-տրականի ցուցիչներն են, որ բացառական են կազմում ի նախդրի հետ բաղադրվելով, որով և հակադրվում են սեռ.-տր.-ին: Ի նախդրի բացակայության դեպքում այդ հակադրությունը չեղոքանում է, և տվյալ հոլովաձևերը որպես բացառական են ճանաչվում կոնտեքստից ելնելով, հարացուցային հարաբերակցության հիման վրա:

Ըստ վերը նշված առանձնահատկությունների, եզակի բացառականի կազմությունը կարելի է բաժանել երկու տիպի՝ է վերջավորությամբ և առանց է-ի է վերջավորությամբ բացառական ունի միջին հայերենի անունների ճնշող մեծամասնությունը:

Է ձևովը իր հերթին կարող է կցվել հիմքի տարբեր տիպերի: Ամենից ավելի տարածված է բացառականի այն կազմությունը, հրբ է վերջավորությունը կցվում է ուղղականի հիմքին, որը կարող է հանդես գալ կամ մաքուր ձևով, կամ ենթարկվել շեշտից կախված հնչյունափոխության: Այս նույն տիպի հիմք հանդես է գալիս եզակի սեռական-տրականում՝ վերջավորություններից առաջ: Բացառականի այս կազմությունը հատուկ է հիմնականում ամենալայն կիրառություն ունեցող արտաքին թեքման ի հոլովմանը, ինչպես նաև

1	2	3	4	5
			6. Ներք. թերման ա հո- լովում	աւերման-(յ) աւերմանէ
			7. Ներք. թերման եւ հոլովում	ջերմութեան-(ի) ջերմութեանէ
			8. Ներք. թերման ո հո- լովում	հօր-(ի) հօրէ
			9. Ներք. թերման ի հո- լովում	անձին-(յ) անձնէ
7		Ուղղականի հիմք. — մ	10. ձախ. սոսաց անուն- ներ	աջմէ, ձախմէ, սոսացմէ
2.	ի (յ) նախ- շիրք	Սեռ. — տր. հո- լովին համարնկ- նող հիմք	1. Արտ. թերման ո հո- լովում	էկեղեցոյ-(յ) էկեղեցոյ
			2. Արտ. թերման ու հո- լովում	զնասու-(ի) զնասու
			3. Արտ. թերման աւ հո- լովում	Մարայ-(ի) Մարայ
			4. Արտ. թերման ի հո- լովման մի քանի բառ	կաթողիկէի-(ի) կաթո- ղիկէի
			5. Ներք. թերման ա հո- լովում	ջերման-(ի) ջերման
			6. Ներք. թերման եւ հոլովում	տաքութեան-(ի) տաքութեան

Հոգնակի բացառականը կառուցվածքային տեսակետից զգալի ընդհանրություններ է հանդես բերում հոգնակի սեռական-տրական հոլովի հետ: Այդ վերաբերում է թե կազմության տիպերի դասակարգմանն ամբողջությամբ, թե առանձին ձևությոններին:

Հոգնակի բացառականի կազմության առաջին տիպն ընդգրկում է այն թիբույթները, որոնք համադրականորեն արտահայտում են հոլովի և թվի դադարաւոր Դրանք են՝ ազ (եւազ. եզ), ից. ոց. ուց. անց. ց. որոնք համապատասխանում են հոգնակի սեռ.-տր.-ի թիբույթների առաջին տիպին: Այս երկու հոլովների տարբերակման ֆունկցիան ինչպես եղակի թվում, այնպես էլ այստեղ, կատարում է ի(յ) նախդիրը: Հոգնակի բացառականի այս կազմությանն ունեցող անունների հոգնակի ուղղական հոլովաձևը օրինաչափորեն ստանում է կամ Բ. կամ սրանով բաղադրված որևէ այլ հոգնակերու:

Երկրորդ տիպը բացառականի բաղադրյալ թիբույթներով կազմությունն է, որտեղ բաղադրիչներից առաջինը (ծիշտ նույնպես, ինչպես սեռ.—տ.—ում) ունի թվի իմաստն արտահայտելու ֆունկցիա, իսկ երկրորդը՝ հոլովի: Հոգնակիությունն արտահայտվում է ուղղականի հոգնակերտնեւում, իսկ բացառական հոլովի իմաստը՝ ի(յ) նախդրով և ոյ. ու. է վերջավորություններով: Այստեղ, ի տարբերություն առաջին երկուսի (ոյ և ու), է ձևույթը հատուկ է միայն բացառականին և հոգնակի սեռական-տրական և բացառական հոլովների տարբերակման համար հակադրության ուժեղ դիրք է ստեղծում: Այս կազմության ժամանակ տեղի են ունենում հոլովանիշ տարրին նախորդող վանկի ձայնավորների ճիշտ նույնպիսի հնչյունափոխություններ, ինչպես սեռական-տրականի դեպքում:

Պետք է նշել, սակայն, որ բաղադրիչների ընտրության և կապակցելիության տեսակետից սեռ.—տր.—ի և բացառականի կազմության այս տիպի թիբույթները լիակատար նույնություն չեն ցուցաբերում: Միջին հայերեն դրա-

կանության մեջ բացառականի համար վկայված չենք զտնում այնպիսի ձևեր, որոնք կան սեռ.-տր.-ի համար (ինչպես՝ անու, վնու, ստնու, ենու, եր-տյ, ստնեռյ և այլն) և, ընդհակառակը, որոշ կազմութիւններ էլ վկայված են միայն բացառականով: Այս տարբերութիւնները սակայն կառուցվածքա-յին տեսակետից էական նշանակութիւն չունեն, մանավանդ որ այս ձևերը ինքնըստինքյան բավական սահմանափակ կիրառութիւն ունեն:

Երրորդ տիպը, դարձյալ սեռական-տրականի նմանողությամբ, ուղղա-կանի հոգնակերտների միացութիւններն են առաջին տիպին պատկանող ձե-վութիւնների հետ: Այս տիպի թեքութիւններից հոգնակի բացառականի համար վկայված են ընդամենը՝ երեքը՝ երաց (եր+աց), ենաց (են+աց), վաց (վի+աց):

Վերջապես չորրորդ տիպը, որը յուրահատուկ կազմութիւն է հոգնակի բացառականի համար, ընդգրկում է այն թեքութիւններ, որոնք նույնպես բա-ղադրյալ կազմութիւններ լինելով, իրենցից ներկայացնում են հոգնակի բա-ցառականի աց, ոց, եց. անց վերջավորութիւնների և եզակի բացառականի ւ, ցուցչի համակցութիւններ, որտեղ է ձևութիւ մշտապես հանդես է դալիս որպէս վերջին բաղադրիչ: Այս կազմության ժամանակ բացառական հոլովի իմաստն արտահայտված է կրկնակի՝ թի՝ եզակի, թե՛ հոգնակի ձևութիւնների միջոցով:

Երրորդ և չորրորդ տիպի թեքութիւնները առաջին երկու տիպերի համեմա-տությամբ շտապաբանց սահմանափակ կիրառութիւն ունեն: Իսկ առանձին վերցրած՝ ֆունկցիոնալ ամենամեծ բնութագրութիւնը ընկնում է առաջին տիպի աց ձևութի վրա, քանի որ ինչպէս նշվեց, այն համապատասխանում է մի կողմից՝ եզակիի ի, ո ձևութիւններին (հմտ. կրարարի ի-ա, ե-ա խառն հո-լովումները), մյուս կողմից՝ հոգնակի ուղղականի ւ տարրին, որոնք երկուսն էլ միջին հայերենի հոլովակազմության ամենադործուն միջոցներն են:

Հոգնակի բացառականի կազմութիւնը ներկայացվում է հետևյալ աղ-յուսակով:

Աղյուսակ 14

Տի-պեր	Թեքութիւններ	Բաղադրիչներ	Դրանց ընտրության պայմանները	Օրինակներ
1	2	3	4	5
1	աց (եաց, եց) ոց ուց անց		Արտ. թեքման ի, ո հո-լովումներ, հոգն. ուղղ.՝ ը նեք. թեքման ե հոլո-վում, հոգն. ուղղ.՝ ը Արտ. թեքման ու, ո հո-լովման ի հանդով մի շարք բառեր, հոգն. ուղղ.՝ ը Արտ. թեքման ո հոլո-վում, հոգն. ուղղ.՝ ը Արտ. թեքման ու հոլո-վում, հոգն. ուղղ.՝ ը Արտ. թեքման ի հոլո-վում, հոգն. ուղղ.՝ ունք Արտ. թեքման ոց հոլո-վում, հոգն. ուղղ.՝ այք	ազգի-(յ) ազգաց տեղոյ-(ի) տեղաց դատեր-(ի) դատերաց եկեղեցու-(յ) եկեղեցեաց որդոյ-(յ) օրդոց տնկոյ-(ի) տնկոց առիւծու-(յ) առիւծուց ծաղկի-ծաղկուներ-(ի) ծաղկանց տիկնաթ-տիկնայք-(ի) տիկնանց

1	2	3	4	5
	9		Ներք. թեքման III, նա, ի, ե, օ, անու հոլովում- ներ, հոգն. ուղղ.՝ I	պատահման-(ի) պա- տահմանց աղտեղու թեան-(յ) աղ- տեղու թեանց անձին-(յ) անձանց տարեր-(ի) տարերց եղբոր-(յ) եղբորց աուր-(յ) աուրց
2	ներոյ ներու ներէ երոյ երու երէ նոյ նու նէ վերոյ վերու անոյ ենոյ վտոյ ստնոյ	ներ + ոյ ներ + ու ներ + է եր + ոյ եր + ու եր + է նի + ոյ նի + ու նի + է (վի + ւր) + ոյ (վի + ւր) + ու անի + ոյ ենի + ոյ (վի + տի) + ոյ ստան + ոյ	Հոգնակի ուղղականի՝ ք-ից տարեր մասնիկ- ներ, երկրորդ բաղա- դրիչի ընտրությունը՝ ազատ	(յ) աղջկներոյ (ի) ձագկներու (ի) լեռներէ (յ) աղղերոյ (ի) ջերմերու (ի) շտերէ (յ) երակնոյ (յ) անհաւատնու (ի) միջնէ (յ) աշվերոյ (յ) աշվերու (յ) իրիցանոյ (ի) գրենոյ (ի) քոյովտոյ (ի) սեղեստնոյ
3	երաց ենաց վաց	եր + աց են + աց վի + աց	Ցուցակով որոշվող մի բանի անուններ	(ի) աներաց (ի) գրենաց (յ) իրվաց
4	ացէ ոցէ եցէ անցէ	աց + է ոց + է եց + է անց + է	Ցուցակով որոշվող մի բանի անուններ	(ի) պարոնացէ (ի) տեղոցէ (յ) որդեցէ (յ) երիցանցէ

Գործիական հոլով

Միջին հայերենում գործիական հոլովը, ի տարբերություն սեռական-տր-
բականի և բացառականի, ի հայտ չի բերում ձևւթների առատություն և
բազմազանություն:

Եղակի գործիականի հիմնական հոլովանիշ ձևւթները նույնն են, ինչ որ
գրաբարում՝ ա (վ) և ր: Սրանցից երկրորդը պահպանվել է սահմանափակ կի-
րառությամբ, ներքին թեքման ի. ա, եա հոլովումների համար, ինչ վերա-
բերում է առաջինին, ապա այն միջին հայերենում արդեն դադարել է դի-
տակցվել անկախ, որպես հոլովակերտ, ի հակադրություն հոլովիչի, այլ մի-
անալով վերջինիս, հանդես է գալիս որպես մեկ ամբողջական միաձուլյ թի-
քույթ՝ օժտված եղակի գործիական հոլովի ձևավորման և տարբերակման
ֆունկցիայով:

Վ (ւ)-ի և նրան նախորդող հոլովիչ տարրի համակցությամբ կազմված
թեքույթներն են աւ, իւ և ուվ: Առաջին երկուսը դեռևս որոշ շարիով պահպանել
են նախկին համակարգային հարաբերակցությունը հոլովման համապատաս-

խան տիպերին պատկանող անունների մյուս հոլովածների հետ. այսպես՝ ավերջավորությունը գործիական է կազմում արտաքին թեքման ա և որոշ շափով ի (զրաբարյան ի-ա խառն հոլովում) հոլովումներին պատկանող անուններից: Իսկ իւ վերջավորությունը համապատասխանարար գործածվում է արտաքին թեքման ի հոլովման (զրաբարյան ի պարզ հոլովում) պատկանող միերկու տասնյակ անունների գործիականը կաղմելու համար: Դրան հակառակ, ու վերջավորությունը զրաբարյան ո-ով հիմքերից տարածվել է նաև այլ հիմքերի վրա և միջին հայերենում այլևս համարյա դիրքային սահմանափակություն չունի: Ու վերջավորությունը գործիական է կազմում հոլովման համարյա բոլոր տիպերին պատկանող անուններից, այդ թվում նույնիսկ ներքին թեքմամբ հոլովվող մի քանի բառերից:

Միջին հայերենի համար յուրահատուկ երևույթ է օմ վերջավորությամբ գործիականը, որը թեև ծագումնաբանորեն կապվում է ամբ-ի հետ, սակայն հնչյունապես նրանից բավականին հեռանալով, այլևս չի կարող դիտվել որպես նրա տարրերակը: Բացի այդ, գործածության տեսակետից էլ այն ավելի շատ լծորդվում է ու վերջավորության հետ (կաթօմ-կաթով): Այս վերջավորությունն են ստանում քիչ թվով անուններ, որոնք բնորոշվում են ուղղակիների բաղաձայն-ն ձայնորդ հանգով: Որոշ դեպքերում նկատվում է այդ ու տարրի կորուստ (հատկապես ուշ շրջանում), այն վերականգնվում է միայն թեք հոլովածներում:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է եզակի գործիականի թեքույթները և նրանց գործածության պայմանները:

Աղյուսակ 15

Թեքույթներ	Դրանց ընտրության պայմանները	Օրինակներ
1. ու	Առանց դիրքային սահմանափակության (բացի հաջորդ կետերով վերադասված դեպքերից)	ագգի-ագգով աթուոյ-աթուով դանձու-դանձով անկեան-անկիւնով ական-ակնով
2. ա:	Արտ. թեքման ա և ի հոլովումներ	Աղամայ-Աղամաւ դատաստանի-դատաստանաւ
3. ի:	Արտ. թեքման ի հոլովման մի շարք բառեր	բանի-բանիւ
4. ր	Ներքին թեքման ի, ա, եւ, սուտ հոլովումներ	անձին-անձամբ արևան-արևամբ դատման-դատմամբ աւուր-աւուրբ
5. օմ	Ծուցակով որոշվող մի քանի հիմքեր	անձօմ, ձեռօմ, կաթօմ, ոսքօմ, մատօմ

Հոգնակի գործիականը նույնպես, ինչպես և մյուս թեք հոլովները, ունի կազմության տարրեր տիպեր, թեև ոչ այնքան բազմազան: Առաջին տիպը,

որ ընդհանուր է գրարարի հետ, բնորոշվում է Բ հոգնակերտով, որը կցվում է ձգակի գործիականի թեքությոններին: Այս տիպի թեքությոններն են՝ օբ, իւբ, ուվբ, աւբ, [ամ]բ (վերջինը ունի և իր հնչյունափոխված տարբերակը՝ [ամ]բ):

Միջին հայերենում ձգակի և հոգնակի գործիականի այս տիպի կազմութեան մեջ այլևս չկա այն ուղղապիծ համապատասխանությունը, ինչ գրաբարում: Այսինքն՝ միշտ չէ (ավելի շուտ սակավ դեպքերում է), որ տվյալ բառի հոգնակի գործիականը ստանում է ձգակիի թեքությոն՝ Բ-ով բաղադրված: Ավելին՝ միջին հայերենում հոգնակի գործիականն ունի այնպիսի ձևեր, որոնց համարժեքները կամ ընդհանրապես չեն պահպանվել եղակի թվում (ինչպես՝ հոգն. աւբ, եզ. ու) կամ եղակի ու հոգնակի ձևերը միմյանցից հնչյունապես այնքան են հեռացել, որ նրանց նախկին հարաբերակցությունն այլևս չի գիտակցվում (ինչպես՝ հոգնակի ու և նպակի աւ)⁵: Այդ պատճառով էլ այս տիպի թեքությոնները կարելի է դիտել որպես հոգնակի գործիականի անտրոհելի ձևությոններ:

Ինչ վերաբերում է հոգնակի գործիականի թեքությոնների գործածման հաճախականությանը, ապա պետք է նշել, որ ի հակադրություն եղակիում ամենատարածված ու ձևությոնի, հոգնակիում ամենամեծ ֆունկցիոնալ ծանրաբեռնվածություն ունի օբ վերջավորությունը: Այս ձևությոնով հոգնակի գործիական են կազմում ոչ միայն այն սակավաթիվ բառերը, որոնք եղակիում ունեին աւ վերջավորություն, այլև եղակիում ու և իւ վերջավորություն ստացող բառերի մի մասը: Ուվբ, իւբ, (ամ)բ վերջավորությունները հիմնականում համընկնում են եղակիի ուվ, իւ, (ամ)բ թեքությոններին: Իսկ ուբ վերջավորությոնը, չունենալով եղակիում իրեն համապատասխանող վերջավորությունը, հիմնականում հանդես է գալիս ուվ-ի դիմաց, կամ կազմում է անեղական անունների հոգնակի գործիականը: Բոլոր դեպքերում, այդ վերջավորությունն ստանում են ընդամենը մի քանի բառ:

Հոգնակի գործիականի կազմության երկրորդ տիպը, ըստ ընդհանուր օրինաչափության, բաղադրյալ թեքությոններով է և իրենից ներկայացնում է ուղղականի հոգնակերտների և եղակի գործիականի թեքությոնների համադրությոն: Հոգնակի գործիականը նույնպես, ինչպես եղակին, ոչ հօրինակ մյուս հոլովների, աչքի է ընկնում ձևությոնների համեմատական սակավությամբ: Հոգնակերտներից սովորաբար գործածվում են միայն եւ և նի մասնիկները, մի քանի դեպք վկայված են աւ և վնի հոգնակերտներով: Որպես երկրորդ քաղաղորիչ հանդես է գալիս ուվ վերջավորությոնը՝ եղակիի ամենատարածված թեքությոն: Բացի ուվ-ից, թիստ սակավ կիրառությամբ հանդիպում է նաև աւ ձևությոն: Այսպիսով, հոգնակի գործիականի կազմության երկրորդ տիպի համար ունենք հետևյալ քաղաղորյալ թեքությոնները՝ եւով, եւաւ, նով, աւով:

Հոգնակի գործիականի կազմությունը և կիրառության սահմանները կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով:

⁵ Այս հնչյունափոխության պրոցեսն ավարտված էր արդեն X դարում (տե՛ս Ա. Աբրահամյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ, ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 4):

Ձև- պն	Թեքույթ- ներ	Բազադրիչ- ներ	Դրանց ընտրության պայման- ները	Օրինակներ
1.	օք		Արտ. թեքման ի. ո, ու, եւնի հո- լովումներ. եզ. գործ.՝ ու, ու	հրամանի-հրամանաւ-հրա- մանօք ծառոյ-ծառով-ծառօք զարդու-զարդով-զարդօք ծննդեան-ծննդով-ծննդօք
	իւք		Արտ. թեքման ի հոլովում. եզ գործ.՝ իւ	սրաի-սրաիւ-սրաիք
	ովք		Արտ. թեքման ի. ո հոլովում- ներ. եզ. գործ.՝ ու	պտղի-պտղով-պտղովք որդոյ-որդով-որդովք
	ուք (ամ)քք ամ(ք)		Մի հարթ անեզական անուններ ներքին թեքման ու հոլովում	վարուք եղեգան-եղեգամք ական-ակամք
2.	երով երաւ նով վնով անով	եր ու եր+աւ նի ու (վի-նի) ու ան ու	Առանց դիրքային պայմանավոր- վածության	ջրերով շնչերաւ պատճառնով իրվնով ձիանով

Ներգոյական հոլով

Հատուկ հոլովական թեքույթով օժտված ներգոյական հոլովը միջին հայերենի ամբողջ պատմության ընթացքում խիստ սահմանափակ կիրառու-
թյուն ունի և տիրապետող է դառնում միայն վաղ աշխարհաբարի շրջանից
սկսած: Միջին հայերենում ներգոյական հոլովի իմաստի արտահայտման
հիմնական միջոցը դեռևս պարբարում ևս լայն տարածում ունեցող կազմու-
թյունն է՝ ի նախդիր+եզակի սեռ.-տր. և հոգնակի հայց.: Ի նախդիրը, ի
դեպ, տեղ և ժամանակ ցույց տալու իր ֆունկցիայով մեծ մասամբ պահպան-
վում է նաև այն դեպքերում, երբ ներգոյականը կազմվում է հատուկ հոլո-
վանիչ վերջավորությամբ:

Միջին հայերենում եզակի ներգոյականը ունի երկու տիպի վերջավորու-
թյուն: Արանցից առաջինը՝ ում, որ վկայված է դեռևս զրաբարից, տարածվել
է սկզբնապես տեղ և ժամանակ ցույց տվող մի քանի անունների վրա, ապա
ընդհանրացել և հաստատվել ժամանակակից արևելահայերենում: Իսկ երկ-
րորդը, որ նույնպես վկայված է զրաբարից՝ նույն ֆունկցիայով ու գործածու-
թյան ոլորտներով, միջին հայերենում առաջինի համեմատությամբ նվազ
գործածական լինելով, հետագայում էլ տարածում չի գտել և մեզ է հասել
միայն մի քանի վկայություններով: Այս վերջին ոչ վերջավորությունը ձևով և
ծագումով համընկնում է ոչ հոլովման եզակի սեռական-տրական հոլովի
ցուցչի հետ, սակայն տարբերվում է նրանից իր դիրքային պայմանավորվա-
ծությամբ, ֆունկցիայով և յիովին սահմանազատվում է իր կիրառությամբ:
Այսպես՝ սեռ.-տր.-ի ոչ վերջավորությունը հիմնականում վերապահվում է
անձինք, հատկապես աղգակցական կապեր նշանակող անուններին, իսկ այդ
անունները կամ ներգոյական հոլով ընդհանրապես չունեն, կամ այն կազմում

են նկարագրական եղանակով: Մինչդեռ այն անունները, որոնք եզակի ներգոյականում ստանում են ոչ վերջավորությունը, մեծ մասամբ տեղի և ժամանակի գաղափար են արտահայտում, իսկ որպես ձևական ընդհանուր հատկանիշ ունեն հիմքի ի հանգը (սակավ բացառություններով): Դրա հետ միասին, կարևոր տարբերակիչ հատկանիշ է և այն, որ այս բառերը եզակի սեռ.-տր.-ում երբեք հանդես չեն գալիս ոչ վերջավորությամբ: Այսպիսով, այստեղ գործ ունենք քերականական անփոփոխականների հետ: Թերևս այս երկու ձևայինների համանունության պատճառով է, որ ոչ վերջավորությամբ ներգոյականը հետագա տարածում չգտավ և դուրս մղվեց լեզվի հոլովման համակարգից:

Ստորև բերվում են միջին հայերեն դրականությամբ վկայված՝ ում և ոչ վերջավորությամբ ներգոյականի օրինակներ:

Ում

Ոչ

ամսում ԳՎ—20

այլում ՎԱ—30

(յ)այնում Ֆր.—262, 444

(յ)անցելում ԳՎ—57

Լկեղեցում ԴՀՎ—3—146

ժամանակում ՍՍՏ—140

կաթում ՄՀ—51, 55

(ի) կենցաղում էՄԱ—176

հանդերձելում ԴՀՎ—3—28

միում ՍՍՏ—3

(ի) միսում ԴՀՎ—1—16, 2—46

(ի) շաբաթում ԴՀՎ—3—211

(ի) սրտում ՂՀ—238

(ի) տարում ԴՀՎ—3—171, 211

տեղում ԱՕԲ—27

(յ) ամարանոց ԳՎ—177

(ի) ամսոց ԳՎ—32, 37, 38, ԴՀՎ—2—116

(յ) այգուց ԳՎ—34, 66, 132

(ի) եկեղեցուց ԴՀՎ—3—245, էՄԱ—56

(ի) կղզուց ՍՍՏ—3

(ի) տարուց ԳՎ—11, ԴՀՎ—1—12

(ի) տարուց ՍՍԴ—161, ԴՀՎ—1—60, 2—21, 116

(ի) տեղուց ՎԱ—5—138, ԴՀՎ—3—68

(ի) տեղուց ՎԱ—30, ԳՎ—62, 198, ՍՍՏ—14, էՄԱ—63, ՄՂ—107

Թե՛ ում և թե՛ ոչ վերջավորությունները գործածվում են միայն եզակի թվի ներգոյականը կազմելու համար: Հոգնակի ներգոյականի առանձին հոլոված և միջին հայերենի շրջանից չի վկայված: Ինչպես բազմիցս նշվեց, այդ իմաստն արտահայտվում է ի նախդրի և հայցականի համադրությամբ, վերջինիս կազմության բոլոր առանձնահատկություններով հանդերձ:

ՈՐՈՇՑԱԼՈՒԹՅԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Ինչպես հայոց լեզվի բոլոր փուլերում, այնպես էլ միջին հայերենում որոշյալության քերականական կարգը պայմանավորված է որոշիչ հոգերի առկայությամբ:

Դրաբարում որոշյալության իմաստի արտահայտությանն էին ծառայում ս. դ. ն հոգերը, ընդ որում, առաջին երկուսը այս ֆունկցիայով հանդես էին գալիս ավելի սահմանափակ կիրառությամբ, քան վերջինը: Բացի դրանից դրաբարում ս. դ. ն հոգերը բազմիմաստ էին և անհրաժեշտության դեպքում կարող էին ստանալ անձնական, ցուցական, ստացական զերանունների

իմաստ և զործածվել կամ փոխարինելով համապատասխան դերանուններին, կամ վերջիններիս հետ զուգահեռաբար Այդ պատճառով էլ ս, դ, ն մասնիկների համար «որոշիչ հոդեր» տերմինի հետ միաժամանակ դրաբարի քերականություններում զործածվում են նաև «դիմորոշ», «ստացական» կամ «ցուցական հոդեր» տերմինները: Պետք է նշել նաև, որ այս բոլոր իմաստային տարբերակումները որոշ չափով որոշյալության տարր են պարունակում և վերջին հաշվով ծառայում են բառերի նշանակած առարկաների առկայացմանը⁶:

Միջին հայերենում ձևա-իմաստային այս սինկրետիզմը արդեն որոշ չափով վերանում է, թեև ոչ վերջնականապես (դրա հետքերը նկատվում են նույնիսկ ժամանակակից հայերենում): Ստացականության իմաստը սկսում է կապվել հիմնականում ս, դ հոդերի հետ, իսկ ն հոդը ստանում է առաջին հերթին որոշյալություն արտահայտելու ֆունկցիա, թեև երկրորդաբար կարող է ունենալ ստացականության և ցուցականության իմաստ: Այդ կարևոր է ցույց տալ հետևյալ օրինակներով. Մինչ որ վճարի պարտքերս, որ ի յիմ շալակս է կուսած—Ցր.—388 (ս-ստացական), Տեսեք, թե քանի մարդիք յաշխարհէս դարտակ մնացին—Ցր.—434 (ս-ցուցական), Աշերդ է ի ծով նրման, Ուներդ՝ աղեղան յարման—ԿԵ—156 (դ-ստացական), Ես այդ աթոռոյդ տէրն եմ—էՄԱ—114 (դ-ցուցական):

Խիստ հազվադեպ ս կամ դ հոդը կարող է կատարել որոշիչ հոդի ֆունկցիա, ինչպես՝ Ով գեղեցիկ ի հաւերդ, երնէկ ականջին, որ լսէ զբարի բարբառքո—ՎԱ—30 (դ-որոշիչ):

Ն որոշիչ հոդով օրինակներ. Ասեն իշխանքն և ճորտերն առ թագաւորն—ՎԱ—211, Նոր տնկին գինին բնութեամբ այլ հով է, քան զհին այգւոյն—ԳՎ—84:

Շատ ավելի սակավ են ն հոդի այլ կիրառությունները. Թագուոր մի կայր, աշուին էր խաժ—ՆՇ—638 (ն-ստացական):

Անորոշության և որոշյալության իմաստային հակադրությունը արտահայտության պլանում համապատասխանում է ձևական հակադրությունը: Միջին հայերենում արդեն նկատվում են մի թվականի, որպես անորոշության իմաստ արտահայտող հատուկ մասնիկի, զործածության հատուկեմտ դեպքեր, ինչպսպես քիչ վերը նշված «թագուոր մի կայր» օրինակը, կամ՝ «վարդապետի մն խօսքն բարի խրատ լինի» (ԱՕԲ—6): Սակայն այսպիսի օրինակները խիստ սակավ են, մի մասնիկը դեռ ձևաք չի բերել իմաստային և ֆունկցիոնալ այն հաստատությունը, որ հատուկ է ժամանակակից հայերենին:

Միջին հայերենում ն որոշիչ հոդը շունի իր դիրքային տարբերակը՝ լ, որ ավելի նոր ժամանակների ծնունդ է և զարգացել է միայն աշխարհարարում՝ հնչյունական որոշ օրենքների զործողության հետևանքով:

Որոշիչ հոդը միշտ կցվում է բառավերջին, անկախ այն բանից, բառը ուղիղ ձևով է հանդես գալիս, թե հոլովված, այսինքն՝ բոլոր դեպքերում զրվում է հոլովա-թվանիշ ձևությից հետո, ընդ որում, լինելով բաղաձայն, չի առաջացնում շեշտի դիրքի փոփոխություն և դրա հետ կապված հնչյունափոխություններ:

6 Հմմտ. Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 151:

Որոշիչ հոգը միջին հայերենում միանգամայն պուրկ է հոլովատարրի-
րակիչ ֆունկցիայից, ձևաբանական մակարդակում դիրքային ոչ մի պայմա-
նավորվածություն չունի և կարող է կցվել ցանկացած հոլովածին՝ լինի այն
եզակի, թե հոգնակի Օրինակ՝ Կատարեցաւ լիճ նորտեւրուն անսիգնին և իրա-
նէրն—ՍՍԱ—43 (հոգն. սեռ.-տր. և ուղղ.), Իւրեանք իւրեանց անձնէրովն և
րորդակովն—ՎԼ—187 (հոգն. և եզ. գործ.), Մէկ մի ի զգայաբանացն կամ
չորս զգայաբանն—Գր.—93 (հոգն. բաց. և ուղղ.), Զայն այգոյն գեղեցկու-
թիւն—ՎԱ—179 (եզ. սեռ.-տր.), Եւ թէ մի ոմն հանց նեղ և մութն տեղումն
կենար՝ շէր ապրիլ—ԱՕԲ—27 (եզ. ներգ.) և այլն:

Որոշիչ հոգը դիրքային սահմանափակություն ի հայտ է բերում միայն
շարահյուսական մակարդակում՝ կախված տվյալ բառի պաշտոնից նախադա-
սություն մեջ:

Կիրառման այս առանձնահատկությունների պատճառով հոլովման հա-
րացույցներում հոգերը նշելու անհրաժեշտությունը վերանում է:

ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՐԱԳՈՒՅՑՆԵՐԸ

Ստորև ներկայացվում են միջին հայերենի անունների հոլովման հարա-
ցույցները ըստ տարբեր հոլովումների: Հասկանալի է, որ առանձին հոլովնե-
րի կազմության աղյուսակներում տեղ դրած բոլոր քերականական ձևերն
իրենց բաղմազանությամբ չեն կարող արտացոլվել հիմնական հարացույցնե-
րի մեջ: Այդ կտաներ հոլովման համակարգի հստակ պատկերի խճողմանը,
քանի որ շատ և շատ դեպքերում բացակայում է տվյալ հարացույցի անդամ-
ների մի պայլի մասը, որոշ ձևեր վկայված են եզակի օրինակներով, այլ ձևեր
միմյանց նկատմամբ դրսևվում են լրացական բաշխման հարաբերության մեջ,
կամ ունեն իրենց բաղմազան տարբերակները: Հարացույցների որոշ ենթա-
դրույալ անդամներ էլ բացակայում են այն պատճառով, որ դրանք ղեռնս կապ-
մավորված չէին լեզվի զարգացման տվյալ շրջանում (ինչպես վաճ հոլովման
մի շարք հոլովածներ, ներդոյական հոլովը անունների ճնշող մեծամասնու-
թյան համար), կամ էլ պարզապես վկայված չեն սկզբնաղբյուրներով և հա-
վաստի վերականգնման հնարավորություն չեն տալիս:

Ուստի և հարացույցներում բերվում են միայն հիմնական (ամենատա-
րածված ու գործուն) տիպերը, անհրաժեշտ դեպքերում նշվում են հոլովների
կազմության տարբերակները կամ զուգաձևությունները, մասնավորապես
հոգնակի հոլովման մեջ (համադրական կամ բաղմաձևույթ-կցական տիպեր):

ԱՐՏԱՔՈՆ ԹԵՔՈՒՄ

Եզակի

Հոգնակի

Ի հոլովում

Ու	ազգ	ազգք	կամ	ազգեր
Ս-Տ	ազգի	ազգաց		ազգերոյ (ու, ի)
Հ	(զ) ազգ	(զ) ազգս (ք)		(զ) ազգիք
Բ	(լ) ազգէ	(լ) ազգաց		(լ) ազգերոյ (ու, է)
Գ	ազգով (ա)	ազգօք		ազգերով

Ո հոլովում

Ու	ամիս	անսիւ	ամիսք	անսիւզնի
Ս-Տ	ամսոյ	անսիւղոյ	ամսոց	անսիւզնոյ (ու)
Հ	(զ) ամիս	(զ) անսիւ	(զ) ամիսս (ք)	(զ) անսիւզնի
Բ	(լ) ամսոյ (է)	(լ) անսիւղոյ (է)	(լ) ամսոց	(լ) անսիւզնոյ (ու)
Գ	ամսով	անսիւղով	ամսօք	անսիւզնով
Ն	(լ) ամսում	—	—	—

Ու հոլովում

Ու	այդի	զլուխ	այդիք	զլինի
Ս-Տ	այդս	զլիս	այդեաց (եց)	զլինու
Հ	(զ) այդի	(զ) զլուխ	(զ) այդիս (ք)	(զ) զլինի
Բ	(լ) այդ (ու) է	(լ) զլիս է	(լ) այդեաց (եց)	(լ) զլինու
Գ	այդեաւ (ով)	զլիով	այդօք (ովք)	զլինով
Ն	(լ) այդի ոչ	—	—	—

Ա հոլովում

Ու	աղջիկ	աղջկունք	կամ	աղջկներ
Ս-Տ	աղջկան	աղջկանց		աղջկներոյ (ու)
Հ	(զ) աղջիկ	(զ) աղջկունս (ք)		(զ) աղջկներ
Բ	(լ) աղջկնէ	(լ) աղջկանց		(լ) աղջկներոյ (ու)
Գ	աղջկնով	աղջկօք		աղջկներով

Ա հոլովում

Ու	Աղամ
Ս-Տ	Աղամայ
Հ	(զ) Աղամ
Բ	(լ) Աղամայ
Գ	Աղամաւ (ով)

Ե հոլովում

Ու	ծնունդ	ծնունդք
Ս-Տ	ծննդեան	ծննդոց
Հ	(զ) ծնունդ	(զ) ծնունդս (ք)
Բ	(լ) ծննդինէ	(լ) ծննդոց
Գ	ծննդեամբ (ով)	ծննդօք

Վ հոլովում

Ու	գիշեր	գիշերներ
Ս-Տ	գիշերովան	գիշերներոյ (ու)
Հ	(զ) գիշեր	(զ) գիշերներ
Բ	(լ) գիշերվնէ	(լ) գիշերներոյ (ու)
Գ	գիշերով	գիշերներով

Ոջ հոլովում

Ու	տէր	տէրեր
Ս-Տ	տիրոջ	տէրերու
Հ	(զ) տէր	(զ) տէրեր
Բ	(ի) տիրոջէ	(ի) տէրերու
Գ	տիրոջով	տէրնրով

Ներքին ԹԵՔՈՒՄ

Ա հոլովում

Նզակի		Հոգնակի
Ու	տուն	տնովի
Ս-Տ	տան	տնովոյ
Հ	(զ) տուն	(զ) տնովի
Բ	(ի) տնէ	(ի) տնովոյ
Գ	տնով (տամբ)	տնովով

Ի հոլովում

Ու	անձն	տնձիւք	կամ	անձներ
Ս-Տ	անձին	անձանց	■	անձներոյ (ու)
Հ	(զ) անձն	(զ) անձինս (ք)		(զ) անձներ
Բ	(ի) անձնէ	(ի) անձանց		(ի) անձներոյ (ու)
Գ	անձամբ (ան- ձամ)	անձամբք		անձներով

Ե հոլովում

Ու	տարր	տարերք
Ս-Տ	տարեր	տարերց
Հ	(զ) տարր	(զ) տարերս (ք)
Բ	(ի) տարերէ	(ի) տարերց
Գ	տարերբ	տարերքք

Եա հոլովում

Ու	հիւնդութիւն	հիւնդութիւններ
Ս-Տ	հիւնդութեան	հիւնդութեններոյ
Հ	(զ) հիւնդութիւն	(զ) հիւնդութիւններ
Բ	(ի) հիւնդութենէ	(ի) հիւնդութեններոյ
Գ	հիւնդութենով (թե- ամբ)	հիւնդութեննրով

Օ հոլովում

Ու	հարր	հարրք (հարք)
Ս-Տ	հօր	հարանց
Հ	(զ) հարր	(զ) հարրս (ք)
Բ	(ի) հօրէ	(ի) հարանց
Գ	հօրով	հարամբք

Անու հոլովում

Ու	օր	առարգ	կամ	օրեր
Ս-Տ	առար	առարց		օրերոյ
Հ	(դ) օր	(դ) առարս (ք)		(դ) օրեր
Բ	(լ) օրէ (օրվնէ)	(լ) առարց		(լ) օրերոյ
Պ	առարր (օրով)	առարրք		օրերով

ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

Միջին հայերենում նույնպես, ինչպես և դրաբարում, դերանվանական հոլովման հիմնական առանձնահատկություններն են մի կողմից՝ եզակի և հոգնակի, մյուս կողմից՝ ուղիղ և թեք հոլովածների տարամասնությունն ու տարահիմքությունը (սուպլետիվիզմ), հոլովիչների բացակայությունը, հիմքի և վերջավորության սերտաճումը։ Մեկ համաձուլ (ֆուզիոն) ձևի մեջ համակցված արտահայտություն են գտնում և՛ բառային, և՛ քերականական իմաստները, բնդ որում, վերջիններք կարող են լինել մեկից ավելի։ Այնպես որ, թեքված դերանվանականների տրոհումը քերականորեն իմաստակիր միավորների երեքման անհնարին է, երեքման էլ կարող է կրել միայն խիստ պայմանական բնույթ։ Առանձնացված թեքույթները միայն որոշ դեպքերում են համընկնում անվանական հոլովմանը հատուկ համապատասխան ձևերին։

Ոչ բոլոր դերանուններն են սակայն, որ ունեն դերանվանական հոլովում։ Դերանունների որոշ տիպեր ամբողջությամբ կամ մասամբ անվանական հոլովում ունեն, այսինքն՝ որոշ հոլովածներում, իսկ երեքման նույնիսկ ամբողջ հարացույցում հնարավոր է տեսնել հիմքի և վերջավորության հստակ անջրպետում, միասնական հոլովիչի առկայություն, թվակազմության և հոլովակազմության՝ անվանական հոլովմանը հատուկ եղանակ և այլն։

Այս ամենով հանդերձ, անկախ հոլովման տեսնիկայի առանձնահատկություններից, բոլոր դերանունները քննվում են միասնաբար, ելնելով դերանունների իմաստային և համակարգային ընդհանրություններից, որոնք մեզ թույլ են տալիս դրանք միավորելու մեկ ձևա-իմաստային խմբի մեջ։

Միջին հայերենի դերանվանական հոլովումը նույնպես, ինչպես և անվանականը, բնորոշվում է զգալի անմիօրինակությամբ, որ արտահայտվում է նույնիմաստ հոլովածների տարբերակների առատությամբ։ Այդ առատությունը ստեղծվում է ոչ միայն քերականական ձևույթների տարբերակների, այլև հիմնականում ամբողջ բառաձևի զուտ հնչյունական բազմաթիվ փոփոխականների առկայության հաշվին (յիւմէ-իւրմէ-ինմէ-յայւմէ-իւրիմէ, իւր-իւր, իւմնցնէ-իւրենցնէ, նոբա-նաբա, նացմէ-նոցմէ-նոցանէ, ֆեզ-ֆի-ֆե-ֆէ և այլն)։

Դերանվանական հոլովման ժամանակ արմատը քերականական ավելի մեծ ինֆորմացիա է պարունակում, քան անվանական հոլովման ժամանակ, ուստի այս տիպի հնչյունական տարբերակները որոշ դեպքերում կարող են քերականական ձևերի ճանաչման ու նույնացման (իդենտիֆիկացիայի) զգալի դժվարություններ ստեղծել, մինչդեռ անվանական հոլովման մեջ հիմքի կամ արմատի հնչյունական տարբերակներն այս տեսակետից էական արժեք չունեն, քանի որ հոլովումը հիմնականում կատարվում է մասնիկավորման

միջոցով, և տվյալ հոլովածներ ճանաչվում է բերականական իմաստով օժրտված հատուկ թեքույթներին:

Միջին հայերենի դերանվանական հոլովման առանձնահատկություններից է նաև այն, որ (ի տարբերություն անվանական հոլովման, որտեղ պակասավոր հարացույցներ համարյա չկան) որոշ դերանուններ ներկայացված են միայն ուղիղ հոլովածներով, այսինքն՝ տուկա է անհոլովության երևույթը: Այսպես՝ չեն հոլովվում անորոշ դերանուններից մի քանիսը (իբ, մկ, մի, մարդ, զինչ), իսա, իտա, ինա դերանունները ունեն միայն եզակի ուղղական և հայցական (նույնը՝ զ նախորդով) և այլն: Կան և պակասավոր դերանուններ, որոնց հոլովման հարացույցների պակասող անդամները հնարավոր չէ վերականգնել. ինչպես՝ իրաց, միմեանց փոխադարձ դերանունները չունեն ուղղական հոլով, ով հարբերականը և իմ, քո, մե, ձեր ստացականները զուրկ են մի քանի թեք հոլովածներից: Մասնավորապես վերջինների մասին պետք է ասել, որ այդ դերանունները իրենց թեք հոլովածները աստիճանաբար կորցնելու պրոցեսի մեջ են գտնվում: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ միջին հայերենը հետզհետե կորցնում է որոշիչ-որոշյալի՝ դեմքով, թվով և հոլովով համաձայնելու շարահյուսական առանձնահատկությունը, որ հատուկ էր պարարին, և խոսքի մեջ հիմնականում որոշյալին ֆունկցիաներով հանդես եկող դերանունները, մանավանդ որ արդեն մեծ մասամբ կիրառվում են նախադաս, ավելի ու ավելի հաճախ հանդիպում են միայն իրենց ուղիղ ձևով:

Պակասավորներից պետք է տարբերել նախ այն դերանունները, որոնց հոլովման հարացույցի այս կամ այն անդամը պարզապես չի վկայված սկզբնաղբյուրներում, սակայն համակարգային առանձնահատկությունները հավաստի վերականգնման հնարավորություն են ընձեռում: Ինչպես, օրինակ, անձնական և ցուցական որոշ դերանունների դորժիական հոլովածները, որոնք հարացույցների մեջ մտցվում են աստղանիշերով՝ որպես վերականգնված ձևեր:

Բացի դրանից, միջին հայերեն մատենագրության մեջ հանդիպում են և այնպիսի դերանվանածներ, որոնք հարացույցների մեջ չեն խմբավորվում, մնում են մեկուսի և չեն արդարացվում համակարգով: Դրանք սահմանափակ կիրառություն ունեցող զրարարյան հնարանություններ են, որոնցից մի քանիսը հանդես են գալիս միջին հայերենին հատուկ՝ հիմնական և անհամեմատ ավելի դորժուն զուգահեռ ձևերի կողքին. Օր.՝ ի մէնջ ՎԱ—43 (ի մեզնէ, ի մեզանէ, մեզնէ, մեզէ), ի ձէնջ ՎԱ—2—73 (ի ձեզնէ, ի ձեզանէ), այսու ԳՎ—21 (այսով), այդու ԳԱ—220 (այդով, առով). այնու ՄԶ—9, ԳՎ—70 (այնով), այսր ԳՎ—208 (այսոր), այնր ԳՎ—181 (այնոր), յայսցանէ ՄԶ—62 (յայսոց, յայսոցէ): Մյուսները միջին հայերեն զուգահեռներ չունեն և մնում են սոսկ որպես այս կամ այն ներդիմանակի մոտ կիրառություն՝ դառնալով զրարարյան փոխառություններ. ինչպես՝ ամենեցուն, նորին, նոսին, նոցին, դոցին, սովիմր և այլն, այն դեպքում, երբ միջին հայերենում ամենեքին դերանունն ընդհանրապես վերացել է, իսկ սոյն, դոյն, նոյն դերանունները բացի վերոհիշյալ պահանջով հատուկնեւ ձևերից նոր զարգացում չեն ստացել:

Հետևելով ավանդական քերականությանը, կարելի է կատարել միջին հայերենի դերանունների հետևյալ իմաստային դասակարգումը.

1. Անձնական՝ Լս-մենք, դու-դուք, ինք-իւրենք,
2. Զուցական՝ ա) սա, դա, նա (սոքա, դոքա, նոքա),
բ) այս, այդ, այն (այսոք, այդոք, այնոք),
գ) իսա, իդա, ինա,
3. Փոխադարձ՝ իրաց, միմեանց (միմեաց),
4. Ստացական՝ իմ, քո, իւր (իւր), մեր, ձեր,
5. Հարցական՝ ո՞ւր, զի՞նչ,
6. Հարաբերական՝ ով, ուր, զինչ,
7. Անորոշ՝ մարդ, ոք, մէկ մի, այլ, մէկայլ, միւս,
8. Որոշյալ՝ ամէն, ամէն մէկ:

Ինչպես արդեն նշվել է, դերանվանական հոլովման հետ կապված են թվի, հոլովի, դեմքի և որոշ չափով՝ որոշյալություն քերականական կարգերը: Սրանք արտահայտման որոշակի ընդհանրություններ ունենալով հանդերձ, դերանունների տարբեր տիպերի դեպքում յուրատեսակ դրսևորում են դառնում:

Դեմքի քերականական կարգը հատուկ է անձնական, ցուցական և ստացական դերանուններին: Պետք է սակայն նշել, որ դիմորոշ նշանակություն ունեն առաջին հերթին անձնականները, որտեղ դեմքի կարգը բնորոշում է առարկան ըստ հաղորդակցմանն ունեցած մասնակցության, ընդ որում, հաղորդողը ընդունված է կոչել առաջին դեմք, ընդունողը՝ երկրորդ և հաղորդմանը չմասնակցողը՝ երրորդ դեմք: Ի տարբերություն անձնական դերանունների, ցուցականների դեպքում գործ ունենք ոչ թե իրապես դեմքի, այլ տարածական հարաբերությունների արտահայտման հետ՝ ըստ դիմային վերաբերության. ցուցականները նշում են առարկայի՝ առաջին, երկրորդ կամ երրորդ դեմքին մոտ գտնվելը: Նույնպես և ստացականները մատնանշում են առարկայի՝ այս կամ այն դեմքին պատկանելը:

Դեմքի կարգը չի դրսևորվում քերականական որևէ ձևությամբ միջոցով, այլ կապված է դերանվան բուն հիմքի հետ, արտահայտվելով վերջիններիս տարբերությամբ, այսինքն՝ սուպլետիվ եղանակով: Անձնական և ստացական դերանունների մեջ Լս, դու, ինք, իմ, քո, իւր (իւր) բառերը ինքնին իսկ արդեն պարունակում են դեմքի իմաստ, իսկ ցուցական դերանունների մեջ դիմային իմաստի կրողներն են ս. դ. և հիմքային բաղաձայնները:

Թվի քերականական կարգը դերանվանական հոլովման ժամանակ ունի հետևյալ առանձնահատկությունները: Ուղիղ հոլովների դեպքում որպես եզակի և հոգնակի թվերի հակադրության հիմնական միջոց հանդես է գալիս ֆ ձևությամբ, ընդ որում, ըստ հիմքի կրած փոփոխությունների կարելի է առանձնացնել կազմության չորս տիպ:

1. Մաքուր հիմքով կազմություն, որ դերանվանական հոլովման դեպքում խիստ պահանջարկ է, ներկայացված է ընդամենը մեկ-երկու օրինակով՝ դու-դուք, քո-քոք, ով-ովք:

2. Հիմքի տարարմատություն, երբ հոգնակիում հանդես է գալիս եզակիից տարբեր՝ բոլորովին նոր արմատ՝ ա) Լս-մենք, ինք-իւրենք (իւրենք, իւրենք) + ք, բ) իմ-մեր, քո-ձեր, վերջին դեպքում թվային հակադրությունը ստեղծվում է առանց ֆ ձևությամբ:

3. Հոգնակին ընդգրկում է եզակիի հիմքն ամբողջությամբ, սակայն հիմքի և թվանիշ ձևությամբ միջև ավելանում է հիմքակազմ տարր՝ հիմնականում ձայ-

նազոր կամ ձայնավորի ու ձայնորդի բաղադրություն. այս—այս + ո(ոն) + ք, այդ—այդ + ո(ոն) + ք, այն—այն + ո(ոն) + ք, ինք—ինք + եանք + ք:

4. Հոգնակիում ներկայացված է եզակիի հիմքը հնչյունափոխված ձևով, որին ավելանում է ք վանիչ ձևույթը՝ հաջորդող ձայնավորի ուղեկցությամբ. ուս—սո + ք + ա, դա—դո + ք + ա, նա—նո + ք + ա: Վերջինս ունի և նա + ք + ա տարբերակը, որտեղ հիմքի միջուկային տարրը անփոփոխ է մնում:

Նշված տիպերից առաջին երկուսը ընդգրկում են անձնական, ստացական, անձնանիչ հարցական-հարաբերական (որ. ով), իսկ վերջին երկուսը՝ ցուցական դերանունները: Ինչ վերաբերում է դերանունների մյուս տեսակներին, ապա պետք է ասել, որ դրանց հոլովման ժամանակ թվային հակադրություններ չեն ստեղծվում, քանի որ՝ 1) փոխադարձ դերանունները իմաստով անեզական են և ըստ ձևի հոլովվում են հոգնակիարար, 2) ստացական դերանունների հոգնակի ուղղականը չի վկայված⁸ (գրք. իմք, Բոյք, մեքք, ձեքք), 3) հարցական, հարաբերական և անորոշ դերանունները հիմնականում անհոլով են, 4) որոշյալները հոլովվում են միայն փոխանունաբար և անհոգնակի են:

Թեք հոլովներում նույնպես թվային իմաստը միասնական ձևով չի արտահայտվում: Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների դեպքում ունենք տարարմատ կադմություն՝ ինձ—մեզ, իմ—մեր, քո—ձեռք, քեզ—ձեզ՝ սեռական և տրական հոլովների համար. մյուս հոլովներում (բացառական և գործիական) եզակիի և հոգնակիի հոլովանիչ թեքությունները համընկնում են և թվային տարբերությունները արտահայտվում են դարձյալ վերոհիշյալ հիմքերի հակադրությամբ (յ—իսնէ, ի մեզնէ, Բեզնով—ձեզնով): Երրորդ դեմքի անձնական դերանվան և ցուցականների թեք հոլովների թվակազմությունը բնորոշվում է եզակիի հիմքի պահպանումով (առավել կամ նվազ հնչյունափոխված) և հոլովաթվանիչ թեքությունների առկայությամբ, որոնք հիմնականում համընկնում են անվանական հոլովման համապատասխան թեքություններին: Մասնավորապես, հոգնակի սեռականում և տրականում ի հայտ է գալիս ց տարրը, որ հոլովական իմաստի հետ միաժամանակ կրում է և հոգնակիության իմաստ (իբնէ—իբնց, սոքա—սոցա, այսոք—այսոց և այլն):

Հոլովի բերականական կարգի ըննությունից պարզվում է, որ թեք դերանվանական հոլովման հարացույցը ներկայացնում է հոլովական անփոփոխականների նույն քանակը, ինչ որ անվանականը (այսինքն՝ դերանունները նույնպես ունեն վեց հոլով), սակայն տարբերվում է իր ընդգրկած հոլովների կազմով: Այսպես՝ դերանվանական հոլովման մեջ ընդհանրապես բացակայում է ներդոյական հոլովը, որն, ի դեպ, անվանական հոլովման մեջ էլ դեռևս այնքան լայն կիրառություն չի ստացել և կազմավորման պրոցեսի մեջ է գտնվում: Այնուհետև, անվանական հոլովման մեջ սեռական-տրականը հանդես է գալիս որպես մեկ հոլովական անփոփոխակ, քանի որ դրանց նախկին ձևական տարբերակումը միջին հայերենում միանգամայն վերացել է: Այդ պրոցեսը շտիպազանց զգալի է նաև դերանվանական հոլովման մեջ, որտեղ կարելի է

⁸ Գրաբարի ստացական դերանունների եզակի-հոգնակի երկկողմանի հակադրության փոխարեն՝
իմ — մեր, քո — ձեռք, քեզ — ձեզ, միջին հայերենում պահպանվել է իմ — մեր, քո — ձեռք միակողմանի հակադրությունը:

սևսնել բազմաթիվ օրինակներ, երբ սեռական և տրական հոլովների իմաստն սկսում է արտահայտվել մեկ միասնական ձևով: Ընդ որում, դուրս են մղվում նախկին տրականի ձևերը, աստիճանաբար իրենց տեղը զիջելով սեռականի հոլովաձևին: Օրինակ՝ Զինչ որ հաղնի, նա իւր վայլէ (ԿԵ—164), Իւ ասեմ թե՛ Մի՛ լինիր... (ԿԵ—185), Ունէր թաճ ակամբք ու իւ կար թախթ ի զառ (ԿԵ—211), ...նա տան իւ ու յաճեցնեն զինք յիր դործ (ՍՍԴ—73), Գնա, ծառայէ նորա, որ տէր է անձին ու հոգուն (Ֆր.—343), Շատ մին խելք կու պիտի նորա (ՀԵ—154), Մի բաժին նորա տան առանց խալապայի (ՍՍԴ—35), Այն մարդն, որ ավտայ սորայ (ՀԵ—151),... Այսուր ասեն սուր և միջակ նեղ (Գր.—193) և այլն:

Սակայն ղերանվանական հոլովման մեջ այս պրոցեսը դեռ չի ավարտված, մասնավորապես, անձնական ղերանունները ունեն սեռականի և տրականի միանգամայն տարբերակված ձևեր, իսկ ցուցականների հոլովման մեջ սեռականաձև տրականի կողքին համարյա նույնաբժեք դործունություն մը հանդես է դալիս պարբարատիպ տրականի հոլովաձևը. այսպես՝ սմա հե—185, էՄԱ—9, ԱՕԹ—8, նմա Գր.—125, հե—159, էՄԱ—65, ՀԹ—168, ԳԱ—107, ՄՂ—97, ՎԱ—93 և այլն:

Միջին հայերենի ղերանվանական հոլովման պատկերը ճիշտ և լիակատար ներկայացնելու համար անհրաժեշտ է վերոհիշյալ և նման ձևերը որպես հոլովական տարբերակներ ներառել համապատասխան հարացույցների մեջ:

Դերանվանական հոլովումը անվանականից էապես տարբերվում է նաև հոլովական իմաստների արտահայտման և տարբերակման միջոցներով և հոլովակազմության տեխնիկայով: Այստեղ ևս կարելի է առանձնացնել տարբեր տիպեր:

1. Առաջին տիպը, որ ընդգրկում է անձնական ղերանունները և ով հարցական-հարաբերական ղերանունը, սուպլետիվ կազմությունն է, որի ղեպքում ուղիղ և թեք հոլովների տարբերակման հիմնական միջոցը տարահիմքությունն է, ընդ որում, որոշ ղեպքերում տեղի ունի կրկնակի տարահիմքություն՝ մի կողմից՝ եղակի ուղիղ և թեք հոլովների, մյուս կողմից՝ եղակի և հոգնակի ուղիղ հոլովների միջև, իսկ երբեմն էլ դրան ավելանում է եղակի և հոգնակի թեք հոլովների մասնակի տարահիմքությունը: Ստացվում է բավական բարդ պատկեր: Անձնական ղերանունների և հարաբերական ով ղերանվան առաջին շորս հոլովների կազմությունը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

ևս	ա	մենք	ս	դու	ա	դուք	ա՛	ինք	ա	իրենք	բ՛	ով	ա
իմ	բ՛	մեր	ս՛	քո	հ՛	ձոք	ս՛	իր (ևն)	բ	իրենց	բ՛՛	ում	բ
ինձ	բ՛՛	մեզ	ս՛՛	յեզ	հ՛՛	ձո	ս՛՛	իր (ևն)	բ	իրենց	բ՛՛	ում	բ
դիս	բ,	զմեզ	ս՛՛,	դքեզ	բ,	զձոք	ս՛՛,	զինք	ա,	զիրենք	բ՛,	զով	ա՛

Այստեղ տարբեր տառային սիմվոլներին համապատասխանում են տարաբնույթ հիմքերը, իսկ դժիկներն արտահայտում են այդ հիմքերի միջև եղած հնչյունական տարբերությունները, որոնք հոլովատարբերակիչ տարրերի ղեր են կատարում: Դա պետք է ընդունել որոշ պայմանականությամբ, քանի որ այդ հնչյունական տարբերությունները ընդհանրական չեն բոլոր համապատասխան ձևերի համար և հոլովանիչ մյուս թևքայինների արժեքը չունեն, յուրաքանչյուրը մնալով միայն մեկ-երկու ղերանվանաձևի սահմաններում:

Այստեղ կարելի է նշել դերանվանական հոլովման մի առանձնահատկությունն էս. ինչպես տեսնում ենք, հոլովների կազմության ընդհանրություններ են նկատվում ոչ միայն սեռական և տրական հոլովների միջև, այլ նաև մի կողմից՝ հայցական և ուղղական (որ ընդհանուր օրինաչափություն է) և մյուս կողմից՝ հայցական և տրական (կամ միաժամանակ հայցական, սեռական և տրական) հոլովների միջև, որ ի տարբերություն անվանականի, հատուկ է միայն դերանվանական հոլովմանը:

Բացի առաջին դեմքի անձնական դերանունից, որ հանդես է բերում հայցականի ինքնուրույն ձև, մյուս դերանունների հայցականը ձևով նույնանում է կամ ուղղականի, կամ տրականի հետ: Այստեղ հայցական հոլովի տարբերակման համար վճռական նշանակություն է ստանում ոչ միայն զ նախդիրը (որ համարյա միշտ հանդես է գալիս տեքստում) այլև ես դերանվան զիս (յիս) ձևը, որ հարացուցային հենարան է ստեղծում մյուս դերանունների համապատասխան իմաստն ունեցող, բայց ձևով շտաբերակվող հոլովների համար:

2. Երկրորդ տիպը ցուցական դերանունների հոլովակազմությունն է, երբ հիմքը իր հիմնական պատկերով պահպանվում է, և թեք հոլովներում հանդես են գալիս հոլովակազմիչ մասնիկներ: Սեռական և տրական հոլովների համար այդ ցուցիչը ը տարրն է, որը այս, այդ, այն դերանունների դեպքում ունի նախորդող ո ձայնավորը. այսպիսով, կարելի է առանձնացնել որ հոլովակազմիչ թերույթը, որ հատուկ է միայն դերանվանական հոլովմանը: Սա, դա, նա դերանունների դեպքում այս ը տարրը վերջահանդ չէ, սրան հաջորդող ա ձայնավորի համադրությամբ ստացվում է բա թերույթը, որը կցվում է հիմքին: Հիմքը այստեղ հանդես է գալիս երկու տարբերակով՝ մաքուր և հնչյունափոխված: Մաքուր հիմքը օրինաչափորեն վկայված ենք գտնում միայն նա դերանվան համար՝ նաբա: Հնչյունափոխված հիմքում ա-ն հերթապալվում է ո-ի հետ. ստացվում են սո, դո, նո ձևավոր հիմքերը:

Հոգնակի թեք հոլովներում ը տարրի դիմաց միևնույն (ա) ձայնավորի ուղեկցությամբ օրինաչափորեն հանդես է գալիս ց մասնիկը, որը ստեղծում է եզակի և հոգնակի թեք հոլովների հակադրություն:

3. Երրորդ տիպը ընդգրկում է անվանական հոլովակազմություն ունեցող դերանունները, այն է՝ փոխադարձ (միմեանց, իբաց). որոշյալ (ամէն, ամէն մէկ) և ստացական (իմ, քո, իւր, մեր, ձեր) դերանունները: Նշված ձևերը միավորված են մեկ այլ ընդհանուր առանձնահատկությամբ՝ ևս, այսինքն՝ մնացած դերանուններին հատուկ ոչ բոլոր հոլովաձևերն ունեն իրենց հարացուցցում: Այսպես՝ փոխադարձները բնականաբար չեն կարող ունենալ ուղղական հոլով, բացի այդ, ինչպես նշվեց թվակազմության մասին խոսելիս, ընդհանրապես զուրկ են եզակի հոլովաձևերից, քանի որ բոլոր իմաստի նշանակում են մեկից սովելի առարկաներ: Ստացական դերանունների հարացուցից նույնպես բացակայում են եզակի և հոգնակի թվերի որոշ հոլովաձևեր (տե՛ս հարացույցները): Սրանց բացակայող ձևերը հնարավոր է, որ կամ ընդհանրապես դուրս են մղվել գործածությունից, կամ խիստ սակավադեպ լինելով, մեր օգտագործած աղբյուրների սահմաններից դուրս են մնացել:

Նշված դերանուններից ստացականները հոլովվում են արտաքին թեքման ո հոլովմամբ բոլոր ընդհանուր օրինաչափությունների: Որոշյալները կանոնավորապես ենթարկվում են արտաքին թեքման ի հոլովման:

Հոլովների կազմության՝ քննված երեք տիպերը տարբերակվում են միայն

առաջին շորս հոլովների համար. վերջին երկուսը՝ գործիական և բացառական, ավելի միասնական կազմություն տունն, թեև այստեղ ևս որոշ շափով նկատվում են հիմքերի ձևավորման տարբերություններ:

Ամենից առաջ պետք է նշել, որ այս երկու հոլովները կազմվում են հասուկ հոլովանիշ թեթույթների օգնությամբ՝ 1. բացառականի և ով գործիականի համար: Այս կազմությունը դրաքարի դերանունների հոլովման համեմատությամբ կարևոր նորամուծություն է, քանի որ նպաստում է միջին հայերենում անվանական և դերանվանական հոլովումների միջև եղած տարբերության նվազեցմանը:

Բացառական և գործիական հոլովները հիմնականում կազմվում են տրական հոլովաձևից: Այդ բնդհանուր օրինաչափությունից նկատելի են որոշ շեղումներ. այսպես՝ առաջին դեմքի անձնական դերանվան գործիականը և բացառականը կազմվում են հայցականից՝ գ-իս—յիսմէ. իսմով (իսնով). թեև հանդիպում ենք և ինձն ձեռն (Յր.—443), ին՛ գերանվան բացառականը բացի օրինաչափ յիրմէ ձեռն, վկայված է և յինմէ ձեռն, որտեղ որպես հիմք հանդես է գալիս ուղղական-հայցականի հոլովաձևը, իրաց փոխադարձ դերանվան բացառականը ունի երկու հիմնական ձև (հաշված գուտ հնչյունական տարբերակները)՝ յիրացմէ և յիրարմէ. առաջինի հիմքը՝ իրաց, սևռական-տրական հոլովաձևն է, իսկ երկրորդը՝ իրար. հավասարապես հանդես է գալիս և տրականում, և հայցականում (գիրար—ՍՍԴ—128, 130, առ իրար—ՍՍԴ—36 և այլն): Այս, այդ, այն ցուցական դերանունների եզակի գործիականը կազմվում է ուղղականից, բնդ որում, բացի ով վերջավորությունից, այդ ձևերը կարող են ստանալ և ի թեթույթը՝ այսիւ, ալղիւ, այնիւ:

Է կամ ով վերջավորությունը կարող է ավելանալ կամ անմիջաբար տրականի մաքուր հիմքի վրա, կամ վերջավորությունից առաջ հիմքը կարող է աճել որևէ հիմքակազմ տարրով. հիմնականում դա մ կամ ն ձայնորդն է: Այսպիսով, յուրաքանչյուր դերանվան համար ստացվում է երկու-երեք հոլովաձևային տարբերակ, իսկ եթե հաշվի առնվի նաև արմատի հնչյունական փոփոխանների առկայությունը, դրանց թիվը կհասնի մի քանիսի: Ինչպես, օրինակ՝ յիրենցմէ, յումնցէ, յումնցնէ, յումնցէ, յումնցմէ, յումնցմէ, յումնցմէ և այլն:

Նշված հոլովների հոգնակի ձևերը զգալի նույնություն ունեն եզակիի հետ, նույնպես կազմվում են է և ով վերջավորություններով, բայց այս անգամ որպես հիմք է վերցվում հոգնակի տրական հոլովաձևը, որ ին՛ անձնականի և ցուցական ու փոխադարձ դերանունների դեպքում պարունակում է ց հոլովանիշ թեթույթը, մյուս դերանունները հոգնակի սևռականում և տրականում տրոհելի ցուցիչներ չունեն:

Պետք է նշել նաև, որ այս, այդ, այն ցուցականների հոգնակի բացառականը կարող է կազմվել նաև առանց է վերջավորության (յայսոց, յայդոց, յայնոց): Այստեղ բացառականի իմաստն արտահայտելու ֆունկցիան ամբողջությամբ ընկնում է ի (յ) նախդրի վրա: Այս, այդ, այն, ինչպես նաև սա, դա, նա ցուցական դերանունների հոգնակի գործիական հոլովը մասնադրության մեջ վկայված չենք գտնում, սակայն առաջինների համար ընդունելի է ով+ի վերջավորությամբ գործիականի վերականգնումը (այսովի, այդովի, այնովի). ըստ եզակի-հոգնակի տարածված հակադրության: Մինչդեռ սա, դա, նա դերանունների հոգնակի գործիականի համար հավասարի վերականգնում չունենք,

քանի որ կորսված է և դրանց եղակի գործիականը (հանդիպում են միայն հատուկներտ դրաբարյան ձևեր՝ սովաւ, նովաւ): Ի դեպ, հետաքրքիր է նկատել, որ դերանունների հոլովման մեջ ամենապակասավոր հարացույցներով ներկայանում է երկրորդ դեմքը, որ թերևս պայմանավորված է տվյալ դեմքի կիրառության նվազ հաճախականությամբ (հիմնականում երկխոսություններ և ուրիշի ուղղակի խոսք): Այսպես՝ իտա ձևը վերականգնվում է իսա, ինա ձևերի համարանությամբ, դա դերանվան հարացույցի մեջ չկան եղակի հայցական, բացառական, գործիական և հոգնակի գործիական հոլովները և այլն (տե՛ս հարացույցը):

Դերանվանական հոլովման մեջ նույնպես նկատվում են բացառական հոլովի առանց Ի (յ) նախդրի գործածության դեպքեր, թեև ավելի նվազ չափով, քան անվանական հոլովման մեջ: Օրինակ՝ Խանկրէր դհազար մանուկ Ինճմէն (ՆՇ—635), Զինչ տեսանես, որ կու դնա, Խււմլն այսօր դինչ ըզբադիս (Ֆր.—267), Սս ինձէն Քրիստոսի մատաղ լինենամ (Ֆր.—443) և այլն:

Որոշյալության բերականական կարգը դերանունների հոլովման մեջ սակավ դեպքերում է արտահայտվում որոշիչ հոգերի միջոցով, քանի որ դերանուններից շատերը իրենց կիրառման առանձնահատկություններով խոսքի մեջ հիմնականում մատնանշող արժեք ունեն, ինքնին առկայացնում են առարկան և այդ պատճառով իսկ որոշյալ են: Իսկ անորոշ դերանունների իմաստի մեջ արդեն պարունակվում է անորոշության գաղափարը, որը հատուկ ձևավան արտահայտության կարիք չունի: Որոշիչ հոգերը գործածվում են հիմնականում անվանական հոլովում ունեցող դերանունների հետ և այս դեպքում դիրքային սահմանափակում չունեն, հնարավոր են բոլոր հոլովաձևերի համար: Օրինակ՝ Տաճկունք զամլնն կու դործեն (Ֆր.—219), զամլնին կէսն (Ֆր.—249), յամլնլն ի գատ հեռանալ (Ֆր.—361) և այլն:

Դերանվանական հոլովում ունեցողների դեպքում հոգերի գործածությունը հնարավոր է միայն բացառական և գործիական հոլովներում, այն էլ բավական սահմանափակ կիրառությամբ: Օրինակ՝ Ապա թէ չօդտիս յիւրմէս (Ֆր.—353), Նայ հոդիդ յիւրմլդ խալրսի (Ֆր.—364), Սս ինձէն Քրիստոսի մատաղ լինենամ (Ֆր.—443), Զադէկն, որ քզմլն ուղես, ամէնի հասար կամենաս (Ֆր.—455), Նա օտրին ի՞նչ մեղ դնեմ, երբ որ լինիմ յիւրմլն աղար (ԿԾ—193), Որով չափով չափես՝ նոյնովն քնդ կամին չափել (ԿԾ—179), Այրէ գտունն հանդերձ իւրմովն (ՎԱ—5—146), զկուրծսն իւրովն օծանէ (ՄՀ—9) և այլն:

Ստորև բերվում են միջին հայերենի դերանունների հոլովման հարացույցները (խմբավորումը ըստ իմաստային դասակարգման):

Ինչպես արդեն նշվել է, որոշ հարացույցներ անհնար է ներկայացնել լիակատար տեսքով, վկայված օրինակների բացակայության պատճառով, ընդ որում, նկատելի է, որ մեծ մասամբ պակասում են հոգնակիի հոլովաձևերը, իսկ եզակիի թվից՝ հիմնականում բացառականը և գործիականը: Վերականգնված հոլովաձևեր բերվում են միայն խիստ սահմանափակ թվով դեպքերում, երբ վերականգնումը կասկածելի չէ: Հոլովական տարբերակները բերվում են հնարավոր լիակատարությամբ, բաց են թողնվում միայն խիստ բարբառային երանգ ունեցող և ուշ շրջանի ձևերը: Օրինակները բերվում են սկզբնաղբյուրային հղումներով:

ԱՆՃՆԱԿԱՆ ՂԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ես

Եզակի

Ու Լս ՍՍԴ—4, 39, 34—225

Ս Իմ ԽԿ—139, ՍՍԴ—4, Ֆր.—318, ՂԶ—421, ԷՄԱ—28

Տ Ինձ Ֆր.—256, ՍՍԱ—3, ՍՍԴ—39, ԿԵ—185, ՆՔԴ—43, ՇՍ—135

Ինձի ԿԵ—123, Ֆր.—443, ՄՆ—163, ՀԱԴ—165, ԷՄԱ—20

Ինձի ՀՔ—217, ՆՔԴ—44

Ինձի ԿԵ—189

Հ զ-իս (յ-իս) Ֆր.—333, 34—225, ՍՍԴ—19, ԿԵ—144, ՎԱ—151

Բ յ-իսմէ ՍՍԴ—98, ՍՍԱ—57, Ֆր.—321

յ-իսնէ Ֆր.—285, ՀԵ—166, ԿԵ—142, ՎԱ—135, ԽԿ—135, ՄՆ—109,

ՀՔ—233, ԳԱ—135, ՆՔԴ—58, ՀԱԴ—173

Ինձէն Ֆր.—443

յ-իսնէն Ֆր.—443, ՀԵ—207, ԿԵ—159, ՎԱ—23, ԽԿ—137, ԳԱ—205

Գ Իսնով

Իսմով

Հոգնակի

Ու մենք ՀԵ—158, ՄԶ—119, 34—225, ՎԼ—185, ԱՕԲ—77

Ս մեր ԳՎ—41, ՎԼ—154, ՍՍԴ—4, Ֆր.—448

Տ մեզ ՍՍԴ—4, ԿԵ—132, ՎԱ—198, 34—315

մեզի ԿԵ—154, ՀԱԴ—179, ԷՄԱ—68

մեզի ՀՔ—199

Հ զ-մեզ Ֆր.—243, ՎԼ—185, ՍՍԴ—39

Բ ի մեզնէ 34—225

ի մեզանէ ՎԱ—45, 123

ի մեզէ ԴԶՎ—2—90

ի մենէ ԷՄԱ—50

Գ մեզմով ԳԱ—193

մեզնով

Դ ու

Եզակի

Ու դու 34—225, ՍՍԴ—75

դուն էԴ—540

Ս քո Ֆր.—424, ՎԱ—80

քոյ ԳԱ—193, Ֆր.—424

քու Ֆր.—291, ՎԱ—6, 148

Տ քեզ Ֆր.—267, Կե—121, ՎԱ—30, Գր.—25, ՀԱԳ—185, ԷՄԱ—28
 քեզի Կե—121, Հե—167, ՀԹ—228, ԳԱ—161, ՀԱԳ—222, ՆՔԴ—63
 քեզի Կե—189, Ֆր.—396, ՀԹ—198
 քէ էԴ—539
 քե ՀԱԳ—159
 Հ գ-քեզ Ֆր.—447, ՅԿ—225
 Բ ի քեզնէ Հե—224, ՎԱ—322, ՍՍԴ—158, ՅԿ—225
 ի քէնէ ՅԿ—225, Ֆր.—259, 286, Հե—224, Կե—207, ՍՍԴ—136
 ՍՍՏ—8, ԷՄԱ—47, ԳԱ—157, ՆՔԴ—58, ՀԱԳ—174
 ի քեզմէ Ֆր.—455
 ի քեզանէ ՎԱ—276, ՀԹ—160
 ի քեզէ ԷՄԱ—174
 Գ քենով Կե—132, ՎԱ—224, ՆՔԴ—92, ՀԱԳ—221, Ֆր.—198
 քեզնով Ֆր.—312, 445
 քէնով Հե—197

Հոգնակի

Ու դուք ՅԿ—225
 Ս ձեր Կե—122, ՎԱ—200, ՍՍԱ—59, Ֆր.—490
 Տ ձեզ ՅԿ—225, ՍՍԴ—19, Հե—164, ՎԱ—42
 Հ գ-ձեզ Ֆր.—254
 Բ ի ձեզնէ Հե—218, ՎԱ—28, ՄՆ—163, Ֆր.—438
 ի ձեզանէ ՎԱ—44, ՂԸ—237, ՀԱԳ—213, ՄՆ—162
 Գ *ձեզնով

Ինք

Եզակի

Ու ինք ՍՍԴ—39, ՍՍՏ—17, ՅԿ—227
 Ս իր ՍՍԴ—37, ՍՍԱ—19, ՀԱԳ—160
 իրեն Ֆր.—274, ՂԸ—381
 Տ իր Կե—185, ՍՍԴ—73, 87, ՆՔԴ—75, ՀԱ—73
 իրեն Կե—198, ՍՍԴ—65, ԱՕԲ—157
 Հ գ-ինք Ֆր.—250, ՍՍԱ—25, ՍՍԴ—12
 Բ յ-իրմէ Կե—170, ՍՍԴ—58, ՂԸ—147, ԱՕԲ—28
 իրմէ ՆՇ—611, Ֆր.—267, ՎԱ—23, Գր.—3, ՄԸ—29, ԳՎ—49,
 ՄՂ—91, ԱՕԲ—151
 իրիմէ ՄԸ—37
 յոյրմէն ՂԸ—430
 ինքմէ ՆՇ—635
 յ-ինքենէ ԳՎ—4
 Գ իրմով ԱՕԲ—38, 44, 86
 իրմով ՎԱ—27, 5—146

Հոգնակի

Ու իրենք ՍՍԴ—37, 128, ՎԼ—185
 իրենք Գր.—102, ՂԸ—258

- Իւրեանք Գր.—181
 Ինքեանք ՍՍԴ—81, Գր.—65
 Ս Իրենց Կե—125, ՍՍԴ—43, ՍՍԱ—77, ՆՇ—617
 Իրանց Վլ—189
 Իւրեանց ՎԱ—198, Գր.—6, ՄՀ—76, ԳՎ—175, Ֆր.—427, ԷՄԱ—64,
 ՄՂ—105, ԱՕԲ—21
 Իւրենց ՍՍԴ—38
 Տ Իրենց Վլ—185, 188, ՍՍԴ—16
 Իւրեանց Գր.—71, 131
 Իւրենց Գր.—47, ԽԿ—185, ՍՍԴ—11
 Հ Ղ-Իրենք ՍՍԴ—38, 77, Կե—199, ՍՍԱ—39, Վլ—178
 Ղ-Իւրեանք ՎԱ—43, Գր.—65, ԳՎ—7, 156
 Բ յ-Իրենցմէ ՍՍԴ—28, 128, ՅԿ—227
 Իրմնցլ Վլ—156
 Իրմնցնէ ՍՍԱ—61, ՅԿ—227
 Իւրմնցէ Գր.—144
 Իւրմենցմէ Ն. տ.—70,
 Իւրենցէ Ն. տ.—184
 Իւրեանցմէ Ն. տ.—58, ՄՀ—115
 Գ *Իրենցմով
 Իրմնցնով ՅԿ—227

Ֆուցական դերանուններ

Այս

Իզակի

- Ու այս ՍՍԴ—36, 45
 Ս այսոր Ֆր.—313, ՎԱ—123, ՍՍԴ—10, Գր.—38, ՄՀ—14, ՀԹ—169,
 ԱՕԲ—21, ՍՍԱ—29, ՂՀ—143, ՀԹ—169
 Տ այսոր Գր.—193, ԱՕԲ—46
 Հ զ-այս ՍՍԴ—27, 100
 Բ *յ-այսորմէ
 *յ-այսորէ
 Գ այսով ՍՍԴ—73, 124, ՄՀ—87, Ֆր.—384, ԱՕԲ—208
 այսիւ Ֆր.—415

Հոդնակի

- Ու այսոր ՍՍԴ—45, ՂՀ—158, ԱՕԲ—506, Գր.—78, ԱՕԲ—9
 այսոնք ԱՕԲ—22, 165, ՍՍԴ—155
 ասոնք ԱՕԲ—70
 այսորիկ Գր.—120, ՄՀ—3, 93, ԳՎ—143
 այսեր Գր.—34, 93, 118, 169, 200
 Ս այսոց Ֆր.—434, ՍՍԴ—65, Հե—161, Գր.—155, ԳՎ—74,
 ասոնց ԱՕԲ—84

այսոնց ն. տ.—91

ասոց ն. տ.—84

S այսոց ՄՀ—8

Հ զ-այսոք Գր.—47, ԱՕԲ—9

զ-այսոնք ՄՀ—68, 100

Բ յ-այսոցէ ՄՀ—91

յ-այսոց ՍՍԴ—66, ԱՕԲ—62, 361

Գ *այսովք

Այդ

Եզակի

Ու այդ ՎԱ—44

Ս այդոր Ֆր.—358, 364

այտոր ՎԱ—315, Գր.—90, ՄՀ—42, ՀՍ—154, ՍՍԴ—74

ատոր ՎԱ—158

այդորիկ ԳՎ—97, էՄԱ—40

S այդոր Ֆր.—360, ՄՆ—119, ՆՔԴ—77

այտոր ՍՍԱ—11, ՀՍ—134

Հ զ-այդ ՎԱ—44, ՍՍԴ—40

Բ *յ-այդորմէ

Դ այդով Ֆր.—391, ՄՀ—68, ՆՔԴ—77

այտով ՄՀ—28, 117, ԳՎ—154, ԳԱ—210, ԱՕԲ—208

ատով ՎԱ—131, ՆՔԴ—46

այդիւ Ֆր.—368, ՄՀ—67

ատիւ Ֆր.—396

Հոգնակի

Ու *այդորք

այտորք ՂՀ—144

Ս այտոց Գր.—92, 213, ՄՀ—117

S այտոց ՄՀ—85, 92

ատոնց ՎԱ—188

Հ զ-այտոք Գր.—10, ՄՀ—44

Բ *յ-այդոց

Գ *այդովք

Այն

Եզակի

Ու այն ՍՍԴ—26, ԿԵ—145

էն ՆՇ—635

Ս այնոր Ֆր.—245, ՀԵ—162, ԿԵ—144, ՎԱ—190, ՍՍԴ—19, ՍՍԱ—11,
Գր.—5, ՄՀ—4, ՀԱԳ—216, ԱՕԲ—17

անոր ՍՍԱ—37, ՆՔԴ—68

էնոր ՎԼ—188

S այնոր Ֆր.—255, ՍՍԴ—79, Գր.—163, ՄՀ—90, ԱՕԲ—58

անոր վԱ—134, ՆՔԴ—50, ՍՍԴ—12
 այնորիկ վԱ—215, ՄՀ—3, ԳՎ—8, ԱՕԲ—10
 Հ գ-այն ՍՍԴ—8
 Բ յ-այնորմէ Գր.—108, 121
 յ-անորմէ Գր.—155
 յ-այնորէ ՄՀ—67
 յ-այնոր ՍՍԴ—27
 Գ այնով ՍՍԴ—153, ՍՍՏ—61, ՂՀ—415, ԳՎ—19, ՄՆ—138, Գր.—177,
 ՀԵ—190, վԱ—45, ՄՀ—79, էՄԱ—36, ԱՕԲ—346
 անով ԿԵ—164
 էնով վԱ—206
 այնիւ ՄՀ—98, ԱՕԲ—151, 469

Հոգնակի

Ու այնոր ՀԵ—156, վԱ—211, ՍՍԴ—74, ԿԵ—211, ԱՕԲ—61
 այնոր ԱՕԲ—182
 այնորիկ ՍՍԴ—67
 Ս այնոց ՍՍԴ—141, ՄՀ—41, ԱՕԲ—55
 այնոց ՍՍԴ—77, 107
 այնոցիկ ՍՍԱ—57
 Տ այնոց Գր.—73, ՄՀ—65, ԱՕԲ—225
 Հ գ-այնոր ՍՍԴ—11, 65, ԱՕԲ—109
 գ-այնոնք ՍՍԴ—53
 Բ յ-այնոց ՍՍԴ—8, 81, ՍՍԱ—27
 յ-այնոցմէ ԱՕԲ—444
 Գ այնովք

Սա

Եզակի

Ու. սա
 Ս. սորա ՄՀ—12, ԴՀՎ—1—30, ԽԿ—171
 Տ. սորա ՀԵ—151
 սմա ԽԿ—185, էՄԱ—9, ԱՕԲ—8
 Հ. գ-սա ՍՍԴ—4
 Բ. ի սմանէ ԱՕԲ—5
 Գ. սովաւ ՍՍԱ—3, 67

Հոգնակի

սորա ՍՍԴ—69, Գր.—90, ԳՎ—27
 սոցա Գր.—5, ՄՀ—130, ԱՕԲ—20
 սոցա
 գ-սորա ՍՍԴ—69, Գր.—23
 ի սոցանէ ՍՍԴ—66, Գր.—35

Դա

Ու դա
 Ս դորա ԽԿ—176
 Տ դմա էՄԱ—24
 Հ գ-դա
 դորա Յր.—323
 դոցա
 դոցա
 գ-դորա էՄԱ—46

Բ —
Գ —

դ-դոսա ՎԱ—2—149
Ի դոցանէ Գր.—93, ԳՎ—113

Նա

Ու նա

նորա ՍՍԴ—43, ՄՆ—127, ՀԹ—180,
ՄՂ—98

նաքա ՍՍԱ—39, ԴՀՎ—3—82,
ՅԿ—233

Ս նորա ՎԱ—117, ՍՍԴ—95, ՍՍՏ—
37, Գր.—16, ՄՀ—3, ԳՎ—31.

նոցա ՍՍԴ—65, Գր.—14, հԿ—136,
ԴՀՎ—3—51, ԱՌԲ—255

ԴՀՎ—1—14, հԿ—136, ՄՂ—88,
ՀԹ—227, էՄԱ—41, ՀԱԳ—162

նաքա ՍՍԱ—51, ԴՀՎ—3—116,
ՅԿ—233

նաքա ՍՍԱ—83, ՅԿ—233

նրա ՍՍԴ—102, ԱՌԲ—83, ԴՀՎ—
2—52

Տ նորա Ֆր.—343, ՀԵ—154, ՎԱ—
120, ՍՍԴ—35, էՄԱ—6, ՀԹ—191,
ԳԱ—123, ՆԲԴ—89, ԱՌԲ—9

նոցա հԿ—147, ԳՎ—8, ՂՀ—236,
ՄՂ—138

նաքա ԴՀՎ—3—82, ՅԿ—233

նաքա ՍՍԱ—43, ՅԿ—233

Նժա Գր.—125, հԿ—159, էՄԱ—65
ՀԹ—168, ԳԱ—107, ՄՂ—97

Հ գ-նա Ֆր.—409

զ-նորա ՍՍԴ—67, 142

դ-նոսա Գր.—100, ԳՎ—4, ՎԱ—
194

զ-նաքա ՅԿ—233

Բ Ի նորմէ—նԲԴ—57

Ի նաքմէ Ֆր.—382

Ի նոցմէ ՍՍԴ—58

Ի նոցանէ ՍՍԴ—70, ՂՀ—246,
Գր.—10, ՄՀ—5, ԱՌԲ—17

Գ նովա ԳՎ—7, ՄՆ—127, ԳԱ—
105, ՎԱ—79

Ի նաքմէ ՍՍԴ—40, ՍՍԱ—3, 51
նաքմով Ֆր.—485

Իսա

Ու-Հ իսա ՍՍԴ—34, 98, ՍՍԱ—63, 75, ՅԿ—341

Իտա

Ու-Հ Իտա

Ինա

Ու-Հ ինա ՍՍԴ—34, 32, ՅԿ—341

Փոխադարձ դերանուններ

Միմեանց

Ու —	—
Ս —	միմեանց Գվ—7, ՀԱԳ—157, Յր.—275
Տ —	միմեանց
Հ —	զ—միմեանս էՄԱ—18
Բ —	ի միմեանց Գր.—13, 70, Գվ—55 ի միմեանց Գր.—71, 86, 120

Իրաց

Ու —	—
Ս —	իրաց ՍՍԴ—94, 131, ՍՍԱ—19, ՂՀ—416, էՄԱ—43, ՀԱԳ—218 իրար Գր.—27, ՍՍԴ—94 իրեւաց Գր.—103, Գվ—129
Տ —	իրար ՍՍԱ—27, ՀԹ—211 իրեւաց ՄՂ—110
Հ —	զ-իրար ՍՍԴ—128, ՍՍԱ—5 իրուր Գր.—202, ՍՍԴ—11
Բ —	յ-իրացմէ ՍՍԴ—40, 112, 34—231 յ-իրարմէ ՍՍԴ—112 յ-իրամէ ՍՍԴ—87
Գ —	իրով 34—231

Ստացական դերանուններ

Իմ

Ու իմ եկ—139, ՂՀ—422, էՄԱ—28, ՍՍԴ—4, ԿԵ—142	—
Ս իմոյ վԱ—34, ԴՀվ—1—7, ՍՍԴ— 4, ԳԱ—135, ՄՆ—163, ՄՂ—88	—
Տ իմոյ էՄԱ—6 իմում ն. տ.—69	—
Հ զ-իմ Բ յ-իմմէ վԱ—289, ՍՍԴ—98	յ-իմոց ԴՀվ—1—19, վԱ—319
իմէ ՍՍԴ—98, վԱ—40	իմմեցեկ վ՛—189
Գ իմով ՍՍԱ—93, ԴՀվ—1—34, էՄԱ—75, ՄՂ—92	իմովք ՍՍԴ—4, էՄԱ—40

Քո

Ու քո վԱ—80	—
քոյ ԳԱ—193, Յր—424	
քու Յր.—291, վԱ—6, 148	

Ս քոյիկ ՍՍԴ—164

քոյ կ4—178

Տ —

Հ —

Ք ի քուսէ վԱ—17, 104

ի քուսոյ վԱ—319

Գ —

Իւր

Ու իւր նՇ—627, Գր.—19, Գվ—124

ՂՀ—415

Ս իւրոյ վԱ—174, ՄՀ—12, Գվ—57,

իւրոյ վԱ—2—82, 5—147, ՂՀ—

ԴՀվ—1—14, ԳԱ—108, էՄԱ—22

244 էՄԱ—9

իւրոյ ՍՍԴ—31

Տ իւրում Գվ—85, վԱ—2—82

իւրոյ

էՄԱ—18, ՂՀ—246

Հ գ-իւր

Ք ի յիւրոյն ՍՍԴ—135

յ-իւրոյ ՍՍԴ—138

Գ իւրով ՄՀ—9, ԴՀվ—1—70, վԱ—

իւրովք ԳԱ—123

32, Գր.—195, էՄԱ—57

ՄԵՐ

Ու մեր ՍՍԴ—4, 39, Գվ—41, վԱ—

154, ՍՍԱ—3, 53

Ս մերոյ ՍՍԴ—41, վԱ—41, ԴՀվ—

մերոյ ՍՍԴ—39, վԱ—187,

1—14, 2—52

ԴՀվ—1—7, 2—45, 3—116

Տ մերում ՂՀ—246

Հ —

Ք ի մերմէ ԴՀվ—1—58

Գ մերով վԱ—2—89, վԱ—158

ՋԵՐ

Ու ձեր կե—122, վԱ—200, ՍՍԱ—

59, Ֆր.—490

Ս —

ձերոյ վԱ—2—76

Տ —

Հ —

Ք ի ձերմէ վԱ—2—73

Գ ձերով վԱ—42, 170

ձերովք էՄԱ—10

Հարցական-հարաբերական դերանուններ

Ջիւնչ (անհոյով) ՍՍԴ—41, Ֆր.—249,
34—244—245

Ով

Ու ով Գվ—84, ՅԿ—247

ովք էՄԱ—41

Ս ում ՍՍԴ—79, ԱՕԲ—82

S ում ՍՍԴ—52, ՍՍԱ—19, ՄԶ—8,
 ՀԹ—123 —
 Հ դ-ով —
 Բ յ-ումնէ ՍՍԴ—141, 157 —
 յ-ումէ ՎԱ—111 —
 (ոչումէ Ֆր.—347, 385) —

ՈՐ

Ու որ ԿԵ—145 որք Գր.—179, ԳՎ—158, ՄՆ—117
 Ս որոյ ՎԱ—44, ՄԶ—145, ԳՎ—26 —
 ՄՆ—116, ՄՂ—110, ԱՕԲ—82
 որու ՎԱ—316, ՀԱԳ—196, ԱՕԲ—
 30, ՆՔԴ—47
S որում ՍՍԴ—12 —
 որու ՎԱ—181, ՆՔԴ—47
 Հ դ-որ ՎԱ—181 —
 Բ յ-որմէ ՆՇ—623, Ֆր.—319, ՎԱ—
 122, Գր.—16, ՄԶ—64, ՄՆ—115,
 ԳԱ—215 —
 Գ որով ՆՇ—631, Ֆր.—278, Գր.—
 74, ԳԱ—213, ԱՕԲ—47 —

Անորոշ դերանուններ

Իրբ, մարդ, մէկ մի (անհոյով) 34—247

ՈՒ

Ու որ ՍՍԴ—54 ոմանք Գր.—9, ԳՎ—155, ՄՆ—105
 Ս ումնք Ֆր.—252, ՍՍԴ— ոմանց Գր.—156
 144, ՍՍԱ—21
S — ոմանց Գր.—106
 Հ դ-որ յ-ոմանսն Գր.—195

Այլ

Ու այլ 34—249, ՀԵ—222 այլք 34—249, Ֆր.—267, Գր.—35,
 ՎԱ—321
 Ս այլոյ այլոց ՍՍԴ—15
S —
 Հ դ-այլ ՍՍԴ—11 յ-այլք Ֆր.—267
 գ-այլս ՎԱ—321
 Բ յ-այլոյ ԿԵ—213
 յ-այլէ ՎԱ—3—107

Մէկայլ

Ու մէկայլ 34—249
 մէկալ ՍՍԴ—35

Ս մէկայլի ՄՀ—110, Գր.—24, —
 ՍՍԱ—69
 մէկայլի ՆՇ—637, Ֆր.—387
 Տ մէկայլի ՄՀ—61, ՍՍԱ—41,
 մէկայլի Ֆր.—387, ՄՀ—61, ԱՕԲ—
 33
 Հ գ-մէկայլ ՅԿ—249

Միւս

Ու միւս
 Ս միւսոյ ՆՇ—609, ՀԱԳ—195
 միւսի Գր.—90
 Տ միւսոյ Գր.—116
 միւսում ԴՀՎ—1—16, 2—46
 Հ —
 Բ —
 Գ միւսով էՄԱ—72

Ուղղակ դերանուններ

ԱՄԼԵ

Ու ամէն ՅԿ—249	ամենք ՆՇ—638
Ս-Տ ամէնի ՍՍԴ—89, ՍՍԱ—41, ԳՎ—29, ԳԱ—104, ՀԱԳ—188, ՄՀ—40 ամենոյ Ֆր.—285, ԴՀՎ—1—28 ամենու ՂՀ—238, էԴ—539, ՀԹ— 222, էՄԱ—46, ՆԹԴ—43, ՀԱԳ— 210, Մն—101, ԱՕԲ—21, ԱԱԱ— 152	—
Հ գ-ամէն Ֆր.—279, ՅԿ—249	—
Բ յ-ամենէն Ֆր.—361, ՅԿ—55	—

Ամլն մէկ

Ու ամէն մէկ ՅԿ—249
 Ս-Տ ամէն մէկի ՍՍԴ—37
 Հ գ-ամէն մէկ ՅԿ—248
 Բ յ-ամէն մէկէ ՅԿ—249

Միջին ՀԱՅՏԵՐՆԵՐԻ ՀՈՂՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Միջին հայերենի հոլովման համակարգը որպէս կառուցվածքային ամբողջութիւն ներկայացնելուց հետո հետաքրքիր է քննության առնել այն նաեւ պատմական դարգոյցման տեղեկանքների տեսակետից, պարզելով նրա կրած փոփոխութիւնները և հատկապէս նշելով այն տարբերութիւնները, որ նկատ-

վում են միջին հայերենի զարգացման առաջին և երկրորդ ենթաշրջանների միջև: Այդ երկու ենթաշրջանները միմյանցից խստորեն անջրպետված չեն ոչ բերականական կառուցվածքի և ոչ էլ բառապաշարի տեսակետից: Երկրորդ ենթաշրջանի համար ամենից առաջ բնորոշ է միջին հայերենի զրական տարբերակի ֆունկցիաների շրջանակի նեղացումը, որ կապված էր Կիլիկյան պետության անկման հետևանքով պետական-պաշտոնական լեզվի դիրքի կորուստի հետ: Դրանից էլ բխում է առանց այն էլ թույլ նորմավորվածության ու վերահսկողության համարյա իսպառ վերացումը:

Ինչ վերաբերում է ներքին լեզվական փոփոխություններին, ապա դրանք հիմնականում քանակական բնույթ են կրում, բայց էական նշանակություն ունեն լեզվի զարգացման հիմնական սահմանիցների խորացման տեսակետից և նպաստում են լեզվական նոր որակին՝ աշխարհարարին անցնելու համար նախադրյալների ստեղծմանը:

Այս կարգի քանակական փոփոխություններից ամենակարևորներն են թերականության աճող սահմանափակումը, կցականության ու բաղադրյալ ձևավորներով կազմությունների հետագա տարածումը, նորատիպ հոլովումների ու հոգնակերտների զործածության ոլորտների բնդարձակումը, գրաբարյան ձևերի կենսունակության նվազումը և այլն:

Այս բոլոր փոփոխությունները միասնական ուղղվածություն ունենալով թերևս կարող էին տանել դեպի լեզվական համակարգի զղտլի միօրինակացում, սակայն այդ պրոցեսը խաթարվում է վերը նշված՝ նորմավորվածության պակասով և րարբառային տարրերի հետագա աշխուժացումով, որ նոր կարգի անմիօրինակություն ու բազմաձևություն է մտցնում լեզվի մեջ, թեև լեզուն դրանից աստիճանաբար ավելի ու ավելի աշխարհիկ երանդ է ստանում և ժողովրդական-խոսակցական հիմքին մոտենում:

Խոսելով միջին հայերենի անունների հոլովման համակարգի մասին, մասնավորապես կարող ենք ասել, որ այն իր զարգացման ընթացքում ցուցաբերում է նույնպիսի տենդենցներ, ինչպես և լեզվի բերականական կառուցվածքն իր ամբողջության մեջ, այսինքն՝ երկու ենթաշրջաններում էլ մնալով նույնական թև՝ ընդհանրապես հոլովման տեխնիկայի, թե՛ առանձին վերցրած նյութական միավորների առկայության տեսակետից, միաժամանակ զգալի փոփոխություններ է հանդես բերում այդ միավորների կիրառության չափի և բաշխման առանձնահատկությունների մեջ:

Երկրորդ ենթաշրջանում պահպանվում են հոլովման բոլոր տիպերը, բնորոշում, դրանց մեջ ֆունկցիոնալ բնույթային տեսակետից դարձյալ բացարձակ գերիշխանությունը պատկանում է արտաքին թեքման ի հոլովմանը, որը ոչ միայն պահպանում է իր տարածման նախկին սահմանները, այլև ավելի է բնդարձակվում ի հաշիվ այլ հոլովումներից նրան անցած անունների, այդ թվում նույնիսկ ներքին թեքման պատկանող մի շարք բառերի: Այսպես, օրինակ՝ ամուսնի (ԴՀՎ—3—55, 171), ամպի (ԳԱ—210, ՆՔԳ—55), ամսի (ՄՂ—103, ՀՈ—163), առաչի (ԱՕԲ—47), առաֆելի (ՀՈ—104), առացեալի (ԷՄԱ—41), զոլոչի (ԱՕԲ—44), զոբծի (ԷՄԱ—16), զոգուածի (ԱՕԲ—32, 42), քելի (ԱՕԲ—73), բրվի (ԱՕԲ—76), ձծումի (ԱՕԲ—180), ձոցի (ՆՔԳ—53, 62), կտոբի (ԱՕԲ—28), հրի (ՄՂ—101), մրբի (ԱՕԲ—92), շամփրի (ԷՄԱ—3), սլատիլի (ԷՄԱ—83), վնոի (ԴՀՎ—3—206), փոդի (ՄՂ—94), բոդի (ԱՕԲ—38) և այլ բազմաթիվ բառեր երկրորդ ենթաշրջանում ի հոլովման են անցնում:

արտաքին թեքման ու հոլովումից: Ու հոլովման պատկանող բառերից սկսում են հոլովվել նաև ի հոլովմամբ հետևյալ անունները՝ քանծրի (ԱՌԲ—366), իրիցի (ԴՀՎ—3—238), ձովի (ԳԱ—193, ՆՔԴ—86), ձագի (ԱՌԲ—213), ձախի (ՀՈ—104), մահի (գրբ. ու. ուան) (ԱՌԲ—56, 70), նախանձի (էՄԱ—57), շարարի (ԴՀՎ—2—90), վարձի (գրբ. ու. ոյ) (էՄԱ—8) և այլն: Ներքին թեքման ի և ա հոլովումներից կարելի է նշել զառին—զառնի—զառի, սառին—սառի, զորաւան—զորտի, դրան—դռնի, եղեզան—եղեզնի—եղեզի, լիստան—լիսեռի, մատրան—մատուռի, սերման—սերմի, սիստան—սիստի, արտաքին թեքման ան հոլովումից՝ քեփկան—քեփուկի, կոնկան—կոուկի անցումները և այլն:

Նշված բառերից շատերը, սակայն, նաև երկրորդ ենթաշրջանում հանդիպում են հոլովված իրենց նախկին հոլովումներով, թեև ավելի սակավ գործածությամբ:

Պետք է նշել նաև, որ երկրորդ ենթաշրջանում միջին հայերենին անցած մեծ թվով փոխառյալ բառեր որպես կանոն ենթարկվում են ի հոլովման, դրանով ավելի ևս բնդարձակելով վերջինիս գործածության սահմանները:

Ու և ո հոլովումները, ինչպես և առաջին ենթաշրջանում, հիմնականում հանդես են գալիս որպես ազատ տարբերակներ, նրանց գործածության սահմաններն ավելի մեծ չափով են սկսում համընկնել, մանավանդ որ սկզբնապես էլ այս երկու հոլովումների բաշխման միջև ընդհանրություններն ավելի շատ էին, քան որևէ այլ երկու տիպերի միջև:

Հոլովման այս երկու տիպերի տարածման ոլորտների աստիճանական նույնացումը ակդի է ունենում ու-ի հաշվին ու հոլովման սահմանների ընդլայնման հետևանքով: Ու հոլովումը տարածման տենդենցներ համարյա չի ցուցաբերում, մինչդեռ բազմաթիվ բառեր, որոնք առաջին ենթաշրջանում պատկանում էին միայն ո հոլովման, այժմ սկսում են միաժամանակ հոլովվել նաև ու-ով: Այդ վերաբերում է հատկապես անորոշ դերբային, որի ու-ով սեռական-տրականը առաջին ենթաշրջանում խիստ սակավ էր հանդիպում, իսկ XV դարից ի վեր ավելի ու ավելի կանոնական է դառնում:

Երկրորդ ենթաշրջանում ո հոլովման հետ զուգահեռաբար նաև ու-ով հոլովվող բառերից կարելի է նշել հետևյալները՝ աղաւնու (ԱՌԲ—136), աղևկու (էՄԱ—29), ամուսնու (ԴՀՎ—3—61), ալգու (ԳԱ—282), բոբու (ԱՌԲ—454), զարու (ԱՌԲ—112, 144), գերու (ՆՔԴ—44, ՀԱԳ—173), զիշերու (ՀԱԳ—197, ՆՔԴ—52), դիմու (ԱՌԲ—34, 83), եկեղեցու (էՄԱ—31), թշնամու (ԳԱ—205), լուսու (ՆՔԴ—43, ԱՌԲ—59), ծիրանու (ՀԱԳ—196), կաղնու (ԱՌԲ—307), կիպարու (ԱՌԲ—110), կովու (ԱՌԲ—17), հոբու (էՄԱ—36), հրու (ՄՂ—118, ՀՈ—115), ձիթենու (ԱՌԲ—435), յաւելածու (ԱՌԲ—86), նուկու (ԱՌԲ—152), շոգու (ԱՌԲ—235), ոգնու (ԱՌԲ—282), որսու (ՄՆ—103), պատանու (ԱՌԲ—49), սիրելու (ՀԲ—192), սուրմայու (ՀԱԳ—196), վարդենու (ՀԲ—140), տաբու (ՆՔԴ—51, ՀՈ—79, ՀԱԳ—164), տեղու (ԱՌԲ—64), փորվածու (ԱՌԲ—47) և այլն: Անորոշ դերբայներից՝ գողնալու, լինալու, քափելու, լուսանալու, խառնակելու, խառնվելու, կախվելու, հաւնելու, հոգալու, նայելու, ուտելու, պառկելու, տանելու, տրտմելու և այլն: Կարևոր է նաև նշել ու հոլովման պատկանող մի քանի տեղանուններ, ինչպես՝ Երզնկանու (ՀԱԳ—164), Ըսպերու (ՀՈ—86), Կաֆայու (ՄՂ—146), Մշու (ՀԱԳ—164), Մրուանու (ՀԱԳ—197), Ուոուսնու (ՄՂ—93), Ստամպուլու (ՄՂ—93),

Ու հոլովման գործունեության հետագա աճի ապացույց է նաև այն, որ ի հոլովման պատկանող մի շարք բառեր երկրորդ ենթաշրջանում սկսում են պուրահնարաւոր հոլովվել նաև ու-ով: Ինչպես՝ գրու (գրբ. գրոյ և գրի) (ՄՂ—118), բնկերու (ՀԱԳ—197), խոզու (ՆՔԳ—95, ԱՕԲ—184), հագու (գրբ. ո և ի հոլովման) (ԱՕԲ—504), նշու (ԱՕԲ—130), պուրտու (ԱՕԲ—367), տազնապու (ՀՍ—85) և այլն: Դրանից բացի, որոշ օտար փոխառություններ, մանավանդ ի հանգով բառերը, նույնպես հոլովվում են ու-ով: Օրինակ՝ բեջարու (ՀԱԳ—196), հաֆու (ՀԱԳ—176), դարբնու (ՄՂ—95), պերբալնու (ՄՂ—94), պոհ-բանու (ԱՕԲ—138), պուրդագու (ՄՂ—111), պոյանու (ՀԽ—221) և այլն:

Ինչպես տեսնում ենք, ժամանակակից դրական արեմտահայերենում լայն տարածում գտած ու հոլովումը (մանավանդ հոգնակի հոլովման մեջ) իր նախադրյալներն ունեն գեոևս միջին հայերենում:

Հոլովման մյուս տիպերի բաշխման մեջ որպես նշանակալից տեղաշարժ պետք է նշել ներքին թևքման և հոլովումից անունների որոշ խմբի անցումը արտաքին թևքման ան հոլովման, որ պայմանավորված է հնչյունական որոշակի փոփոխություններով: Խոսքը վերաբերում է վերջահանգ ն-ով մեկուկես վանկանոց այն անուններին, որոնք ուղղականում կորցնում են հիմքի ն հանգը, իսկ թևք հոլովներում պահպանում են այն՝ հոլովիչ ձայնավորի հետ միասին: Թևք հոլովածներ այլևս ուղղականին հակադրվում է ոչ թև հիմքի ձայնավորի հերթագայությամբ, այլ նախկին հիմքակազմ տարրի և հոլովիչի կապակցությամբ կազմված հատուկ վերջավորությամբ: Այդ կապակցությունը ձևով նույնանում է արտաքին թևքման ան վերջավորության հետ, թևք պատմականորեն դրա հետ չի կապվում:

Հիմքի ն տարրի անկման փաստեր վկայված են դեռևս առաջին ենթաշրջանից, այդ պրոցեսը նույնիսկ սկսվել էր ավելի վաղ, դարարից միջին հայերենին անցնելու շրջանում: Բայց քանի որ XII—XIV դարերում որպես կանոն գերիշխում են ն-ով ձևերը, բացի այդ, տեքստը միշտ չէ, որ հնարավորություն է տալիս պարզելու վերջահանգ ն-ի բնույթը (հոդ, թև հիմքի տարր), ապա համակարգի ամբողջականության պահպանման տեսակետից նպատակահարմար է առաջին ենթաշրջանում այդ տիպի անունների խումբը դիտել ներքին թևքման և հոլովման մեջ: Մինչդեռ երկրորդ ենթաշրջանից մեզ վկայված են ոչ միայն առանց ն-ի ուղղականի ձևեր (ինչպես՝ ձուկ, գորտ, ոսկ, սիսեռ, ջերմ), այլև նույն բառերի ի-ով հոլովված ձևեր, որոնցից շատերի մեջ ու տարրը նաև թևք հոլովածներում ընդհանրապես բացակայում է: Դրանք են վերը նշված՝ գորտի, եյեզի, լիսեռի, մատուռի, օսրի, ջերմի, սերմի, սիսռի և այլ անուններ:

Վաղ հոլովումը առաջին ենթաշրջանում խիստ սահմանափակ գործածություն ուներ, և նույնիսկ որոշ անուններ վկայված չենք գտնում սեռական տրական հոլովով, այլ միայն բացառականով, ինչպես նշվել է այդ մասին իր տեղում: Երկրորդ ենթաշրջանում վաղ հոլովումը փոքր-ինչ ավելի է աշխուժանում, իր ոլորտի մեջ ընդգրկելով նույն իմաստային հատկանիշով (ժամանակ ցույց տվող բառեր) բնորոշվող ևս մի քանի անուններ: Բայց և այնպես այն իր գործածությամբ դեռևս չի հասնում այն սահմաններին, որ ունի ժամանակակից հայերենում:

Երկրորդ ենթաշրջանում մի փոքր ավելի լայն տարածում է ստանում արտաքին թևքման և հոլովումը, հարստանալով մի քանի նոր տեղանուններով՝

Գեղեվաճա (ԳՀՎ—3—20), Զինումաշինայ (ԳԱ—121), Սաայ (ՀԹ—198), Վա-
րագա (ԳՀՎ—3—77) և այլն:

Հոլովման մյուս տիպերի մեջ զգալի փոփոխություններ չեն նկատվում.
Հատկապես կայունություն են ցուցաբերում ներքին թեքման եւ օ հոլովում-
ները, որ բնականորեն պատճառաբանվում է նրանց ձևական և իմաստային
խիստ պայմանավորվածությամբ. առաջինն ընդգրկում է ուրիւն, իւն հանդով
հիմքերը, իսկ երկրորդը՝ ալբ-ով վերջացող և նեղ ազդակցական կապեր նշա-
նակող անունները: Ուրիւն ածանցով բառերի մեջ երբեմն հանդիպում են ի-ով
հոլովված ձևեր, սակայն դրանք իրենց թվով ավելի չեն, քան առաջին ենթա-
շրջանից վկայված նույնատիպ հոլովածները:

Հոգնակերտ ձևայինները երկրորդ ենթաշրջանում ևս աչքի են ընկնում
բազմազանությամբ և կիրառության սահմանների անհամաչափությամբ: Սա-
կայն այստեղ տեղի է ունենում որոշ հոգնակերտների ֆունկցիոնալ ծանրա-
բեռնվածության զգալի տեղաշարժ: Ամենակարևորը այն փաստն է, որ առա-
ջին ենթաշրջանում տիրապետող Կ ձևայինը աստիճանաբար սկսում է կորցնել
իր կենսունակությունը որպես հոգնակերտ և ի հայտ է բերում բառակազմա-
կան դերի ուժեղացում, որը ի դեպ, դեռ առաջին ենթաշրջանում էլ բավական
զգալի էր:

Բնական է, որ Կ-ի սահմանափակումը պետք է նպաստեր մյուս հոգնա-
կերտների և առաջին հերթին ամենազործուն մասնիկների կիրառության սահ-
մանների ընդլայնմանը: Դրանք են եւ, նի և ներ հոգնակերտները: Ընդ որում,
ոչ միայն յայնանում են այս հոգնակերտների զործածության սահմանները,
այլև տեղի է ունենում նրանց զործածման զիրքային պայմանավորվածության
հետագա ճշգրտում և հստակացում: Այսպես՝ ի հակադրություն առաջին են-
թաշրջանի, երբ եւ մասնիկ կարող էին ստանալ նաև մեծ թվով բազմազան
բառեր (աղախներ, ամաներ, աշգլուքներ, ալբներ, բազրկաներ, բանհոգեր,
բժկարաներ, բուճահներ, գաւազաներ, գիթուրներ, դատտներ, դեւպաներ,
դոշկեր, եկեղեցւոյներ, եպիսկոպոսներ, իմաստասիրուրներ, իշխանութիւններ,
խնամութեաներ, կարակներ, կերակներ, համբերութեաներ, հացապաներ, հի-
ւանդանոցներ, հիւնդութեաներ, նանապահներ, մազմզկեր, մետապոլտներ, մի-
ջասպանութեաներ, մունետկեր, յեվելլիներ, նովսանդեր, շինակներ, ռեսուրսեր,
պահնուրներ, պարնմիչեր, պատրիարքներ, սենեսկալներ, վանդներ, վարդա-
պետներ, վկայութեաներ, տաքութեաներ, փիւրսկոպոսներ և այլն, և այլն), երկրորդ
ենթաշրջանում եւ-ը օգտագործվում է հիմնականում միավանկ բառերի հոգ-
նակին կազմելու համար: Ներք, բնդհակառակը, հոգնակի է կազմում բազմա-
վանկ բառերից, իսկ ավելի ուշ՝ բնդհանրապես մեկից ավելի վանկ ունեցող
անուններից:

Սակայն երկրորդ ենթաշրջանում այս կանոնն սկսում է խախտվել ձուկ-
նկներ տիպի կազմություններով, որոնք միավանկ լինելով հանդերձ, առերե-
վոյթ ստանում են ներ հոգնակերտը: Սրանք առաջին ենթաշրջանում կամ
ստանում էին Կ հոգնակերտ (հիմքի ձայնավորի հերթադալությամբ), կամ
ընկնում էին եւ հոգնակերտի ուղորտը, քանի որ դեռևս պահպանել էին իրենց
վերջահանգ Ն շնչունը: Երկրորդ ենթաշրջանում այս տիպի բառերի մի մասը
եղակիին հակադրվում է ներ մասնիկով, որտեղ Ն շնչունի հիմքի տարր լինե-
լը այլևս չի դիտակցվում: Ն տարրի վերջնական կորուստը այս տիպի բառե-
րից սկիզբ է առնում մասնականից հայերենի՝ ցուցակով որոշվող միավանկ

բառերի այն խմբին, որոնք բաղմամբանկների պես ստանում են ներ հոգնակերտը: Այսպիսով, կարելի է ասել, որ հայոց լեզվի զարգացման նոր շրջանին հատուկ՝ թվի քերականական կարգի արտահայտման բոլոր միջոցներն արդեն առկա են միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում, և հենց այդ ժամանակից էլ սկսում են ձևավորվել աշխարհաբարում տարածված եր և ներ հոգնակերտների կիրառության առանձնահատկությունները:

XV—XVI դարերից մեզ վկայված են եր և ներ հոգնակերտներով բաղմամբով նոր բառեր, որոնք առաջին ենթաշրջանում ունեին I մասնիկը, կամ ընդհանրապես չէին վկայված: Այսպես՝ եր հոգնակերտով միավանկ և վերջին միավանկ բաղադրիչով բաղմամբանկ բարդ բառեր՝ ակռատկեր (ԱՅԲ—67, 245), աղեւորտեր (ԱՅԲ—36), ամպեր (ՆՔԴ—58, ՀԲ—217, ՀԱԳ—165), արփայհալեր (ՆՔԴ—60), բակեր (ԴՀՎ—2—33), բշտեր (ԱՅԲ—24, 464), գոմեր (ՆՔԴ—76), գորտեր (ՆՔԴ—94), երգեր (ՄՂ—133), լիստախաշեր (ՀԱԳ—217), բեւեր (ՀԱԳ—217), իրիցակալեր (ԴՀՎ—3—51), լաբեր (ՆՔԴ—57) լոշեր (ՀԱԳ—218), խաշեր (ԴՀՎ—2—29, ԴՀՎ—3—114), խէժեր (ԱՅԲ—177), խլտեր (ԱՅԲ—148), կալեր (ՆՔԴ—11), հալներ (ՀԱԳ—202), ձորեր (ՆՔԴ—44, 48), դազեր (ՀԱԳ—227), մարեր (ՀԱԳ—225), լուրներ (ՀԱԳ—172), հալեր (ԷՄԱ—50, ՆՔԴ—76), նետեր (ՆՔԴ—48), ներկեր (ՀԱԳ—196), շաֆեր (ԱՅԲ—354), ոտեր (ՀԱԳ—220), որդեր (ՆՔԴ—47), պազեր (ՆՔԴ—71), սրտեր (ՀԲ—198, ԳԱ—195), վարդեր (ՀԱԳ—159), վիմեր (ՀԲ—126), օղեր (ԱՅԲ—84), ողեր (ՀԲ—206) և այլն:

Ներ հոգնակերտով՝ ակռաներ (ՀԱԳ—227), երկիրներ (ԱՅԲ—87), քրվներ (ԱՅԲ—257), լուսպներ (ԱՅԲ—187), խայալներ (ԱՅԲ—82), ծառներ (ՀԱԳ—196), կլորկներ (ԱՅԲ—152), հաճապահներ (ԷՄԱ—36), հառահներ (ԱՅԲ—407), մարգարիտներ (ՆՔԴ—48), մկնատամներ (ԱՅԲ—86), մուֆառներ (ԱՅԲ—161), ուտեցներ (ԱՅԲ—93), պոռնկներ (ՆՔԴ—52), փախլալաներ (ՄՂ—105), փետուրներ (ՀԱԳ—215), փողոցներ (ԷՄԱ—57, ՄՆ—171) և այլն:

Ինչ վերաբերում է նի ձևույթին, ապա այն առաջվա պես հոգնակի է կազմում երկվանկ անուններից, որոնցից շատերը փոխառյալ բառեր են: Նի հոգնակերտի անի տարրերակր երկրորդ ենթաշրջանում համարյա դուրս է գալիս գործածությունից և վկայված է ընդամենը մեկ-երկու բառով: Այս երևույթը միանգամայն հասկանալի է, քանի որ որպես ընդհանուր կանոն միջին հայերենի քերականական մասնիկները պատմական զարգացման ընթացքում մեծ մասամբ կորցնում են իրենց լիաձայնությունը. այդ նկատելի է դեռևս գրարարից միջին հայերենին անցնելու շրջանից, ինչպես՝ նեւր-ներ, եւր-եր, ուտի-տի, եան-են և այլն:

Երկրորդ ենթաշրջանից նի(անի) հոգնակերտով վկայված են մեծ թվով նոր անուններ, որոնցից մի քանիսը նշում ենք ստորև.

ալարիներ (ԱՅԲ—266), ահօրէներ (ՀԲ—203), ապուրներ (ԱՅԲ—506), արմրցներ (ԷՄԱ—154), արուեստներ (ԱՅԲ—41), բանջարներ (ԱՅԲ—407), գոլոներ (ԱՅԲ—33), դուրներ (ՆՔԴ—95), երազներ (ԱՅԲ—156), երիցաներ (ՄՂ—86, 118), բարժիպներ (ԱՅԲ—5, 7), քրվներ (ԱՅԲ—63), քապիրներ (ԱՅԲ—292), լիսեռներ (ԱՅԲ—43), խիլաներ (ՀԲ—139), խնձորի (ՀԲ—167), ծածկոցներ (ԱՅԲ—31), կարմնջներ (ՆՔԴ—48), հարեղաներ (ԷՄԱ—114, ՀԲ—135, ՆՔԴ—94), հովաներ (ԱՅԲ—306), հարիֆներ (ՆՔԴ—78), մատուներ (ԴՀՎ—3—73), պաուներ (ՄՂ—107), պոկներ (ՆՔԴ—57, 59), սարկաւազներ (ՀԲ—227, ՆՔԴ—94), սլեհներ (ԱՅԲ—17), սիրոյտներ (ՀԲ—165), փարտաներ (ԱՅԲ—147), փեսաներ (ՀԲ—182), ֆաբներ (ԱՅԲ—81), ֆռանկներ (ԱՅԲ—204) և այլն:

Մյուս հոգնակերտները հիմնականում պահպանում են իրենց գործածության նախկին սահմանները, որ առանձնապես ընդարձակ չէին նաև առաջին ենթաշրջանում, և խիստ տեղաշարժեր ի հայտ չեն բերում: Դրանք հետագայում, լեզվի պատմական դարգացման ընթացքում սկսում են տեղայնանալ այս կամ այն բարձրում, ձեռք բերելով կիրառության քաղաքային լայն սահմաններ, բայց արդի պրակտիկ լեզուներից բոլորովին դուրս են մնում:

Առանձին հոլովները կառուցվածքի տեսակետից երկրորդ ենթաշրջանում փոփոխություններ չեն կրել, և՛ չհաշվենք մի քանի խիստ բարձրացին ներթափանցումներ, որոնք ոչ այլ ինչ են, և՛ ոչ մեկ արդեն հայտնի ձևերի մի քանի հնչյունափոխված տարրերակներ, ինչպես՝ աշիչ՝ առնամանությունմը՝ ից ձևությից, կամ օրսլիլնց (փխ. եանց):

Ընդհանուր համակարգին վերաբերող հիմնական տենդենցներից ամենակարևորն է հոգնակի թեք հոլովների բազադրյալ ձևերում կազմությունների տարածումը, որը ի վերջո հանգեցնում է գրաբարատիպ թերությունների զործածության սահմանների նեղացմանն ու աստիճանական արտամղմանը: Սրանով էլ հետզհետե վերանում է եզակի և հոգնակի հոլովների կազմության միջև եղած նախկին տարբերությունը: Այժմ արդեն շատ ավելի հաճախակի են այն կազմությունները, որտեղ եզակի և հոգնակի հոլովաձևերը ընդունում են նույն հոլովակազմիչը և իրար հակադրվում են միայն հոգնանիշ ձևությի առկայությամբ կամ բացակայությամբ: Երկրորդ ենթաշրջանում բազմաթիվ նոր բառերի հոգնակի թեք հոլովները սկսում են կազմվել բազադրյալ թեքություններից որևէ մեկի օգնությամբ (Լեռու, Լեռոյ, ներու, ներոյ, Լերի, ների, նոյ, նու, Լեռով, նով, ներով, ներէ և այլն): Ընդամին հոգնակի սեռական-տրականի բազադրյալ ձևերների կազմում եզակիի ի հոլովիչը սկսում է ավելի հաճախակի կիրառվել, քան նախորդ ենթաշրջանում, թեև ոչ և ու ձևերները առաջվա պես պահպանում են իրենց գործածության լայն սահմանները: Ու ձևերը իր հերթին նախ սկսում է զործածման հաճախականությամբ հավասարվել ույին, ապա նույնիսկ ավելի գերակշռող դիրք է ձեռք բերում: Ի հոլովիչը հոգնակի հոլովներում տարածվում է ավելի ուշ, վաղ աշխարհարարի շրջանից սկսած (արեւելահայ տարրերակ), ինչպես նաղաշ Հովնաթանի Երկերում (զոգալների—11, վարսերի—28, շամամների—48, ձեկների—106, մկների—106, կուրերի—116, տէրտէրների—138, աշէրի—141, մշակների—150, փայտերի—153 և այլն):

Աշխարհարարի կազմավորման ժամանակից ի վեր, ի ձևերը հաստատվում է արեւելահայ գրական լեզվում որպես հոգնակի միակ հոլովիչ (և՛ չհաշվենք ց ձևերը մաղկանց, կանանց, Գրիգորենց տիպի կազմություններում), իսկ ու հոլովիչը՝ արդի գրական արեւմտահայերենում:

Թեք հոլովների բազադրյալ ձևերում կազմության հետևյալ օրինակները՝ բոտ առանձին հոլովների և թերությունների, վկայված են XV—XVI դարերի միջին հայերեն գրականությամբ:

Սեռ.-տր.՝ Լեռոյ, ծառերոյ (ԷՄԱ—79), կներոյ (ԷՄԱ—98), մշկերոյ (ՀԱԳ—196), շներոյ (ՄՂ—119), որքերոյ (ԳԱ—272), պատերոյ (ԳԱ—255), ջրերոյ (ՀԱԳ—198), տօներոյ (ՀԱԳ—219):

Լեռու, ազգերու (ՀԱԳ—180), ակոսայակերու (ԱՕԲ—67), աղեկոտերու (ԱՕԲ—36), աստղերու (ՆՔԴ—49), արտերու (ՀԱԳ—197), լսներու (ՄՂ—107, ՀԲ—138, ՀԱԳ—198), բժշկերու (ԱՕԲ—508), զինուրեներու (ԱՕԲ—39),

գորտերու (ՄՂ—113), գուներու (ՀԱԳ—196), պաշտերու (ՀԱԳ—202), դարդերու (ՀԱԳ—197), դոնապաներու (ՀՄԱ—113), լաքերու (ՆՔԴ—57), խաղերու (ԱՕՔ—440), խեկերու (ՀԱԳ—197), խոցերու (ԱՕՔ—207, ԱԱԱ—376), ծակերու (ԱՕՔ—30), ծխերու (ՀԱԳ—219), ծովերու (ՀԱԳ—197), կտրներու (ԱԱԱ—380, ԱՕՔ—69), հուրերու (ՄՂ—114), ձկներու (ԱՕՔ—41), մարգերու (ՀԱԳ—197), մոմերու (ՆՔԴ—57), նիւթերու (ԱՕՔ—90), որբերու (ՄՂ—94), ուներու (ՆՔԴ—43), պատերու (ԳԱ—265) և այլն:

Նրի. բակերի (ԴՀՎ—2—22), քփերի (ԳԱ—237), հաւերի (ՀԱԳ—201), հիւրերի (ՀՔ—210, ԴՀՎ—3—246), տօների (ԴՀՎ—2—16),

Նոյ. երկնոյ (ԱՕՔ—92), վագիրնոյ (ՀՄԱ—5, 48),

Նու. աղկկնու (ՀՔ—126), արեկնու (ՆՔԴ—58), երկիւղածնու (ՀՄԱ—31), երկնու (ԱՕՔ—40), քարհիպնու (ԱՕՔ—7), ծառանու (ՀՄԱ—80), հարեղանու (ՀՔ—129), շարկմնու (ՆՔԴ—62), շարտրխնու (ԳԱ—256), պալղամնու (ԱՕՔ—23),

Ներոյ. կարասներոյ (ԳԱ—274),

Ներու. աղբիւրներու (ՀԱԳ—197), անամներու (ՄՂ—94), ապուրներու (ՀԱԳ—222), աստղներու (ՆՔԴ—53), ասփրիմներու (ԱՕՔ—156), դեղիններու (ՀԱԳ—196), եզներու (ՀԱԳ—197), քառաններու (ԱՕՔ—355), ժամկոչներու (ՄՂ—85), ծաղկներու (ՀԱԳ—202), կարմիրներու (ՀԱԳ—197), ձիակներու (ՄՂ—90), մեղուններու (ՀԱԳ—196), ողաշարներու (ԱՕՔ—29), ջառաններու (ՀԱԳ—197), վարպետներու (ՀԱԳ—198), վալվաքներու (ԱՕՔ—43),

Նրնու. ջղերնու (ԱՕՔ—31),

Վնու. աշվնու (ՆՔԴ—75), ոտվնու (ՆՔԴ—50),

Անու. ձիանու (ՀՔ—201) և այլն:

Բացառական՝ երու. գալլերու (ՀԱԳ—164), գաներու (ԱՕՔ—314), ի գոմերու (ՀՔ—164), ի դեղերու (ԱՕՔ—201), ի խոցերուն (ԱՕՔ—228), ծովերու (ՆՔԴ—43), հաւերու (ՆՔԴ—61), հոտերու (ԱՕՔ—112), մրգերու (ԱՕՔ—90), ի պատերու (ԱՕՔ—307), տա՛ւերու (ԱՕՔ—105), տներու (ԳԱ—259),

Իւոյ. ձուրերոյ (ԳԱ—254), շենքերոյ (ԳԱ—256), սարերոյ (ԳԱ—254),

Նու. բանհրնու (ԱՕՔ—72), երկնու (ԱՕՔ—44), համփնու (ԱՕՔ—341), մորհամնու (ԱՕՔ—452), ի պոխարնուն (ԱՕՔ—145), ի քաղաքնուն (ԱՕՔ—84),

Նոյ. ի հրեշտակնոյ (ՄՆ—147),

Դործիական՝ երով. քմբերով (ԴՀՎ—3—80), լաքերով (ՆՔԴ—46), հապերով (ԱՕՔ—457), հոտերով (ԱՕՔ—129), նոքերով (ՆՔԴ—54), մրգերով (ԱՕՔ—331), նազերով (ՀԱԳ—171), նովսանդերով (ԴՀՎ—2—98), ունքերով (ՆՔԴ—76),

Նով. անուշամամնով (ԱՕՔ—507), երակնով (ԱՕՔ—41), հալվնով (ԱՕՔ—492), մուհալիլնով (ԱՕՔ—426), նշտերակներով (ԱՕՔ—509), շարապնով (ԱՕՔ—329) և այլն:

Հոգնակի թեր հոլովների բաղմաձևութիւնը կցական կազմութիւնների տարածումը մի կողմից և Բ հոգնակերտի դործածման սահմանափակումը մյուս կողմից նպաստում են նաև հոգնակի ուղղական և հայցական հոլովների կազմութեան նույնացմանը: Քանի որ հայցականը հատուկ հոլովական վերջավորութիւն (ս) ստանում էր միայն Բ հոգնակերտի դեպքում, իսկ մյուս հոգնակերտների առկայութեան պայմաններում ուղղական և հայցական հոլովների ձևական հակադրութիւնը շեղորոշում էր, ասպա պարզ է, որ Բ-ից տարբեր

հոգնակերտների աշխուժացումը իր հետ բերում էր ուղղականաձև հայցակա-
նի հետադա տարածում: Մյուս կողմից, ինչպես արդեն նշվել է, նույնիսկ Ի
հոգնակերտն էլ շատ դեպքերում (նույնիսկ դեռևս առաջին ենթաշրջանում)
սահպանվում էր նաև հայցական հոլովում: Այդ երևույթը երկրորդ ենթա-
շրջանում համաբանության օրենքի գործողության հետևանքով ավելի է խո-
րանում, և Ի-ով հայցականի դեպքերը ավելի ու ավելի հաճախակի են դառ-
նում: Ինչպես՝ խնդրեն ինչի և ստացուածի յաստուծոյ (էՄԱ—9), Տեսայ զիշ-
խանքն և զմեծատունքն (ՀԹ—181), Ոչ ունիմ ձեռք և մատունք գիր գրելու
(ՄՆ—180), Շատ պարունայք սպանել տաս (ՀԱԳ—192), Զոսկերեմ մարդուն
որպէս սուն է արարեր (ԱՕԲ—28) և այլն:

Ներգոյական հոլովի հատուկ վերջավորությամբ օժտված կաղմությունը
երկրորդ ենթաշրջանում տարածման ուժեղ ձգտում չի ցուցաբերում, այն ա-
ռաջվա պես վկայված է սակավաթիվ օրինակներով և առաջնությունը դարձ-
յալ գրաբարյան վերլուծական ձևին է պատկանում: Ում վերջավորությամբ
ներգոյականի բուն տարածումը սկսվում է վաղ աշխարհաբարի շրջանից,
նույն նաղաշ Հովնաթանի լեզվի մեջ (սրտում—22, ծոցում—46, պաղշումն—
53, բերանումս—145 և այլն):

Այլ կարգի փոփոխություններից կարևոր է նշել զ և ի (յ) նախդիրների
գործածման աստիճանական սահմանափակումը և աննախդիր կաղմություն-
ների տարածումը: Ընդ որում, հայցականի զ-ն դեռևս համեմատաբար ավելի
մեծ կենսունակություն է ցուցաբերում, քան բացառականի ի-ն: XV—XVI դա-
րերից մեզ վկայված են առանց ի (յ) նախդրի բացառականի բաղմաթիվ օրի-
նակներ՝ արտաքսեաց տանէն (էՄԱ—16), Սա այլ այն Դաղաբէն եմ (էՄԱ—
33), Քո շատ կարօտուդ սիրտս կու լափի (ՄՆ—108), Նորին նաղաշ վարդա-
պետէ ասացեալ (ՄՆ—127), Մի՞թէ չես աստէնէն անտէն գնալու (ՄՆ—146),
Նղեմական դրախտէն կու գաս (ՀԹ—119), Մի թագաւորիմ այս կրակէս (ՀԹ—
124), Մովբերուդ ալ ի դուրս ելնում, ուներուդ շուքն քնանամ (ՆՔԴ—43), Զի՞նչ
չա՞րիմ շատ ապրելոյս (ՆՔԴ—58), Գետդ այն հեռագոյն վայրէ, բարձրաբերձ
լեռանց հոսի դայ (ՄՂ—131):

Լեզվի դարգացման ավելի ուշ շրջանում զ և ի նախդիրները ընդհանրա-
պես վերանում են, հետքեր թողնելով միայն որոշ քարացած բառակապակցու-
թյունների և ոճերի մեջ:

Երկրորդ ենթաշրջանում տարածվելու և չիականաւոր տիրապետություն
ձեռք բերելու ձգտում են ցուցաբերում եղակի բացառականի և կ գործիականի
ով վերջավորությունները, հետզհետե վերացնելով իրենց՝ առանց այն էլ թույլ
արտահայտված դիրքային սահմանափակությունը: Աշխարհաբարի շրջանում
ով վերջավորությամբ գործիականը ընդհանուր է դառնում երկու գրական լե-
Պարզ նախադասության անդամների (իսկ բարդ նախադասության մասերի) միջև եղած շարահյուսական կապի անհրաժեշտականությամբ կամ ոչ անհրաժեշտականությամբ՝ ազատությամբ էլ բնորոշվում է սովյալ շարահյուսական կառուցվածքը որպես շարահյուսական ամբողջություն: Այս տեսանկյունից նայելով հարցին, պարտ է + զիտել, այսինքն՝ միադիմի բայ + անորոշ դերբայ կազապարի կառուցվածքը պետք է դիտել մեկ շարահյուսական ամբողջություն, որովհետև սրանց միջև եղած շարահյուսական կապը անհրաժեշտական է, այսինքն՝ այս շարահյուսական կառուցվածքի մեջ մտնող տարրերը քերականական և իմաստային տեսակետից անկախ, ինքնուրույն չեն, առաջին տարրը (միադիմի բայը) լրացում է պահանջում: Հետևապես, սխալ է այս կարգի նախադասությունները երկկազմ համարելը, այսինքն՝ անորոշ դերբայը ենթակա համարելը, իսկ միադիմի բայը՝ ստորոգյալ: Ենթակայի և ստորոգյալի միջև գոյություն ունեցող սերտության աստիճանը ավելի ցածր է, քան այս զեպքում: Նկատենք, որ երկկազմ նախադասությունների մեջ, երբ ենթական կամ ստորոգյալը զեղչվում են, նախադասությունը չի զրկվում իմաստից, ստացվում է թերի նախադասություն, որը շարահյուս-

¹ Օրինակների մեջ երբեմն բերված են ամբողջական բարդ նախադասություններ, որոնց մի բաղադրիչ նախադասությունը միակազմ է: Հետագա շարադրանքի բնթացքում նույնպես որոշ երևույթների լուսաբանության համար հարկ է լինում բարդ նախադասությունների օրինակներ բերել, որտեղ սակայն մեզ հետաքրքրում ձև բարդ նախադասությունների կազմի մեջ մտնող պարզ նախադասությունների կառուցվածքի ներքին օրինաչափությունները:

սության մեջ մի առանձին կառուցվածքային տեսակ է դիտվում: Սակայն այս դեպքում (այսինքն՝ միադիմի բայ+անորոշ ղերբայ կաղապարի գերադասանդամ ունեցող միակազմ նախադասություններում), եթե անորոշ ղերբայը որպես ենթակա դիտենք ու զեղչենք, սովոր շարահյուսական կառուցվածքը թերի է լինում և՛ իմաստային, և՛ քերականական տեսուկետից ու պահանջում է մոքի և ձևի լրացում:

Այս նախադասությունների հետ չպետք է շփոթել արտաքինապես գրեթե նույն կառուցվածքն ունեցող այն երկկազմ նախադասությունները, որոնք ունեն տրականով² ենթակա: Օրինակ՝ Ինձ պարտ է բարձրանալ և մեռանիլ ի փայտ խաչի (ԿԵ, 227): Հմմտ.՝ Պարտ է բժշկին, որ իմաստուն լինի (ՂՀ, 350) ԶԼ պարտ բժշկին, որ կտուր զրուցի (Գր., 193):

Այստեղ առաջին նախադասության պարտ է բարձրանալ և մեռանիլ բառակապակցությունը բայական բարդ ստորոգյալ է, որ ստորոգյալի արտահայտման շատ բնորոշ ձև է և՛ գրաբարում, և՛ միջին հայերենում, և՛ արդի հայերենում, իսկ մյուս օրինակներում պարտ է միադիմի բայը նախադասության մեջ հանդես է եկել անկախ շարահյուսական զործառությամբ, որպես ինքնուրույն ստորոգյալ: Միջին հայերենում առկա (սեռական)-տրականով ենթական բոլորովին էլ նորություն չէ մեր լեզվի համար: Գրաբարի ենթական բավական հաճախ ձևաբանորեն արտահայտվում է տրական հոլովով: Գրաբարում միադիմի բայերը անհրաժեշտաբար տրականով ենթակայի պահանջ ունեն: Օրինակ՝ Ուարթի այդմ լինել, Թուի ինձ, Չախողեցա: նմա, Կամ է ինձ: Սրանք երկկազմ նախադասություններ են: Ահա այս շարահյուսական երևույթն է, որ նույնությամբ զործում է նաև միջին հայերենում:

Անորոշ-դիմավոր միակազմ նախադասությունների քննությունից կարելի է եզրակացնել, որ միջին հայերենում լայն տարածում է ստացել միադիմի բայ+անորոշ ղերբայ կառուցվածքով գերադասանդամ ունեցող բայական միակազմ նախադասությունը, որի կիրառությունը բնորոշ է բոլոր ժանրերին և տարբեր շրջանի մատենագիրներին:

բ) Ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններ. — Ընդհանրական-դիմավոր նախադասությունները անորոշ-դիմավոր նախադասություններից տարբերվում են թե՛ իմաստային տեսակետից և թե՛ ձևաբանորեն (զերադասանդամի արտահայտման ձևով): Այս կարգի նախադասությունների տրամաբանական ենթակայի համար բնորոշ է, որ այն արտահայտի «յուրաքանչյուրը», «ամեն մեկը» իմաստները: Դրա համար էլ բնդհանրական-դիմավոր նախադասությունները ընդհանուր դրույթներ են, խորհուրդներ, որոնք հասցեագրվում են յուրաքանչյուրին, ամեն մեկին:

Այս տիպի նախադասությունները բավական տարածված են միջին հայերենում: Հատկապես բժշկագիտական, օրենսդրական երկերը լի են բնդհանրական-դիմավոր նախադասություններով:

Ընդհանրական-դիմավոր նախադասության գերադասանդամը կարող է արտահայտվել բայի դիմավոր տարբեր ձևերով՝ կախված նախադասության մեջ արտահայտվող իմաստային երանդներից:

Ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասության գերադասանդամը միջին հայերենում արտահայտվում է հետևյալ ձևաբանական միջոցներով.

² Դերանունները դրվում են տրական, իսկ անունները՝ սեռական-տրական հոլովաձևով:

1. Բուն հրամայականի եզակի թվով, օրինակ՝ Լ յանգլէտ մարդոյն վա-
խի՛ր, յիւմէն ի զա՛տ կաց ու ի հեռի (ԿԵ, 198), Եղի՛ր դու հուր վառել ի սուրբ
սրբութ՝ հոգով բանի (ԿԵ, 197), Շինեա՛ տուն մեղուաց վեց կանգուն բարձրու-
թիւն (ՂԶ, 102), Դիտացի՛ր, որ քրտինք ելանելն պատճառն ազգի-ազգի է
(ԱՕԲ, 79),

Բաշխէ՛ զինչ ունիս այսօր, Որ չիինիս ողորմ ու լալի (Ֆր., 13)։

2. Արգելական հրամայականով, օրինակ՝ Աղճաւորն մի՛ բարկանալ, որ
չըզատէ բղբիդ Աստուած (ԿԵ, 205), Այլ հատու ձագ մի՛ տաս ուտելու (ՄԶ, 81),
Մի՛ իրենըն (անգետ մարդուն) հաւատալ, որ նենգութեամբ բեղ խոնարհի
(ԿԵ, 198)։

Ընդհանրական-գիմալոր միակազմ նախադասությունների զարգացումը
գրասերովել է նրա առանցքային անդամի արտահայտման ձևաբանական մի-
ջոցների առավել բազմազան դառնալու մեջ։ Արդի հայերենում այն կարող է
արտահայտվել զրեթե բոլոր եղանակներով, թեև դեմքերի մեջ սահմանա-
փակում այնուամենայնիվ նկատվում է. բայաձևերը առավելապես 3-րդ և
2-րդ դեմքերով են զրվում։

Ընդհանրական-գիմալոր միակազմ նախադասությունների նեոսագա-
ղարգացման մեջ նկատելի է նաև դրանց գերադաս անդամի բուն և արգելա-
կան հրամայականներով արտահայտման դեպքերի նվազում։ Դրա փոխա-
րեն արդի հայերենում գերակշիռ են սահմանականի ներկայի 3-րդ դեմքով
արտահայտված գերադաս անդամ ունեցող նախադասությունները, ասենք,
Մարդուն ընկերով են նստալում տիպի նախադասությունները։ Այս հանգա-
մանքը պետք է բացատրել արդի հայերենի բայի ներկա ժամանակի մի հա-
վելյալ իմաստ՝ հրամայականի իմաստ ձևով բերելու հանդամանքով։ Չէ՛ որ
այժմ ներկայի ձևերը սկսել են հաճախ դորժածվել հրամայականի իմաստով
Փոխանակ ասելու՝ Մի՛ ծխե՛, ասում ենք՝ Մեզ մոտ չեն ծխում և այլն։

Ընդհանրական-գիմալոր նախադասությունները հայոց լեզվի զարգաց-
ման ողջ ընթացքում (գրաբար, միջին հայերեն, արդի հայերեն) հանդես են
բերել մեծ կայունությամբ, որով ապացուցվում է, որ դրանք հայոց լեզվին
շատ բնորոշ լեզվական կառուցվածքներ են, որոնցով մեծ մասամբ արտա-
հայտվում են ժողովրդական առածներն ու ասացվածքները։

գ) Անդեմ բայական միակազմ նախադասություններ.— Անդեմ միակազմ
նախադասությունները, բայական թև անվանական, շունեն բերականական
դեմք։ Բայական անդեմ նախադասությունների գերադաս անդամը սովորա-
բար արտահայտվում է անորոշ դերբայով և ցույց է տալիս հրաման, կար-
գադրություն, ցուցում և այլն։

Անդեմ բայական նախադասությունները շատ բնորոշ էին գրաբարին։
Հիշենք, որ հայերեն առաջին գրավոր նախադասությունը անդեմ բայական
նախադասություն է. Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս
հանճարոյ։

Սակայն միջին հայերեն գրականության մեջ բայական անդեմ նախադա-
սությունները շատ սակավ են, դրեթե չկան։ Մեզ միայն մի օրինակ է հան-
դիպել Կոստանդին Նրզնկացու մոտ. Նախանձիլ և նենկ պահել և սպանանել
զօրն անդադար (ԿԵ, 200)։ Սրա պատճառը թերևս պետք է փնտրել այս տի-
պի նախադասությունների կիրառության ոճական պայմանավորվածությամբ
մեջ։ Դրաբարում այս տիպը հատուկ էր այսպես կոչված դրժային ոճին, իսկ

միջին հայերենին ավելի հարազատ էր խոսակցական ոճը: Անդամ բայական միակազմ նախադասությունները արդի հայերենում բնորոշ են ղեղարվեստական խոսքին, գործածվում են հեռադարձական բնույթի հարցադրումների ժամանակ, հերոսների մենախոսությունների մեջ և այլն:

Բ. Անվանական միակազմ նախադասություններ

Անվանական միակազմ նախադասությունների գերադաս անդամը արտահայտվում է անուն կամ անուն + հանգույց կաղապարներով: Այս պատճառով էլ անվանական միակազմ նախադասությունները կարող են լինել անդամ և դիմավոր: Անդամ են այն անվանական միակազմ նախադասությունները, որոնց գերադաս անդամը արտահայտված է անվամբ և շունի բայական բաղադրիչ, իսկ դիմավոր անվանական միակազմ նախադասություն գերադաս անդամը անպայման ունենում է անուն + հանգույց տեսքը:

Անվանական նախադասությունների հիմնական կիրառությունը, որպես կանոն, կապված է ղեղարվեստական խոսքի հետ: Անվանական նախադասությունները օգնում են հեղինակին սեղմ և արտահայտիչ ձևով նկարագրել երևույթը, ղեկքը, անձը:

ա) Անդամ անվանական միակազմ նախադասություններ. — Անդամ անվանական միակազմ նախադասությունները գործածվում են գործողության տեղը, պայմանները նկարագրելիս կամ տվյալ առարկան, անձը բնութագրելիս: Անդամ անվանական միակազմ նախադասությունների գերադաս անդամը միջին հայերենում կարող է արտահայտվել.

1. Գոյականի ուղղական հոլովով, որը կարող է լինել եղակի կամ հոդակի: Այս գոյականը սովորաբար հոգ չի ընդունում. օրինակ՝

Շաֆար ու շիրին շրթունք,

Երես՝ լի գունով ծաղկունք,

Թուխ աչեր ու կամար ունք (ԿԵ, 161):

Ղամբա՛ր լուսափայլ, մաքափայլ լուսոյն,

Ճշմարիտ ողկոյգ, այգի՛ վայելուչ (ԽԿ, 167):

Գ օրի ձուն էր գալիս, ֆամի, բօրան սաստիկ (ՁԱՕՈ 134). էև տաբի, լև հավայ, առատ, բարելի (ՁԱՕ, 133):

2. Անդամ անվանական միակազմ նախադասության ձևավորմանը երբեմն մասնակցում է վայ ձայնարկությունը. վա՛յ գմեճակ գերիս (ԽԿ, 156):

Անդամ անվանական միակազմ նախադասությունները կարող են նաև ժխտական բնույթի լինել, որը ժխտում է տվյալ իրի, երևույթի գոյություն ունենալը: Անդամ անվանական միակազմ նախադասությունների ժխտականը միջին հայերենում ձևավորվում է ոչ ժխտական մասնիկով. Ոչ խաչ, ոչ խաչալուս (ՁԱՕ, 138):

բ) Դիմավոր անվանական միակազմ նախադասություններ. — Դիմավոր անվանական նախադասությունների գերադաս անդամը արտահայտվում է անուն + հանգույց կաղապարով: Հանգույցը անպայման արտահայտվում է եղակի 3-րդ դեմքով: Դիմավոր անվանական միակազմ նախադասությունները գործածվում են ղեղարվեստական խոսքի մեջ բնության որոշ երևույթները պայծառ, առհասարակ ժամանակի իմաստ արտահայտելու համար:

Օրինակ՝ Սաստիկ ձմեռն էր (ՁԱՅ 125), Լաւ, արեւ օր էր (ՁԱՅ, 146), ...նօրն ամ Լը՝ որ կոյր էր երկու աշօք (ՂԶ, 179)։

Ինչպէս երևում է քննութիւնից, անվանական նախադասութիւնները միջին հայերենում չունեն կառուցվածքային այն բաղմագանութիւնը, ինչ որ ունեն բայական միակազմ նախադասութիւնները։ Այս կարգի նախադասութիւնները շատ սակաւ կիրառութիւն ունեն միջին հայերեն մատենագրութեան մեջ։

Ուրեմն, հալոց լեզվի պատմութեան մեջ անվանական նախադասութիւնների կիրառութեան ընդլայնումը ոչ այնքան քերականական հարց պետք է համարել, որքան ոճական։

Միջին հայերենի միակազմ նախադասութիւնների գերադաս անդամի ձևաբանական արտահայտութիւնը կարելի է արտահայտել հետևյալ աղյուսակով։

Աղյուսակ 1

Միակազմ նախադասութիւնների տիպերը		Գերադաս անդամի ձևաբանական արտահայտութիւնը
Բայական	Անորոշ — դիմավոր	1. Սահմ. եղ., ներկա. հոգն. 3-րդ դեմք 2. Սահմ. եղ., անց. կաա. հոգն. 3-րդ դեմք 3. Սահմ. եղ., վաղակ., հոգն. 3-րդ դեմք 4. Ըղձ. եղ., եզ. 3-րդ դեմք 5. Միազիմի բայ-անորոշ դերբայ
	Ընդհանրական — դիմավոր	1. Իու՛ն հրամայական, եզ. թիվ 2. Արգելական հրամայական
	Անդեմ	Անորոշ դերբայ
Նախադասական	Դիմավոր	Անուն + հանդույց
	Անդեմ	1. Անվան ուղղ. հոլով 3. Ձայնարկութիւն + անուն

ՀԱՄԱՌՈՏ ԵՎ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարզ նախադասութիւնները սովորաբար դասակարգվում են նաև ըստ այն բանի, թե նախադասութեան մեջ առկա՞ են երկրորդական անդամներ, թե ոչ։ Համառոտ նախադասութիւնները կազմված են միայն գլխավոր անդամներից՝ ենթակայից և ստորոգյալից, իսկ ընդարձակ նախադասութիւններում առկա են նաև երկրորդական անդամներ։ Միջին դրական հայերենում նույնպէս պարզ նախադասութիւնները այսպիսի դասակարգման են ենթարկվում։ Օրինակ՝ համառոտ. Ասիւծն հիւանդացաւ (ՂԶ, 290), Աղքատ և արդար յաւ (ԽԿ, 160), Կամիս դու զարդարել (ԿՅ, 195), Բազարատ ասէ (ՄԶ, 28). ընդարձակ. Այս ջերմս երկու նիթէ ընծայի (ՄԶ, 109), Եւ յերկամնայցաւն ի յայս նեղերս թնթի լինի (Գր., 141), Շատք են շարկամ ինձ յաշխարհի (ԿՅ, 122), Դնացէք և ջուսպ տարէք Դարէհի պարսից արքային (ԽԿ, 173)։

Համառոտ և ընդարձակ նախադասութիւնների կազաւարները առհասարակ միմյանց հետ համակարգային փոխհարաբերութիւնների մեջ չեն դրսւլում։ Տվյալ լեզվով խոսողը կամ գրողը ընտրում է համառոտ կամ ըն-

դարձակ նախադասություն ոչ թե լեզվի կառուցվածքի պահանջներինքն ենելով, այլ իր արտահայտելիք միտքը ավելի նպատակահարմար ձևով հաղորդելու անհրաժեշտությունից, եթե խոսքային իրադրությունը թույլ է տալիս հասկանալ միմյանց միայն նախադասության գլխավոր անդամների միջոցով, ապա գործածվում է համառոտ նախադասություն, իսկ եթե ոչ, խոսողը կամ գրողը ընդարձակ նախադասության միջոցով է իր միտքը արտահայտում: Այնպես որ, համառոտ նախադասություն—ընդարձակ նախադասություն զուգահեռ ուսումնասիրությունը ոչ մի առանձնահատկություն չի դրսևորում լեզուններում, առավել ևս մեկ լեզվի զարգացման տարբեր ժամանակահատվածներում: Այստեղ հետաքրքրություն կարող են ներկայացնել համառոտ նախադասության ընդարձակման միջոցները՝ կախված այն բանից, թե ինչ խոսքի մասով են արտահայտված ենթական կամ ստորոգյալը: Այս հարցը հետաքրքիր է լեզվի տվյալ շրջանի խոսքի մասերի կարգային զուգորդելիությունը բացահայտելու տեսակետից:

Եթե նախադասության ենթական կարիք ունի ընդարձակման, ապա նախադասության ընդարձակումը տեղի է ունենում անվանական լրացումների հաշվին: Ենթական, որ միջին հայերենում արտահայտվում է գոյականով, դերանվամբ և գոյականաբար վերցված այլ խոսքի մասերով, ընդունում է որոշիչներ, որոնք կարող են արտահայտված լինել:

ա) Ածականով՝ Ուր ջերմն... ի յարենն է լինի (ՄՀ, 64): Ահա եղև պայծառ դարուն (ԿԵ, 134): Զորեֆօրեայ ջերմն... շուտ արձակի (ՄՀ, 130):

բ) Գոյականով՝ Այլ բժշկասլետն Ապուճարէ՛ն ասէ (ՄՀ, 132), Ջնջեցաւ կտակ կենաց հիքոյս և թշուառուհոյս (ԽԿ, 197):

գ) Դերանվամբ՝ Այս ամենայն պատճառնիս... զհիւանդութիւն կրկնեն (ՄՀ, 136):

դ) Թվականով՝ Առաջին դէմս... այրնէ բժիշկն (ՄՀ, 143):

ե) Դերբայով՝ Դոված հարսն եկաւ (ԽԿ, 179):

Միջին հայերենում հատկացուցիչը գրվում է սեռական հոլովով, ինչպես արդի հայերենում է: Օրինակ՝

ա) Գոյականով՝ Կամ ո՞վ է սէրըն վարդին (ԿԵ, 145):

բ) Դերանվամբ՝ Քո սիրտդ ի յաշխարհիս ի հասրաթէն է հուր վառել (Ն. տ., 177):

Ենթական ունենում է նաև բացահայտիչ: Օրինակ՝ Ես՝ Սարգիս տվի Թահատի վանքից... (ԴՀՎ, 1, 82):

Իսկ եթե համառոտ նախադասության ստորոգյալն է կարիք ունենում ընդարձակման, ապա այդ տեղի է ունենում հետևյալ միջոցներով:

ա) Իբր ստորոգյալը բայական է, նախադասությունը ընդարձակվում է բայական լրացումների հաշվին, որը կախված է բայի սեռից և բայիմաստից: Ներգործական սեռի բայ-ստորոգյալը պահանջում է ուղիղ խնդիր, կրավորական սեռինը՝ ներգործող խնդիր: Ռայիմաստից կախված՝ տվյալ նախադասությունը կարող է ընդարձակվել այլ խնդիրների և պարագաների հաշվին: Օր.

ԽՈՆՈՐԵՆԵՐ

Եվ այլ տուր փշատի փոխինդ (ՂՀ, 80), Եւ թէ է դրամ գինով խմես, նուր-լային օգտւ. (ԱԱԱ, 50), Հարկ է փոքր ի շատէ յաղագս վաճականաց գրել (ՍԳԴ, 27):

— Զինչ աստուած է պատրաստել, որ զաւուր ի քեզ հասանի (Ֆր., 42), Թէ խօսիս քաղցր և անոյշ... (Կե, 170), Կոյւ առնէ գէտ զԱրապիկ (ՂԶ, 64)։

բ) Երբ ստորոգյալը անվանական է, նորամուտ լրացումների բնույթը կախված է ստորոգելիական վերադրի կարգային զուգորդելիության բնույթից։ Օրինակ՝ որոշիչ՝ Դու փնջած մանուշակ, վարդ ու ծաղիկ ես (ՀԹ, 150), հասկացուցիչ՝ Ինքն է տէր բուրաստանիս (ՀԱԳ, 27) և այլն։

ԹԵՐԻ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թերի են կոչվում այն նախադասությունները, որոնց անդամներից մեկը կամ մի քանիսը զեղչված են, սակայն հեշտությամբ կարելի է վերականգնել կոնտեքստից կամ իրավիճակից ելնելով։ Նախադասության անդամների զեղչումը արդի շարահյուսագիտության մեջ անվանվում է էլիպսիս³։

Նախադասություն անդամների զեղչման երևույթը հասկանալու և բացատրելու համար պետք է հաշվի առնել, որ բնական լեզուները ինֆորմացիայի հաղորդման երկու եղանակ ունեն։ 1) երբ հաղորդումը կատարվում է լեզվական միավորների միջոցով, և միտքը արտահայտվում է նախադասության բոլոր անդամների առկայությամբ (լրիվ նախադասություններ) և 2) երբ ինֆորմացիան հաղորդվում է «չարությամբ» (իմպլիցիտ կերպով), առանց լեզվական որոշ միավորների անմիջական առկայության, նրանց մի մասի բացակայությամբ (թերի նախադասություններ)։

Թերի և լրիվ նախադասությունների հարցին պիտեականենք երկու ելակետից են մոտենում։ Ոմանք գտնում են, որ թերի են այն նախադասությունները, որոնք անհասկանալի են առանց լրացման։ Օրինակ՝ «Տուն» արտահայտությունը քանի որ անհասկանալի է, թերի նախադասություն է, իսկ «Նա գնաց տուն»-ը քանի որ արդեն հասկանալի է, ուրեմն լրիվ նախադասություն է։

Լեզվաբաններից ոմանք էլ գտնում են, որ նախադասությունների լրիվությունը և թերիությունը որոշվում է նրանց փոխհարաբերությամբ։ Եթե, օրինակ, կա «Նա գնաց տուն» կաղապարը, ուրեմն «Տուն»-ը թերի նախադասություն է։ Տվյալ լեզվում միայն լրիվ նախադասության առկայությունն է, որ նախադրյալներ է ստեղծում լրիվ նախադասություն—թերի նախադասություն հակադրության համար։

Լրիվ նախադասություն—թերի նախադասություն հակադրության քննությունը չպետք է հանգեցնել հասկանալիություն-անհասկանալիություն հակադրությանը, որովհետև վերջինս վերաբերում է նախադասության բառական կազմին։ Այնինչ թերիության և լրիվության հարցը վերաբերում է այն բանին, թե ինչպե՞ս են ներկայացված նախադասության շարահյուսական նվազա-

³ Հայ շարահյուսագիտության մեջ գործածվող «թերի» անվանումը կարող է երկակի հասկացվել՝ բովանդակությամբ թերի և ձևով թերի նախադասություններ։ Այնինչ ընդլ նախադասություն տերմինը վերաբերում է միայն նախադասության ձևականորեն թերի լինելուն։ Այս իմաստով Լլիովտիկ տերմինը ավելի ճիշտ է արտահայտում երևույթի բուն էությունը։ Մենք գործածում ենք «թերի նախադասություն» անվանումը, միշտ նկատի ունենալով, որ այն վերաբերում է նախադասության ձևականորեն թերի լինելուն։

դույն միավորները՝ բառական ձևերով, թե՛ առանց լեզվական որոշակի միավորների անմիջական առկայության: Ահա թե ինչ է դրում այս հարցի առթիվ Ս. Աբրահամյանը. «Թերի նախադասությունը որպես այդպիսին պետք է դիտել, ամենից առաջ, ձևային տեսակետից, քանի որ խոսքի մեջ նրա միտքը թերի չէ ու բավարար չափով հասկացվում է: Եվ քանի որ թերի նախադասության միաբեր հասկացվում է, ուստի բոլորովին էլ անհրաժեշտ չի լինում վերականգնելու նրա շարտադյանով անդամները»¹:

Նախադասության այս կամ այն անդամի, կամ թեկուզ անդամների բացակայությունը, այսինքն՝ նախադասության ձևական կազմի ոչ լրիվությունը ապացույց չէ ստակավին տվյալ նախադասության իմաստային ոչ լրիվությունը: Զեղչված անդամներով նախադասության մեջ ինֆորմացիան հաղորդվում է ոչ թե անմիջականորեն լեզվական միավորների միջոցով (էքսպրեսիա), այլ անուղղակիորեն, լեզվական համապատասխան միավորի բացակայությամբ (սուպրեսիա): Ինֆորմացիայի հաղորդման հիմնական միջոցը էքսպրեսիան է, իսկ սուպրեսիան լրացուցիչ հաղորդման միջոց է միայն այն ինֆորմացիայի համար, որը կարող է հաղորդվել էքսպրեսիայի միջոցով: Ուրեմն, երբ որևէ նախադասության մեջ բացակայում է նախադասության անդամներից մեկը, այն բացակայում է փաստորեն արտահայտության պլանում, իսկ բովանդակության պլանում այդ անդամը կա: Այլուպես նախադասության իմաստը նորավոր չէր լինի հասկանալ, կփոխվեր նախադասության կառուցվածքը: Թերի նախադասությունները լրիվ նախադասություններից տարբերվում են ոչ թե նրանով, որ նրանցում բացակայում են այս կամ այն դիրքերը, այլ նրանով, որ դրանք ներկայացված են բացասական կերպով, այսինքն՝ նրանք ներկայացված չեն առանձին բառական ձևերով²:

Այսպիսով, զեղչումը (էլիպսիսը) չի փոխում նախադասության ոչ բովանդակությունը, ոչ էլ կառուցվածքը: Այն հանդես է գալիս միայն արտահայտության պլանում: Ուրեմն, նախադասության թերի և լրիվ համադրները տվյալ շարահյուսական անփոփոխակի երկու փոփոխակներն են, այսինքն՝ բոլոր բովանդակության նրանք լիովին համընկնում են: Եթե առկա է նախադասության թերի փոփոխակը, ուրեմն անսլայմանորեն լեզվում առկա է նաև նրա լրիվ փոփոխակը, որ բովանդակությամբ հավասարազոր է իր թերի փոփոխակին. հակառակ դեպքում այստեղ զեղչման մասին չի կարելի խոսել:

Նախադասության զեղչումը շատ բնորոշ է միջին դրական հայերենին: Միջին հայերենում զեղչվում են նախադասության և՛ գլխավոր, և՛ երկրորդական անդամները: Զպետք է մոռանալ, որ որևէ լեզվում նախադասության անդամների զեղչման երևույթը հանդես է գալիս որպես տնտեսման սկզբունքի դործունեության արդյունք: Այս սկզբունքը շատ ավելի անկաշկանդ է դործում կենդանի խոսակցական լեզվում: Թերի նախադասությունների առատությունը միջին դրական հայերենում վկայում է այն մասին, որ միջին հայերեն մատենագրության լեզուն շատ մոտ էր ժամանակի խոսակցական լեզվին: Պատա-

¹ Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962, էջ 154:

² Էքսպրեսիա և սուպրեսիա տերմինների նախնիներն են Տե՛ս II. Գ. Բարսեղյանի K вопросу о явлении эллипсиса, «Инвариантные синтаксические значения и структура предложения», М., 1969:

³ Т. II. Ломтев, Основы синтаксиса современного русского языка, М., 1958, էջ 131:

հական չէ, որ թերի նախադասութիւնները, հատկապէս դրանց այն տեսակները, որոնց մեջ զեղչված են նախադասութիւններ կրկրորդական անդամները, նույնպէս շատ տարածված են միջնադարյան առականերում, մանավանդ, երբ դրանք կառուցված են երկխոսութիւնների սկզբունքով:

Նախադասութիւն անդամները կարող են զեղչվել լրիվ և մասնակի. այսինքն՝ կարող է անդի ունենալ լրիվ զեղչում և մասնակի զեղչում:

Լրիվ զեղչումը տեղի ունի այն ժամանակ, երբ նախադասութիւնից ձեռնարկ են րացակայում է տվյալ շարահիշուական նվազագույն միավորը՝ նախադասութիւն անդամը ամբողջութեամբ: Օրինակ՝ ...Յւ մազ խառնես ի ներք և յարդի ծեղ (ՂԶ, 98):

Որկրորդ նախադասութիւն մեջ լրիվ զեղչման է ենթարկված պիտաւոր անդամներից մեկը՝ ստորոգյալը՝ խոտնեա:

Մասնակի է զեղչումը այն դեպքում, երբ տվյալ նախադասութիւն անդամը զեղչված է մասնակիորեն, ոչ ամբողջութեամբ: Օրինակ՝ Տղային երակն այլ ցեղ է և մանկանն այլ (ՂԶ, 154):

Այլ ցեղ է, ստորագյալը մասնակիորեն է զեղչված՝ միայն ցեղ է մասը:

Այս երևույթը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 2

Լրիվ փոփոխակ		Թերի փոփոխակ	
Ենթակա	Թագաւոր ի հոն իջնու. թագաւոր չիջնու ի վեղ:	Լրիվ զեղչում	Թագաւոր ի հոն իջնու. իջնու ի վեղ:
	Վեցն ի նոցունց շարժեն զաչսն և երերն ի նոցունց ժողովեն գրարակ ջլացն դտակսն:		Վեցն ի նոցունց շարժեն զաչսն և երերն ժողովեն գրարակ ջլացրն դտակսն:
Մասնակի	Եթէ ի դաւառն... ոսկհհանր գտվի. նա թագաւորին է. թէ արծաթահանր. գտվի. նա թագաւորուն է:	Մասնակի զեղչում	Եթէ ի դաւառն... ոսկհհանր գտվի. նա թագաւորին է. թէ արծաթահանր՝ նա թագաւորուն է:
	Էջն ճերմակ լինի և ազատ լինի յամենայն ցեղ հիւանդութենէ:		Էջն ճերմակ լինի և ազատ յամենայն ցեղ հիւանդութենէ:

Այժմ քննենք միջին հայերենի նախադասութիւն անդամների զեղչման դեպքերը ըստ այս խմբավորման:

Միջին հայերենի ենթական ենթարկվում է առավելապէս լրիվ զեղչման, այսինքն՝ նախադասութիւն թերի փոփոխակի մեջ ձեռնարկ են րացակայում է լրիվ փոփոխակի ենթական ամբողջութեամբ: Ընդհանրապէս նախադասութիւն անդամների զեղչումը տեղի է ունենում այն դեպքում, երբ նախորդ նախադասութիւն մեջ կամ, եթէ բարդ է նախադասութիւնը, նրա կազմի մեջ մտնող նախադասութիւններից մեկում առկա է այդ անդամը, և հեղինակը

նպատակահարմար չի գտնում մեկ անգամ ևս կրկնել այն: Երբեմն թերի նախադասության զեղչված անդամը առկա է լինում մի քանի նախադասություն առաջ: Այնպես որ, թերի նախադասությունների քննելիս անպայման պետք է կոնտեքստից ելնել, որպեսզի հնարավոր լինի փոփոխակը վերականգնել, որը, ի վերջո, նպատարում է տվյալ տեքստի իմաստը ճիշտ բացատրելու:

Ենթակայի զեղչման դեպքերը միջին հայերենում հիմնականում հանդում են հետևյալին.

ա) ենթակայի զեղչումը օրինակների ճշող մեծամասնության մեջ պայմանավորված է նախորդ նախադասության մեջ նույն ենթակայի առկայությամբ.

Մըսքին պառուս, մի՞ տրտնջար, աւետի՞ս,

Գէմ Գարրիէլ ի քեզ տի գայ, աւետի՞ս,

Առնու՜ Լրկար ճամփայ երթայ, աւետի՞ս (ՀՄԺԵ, 327):

Երրորդ նախադասության մեջ Գարրիէլ ենթական զեղչված է, որովհետև նախորդի մեջ կա Կամ՝ Սահման է օրինացն՝ որ թէ թագաւոր... ի հօն իջնու, չիջնու ի զեղ (ՂԶ, 221):

Առաջին նախադասության քաղաւոր ենթական «չիջնու ի զեղ» նախադասության մեջ զեղչված է:

Երբեմն ենթական կարող է լրիվ զեղչման ենթարկվել ոչ թե միայն այն դեպքում, երբ այն առկա է նախորդ նախադասության մեջ, այլև այն դեպքում, երբ այն երկու, նույնիսկ երեք նախադասություն առաջ է դրված: Սակայն թերի նախադասության ենթական կարելի է վերականգնել, քանի որ այն հասկացվում է ավելի ընդարձակ կոնտեքստից՝ Օրինակ՝

Եւ ահա ի նոյն ժամն հաւորսն ձգեաց զգործին և կամեցաւ որսալ զաղաւնին Գայ մտանէ մըջիմն յերանս նորա և էխած. և ի կսկծոյն ի վեր վաղեաց [հաւորսն] մորմոքեալ (ՂԶ, 279):

Եթէ ջերմն քան զիւր սահմանն յետև և յառջև կու շարժի՝ եթէ յառջև կու շարժի՝ դու գիտացիր, որ նեղն զեռ կու յաւնայ. և թէ քան զիւր ժամն յամով դայ՝ յիմացիր որ նեղն պակսեալ է (Գր., 191):

Եւ ի կսկծոյն ի վեր վաղեաց մորմոքեալ՝ նախադասության ենթական հաւորսն է, որը երեք նախադասություն առաջ է դրված: Մյուս օրինակի մեջ վերջին նախադասության ենթական ջեռմն է, որը առկա է նրանից չորս նախադասություն առաջ:

բ) Միջին հայերենում ենթական զեղչվում է նաև, երբ նախադասության ստորոգյալն առաջին և երկրորդ զեմքով է: Սա հայերենի բայի բնույթից է բխում, քանի որ հայերենում բայի գիմալոր ձևերի մեջ գիմային վերջավորությունների միջոցով ձևական արտահայտություն է դառնում նաև զեմքի՝ գործողության կատարողի իմաստը: Օրինակ՝ Տուք մեղ կերակուր, զի մեռանիմք ի սովոյ (ՂԶ, 291), Հնձան ևմ շինեւ ալոյս, Կաւաս ևմ քաղեւ գինոյս (ՀՄԺԵ, 421), Խ զոր առջև ասացաք ֆրատիս, որ է ճրագոյն ի մէջ վերին կապին... (Գր., 85):

Վաղն ի ծոց այս հողին մտանիմք (ՀՄԺԵ, 393):

Գրաբարում նույնպես շատ սովորական է ենթակայի զեղչումը առաջին

Դ Այս երևույթը նույնպես ապացուցում է, որ թերի նախադասության քննությունը հնարավոր է կատարել զուտ իմաստային տեսանկյունով:

և երկրորդ զեմքի ստորոգյալների հետ, եթե դրանք առկա են նախադասութ-
յան մեջ, ապա մեծ մասամբ ոճավորման նպատակով, խոսքի ազդեցիկու-
թյունը մեծացնելու համար: Օրինակ՝ Ծ'ս եմ Աստուած, և չի՛ք այլ որ:

Իսկ երրորդ զեմքի գերանուն-ենթական դրվի միշտ առկա է ձևականո-
րեն (երբեմն նաև հոգի տեսքով), այնպես, ինչպիսի նաև միջին դրական հայե-
րենում և արդի հայերենում:

Միջին հայերենի ենթական ենթարկվում է նաև մասնակի զեղչման, թեև
ավելի սակավադեպ: Ենթականի մասնակի զեղչումը կարող է տեղի ունենալ
բնականաբար այն դեպքում միայն, երբ ենթական արտահայտված է բառա-
կապակցությամբ: Այսպիսի արտահայտությամբ ենթական բնորոշ է միջին
հայերենին: Օրինակ՝ Վեցն ի նոցունց շարժեն զաչսն և երեհն ժողովեն զբա-
րակ ջլացն զտակսն (Գր., 89):

Վեցն ի նոցունց ենթական այս օրինակի մեջ ենթարկված է մասնակի
զեղչման. պետք է լիներ՝ երեհն ի նոցունց: Այս դեպքը շատ հետաքրքիր է,
որովհետև ենթական ոչ միայն զեղչվում է, այլև փոխվում է: Նույնպիսի օրի-
նակ է նաև հետևյալը. Եւ այս յերկար և կարճս Գ պատճառանաց է. մինն ի
նոցանէ... յերկար լինի. ...և երրորդն՝ կազմութիւն մարմնոյն է (Գ., 20):

Ստորոգյալի զեղչման դեպքերի համար կարևոր է նրա տեսակը: Առավել
հաճախ դիմվում են հետևյալ դեպքերը.

ա) Երբ ստորոգյալը պարզ է, ապա զեղչումը կատարվում է լրիվ: Օրինակ՝
Նա դտնողն ի հնկէն դմէկն տայ նմա և թագուորին՝ տասնակ, ու այլն դտնո-
ղին... (ՍԳԴ, 20), Եթե ի գաւառն ...ոսկէհանք դովի, նա թագավորին է, թե
արծաթահանք՝ նա թագուհուն է (ՍԳԴ, 19—20):

բ) Երբ ստորոգյալը բարդ է կամ բաղադրյալ, առավելապես տեղի ունի
մասնակի զեղչում, զեղչվում է անվանական ստորոգյալի բայական մասը,
կամ բայական բաղադրյալ ստորոգյալի մեջ մտնող վերացական բայը: Օրի-
նակ՝ Գիտացիր, որ էշն ճերմակ լինի և առողջ, և ազատ յամենայն ցեղ հի-
ւանդութենէ (ՂԶ, 159):

Այստեղ ներմակ լինի ստորոգյալի լինի բայական մասը զեղչված է մյուս
ստորոգյալների մեջ՝ առողջ (լինի) և ազատ (լինի):

Ապա եվ ծնողքն մեռնին՝ նա կարենան ջալընջել ի վերայ հայրենեացն
և բլայթել (ՂԶ, 193):

Այստեղ էլ կարենան ջալընջել ստորոգյալի կարենան մասը զեղչված է
կարենան բլայթել ստորոգյալի մեջ:

Անվանական ստորոգյալը երբեմն լրիվ զեղչման է ենթարկվում. երբ
նախորդ նախադասություններում նույն ստորոգյալը մի քանի անգամ կրկըն-
վել է: Օրինակ՝ Պաղղամն չորս ցեղ են. մէկն այն է՝ որ ի հալած ապիկի նման
է, և երկրորդն այն է՝ որ համովն թթու լինի, և երրորդն՝ համովն քաղցր, և
չորրորդն՝ համովն աղի լինի (ՄԶ, 86):

Ինչպես տեսնում ենք, այստեղ թվարկման ժամանակ զեղչված է այն է
ստորոգյալը:

գ) Նախադասության ժխտական կառուցվածքի դեպքում պարզ ստորոգ-
յալը կամ բաղադրյալ ստորոգյալի բայական մասը փոխարինվում է ոչ-ով:
Օրինակ՝ Երբ ի վերայ ըղնկանդ կաթեցնես. չի լինի նօսը, որ վաթի. և ոչ
թանձը, որ շիսփոի (ՂԶ, 159), Ապա թէ յետ եօթն աւուրն չպակսի ջերմն, և ոչ

հետ շորեքտասան և ատուրն, ապա զկերտկուրն սակաւ մի այլ ուժով տուր (ՄՇ, 84)։

Առաջին օրինակի չի լինի նօսք ստորոգյալի չի լինի բայական մասը փոխարինվել է ոչ-ով, իսկ երկրորդ օրինակում չպակսի բայական պարզ ստորոգյալը փոխարինվել է ոչ-ով։

Երբ հաստատական կառուցվածքի բաղադրյալ ստորոգյալով արտահայտված հատկանիշը հաջորդ նախադասության մեջ ժխտվում է, զեղչվում է ստորոգյալի անվանական մասը, իսկ օժանդակ բայը դառնում է միտական։ Օրինակ՝ Զի ամէն խածող զազանք կան որ թիւնաւորք են, և կան՝ որ շեն (Գր., 47)։

Խիւնաւորք են ստորոգյալի թիւնաւորք՝ անվանական մասը զեղչվել է հաջորդ նախադասության մեջ, իսկ հաստատական հանգույցը դարձել է միտական։

Ինչ վերաբերում է նախադասության երկրորդական անդամների զեղչման դեպքերին, ապա այստեղ պետք է նշել, որ զեղչվում են առավելապես բայական լրացումները։ Օրինակ՝ Յորժամ ի յեղկ ջրոցն ելանէ ի հով ջուր նստի, և ընդ մտելն՝ շուտով ելանէ, և զայլ ստածումնդ զոր ասացաք ի բանի պահէ (ՄՇ, 17)։ Այստեղ զեղչված է ի հով ջուր պարագան «և ընդ մտելն՝ շուտով ելանէ» նախադասության մեջ։

Որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական երկանդամներում զեղչվում են որոշյալ և հատկացյալ անդամները։ Օրինակ՝ Այս ինչ մանձիլ որ զրած է, ուղտի մանձիլնի այ, ձիու չէ (ԶԱՕ, 7)։

Պետք է նշել, որ միջին զրական հայերենում միշտ չէ, որ հնարավոր է լրիվ նախադասություն—թերի նախադասություն հակադրությունը։ Միջին հայերեն մատենագրության քննությունը հնարավոր է դարձնում նշելու որոշ պայմաններ, որոնց առկայությամբ գործածվում են առավելապես թերի նախադասություններ, և պայմաններ, երբ կարելի է գործածել առավելապես լրիվ նախադասություններ։ Այսպես՝

1. Երբ տվյալ նախադասության ստորոգյալը հրամայական եղանակի բայ է, ապա ենթական, որպես կանոն, նյութապես չի ներկայացվում։ Օրինակ՝ Մի՛ այդչափ ի գործոց զիս յայտնապէս յանդիմանել (ԿԵ, 181), ...և մտո՛ւ ի բաղանիս և օծէ՛ զանձն խրու ձիթով (ԱՕԲ, 114), ...և ա՛րկ ի պտուկ մի և ի վերայ կէս լիտր ջուր յի՛ց և եփէ՛ (ԱՕԲ, 152)։

Երբևմն հրամայական եղանակի բայ-ստորոգյալ ունեցող նախադասության դերանուն-ենթական զրկում է, Այս դեպքում այդ նախադասությունը լրիվ է և ունի լրացուցիչ իմաստային երանդ։ Կամ մեղմացվում է հրամանը։ Եւ չե՛րք տեսնուս զայն նշաննիս, դուն պիտացիր րստույդ, որ ջերմն ի քորքոս մաղձէն է (Գր., 22)։

Կամ էլ րնդհակառակը, ավելի է շեղվում հրամանի ուղղվածությունը։ Գնա, դու կեր հաց դատելով... (Ֆր., 71), Մի հաներ դու զդա, զի վատ մարդ է... (ՂՇ, 280)։

2. Լրիվ նախադասություն—թերի նախադասություն հակադրությունը համեմատաբար ազատ է գործում, երբ նախադասության ստորոգյալը արտահայտված է բայի դիմավոր ձևերով։ Այս դեպքում դերանուն-ենթական կարող է առկա լինել նախադասության մեջ, ու տվյալ նախադասությունը կլինի լրիվ, կամ կարող է առկա չլինել, ու նախադասությունը կլինի թերի։

Տարբեր նախադասություններում զրահորվում է խոսողի տարբեր վերաբերմունքը իր հաղորդման նկատմամբ: Ըստ եղանակավորման նախադասությունների տեսակները որոշելիս որպես դասակարգման հիմունք երբեմն ընդունվում է խոսողի նպատակը: Այդպես է Մոսկվայի համալսարանի հրատարակած «Ժամանակակից ռուսաց լեզու» Շարահյուսություն» գրքում⁸: «Հայերենի շարահյուսություն» երկհատոր աշխատության մեջ Վ. Առաքելյանը նախադասությունների այդպիսի տեսակները քննում է «Նախադասությունների տեսակներն ըստ արտահայտման նպատակի (եղանակի)» վերնագրի տակ: Այս նշանակում է, որ նա նույնպես նախադասությունների տիպերը դասակարգելիս հիմք է ընդունում խոսողի նպատակը: Իհարկե, ճիշտ է, որ տարբեր նախադասությունների մեջ արտահայտվող վերաբերմունքների տարբերությունը հանդիսանում է խոսողի տարբեր նպատակների արտահայտություն: Բայց այստեղ պետք է հաշվի առնել երկու հանգամանք. ա) նախ՝ նպատակը տվյալ ասույթի կոնկրետ բովանդակությունն է, որի քննությունը քերականության առարկան չէ, բ) երկրորդ՝ նախադասությունների բնույթը միշտ չէ, որ ուղղակիորեն համապատասխանում է տվյալ ասույթի արտահայտողի նպատակին: Օրինակ, հեռուորական հարցական նախադասություններում խոսողի նպատակը բնավ էլ հարց տալը չէ, նա չի հարցնում, որպեսզի որևէ պատասխան ստանա: Այս կարգի նախադասություններում հարցական ձևով փաստորեն հաստատում է արտահայտվում: Օրինակ՝ Ի յերկրի ի՞նչ կայ նրման քեզ յօրինակ: Կոստանդին Նրզնկացու այս տողը փաստորեն նշանակում է. Ի յերկրի ոչինչ կայ նրման քեզ յօրինակ: Հետևապես, այստեղ տարբերություն կա խոսողի նպատակի և նրա գործածած նախադասության արտահայտության ձևի միջև:

Ս. Աբրահամյանը իր «Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր» աշխատության մեջ հետևյալ կերպ է մոտենում այս հարցին. «Նախադասությունների տիպերը շարահյուսության ուսումնասիրման օբյեկտ պետք է լինեն ամենից առաջ իրենց կառուցվածքային արտահայտության հատկանիշներով (այդպիսին է հենց նախադասության նրանք)»: Նախադասությունների երանգը, ինչպես ասվեց, խոսողի համապատասխան վերաբերմունքի արտահայտությունն է⁹:

Մեր կարիծքով, ճիշտ պետք է համարել նախադասությունները ըստ երանգային հիմնական առանձնահատկությունների դասակարգելու:

Ըստ երանգային հիմնական հատկանիշների նախադասությունները միջին հայերենում, այնպես ինչպես պարսերում և արդի գրական հայերենում, բաժանվում են չորս հիմնական խմբի. 1) պատմողական, 2) հարցական, 3) բացականչական և 4) հրամայական:

Այս չորս հիմնական խմբերից յուրաքանչյուրի ներսում հնարավոր է տարբեր իմաստային երանգների առկայություն: Յուրաքանչյուր բնույթի նախադասությունների մեջ կարող են առանձնացվել զանազան իմաստային փոփոխական: Օրինակ, հարցական բնույթի նախադասությունը կարող է հար-

⁸ Современный русский язык. Синтаксис, М., 1957.

⁹ Ս. Կ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, էջ 60:

ցումի հետ միաժամանակ արտահայտել անհանգստություն, հույս, թերահավատություն և այլն, կամ բացականչական նախադասությունը կարող է արտահայտել զարմանք, սարսափ, հրճվանք և այլն: Այնպես որ, երբ նախադասությունները ըստ բնույթի բաժանում ենք չորս խմբի, փաստորեն հաշվի ենք առնում հիմնական կաղապարները, որոնք առկա են լեզվի մեջ, իսկ իմաստային փոփոխակները նշվում են ամեն մի խմբի մեջ առանձին-առանձին:

1. Պատմողական նախադասություններ.— Այս բնույթի նախադասությունները լայն տարածում ունեն, շատ դորժածական են գրական տարբեր ժանրերի մեջ: Ինչպես հայտնի է, պատմողական նախադասություններում հաստատվում կամ մխտվում է իրականության երևույթներին վերաբերող որևէ միտք: Առահասարակ նախադասությունների բնույթի դրսևորման հարցում էական դեր ունի նախադասության գլխավոր անդամներից մեկը՝ ստորոգյալը: Ըստ էության ստորոգյալի միջոցով է արտահայտվում խոսողի վերաբերմունքը տվյալ նախադասության մեջ արտահայտվող մտքի նկատմամբ: Այդ պատճառով էլ նախադասությունների տեսակներն ըստ բնույթի քննելիս շատ կարևոր է դառնում այդ նախադասությունների ստորոգյալների քերականական արտահայտության քննությունը:

Միջին հայերենում պատմողական նախադասությունների ստորոգյալն արտահայտվում է գրեթե բոլոր եղանակների բոլոր ժամանակներով: Առանձնակի դիրք ունի հրամայական եղանակը: Այս եղանակով արտահայտվում է գերազանցապես հրամայական նախադասության ստորոգյալը¹⁰: Սա բխում է հրամայական եղանակի արտահայտած իմաստից: Այն ցույց է տալիս «գործողության կատարման հրաման, թևադրանք, խնդրանք»¹¹:

Այնինչ պատմողական է այն նախադասությունը, որով պատմվում է, հաղորդվում է մի քան առանց հատուկ առողանություն: Նախադասությունների բնույթը որոշելու համար խիստ կարևոր է հնչերանգը: Ահա թե ինչ է գրում այս մասին Ս. Աբրահամյանը. «Բայի եղանակային ձևերի և նախադասությունների բնույթների միջև հիշյալ որոշ անհամապատասխանությունները ցույց են տալիս, որ նախադասության բնույթի ձևավորման, արտահայտման խնդրում բայի եղանակի կատեգորիայից բացի կա նաև ուրիշ գործոն: Այդ գործոնը նախադասության ինտոնացիան է, որի գերը առանձնապես խիստ զգացվում է այն դեպքում, երբ նախադասության բնույթը պայմանավորված չէ բայի եղանակի կատեգորիայով և չի համապատասխանում վերջինիս»¹²: Պատմողական, հարցական, բացականչական նախադասությունների ստորոգյալները հաճախ կարող են նույն եղանակներով ու ժամանակային ձևերով արտահայտվել: Այստեղ որոշիչ և տարբերակիչ հատկանիշը հնչերանգն է միայն: Թավական է փոխել «կռունկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞ս» հարցական նախադասության հնչերանգը, և ույն կդառնա պատմողական:

Պատմողական նախադասությունների ստորոգյալի ձևաբանական արտահայտությունը կախված է տվյալ նախադասության բովանդակությունից, իմ

¹⁰ Ժամանակակից հայերենում հրամայական եղանակը միակը չէ, որով ձևավորվում է հրամայական բնույթի նախադասության ստորոգյալը:

¹¹ Է. Ս. Աղայան, Հ. Խ. Բաբսեղյան, Հայոց լեզու, Երևան, 1969, էջ 251:

¹² Ս. Աբրահամյան, Եզգ. աշխ., էջ 73:

նախադասության մեջ պատմվում է որևէ բանի կամ մեկի մասին, նախադասության ստորոգյալը բայական է լինում: Օրինակ՝

Մաղկեաց այգին ու պաղչանին (ՀԹ, 139), Մեք ի դողութիւն կու երբան (ՎԱ, 312), Մէկգմէկի ուտեն. անասունքն գիւնան (ՂԶ, 223):

Իսկ երբ պատմողական նախադասության մեջ բնութագրվում է հատկապէս, ստորոգյալը անվանական է լինում. Բերանդո Բալդո է քաղցածին (ՀԹ, 120), Երկիրս էր սառն ու պաղ ու ցուրտ ձմեռն ու հողմային (ՀԱԳ, 31), Երազ Լ սուտ, եղբայրք, աշխարհիս բաներն ի լման (ՀԱԳ, 67), Աստուծոյ դատաստանն աղաւ Լ (ՎԱ, 239):

Պատմողական բնույթի նախադասության ստորոգյալը կարող է դրվել բոլոր եղանակներով, բացի հրամայականից:

2. Հարցական նախադասություններ.—Հարցական են այն նախադասությունները, որոնք իրենց մեջ հարցում են պարունակում:

Հարցական նախադասությունները միջին հայերենում ձևավորվում են երկու միջոցով, որոնք հանդես են գալիս միասին. 1) հնչերանգով և 2) հարցական դերանունների միջոցով: Այս երկու միջոցների մեջ առավել կարևորը հնչերանգն է, որովհետև բոլոր լեզուների այս բնույթի նախադասությունների ստորոգյալները շունեն իրենց բնորոշ, յուրահատուկ առանձնահատկությունը, արտահայտության ձևը: Հարցական նախադասությունների ստորոգյալներն էլ արտահայտվում են նույն քերականական միջոցներով, ինչ, ասենք, պատմողական, բացականչական բնույթի նախադասությունները: Կառուցվածքի տեսակետից հարցական նախադասությունները համընկնում են պատմողական նախադասություններին: Այստեղ տարբերակիչ հատկանիշ է հնչերանգը:

Հարցական նախադասության հնչերանգը կախված է ընդհանրապես այն բանից, թե նախադասության ո՞ր բառն է հարցման տակ բնկնում, Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ միջին հայերենում հարցական նախադասությունները ձևավորվում են գերազանցապես հարցական դերանունների միջոցով: Մանավանդ միջին հայերեն գեղարվեստական պրականության մեջ հարցումը զրեթե միշտ արտահայտվում է հարցական դերանվան միջոցով. հարցման տակ է առնվում դերանունը: Օրինակ՝ Թուխ՝ ամ ի՞նչ ես կորուսեր (ՀՄԺԵ, 135), Ի՞նչ մայր է բզբեղ բերեր (Ն. տ., 128), Վանի՜ խօսիս բանք ի ժողով, է, Կոստանդին բարձր պայով (ԿԵ, 165), Խօղըն չօհար ե՞րբ ձանչէ (ՀԵ, 143), Սիրտ իմ, ընդէ՞ր ես խոռվել (Ձր., 51), Յաստուծոյ է՞ր ես հեռացել (Ն. տ., 51):

XII—XVII դարերի մատենագրության մեջ շատ քիչ օրինակներ կարելի է գտնել, որտեղ հարցական նախադասության հարցումը արտահայտվի ստորոգյալով: Ուրեմն, միջին հայերենի հարցական նախադասության հնչերանգային կազմադարձ բավական տարբեր է արդի հայերենի նույնարնույթ նախադասության հնչերանգային կազմադարձից. բանի որ արդի հայերենում հարցական նախադասության ստորոգյալը առանձնակի դիրք ունի. նա համեմատաբար ավելի շատ է հանդես գալիս որպես հարցում կրող անդամ:

Հարցական նախադասությունները առավել բնորոշ են գեղարվեստական ոճին, սուսմեղապես՝ արձակին, կերպարների են երկխոսությունների մեջ: Միջին հայերենում տարածված է հարցական բնույթի նախադասությունների ճշգրտորակ հարցական նախադասությունները: Ինքնուրույն կազմադարձային իմաստային փոփոխակր: Օրինակ՝ Ի՞նչ կայ նրման բեղ յօրինակ (ԿԵ, 166), Զինչ

ի վերուստ շէր տուած, Դու Ե՛րբ կարիր հասնել քանին (Ֆր., 210): Հանցկուն այլ ո՞վ տեսեր դմբով (ՀԹ, 131):

Հարցական նախադասութիւններ լինելով իմաստային փոփոխակ պետք է համարել կշտամբանք արտահայտող հարցական բնույթի նախադասութիւնները: Օրինակ՝ Մի՞թէ գիս զեղեցիր (ՀԹ, 152), Իսկի չի խղճա՞ս դու ինձ (ԿԵ, 160), Ա՛յ սուրաթ պայծառ ու պատկեր լուսատես, Ձիմ աշերս ի քո սիրոյդ է՛ր կու գտես (ԿԵ, 166), Ձհոգոյ քակտիլն է՛ր շեւ յիշել, Յիստուծոյ է՛ր ես հեռացել (Ֆր., 51):

3. Հրամայական նախադասութիւններ. — Հրամայական նախադասութիւններն արտահայտում են խոսողի լեզւադրանքը խոսակցին՝ կատարելու որեւէ գործողութիւն:

Իմն նախադասութիւնը երկկազմ է, հրամայական նախադասութեան կառուցվածքի մեջ հիմնական դերը պատկանում է ստորոգյալին:

Միջին հայերենում հրամայական նախադասութիւններն ստորոգյալը զերայանցապէս արտահայտւում է հրամայական եղանակով: Օրինակ՝ Ձամէնն արա՛ յիմի յայտնի (ԿԵ, 117), Ձայս կեանքս ուրացի՛ր, Ֆրի՛կ, անդէնին դու ե՛լ խրնդորակ (Ֆր., 50), Կոռնկ, մեր աշխարհէն գնա՛, հեռացի՛ր (ՀՄԺԵ, 256):

Շատ տարածված են արդեւական հրամայականով արտահայտված ստորոգյալ ունեցող հրամայական նախադասութիւնները: Օրինակ՝ Իմ սիրտ, քեզ քանի ասեմ, հեա շարին իսկի մի՛ գրնայ (Ֆր., 90), Տըկար եմ և անգոր, Մի՛ ծանր ու մեծ բեռն դրնել (ԿԵ, 181), Ո՞վ մահկանացու, մի՛ շատ ազահութիւն անիլ (ՉԱՕ, 85):

Այսպիսի ստորոգյալ ունեցող հրամայական նախադասութիւնները առանձնապէս շատ են բարոյա-խրատական բնույթի ստեղծագործութիւններում, բժշկական երկերում և այլ ժանրերի այն հատվածներում, որտեղ հեղինակը խրատ, խորհուրդ է տալիս: Միանք բայական միակազմ նախադասութիւնների ընդհանրական-դիմաւոր տիպն հն և բնականաբար դործածվում են առանց ենթակայի: Այս նախադասութիւնների գերադաս անգամը, որ բայ խոսքի մասով է արտահայտվում, գրվում է ե՛րուն հրամայականով, ե՛ւ արդեւականով: Օրինակ՝ Ապա ա՛ռ սանտալ և քաֆուր (ՄՀ, 98), Եւ զփական կտաւով փաթթի՛ (Գր., 145), Մի՛ փոխեր գսահմանս, զոր Եդին հարքն բո (ՂՀ, 252), Եւ իւր ստածումն բնդ յառաջսն մի՛ շտապիս (ՄՀ, 104), Դի՛ր զայսոնք ի կճիճ մի և ա՛ծ ի վերայ երեք կարդ և կթխայ ցուր (ՄՀ, 147):

Օրինակները ցույց են տալիս, որ միջին հայերենի հրամայական նախադասութեան ստորոգյալը բացառապէս հրամայական եղանակի բայ է: Այնինչ արդի հայերենում հրամայական նախադասութեան ստորոգյալը կարող է գրվել նաեւ անցյալ կատարյալ ժամանակի բայով. Դե՛հ, սկսեցինք. այս նախադասութեան իմաստն է՝ «Դե՛հ, սկսեցեր»: Շատ սովորական է անորոշ գերբայի դործածումը այս նպատակով. Կանգնել:

Միջին հայերենի հրամայական բնույթի նախադասութիւնները կարող են տարբեր իմաստներ արտահայտել և համապատասխանաբար ունենալ տարբեր իմաստային ներկադասարային փոփոխականեր:

Ցանկութիւն արտահայտող հրամայական նախադասութիւններ.

— Աղչի՛կ, լի՛ց ու տո՛ւր (ՀՄԺԵ, 141), Արեկ, արեկ, իմ խուպ սուրաթ (ՀԹ, 119):

Հրաման, թելադրանք արտահայտող հրամայական նախադասություններ.
Ջամէնն արա՝ հիմի յայտնի (Կե, 17), Ջայս կեանքս ուրացի՛ր, Ֆրիկ,
անդէնին դու Լ՛ի խրնդրակ (Ֆր., 59):

Հորդոր արտահայտող հրամայական նախադասություններ.

Ո՛վ մահկանացու, մի՛ շատ ազահութիւն անիլ (Ջե0, 85), Տկար Լմ և ան-
դօր, Մի՛ ծանրր ու մեծ բեռն դրենլ (Ֆր., 181):

4. Բացականչական նախադասություններ. — Բացականչական նախադա-
սությունները առանձնանում են իրենց հնչերանգով: Այսպիսի նախադասու-
թյուններում որոշակիորեն ընդգծվում է բացականչական հնչերանգին են-
թարկվող բառը: Բացականչական նախադասությունները արտահայտում են
զարմանք, անվստահություն, հիացմունք, ցանկություն և այլն և համապա-
տասխանաբար ունենում են զարմանք, անվստահություն, հիացմունք,
ցանկություն և այլն արտահայտող իմաստային փոփոխականներ: Օրինակ՝ Այդ
ին՛չ աներկիւղ մարդիկ էք, որ դշուրն և զգոսացածն թողնալ էք, և զտղայ և
զմատղաշ ծառերն ի վայր կու տայք (ՂԷ, 282), Օրհնեա՛ւ լինիս դու ի յարար-
չէն, Եթէ՛ տացես նշշան դու գիմոյ վարէն, Ջի կարօտու նորա մեռանիմ աստէն
(ԽԿ, 134), Աւա՛ղ, թի՛ղ զո՞րն ասեմ ի լալի (ԽԿ, 132):

Բացականչական նախադասությունների համար բնորոշը բարձր և անա-
կան հնչերանգն է: Սակայն կան մի շարք կառուցվածքային հատկանիշներ ևս,
որոնք, զուգակցվելով հնչերանգի՝ նեւ, ձևավորում են բացականչական նա-
խադասությունը: Միջին հայերենի համար պրանցից շատ բնորոշ են երկուսը.
1. բացականչական նախադասություններում հարաբերական դերանունների առ-
կայություն և 2. ձայնաշխությունների առկայություն:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ենթակայական հարաբերությունների անդամները՝ ենթական և ստորոգ-
յալը, գտնվում են կառուցվածքային նույն մակարդակի վրա և իրար հավա-
տար են իրենց անհրաժեշտականության չափով:

Ենթակայական հարաբերությունների մեջ անդամների կապը իրականա-
նում է հարաբերության քայական անդամի ունեցած հիմնական տարբերակիչ
հատկանիշով՝ արժույթայնությամբ, այսինքն՝ շարահյուսական մի այլ դասի
տարր պահանջելու հատկությամբ և համաձայնության միջոցով, որ կատար-
վում է թվով և դեմքով:

Թվի և դեմքի ձևաբանական կարգերը հանդես են դալիս որպես ենթակա-
յական շարահյուսական հարաբերությունների դրսևորման միջոցներ: Դեմքով
համաձայնությունը կանոնական է և՛ դրարարում, և՛ միջին հայերենում, և՛
արդի հայերենում: Այս երևույթը ոչ մի առանձնահատկություն չունի հայոց
լեզվի պատմության ոչ մի շրջանում և հատվածում:

Ավելի հետաքրքիր է թվով համաձայնության երևույթը: Միջին պրական
հայերենի ենթակա + ստորոգյալ զույգի թվով համաձայնության առավել բնո-
րոշ դեպքերն են.

1. Երբ ենթակա + ստորգյալ զուգորդության մեջ ենթական եզակի թվով
դոյական է (կամ դոյականաբար վերցված որևէ խոսքի մաս) կամ դերանուն.

ստորոգյալը (բայական կամ անվանական) կանոնավոր կերպով համաձայնում է. այսպես՝ Շրթունքդ + շող է (ՀԹ, 155), Գույնն + թառամեցաւ (ՀԱԳ, 69), Երթալն + դիժար է (ՄՆ, 271), Սերն + բնակեցաւ (ՆՔ, 37), Ուղ + լսե (Ն. տ., 306), Նա + դլորի (ՀԱԳ, 19), Ես + չեմ խաբվեր (ՆՔ, 303), Դողալն + չիինի (ՄՀ, 133), Սիրողն + ասի (ՀԱՕ, 93)։

Այսինքն՝ ենթեկզ + ՍՏեզ¹³։

2. Երբ ենթական հոգնակի թվով է. միջին հայերենի ենթակայական զուգորդությունը տալիս է երկու զուգահեռ շարք։

Մի կողմից՝ Հարք + բաժանեցան (ՀԱԳ, 72), Ձագերն + ձայն ածեն (ՀԹ, 140), Ամենքս + որդիքս ենք (ՆՔ, 311), Ոմանք + անհողի են (ՀԱԳ, 32), Սաղկունք + ցնծան (ՀԱԳ, 36), Թուրքմանք + ելան (ՀԹ, 206)։

Այսինքն՝ ենթեզոն + ՍՏհոզն, մյուս կողմից՝ Աչերս + դիպաւ (ՀԹ, 149), Գիւտը + իսկ (ԿԵ, 118), Անդամունքն + տաքնայ (ՄՀ, 4), Ոսկերքս + է մաշել (ՆՔ, 246), Բաներ + կու լինի (ՆՔ, 63), Աչերս + է կարօտ (ՄՆ, 107)։

Այսինքն՝ ենթհոզն + ՍՏեզ։

Պարզ է. որ ենթհոզն + ՍՏեզ հարաբերությունը օրինաչափական լինել լի կարող թեկուզ իմաստային-տրամաբանական տեսանկյունից։ Բայց միջին հայերեն մատենագրությամբ ավանդված այս լեզվական փաստերի առատությունը մեզ իրավունք չի տալիս անցնելու երևույթի կողքով և շնչելու այն։ Այս երկու զուգահեռ շարքերի գոյությունն պատճառը միջին զրական հայերենի անմիօրինակությունն է, որը ինչպես հայտնի է, թեև դարձել էր պաշտոնական գրագրությունների, դիտական, պեղարվեստական գրականության լեզու, սակայն երբեք չդրվեց մշակման որոշակի հունի մեջ։ Ինչքան էլ որ առատ են անհամաձայնության դիպքերը, դրանց ընդհանուր քանակը միջին հաշվով 3 տոկոսից չի անցնում։ Տարբեր բովանդակության, ոճի և ժամանակաշրջանների առավել բնորոշ ստեղծագործությունների հարյուր ենթակայական հարաբերությունն ընտրանքի սահմաններում կատարված հաշվումները տվել են հետևյալ արդյունքները։

Աղյուսակ 3

Միեթար Հերացի Ջերմանց միեթարութիւն		Գրիգորիոս Քննութիւն բնութեան մարդոյ		Սմբատ Սպարապետ Գոտաստանագիրք	
ԵՆԹ. + ՍՏ.	ԵՆԹ. + ՍՏեզ	ԵՆԹ. — ՍՏ.	ԵՆԹ. — ՍՏեզ	ԵՆԹ. — ՍՏ.	ԵՆԹ. + ՍՏեզ
93	7	60	20	91	9

Կ. Երզնկացի Տաղեր		Ա. Ամասիացի Անդիտաց Թնայետ		Վիմադիր արձանա գրություններ	
ԵՆԹ. — ՍՏ.	ԵՆԹ. + ՍՏեզ	ԵՆԹ. — ՍՏ.	ԵՆԹ. — ՍՏեզ	ԵՆԹ. — ՍՏ.	ԵՆԹ. — ՍՏեզ
100	0	97	3	91	9

¹³ Հազվադեպ է պատահում, որ եզակի ենթակայի ստորոգյալը հոգնակի թվով դրված լինի։ Այսպիսի անհամաձայնություն գրեթե միայն Գրիգորիոսի մոտ է նկատվում։ Օրինակ՝ Իսիւնե երակլ էն (Գր., 30)։

Ինչպես ջույց են տալիս աղյուսակի տվյալները, հոգնակի ենթակայի հետ եղակի ստորոգյալ գործածելու դեպքերը աժելի հաճախակի են բժշկագիտական, դիվանա-ատենական գրականության մեջ: Հոգնակի ենթակայի հետ եղակի ստորոգյալ գործածելը ջույց է տալիս տվյալ պրական լեզվի անմշակությունը: Քննելով XIX—XX դարերի գրականության լեզուն, այս երևույթի վրա ուշադրություն է դարձրել Մանուկ Աբեղյանը: Նա, բերելով բազմաթիվ օրինակներ Պոռշյանից, Շանթից, Գամառ-Քաթիպայից, գրում է. «Հոգնակի ենթակայի հետ եղակի ստորոգյալ ղենյր համկարանություն է և հաճախ պարզապես սխալ, որ անուժ են անփութությամբ մեր հեղինակները»¹⁴:

3. Հարադիր գոյականով արտահայտված ենթական պահանջում է եղակի ստորոգյալ: Օրինակ՝ Սաբ ու ձոր + կույայ (ՀԱԳ, 68): Լացն ու հառաչն + Լ պատեր (ն. տ., 52), Չար ու բարի + թող անցնի (նՔ, 254), Հովն ու Բամին + անուշանայ (ՀԹ, 139):

4. Միջին հայերենում տարբերակվում է հարադիր գոյականով արտահայտված ենթական և բազմակի ենթականների համաձայնությունը ստորոգյալի հետ: Առաջին դեպքում, ինչպես տեսանք, գրեթե կանոնավոր կերպով ենթակայական հարաբերությունը ունի ննթեզ + ՍՏեզ տեսքը:

Բազմակի ենթականների դեպքում ստորոգյալի հետ համաձայնությունը կատարվում է երբեմն եղակի թվով, երբեմն հոգնակի:

ա) Նման քոլոր ենթականների գործողությունը միասնական է, տեղի է ունենում եղակի ստորոգյալի հետ համաձայնություն. ինչպես՝ Խոցն և ցան + լինի (ՄՀ, 54): Նշան և պատահումն + չլինի երևեցել (ն. տ., 134) Այգին ու պաղլանին + ծաղկեաց (ՀԹ, 139):

բ) Բազմակի ենթականների գործողությունը միասնական չլինելու դեպքում ստորոգյալը հոգնակի թվով է գրվում. ինչպես՝ Այրիկն ու կնիկն + հաշտին (ՂՀ, 196): Լեռն և Խորոսն + ուր են (ն. տ., 247): Արծիվն ու շանեն յազան + զնացին (նՔ, 281), Լեռն ու դաշտ + կանաչ բուսան (ՀԱԳ, 31):

Անեղական գոյական-ենթականները, որոնք դրաբարում հոգնակի ստորոգյալ են պահանջում (օր., Անցցին կնան մեր), միջին հայերենում արդեն եղակի ստորոգյալ են պահանջում, քանի որ մթաղնվել է դրանց հոգնակի իմաստը: Օրինակ՝ Կու հրամայել + օրէնքս և այլն:

Ենթակայի և ստորոգյալի համաձայնության այս հիմնական օրենքներից շեղումներ են նկատվում այն դեպքերում, երբ նախադասության գլխավոր անդամների համաձայնությունը կատարվում է բակառությամբ: Օրինակ՝ Ֆրոսն զրն խել և անթապտիր. գպոռնկելըն մեղք շասնի (Ֆր., 274), Հոռոմրն խիստ ամբարտաւան, հայու ֆռանցին շուն կու ասեն (ն. տ.):

Ենթակայի, որպես նախադասության գլխավոր անդամներից մեկի, դարգացման միտումները բացահայտելիս պետք է ուշադրություն դարձնել հետևյալ երկու հարցի վրա.

1) Միջին հայերենում ո՞ր խոսքի մասերով կարելի է արտահայտել ենթական:

2) Իր ձևաբանական արտահայտման տեսակետից ի՞նչ բնորոշ առանձնահատկություններ է դրսևորում միջին հայերենի ենթական:

¹⁴ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Նրևան, 1965, էջ 501.

Այժմ խոսենք այս հարցերից առաջինի՝ միջին հայերենի և ներակայի կարգային առտախառնության մասին:

Որևէ խոսքի մասի կարգային իմաստը և գործածությունը նախադասության մեջ փոխադարձաբար կապված են. եթե գործածությունը պայմանավորված է կարգային իմաստով՝ ապա այս վերջինը իր հերթին որոշակիորեն ընդգծվում և որպես քերականական իմաստ բացահայտվում է միայն խոսքի մասի գործածության միջոցով: Շարահյուսական բոլոր կարգի հարաբերություններում գուցորդվող անդամների գործառույթը ենթադրում է այդ անդամների գուցորդելիության հնարավորություններ: Ենթակայական հարաբերության մեջ ենթակա կարող են դառնալ այն խոսքի մասերը, որոնք հանդես են բերում բայի հետ գուցորդվելու հատկություն: Քննենք միջին հայերենի փաստերը և ապա անդրադառնանք այն հարցին, թե այս տեսակետից ինչ առանձնահատկություն է դրսևորում միջին հայերենը:

1. Միջին հայերենում որպես ենթակա կարող են հանդես գալ գոյականները. Բլրուլն իւլայ (ՀԱԳ, 41), Սէրդ աի փոխի (ն. տ., 67), Քաջախօսքն և և կարկամել (ն. տ., 11), Խաւարն և Երբեցաւ (ԿԵ, 31), Չվանն ուլորի (ՄՆ, 257):

Այսինքն՝ ենթակայական հարաբերությունը ունի այս տեսքը՝ գոյական և ներակա + ստորոգյալ:

2. Ենթակայի դերում կարող են հանդես գալ տնձնական, ցուցական, հարցական, որոշյալ, անորոշ, ժխտական դերանունները: Դու թաղաւոր ևս (ՀԱԳ, 53): Նա ուլորի (ն. տ., 19), Այս էլ զարմանք (ն. տ., 1), Ով իսէ (նԲ, 306), Ամենքս ուրդիքս ևնք (ն. տ., 311), Ու ով չէ պատճառ (նԲ, 303), Այլ և հարուստ լինին (ՍՄԴ, 22), Ոմանք չար ևն (ՀԱԳ, 33), Ինքն է տէր (ՀԱԳ, 27), Ամենն և կին (ԶԺ, 161), Մէկն և մուրող լինի (Ֆր., 71), Ով չի չիսէ հագնի (ՍՍԴ, 16):

Այսինքն՝ ղերանուն և ներակա + ստորոգյալ:

3. Ենթական կարող է արտահայտվել հետևյալ բառակապակցություններով՝ Գ (Դա, Բ) ուղղ և Գ (Դա, Բ) բաց¹⁵, Հնարավոր է և հակառակ շարահյուսությունը, սակայն այստեղ կարեորդ բացառական հոլովի առկայությունն է: Օրինակ՝ Բագումմ ի լիճկաց և վնաս գործեն (ՂԶ, 214), Վեցն ի նոցունց չարսեն (Գր., 89), Ի հնկլէ մկկն զտնողինն է (ՍՄԴ, 20), Ոմն ի լիճկական վարդալուտացն և ասաց (ՄԶ, 39):

Մնացած խոսքի մասերը (մասնավորապես՝ թվական, ածական, դերբայներ) նույնպես կարող են ծառայել «ենթակա» շարահյուսական գործառույթի ձևաբանական արտահայտությանը միայն գոյականացման պայմանով:

Օրինակներ ածական ենթակայով՝ Ճերմակն էլ զարծեր դեղին (ԶԺ, 135), Լեղին խմելի թվի (նԲ, 252), Անմիտն էլ շարափառ (ՀԱԳ, 71), Անգետն էլ ի տիկ նման (ՄՆ, 267), Անբաղդն էլ զայ (ՀԱԳ, 5), Թուխն էլ շունէր (ՀՄԺԵ, 114), Ռազդաւորն էլ զայ (ՀԱԳ, 6), Հօսրէն և և խոնարհել (ՀԱԳ, 11), Աղկեկ մի և կուկանչէր (նԲ, 69):

¹⁵ Տառային ցուցիչները նշանակում են հետևյալ ձևաբանական կարգերը. Գ—գոյական, Ա—աձական, Բ—բովական, Դա—դերանուն, Դր—դերբայ, Մ—մակբայ, Բ—բայ, Տառի ներքեում. աջից նշվում են համապատասխան հոլովների կրճատ անվանումները. ախպես՝ Դսեռ-ար-գոյականի սեռական-տրական հոլով, Դաուղղ-դերանվան ուղղական հոլով և այլն: Բայի ղեպքում նշվում է նրա սեռը՝ Բնեղ-ներգործական սեռի բայ և այլն:

Այսինքն՝ ամսական Լեւրակաւ + ստորոգյալ:

Ընդհանրապէս բայական ձեւերը հիմնականում կատարում են ստորոգյալ անդամի շարահյուսական պաշտօն. սակայն անորոշ դերբայը միջին հայերենի (և ոչ միայն հայոց լեզվի այդ հատվածի) նախադասության շարահյուսական կառուցվածքի մեջ կատարում է բավական ծանրակշիռ դեր. այն կարող է մասնակցել բոլոր կարգի շարահյուսական հարաբերություններին (ուղիղ կամ հոլոված ձևով)՝ ենթակայական, խնդրային, որոշչային և պարագայական: Պատահական չէ, որ լեզվաբանական գրականության մեջ ընդունված է տարբերակել կախյալ և անկախ անորոշ դերբայներ (ինֆինիտիվներ): Անկախ է անորոշ դերբայը, երբ այն դառնում է նախադասություն, միակազմ նախադասության մեջ հանդես գալով որպէս դերագաս անդամ: Իսկ կախյալ անորոշ դերբայը հանդես է գալիս որպէս նախադասության ենթակա, ստորոգելիական վերագիր, երկրորդական անդամ: Միջին հայերենի նախադասության շարահյուսական կառուցվածքին բնորոշ են և՛ անկախ, և՛ կախյալ անորոշ դերբայները: Միջին հայերենում անորոշ, ենթակայական դերբայները կարող են կատարել ենթակայի գործառույթի:

Մեռնիլն + լաւ էր (ՄՆ. 257), Դաւիթ + շահ է (նՔ, 217), Ներալն + դիժար է (ՄՆ, 271), Սեւմանդղն + ժողովն (ՀԱԳ, 27), Դողալն + չլինի (ՄՀ, 133), Քրանցնելն + օգտէ (Ն. ա., 130), Սիրողն + տաի (ՀԱՅ, 93):

Այսինքն՝ դերբայ Լեւրակաւ + ստորոգյալ:

Օրինակներ բովական ենթակայով՝ Առաքինն + դառնայ յԵտին (Ֆր., 43), Մէկն + կնկանն է (ՂՀ, 196), Խրկուրդն + ցուցանէ (Գր., 189): Ի հնկն մկն + գտնողինն է (ՍՍԳ, 20):

Այսինքն՝ րվական Լեւրակաւ + ստորոգյալ:

Մյուս խոսքի մասերի ենթակայական գործածության օրինակներ միջին հայերեն մասնագրության մեջ դժվար է գտնել: Բայց հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններին հատուկ է բոլոր խոսքի մասերի դոյականացման երեւելիքը:

Այսպիսով, միջին հայերենի նախադասության ենթակայական զուգորդության մեջ ենթական առանց դոյականացման կարող է արտահայտվել դոյականի և դերանվան միջոցով. միայն այս խոսքի մասերն են իրենց բուն կարգային իմաստով զուգորդելի միջին հայերենի ստորոգյալի հետ:

Հայտնի է, որ գրաբարում ենթական, հիմնականում ուղղական հոլովով գործածվելով հանդերձ, շարահյուսական որոշակի միջավայրում հանդես է գալիս նաև սեռական, տրական, հայցական հոլովներով: Ներգործական բայերի անցյալ դերբայի և անցյալ դերբայով բաղադրյալ ձեւերի ենթական դրաբարում դրվում է սեռական հոլովով: Գրաբարն այս կանոնը ստեղծել է շփոթությունից խուսափելու համար. անցյալ դերբայը նույն ձևով կարող էր ունենալ թէ՛ կրավորականի և թէ՛ ներգործականի իմաստ: Եվ ի՞նչ ստորոգյալը գրված էր անցյալ դերբայով, նախադասությունը կարող էր թէ՛ կրավորական կառուցվածքի հասկացվել, թէ՛ ներգործական: Եվ ահա, լեզուն միջոց է գտել այս երկիմաստությունից խուսափելու համար:

Իսկ միջին հայերենում արդեն ամբողջապես փոխված էր հայոց լեզվի բայական համակարգը, միջին հայերենն ուներ կրավորականի իմաստն արտահայտելու իր առանձին ցուցիչը՝ վ ձևույթը. որով որոշակիորեն տարբերակվում էին անցյալ դերբայի ներգործական և կրավորական իմաստները: Ուստի, սեռական հոլովով ենթակայի պահանջը լեզվում վերացավ:

Սակայն լեզվի մեջ երկար ժամանակ համագոյակցում են և՛ հին, և՛ նոր լեզվական երևույթները, ձևերը, որոնք շատ ավելի կայուն են շարահյուսական մակարդակում։ Լեզվի հետագա զարգացումը ցույց է տալիս, թե զուգահեռ ձևերից որն է ավելի կենսունակ լեզվի զարգացման ավյալ շրջանի համար։ Երբ միջին հայերենի ենթակայի մասին խոսելիս ասվում է, որ ուղղական հոլովն է նրա արտահայտման հիմնական ձևաբանական միջոցը, չինչանակում, թե զրարարին հատուկ սեռականով, տրականով, հայցականով ենթակաները միանգամից վերացել էին։ Լեզվի ավյալ շրջանի երևույթները նկարագրելիս հաշվի են առնվում լեզվի զարգացման միտումները։ Կրավորական բայածանցի երևան գալով՝ վերացավ սեռականով ենթականի պահանջը, այս շարահյուսական օրենքը այլևս դադարեց գործել, սակայն զրարարյան սեռականով ենթակաները չվերացան. մարդիկ դեռ ձգտում էին գրել զրարար. դրա համար էլ միջին հայերենն ամբողջ մատենագրության մեջ շատ են սեռականով, տրականով ենթակաները։ Սակայն միջին հայերենին բնորոշը, կանոնականը սեռական-տրականով ենթակա չգործածելն է։

Այժմ քննենք միջին հայերենի ստորոգյալը։

Ենթակայական հարաբերության երկրորդ շարահյուսական նվազագույն միավորը ստորոգյալն է։ Խոսքի մասերից բայը միակն է, որ ունի ստորոգելու հատկություն։ Միջին հայերենում նույնպես, ինչպես և ժամանակակից հնդեվրոպական այլ լեզուներում և հայոց լեզվի զարգացման այլ շրջաններում ու հատվածներում, ստորոգյալը արտահայտվում է հիմնականում բայով։ Հայերենում ստորոգյալը ձևաբանական արտահայտման տեսակետից այն առանձնահատկությունն ունի, որ ստորոգյալի բոլոր արկերի մեջ էլ բայական տարրը անխուսափելի է։

Ս. Աբրահամյանը իր «Ժամանակակից հայերենի քերականություն» աշխատության մեջ ստորոգյալները խմբավորում է ըստ նրանց կարգային արտահայտության՝ բայական և անվանական։ «Բայական կոչվում է այն ստորոգյալը, որն ամբողջությամբ կազմված է բայից։ Անվանական (ոչ բայական) այն ստորոգյալն է, որի մեջ վերագրվող հատկանիշն արտահայտված է ոչ բայով, այլ ուրիշ խոսքի մասերով՝ մեծ մասամբ անուններով»¹⁶։

Ստորոգյալների այսպիսի խմբավորումը, թերևս, ավելի հստակ և հստակացնում է դարձնում նախադասության այդ շարահյուսական նվազագույն միավորի բնությունը։ Միջին հայերենի ստորոգյալը քննված է ըստ այս դասակարգման։

Ա. Բայական ստորոգյալ.— Հայոց լեզվի բայական ստորոգյալի պատմական փոփոխությունները քննականաբար կապված են բայական ձևերի հետադարձ զարգացման կամ կորստի հետ, քանի որ բայական պարզ ստորոգյալը արտահայտվում է բայի ուրեժ, եղանակով, ժամանակով, գրական կամ ժխտական ձևով։

Բայական ստորոգյալը կարող է լինել պարզ և բաղադրյալ։

1. Բայական պարզ ստորոգյալը արտահայտվում է բայի բոլոր հղանակներով և ժամանակներով։ Օրինակ՝ Գաղիանոս ասէ, քէ լինի ի շատ կերակրէ ուտելուն (ԱՌԲ, 376), Մաղկունքն որ ժողովեցան՝ այն քահանայքն հին օրինին (ԿԻ, 145)։ Խընդալուն ցընծալւ ի սիրտըն (ԽԿ, 145), ...Պնդութիւն մարմնոյն

¹⁶ Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 233.

վարեալ է զտաքութիւնն ի յանկիւնս մարմնոյն... (Գր., 13), Թէ եւթն զիս կըրակով, շարպաթ շինեն ի շուկանին (ԿԵ, 144), Թէ երիկամն վատուծութիւն տեսնուա՝ ի բառիկէն երակ առ... (ԱՅՐ, 376), Եւ տուր շարապի ուտուն (ԱՅՐ, 343), Կեցո զմեզօք մեղեալս եւ ասլեցո ի հուր դեհենէն (ԽԿ, 144), Վասն իմ բաղում մեղք ու շարին զօր ու դիշերըն կու հոգամ (Ֆր., 167), Գինի անուշահամ և անուշահոտ տուր, բայց սակաւ (ՄՀ, 19), Աններկի հուր վառեցի (Ֆր., 167), Զխորհուրդդ շասես կնոջ (ԽԿ, 150), Առ քեզ մի վակեր զաշերդ եւ դառնալ սրատես Օտարի (ԽԿ, 150):

Բայական պարզ ստորոգյալներ են նաև հարադիր բայերով արտահայտված ստորոգյալները, այսինքն՝ աշակիսի բայերով արտահայտված ստորոգյալները, որոնց բառական իմաստները կամ իրար մոտիկ են, կամ իրար լրացնում են: Սրանք ձևով անկախ են, բայց միասին գործածվելով, արտահայտում են մեկ ամբողջական իմաստ: Օրինակ՝ Հնձեց վերոյց զխտան ի զաշտէն (ՂՀ, 63), Խմեց հատույց զջուրն ի դետէն (ՂՀ, 63), Երբայր նստէր ինքըն լորիկ (ՂՀ, 62), Գնացին, բերին Գառն Արէգոյն (ՀՄԺԵ, 292):

Ինչպես օրինակների աղբյուրներից երևում է, միջին հայերենում այս աղբյի ստորոգյալը ավելի բնորոշ է ժողովրդական ոճին, Արդի գեղարվեստական գրականության լեզվին նույնպես հատուկ է այս ստորոգյալը:

2. Բայական բաղադրյալ ստորոգյալը կազմվում է բայի դիմավոր ձև + անորոշ դերբայ կաղապարով: Ավելի հաճախ բայական բաղադրյալ ստորոգյալը կազմվում է արդեն եղանակիչի արժեք ունեցող բայական դիմավոր ձևերի և անորոշ դերբայի համադրությամբ: Օրինակ՝ Իրավունք է. պարտ է. կամիմ. կարէ, հարկ է: Այսպես՝ Նշանք գողին, զոր կամինք ասել (Գր., 205), ...Ի յինքն հասնի կերակուրն, նայ չկար՝ շրջել զկերակուրն ի սերմն (Գր., 165), Կարեն այնել զիրենց ամէն ազգք իրք և զհայրենաստանն (ՂՀ, 196), Երբ իմացան, թէ հասանել կամի Տաթարն և զերկուսն ըմբռնել... (ՂՀ, 24), Ի՞նչ ցեղ կարացիր զառիժն սպանանել (Ն. տ., 283), Յայնժամ սկսան իշխանքըն անմխիթար և ծանր սղով ծնծել զիրեանց գլուխս... (Ն. տ., 287):

Բայական բաղադրյալ ստորոգյալի դիմավոր բայը երբեմն կարող է լինել լիիմաստ բայ, որը պահանջում է լրացուցիչ պարզաբանում, և այդ պարզաբանումն է, որ կատարվում է անորոշ դերբայի միջոցով. այսպես՝ Ապա հրամայեաց Հուլաւուն զօրացն ուխիւ տալ և այնպես սպանանել (ՂՀ, 24):

Բ. Անվանական ստորոգյալ.— Անվանական ստորոգյալը կազմված է հանգույցից, որը արտահայտում է բայական կարգերը (ժամանակ, դեմք և այլն), և անվանական մասից՝ ստորոգելիական վերադիրից, որը հանդիսանում է հատկանիշի իրային նշանակության, իմաստի արտահայտիչը: Հետևելով հայերեն ստորոգյալի երկու գործառույթները տարրաբաժանվում են անվանական ստորոգյալի երկու մասերի միջև: Այս կառավարվյալմբ պետք է նկատի առնել նաև բայական և անվանական ստորոգյալների իմաստային տարրերությունը: Եթե բայական ստորոգյալը, իր եղանակային և ժամանակային արտահայտությունից կախված, ցույց է տալիս ենթակային վերադրվող հատկանիշը իր պրոցեսի մեջ, ապա անվանական ստորոգյալի միջոցով արտահայտվում է քիչ թիվ շատ կայուն հատկանիշը այն դրություն, որում գտնվում է առարկան՝ ենթական: Այդ պատճառով էլ անվանական ստորոգյալի մեջ հատկանիշը անվանական մասով է արտահայտված, իսկ բայական կարգերը արտահայտվում են հանգույցի միջոցով: Միայն հետևանքով, անվանական ստոր-

րողյալի կազմի մեջ մտնող բայերը կամ իմաստադուրկ են, կամ էլ ունեն բառական շատ թույլ արտահայտված իմաստ:

Միջին հայերենում որպես հանգույց կարող են գործածվել եմ. լինիմ բայերը:

Եմ բայը, հանդես գալով իբրև անվանական ստորոգյալի հանգույց, ստորոգելիական վերագրի արտահայտած հատկանիշը վերագրում է ենթակային, նա կարող է արտահայտել միայն ներկա և անցյալ անկատար ժամանակների իմաստը: Եմ բայի գրաբարյան ապառնիի ձևերը միջին հայերենում արդեն վերացել էին: Իսկ լինիմ բայը այս նույն դերում հանդես է գալիս առավելապես լինի ձևով և ստորոգյալին հաղորդում է անորոշ ներկայի իմաստ: Եմ հանգույցով անվանական ստորոգյալների օրինակներ. Քաֆուր վարդի նման անուշահոտիկ ես (ՀԺ, 150), Իւր պատճառն զիւրիճն է (ՄՀ, 6), Դու փնջած մանուշակ. վարդ ու ծաղիկ ես (ՀԺ, 150), Գիշերն ես ի Բուն էի. իմ սրտիս ականջն էր ի բաց (ՆՔ, 92), Լինիմ հանգույցով անվանական ստորոգյալների օրինակներ. Եւ իւր գոզն նօսւր և սպիտակ լինի (ՄՀ, 127), Եւ լոյժն զերդ սարդի ռստայն լինի (Գր., 50), Ապա թէ հիւանդին դօրոթիւնն տկար լինի... (ՄՀ, 127), ...Զի ցաւեր կան, որ հակառակ են. որ լինի ի տաճուրենն և ի շորուրենն (ՂՀ, 389):

Անվանական ստորոգյալի բայական հանգույցի դեր կարող են կատարել նաև մի շարք ասացական բայերի կրավորականները: Օրինակ՝ Եւ մինն ի ցաւոցն այն է, որ անուանի սնրերի (Գր., 137), Այն, որ յիստակ տէտառաւ, օս կոչի... (ՄՀ, 107):

Միջին հայերենում անվանական ստորոգյալի ստորոգելիական վերագրի արտահայտվում է առավելապես գոյականով. ըստ հաճախականության սրան հետևում են ածականը, դերանունը, թվականը և գոյականի վերածված այլ խոսքի մասեր: Միջին հայերենում գոյական վերագրի կարող է դրվել ուղղական, սեռական-տրական (փոխանուն), քաջատական, գործիական, ներգոյական հոլովներով, զանազան կապական կապակցություններով: Հոլովված գոյական ստորոգելիական վերագրի ունեցող անվանական ստորոգյալները մի առանձին խումբ են կազմում: Ինք հոլովներով գոյականները, մտնելով անվանական ստորոգյալի կազմի մեջ, ունենում են տարբեր իմաստներ, որոնք ընդհանուր են այդ հոլովների՝ նախադասության մեջ կատարած գործառնություններից: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ թեև հոլովներով վերագրի ունեցող կառուցվածքները շարահյուսորեն ամբողջական, միասնական համարել չի կարելի:

1. Անվանական ստորոգյալը կարող է ունենալ Գուղղ + հանգույց կամ հանգույց + Գուղղ կաղապարը: Օրինակ՝ Աշխարհիս բաներն երազ է (ՀԱԳ, 67), Ով հնազանդէ պատուիրանի, Արքայութեան լինի ողղի (Ն. տ., 22), Ինքն է տէր բուրաստանիս (Ն. տ., 27), Դու աստուած ես զթաժ և խիստ ողորմած (Ն. տ., 23), Այդ ինչ աներկիւղ մաւղիկ եմ (ՂՀ, 282), Ապա թէ ջերմունն պատճառն այն պալղամն լինի. որ թթու է (ՄՀ, 86):

2. Գսեռ-տր — հանգույց կաղապարով անվանական ստորոգյալի մեջ սեռականը միշտ փոխանուն է: Օրինակ՝ Ի նեկէն մէկն զամեղիքն է (ՍՄԿ, 20), Մէկն կեկանն է (ՂՀ, 196), Բայց թէ շաստուածոյ ևս դու (ԽԿ, 176):

3. Անվանական ստորոգյալը կարող է ունենալ նաև Գրաղ + հանգույց կամ հանգույց + Գրաղ կառուցվածքը: Օրինակ՝ Թէ այս նշաննիս, դու յիշեցար, ի չբէ լինի. նայ հանապաղ երենայ (Գր., 84), Եւ այն մաղձն, որ պայս նեղս բերէ, նայ լինի ի հաստ պալղամն (Ն. տ., 61), Եթէ յայն պատճառոցն լինի, որ ի բնութենն է. նայ սա է (Ն. տ., 23). Իս այն հավերուն էի. որ զետինն կուտ շու-

տելի (նՔ, 58), էհաննան ասէ, թէ որ ստամոքին տաքութիւնն ի սափրայէ լինի. նա վերաբերութիւն տուր անել (ՂԶ, 354):

4. Գործը + հանգույց կառուցվածքով անվանական ստորոգյալի օրինակ. Իսկ թութմայն ի յայնժամն լինի, երբ այտ պատճառնիտ ուժով լինի (Գր., 133):

5. Անվանական ստորոգյալի ստորոգելիական վերադիրը արտահայտվում է նաև զանազան կապական կապակցութիւններով՝ (Գ + կապ) + հանգույց. այսպէս՝ Իսկ մէկայլն առանց տախտիւնան լինի (ՄԶ, 35), Շատ շարաւ երթայ մարդոյն... ի տաքութենէ, որ լինի ի հետ ջերման (Գր., 121):

6. Միջին հայերենի անվանական ստորոգյալը կարող է արտահայտվել նաև ածական + հանգույց կառուցվածքով, որտեղ ածականը որպէս ստորոգելիական վերադիր հանդես է գալիս առանց որևէ ձևական փոփոխության. Այն ցույց է տալիս ենթակայի ինչպիսին լինելը, ինչից լինելը և այլն: Օրինակ՝ Եւ իւր նշանն այն է, որ... ընդ յառաջքն ղեղին լինի լեզուն (ՄԶ, 103), Ապա թէ քերմն հին լինի և իւր դողալն և ցրտանալն պակաս լինի (ՄԶ, 133), Դու մատեամբ ի հետ չափնիս, Բայց թէ խարող ես ւ՛ աճառակ (ԶԹ, 193, Դու խօստիկ ես (ն. տ., 150):

7. Անվանական ստորոգյալի ստորոգելիական վերադիրը կարող է նաև զերանուն լինել. Այս դերում հանդես են գալիս մեծ մասամբ անձնական և ցուցական զերանունները (Դա + հանգույց) և Օրինակ՝ Եւ իւր նշանն այն է (Գր., 155) և այլն:

8. Միջին հայերենում անվանական ստորոգյալը կարող է ունենալ թվական + հանգույց կառուցվածք. Օրինակ՝ Աչիցն կոպացն տափակ ջիւն... երեւ են (Գր., 90), Իսկ այն իրուին՝ որ շեն բնութեամբ, վեց են (ՄԶ, 93):

9. Որպէս ստորոգելիական վերադիր կարող են հանդես գալ ենթակայական, անորոշ զերբայները (Դր + հանգույց). այսպէս՝ Նշանն փորճնտալն է և շատ արտասուելն (Գր., 91), Ինքն ճոխաղնաց, մանրափայլող է, Հոգի ի մարմնէ փակող է (ԶԹ, 148):

10. Մակբայները նույնպէս կարող են հանդես գալ ստորոգելիական վերադրի պաշտոնով (Մ + հանգույց): Օրինակ՝ Եւ թէ այն պարուտակն այլ ի վերայ լինի. նայ սակաւ ցաւ է (Գր., 163), Նայ կէս կոպացն ի վայր լինի և կէսն ի վեր (ն. տ., 90), Հուննայն ասէ, որ թէ ծարաւն խիստ լինի... պատեհ է, որ սառին քուր տաւ (ՄԶ, 105):

Միջին հայերենի ստորոգյալի կարգային արտահայտությունը կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայի միջոցով:

Աղյուսակ 1

Ստորոգյալ		
Բայական		անվանական
պարզ	Բաղադրյալ	
Ստեմ. եզ.	Բ + անորոշ զերբ.	Գր. + հանգույց
Ըզմ. եզ.		Գր. + հանգույց
Հարկ. եզ.		Գր. + հանգույց
Պայմ. եզ.		Գր. + հանգույց
Հրամ. եզ.		(Գ + կապ) + հանգույց
		Ա + հանգույց
		Դա + հանգույց
		Դր + հանգույց
		Թ + հանգույց
		Մ + հանգույց

Որոշչալին հարաբերությունները բովանդակության պլանում միջին հայե-
րենում գրանցվում են երեք զույգ անդամների փոխհարաբերությամբ՝ ա) ո-
րոշիչ-որոշյալ, բ) հատկացուցիչ-հատկացյալ, գ) բացահայտիչ-բացա-
հայտյալ, որոնց տարբերակումը արտահայտության պլանում երբեմն այնքան
էլ որոշակի չէ: Սրանք իրարից տարբերվում են բառ իրենց արտահայտած քե-
րականական իմաստների, որոնք թեև ձևավորվում են ձևական ցուցիչներով,
սակայն այդ ցուցիչները երբեմն համասնուն են: Այս առումնան հատկությունը
վերաբերում է հատկապես որոշիչ-որոշյալ և հատկացուցիչ-հատկացյալ զույ-
գերին, որոնց ձևաբանական փոփոխակները մեկ ղեկքում համընկնում են
(սեռական չոլովով որոշիչ և սեռական չոլովով հատկացուցիչ):

Որոշիչ-որոշյալ շարահյուսական հարաբերության անդամներից մեկը
կատարում է որոշիչի գործառույթ, իսկ մյուսը՝ որոշյալի: Գրաբարում որո-
շիչ-որոշյալ զույգի կապը իրականանում է համաձայնության միջոցով, որը
կախված է շարահյուսությունից: Նախադաս որոշիչները սովորաբար թվով և
չոլովով չեն համաձայնում իրենց որոշյալի հետ, իսկ եթե միավանկ բառով են
արտահայտված, մեծ մասամբ համաձայնում են: Իսկ երբ որոշիչը նախադաս
է, համաձայնում է իր որոշյալի հետ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ
այս կանոնները անխախտ չեն: Նախադաս քանակական թվականներն ու ստա-
ցական գերանունները չոլովակի ուղղական և հայցական չոլովով զուգված որո-
շիչների հետ անհամաձայն են մնում: Այս նշված կանոնները նորմա էին
գրաբարի որոշիչ-որոշյալ զույգի համաձայնության համար: Սակայն ղեկ V
դարում էլ առկա էին խախտումներ, շեղումներ հիմնական կանոններից: Ինար-
կե, ոչ որպես համակարգչային երևույթներ: Աստիճանաբար, հետագա դարե-
րում, ավելի հաճախակի էին դառնում որոշիչի անհամաձայնության ղեկաբե-
րը, և միջին դարական հայերենում արդեն փոխվում է գրաբարի շարահյուսու-
թյան հիմնական կանոններից մեկը՝ որոշիչի և որոշյալի անհամաձայնության
նորման: Միջին դարական հայերենի համար կանոնականը դարձավ որոշիչի և
որոշյալի անհամաձայնությունը: Իհարկե, այս փաստը ուներ իր պատճառնե-
րը, որոնցից հիմնականը որոշիչի նախադաս կիրառությունը ստանալն էր:
Պատճառներից մեկն էլ խոսակցական լեզվի ազդեցությունն էր: Բնականա-
բար խոսակցական լեզվում շատ ավելի հաճախակի էին անհամաձայնության
ղեկերը, քան գրական լեզվում, որովհետև գրական լեզուն ավելի պահպա-
նողական է նորմաների հարցում: Իսկ միջին դարական հայերենի և խոսակցա-
կան լեզվի կապը շատ սերտ էր: Այնպես որ, միջին դարական հայերենը խո-
սակցական լեզվի այդ երևույթը բնականոն կերպով նորմա դարձրեց:

1. Միջին հայերենում որոշիչը ամենից ավելի հաճախ արտահայտվում է
ածականով, որովհետև ածականի խոսքի մասային իմաստը ամենից ավելի
մոտ է որոշիչ անդամի քերականական իմաստին: Ածականի երկու տեսակ-
ներն էլ, թե՛ հարաբերական և թե՛ որակական, կարող են դառնալ որոշիչ: Բնա-
կանաբար, կախված ածականի տեսակից, որոշիչները կարող են իմաստա-
յին նրբերանգներ ունենալ: Այսպես՝ որակական ածականով արտահայտված
որոշիչը ցույց է տալիս որոշյալի որակական հատկանիշները (սև Յովհաննէս,

17 Պ. Կարաբխանյան, Գրաբարի ուղեցույց, Երևան, 1967, էջ 73.

պիղծ բաներ, գեղեցիկ մորճիկ), Հորաբերական անձականներով արտահայտված որոշիչները ցույց են տալիս որոշյալի ծագումը, պատկանելությունը (աւծաքն գուրաւ մաւգրաւ ծածկոց, երկնաւոր Աստուած):

2. Միջին հայերենի համար շատ բնորոշ է նաև գոյականով (հասարակ և հատուկ) արտահայտված որոշիչը: Իբրև որոշիչ հանդես եկող գոյականի մեջ ընդգծվում է ցայտուն-բնորոշ մի հատկանիշ, որը որոշում է, բնութագրում որոշյալին: Որոշիչ են դառնում գոյականները ոչ միայն ուղղական, այլև սեռական-տրական, բացառական, գործիական հոլովներով: Այս երևույթը հատուկ էր նաև զրաբարին. հմմտ. պարզևատու բաբևաց (սեռ.), ի մոաց թեթև (բաց.), մոտ՝ տղայք (գործ.):¹⁸ Արդի հայերենին նույնպես շատ բնորոշ են գոյականի ուղղական¹⁹, սեռական, բացառական և գործիական հոլովներով արտահայտված որոշիչները. հմմտ. բաբ սիրտ (ուղղ.), սաբի ծաղիկ (սեռ.), երկաթից ձող (բաց.), վեաաւորով գլխարկ (գործ.):

Այժմ բերենք գոյական որոշիչով օրինակներ միջին հայերենից:

Ուղղական հոլովով՝ ծագ ծիծեռնիկ (ՆՔ. 101), լույս երևաաց (ՀԲ. 134), Մէրտին քաղաք (ՀԱԳ. 70), փուշ արմաքք (ՆՔ. 63), Խոթան քաղաք (ՀԲ. 134):

Սեռական-տրական հոլովով՝ ուրախութեան պեղ (ՀԲ. 135), անմահութեան զրախտ (ՀԲ. 120), ձերոց հիւանդութիւն (ՄՀ. 40), արեան ծով (ՆՔ. 203):

Բացառական հոլովով՝ ի բրդէն չուխայ (ՄՀ. 98—99), ի բանջարէն կերակուր (ՄՀ. 147):

Գործիական հոլովով՝ ամօթով մարդն (ՀԲ. 138), ուժով մարդկաց (ՄՀ. 136), հուրմով փատիշաճ (ԿՆ. 168):

3. Միջին հայերենում որոշիչը կարող է արտահայտվել նաև թվականի տարբեր տեսակներով: Որպես որոշիչ հանդես եկող թվականները միջին հայերենում հոգ չեն ընդունում, հանդես են գալիս միշտ եղակի թվով և առանց հոլովակելու: Օրինակ՝ երրորդ հալեմաշն (ՄՀ. 47), վաթսուն հաղար մարդ (ՀԲ. 200), երեք պատճառ (ԱԱԱ. 25), առաջին բաժին (ՄՀ. 134):

4. Միջին հայերենի ղերանունների մեծ մասը կարող է որոշիչի գործառույթ կատարել: Որպես որոշիչ կարող են հանդես գալ ցուցական, անորոշ, որոշյալ, հարցական-հարաբերական ղերանունների մեծ մասը: Օրինակ՝ այս կեսանքս (Ֆր., 7), հանց կսկիծ (ՀԱԳ. 68), ամենայն հիւանդութիւն (ՂՀ. 454), այդ անուամբ (ՄՀ. 129), հանցեղ նևաով (ՀԲ. 159):

Անձնական ղերանունների իմաստի մեջ խիստ ցցուն է անվան իմաստը. որպիսի հանգամանքը թույլ չի տալիս, որ զրանք հանդես գան որպես որոշյալին հարաբերության որոշիչ եզր: Միջին հայերենում որպես որոշիչ հանդես չեն գալիս նաև ցուցական ղերանունների մի մասը (հատկապես տեղ ցույց տվող, որոնցում ուժեղ է անվանական իմաստը). որոշ հարցական-հարաբերական, ժխտական, անորոշ, որոշյալ ղերանուններ:

5. Միջին հայերենում որոշիչ կարող էն դառնալ բայի ղերարայական որոշ

¹⁸ Օրինակները վ. Չալքիյանի դրքից են վերցված (վ. Չալքիյան, Փերականութիւն Հայկազնեան լեզուի, Վիեննա, 1885):

¹⁹ Վ. Առաքիյանը բառի ուղիղ ձևով արտահայտված որոշիչը ուղղական հոլովի համարում. նա գրում է. «Միակ որինաչափական որոշիչը բառի ուղիղ ձևն է. ուղղական չենք տեսում, որովհետև որոշիչը կորցրել է իր հոլովական հատկանիշը» (Հայերենի շարահյուսություն, հ. 1, էջ 239):

ձևեր, որոնք իրենց իմաստի մեջ ունեն հատկանիշի երանգ: Որպես որոշիչ կարող են դործածվել հարակատար, ապառնի և Լնթակայական զերբայնքու Օրինակ՝ աղնձած նշով (ՂԷ, 80), լվացած դարի (ՄԷ, 41), փնջած մանուշակ (ՀԹ, 150), ծարած լերդիս (ՀԹ, 146), հայող զեղերուն (ՂԷ, 390), այրեցող ջերմն (ՄԷ, 36), կապելու խե (ԽԷ, 124):

Միջին հայերենի որոշիչի կարգային արտահայտությունը կարելի է արտահայտել հետևյալ աղյուսակով:

Աղյուսակ 3

Շարահյուսական անփոփոխակ	Ձևաբանական կարգեր				
	դոյական	ածական	թվական	դերանուն	զերբայ
Որոշիչ	1. Ուղղ. հայ	1. Որակական	1. Գնական	1. Բուցական	1. Հարակատար
	2. Սեռ. տր.	2. Հարաբերական	2. Դասական	2. Հարաբերական	2. Խնթական
	3. Բաց. հայ.			3. Անորոշ	3. Ապառնի
	4. Գործ. հայ.			4. Որոշյալ	
				5. Ժխտական	

Միջին հայերենի որոշիչների կարգային արտահայտությունը պարզելուց հետո անցնենք որոշչային շարահյուսական հարաբերության կառուցվածքի քննությանը:

Միջին հայերենում գերակշռող մեծամասնություն են կազմում Լրկանդամ որոշչային զուգորդությունները, այսինքն՝ տվյալ որոշչային հարաբերությունը՝ ունի մեկ որոշիչ—մեկ որոշյալ տեսքը: Օրինակ՝

նենդաւոր հաւ (նԹ, 219) Ա + Գ
աղւոր պատկեր (ՀԱԳ, 68)

շուշան ծաղիկ (ՀԹ, 147)
ծերոց հիւանդութիւն (ՄԷ, 40) Գ + Գ
ամօթով մարդ (ՀԹ, 138)
ի բրդէն շուխայ (ՄԷ, 983)

երկու տեղ (ՄԷ, 131) Թ + Գ
առաջին բաժին (ՄԷ, 134)

ինչ կրակ (ՀԵ, 163) Դա + Գ
ամենայն հիւանդութիւն (ՂԷ, 454,

քակած չրվան (ՄՆ, 257) Դր + Գ
այրեցող ջերմն (ՄԷ, 36)

Միջին հայերենին հատուկ է նաև քաղմանդամ որոշչային զուգորդությունը: Բազմանդամ որոշչային զուգորդությունները Լրեք կարգի են. 1) համադաս որոշիչներով զուգորդություններ, 2) ստորադաս որոշիչներով զուգորդություններ և 3) խառն քնույթի որոշչային զուգորդություններ:

1. Համադաս որոշիչներով որոշչային զուգորդությունը կառուցվածքային

տեսակետից ավելի պարզ է, քանի որ նրա որոշիչ անդամները կառուցվածքային նույն մակարդակի վրա են դառնում: Օրինակ՝

զպարկեշտացնող և զկտրող դեղերն (ՂՀ, 83)	ԴբԴբ + Գ
հալած ու թափած ոսկի (ՀԽ, 151)	ԴբԴբ + Գ
շոր և պինդ անդամունք (ՂՀ, 76)	ԱԱ + Գ
անդետ և անմիտ մարդ (ՄՆ, 262)	ԱԱ + Գ
սուր և ալրեցող ջերմն (ՄՀ, 105)	ԱԴբ + Գ

Ինչպես տեսնում ենք, որոշչային ալյապիսի գույգորդությունը առաջանում է ածականով և դերբայով արտահայտված որոշիչների գուգահեռ կցման միջոցով. զպարկեշտացնող||զկտրող, հալած||թափած, սուր||ալրեցող:

2. Ատորաղաս որոշիչներով որոշչային գույգորդությունը առաջանում է որոշիչների հաջորդական կցման ճանապարհով, որոնք միմյանց հետ շարահյուսական ստորադաս կապի մեջ են: Այդ է պատճառը, որ ստորաղաս որոշիչներով բազմանդամ շարահյուսական գույգորդությունների մեջ զրևթե միշտ առկա է սեռական-տրական, գործիական կամ բացառական հոլովով դոյական: Օրինակ՝

սիսոամ եփած հավ (ՄՀ, 127)	Գգործ Դբ + Գ
սրբո տեր մանուկ (ՆՔ, 52)	Գսեռ-տր Գուղղ + Գ
հնդկաստան ամաց տղայ (ՀԱԳ, 33)	ԹԳսեռ-տր + Գ
ազոխի ջրով մուգաւարայ (ՄՀ, 106)	Գսեռ-տր Գգործ + Գ
զեղեցիկ կերպի սուրաթ (ՀԹ, 159)	ԱԳգործ + Գ

3. Իբիցին հայերենի որոշչային գույգորդությունները կարող են նաև խառն կառուցվածքի լինել, այսինքն՝ որոշչային հարաբերության մեջ և՛ համադաս, և՛ ստորաղաս որոշիչներ կարող են լինել: Օրինակ՝

խակ ձիթալողի անաղ ձէթ (ՄՀ, 67)	ԱԳսեռ-տր Ա + Գ
թթու և քաղցր նուան ջուր (ՄՀ, 106)	ԱԱԳսեռ-տր + Գ

Ինչպես երևում է միջին հայերենի թե՛ երկանդամ և թե՛ բազմանդամ որոշչային գույգորդությունների քննությունից, որոշիչների կարգային արտահայտությունը բոլոր դեպքերում նույնն է. դրանք կարող են արտահայտվել գոյականի ուղղական, սեռական-տրական, գործիական հոլովներով, որական և հարաբերական ածականներով, քանական, դասական թվականներով, որոշ դերանուններով և հարակատար, ենթակայական ու ասպոնի դերբայներով: Այս ձևարանական կարգերից և դրանց զանազան գույգորդությունից կազմվում են բազմանդամ շարահյուսական հարաբերությունները: Այդ հարաբերությունների որոշչային խմբի կազմը կախված է դրա մեջ մտնող ձևարանական կարգերի գույգորդելիության հատկանիշներից: Օրինակ՝ գոյականի սեռական հոլովը կարող է հարաբերության մեջ մտնել գոյականի հոլովման հարացույցի մնացած անդամների հետ և միասին դառնալ որոշիչ՝ որոշչայի համար:

Իբիցին հայերենի որոշչային հարաբերության հնարավոր կարգային գույգորդությունները ներկայացվում են հետևյալ աղյուսակով:

ՈՐՈՇՆԱԳԻՆ ԳՆԱԳՈՐԳՈՒԹՅՈՒՆ

Երկանդամ	Բաղմանդամ		
	Համադաս.	Ստորադաս.	Խառն
Ա + Գ	ԴԴԴ + Դ	Դ ԳՈՐԺ ԴԴ + Դ	ԱԴ սեռ-ար Ա + Դ
Դ ուղղ + Դ	ԱԱ + Դ	Դ սեռ-ար Դ ուղղ + Դ	ԱԱԴ սեռ-ար + Դ
Դ սեռ-ար + Դ	ԱԴԴ + Դ	Դ սեռ-ար Դ ԳՈՐԺ + Դ	
Դ ԳՈՐԺ + Դ		ԴԴ սեռ-ար + Դ	
Դ բաց + Դ		ԱԴ ԳՈՐԺ + Դ	
Դ + Դ			
Դա + Դ			
ԴԲ + Դ			

Միջին հայերենում որոշիչը և որոշյալը չեն համաձայնում թվով, դեմքով, հոլովով: Սակայն երբեմն որոշիչը իր կարգային արժույթայնությամբ ազդում է տվյալ հարաբերության վրա և թելադրում է որոշյալի թիվը: Նկատվում են հետևյալ դեպքերը.

1. Կան ածականներ, որոնց արտահայտած իմաստը պահանջում է հոգնակի որոշյալ: Այդպիսի ածականներից են՝ շատ, բազմազան, տարբեր: Այս երևույթը առավելապես նկատելի է կրկնավոր ածականների որոշյալին կիրառության դեպքում (գույն-գույն, ազգի-ազգի, և այլն): Օրինակ՝ Շատ հոգա ու ծառայի՝ և գորք կան ի ձեր առջև կանգնել (ՆՔ, 301), Եւ թէ երեսն խաղալ շատ ժմեր, նայ գուշակէ: որ բերանն ծոխլ կամի (Դր., 186):

Երկան-երկան տերեւ կու լինին (ԱԱ, 97):

2. Շատ անմիօրինակ է քանակական թվական որոշիչի և որոշյալի համաձայնությունը:

Մեկ (մի) թվականը քնականաբար պահանջում է եզակի որոշյալ այնպես, ինչպես դրաբարում (օր.՝ մէկ մարդ, գրք, այլ մի):

Երկու, երեք, չորս բացարձակ թվականները դրաբարում պահանջում են հոգնակի որոշյալ (Երկու սուրբ, երեք վկայ, չորս կողմանի): Իսկ միջին հայերենում այս կանոնը անխախտ չէ. այս թվականներով արտահայտված որոշիչները երբեմն եզակի և երբեմն հոգնակի որոշյալ են ունենում: Օրինակ՝ Եւ իր ուժն երեւ տարի է (ԱԱԱ, 29), Օրինակ է սլուտուն չոր և պինդ անդամոցն, իսկ ջուրն դիճովնանցն, որք են չորս նիւթ (ՂԶ, 76):

Գրական մշակման քիչ թե շատ կանոնավոր հունի մեջ չգրված միջին հայերենի համար թվական որոշիչի և նրա որոշյալի թվային համաձայնության այսպիսի անորոշ վիճակը բոլորովին էլ զարմանալի չէ, եթե նկատենք, որ այս նույն շարահյուսական երևույթը նույնիսկ ժամանակակից դրական հայերենում հաստատուն կանոնների չի ենթարկվում: Ահա թե ինչ է գրում այս մասին Վ. Առաքելյանը. «Հայերենում առավել հեղհեղուկ է քանակական թվական որոշիչի և որոշյալի համաձայնությունը. Օրինակ՝ քանակականներից միայն մեկ թվականի որոշյալն է հաստատուն. մնացած բոլոր քանակականները կարող են և՛ եզակի, և՛ հոգնակի որոշյալ ունենալ. այս դեպքում դարձյալ վճռական դեր են խաղում որոշյալի բնույթը և խոսողի բարոնումը տվյալ որոշյալի նկատմամբ»²⁰:

²⁰ Վ. Առաքելյան, Նշվ. աշխ. էջ 244:

Միջին հայերենի շարահյուսական հարաբերությունները և հետևապես շարահյուսական նվազագույն միավորներն ուսումնասիրելիս աչքի է զարնում մի շատ կարևոր հանգամանք. հին գրական լեզվին՝ զրաբարին հատուկ նորմայի կոդքին գործում է նորը՝ միջինհայերենյանը, որի հետևանքով միևնույն շարահյուսական միավորը հանդես է գալիս զուգահեռ ձևերով:

Որոշչային հարաբերություններում շարահյուսական զուգահեռ շարքերը հանդես են գալիս համաձայնության և շարադասության մեջ երկշարք հակադրությամբ՝ զրաբար—միջին հայերեն:

Նախադաս բազմավանկ որոշիչները զրաբարում մեծ մասամբ շեն համաձայնում իրենց որոշյալների հետ. միավանկ որոշիչները համաձայնում են: Միջին գրական հայերենում աստիճանաբար որոշիչները սկսեցին ամբողջով իրենց նախադաս գիրքը. շհամաձայնելով որոշյալների հետ: Այս երևույթը համարանության օրենքով սկսեց իրեն ենթարկել նաև նախադաս միավանկ որոշիչներին, որոնք սկսեցին շհամաձայնել իրենց որոշյալներին: Սակայն զրաբարի նորման երկար ժամանակ զուգահեռ գործում էր միջին հայերեն նորմայի հետ: Դրա համար միջին հայերեն մատենագրության մեջ կան հետևյալ շարահյուսական զուգահեռները²¹:

- I 1. Նախադաս միավանկ համաձայնված որոշիչ (զրաբարի նորմա).
2. Նախադաս միավանկ շհամաձայնված որոշիչ (միջին հայերենի նորմա).

- II 1. Ետադաս բազմավանկ համաձայնված որոշիչ (զրաբարի նորմա).
2. Նախադաս բազմավանկ շհամաձայնված որոշիչ (միջին հայերենի նորմա).

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս միջին հայերենում որոշիչի շարահյուսական զուգահեռների հաճախականությունը²²:

Որոշչային հարաբերությունների մեջ մտնող մյուս վույզը հայերենում հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական երկանդամն է: Այս երկանդամը որոշակիորեն տարբերվում է որոշիչ-որոշյալ վույզից բովանդակության պլա-

21 Շարահյուսական զուգահեռները չպետք է շփոթել շարահյուսական համանիշների հետ: Շարահյուսական համանիշների կառուցվածքա-իմաստային մերձավորությունը չի հասնում այն աստիճանին, որ հնարավոր լիներ դրանք փոխարինել միմյանցով: Կառուց իմաստային կամ ռեական երանգային փոփոխություն: Մինչդեռ շարահյուսական զուգահեռները փոխարինելի են միմյանցով: Որևէ լեզվի մեջ զուգահեռների գոյությունը հետևանք է լեզվի անընդհատ զարգացման, փոփոխման ու կատարելագործման. նոր լեզվական իրողությունների և հին երևույթների համագոյակցության: Դրական լեզվում նույնիմաստ ձևերի միաժամանակյա գոյությունը կարող է երկու աղբյուր ունենալ. 1) տվյալ լեզվի կառուցվածքային հնարավորությունների զուգահեռականությունը և 2) լեզվի կառուցվածքի իրացման (ռեալիզացիայի) ձևերի, այսինքն՝ լեզվական երևույթների արտահայտման ձևերի մեջ տեղի ունեցող պատմական տեղաշարժեր: Մեր կարծիքով, առային աղբյուրը հնարավորություն է տալիս լեզվի մեջ շարահյուսական համանիշների, իսկ երկրորդը՝ շարահյուսական զուգահեռների գոյություն: Միջին գրական հայերենին շատ բնորոշ են շարահյուսական զուգահեռները, նկատենք, որ շարահյուսական զուգահեռները հետևանք են լեզվի ձևաբանական մակարդակում կատարված փոփոխությունների: Շարահյուսական զուգահեռների գոյությունը, և մասնավորապես, առատությունը միջին հայերենում լեզվական նորմաների անմշակ լինելու ապացույց է: Այնինչ, ամեն գրական լեզվի նորմայի համար համեմատաբար բնդհանուր և կարևոր հատկանիշներ են հարաբերական կայունությունը և ընտրողականությունը, որը պայմանավորվում է հասարակության գիտակցական ներգործմամբ լեզվական նորմայի վրա:

22 Հաշվումները կատարված են 100 որոշյալին հարաբերություն ընտրանքի սահմաններում:

Աղբյուրներ	1-1	1-2	11-1	11-2
Մ. Հերացի	4	96	0	100
Գրիգորիս	0	100	0	100
Սմբատ Սպար	0	100	0	100
Ա. Ամասիացի	0	100	0	100
Ռամկ. Եկեղ. ²³	57	13	5	95
Վիմ. արձ.	50	50	33	67

նում: Եթե որոշիչը այն անդամն է, որ դրվելով որևէ գոյականի կամ գոյականացած անդամի վրա «արտահայտում է նրա որակական, քանակական, հարաբերական և նման կարգի հատկանիշներն ու յուրահատկությունները»²⁴, ապա հատկացուցիչ անդամը ցույց է տալիս գլխավորաբար ստացական հարաբերություններ:

Միջին հայերենում, ինչպես զրարարում և արդի հայերենում, հատկացուցիչ-հատկացյալ գոյգի կապը արտահայտությունն պլանում իրականանում է սեռական-տրականի հոլովական վերջավորությամբ: Ուրեմն, միջին հայերենում հատկացուցչի ձևական ցուցիչը համընկնում է հոլովման հարացուցչի սեռական-տրականի ցուցիչներին: Հետևապես, որպես հատկացուցիչ կարող են հանդես գալ գոյականները, որոշ դեբանուններ և գոյականաբար դործածված խոսքի մասերը:

Ինչպե՞ս հատկացուցիչով օրինակներ՝ մարդու շառն (նՔ, 272), ջերմերոյս նիթն (ՄՀ, 130), Աքուլաց հաքիմն (ՋԱՌ, 149), խնձորի տալիկ (նՔ, 95), խոպանաց փուշ (ՀԱԳ, 27), Գաբրիելի փողն (ն. տ., 22):

Իհրանուն հատկացուցիչով օրինակներ՝ ձեր տունն (նՔ, 101), իրեանց մեղուքն (ՂՀ, 100), իր նոպայն (ՄՀ, 131), քո յարն (նՔ, 209), իմ աշերս (ՀԹ, 149):

Միջին հայերենում նույնպես հատկացուցիչը ցույց է տալիս վերաբերական հարաբերություններ: Այն կարող է դրսևորել իմաստային ալլելալ նրբերանդներ, որոնք հաճախ հանդես են գալիս միասնաբար, և դժվար է այդ իմաստներից որևէ մեկին գերապատվություն տալ: Հատկացուցիչը կարող է արտահայտել պատկանելության իմաստ, որի հետ հաճախ հանդես է գալիս ստացականության նաշնակությունը, մասի և ամբողջի, ծագման, սերման հարաբերությունը: Տվյալ կոնտեքստում արտահայտած հիմնական իմաստը հաշվի առնելով, միջին հայերենում կարելի է նշել հատկացուցչի հետևյալ իմաստային տեսակները.

1. Առարկայի ինչից պատրաստած յինելը ցույց տվող հատկացուցիչ, որ կոչվում է նաև նյութի հատկացուցիչ: Այս կարգի հատկացուցչային հարաբերությունը շատ է տարածված բժշկագիտական գրականության մեջ: Որինակ՝ Առ չոր մանիշակ և տատաշ և բարինիճ և սուղտ և կարմիր շաքար և մանիշակ ձևք (ՄՀ, 67), Առ բրնձի ալուր. կոբեկի ալուր և սակաւ մի գաֆրան (ն. տ., 77), Զայս ամէնս ողա և մաղէ և խաշիւաշի ձիւրով շողվէ (ն. տ.,

²³ Աղբյուրների այս խումբը Ղ. Հովնանյանի «Հետազոտությունը նախնադասական հայերենի միավորված է Ռամկագիր Եկեղեցականք» ընդհանուր խորագրի տակ:

²⁴ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 222:

74), Աս ձկան սոսիճն տասն զրամ (ՂԶ, 413), Թէ ուզես որ մէն խմես՝ նշի ձէր խառնէ և խմի (ն. տ., 341), Եվ կերակուր սիսոան ջուր տուր (ՄԶ, 89):

2. Պատկանելության կամ ուտացական իմաստ արտահայտող հատկացուցիչ, որ ցույց է տալիս այն առարկան, անձը, որը ունի մի բան, որին պատկանում է մի բան, որը տեղ է մի բանի: Օրինակ՝ Եւ զՄտիննն ռիւանդին և սլոհրան ճիւանդին (ԱՕԲ, 77), Կարգալ տուր և զինչ Դո սւտիդ պիտի աւելի՝ զայն այլ զրել տուր (ՂԶ, 238), Սուտ բժիշկն այն ասաց զեղ ցաին՝ զշէկ տղայի փորն կենդանուն ճեղքել (ն. տ., 243), Ոմն ֆոանգի վանք կասին, ոմն քաղաութի ամաւար կասին (ԶԱՕ, 25), Զիշուն սկանջսն կարեն և զսիւտն հանեն (ն. տ., 290):

3. Ամբողջի և մասի հարաբերությունն արտահայտող հատկացուցիչ, երբ հատկացուցիչը ցույց է տալիս մասնական հարաբերություն, ամբողջը, որից առնվում է մի մաս: Օրինակ՝ Եւ կէս մարդաց շատ Էլնէ (Գր., 159):

Հատկացուցչի արտահայտած այս իմաստային երանդեհրը համեմատաբար սահմանափակ են դերանուն հատկացուցիչների մեջ: Որպես հատկացուցիչ հանդես են գալիս բոլոր հոլովովող դերանունները և արտահայտում են զլիսավորաբար ստացական հարաբերություններ: Օրինակ՝ Են որ ի խելք ևն ու իրենց կամաւ կու մեռնին (ՂԶ, 210), Եւ ևն որ ի յիրենց խելացն ի դուրք ևն վասն ցաւոցն, նա զայնոց կարգն պատեհ է որ կատարեն (ն. տ., 210), Այն մարդն, որ յիւ զործոյն պատեհն մեռնի՝ նա անպարտ են տէրքն (ն. տ., 211), Եւ թէ ի կարծիք լինի՝ նա տուժանքն այնոր ապաշխարութեամբ լինի զինչ ևպիսկոպոսն ղնէ (ն. տ., 212): Բերին առ մեզ զայն համանքն՝ որ մեւ ի Քրիստոս անկուցեալ հայրն է պարգեւի (ն. տ., 261):

Գրաբարում, որպես ընդհանուր կանոն, հատկացուցիչը զրվում է սեռական հոլովով, Սակայն հատկապես բացառական և գործիական հոլովներով զրված հատկացյալի հատկացուցիչը շատ հաճախ համաձայնում էր իր հատկացյալին: Օրինակ՝ Եւ հանէ զամպս ի ծագաց երկրէ (Աստուածաշունչ, Գիրք սաղմոսաց, Թ. ՃԼԴ), Պնդուրեամբ սւտիւ և հաստատուն հաւատովք կամակար յարձակեցուք (Եղիշէ, 109—110), որտեղ երկրէ և սւտիւ հատկացուցիչները համաձայնեցված են իրենց հատկացյալների (ի ծագաց և պնդութեամբ) հոլովներին:

Գրաբարում հատկացուցչի կանոնական շարադասությունը ետադասությունն է: Սակայն այս կանոնը բացարձակ չէ: Հայերենի նախադասության անդամների ազատ (բայց ոչ կամայական) շարադասության հետ կապված՝ որոշչային հարաբերության անդամների շարադասությունը ևս որոշ իմաստով հաստատուն չէ: Ինչպես ամբողջ նախադասության, այնպես էլ որոշչային հարաբերության մեջ հեղինակը նախադաս է դնում այն անդամը, որը կրում է տրամաբանական շեշտ: Հատկացուցիչը նախադաս է զրվում նաև այն ժամանակ, երբ հատկացյալը վերաբերում է բաղմակի հատկացուցիչներից յուրաքանչյուրին առանց կրկնության և որոնցից երկրորդը հակադրվում է առաջինին ...և ոչ. ոչ... այլ. ոչ երև... այլ. ոչ միայն... այլ շաղկապների միջոցով: Օրինակ՝ Ոչ եթէ բնութեան գործ է քաղաքս կամ տաճարս, այլ արուեստին (Եզն., 19—20), Կերպարանաց և զարդուց և արարիչ է Աստուած, և ոչ բնութեանց (ն. տ., 19):

Իմաստային շեշտից անկախ գրաբարում նախադաս է հարաբերական և հարցական դերանուններով արտահայտված հատկացուցիչը: Օրինակ՝ Որոց ոգիքն թուլացեալ են (Եղիշէ, 14):

Միջին հայերենում հատկացուցիչ և հատկացյալի հոլովով համաձայնության շարահյուսական օրենքը վերանում է. միջին հայերենի շարահյուսության բնորոշ առանձնահատկությունն է համաձայնության վերացումը որոշիչ-որոշյալ և հատկացուցիչ-հատկացյալ զույգերի միջև:

Այս է պատճառը, որ հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական հարաբերությունում շարահյուսական դուզահոնները դրսևորվում են առավելապես շարադասության մեջ: Ստացվում են հետևյալ երկու շարքերը.

1. Ետադաս հատկացուցիչ (գրաբարի նորմա)

2. Նախադաս հատկացուցիչ (միջին հայերենի նորմա)

Հետևյալ ալուսակը ցույց է տալիս միջին հայերենի հատկացուցիչ-հատկացյալ զույգի շարահյուսական գուգահոնների հաճախականությունը:

Աղյուսակ 8

Աղյուսակ	Ետադաս հատկացուցիչ	Նախադաս հատկացուցիչ
Մ. Հերացի	45	55
Գրիգորիս	65	35
Ս. Սարապետ	50	50
Ռամկ. եկեղ.	7	93
Ա. Ամասիացի	72	28
Վիմ. արձան	65	35

Այժմ անդրադառնանք որոշչային հարաբերությունների մեջ մասնող երրորդ շարահյուսական զույգին՝ բացահայտիչ-բացահայտյալին:

Միջին հայերենում նույնպես բացահայտիչ-բացահայտյալ շարահյուսական հարաբերությունն արտահայտում է բացահայտման իմաստ, որը կարող է դրսևորվել այլևայլ իմաստային երանդներով. ինչպես՝ բնդհանուրի բացահայտումը մասնավորի միջոցով և բնդհակառակն, հատուկ անվան բացահայտումը հասարակի միջոցով և բնդհակառակն:

Հայոց գրական լեզվի վարպետան երեք փուլերում էլ՝ գրաբար, միջին հայերեն, արդի հայերեն, բացահայտիչ-բացահայտյալ շարահյուսական զույգը հանդես է գալիս հետևյալ առանձնահատկություններով. ա) բացահայտիչ-բացահայտյալ շարահյուսական հարաբերության մեջ բացահայտիչ անդամը միշտ ետադաս է (ի տարբերություն որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ զույգերի, որոնց շարադասությունը, ինչպես տեսանք, կայուն չէ), բ) բացահայտիչ և բացահայտյալ անդամները որպես կանոն համաձայնում են հոլովով, թվով, գեմրով և հոգառությամբ:

Այս առանձնահատկություններից առաջինը՝ շարադասությունը, անխախտ է միջին հայերենում: Անխախտ է նաև բացահայտիչի և բացահայտյալի հոլովով համաձայնությունը: Օրինակ՝ Միտրանքս սահմանեցին Բ տար պատարագ իմ եղբարեմ՝ պարոն Ասադին (ԴՀՎ—3, 80), Քարվմանեցաւ և գրեցաւ գիրքս տա... ի հայրապետութեան սրբադան կաթողիկոսիս Հայոց տանն 'Իրիզորի' որդոյ Վասիլի բարեպաշտ իշխանի Պանխատունոյ (ՄՀ, Առաջարան), Կանգնեցաւ խաչս ի բարեխառնութիւն Խոշաւորոյ՝ անյալը փիլիսոփայի (ԴՀՎ—3, 89):

Միջին հայերենի շարահյուսության համար կանոնական է նաև բացահայտիչի և բացահայտյալի գեմրով, հոգառությամբ համաձայնությունը: Օրին-

նակ՝ Այս է, որ ես՝ Աֆուլեցի Զաֆաբէս գրեցի (ԶԱՅ, 26), Պատարագ տվին իմ
նաւրե՝ Սարգսին Սուրբ Գևորգին տաւնին (ԴՀՎ—3, 52), ես՝ Աֆուլեցի մղդսի
Աղամիրի ուղի Զաֆաբէս, գնացի Մարադայ (ԶԱՅ, 26)։

Դեմքով համաձայնությունը չի խախտվում երբեմն նույնիսկ բազմակի
բացահայտիչների և նրանց բացահայտչալի միջև Օրինակ՝ ես՝ Բուրայիս,
բոռնս Սամաղային, որդիս Յասաւնայ... (ԴՀՎ—3, 82)։

Այնուամենայնիվ, բացահայտիչ-բացահայտչալի դեմքով, հոդառությամբ
համաձայնությունը համեմատաբար անկայուն է։ Եվ սա զարմանալի չէ միջին
հայերենի համար, եթե նկատի ունենանք, որ նույնիսկ արդի դրական հայերե-
նում, որն անհամեմատ ավելի նորմավորված է, այս երևույթը նույնպես ան-
կայուն է։ Օրինակ՝ Հիշում ես, մեզ՝ տաս հոգու, բանտ պետք է դնեն²⁵։

Միջին հայերենում նույնիսկ առաջին դեմքի դերանվան բացահայտիչ
երբեմն հանդես է գալիս առանց ս դիմորոշ հոդի։ Օրինակ՝ ես՝ Սարգիս տվի
Խանատի վանից... (ՎԴՀ—3, 82), ես՝ անաբժան Զաֆաբիա... այսօր Ագուլաց
դուրս էլայ (ԶԱՅ, 5), Դարցեալ ես՝ անաբժան Զաֆաբիայ... գրէցի ոչ։ (ԶԱՅ,
5—6)։

Միջին հայերենի համար շատ բնորոշ են բազմակի բացահայտիչները։
Սա, իհարկե, բխում է տվյալ աշխատության կամ գրավոր հուշարձանի նպա-
տակից։ Նկատում ենք, որ բացահայտիչ-բացահայտչալ շարահյուսական դույ-
զը առատորեն օգտագործվում է վիմագիր արձանագրություններում, որտեղ
տվյալ արձանագրության հեղինակները ձգտում են հնարավորին չափ լայն,
մանրամասն տեղեկություններ տալ իրենց անձնավորության մասին, կամ այլ
երկերի նախաբաններում, որտեղ բացահայտվում է հեղինակի ով լինելը։
Օրինակ՝ ես, Սմբատ, անարժան և մեղաւոր ծառայս Աստուծոյ, որդի Կոս-
տանդայ թագաւորահօր և Էդրայր բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմայ,
բաղում աշխատանօր աշխատեցա... (ՍԳԴ, 15), Կաման Աստուծոյ, ես՝ Թա-
ճերս, դուստր Ուքանա, ամուսին Հասանա ասպարապետին Հայոց, որդոյն
Պուշա, ևտու ընծա... (ԴՀՎ—3, 76), ես Մխիթար Հերացի, տրուպս ի բժշկաց...
(ՄՀ, Առաջարան)։

Այս օրինակներում կողք-կողքի հանդես են գալիս դիմային համաձայնու-
թյան և անհամաձայնության դեպքեր։

Միջին հայերեն մատենագրության փաստերը մեզ հնարավորություն չեն
տալիս բացահայտչի և բացահայտչալի թվական համաձայնության մասին
խոսելու, որովհետև գրեթե չեն օգտագործված հոգնակի թվով բացահայտիչ-
բացահայտչալներ։

ԽՆԴՐԱՅԻՆ ՀԱՐԱՐՆԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրային հարաբերություն արտահայտող շարահյուսական զուգորդու-
թյան անդամներից մեկը անպայմանորեն բայ է։ Ստորոգյալ+խնդիր կապը
իրականանում է շնորհիվ բայ խոսքի մասի արժութայնության, այսինքն՝ շնոր-
հիվ այն հատկության, որ «կարելի է բնութագրել որպես մեկ շարահյուսական
դասի մի ուրիշ դասի տարրերը ձգելու, ենթադրելու, «պահանջելու», «կանխա-
դուշակելու» հատկություն»²⁶, լեզվական հարաբերությունների մակարդակում

25 Վ. Առափկյան, Եզվ. աշխ. էջ 281։

26 Յ. Բ. Атаян, Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван,
1968, стр. 221.

խոսքի մասերի, տվյալ ղեկավարում բայի, այսպիսի արժույթայնությունը բխում է բայի կարգային իմաստից և անհրաժեշտական է²⁷։ Ուրեմն, նախադասության մեջ խնդրային հարաբերությունները առաջանում են շնորհիվ բայի կարգային նշված հատկության՝ ձգելու, ենթադրելու շարահյուսորեն անհրաժեշտ առանձնահատկության։ Խնդրային հարաբերության մի եզրը բայն է, ինչպես ասվեց, իսկ մյուսը՝ գոյականն է կամ գոյականացած խոսքի մասերը, որոնք շարահյուսական մակարդակում հանդես են գալիս որպես խնդիրներ։ Խնդրային հարաբերությունը առաջանում է կամ բայի սեռի պահանջով, կամ էլ բայիմաստի պահանջով։ Բայի սեռի պահանջով, այսինքն՝ բայի անհրաժեշտական արժույթայնությամբ դրվում են ուղիղ խնդիրը և ներգործող խնդիրը, իսկ բայիմաստի պահանջով, այսինքն՝ բայական պատճառ արժույթայնությամբ դրվում են մատուցման, վերաբերության, անջատման, միջոցի, հանգման, սահմանափակման, բացառման խնդիրները։

Խնդիրները բայական անդամի լրացումներ են, որոնք կարող են լինել բուն լրացումներ և կողմնակի լրացումներ։ Երբ խնդրային հարաբերության մեկ անդամը բայական ստորոգյալ է, ապա տվյալ շարահյուսական հարաբերության մյուս եզրը՝ խնդիրը, բուն լրացում է։ Կողմնակի խնդիրները հանդես են գալիս դերբայական դարձվածների մեջ։ Այս բաժնում քննվում են միջին հայերենի բուն խնդիրները։

Շարահյուսագիտության մեջ ընդունված է խնդիրները բաժանել երկու խմբի՝ ուղիղ և անուղղակի։ Ս. Աբրահամյանը «Ժամանակակից հայերենի քերականություն» գրքում խնդիրների ուղիղ և անուղղակի տեսակների բաժանումը պայմանական է համարում։ Նա գրում է։ «Այս հակադրության մեջ ուղիղ խնդրի հատկանիշը հասկանալի է. այն ներգործական սեռի բայերի արտահայտած գործողության կրող խնդիրն է. իսկ մյուս խնդիրները շունեն որևէ ընդհանուր քերականական հատկանիշ, որով բնորոշվեն։ Դրանք ավելի շատ բնորոշվում են ուղիղ խնդրի հատկանշի բացառումով. իսկ այսպիսի սկզբունքով միշտ էլ բոլոր խնդիրները կարելի է հակադրել ցանկացած որևէ խնդրի» (էջ 305)։

Մեր կարծիքով, այս պատճառարանությունը ճիշտ է։ Իհարկե ավելի նպատակահարմար է խնդիրները խմբավորել բոլոր բայի անհրաժեշտական և ազատ արժույթայնությամբ թվադրված տեսակների. 1) բայի սեռի հետ կապված խնդիրներ և 2) բայիմաստի հետ կապված խնդիրներ։ Առաջին խմբի մեջ պետք է քննել ուղիղ խնդիրը և ներգործող խնդիրը, իսկ երկրորդ խմբի մեջ՝ մատուցման, հանգման, վերաբերության, անջատման, միջոցի, սահմանափակման և բացառման խնդիրները։

ՈՒՆԻ ՍԵՌԻ ՆԵՏ ԿԱԳՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

Ուղիղ խնդիր.—«Ուղիղ խնդիրը ներգործական սեռի բայի խնդիրն է, որ ցույց է տալիս գործողությունն ուղղակիորեն իր վրա կրող առարկան»²⁸։ Ու-

²⁷ Սրան հակառակ, գոյականը, որպես լեզվական միավոր, անհրաժեշտորեն չի պահանջում իրեն լրացնող ածական-որոշիչներ, նույնպես և բայը, ածականը և մակբայը չեն պահանջում իրենց լրացնող մակբայ-սլարագաներ (այստեղ բացառություն են կազմում ուղեորության իմաստ արտահայտող բայերը, որոնք իրենց բայական իմաստով պահանջում են սլարագաներ, օր.՝ վերադառնալ, գնալ և այլն)։ Այսպիսի լեզվական արժույթայնությունը կոչվում է ունի-հրաժեշտական, ազատ (տե՛ս Յ. Ք. ԱՂԱՅԻ, նշվ. աշխ., էջ 225)։

²⁸ Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, էջ 306.

րեմն. բայի կարգադրին հասկանալիչն է, որ որոշում է տվյալ շարահյուսական հարարերության խնդիր անգամի տեսակը:

Ուղիղ խնդիրը միջին հայերենում արտահայտվում է դոյականով, դերանվամբ և փոխանվանաբար հանդես եկող այլ խոսքի մասերով: Միջին հայերենում նույնպես ուղիղ խնդիրը դրվում է հայցական հոլովով, Գոյականի հոլովման հարացույցում միայն հայցականի հոլովական իմաստին է հատուկ ներդործական սեռի բայի կառարած գործողության անմիջական կրող լինելը: Այս տեսակետից բացառություն է կազմում բացառական հոլովը, որի մասնականության իմաստ արտահայտելու հասկանալիչը հնարավորություն է տալիս իրենով ձևավորելու մասնական ուղիղ խնդիր:

Միջին հայերենում ուղիղ խնդիրը արտահայտվում է հետևյալ ձևաբանական կարգերով.

Գոյականով՝ Խողրն ջօհաւ Ե՞րբ ճանչէ, զօրն ի բուն զաղբրն կու փորէ (ՀԵ, 143), Եվ այլ տուր փշատի փոխինդ կամ նոան հատի փոխինդ (ՂԶ, 80), Զլաշխիկն թուլ ու մուլ կապեր, զկես ճակտին թողեր է ի բաց (ՆՔ, 111):

Դերանվամբ՝ Ի՞նչ մայր է ըզֆեզ բերեր, Ի՞նչ դայեկ՝ ըզֆեզ սնուցեր (ՀՄԺԵ, 128), Եվ ապա սրբեա զինԴն ի բրդէն շուխայ կտորով (ՂԶ, 98—99), Զամէնն արա հիմի յայտնի (ԿԵՏ, 117), Մի՞թէ զիս ղէղէցի (ՀԻ, 152), Ասցի թէ դտնում հանց յար, ա՛յ հոգեկ, որ զայլ չէ սիրած (ՆՔ, 217):

Փոխանվանաբար գործածվող այլ խոսքի մասերով՝ Զանհամն ինքն ի համ բերև ու զենխածն անուշացն (ՄՆ, 264), Եւ զայրացած խառնուածն ստամոքէն ի վար քչէ (ՂԶ, 403):

Միջին հայերենի ուղիղ խնդիրը քննելիս ուշադրություն է դրվում զ նախդրի գործածությունը: Հայտնի է, որ զնախդիրը զրարարում գործածվում է տարբեր հոլովների հետ (տրական, հայցական, բացառական, գործիական) և արտահայտում է քերականական տարբեր իմաստներ: Միջին հայերենի համար բնորոշ է մի քանի նախդիրների փոխարինումը ի-ով, «զ-ի՝ փաստորեն միայն հայցականի նշան դառնալը»²⁹: Սակայն միաժամանակ արդեն գործում էր որոշյալ հայցականի առանց զ նախդրի հանդես գալու ձևաբանական միտումը: Իվ ահա, քանի որ ուղիղ խնդիրը դրվում է հայցական հոլովով, քնականաբար այն երբեմն հանդես է գալիս առանց զ նախդրի, բայց հիմնականում զ-ով. որոշ խոսքի մասերի հետ (հատկապես դերանունների հետ) զ-ի գործածությունը ավելի հաճախական է, իսկ դոյականի հետ նրա հանդես գալու պատկերը ավելի անմիօրինակ է:

Միջին հայերեն մատենագրության ուշադիր քննումը մեզ բերում է հետևյալ եզրակացություններ:

1. Գոյականի հայցականի հետ զ նախդիրը գեղարվեստական, բժշկատեսական գրականության մեջ երբեմն չի գործածվում: Պատմագիտական երկերը այս և շարահյուսական ու ձևաբանական այլ երևույթների դրսևորման մեջ առավել պահպանողական են:

2. Դերանունների (հատկապես անձնական) հայցական հոլովի հետ զ նախդիրը պրեքն օրինաչափորեն գործածվում է: Այս երևույթի պատճառը թերևս պետք է փնտրել դերանուն խոսքի մասի կարգային բովանդակության անորոշության մեջ. թվում է, թե զ նախդրի միջոցով լեզուն ջանում է մեղմել դերանունների այդ իմաստը: Օրինակ՝ Ես կու դրեմ զիս բեզ մատաղ. Ու բեզ

29 Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 48:

ծառայ ու քեզ զաքաթ (ՀՔ, 129), Զամէնն արա հիմի յայտնի (ԿԾ, 117), Զերտունն ի բանն եկի, զֆեզ տեսա՝ բանս մոռացա (ՆՔ, 89)։

3. Գրաբարում նախդրավոր լրացումը եթե ուներ նախադաս լրացում (որոշիչ կամ հատկացուցիչ), նախդիրը դրվում էր այդ նախադաս լրացման վրա։ Միջին հայերենում էլ այս օրենքը գործում է այն դեպքերի համար, երբ ուղիղ խնդիրը արտահայտված է զ-հայցական հոլով կառուցվածքով։ Օրինակ՝ Ո՛վ պարտիզպան, միթէ տեսե՞ր դու զիմ ուրդին (ԿԾ, 229), Զայս կեանքս ուրացիր, Ֆրիկ, անդէնին դու էլ խընդըրակ (Յր., 59), Նոյնպէս թէ տաքնայ չորս նիւթն, տաքցնեն զչոր և զպինդ աճղամուսնին (ՂԶ, 76), Հանն զյուր կանանց կապան, լուկ հաղնի զկարմիրն ի վերն (ՆՔ, 94)։

Մեր գրական լեզվի միջին շրջանին հատուկ է նաև մասնական ուղիղ խնդիրը, որը ձևարանորեն արտահայտվում է մասնական բացառականով։ Օրինակ՝ Եփ հալի՝ դու առ յիրմէ ու կաթեցո ի ջուրն (ՂԶ, 152), Ապա առ իւր կարնէն... (Ն. տ., 160), Տուր իր եղէն Բ դրամ (ԱԱԱ, 96)։

Մասնական ուղիղ խնդիրը հատուկ է Լզել և զրաբարին, և միջին հայերենին, հատուկ է արեւմտահայ և արեւելահայ գրական լեզուներին։

Ներգործող խնդիր.— Այս խնդիրը դրվում է կրավորական սեռի բայի պահանջով։ Ներգործող խնդիրը ձևարանորեն արտահայտվում է հիմնականում բացառական հոլովով։ Օրինակ՝ Եւ թէ ոք յանդգնի, ձգվի յաթոռոյն և տուծվի ի դարպասէն (ՍԳԴ, 23), ...Մէկն այն է՝ որ բնութիւն արգիլեցաւ ի շոգեւոյն (ՄԶ, 13)։

Ներգործող խնդիր պահանջում են նաև որոշ կարգի լեզոք սեռի բայեր։ Այսպիսի խնդիրները ունենում են պատճառի պարադայի իմաստային երանգ։ Օրինակ՝ Իմաստունն է յաշխարհէս ինք յագեցել անարգելով (ԿԾ, 171), ...Զվախէ ի գօրաց՝ թէ են քաջ փահլաւան (ԿԾ, 211), Արքայն տրտմեցաւ լսուհուն վախեցաւ սրտիւ դառնագին (ԽԿ, 174)։

Բայի սեռով պայմանավորված խնդիրների ձևաբանական արտահայտությունը

Աղյուսակ 3	
Շարահյուսական անփոփոխակ	Ձևաբանական փոփոխականներ
Ուղիղ խնդիր	զ հայց, Գ հայց, Գ բաց
Ներգործող խնդիր	Դ բաց

Ռայիմաստի հետ կապված խնդիրներ

Ռայիմաստի հետ կապված խնդիրները չունեն բայ-ստորոգյալի սեռային սահմանափակում։ Այս խնդիրները դրվում են բայի բառական իմաստի պահանջով։ Սրանք իմաստային տեսակետից խիստ բազմազան են։ Հստ հնարավորին խմբավորելով խնդրային իմաստները, մենք քննում ենք միջին հայերենի Ռայիմաստի հետ կապված յոթ խնդիրներ։

Մատուցման խնդիր.— Ցույց է տալիս մի առարկա, որին մի բան տրվում

է, մատուցվում է, հանձնվում է: Մատուցման խնդիրը դրվում է մատուցման իմաստ արտահայտող բայ-ստորոգյալի պահանջով (տալ, ընծայել, վաճառել, կտակել և այլն): Այս խնդիրը ձևաբանորեն արտահայտվում է սեռական-տրական հոլովի գոյականով, տրական հոլովի դերանվամբ, և կամ գոյականացած այլ խոսքի մասով: Օրինակ՝ Ասլա թէ յայլ սինօոկցած քաղեն, նա տասնակն տան տիրոջն... (ՍԳԴ, 20), Ասլա թէ թոռունք չկենան, նա հար հայրն կենայ, նա հայնց մառանգէ հայրն օղնցն, զէտ որդիք հօրն... (ՍԳԴ, 58), Ասլա թէ իշխանի ժառանգութիւն լինի տեղին. յոր իրքն գտվի,... նա գտնողն ի հնկէն զմէկն տայ նմա (ՍԳԴ, 20), Եւ ի ժամարձաղն ղյևտի օրհնութիւնն միակամ և սիրով տան ժողովրդեան (ԱԳԴ, 27), Ասլա տուր հիւանդին, որ խմէ կում-կում (ՄՀ, 5), Զայս դիր տվաք Անո մօտէրկէրուն (ԴՀՎ—1, 22), Ինծ պարգէէ զկենաց բարին, Զի բուն բարուն շնորհող դու ես (ԿՍ, 233), Մի տաս հիւանդին սրբնճպին՝ մինչև նօսրանայ նիւթն և պարկեշտ լինի (ՄՀ, 83), Եւ տայ եպիսկոպոսն ու կարող վաներոյն հայրապետերն այնոց կերակուր և հանդերձ (ՂՀ, 216), Եւ յերբ ի յինքն մօտիս. նայ ձայն տայ (Գր., 31):

Հանգման խնդիր.— Այս խնդրի անվանումն իսկ ցույց է տալիս, որ տվյալ խնդրային հարաբերության բայ-ստորոգյալի բայիմաստը պահանջում է մի այնպիսի առարկա, որին հանգում է զործողությունը: Հանգման իմաստը միջին հայերենում հիմնականում արտահայտվում է գոյականի սեռական-տրական հոլովով: Օրինակ՝ Լվուրին մտիկ արեք, որ դրեր կարմիր սարաղուծ (նՔ, 98), Զինչ ի վերուստ չէր տուած, Դու Լ՞րը կարիւ հասնել լանին (Յր., 210), Իսկի չի խղնա՞ս դու ինծ (ԿՍ, 160), Նոյնպէս և թէ ոք հետ իրաց նետ ձգէ, նա անցնի և մարդոյ յիսլի ու մեռնի... (ՍԳԴ, 26), Եւ այլք զէդ աւագ ընկերոջն հնազանդին աննախանձ... (ՍԳԴ, 27),

Եւ եկեղեցականք... զուսումն սիրեն, որ իրենք օգտին և այլոց փառօգեն (ՍԳԴ, 28), Զոր թէ հանդիպէր ուղղափառ բժիշկի, որ առողջացնէր և հանէր զղեն, նա մեծ վարձք ունէր և մեծ աւետոյր ի Քրիստոսէ (ՍԳԴ, 30):

Հանգման խնդիրը աչքի է ընկնում իմաստային բաղմագանության մը: Այս իմաստային նրբերանգները դրսևորվում են ոչ միայն սեռական-տրական հոլովով դրված գոյականով, զերանվամբ կամ գոյականաբար գործածված այլ խոսքի մասերով, այլև զանազան կապերի կապակցությամբ: Հանգման իմաստը ամենից շատ, սեռական-տրական հոլովից բացի, ձևավորվում է ի վերայ + Գսեռ-տր կապակցությամբ: Օրինակ՝ Զի ուժն երբ չատնայ ի վերայ ճեղոյն... նայ իւր պօրութիւնն մաղձն է... (Գր., 195), Եւ ինքն ի յիւր վերայ չբողոյ դշալակն... և զպարտս... (ՍԳԴ, 29):

Այս դեպքում խնդրային հարաբերության մեջ գործողության տեղի նրբերանդ է գրացվում: Այս իմաստը ավելի բուժեղ է, երբ հանգման խնդիրը արտահայտված է զեպի. ի կապերի կապակցություններով, Օրինակ՝ Եթէ զմարդուն զանձն կու փոխէ ի բնութենէ, բայց յետոյ այլվայ յիւր բնութիւնն կու բերէ, որ իւր սովորականն է (ԱԱԱ, 3), Դուռնայ ի յինքն իւր պոմնաւն և վկայիւրն... (ՂՀ. 217--218): Հանգման խնդիրը արտահայտվում է նաև ընդ (=հետ) նախդրի օգնությամբ ընդ + Գհայց, Օրինակ՝ Եւ թէ յայս ժառանգաւորաց եկեղեցոյն ընդ կարգակից ընկեր կամ ընդ աշխարհական կոիւ ալնէ... զէդ սպաննող դատեն զինք (ՍԳԴ, 22), Վասն դի շկայ հրաման և ոչ իշխել այր և կին, որ ընդ իւր վաճն կապած յինի և ընդ եկեղեցին միաբանութեամբ (ՍԳԴ, 31), Եւ ասեւ ընդ մարդն, որ ան շնչի և տքայ (Գր., 145):

Իմաստային յուրահատուկ նրբերանգ ունեն ասացական բայերի պահանջած հանգման խնդիրները, որը բխում է բայ-ստորոգյալի բառական իմաստից: Այսպիսի ղեկըրում հանգման խնդիրը ցույց է տալիս այնպիսի առարկա, որին մի բան ասվում, հաղորդվում է, այսինքն՝ վերջին հաշվով մի առարկա, որին հանգում է դործողությունը: Օրինակ՝ Իմ սիրտ, Ուր քանի ասեմ, հետ շարին իսկի մի ղեկը (Ֆր. 90):

Անջատման խնդիր.— Ցույց է տալիս այն առարկան, որից անջատվում է մի այլ առարկա: Այստեղ Հակնն այն է, որ դործողությունը սկսվում է մի այլ առարկայից, որը «հանդիսանում է հեռացող առարկայի ելման, հեռացման, անջատման համար սկզբնակետ, բայց ոչ թե տեղի, այլ առարկայի իմաստով»¹: Շարահյուսական այս իմաստը ձևաբանական մակարդակում արտահայտվում է բացառական հոլովի միջոցով: Օրինակ՝ Արտաքսն, որ ելնէ ի ճիւղնդէն... բարոյ նշան է (Գր., 214), Պատահէ... լուծումն ի խաբտէջ մաղձէ, նայ բանրի լսելիքն և ողջրնայ (ն. տ.), Եւ արիւնն, որ ի սնկանէ վարի, նայ ճոռայ և կաթկաթէ (ն. տ., 144), Ի զատ կաց ի նմանէ՝ յատակ ծովուն ջօհար պահէլ (ԿՅ, 180):

Անջատման խնդիրը ներքին, իմաստային զանազան նրբերանյներ կարող է ունենալ, որոնք վերջին հաշվով, կապված են բայիմաստների, որոշ չափով նաև՝ գոյական-խնդրի բառական իմաստի հետ, և շարահյուսական իմաստի, նախադասության մեջ շարահյուսական տվյալ հարաբերությունն արտահայտելու տեսակետից նույնանիշ են: Օրինակ՝

- I 1. Հարք ի յորդոց բաժանեցան (ՀԱԳ, 72);
2. Զհոգոյ թակտիլն է՞ր շես յիշել, Յաստուծոյ է՞ր ես հեռացել (Ֆր., 51):

- II 1. Յինն քեզ խապար բերեր և ի քեկն խապար մոտ յիս (նԹ, 101);
2. Զայս անունս առին ի ծովային կենդանոյ միոյ (ՄՀ, 7):

Այս երկու դույզ օրինակների մեջ բնորոշված անդամները անջատման խնդիրներ են, շարահյուսորեն նույնանիշ են և արտահայտում են միևնույն հարաբերությունները: Ուրիշ խնդիր է, որ, օրինակ, 1-ին խումբը ցույց է տալիս այն առարկան, որից հեռանում է նրա հետ որևէ ձևով կապված առարկան, իսկ 2-րդ խումբը՝ այն առարկան, որից վերցվում է մի այլ առարկա: Այս իմաստները պայմանավորված են բառիմաստներով, և սրանց թիվը կարելի է շատ մեծացնել՝ անընդհատ մանրացնելով նրբերանյները:

Ինչպես արդեն ասացինք, շարահյուսական զուգահեռները արդյունք են ձևաբանական մակարդակում տեղի ունեցող փոփոխությունների, Գրաբարում բացառական հոլովի կաղմության մեջ վճռական ղեկ ունի ի նախդիրը: Սակայն միջին հայերենում արդեն տեղի էր ունենում բացառական հոլովի արտահայտության փոփոխություն, այն կարող էր արտահայտվել և՛ նախդրով, և՛ աննախդիր: Ձևաբանական մակարդակի ահա այս փոփոխությունը շարահյուսական մակարդակում տալիս է բացառական հոլովով զրված բոլոր շարահյուսական նվազագույն միավորների զուգահեռ շարքեր: Ստորոգյալ + անջատման խնդիր շարահյուսական հարաբերությունը միջին հայերենում

30 II Արտահայտման, նշվ. աշխ., էջ 309—310.

հանդես է գալիս հիմնականում նախդրիվ բացառականով, երբեմն նաև ան-
նախդիր բացառականով,

Լիթոգլի խնդիր.—Ցույց է տալիս այն առարկան, որով, որի հետ, որի
միջոցով կատարվում է գործողությունը։ Այս շարահյուսական իմաստը հայե-
րենում կարող է արտահայտվել գոյականի, դերանվան գործիական հոլովով։
Օրինակ՝ Զայդ բո ծով-ծով աչերդ զիլով լցեր ես (ՀԲ, 152), Կոյր են հոգում,
աշո՛ւ, մտո՛ւ, յիմար են, անյիմայ (ՀԱԳ, 33), նա ականջովն հանց բան լսւ, Որ
միտ զրնէ և պարմանայ (ՀԲ, 192), Հանցեղ նետով զիս խոցեցիր (Ն. տ., 159),
Եւ թէ զտերեն ջրով Ելին և զմազն այնով լուանան՝ յերկանցնէ (ԱԼԼԼ, 33—34),
Եւ թէ է զրամ զիւնով խմես. նուզլային օդտէ (Ն. տ., 50), Խոստացել լինայ, Թէ
պսակվեմ ընդ Բեզ ու այնով լինայ խարեւ զկինն (ՈԳԴ, 52), Իւմրնցնով զի-
րենք դատեն իշխանաց իշխանքն (ՂԶ, 219)։

Վերաբերության խնդիր.—Ցույց է տալիս այն առարկան, որին վերաբե-
րում է տվյալ գործողությունը։ Միջին հայերենում վերաբերության խնդիրը
արտահայտվում է մեծ մասամբ բառի սեռական հոլովով և վասն, յաղագս. ի
վերայ, մասին կապերով։ Գրաբարում, բացի կապական կապակցություննե-
րից, վերաբերության խնդիրը կարող էր արտահայտվել նաև պատմական բա-
ցառականով։ Պատմական բացառականը, որ ուներ զ + Գրաց կառուցվածքը,
միջին հայերենում կանոնական չէ. այդ պատճառով էլ շատ սակավադեպ էն
պատմական բացառականով արտահայտված վերաբերության խնդիրները։

Միջին հայերենում, որպես կանոն, վերաբերության խնդիրը արտահայտ-
վում է վասն + Գսեւ-տը, ի վերայ + Գսեւ-տը կառուցվածքներով։ Վերաբերու-
թյան խնդիրը հանդես է գալիս մեծ մասամբ ասացական բայ + վերաբերու-
թյան խնդիր շարահյուսական հարաբերության մեջ։ Օրինակ՝ Պարտ է ամե-
նայն մարդոյ... որ քննէ աղէկ և իմանայ վասն ամենայն ցեղ ջերմանց զիտու-
րեան (ՂԶ, 73), Գաղիանոս վասն երեւ ազգ ջերմերոցն զիրքն ասէ (Ն. տ., 76),
Եթէ ոք վասն րազատրի անպատեհ կամ անարժան խօսք աւել, և կամ վասն
իշխանի կամ մոտէ, նա պատեհ է յառաջ ի յեկեղեցին դատաստանել (ՍԳԴ,
23), Եթէ ուրդի, որ եպիսկոպոսին վերայ իր ժողովուրդն խուխայ այնէ (Ն. տ.,
25), Հարկ է փոքր ի շատէ յաղագս վանականաց գրել (Ն. տ., 27), Հարցնեն
յօրէնքս վասն անընկ մահու, Թէ լինի իրենց թաղումն կամ պատարագ (Ն. տ.,
59), Եւ զոր յիշեցաք վասն ազգեազգ ուոեցնոյն և ազգեազգ անուանց նոցա
(Գր., 31)։

Սահմանավակման խնդիր.—Այս խնդիրը մասնավորում է ստորոգյալի
գործողությունը կամ նրա ցույց տված հատկանիշը տվյալ առարկայի, իրի
սահմաններում։ Այս խնդիրը արդի հայերենում արտահայտվում է բացառա-
կան, գործիական և ներգոյական հոլովներով։ Գրաբարում այն առավելապես
արտահայտվում էր նախդրիվ ներգոյականով։ Իսկ միջին հայերենին առավել
ընդունելի է բացառական և գործիական հոլովներով արտահայտված սահմանա-
փակման խնդիրը։ Օրինակ՝ Եւ զայս ի ֆոանկաց եկեղեցականացն տես և ու-
սիր (ՍՍԴ, 22), Մի սլարծենալ դու ի Բեհէ. Թէ ես զանձուց տէր և մալի, Կամ
բո հոգովդ ես դու մաքուր, Սրտովդ՝ սուրբ ու առաքինի (ԿԵ, 207)։

Բացառման խնդիր.—Ցույց է տալիս մի առարկա, որի մասնակցությունը
ստորոգյալի գործողությանը բացառվում է։ Բացառման խնդիրը միջին
հայերենում արտահայտվում է զարբ կապով և գոյականի, դերանվան կամ
գոյականաբար գործածված այլ խոսքի մասերի բացառական հոլովով, Օրի-

նակ՝ նա իրաւունք է, որ բռնեն զինք և ի յիր էրիկն տան, որ յաւիտեան ծառայ ունեայ զինքն ու անէ, զինչ իր պիտի, զարք ի ծախսելոյն և ի սպանելոյն և ի բաւմեկոյ (ՍԳԳ, 56)։


Բացառման խնդիրը զրաբարում արտահայտվում է բաց, բայց կապերի և գոյականի բացառական հոլովի կապակցությամբ։ Իսկ միջին հայերենում արդեն հանդես է եկել զարք կապը նույն իմաստով։ Ուստի, միջին հայերենում նախադասության այս անդամը սկսել է ձևավորվել զարք կապի և գոյականի բացառական հոլովի կապակցությամբ։

Բայիմաստով պայմանավորված խնդիրների ձևարանական արտահայտությունը

Շարահյուսական անփոփոխակ	Ձևարանական փոփոխականներ
Ուստուցման խնդիր	Գ սեռ-տը, Դա տը
Վերաբերության խնդիր	վասն, յադուպ — Գ սեռ-տը, Դ սեռ-տը — վերայ
Անջատման խնդիր	ի — Գ բաց, Գ բաց
Միջոցի խնդիր	Դ գործ, Դա գործ
Սահմանափակման խնդիր	Դ բաց, Դ գործ
Հանդման խնդիր	Դ սեռ-տը, ի վերայ — Դ սեռ-տը (Դա սեռ), ի, րնդ — Դ հայց (Դա հայց)
Բացառման խնդիր	զարք — Դ բաց

ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարագայական զուգորդությունները կազմվում են բայ — մակրայ³¹ աղառ շարահյուսական կապի միջոցով։ Ստորագյալ պարագա շարահյուսական նրկանդամի մեջ հիմնական անդամը ստորոգյալն է, պարագան գտնվում է կառուցվածքային ավելի ցածր մակարդակի վրա։ Բովանդակության պլանում այսպիսի զուգորդությունների պարագա անդամը հանդես է գալիս որպես տեղի, ձևի, չափի ու քանակի, ժամանակի և այլ իմաստներ արտահայտող անդամ։ Այս շարահյուսական զուգորդության (պարագայական) անդամների կապը ստորակարգային է։ Այսպես՝



³¹ Տվյալ զեպում մակրայ անխնամը գործածում ենք պայմանականորեն, այն դրված է պարագայական կիրառության բոլոր խոսքի մասերի փոխարեն։

Միջին հայերենում նույնպես պարագայական իմաստները արտահայտվում են առավելապես մակբայ խոսքի մասով:

Բացի մակբայներից պարագա կարող են դառնալ նաև գոյականները, դերբայները, որոնք պարագայի գործառույթի կարող են կատարել կամ տարբեր հոլովներով դրվելով, կամ կապական կապակցություններով: Բավական ծանրակշիռ տեղ են գրավում նաև ածական խոսքի մասով արտահայտված պարագայական անդամները, դերանուններից՝ պարագա են դառնում ցուցականները, հարաբերականները:

Խոսելով մասնավորապես գոյականի մասին, պետք է ասել հետևյալը: Գոյականի հոլովման հարացույցի զրեթի բոլոր անդամները կարող են հանդես գալ պարագայական շարահյուսական գույորդություն մեջ որպես գործողության տեղի, ձևի, ժամանակի, պատճառի, նպատակի, շարժիչ ու քանակի և այլ իմաստներ արտահայտող անդամ: Բացառություն են ուղղականն ու սեռականը, որոնց հոլովական իմաստը կապված է գերադանցապես անվան հետ և ոչ գործողության:

Գոյականի հոլովման հարացույցի բոլոր մնացած անդամները, որոնք կարող են նախադասության մեջ պարագա դառնալ, իրենց հոլովական իմաստների մեջ ունեն նաև գործողության հատկանիշ բնութագրող երանգ. այդ իմաստն է, որ արտահայտության սկզբում դրսևորվում է որպես պարագա անդամ:

Միջին հայերենում նույնպես գործում է այս օրինաչափությունը:

Շարահյուսական իմաստները հաճախ արտահայտվում են կապական կապակցություններով: Սրանք լրացնում են այն բացը, որ ի վիճակի չեն արտահայտելու հոլովները: Կապերի արտահայտած հարաբերությունները ավելի որոշակի են. բայական անդամի և գոյականական անդամի միջև եղած իմաստային ներդրությունները ավելի զատորոշ են արտահայտվում: Դրա համար էլ պարագայական իմաստների արտահայտման մեջ կապական կապակցությունների դերը բավական մեծ է:

Պարագա անդամը արտահայտվում է նաև դերբայական դարձվածներով և զանազան այլ բառակապակցություններով:

Այժմ բերենք տարբեր կարգային արտահայտություն ունեցող պարագաների օրինակներ:

1. Մակբայով՝ Տեսանես, որ շատ տապի և ի դեմ ի դեմ շրջի (ՄԶ, 70), — Զինչ Աստուած է պատրաստել, օր զաւուր ի քեզ հասանի (Ֆր., 42), Բաշխէ դինչ ունիս այսօր (Ն. տ., 43), Պառաջն յիշենք զերկու ազգ փորձողին (ՂԶ, 387), Բլբուլն լայն ռոգումբար (ՀԱԳ, 41), Բաղդաւորն գայ հօնկրտալի (Ն. տ. 6), Եւ յամէն օր սակաւ-սակաւ խմել տուր (ՄԶ, 56):

2. Ածականով՝ Թէ խօսիս քաղցր և անուշ (ԿԵ, 170), Ում որ քաղցր նայես (ՄՆ, 110): Սրտիկս աշերուս ասաց. «Կուրանաս, թէ ծուռ կու խօսիս» (ՆՔ, 60):

3. Դերանունով՝ Աճապ ո՞նց հագավ նա վալա (ՆՔ, 63), Ականջովն հանց բան լսէ (ՀՔ, 192):

4. Գոյականի տարբեր հոլովներով. Գործիական՝ Քանի սիրով դաշերդ ածես (ՀՔ, 125), Ես խօսիմ հոգով (ՀԱԳ, 33), հայցական՝ ես այն հավերուս էի,

32 Վ. Առաւելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 71:

որ գետինն կուտ չուտէի (ՆՔ, 58), Գու զիշեր ու ցերեկ մէջ իմ սրտին նս (ՀԹ, 151), Տանին զերեզման զրնեն (ՀԵ, 156), բացառական՝ Ի քրին շոգույն և ի տափուրեկէ՝ մարմինն շողանայ շոյտ և բրանի (ՄԶ, 132), Զարհուրեցայ ի տեսլեկն (ՀԹ, 149)։

5. Կապական կապակցութիւններով՝ Մանու չսպի աղէկութիւնն արա (ՂԶ, 279), Վասն այնոր ինք թագաւոր, որ համբերէ ի մէջ փշաց (ՀԱԳ, 27), Ինձ չէ պարտ համարձակ՝ նրման եղբոր ի քեզ խօսել (ԿԾ, 182), Կոխ առնէ զլո զԱւալիկ (ՂԶ, 64), Վասն այդ պատնառանացոյ անուանեցին այդ տնուամբող (ՄԶ, 129), Իւր հեռութեան պատնառովն զեղին ումն ի յայն տեղն յուշ կու հասնի (ՂԶ, 390)։

6. Այլ բառակապակցութիւններով՝ Ապա թէ ուրդի որ հիւանդին քիթն կաթնի քան զափսն յաւելի (ՄԶ, 69)։

Մէկն ունի զնոպայն յամէն հինգ օր, և մէկայն՝ զնոպայն յամէն ի վեց օր (Ն. տ., 129), Եւ արա զայդ յաւուրն երկու հեղ (Ն. տ. 42)։

7. Դերբայներով և դերբայական դարձվածներով՝ Աղվոր մի ի գնալ տեսա (ՆՔ, 65), ...Այն դեղին գօրութիւնն կենալովն ներկործէ (ՂԶ, 390), Գայ արտուտիկն կարդալով (ՀԱԳ, 40), Զանձնըդ տվիր վասն օրինաց, Մէն կանգնելով հագրի դիմաց (ՀԹ, 198)։

Միջին հայերենի պարագայական շարահյուսական հարաբերութիւնն արտահայտող գոյգործութիւնն պարագա անդամ բովանդակութիւնն պլանում հանդես է դալիս որպէս ստորոգյալի գործողութիւնն կատարման տեղի, ժամանակի, ձևի, չափի հատկանիշ արտահայտող անդամ, այլև երևոյթներին, առարկաներին միջև եղած պատճառահետևանքային հարաբերութիւնները արտահայտող անդամ։ Վերջին խմբի պարագաների մէջ մտնում են պատճառի, նպատակի, հիմունքի պարագաները։ Այս խմբի պարագաները ունեն այն առանձնահատկութիւնը, որ արտահայտութիւնն պլանում հանդես են գալիս միայն գոյականի կամ գոյականաբար գործածված այլ խոսքի մասերի տարբեր հոլովներով և կապական կապակցութիւններով։ Սրանք մակբայներով չեն կարող արտահայտվել, որովհետև գոյութիւնն չունեն, ասենք, նպատակի մակբայներ, պատճառի մակբայներ և այլն։

Ըստ այն բանի, թե բովանդակութիւնն պլանում ստորոգյալի գործողութիւնն կատարման ինչ հատկանիշ կամ հարաբերութիւնն է ցույց տալիս տվյալ պարագա անդամը, որոշվում է նրա գործառնութիւնը պարագայական գոյգործութիւնն, հետևապէս և նախադասութիւնն մեջ։ Այսպէս՝ ստորոգյալի կատարած գործողութիւնն տեղը ցույց տվող պարագան դառնում է տեղի պարագա, ժամանակը ցույց տվողը՝ ժամանակի պարագա, պատճառը ցույց տվող անդամը՝ պատճառի պարագա։ Այժմ քննենք միջին հայերենի պարագաները։

Ժամանակի պարագա.— Գուց է տալիս գործողութիւնն կատարման րոկիզբը, ընթացքը և ավարտը։ Հետևապէս, ժամանակի պարագաները իմաստային տեսակետից երեք խմբի են բաժանվում. ա) գործողութիւնն սկզբնավորման ժամանակի պարագա, բ) գործողութիւնն կատարման ժամանակի պարագա, գ) գործողութիւնն վախճանի ժամանակի պարագա³³։

Ա. Գործողութիւնն սկզբնավորման ժամանակի պարագան ցույց է տալիս ստորոգյալի արտահայտած գործողութիւնն սկիզբը։ Օրինակ՝ Եւ հետ այնոր գտարութիւն ի դուրս ցուցանէ (ՄԶ, 127), Եւ տալա հետ կերակրին սակաւ ժամ

33 Վ. Առաիկյան, Եզգ. աշխ., էջ 351—352։

անցո (ՂԶ, 160), Բայց թէ յառվօտէն ինչվի ճաշքն լինի ի բուն, այդ պատեհ է (ն. տ. 146):

Վերջին օրինակի մեջ կան զործողությանն և՛ սկզբնավորման, և՛ վախճանի ժամանակակետերը, միասին ցույց են տալիս փաստորեն զործողությանն ամբողջ տեղութիւնը:

Բ. Գործողության կատարման ժամանակի պարագան ցույց է տալիս գործողության կամ եղելության կատարման ժամանակը և չի նշում սկիզբը և ավարտը: Սրինակ՝ Աղվոր մի ի զնալ տեսա (նՔ, 65), Յետոյ զէմ անաէր թողին ու մտան հողն և ի զնտան (ՀԱԳ, 67), Զերմն հանաւազ ի կերած ժամն դա (ՄԶ, 46), Երբ բախտն ընգեր էր՝ մանեցի, Յիմիկ ոյորն յետ կու քակի (ՀԱԳ, 20), Այսօր Էղի պայծառ պարուն, ցնծան ծաղկունք և յորդորին (ն. տ.), Խօզրն ջօհար Լորբ ճանչէ, զօրն ի բուն զաղբրն կու փորէ (ՀԵ, 143), Եւ օր մի և գիշեր մի Էրեք լիտր ջրով թրջէ (ՂԶ, 402):

Գ. Գործողության վախճանի ժամանակի պարագան ցույց է տալիս գործողության ավարտը՝ Սեփեա գրերանն և թող մինչեւ ի քէմուզ ամիսն (ՂԶ, 99), Բայց թէ յառվօտէն ինչվի հաշիւն լինի ի բուն, այդ պատեհ է (ն. տ., 146):

Ժամանակի պարագայի զործառութիւնը հանդես են գալիս միջին հայերենի ժամանակի մակերայները, որոնք իրենց կարգային բովանդակությամբ առավելագույնս կարող են արտահայտել զործողության ժամանակային հատկանիշի իմաստը:

Գործողության սկզբնավորման ժամանակի պարագան միջին հայերենում արտահայտվում է.

ա) ժամանակ ցույց տվող դոյականի բացառական հոլովով՝ Բայց թէ յառվօտէն ինչվի ճաշքն լինի ի բուն, այդ պատեհ է (ՂԶ, 146), Վաղվնէ բնից վեր Էլայ (նՔ, 56):

բ) Առավելապես հետ (=հետո) կապի և դոյականի կամ գոյականաբար զործածված այլ խոսքի մասի կապակցությամբ՝ Ի հետ այնու զտարութիւն ի դուրս ցուցանէ (ՄԶ, 127), Բայց հետ Ելնելոյն Էփ պահ մի կենայ՝ ալլվալր դառնայ ումն և զօրանայ Էրակն (ՂԶ, 99), Եւ հետ կերակրին սակաւ ժամ անցո (ն. տ., 160):

Գործողության կատարման ժամանակի պարագան միջին հայերենում արտահայտվում է.

ա) ժամանակի մակերայով՝ Եւ թէ հիւանդն պահ առ պահ ի նիստ լինի, չէ լաւ նշան (ՂԶ, 146), Եւ երբ յայնժամ դայ անձրեն, որ ազոխն քան պրուշնայ մի լինի՝ նա խիստ օգտէ (ն. տ.), Եւ օր մի Էրկու շաքարով փոխինտ ուտէ (ՄԶ, 25), Երեւէկ Էս անոր կուտամ, որ առեր իւր Էարն է փախեր, Առեր ի պաղշան մտեր, ցորեկով զղնչիկն է պաղեր (նՔ, 50):

բ) Ի նախորդ և գոյականի հայցական հոլովով՝ Ի հիւանդութիւնն կարէ հայնց ահաւոր նշաննի Էրենայ, որ թէ բժիշկն տխմար լինի՝ նա վախէ ի տեսոյն (ՂԶ, 146), Եւ այս վասն սչնր է լաւ, որ ի ձմեռն ջեր լինի և յամառն հով (ն. տ., 100), Ի յաբնմաբն առ պաղ ջուր և ցանեա կոճակին դուռն (ն. տ., 101), Ապա ի շիրն յառաւօտուն առ (ն. տ., 99), Եւ յիրկուն զէմքն առ ցանեա (ն. տ.):

Ժամանակ ցույց տվող բառերը որպէս գործողության կատարման ժամանակ պարագա ձևավորվում են նաև աննախդիր հայցականով, երբեմն դրանց վրա ավելանում է որևէ ընկալան՝ մեծ մասամբ ետադաս շարադասութեամբ:

Օրինակ՝ Եւ զարունն ամենայն մարդոյ յերակ ուժով լինի (ՂԶ, 144), Ապա ղէջն այն է՝ որ ոչ ցորեկն լինի ի քուն, ոչ զիշերն (ն. տ., 146), Եւ օր մի³⁴ և զիշեր մի երեք իտր քրով թրջէ (ն. տ., 402):

գ) Դերբալական դարձվածով, որի կազմում ժամ բառի առկայությունը պարտադիր է: Այսպես՝ Զերմն հանապազ ի կերած ժամն պայ (ՄԶ, 464), Տուր ժմուն... ի բուն լինելու ժամն (ՂԶ, 147), Եւ ևթէ ի կրելոյն ժամն զայ անձրեն, շատ զինի առնէ (ՂԶ, 98):

Կործողության վախճանի ժամանակի պարագան միջին հայերենում արտահայտվում է առավելապես կապական կապակցություններով, զխառնուրդային միջնա (միջնա ի. ինչուր. ինչվի) կապի օգնությամբ: Օրինակ՝

Տուր ինձ զիսայ շաք ղեկանս ինչուի հանչաք մի ժամ (ՂԶ, 217),

Մեփեսա զբերանն և թող մինչև ի րէմուգ ամիսն (ն. տ. 99):

Տեղի պարագա. — Ցույց է տալիս ստորոգյալի գործողության կատարման տեղը: Ստորոգյալ տեղի պարագա շարահյուսական հարաբերությունը արտահայտում է իմաստային մի քանի նրբերանգներ: Տեղի պարագաները կարող են ցույց տալ այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը, այն տեղը, որտեղից սկսվում է գործողությունը, այն տեղը, որտեղով անցնում է գործողությունը, այն տեղը, դեպի ուր ուղղված է գործողությունը: Ըստ այսմ էլ տարբերակվում են բուն տեղի պարագա, ուղեորման տեղի պարագա, անցման տեղի պարագա: Այժմ քննենք սրանք առանձին-առանձին:

1. Բուն տեղի պարագան³⁵, այսինքն այն. որ ցույց է տալիս, թե որտեղ է կատարվում գործողությունը, միջին հայերենում կարող է արտահայտվել.

ա) Մակբայով՝ Անդ նստի մեղուն և ղշուրն առնու (ՂԶ, 100), Պարտ է դիտել, որ զմեղուաց տունն այնպէս շինեւ, որ ի դարունն մինչ արեն ղաթէ՝ նա յինքն դիպի զորդ ընդդէմ (ն. տ.), Եւ վերստին խուփն ընդդէմ դիր (ն. տ., 101), Ով կեչառեցի, մեղօք Անդ շունիս ճար պատճառաւաց (ԽԿ, 161):

Բավական ստվար խումբ են կազմում տեղ ցույց տվող գոյականների նախդրավոր ձևերից առաջացած մակբայներով արտահայտված տեղի պարագաները³⁶: Օրինակ՝ Եւ ժողովի այն պալղամն ի ստամոքսն կամ ցնեւքսն յամենայն երախն (ՄԶ, 88), Այն լաւ է, որ չհալածին ի հեռուն (ՂԶ, 100), Քո ծոցրն է ոսկի սնդուկ, ես ի մէջն դարիպ կաքավուկ (ՆՔ, 119), Թափեմ զարյունըս ի վերայ (ն. տ., 216), Հանն ղյուր կանանչ կապան, լուկ հուգնի զկարմիրն ի վերն (ն. տ., 94), Եւ ասպա բաց զպատուհանք և ղղուռն՝ որ հաւայն մտանէ ի նեւքս (ՂԶ, 102), Պարտ է յառաջնին դարի ցանեւ (ն. տ., 100):

բ) Բուն տեղի պարագան միջին հայերենում արտահայտվում է առավելապես նախդրիվ հայցականով, որ համապատասխան է ներդոյական հոլովի իմաստին: Օրինակ՝ նա պիտի որ առնու զծիթին զամէն աղտն ու ի յատակն նստի (ՂԶ, 99), Զապերն ձայն ածեն յայգին (ՀԹ, 140), Եւ պատեհ է, որ աղուոր սալեր բնտրես և ի ջուրն դնես (ՂԶ, 100), Ապա յառաջ քան որ յաւազանն մտանէ (ՄԶ, 42), Եւ զայն ջուրն յերկու տաշտ սծ (ն. տ., 132), Ես ի բունս ճուղայի (ՆՔ, 101):

Բուն տեղի պարագան կարող է արտահայտվել նաև աննախդիր հայցա-

³⁴ Մի թվականը միջին հայերենում դեռ վերջնականապես չի ձևավորված որպես հոդ:

³⁵ Վ. Առաքելյանի առաջարկած անվանումն է:

³⁶ Տե՛ս II. Անրոսյան, Միջին հայերենի չմեջդող խոսքի մասերը (Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Ա. դիրք, Նրեան, 1972, էջ 424):

կան հոլովով՝ Օրինակ՝ Լեզվակ կա յանոր բերան, որ զաթար ջորին չքաշե (ՆՔ, 255), Թէ հող ձղես՝ յատակն հստի (ԱՕԲ, 93):

Նկատելի է, որ աննախդիր հայցականով բուն տեղի պարագայի կիրառությունը ավելի սակավ է, երբեմն նույնիսկ նույն նախադասության մեջ օգտագործվում է և՛ նախդրով, և՛ աննախդիր հայցականով տեղի պարագա, ինչպես՝ Յետոյ զէմ անտէր թողին ու մտան հսղն և ի զնտան (ՀԱԳ, 67):

դ) Բուն տեղի պարագան միջին հայերենում արտահայտվում է նաև մէջ, առջև, ետև, վրայ (ի վերայ) և այլ կապերի կապակցություններով: Օրինակ՝ Զմէկ առջև հիւանդին դիր, և զմէկայլն յետևն (ՄՀ, 132), Երբ որ լուսն լուսանայր, աշխարհիս վրա ծուռ դայի (ՆՔ, 101), Աշան կանգնեք ի վերայ բերդին. Մտիկ կանէր Յովհաննէսին (ՀԵ, 168), Յիրար խառնէ և ի վերայ կրակին դիր (ՂՀ, 155), Այ իմ նունուֆար ծաղիկ, այդ ջրին մէջն կու կենաս (ՆՔ, 97):

2. Ստորոգյալի կատարած դործողության ելման կետը ցույց տվող տեղի պարագան՝ ելման տեղի պարագան³⁷, միջին հայերենում արտահայտվում է.

ա) Առավելապես տարածական հարաբերությունն արտահայտող գոյականների բացասական հոլովով, որ երբեմն արդեն հանդես է գալիս առանց ի նախդրի: Օրինակ՝ Եղեմական պրախտէն կուգաս (ՀԹ, 119), Ինքն սուրբ մարդ առնու յաղբերէն (ՂՀ, 99), Եւ երբ ելանեն մեղութն ի կոնակէն (Ն. տ., 101), Եւ երբ ելանէ յաւազանէն. օծանէ զմարմինն (Ն. տ., 160), Կոո՛նկ, մեր աշխարհէն գնա՛, հեռացի՛ր (ՀՄԺԵ, 256):

բ) Ելման տեղի պարագան կարող է արտահայտվել նաև գոյականի բացասական հոլով—ի վար բառակապակցությամբ, որ ցույց է տալիս գործողության սկզբնականոր, Օրինակ՝ Ամէնն ևկին լեռնէն ի վար (ՀԹ, 161), Եւ գայրածն խառնուածն ստամո՞ղն ի վար քշէ (ՂՀ, 403):

գ) Ելման տեղի պարագան արտահայտվում է նաև մի շարք տեղի մակբայների միջոցով (ուստի, հեռուստ, ուսկից, ասկից, անկից, աստուստ): Օրինակ՝ Կոո՛նկ, ուստի՛ կու դաս (ՀՄԺԵ, 254):

3. Ուղեորման տեղի պարագան կարող է ձևավորվել ի նախդիր գոյականի հայցական հոլով կապակցությամբ. այստեղ ի նախդիրն ունի ռեկտիվ իմաստը, որն ինքնին ցույց է տալիս ուղեորություն: Օրինակ՝ Գայր ի յայգին ինք զող ի զող (ՂՀ, 65), Սէրն երբ ի յաշխարհս Եկավ... (ՀԱԳ, 143):

Այս տեղի պարագան երբեմն կարող է արտահայտվել տեղի մակբայների միջոցով (ի դուրս, ի ներս, ի բաց, ի վեր, հետի). Օրինակ՝ նա հետի փախչի ի բէն (ԿԵ, 170):

4. Անցման տեղի պարագան, որ ցույց է տալիս տեղ, որի միջով, մոտով, կողքով և այլն կատարվում է գործողությունը, միջին հայերենում արտահայտվում է գոյականի գործիական հոլովով: Օրինակ՝ Մի՛ գալ երկնով. Մի՛ գալ զետևով, Կրտրիճ, Ու մի՛-երկնաւորով (ՀՄԺԵ, 113):

Գործիականի իմաստը կարող է ձևավորվել և վերլուծական եղանակով ընդ նախդրի օգնությամբ: Օրինակ՝ Վա՛շ է ձեզ, որ ընդ նեղ ճանապարհն եկիք (ՎԱ, 231), Տե՛ս, թէ ընդ կապձակն ջուր գայ ի դուրս (ՂՀ, 98):

Ձևի պարագա.—Ցույց է տալիս ստորոգյալի կատարած գործողության ձևը, որակը, հատկանիշը և կարող է ունենալ տարբեր իմաստային երանգ-

37 Վ. Առաքելյանի առաջարկած անվանումն է:

ներս Սրա հետ կապված ձևի պարագան կարող է բազմադան բերականական միջոցներով ու ձևերով արտահայտվել:

ա) Ձևի մակրայով՝ Բլբուլն լայ ողորմարար (ՀԱԳ, 41), Եւ հաւասար էլիք ի տանէն (ՂՀ, 102), Գիշատել (գ)դառինս զալլօրէն սպառնան (ՄՂ, 149), Եւ վերստին խօսին ընդդէմ դիր (ն. տ., 101), Եւ զբերանս ձիւթաւ աղէկ և կալ (ն. տ., 99):

Միջին հայերենում շատ են կրկնավոր կապմոթիւն ունեցող ձևի մակրայով արտահայտված պարագաները: Այսպէս, օրինակ՝ Յորժամ տեսանեն զհիւանդն, որ շուտ-շուտ շարժի (ՄՀ, 132), Եւ այնու ի տրօսանքն քամեա մեղմն՝ Բշիկ-Բշիկ (ՂՀ, 99), Եւ ապա տուր կում-կում, որ խմէ (ՄՀ, 44), Գայր ի յայգին ինք դող ի դող (ՂՀ, 65), Զլաշկիկն բոլ ու մոլ կապեր (նՔ, 111):

բ) Ածականով՝ Բլբուլն... աղաղակէ Բաղդարարբառ (ՀԱԳ, 141), Խե Յովհաննէս Թուրկուրանցին կարն և ողորմ ասաց զայս բան (ՀԹ, 204), Գու ճարտար սրբէ զկոճակն ի ցեցէ... (ՂՀ, 101), Սրտիկս աշերուս ասաց. «Կուրանաս, թէ ծուռ կու խօսիս» (նՔ, 60):

գ) Ձևի պարագան միջին հայերենում կարող է հանդէս գալ նաև դույականի դործիական հոլովով՝ Աղաճութեամբ նա կուրացաւ և մոռացաւ զՏեառն հրաման (ՀԱԳ, 71), Զայն յայն տեղն տանի ումով (ՂՀ, 390), ...Եւ շրնդունի զբեղ սիրով (ԿՍ, 170), Պարտ է... զցան հակառակովն բժշկել (ՂՀ, 389):

Միևնույն բառը դործիական հոլովով կարող է հանդէս գալ մեկ որպէս միջոցի անուղղակի խնդիր, մեկ որպէս ձևի պարագա: Տվյալ բառի նախադասութեան ինչ անդամ լինելը պետք է որոշել միայն հաշվի առնելով կոնտեքստը:

դ) Ցուցական դերանուններով՝ Զամէն մեղրն այնպէս սպառնն (ՂՀ, 101), Հայնց թվենայ թէ ի վէմ հասաւ (ՂՀ, 143), Դիր... զմէկայլն կտորն հետ մէկայլ զհհին հայնց ի մօտ յիրար՝ որ թվենայ թէ ի կից գան (ն. տ., 143):

ե) Ձևի պարագաները արտահայտվում են նաև որպէս, նման, զերդ (զեա. զէդ) կապերի կապակցութիւններով՝ Որպէս մուշկ ու ամբար անուշահոտ ես (ՄՆ, 109), Ոմանք ծաղկին զերդ բուրաստանք զոյն բղղոյնով (ՀԱԳ, 27),

Ուներդ զեաւ Եկեղեցո կամարն ի վեր քաշած է (նՔ, 73),

Ալէխառն մարդոց երակն գէղ մանկան լինի. և ալեորին երակն զէդ տղային լինի (ՂՀ, 114), Գտանես զամէնն մեղուք կոյզ յիրերաց վերայ զերդ իաղող (ն. տ., 102),

Գրեցեր զէտ զգէր զող (ն. տ. 65), Զէտ զկրորնկու վիզն է ի կեռ (ն. տ., 65), Ինձ չէ պարտ համարձակ՝ նրման Եղբօր ի քեզ խօսել (ԿՍ, 182):

զ) Միջին հայերենում ձևի պարագան արտահայտվում է նաև դերբայական դարձվածներով ու դերբայներով: Սրանք, արտահայտելով ստորոգյալին գուպահեռ մի դործողութիւն ևս, փաստորեն որոշում են դործողութեան ձևը: Օրինակ՝ Զանձերդ տուիր վասն օրինաց, Մէն կանգնելով հազրի զիմաց (ՀԹ, 198), Այն զեղին զօրութիւնն կեմալովն ներդործէ (ՂՀ, 390), Դայ արտուտիկն կարգալով. Զառաւօտուն է բարբառել (ՀԱԳ, 40):

Չափի պարագա. — Գործողութեան շարին ու բանակը ցույց տվող պարագան միջին հայերենում կարող է արտահայտվել շարի մակրայներով, թվականի ու դույականի կապակցությամբ:

ա) Զափի մակրայր իր կարգային իմաստով դրեթև ուղղագիծ համապատասխանություն ունի չափի պարագայի իմաստի հետ. դրա համար էլ չափի պարագան արտահայտվում է առավելապես չափի մակրայի միջոցով. այն կարող է արտահայտվել պարզ, կրկնավոր և նույնիսկ մի քանի բաղադրիչ ունեցող նկարագրական մակրայներով: Օրինակ՝ Մեղուն զինքն խլիստ սիրէ, և երբ զինքն ուտէ՝ շատ մեղր շինէ (ՂԶ, 100), Շատ օգտէ զօրութեամբն Աստուծոյ (ԱՕԲ, 66), Եւ այլ քանի մեծնայ՝ կերակուրն յաւիլի տուր (Ն. տ., 67), Գուշակէ որ ցաւն և հիւանդութիւն Բիշ մի ճփել է (Ն. տ., 71), Ապա թէ ուրդի որ հիւանդին քիթն կաթնի Բան զաւսն յաւելի (ՄԶ, 69), Երբ զայդ գիտէիր. զերի, որ քո սէրդ ի սուղ տի փոխի, Զաշխարհս դու մի սիրեր առաւել Բան զկարն աւելի (ՀԱԳ, 67), Ի յամէն շարաթ հազ մի տուր զայդ զեղս (ՂԶ, 147), Երեւ հետ արա այդ նշանօրդ (ՂԶ, 147), Եւ արա զայդ յաւուրն երկու հեղ (ՄԶ, 42):

բ) Միջին հայերենում հաճախակի են այն չափի պարագաները, որոնք կազմվում են ժամանակ ցույց տվող գոյականի և թվականի համադրությամբ: Որինակ՝ Եւ դիր ի չուր և թրջեա երեւ օր (ՂԶ, 98), Եւ կրկին խժկեա և թող տաւն օր (ՂԶ, 102), Առ նոր սերկնի զաղուրն և զխիստ հասունն, և դիր ի տունն ի վայր ԺԴ օր (ՂԶ, 98), Եւ այսպէս թող երեւ շաբաթ (ՂԶ, 102):

Պատճառի պարագան մի լրացում է. որը պատճառ է դառնում ստորոգյալի գործողության կատարմանը: Միջին հայերենում պատճառի պարագան կարող է արտահայտվել գոյականի, դերբայի բացառական հոլովով, կապական կապակցություններով:

ա) Միջին հայերենի պատճառի պարագան հիմնականում արտահայտվում է գոյականի կամ գոյականաբար գործածված այլ խոսքի մասի բացառական հոլովով: Օրինակ՝ Անպատճառ տաքնայ փութսն ի յայն տաւ սղոյն (ՄԶ, 5), Են շատաց հոգի հարբած յաւուշ ճոտոյն յառաօտուն (ՀԱԳ, 29), Հանցեղ հուքմ ու հրաման քեղ ո՞վ տվեալ է, Որ վարդն ի բո սիրոյդ զարի ու զար է (ՄՆ, 108), Յորժամ ցաւն ի յաբենէ և ի սափրայլ լինայ՝ դեղն այս է (ԱՕԲ, 291), Լիզելիք խաշխաշի որ օգտէ հազի որ ի տաբուրենէ լինի (ՂԶ, 402), Զի ի վրտոյն և ի տօրոյն վախէ (Ն. տ., 101), Եւ ի զարկուցն մեռանի (Ն. տ., 102), Ի քրին շոգոյն և ի տաբուրենէ մարմինն շողանայ շոյտ և քրտնի (ՄԶ, 132):

բ) Պատճառի պարագան կարող է արտահայտվել նաև դերբայական դարձվածով, որտեղ դերբայը դրվում է բացառական հոլովով: Օրինակ՝ Եւ ի մեղեւ ուտելոյն կու ծարաւին (ՂԶ, 101), Եւ այն որ ի շատ ուտելոյն լինայ՝ հիւանդէն հարցանես (ԱՕԲ, 323):

գ) Պատճառի պարագան միջին հայերենում արտահայտվում է նաև պատճառ բառի գործիական հոլովով: Օրինակ՝ Եւ ամէն անձն այնով պատճառովն հովնայ (ԱՕԲ, 346), Իւ հեռութեան պատճառովն զեղին ուժն ի յայն տեղն յուշ կու հասնի (ՂԶ, 390):

Նպատակի պարագան դրսևորում է բայի գործողության հետ կապված նպատակային հարաբերություններ: Այս պարագան ևս միջին հայերենում ունի արտահայտման մի քանի ձև: Դրանք են.

ա) ի + Գհայց կաղապարը՝ Երբ ձագն ի կեր զայ (ՂԶ, 101), Վաղվնէ քնից վեր ելա, թէ երթամ իմ յարն ի Բաբել (ՀԱԳ, 142), Եւ հաւերքն, որ պարունն զճորտն հրաւիրէ յընչիկ Բան, կամ ի ծառուրիւն (ՂԶ, 191):

բ) Վասն + Գ սեռ-տր, Դ սեռ և Գ սեռ + համար կաղապարը՝ Վասն այնու ինք թաղաուր որ համբերէ ի մէջ փշաց (ՀԱԳ, 27), Ապա եպիսկոպոսին մեղայ ասէ վասն ճնազանդութեան (ՀՂ, 222), Զայլ աղբսն ցանեն ի վերայ այդոցիկ՝ րանջարի համար (Ն. տ., 106), Յայս ամիսս պարտ է դնել ի սընտուկն և պահել ձմուռն համար (Ն. տ., 106)։

գ) Գոյականի, դերբայի սեռական-արական հոլովաձեւերը՝ Օրինակ՝ ապա թէ չընկերէ ուժն և ժամն, ցուրտ ջուր տուր խմելոյ (ՄՀ, 71), Եւ ջուր հունել ի դետոց ջրելոյ կամ ջաղցրնոց համար, չկարէ ոք արգելուլ (ՍԳԴ, 20)։

Հիմունքի պարագան այն անդամն է, որը ցույց է տալիս առարկա, երեւոյթ, որ հիմք է ծառայում որեւէ դործողութեան կատարման համար։ Հիմունքի պարագան իր իմաստով խիստ մոտենում է պատճառի պարագային։ Պատճառի պարագան ցույց է տալիս այն պատճառը, որի հետեանքով կատարվում է դործողությունը, իսկ հիմունքի պարագան դործողութեան կատարման համար հիմք է հանդիսանում։

Միջին հայերենի պարագաների ձևարանական արտահայտությունը

Հարահյուսական անփոփոխակ	Ձևարանական փոփոխականը
Ժամանակի պարագա	Մ, Դ րաց, Գ հայց ի, միևի + Դ հայց, հետ + Դ րաց
Տեղի պարագա	Մ, Գ հայց, Դ րաց, Դ գործ, մէջ, առջև, ետև, վրայ + Գ սեռ-տր, ի, քնի + Գ հայց
Չեի պարագա	Մ, Ա, Գ գործ, Դա, որովք, զելոյ, (զէտ, զէղ) + Դ հայց, նման + Գ սեռ-ար
Զափի պարագա	Մ, Խ, — Դ հայց
Պատճառի պարագա	Գ րաց, Դր րաց, Դ սեռ-տր + պատճառով
Նպատակի պարագա	Գ, Դա տր, Դր սեռ ի + Դ հայց, վասն, համար + Գ սեռ-տր
Հիմունքի պարագա	րստ + Դ սեռ-տր

Միջին հայերենի շարահյուսական հարաբերությունների կարգային արտահայտությունը

Ծնթականական հարաբերություններ		Որոշային հարաբերություններ	
Գ + Բ	Սէրն — եկաւ	Ա + Գ	Աղուոր մորեիկ
Դ + (Գ + հանգ.)	Աչերդ + ծով են	Գ + Դ	Շաղ ապուր
Գ + (Ա + հանգ.)	Կեանքս — սուտ է	Դր + Գ	Հալեցնող ցերմն
Դ + (Դա + հանգ.)	Նշանն — այն է		
Դ + (Դր + հանգ.)	Պատճառն — բորբոսին է		
Դա + Բ	Դու + դաս		
Դա + (Ա + հանգ.)	Ոմանք + չար են		
Դա + (Գ + հանգ.)	Դու + թագաւոր ես		
Դա + (Դա + հանգ.)	Դու — այլ ես		
Դա + (Դր + հանգ.)	Ինքն + ժանրաբայցող է		
Քնդրային հարաբերություններ		Պարագական հարաբերություններ	
Բ + Գ	Հանանչես + գրարակցաւն	Բ + Գ	Կուղաս + գրախտէն
Բ + Դր	Թողեալ եք + զպատգածն	Բ + Մ	Էայ + ոգորմաբար
Բ + Դա	Տեսաւ ... զքեզ		

Միջին հայերենում հիմունքի պարագան արտահայտվում է հիմնականում բայտ նախդրի և գոյականի սեռական-տրական հոլովի համադրությամբ: Որինակ՝ Եւ է՝ դասք եպիսկոպոսացն են այնոքիկ, որ կաթողիկոսքն են, բայտ սեռովրէից նմանութեան (ՄԳԴ, 41), ...Հետէն աւելցուր ի կաթն բայտ ուժովն հիւանդին (ՂԶ, 160),

...Կարող է հայրն զանհնազանդ որդիսն զրկել և ծառայի տալ բայտ իւր կամաց (ՄԳԴ, 57), Եթէ Լկեղեցականք լինին, նա նոյնպէս բայտ կարգի դատովին, որպէս զրեւ ենք (ն. տ., 47):

ԿՈՉԱԿԱՆՐ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Քերականական ավանդույթ է դարձել կոչականը (ինչպես և միջանկյալ բառերը) դիտել որպես այնպիսի մի բառ կամ բառերի կապակցություն, որը քերականորեն կառաված չէ նախադասության որևէ անդամի հետ, և, հետևապես, նախադասության անդամ չէ: Ռուս լեզվաբան Ֆ. Ի. Բուսլանը, որն առաջին անգամ դործածում է «կոչական» տերմինը, «Ռուսաց լեզվի պատմական քերականության» մեջ³⁸, կոչականը սահմանադատելով նախադասության ղիսավոր և երկրորդական անդամներից, այն դիտում է ոչ թե որպես նախադասության անդամ, այլ որպես «դեմքերի միջև փոխհարաբերությունների արտահայտման» քերականական միջոցներից մեկը՝ շարադասության և շեշտի հետ միասին: Հետադադում նույնպես ռուս քերականները կոչականը նախադասության անդամների շարքից դուրս են բնում: Ա. Մ. Պեշկովսկին, որինակ, կոչականը բնում է այնպիսի բառերի ու բառակապակցությունների մեջ, որոնք չեն կապվում ոչ նախադասության անդամներ, ոչ էլ նրանց մասեր»³⁹, Մ. Արեղյանը նույնպես կոչականը, ինչպես և միջանկյալ բառերը, նախադասության անդամ չի համարում: Նա գրում է. «Միջանկյալ ասվում են այն խոսքերը, որոնք մտնում են ուրիշ խոսքերի մեջ՝ առանց քերականորեն կապակցվելու նրանց հետ»⁴⁰:

Կոչականի կապը նախադասության որևէ անդամի հետ միատեղով, լեզվաբանները ելնում են նախադասության անդամների քերականական կապի երեք տեսակների ըմբռնումից. համաձայնություն, խնդրառություն և առգրություն:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ կոչականը, որպես կանոն, նախադասությունից դուրս և առավել ևս, այն նախադասության հետ կապից դուրս, որի մեջ մտնում է, չի դործածվում: Բառը կոչական կարող է դառնալ միայն այն ժամանակ, երբ նրա և նախադասության մնացած մասի միջև կա ներքին, իմաստային կապ: Եթե կա ներքին, իմաստային կապ, ապա պետք է ենթադրել, որ կա նաև արտաքին՝ քերականական կապ, որը սակայն չի մտնում նախադասության անդամների քերականական կապի ընդունված երեք տեսակների՝ համաձայնության, խնդրառության և առգրության մեջ: Մեղ տրամաբանական է թվում ռուս լեզվաբան Ռուդնեի⁴¹ կարծիքը: Նա, խոսելով

³⁸ Буслаев, Историческая грамматика русского языка, Изд. 1. ч. 1. М., 1875, стр. 209.

³⁹ А. М. Пешковский, Русский синтаксис в научном освещении, Изд. 6. М., 1938, стр. 367.

⁴⁰ Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 608.

⁴¹ А. Г. Руднев, Синтаксис современного русского языка, М., 1968, стр. 177, 211.

կոչականի առանձնահատկությունների մասին, գտնում է, որ ոչ համաձայնություններ, ոչ խնդրառությունը, ոչ էլ առդրությունը քերականական տյն կապերը չեն, որոնցով կոչականը (ինչպես նաև միջանկյալ բառերը) կապվում է նախադասության մյուս անդամների հետ նա այն կարծիքն է հայտնում, որ պետք է ընդլայնել նախադասության անդամների միջև գոյություն ունեցող հարաբերության ըմբռնումը: Ռուզներ առաջարկում է բացի համաձայնություն, խնդրառություն և առդրություն հարաբերություններից ընդունել նաև հարաբերակցում (соотношение) հարաբերությունը: Նա գտնում է, որ կոչականի և նախադասության մնացած մասի միջև առկա է յուրահատուկ բնույթի կապ, որը անվանում է, ինչպես ասացինք, հարաբերակցում կամ հարաբերակցային կապ: Այս դեպքում նախադասության անդամ կհամարվեն նաև կոչականները, միջանկյալ բառերը, որոնք նախադասության մյուս անդամների հետ հարաբերակցային կապի մեջ են:

Կոչականը նախադասության հատուկ անդամ է, որը նախադասության կառուցվածքում հանդես է գալիս գոյականի կամ գոյականացած այլ խոսքի մասի ուղղական հոլովաձևով, ընդգծում է այն դեմքը, առարկան, որին անմիջաբար ուղղված է կամ որին հասցեագրված է խոսքը: Այն շարահյուսական յուրահատուկ միավոր է, որն ունի իրեն հատուկ քերականական իմաստը, յուրօրինակ կապի մեջ է նախադասության մնացած մասի հետ և ունի հատուկ ձևավորում:

Միջին հայերենում կոչականը հանդես է գալիս գոյականի կամ գոյականաբար փերցված այլ խոսքի մասի ուղղական հոլովաձևով: Կոչական հոլովը ղեռ զրաբարում արդեն վերացած էր: Կոչականի հիմնական գործառույթն է գրավել այն դեմքի ուշադրությունը, որին ուղղված է խոսքը: Կոչականը շեշտ է ընդունում: Օրինակ՝ Պարսնա՛յք, իսայ զրաստս իմ է ու կորուսի (ՂԶ, 98), Խո՛ւնչ, դու օտար ես (ՀՄԺԾ, 136), Ասէ գայլն. «Շէն կեցի՛ր, ի՛մ պարոն» (ՂԶ, 329):

Կոչական շարահյուսական միավորը քննելիս ուշադրություն պետք է դարձնել՝ ա) նրա կառուցվածքին և բ) կարգային արտահայտությանը:

1. Միջին հայերենում կոչականը կարող է արտահայտված լինել մեկ բառով՝ միաբառ կոչական, կարող է և մի քանի բառով՝ արտահայտվել՝ ծավալուն կոչական: Միջին հայերենի միաբառ կոչականը արտահայտվում է առավելակա գոյականով, այն կարող է լինել հատուկ, հասարակ, եզակի կամ հոգնակի թվով: Օրինակ՝ Ջրի՛կ, ո՛ր ակնէն կու դաս (ՀՄԺԾ, 155), Լսէ՛ գայլն ընդ աղուէսն. «Ապլահասա՛ն, զայդ խօսակարպութիւնդ ուստի՞ ուսար» (ՂԶ, 328), Երազ է, սուտ, եղբա՛ւք, աշխարհիս բաներն ի լման (ՀՄԺԾ, 67):

Խաչատու՛ր, զարթի՛ր, ի քնոյ (ԽԿ, 147), Չազի՛ւր, ձեր ծնօղն եմ ես, Որ կերթամ այլ ոչ գամ ի տուն (ԽԿ, 146):

Կոչական կարող են դառնալ նաև գոյականացած ածականները: Օրինակ՝ Թո՛ւլ, ամ ի՞նչ ես կորուսեր (ՀՄԺԾ, 135):

2. Խավալում կոչականները լինում են առավելապես երկբառ, ավելի քիչ՝ եռաբառ և ավելի ընդարձակ: Կոչականների ծավալումը տեղի է ունենում գոյականական լրացումների հաշվին, միաբառ կոչական գոյականը լրացվում է կամ որոշիչով, որն արտահայտվում է ածականով, դերբայով, կամ հատկացուցիչով, որը մեծ մասամբ գերանուն է լինում: Լրացում ունեցող կոչականի շեշտը տեղափոխվում է նախադաս լրացման վրա: Օրինակներ՝

Ո՛խ, ի՛մ սլարոն, էյնեկ Չիշխեմ տալ ի քեզ, ա՛յ (ՀՄԺԾ, 141), Գնա՛,

ազատի մանչուկ (ՀՄԺԵ, 136), Ասէ՛ աշխն, «Ո՛վ կի՛ն դու, թէ՛ ասեմ՝ կու՛ մե-
ռանիմ» (ՂԶ, 320), Լսէ՛, զբաղա՛ծ զերեւ, թէ՛ ոչ դու լինիս փոշիման (ԽԵ,
147), Ա՛յ մորն ու բաբակ եւ՛ երկայն, Քո տեսն ի լուսին նրման (ԿԵ, 156)։

Ծավալուն կոշականի կազմում, ինչպես վերևի օրինակներից էլ երևում է, շատ հաճախ առկա է լինում ձայնարկություն, որը կոշականի հնչերանդին տվելացնում է համապատասխան երանգ՝ կախված այն բանից, թե իմաստա-
յին ու ռեալական ինչ դեր ունի այդ կոշականը տվյալ նախադասության մեջ։ Օրինակ՝ Ա՛յ իմ մաբիկ, մի տխմարնար (ՀՄԺԵ, 186), Ասէ՛ ազուէսն՝ բնդ գայլն, «Է՛, գայլ, դիտես թէ՛ դու մէն պիտի կենաս» (ՂԶ, 330),—Մօ՛, Յով-
հաննէկս, ծօ՛, իմ տղայ, Դարձի՛ր ի առն, ասա, «Մեղա՛յ» (ՀՄԺԵ, 185), Է՛ անմիտ մարդ ու յիմար, է՛ր կու՛ մաշիս դսրն ի դուստտ (ԿԵ, 186), Ո՛, վա՛րդ, աղվոր գոյնով ի լի, Ծաղկանց պարծանք ե գովելի (ԿԵ, 133)։

Կոշական հնչերանդը առավել բնորոշ է իր կազմում ձայնարկություն ու-
նեցող ծավալուն կոշականին և միաբառ կոշականներին, մանավանդ երբ
դրանք նախադասության սկզբում են դրված։ Երբ միաբառ կոշականը միջա-
դաս է կամ նախադասության վերջում է դրված, կոշական հնչերանդը մեղ-
մանում է։

Միջին հայերենի կոշականի
կարգային արտահայտությունը

Կ ո չ ա կ ա ն	
Միաբառ	Ծավալուն
Գ	ԱԳ
	Դա Գ
	ԶԳ
	ԶԱԳ
	ԶԴԳ

Կ Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Քննելով միջին հայերենի պարզ նախադասության շարահյուսությունը,
կարելի է անել հետևյալ եզրակացությունները։

Ա. Պարզ նախադասության տեսակների վերաբերյալ.

1. Միջին հայերենին հատուկ են պարզ նախադասության այն տեսակնե-
րը, որոնք կային դրաբարում։ Միջին հայերենում առավել տարածված են
երկկազմ նախադասությունները, այսինքն՝ այն նախադասությունները, ո-
րոնցում առկա են նախադասության երկու կազմակերպող կենտրոններն էլ՝
ենթական և ստորոգյալը։ Սակայն բավական մեծ տարածում ունեն միջին
հայերեն մատենադրության մեջ նաև միակազմ նախադասությունները։ Մի-
ջին հայերենում առկա են բայական և անվանական միակազմ նախադասու-
թյուններ։ Բայական միակազմ նախադասություններից շատ ավելի բնորոշ
են անորոշ-դիմավոր և բնդհանրական-դիմավոր նախադասությունները։ Այս
նախադասությունների զարգացումը դրսևորվում է նրանց գերադաս անդամի
արտահայտման ձևաբանական տարբեր միջոցների հաճախականության փո-
փոխությունը։ Օրինակ՝ անորոշ-դիմավոր միակազմ նախադասության ըղ-

ձական եղանակի 2-րդ դեմքով արտահայտված ղերադաս անդամը, որ միջին հայերենի զարգացման I ենթաշրջանում սակավ դործածական էր, հետզհետե ավելի հաճախագեղ է դառնում: Թեև անդեմ բայական միակազմ նախադասությունները շատ բնորոշ էին գրաբարին, սակայն միջին հայերեն մատենագրության մեջ բայական անդեմ միակազմ նախադասությունները շատ սակավ են, գրեթե չկան: Սրա պատճառը այս տիպի նախադասությունների ոճական կիրառության մեջ է: Նույն պատճառով սակավ կիրառություն ունեն նաև անվանական միակազմ նախադասությունները:

2. Միջին հայերենի համառոտ նախադասություն — ընդարձակ նախադասություն զույգը ոչ մի առանձնահատկություն չունի: Լեզվի տվյալ շրջանի խոսքի մասերի կարգային զուգորդելիությունը բացահայտելու տեսակետից հետաքրքիր են համառոտ նախադասության ընդարձակման միջոցները: Ծնականի խմբի ընդարձակումը տեղի է ունենում անվանական լրացումների հաշվին, որոնք կարող են արտահայտված լինել գոյականով, ածականով, դերանվամբ, թվականով, գերբայով: Բայական ստորոգյալի խումբը ընդարձակվում է խնդիրների և պարսպանների հաշվին, որոնք կարող են արտահայտված լինել մակբայով, գոյականով, ածականով: Անվանական ստորոգյալի ընդարձակումը կախված է ստորոգելիական վերադրի կարգային զուգորդելիության բնույթից:

3. Նախադասության անդամների ղեղշումը շատ բնորոշ է միջին հայերենին: Զեղչվում են թե՛ գլխավոր, թե՛ երկրորդական անդամները:

4. Միջին հայերենում նախադասությունները ըստ բնույթի շորս տիպի են. պատմողական, հարցական, հրամայական, քաջականչական: Նախադասությունների բնույթը որոշելիս շատ կարևոր դեր են խաղում հնչերանգը, գերանունները, ձայնարկությունները:

Բ. Նախադասության անդամների շարահյուսական հարաբերությունների վերաբերյալ.

1. Նախադասության մեջ շարահյուսական հարաբերությունները թե՛ դրաբարում, թե՛ միջին հայերենում և թե՛ ժամանակակից հայերենում ունեն նույն կարգային արտահայտությունը: Խոսքի մասերի զուգորդելիությունը հայոց լեզվի զարգացման բոլոր փուլերում հիմնականում նույնն է:

2. Նախադասության անդամների ձևաբանական արտահայտության մասին կարելի է ասել հետևյալը. միջին հայերենի ձևաբանական մակարդակում տեղի ունեցած փոփոխությունները քնականարար իրենց արտահայտությունն են դտել շարահյուսական մակարդակում: Այսպես՝ նախդիրներով ձևավորվող դրաբարյան հոլովաձևերի կողքին միջին հայերենում առկա են նաև դրանց աննախդիր տարբերակները (օրինակ ի նախդիրով քաջառական, ի, պ նախդիրներով հայցական, ինչպես նաև նույն հոլովները առանց նախդիրների): Սրա հետևանքով այն շարահյուսական միավորները, որոնք արտահայտվում են այդ հոլովներով, միջին հայերենում ունենում են կրկնակ ձևեր՝ նախդրով և աննախդիր: Բացի այդ, դրաբարի համեմատությամբ փոխված են նաև ձևաբանական այլ միավորներ, հոլովական, դիմային վերջավորություններ և այլն, որի համապատասխան և փոխվում է նախադասության անդամների տեսքը: Բառային մակարդակի որոշ փոփոխություններ նույնպես անդրադարձել են նախադասության անդամների արտահայտման ձևի վրա (որոշ

կապերի զործածության ոլորտների նեղացում, նոր կապերի առաջացում և այլն)։

3. Ենթակայական հարաբերության համար քնորոշ է, որ ենթական հիմնականում զրվում է ուղղական հոլովով։ Կրավորական վժանցի հանդես գալով միջին հայերենում արդեն որոշակիորեն տարրերակվում են անցյալ ղերբայի ներգործական և կրավորական ձևերը։ Ուստի, սեռական հոլովով ենթակայի պահանջը լեզվում վերացել է։ Սեռական հոլովով զրվում է կողմնակի ենթական։

4. Որոշչային հարաբերությունը հանդես է բերում հետևյալ առանձնահատկությունները. միջին հայերենում վերացել է դրաբարի համար նորմա հանդիսացող որոշիչ-որոշյալ զույգի համաձայնությունը։ Որոշիչը հիմնականում նախադաս է և չի համաձայնում որոշյալի հետ։ Հատկացուցիչ-հատկացյալի համաձայնությունը նույնպես վերացել է։ Պահպանվել է միայն բացահայտիչ-բացահայտյալ զույգի համաձայնությունը։

5. Խնդիրների և պարագաների ձևաբանական փոփոխակները գրաբարի համեմատությամբ հիմնականում նույնը մնալով հանդերձ, որոշ մասնակի փոփոխությունների են ենթարկվել։ Այդ փոփոխությունները կապված են՝ ա) հոլովների իմաստային տեղաշարժերի և բ) որոշ կապերի անզործածական դառնալու և նոր կապերի հանդես գալու հետ։

Ուրեմն, ձևաբանական և բառական մակարդակում տեղի ունեցած փոփոխությունները փոփոխություններ են առաջ բերել նաև շարահյուսական մակարդակում։ Այս հիմքի վրա էլ առաջացել են միջին հայերենի նախադասության անդամների արտահայտման շարահյուսական զուգահեռները։

Լ. Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԲԱՐԳ ԴԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ԶՈԴԱԽՈՎ ԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԳ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԴԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բարդ ստորադասական նախադասության տեսակների բնությունը կատարվում է ըստ երկրորդական նախադասությունների բնույթի, այսինքն՝ ըստ ղլխավոր նախադասության այն անդամի, որին դրանք փոխարինում են կամ լրացնում. ըստ այդմ կունենանք ենթակա, ստորոգելիական, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, խնդիր և պարագա երկրորդական նախադասություններ:

ԵՆԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԴԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բոլոր բարդ ստորադասական նախադասությունները լեզվի մեջ առհասարակ, և նրա զարգացման տարբեր շրջաններում, միաշափ հաճախականությամբ չեն կիրառվում: Միջին հայերենում ենթակա երկրորդական նախադասությունների գործածությունը սահմանափակ է, մանավանդ՝ երբ դրանք համեմատում ենք որոշիչ և պարագայական նախադասությունների հետ: Ենթակա և ստորոգելիական երկրորդական նախադասությունների ոչ մեծ հաճախականության պատճառը թերևս այն է, որ ենթական ու ստորոգյալը, լինելով նախադասության ղլխավոր անդամներ, նախադասության մեջ հանդիս են դալիս անհրաժեշտության և այլևս դրանք նոր նախադասությամբ արտահայտելու կարիք չի լինում:

Ենթակա երկրորդական նախադասությամբ շարահյուսական կապակցությունը խոսքի մեջ անհրաժեշտ է դառնում, երբ հարկավոր է պարզ նախադասության ենթակայի իմաստն ավելի խորը և շեշտված դարձնել, իսկ այդ արվում է փաստորեն ղլխավոր նախադասության գործողությունն իր վրա կրող առարկան մի նոր գործողությամբ կամ եղելությամբ արտահայտելու, որիչ խոսքով՝ ստորոգային նոր կենտրոն ստեղծելու միջոցով: Այս առումով էլ այսպիսի կապակցությունների համար տարբերակման կարևոր հատկանիշ է ղլխավոր նախադասության կառուցվածքը: Ըստ իրենց ղլխավոր նախադասության բովանդակության ենթակա երկրորդականով ստորադասական նախադասությունները երկու տիպի են լինում: Դրանք կամ փոխարինում

են զլիաժուր նախադասություն ձևական ենթակային, կամ առանձին նախադասությամբ արտահայտում գերադաս նախադասություն մեջ բացակայող ենթական:

1. Առաջին դեպքում զլիաժուր նախադասության մեջ ենթական որևէ ձևով արտահայտված չէ: Օրինակ՝ Եւ որ՝ մտանէր՝ այլ ոչ ելանէր, զի կեր լինէր առիւծուն (ՎԱԱ, 1):

Որ կարէ իմանալ. թող միշտ գոհանայ (ՀԵ, 192), Որ շուտ դայ ի կալն՝ առցլ զցորեանն (ՎԱԱ, 16):

2. Երկրորդ դեպքում բարդ նախադասության գերադաս մասի կազմում լինում է ձևական ենթակա՝ արտահայտված որևէ գերանվամբ: Այդ գերանվան բուն էությունը սակայն բացահայտվում է երկրորդական նախադասության բովանդակությամբ: Օրինակ՝ Ով իմ խըրատիս լըսէ, նա զանազն բարին մառնել (Ֆր., 346), Ով որ օտարին վատ ասէ, նա իմնն այլ դաւիւյ լինենայ (ՀԵ, 154):

Գերադաս բաղադրիչի կազմում ձևական ենթակայի բացակայությամբ ձևավորվող բարդ նախադասությունները միջին հայերենում բաժանվում են կառուցվածքա-իմաստային որոշակի ենթախմբերի:

ա) ենթակա երկրորդական նախադասության ամենագործածական տեսակն այն է, որի զլիաժուր նախադասությունը բաղադրվում է պարտ. պատեն. իրաւունք. անսիւղ (սկանոն, օրենք) բառերով: Օրինակ՝ Եւ թաղաւորաց և մեծունաց պատեն է, որ իմաստուն և ճարտար արուեստաւոր բժիշկ մն ի մօտն պահէ (ԱՕԲ, 17), Եւ պատեն է, որ յիւր հայրենի երկրէն զէզ եղբօր մի կէս բաժին տան իր աժօք... (ՍԳԴ, 16), Սայց չլ իրաւունք. որ զհարսնից ծախքն ի յորդից բաժինն հաշվին... (Ն. տ., 58), Ոչ իրաւունք է, որ ամէն իշխան կարէ սպանութիւն առնել (Ն. տ., 18), Եւ անսիւղ է, որ կոխ բնաւ չկարէ լինալ ի բան, որ բան զմարկ մի արծաթ սպական արմենայ (ՍՍԱ, 59):

Սրանցից պարտ է. պատեն է, ձևերով կառուցվածքները գրաբարի պարտ է + սեռական-տրական հոլովով գոյականի կամ գերանվան մոտ կապակցության և անորոշ գերբայով բաղադրվող կառուցվածքների շարահյուսական համանիշներն են: Տարբերությունն այն է, որ միջին հայերենի այս կառուցվածքները արտահայտվում են բարդ կապակցությամբ, մինչդեռ գրաբարի համապատասխան նախադասության կառուցվածքը պարզ է: Այսպես՝ 1) Ձոր ձեզ պարտ է բնգունել (Ապաթ., 283), ...Ձի նմա միայն պարտ էր լսել և խօսել (Նդհ., 183), Պիտոյ է ինձ յղել զքեզ առ թաղաւորն պարսից (Բյուզ., 4, 305):

2) Նոյնպէս և զնշխարն պատեն է, որ առաջ եպիսկոպոսին տանին, որ խաշ հանէ (ՍԳԴ, 39): Արդ պատեն է, որ իմանայ բժիշկն զայս քերմանս պատճառն (ՄՀ, 2):

Նման շարահյուսական կապակցությունների կառուցվածքին հատկանշական է երկրորդական նախադասության ետադաս շարահասությունը: Օրինակ՝ Ձլ իրաւունք, որ թաղաւորն անպատկ սիրողով կենայ, գի Աստուծոյ և Հայրապետի օրինադրակից է (ՍԳԴ, 17):

բ) ենթակա երկրորդական նախադասությամբ բարդ կապակցություններ

1 Որ-ը այստեղ պետք է բնկայել ով-ի իմաստով, այսպես ելված շարահյուսական հարաբերությունը կփոխվի: Որ մտանէր, այլ ոչ ելանէր, ելանակում է՝ Ով մտնում էր, էլ չէր ելնում:

են անաջատնում նաև Երևայ, ուրղի (սպասանի...), բայի միադիմի բայերով կազմված գլխավոր նախադասությունում: Վերջինս սովորաբար պայմանի հարաբերությամբ միավորված քաղմարտից նախադասություն քաղադրիչ է լինում: Օրինակ՝ Եւ քլ, երևնա, որ կա որ յեղբարց, որ շատ լինի աշխատել և ծառայութիւն արել քան զմեկալն... նա տան և հաճեցնեն զինքն (ՍԳԴ, 43):

Վերոհիշյալ բառերից հատկապես ուրղի բայով արտահայտված գլխավոր նախադասություն ունեցող կապակցությունները հատուկ ոճ են դարձել Սմբատ Սպարապետի (Գունդստարի) «Դատաստանագրքի» և «Անսիգ Անտիոքայ»-ի իրավաբանական բանաձևերը արտահայտելու համար: Սմբատ Սպարապետն իր դրքերի առաջաբանում գրում է, որ իր ցանկությունն է պարզ ու հասկանալի լինել բոլորին: Այդ պատճառով միջնադարի վաղ շրջանի հեղինակներից թերևս ամենից ավելի նա է, որ իր գրվածքներում ոչ միայն ժողովրդին հասկանալի բառապաշար է օգտագործում, այլև խոսքը կառուցում է ժողովրդական խոսքի շարահյուսական ձևերով: Այսպես՝ կատարվելիք հանցանքների, ինչպես նաև առհասարակ իրավական միջամտություն պահանջող որևէ հրետյթի մասին Սմբատը խոսում է ոչ թե բնականորեն, ու վերացարկված ձևով (այդ դեպքում թերևս կօգտագործեր դերբայական դարձվածի շարահյուսական միջոցը): Այլ ենթադրում է հանցանքի կամ դանցանքի բոլոր հնարավոր ձևերը, մեկ-մեկ թվելով դրանք: Այս դեպքում է, որ գործածում է վերոհիշյալ ուրղի: Ինչպես և լինի բայերով կազմվող կառուցվածքները: Հմմտ. Եթև ուրղի, որ իրիք մի շար պատահամբ խարվի և զհաւատ քրիստոնէութեան ուրանայ (ՍԳԴ, 51), Բայց թէ կտրիճին թոս կենայ և ուրղի, որ թոռին հայրն չկենայ, նա թոռունքն ժառանգեն (ն. տ. 58):

Ենթակա երկրորդական նախադասություն քննվող կառուցվածքա-իմաստային խմբի նախադասությունները կապակցվում են ու շաղկապով, իսկ երբ գլխավոր նախադասություն բայն ունենում է թեմական նշանակություն, կապակցություն իրացվում է քլ, շաղկապով: Օրինակ՝ Բայց մեղ կու թուի հանց, թէ դու չես աղուոր դատուոր (ՀԱԳ, 9):

զ) Ենթակա երկրորդական նախադասություններ են ստանում նաև այնպիսի գլխավոր նախադասությունները, որոնց ստորոգյալները, հանդիսանալով մի քանի բայերի եղակի երրորդ դեմքեր, ունեն միադիմի բայերի արժեք: Որպես ստորոգյալ հանդես են գալիս հատկապես կենայ, կայ, լինի բայերը: Օրինակ՝ Եւ ի վկայիցն կենայ, որ կամենայ առնուլ զիր շունչն ու մտել ինքն ի կուի (ՍՍԱ, 29), Եւ թէ լինի, որ գայ այն պոմնին ընդ ներքսէ, նա դարպասն պարտի որ ըզորդ յսէ զպարոնին գանդատն (ն. տ. 15), Եւ թէ լինի, որ ասցել լինայ ու հղել յերկրէն յառաջ քան զպարոնին պանկտէյն, նա պարոնն կամ պայլն դան (ն. տ., 15), Իսկ այլ կան, որ ի ձեռսն լինին և ի յոտսն, դիկայ, որ ի ոտսն ելնէ (Գր., 11): Եւ կայ որ հանց լինայ, որ զիր հօրն և մօրն անունն մոռնայ (ԱՕԲ, 47):

Այս վերջին օրինակներից կարելի է հզրակացնել, թե կա, ու... կապակցությունը կու² մասնիկի նախատիպն է, որ առաջացել է նման վերլուծական

² Կու մասնիկի վերաբերյալ հաւագիտության մեջ տարբեր ենթադրություններ են արվել: Եվլ Ե. ի կողմ թողնենք այն կարծիքները, թե կու-ն առաջացել է քարթվական կոնկա (սկոնա-պիտի) բառից (Արմ. Մուրվալյանի թեր մասնիկը և կր մասնիկավոր բայերի լուրահատուկ ա-

կառուցվածքի նախադասության բաղադրիչների համադրումից. նախ՝ բարդ նախադասությունը վեր է ածվել պարզի, այնուհետև, երբ արդեն ստորոգյումը չի դիտակցվել, մեկ ամբողջություն դարձած այս մասնիկը, դրվելով բայի մոտ, մատնացույց է արել գործողության առկայությունը ներկա կամ ապագայի ժամանակում: Համառ. ...նե կայ՝ որ լինի վասն ստամոքացն (Գր., 51)՝ «և կու լինի վասն ստամոքացն», ...նե կայ որ լինի ի զուգաուր մաղձէ... (Գր., 52)՝ «և կու լինի ի զուգաուր մաղձէ»:

Բերված նախադասությունները ժողովրդական պարզունակ խոսքին հատուկ վերլուծականության արտահայտություն են: Դրանց նման են նաև բժշկադիտական աշխատությունների լեզվի համար բնորոշ ոճական հատկանիշ դարձած այնպիսի բարդ նախադասությունները, որոնց գլխավոր բաղադրիչը կազմված է միայն օժանդակ բայի երրորդ զեմքով: Այս ձևով կազմվող բարդ ստորադասական նախադասություններում միտքը միշտ թերի է, այն հասկացվում է միայն բնագրի համեմատաբար մեծ հատվածի միջոցով: Օրինակ՝ Դե նեղեր շնչական անդամոցն այս են, որ լինին ի թոքն, և ևն որ լինին ի խոչուկին գլուխն, և ևն որ լինին ի յեղէյն թոքացն, և ևն որ լինին ի ներսի մաշկն կողերոյն, և ևն որ պատահին սրտին (Գր., 102):

Այսպիսի նախադասություններ անհամար քանակությամբ հանդիպում են Գրիգորիս բժշկապետի «Քննութիւն բնութեան մարդոյ» աշխատությունում, որի համար այդպիսի գործածությունը դարձել է գործառական ոճի հատկանիշ, Բերենք մի օրինակ ևս՝ Եւ են, որ լինին արտաքոյ պատահմունք, և են, որ ի ներքե մարմնոյն պատահման են (33):

Ինչպիսի տեսնում ենք, այս նախադասության միտքը անհասկանալի է և կարող է ընկալվել միայն նախորդ հատվածի (վերնագրի) շնորհիվ, որ է՝

Դուռն, որ ցուցանէ զարտաքոյ մարմնոյն զազդի ազդի ելունդնին և զանուանա նոցա և զնշանսն:

դ) Իրենց կապակցման հղանակներով և շարադասությամբ հետաքրքրությունն են ներկայացնում ենթակա երկրորդական նախադասություն պարունակող այն բարդ կապակցությունները, որոնցում գլխավոր նախադասությունն անվանական է: Այս նախադասությունները կապակցվում են հարաբերական բառերով, որոնց մի մասը կարծես շաղկապի է վերածվել: Դրանք են՝ ու (ու | ու), զինչ (զինչ | ու), ու: Որինակ՝ Այսօր առ քեզ են հաւասար, զինչ որ մեղ խելք

ոումները հայերենում (հոգվածը) կամ կոչ («ահա») մասնիկից (Մ. Արեղյան. Հայոց լեզվի տեսություն, Երևան. 1931, էջ 327). մեզ հետաքրքրում է այն ընդունված կարծիքը, որ կու-ն համարվում է կա («ահա») և ու բաղադրիչների համադրում (Ա. Այտրեյան. Հ. Աճառյան) կամ կամի (կամի) բայաձևի փոփոխության արդյունք (տե՛ս Ա. Մալգուբյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966): Մեր կարծիքով, կու մասնիկն ունի «կա, գոյություն ունի» նշանակությամբ կա բաղադրիչ (տե՛ս նաև «Անկեարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության մեջ Ս. Անթոսյանի կարծիքը, որը հետաքրքրական է այն առումով, որ նույնպես կու մասնիկի մեջ ընդունում է կա բաղադրիչ և ապացուցում այն կենսարկայի բարրադիր բերված փաստերով). իսկ այն հարցը, թե կա-ն ու-ի, թե ու-ի հետ է միացել, նույնպես որոշում է միջին հայերենի բարդ նախադասությունների շարահյուսության ուսումնասիրությունը, որի ընթացքում հանդիպում ենք վերլուծական ձևերի առատության համադրականի նկատմամբ. ինչպես նաև համադասական ու ստորադասական շաղկապների ֆունկցիոնալ փոխանցումների բազմաթիվ դեպքեր: Վերջիններիս հետեանքով ու շաղկապը կարող է հավասարապես հանդես գալ ու շաղկապի թարմատար նշանակությամբ՝ Ապա քի ու կենս հայրն կենդանի (ՍՍԱ, 39). Դե մի այրն և էթլ կինն ու ու լինի և ունենա որդիք (և. տ., 53):

կայ և բառար (ԿՆ, 132): Ով խելք ունի, մօտ Աստուած է խիստ փառասուրջ (ՀԱԳ, 9), Աշխարհն է ի ծով նման, ով ուր դա՝ անթաղ չմնա (ՀՆ, 152):

Ինչպէս տեսնում ենք, գլխավոր նախադասութիւնն մեջ սրանք հարաբերյալներ չունեն: Կարելի է ենթադրել այսպիսի կապակցութիւնն համար այնպիսի կաղապար, որ իրադրութիւն է նա... ով, նա... ով ուր հարաբերյալ-հարաբերական բառերի միջոցով, բայց հարաբերյալը ղեղձված է: Հմմտ. Որ՛ որ լրսեն այս սղբերոյս, թող բղձեցաց սուգն պահեն (Ֆր., 274):

Հարաբերական բառերով կարող են կապակցվել նաև այն ենթակա երկրորդական նախադասութիւնները, որոնց գլխավոր նախադասութիւնն արտահայտվում է բալական ստորոգյալով: Օրինակ՝ Ով ուր սիրու տեր լինի և սիրուն ճարակ չի լինի, Թող Լրթա փռէ տապան և մտնու մեջն կենդանի (ԵԶ, 62), Ով ուր տեսնու գիմ սիրտս ի բաց՝ թող զայ լրսի, գիմ գանգրտնին (ԿՆ, 144):

Սովորաբար ենթակա երկրորդական նախադասութիւնն կազմում ով, ով ուր. բառերի առկայութիւնն ղեկընդունում գլխավոր նախադասութիւնն ստորոգյալը (տվյալ ղեկընդունում խոսքը միայն ստորոգյալի մասին է, որովհետև ենթական ղեկընդունում է) երրորդ ղեմք է ունենում: Այս առումով հետաքրքրական են այն ղեկընդունող, երբ ստորոգյալը արտահայտված է լինում երկրորդ ղեմքով: Օրինակ՝ Ով ուր հանդիբիք սմայ կարդալով կամ լսելով՝ տաք ողորմի (ՀԱՅ, 6):

Այս նախադասութիւնը կարելի է մեկնել երկու ձևով՝

ա) Ով (ղուր), որ հանդիբիք սմայ կարդալով կամ լսելով՝ տաք ողորմի: Բ) Ի՞նչ, ով (որ) հանդիբիք սմայ կարդալով կամ լսելով՝ տաք ողորմի:

Առաջին ղեկընդունում երկրորդական նախադասութիւնը կդիտվի որպէս բացահայտիչ, իսկ երկրորդ ղեկընդունում՝ ենթակա:

Քանի որ, ինչպէս քիչ հետո կտեսնենք, միջին հայերենը բացահայտիչ երկրորդական նախադասութիւնն արտահայտութիւնն համար մշակել էր որոշակի կայուն կաղապար, որով կազմում էր այդ տիպի բոլոր նախադասութիւնները և որից համարյա չէր շեղվում, ապա վերահիշյալ նախադասութիւնը պետք է համարել ենթակա երկրորդական:

Ով, ով ուր, գինչ, զինչ ուր, ուր բառերով կապակցվող ենթակա երկրորդական նախադասութիւնները ունենում են նախադաս շարադասութիւն, պետք է ենթադրել, որ դրանք ծագմամբ միջադաս են եղել, այսինքն՝ բնկել են գլխավոր նախադասութիւնն մեջ (նա, ով ուր...), քայց հետագայում հարաբերյալի (նա) ղեկընդուն հետեւեցող բնկել են գլխավոր նախադասութիւնից առաջ: Հմմտ. նա, ով ուր ուրիշին չի լսում, կարող է սխալվել: Ով ուր ուրիշին չի լսում, կարող է սխալվել:

Այսպիսի կապակցութիւնն ունեցող ենթակա երկրորդական նախադասութիւնների էտադաս շարադասութիւնն քաղաքիկ ղեկընդուն հանդիպում են բանաստեղծական խոսքի մեջ. այսպէս՝ Զարթիք ի յերազուտ, բացէք զաչերտ, ով կայլ ի լուսն (ՆՇ, 124), Երեսկ հատուն միմեանց՝ որ արժանի եղեն լուսոյն (Ն. տ. 128):

Ինչպէս ասվեց, ենթակա երկրորդականով ստորադասական նախադասութիւնների մյուս կառուցվածքային խումբը կազմում են այնպիսի կապակցութիւնները, որոնց ղեկընդուն մասում առկա է ձեռնական ենթական, որն արտահայտվում է ղեկանմամբ: Իբրև ձեռնական ենթակա գործածվում են նա, այն, այս, ամէն (ամէն) ղեկանունները: Օրինակ՝ Քան զամէնն մեծ է այն, որ աղբատաց բաշխեմ և տամ (Ֆր., 262), Ով իմ խորատիւս լրսէ, նա գանառնց բա-

րին ժառանգել (ն. տ. 346), Զի թեպէտ և յառաջի կանոնքն չկա ալս. որ կարժ վասն անհնապանդութեան թողուլ... (ՍԳԿ, 48):

Այսպիսի կապակցութիւններում գլխավոր և երկրորդական մասերի կապն իրացվում է առաջինում պոյութիւն ունեցող ձեական ենթակայի պահանջով: Այսպէս՝ այն նախադասութիւնները, որոնց գլխավոր բաղադրիչի կազմում ձեական ենթական նա, այն գերանուններն են, կապակցվում են ով, ով որ, ու հարաբերական բառերով: Օրինակ՝ Ու ցանկայ անդէս մեծութեան, նա և դոր ունի՝ զայն ևս կորուսանէ (ՎԱԱ, 55—56), Ով որ օտարին վատ ասէ, նա ինքն այլ դարիս լինենայ (ՀԾ, 154):

Իսկ ամէն (ամէնի) բառերով արտահայտված ձեական ենթակային լրաց-նող ենթակա երկրորդական նախադասութիւններն իրենց գերադասի հետ կապակցվում են զինչ, զինչ որ հարաբերական բառերով: Օրինակ՝ Զինչ իսկի իրք կենայ՝ դարթ ի հայրենեց, կումայ կայուն կամ գնայուն, ամէնն կնկանն լինի սեպհական (ՈՍԱ, 47), Զինչ որ մարդկան խորհուրդ լինի, ամէնն հողմ է և քամի (Ֆր., 288), Զինչ որ սրտին կամք լինենայ, Զայն մարմնոյն խրատ կու տայ (Ֆր., 324):

Ձեական ենթակա ունեցող կապակցութեան մէջ երկրորդական նախադասութիւնները սովորաբար կիրառվում են վերջադաս. Հմմտ. քան պամէնն մեծ է այն, որ աղճատաց լաշխեմ և տամ (Ֆր., 262):

Բայց և պատահում են նախադաս գործածութեան դեպքեր. ինչպէս՝ Ով որ օսարին վատ ասէ, նա ինքն այլ դարիս լինենայ (ՀԾ, 154), և ամէնի սակալ՝ միջադաս՝ Զկա իմ խոցիս հեքիմ, այն որ կա՝ դեզ չի դիտեր (ՆՔ, 45):

Հիշյալ նախադասութեան կառուցվածքը հետաքրքրական է նրանով, որ ցույց է տալիս այս տիպի նախադասութիւնները կապող հարաբերական և հարաբերյալ բառերի ձուլման ընթացքում տեղի ունեցած անցումը: Այստեղ այն-ը որպէս հարաբերյալ և ու-ը որպէս հարաբերական այլևս չեն գիտակցվում, դրանք երկուսը միասին են կատարում իրենց կապակցական դերը: Բայց առհասարակ, երբ ենթակա երկրորդական նախադասութիւնը իր հերթին մի ուրիշ երկրորդական նախադասութիւն է ունենում, մտքի կապն ուժեղացնելու նպատակով գլխավոր նախադասութեան մէջ անձնական գերանունը նույնութեամբ կրկնվում է: Օրինակ՝ Նա, որ ողջացոյց գվէրսն Աղամայ շարշարանօք խաշին իւրոյ, նա ողջացնէ զիս (ԷՄԱ, 213):

Ենթակա երկրորդական նախադասութեան միջադաս լինելու դեպքում ձեական ենթակայի պաշտոնով գերանվան կրկնութիւնը նույնաբանութիւն է, որ խորթ է ժամանակակից հայերենի համար:

ՍՏՈՐՈՂԵՒԱԿԱՆ, ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ, ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ստորոգելիական երկրորդական նախադասութիւնները ևս միջին հայերենում համեմատաբար պակաս հաճախականութեամբ են կիրառվում: Կառուցվածքային ընդհանուր առանձնահատկութիւններով սրանք նման են ժամանակակից հայերենի այդ ընդթի նախադասութիւններին. փոխարինում են զգլխավոր նախադասութեան ձեական ստորոգյալին, կապվում են շաղկապով, հասդաս շարադասութիւն ունեն:

Միջին հայերենում ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասութիւնների ամենագործածական տեսակը այն է, որի գլխավոր նախադասութեան կազմում որպէս ստորոգյալի բաղադրիչ հանդես են գալիս ալս (եր-

բման՝ այսպէս. հայնց). այլ, այն ցուցական դերանունները և օժանդակ բայի երրորդ դեմքը: Վերոհիշյալ դերանունները հենց զխաւոր նախադասութեան ձեական ստորոգյալն են կազմում: Օրինակ՝ Բայց ըզորա՞ գրաստնոյ վաճառն այս է, որ եօթն օր փորձէ, թէ հաճի, նա իր է անդարձ, ու թէ ոչ, նայ յետ տայ (ՍԳԴ, 62), Լաւն այն է, որ զայնպիսի բժիշկն չի տանին առ հիւանդն (ԱՕԲ, 18), Հստուղոսաթն այն է. որ ամեն գործոց հիմն է (ն. տ., 21), Օրինակն այս է. որ թէ զնճուֆրն և իսպիտակ ղեղն և զթանաքն և զոննին յամենէն առնուս մէկ մէկ և զամէնն տրորես (ն. տ., 22), Իւր ստածումն այսպէս է, որ մսով ապուր ուտէ և անուշահոտ զինի խմէ և թերխորով հավկիթ ուտէ (ն. տ. 63), նա պատեհ է և սովորութիւնն հայնց է. որ այնքն որ առջն վճարվի (ՍՍԱ, 41):

Իբր զխաւոր նախադասութեան ձեական ստորոգելիական վերադիրը փոխարինում է ոչ թէ մեկ, այլ մի քանի բուն ստորոգյալների, այն գործածվում է հոգնակի թվով: Այսպիսի ստորադասական նախադասութեան ստորոգյալները սովորաբար միմյանց նկատմամբ ունենում են սրտհման հարսրերութիւն, Օրինակ՝ եւ արատքն այսո՞ւիկ են. որ քշտան լինի կամ հարուն, կամ ավեր ծածկած ի մարմինն (ՍԳԴ, 63):

Սակայն միշտ չէ, որ զխաւոր նախադասութեան ձեական ստորոգյալի վերադիրը հոգնակի թվով է գործածվում, հաճախ ձեական ստորոգյալի և նրա էութիւնը բացահայտող երկրորդական նախադասութիւնների միջև թվական անհամաձայնութիւն է լինում, որ առաջացնում է շարահայտական անկապակցութիւն: Օրինակ՝ Զի որ ի արտաքոյ մարմնոյն պատահէ՞ են այս. որպէս թրին կտրածն, կամ կոտրտածն, և կամ մարդոյ խածած (Գր., 33):

Ստորոգելիական երկրորդական նախադասութեամբ բարդ կապակցութիւնների հետաքրքրական կառուցվածքա-իմաստային ձև նկատվում է Ամիր-յովլաթի Ամասիացու գրվածքների ընդվում. «Անգիտաց անպէտ»-ում հեղինակը, նկարագրելով բուժման նպատակով անհրաժեշտ բույսի կամ կենդանու հատկութիւնները, կարծես շտապում է հայտնել, թե ո՞րն է նրանցից ամենաօգտակարը: Այսպէս՝ բաղադրյալ ստորոգյալի տնվանական բաղադրիչը արտահայտվում է նոր ստորոգմամբ, իսկ նրա տեղում գործածվում է այն ցուցական դերանունը: Օրինակ՝ փոխանակ ասելու՝ լաւը կանաչն է. ասում է՝ լաւը այն է. ուր կանաչ է: Այս առումով հետևյալ տիպի անհամար քանակութեամբ նախադասութիւններ կան՝ Այֆի, որ է քարք ամն, ազդի ազդի կու լինայ, և լաւն այն է, որ էզ լինայ, որ Դ աղւալ ունենայ (100), Բաղուկ... որ լինքն Բ ցեղ է. կարմիր և սպիտակ լինի, լաւն այն է, որ սպիտակ լինի (103):

Ինչպէս տեսնում ենք, պարզ ենթակա-ստորոգյալ կապակցութիւնը (հմտ՝ լաւը սպիտակն է. լաւը էզն է), որ վերածվել է բարդ ստորադասական կառուցվածքի, մի կողմից՝ լինելով վերլուծական մտածողութեան արտահայտութիւն, մյուս կողմից՝ նպատակ ունի շեշտել տվյալ դեպքում առարկայի համար կարևոր այն հատկութիւնը, որ արտահայտված է տնվանական ստորոգյալի միջոցով:

Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասութիւնները միջին հայերենում, ինչպէս տեսանք, կապակցական յուրօրինակութիւն հանդես չեն բերում. զխաւոր ու երկրորդական մասերի կապը իրացվում է ուր շաղկապով, իսկ շարադասութեան առումով երկրորդականը միշտ նտադաս է լինում: Օրինակ՝ Մասրուճունն ասէ, թէ պատեհն այն է, որ ի յամիսն Բ տարպալ վերաբերութիւն այն է (ԱՕԲ, 61):

Միջին հայերենում որոշիչ երկրորդական նախադասությունները ունեն հետևյալ չիմնական կառուցվածքա-իմաստային առանձնահատկությունները. բոլոր շարահյուսական իմաստի նրանք կատարում են նախադասության որևէ գոյականի լրացման գործառույթը, կապակցվում են հարաբերական բառերով և շակապներով, ունեն կայուն շարահյուսություն:

Խոսքի մեջ որոշիչ երկրորդական նախադասությամբ բարդ կապակցությունը առաջանում է պարզ նախադասության որևէ գոյական անդամ առավել մանրամասնությամբ բացահայտելու կամ այդ գոյականին նոր հատկանիշ վերապրելու անհրաժեշտությունից: Պարզ նախադասությունը դառնում է մեկից ավելի ստորոգման կենտրոններ ունեցող բարդ նախադասություն. ընդ որում, այս նոր ստորոգումը առաջանում է մի քանի անմիջական պատճառներով: Սրան համապատասխան առաջանում են որոշիչ երկրորդական նախադասությամբ բարդ կապակցությունների կառուցվածքա-իմաստային տարբեր ձևեր:

ա) Դիտավոր նախադասության մեջ գտնվող որոշյալը լինում է առանց որևէ որոշիչի, և երկրորդական նախադասությունը իր բովանդակությամբ զաղափար է տալիս այդ որոշյալի էական հատկության մասին: Այսպիսի երկրորդական նախադասությունը բուն կամ իսկական որոշիչ երկրորդական նախադասություն է: Որինակ՝ Խլուրդն բնութիւն ունի, որ նաճապաղ զիւղ զետեմն ի վեւ կուտայ (էՄԱ, 11), Գնաց տեսանել զականատս, զոր արկ վասն սագոցն (Ն. տ., 11):

բ) Դիտավոր նախադասության մեջ գոյականը որոշիչ է ունենում. բայց երկրորդական նախադասությունը լրացնում է այդ գոյականը լրացուցիչ հատկանիշներով. այլևայլ կողմերով: Օրինակ՝ Այս կեանքս է մամլոտ պոյեմ, որ ներքև հողին կու փրտի (Յր., 363), Զերթ զոսկի է խալսաւ, որ ալալ շերկի, Զերթ ջօհար ակն է լալ. որ լոյս կու ցարի (ՀԾ, 185):

գ) Որոշիչ երկրորդական նախադասությունը լրացում է դառնում գլխավոր նախադասության կազմում հանդես եկող ձևական որոշիչ պաշտոնով հարաբերյալ բառին: Այդ ձևական որոշիչ (հարաբերյալ բառի) առկայության հետևանքով էլ գլխավոր նախադասությունը իր արտահայտած իմաստով և հնարատաբերությամբ համեմատաբար անավարտ է և կախված երկրորդականից. Օրինակ՝ էնց մարդն, որ երկու խօսի՝ զմեկն քաղցր ու մեկն լեղի. Եղբայր է օձին եղել (ՀԾ, 150):

դ) Որոշիչ երկրորդական նախադասությունը իր բովանդակությամբ գլխավոր նախադասության գոյականին որևէ էական հատկանիշ չի ավելացնում: Ստորադասական մասի առկայությունը իմաստային տեսակետից էական անհրաժեշտություն չէ բարդ կապակցության մեջ. ինտոնացիայով էլ այն աննշան չափով է առանձնանում իր գլխավոր մասից: Օրինակ՝ Փառարանիչ լեզուդ, ու կայ, է՞ր կու մըխիբ շարեաւթ ըզդա (Յր., 323):

Այս կառուցվածքային տիպը, որպես վերլուծական ձև, հայոց լեզվի զարգացման շրջանների մեջ առավել հատուկ է միջին հայերենին:

Որոշիչ երկրորդական նախադասությունների կապակցական ամենագործուն տեսակը քննվող շրջանում որ շաղկապով կառուցվածքն է. միջին հայերենի վաղ շրջանում նկատվող որ հարաբերականի՝ շաղկապի վերափոխվելու միտումն այդ լեզվի հետագա շրջանի համար օրինաչափ է դառնում: Տեսնենք.

թե որտե՞ք են շաղկապային այն գործառական հատկանիշները, որ ձևոք է րկ-
րում ու հարաբերական շաղկապի վերածվելիս. ամենից առաջ, միջին հայե-
րենում ու հարաբերականը՝ կիրառվելով իբրև որոշիչ երկրորդական նախա-
դասությունը գլխավորի հետ կապակցելու միջոց, մեծ մասամբ գործածվում է
միայն եղակի, այսինքն՝ թվով չի համաձայնում իր հարաբերյալին և այն ստո-
րոգյալին, որը պարունակող նախադասության մեջ ինքը հանդես է գալիս: Օրի-
նակ՝ Այժմ պատմեմք զսրպիսութիւն ջերմանն և զիւր զիտութիւն, ու երեք ալդ
են (ԼԲՀ, 74):

Բացի դրանից, ստորագասական նախադասության կազմում ու հարաբե-
րականը հոլովով ևս չի համաձայնում իր ստորոգյալին: Եթե նույնիսկ ըստ րս-
տորոգյալի պահանջի որոշիչ երկրորդական նախադասության ներսում հարա-
բերականը պետք է հոլովվի, այն դարձյալ անհոլով է մնում, և երբեմն նախա-
դասության մեջ հանդես է գալիս մի այլ հոլովված անձնական դերանուն, որ
կատարում է հարաբերականի՝ սպասելի հոլովով ձևի պաշտոնը, իսկ հարա-
բերականը մնում է իր ուղիղ ձևով՝ իբրև կապակցական բառ և ոչ թե որպես
նախադասության անդամ: Գրաբարում ևս այդ երևույթը պատահում է և բն-
դուրեղած է համարել երրայական ոճի արտահայտություն: Սակայն դրաբարի և
միջին հայերենի նույնանման կապակցությունների միջև տարբերությունը քե-
րականական է. դրաբարում հարաբերականը հոլովվում է և երկրորդական նա-
խադասության մեջ հանդես է գալիս իբրև նախադասության անդամ, այսինքն՝
պահպանում է իր գերանվանական նշանակությունը, ինչպես՝ Եհաս նա մինչև
ի ճամբար բանակին Արշակունւոց արքային Մազքթաց, որոյ անուն իւր Սանե-
սան կոչէր (Բյուզ. 14):

Միջին հայերենում հարաբերականը չի հոլովվում, իսկ հոլովական համա-
ձայնության դերը իր վրա վերցրած անձնական դերանունը այլևս քերականա-
կան ավելադրություն չէ, այլ իր գործառույթն ունի: Օրինակ՝ Ի հոն հանցեղ
բաղնիք մի կայր, ու իւր նման իսկի չի կայր (Ֆր., 474), Հանց ցանկութիւն
խափանէ, ու իւր նման իսկի չի կայ (Ֆր., 295), Եւ գտնօղն, ու դրաստն առին
յիւմէ, Երթայ հետ այնոր (ՍՍԱ, 63), Եւ նեղն, ու անուանի նսիան, ասեն իւ-
րեանն մոռաց և յիրմէն րնծայի ճրմութն, ու ասեն իւրն պաղեալ և կամ պաղ-
շեալ (Գր., 3), Վասն ճնուլէզ վաճրակներոյն, ու լինի իրենց սահմանն այսպես
(Այիշան, Սիսուան, 387):

Նույնիսկ այն դեպքում, երբ ու հարաբերականը երկրորդականում պետք
է որ ուղղական հոլովով գրվեր, դարձյալ այն պահպանում է իր շաղկապային
նշանակությունը. նախադասության մեջ հանդես է գալիս ուղիղ հոլովով մի
անձնական դերանուն: Օրինակ՝ Հայելի է պայծառ, ու ժանդ նա շունի (ՀԵ, 185):

Ինչպես ասվեց, որոշիչ երկրորդական նախադասության կապակցությամբ
հանդես է գալիս նաև զուր բառը, որը կարգրել է իր գերանվանական նշանակու-
թյունը: Յ. Կարստը այն համարում է համարանություն (անալոգիա) զինչ-ից՝
Օրինակ՝ Ու այլ վայր այնէ գիր ծառութիւնն, զու պարտենայ (ՍՍԱ, 13):

Սակայն երբեմն այս զուր-ի մեջ պարզ պիտակցվում է զ նախորդի դերը՝
որոշյալության իմաստը, ինչպես՝ նա կարեն դալ ի դարպասն, ու առնուն մէկ
մի յերգվծնոյն՝ զու ի դարպասն կենայ (ՍՍԱ, 51), եթե այս մաղձերս, զու լի-

¹ I Karst. Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901, s. 245.

շեցաք, ի պղծամէ խառնված ունենայ, նայ հետ այս նշանացս, որ յիշեցար, քունդայ և շարժի սիրտն (Գր., 56):

Եվ եթէ միջին հայերենից ավանդված տեքստերում հանդիպում են դեպքեր, երբ զուր-ը որպէս հարաբերական՝ լրիվ համաձայնում է իր որոշյալի հետ, ապա դրանք մաքուր դրաբար արտահայտութիւններ են: Օրինակ՝ Սա վասն ազահութեան, բաղում ժամանակս թաքուցանէր զինչս իւր և զարծաթ, զոր ունէր ժողովեալ (էՄԱ, 14):

Որոշիչ երկրորդական նախադասութիւնների կապակցման դերում կարող են հանդես գալ նաև եւր, ուր բառերը, որոնցով միավորվող նախադասութիւններում երկրորդականի ընդլիթ դժվար է ըմբռնվում, քանի որ այդ բառերի ձևվաբանական դերը հստակ չէ: Ծաղմամբ դերանուններ լինելով, սրանք կարծես ավելի շատ շաղկապային կիրառութիւն ունեն, թէև երբեմն այս բառերի մէջ պարզ դիտակցվում է նրանց իմաստը. այսպես՝ ևւ շաղկապով կապակցովելիս երկրորդականը կարող է նաև ժամանակի երանց ստանալ, իսկ ուր շարկապով կապակցվող երկրորդականը՝ տեղի: Օրինակ՝ Եւ այս և այրիկուննոյն սահմանած յանսիզն, եւր այրն մեռնի ու տղայ չիւնի բերել (ՍՍԱ, 55), Երթայն ի տեղն, ուր խալապայն կենայ, ու հասկնան զերկու զհին խօսքն (ն. տ. 39):

Քննվող շրջանին հատուկ են նաև շաղկապային փոխանցումները, երբ մի շաղկապ գործածվում է մյուսի փոխարեն: Այս առումով հաճախ ուր շաղկապ է կիրառվում այն դեպքում, երբ մեր լեզվի զարգացման ընդհանուր նորմայի տեսակետից դրա անհրաժեշտութիւնը չկա: Օրինակ՝ Եւ երբ փոխեցի ես՝ յուզարկեցի դարձեալ յԱնտաքոյ դարպասն, ուր դիմընդդիմեցին և հաստատեցին իրենց ձեռագրերովն ու վկայութեամբն (ՍՍԱ, 3): Հմմտ. Եւ երբ փոխեցի ես՝ յուզարկեցի դարձեալ յԱնտաքոյ դարպասն, ուր դիմընդդիմեցին և հաստատեցին...

Ուր շաղկապի այս հաճախագեւ պործածութիւնը, որ արդյունք է կապակցման պարզունակութեան, առաջացնում է իմաստային շփոթութիւն, մասերի անտրամաբանական զուգորդում և ոճական ճապաղութիւն: Սա միջին հայերենի կապակցութիւնների նկատելի թերութիւններից է: Իմաստային անհարթութիւն է առաջանում նաև այն դեպքերում, երբ ուր շաղկապը վերոշիշյալ կապակցութիւններում հանդիպելով ու՛ր հարաբերյալին (ենթակա երկրորդական նախադասութիւնների դեպքում) շրջադասվում է: Օրինակ՝

Նա երբ կարէ հանց բան ասել, ու՛ր կարդայ արհնէ ըզնա (Յր., 287): Հմմտ. Նա երբ կարէ հանց բան ասել, ուր ու՛ր կարդայ արհնէ ըզնա:

Որոշիչ երկրորդական նախադասութիւնները կապակցող թվարկված շաղկապներից շատերը հարադրութիւն են կապում ու շաղկապի հետ, որի գործածութիւնը այդ տիպի նախադասութիւններում պայմանավորված է զխաւոր նախադասութեան բառական կազմի արտահայտած իմաստով: Վերջինիս (զխաւոր նախադասութեան) կազմում գտնվող այն որոշյալը, որը ունի որոշիչ երկրորդական նախադասութիւն, եղակի չի լինում, այն երկու կամ ավելի գոյականներով է արտահայտվում: Ընդ որում, ուր ու, զիւն ու հարադրութիւններով կապակցվող որոշիչ երկրորդականը որոշում է զխաւոր նախադասութեան այնպիսի գոյականներ, որոնք իմաստային առումով ինչ-որ տեղ ընդհանրութիւն ունեն: Թերեւս օրինակներ՝ Ապա թե... այն երկու խոսքն մեռնի՝ ու ու լինի, նա բացուան ջալնջելոյն դուռն (ՍՍԱ, 23): Եթէ այրն և եթէ կինն՝ ու ու լինի և ուննան որդիք (ն. տ. 53): Եթէ ոք կորսնէ տաճիկ ձի, կամ իկտի:

կամ չորի. կամ այլ ազդ գրաստ, զին՝ ու լինի, և գտնու զինք հետ մարդոյ որ
ունեայ, նա առնու ու բերէ գունօղն, ի դարպասն (Ն. տ., 63):

Որոշիչ երկրորդականով բարդ ստորագասական նախադասութիւնների
կառուցվածքա-իմաստային հաջորդ խումբը կազմում են այնպիսի կապակցու-
թիւնները, որոնց զլխավոր մասում առկա է ձևական որոշիչ, Այսպիսի նա-
խադասութիւնների համար շարահյուսական կարևոր հատկանիշ է դառնում
զլխավոր մասի բառային կազմի բովանդակութիւնը: Վերջինս ունենում է որոշ-
չի պաշտոնով գործածվող մի բառ՝ սովորաբար ցուցական դերանուն, որը փաս-
տորեն հարաբերյալ է Սա հնչերանգային (ինտոնացիոն) սուպսում և իմաստա-
յին կախվածութիւն է առաջացնում զլխավոր և երկրորդական նախադասու-
թյւնների միջև: Գլխավոր նախադասութիւն կազմում ձևական որոշչի պաշ-
տոնով հանդես եկող բառերը մեծ մասամբ ցուցական դերանուններ են, որոնք
երբեմն բարդանում են կամ հարադրվում որևէ գոյականի հետ: Բերենք օրի-
նակներ:

այս, այդ, այն

Երթանք զայն տեղիքն ուղենք, որ ունինք ումէղ՝ թէ ասորինք (Յր. 348),
եկին ինձ յերազն ասին, թէ այլ խիալդ, որ քեզ կու թուի... ասր զասոր ի քեզ
հասնի (Յր., 348), Թէ որպէս լինի երակացն շարժին ըղեղին ցաւոյն և ի այն
անդամոցն, որ ի յղեղանն ընծային (Գր., 3):

հենց (հէնց), էնց

Դնա ի հանց տեղ բնակէ, որ առանձին դու մեն լինիս (ՀԱԳ 17), Էնց մարդն
որ երկու խօսի՝ զմէկրն քաղցր ու մէկն լէղի, եղբայր է օձին եղև (Հն, 150):

Հանցեղ (ի/լ > հ + այն + ցեղ):

Ես հանցեղ պարոն էի, որ ինձ նման պարոն չի կար (Յր., 475), Պիտեր ինձ
հանցեղ իմաստ, որ զայսօր ճարակն իմանի (Յր., 364):

Այն ցեղ հարադրութիւն համարանութիւնամբ երբեմն պործածվում է նաև
այն ազգ (ցեղ, ազգ նշանակում են՝ «տեսակ») հարաբերյալը՝ Իսկ այն ազգ
ջերմն, որ պատճառն չոր և պինտ անդամունքն լինին, հոռոմն լիսթկօն ասէ
(ՄՀ, 4):

հնցգուն (ի/լ, այնց + գուն, «տեսակ»). սա ևս նույն համարանութիւնամբ է
կազմվել՝ Հնցգուն բար ափով ածես՝ որ չօգնէ հազար ոմբաւոր (ՀԱԳ, 8):

Հանչալ (կազմված է՝ ի (լ + հ) + այն + չալի). այս հարաբերյալով կազմ-
ված որոշիչ երկրորդական նախադասութիւնը որոշում է զլխավոր նախադա-
սութիւնն զոյակներ չափի, բանակի առումով: Օրինակ՝ Եւ թէ շտայ այրիկն հա-
մանք՝ նա ունի կնիկն հանչալ իշխանութիւն, որ բերէ առ ինք աղէկ և հաս-
տատուն վկայնի նի կնիկն հանչալ իշխանութիւն, որ բերէ առ ինք աղէկ և
հաստատուն վկայնի (ՍՍԱ, 53), Ես հիմայ հանչալ մի ժամանակ է, որ կա-
րել ևմ պիրքս ի յիմ ձևուք (ՍՍԱ, 67):

այսպէս, այս հարաբերյալով առաջացող որոշիչ երկրորդական նախադասու-
թիւնամբ կապակցութիւն հատուկ է միջին հայերենի համեմատաբար ուշ շրջանին:
Այսպէս քաւոր ձևական որոշչի դերում հանդիպում է նահապետ Քուշակի տա-
ղերում: Ո՞վ տեսեր այսպէս ֆիղան, որ կուգա սիրու տեր մարդուն (ՆՔ, 56):

Կառուցվածքային առումով հետաքրքրական տիպ են ներկայացնում այն
բարդ նախադասութիւնները, որոնց զլխավոր նախադասութիւնը հարաբերյալ
բառը անցնում է որոշիչ երկրորդականի եզրը և միանալով հարաբերականին,
առաջացնում է բաղադրյալ շաղկապ: Օրինակ՝

և արժան է գիտել, որ մեծ հավատարմություն կայ և կապակցություն, հայնց որ այլ մեծ չկարէ լինել (ՂԶ, 191)։ Հմմտ. Եւ արժան է գիտել, որ հայնց մեծ հաւատարմություն կայ և կապակցություն, որ այլ մեծ չկարէ լինել։

Պետք է նկատել, որ սա գեղես զբարարում նկատվող երևույթ է և կարելի է հանդիպել միջին հայերենի վաղ շրջանում ու այն հեղինակների լեզվում, որոնց համար զրուարը առավել մոտ ու հարազատ է։ Օրինակ՝ Եւ ի սմանէ կադմոս ծրնէալ, Այն որ զԲելայն զալ զեկուցեալ... (ՆՇ, 547)։

Բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող որոշիչ երկրորդական նախադասությունները ղխավոր նախադասության նկատմամբ իմաստային տեսակետից տարրեր որոշչային դեր են կատարում։ Որոշիչ երկրորդական նախադասությունները որոշում են ղխավոր նախադասության ենթական կամ այլ գոյական անդամը, այսինքն՝ նրա խնդիրը, պարսզան, հատկացուցիչը, քացահայտիչը և այլն։ Որոշիչ երկրորդական նախադասությունները, իրեն ընդարձակ ստորոգյած որոշիչներ, հնարավորություն են ընձեռում բնութագրել որոշվող առարկաները, բացահայտել զրանք դանադան հանգամանքներով և նրան շրջապատող առարկաներով, երբեմն էլ այն տեղով ու ժամանակով, որտեղ կամ երբ գտնվում է առարկան։ Իսկ այս բոլորը շատ հաճախ հնարավոր չէ վերագրել որոշչով արտահայտել։ Այդպիսի գործառական կապակցություններ մեծ կիրառություն ունեն միջին հայերենում։ Բերենք օրինակներ՝

ա) Տեղի—Ահա ելնեն գրնան խրնդիր հօրօտ-մօրօտ ու ձոնծաղկին, Ու զրկեն թէզ և ձենեն զուշանն, որ է ի մէջ դաշտին (ԿՆ, 139)։ Զիր տաքութիւնն, որ ի նեխէ պաճած ունէր, ի դուրս հանէ (ՄԶ, 39), Եւ եկի կրօնաւորեցայ աստ, և ևսու զիմ հայրենիք այգին՝ որ առաջի էկղածօրոյ. ի դրատունս Հաղբատայ... (Վիմ. տար., 33)։

բ) Նպատակի⁴—Յորժամ բանաւորական գիճութիւնն հատանի, չկա ճար, որ այն մարմինն զարձեալ յիւր ողջութիւնն զառնայ (ՂԶ, 81), Որ թէ ինք ուզենայ զհամբերութիւնն՝ որ եւրայ սիգեղն ու զպէտֆն քերէ (ՍՍԱ, 43)։

բ) Զաւիի—Երբ առնու արու որդին զիր հասակն, որ է փէ տաւրի. նա այնուհետեւ կարէ տիաթիկ այնել (ՍՍԱ, 51)։

դ) Հետեանքի—Ապա թե ապրի տղայն, նա սովորութիւն է Անտաքու՝ որ պիտի ընկերակից լինի հօրն ի յամեն հայրենեստանն (ՍՍԱ, 47)։

Ինչպես ասվեց, որոշիչ երկրորդականով ստորադասական կապակցությունների համար կառուցվածքային էական հատկանիշ է նաև բարդ նախադասության մասերի շարադասությունը։ Այս առումով քննվող շրջանի լեզուն բնորոշվում է որոշիչ երկրորդական նախադասությունների ետադաս շարադասությամբ։ Երբեմն հանդիպում են միջադաս գործածության զեպքեր, թեև նույնիսկ այդ զեպքում միջադաս համարելը պայմանական է, որովհետև երկրորդական նախադասությունը, ինչպես կետնախնք, միջադաս է լինում ամբողջ ղխավոր նախադասության նկատմամբ։ Բայց փաստորեն հաջորդում է իր լրացյալին։

Երբ ղխավոր նախադասության լրացյալ անդամը շարադասվում է վեր-

⁴ Սրանք նման են պարագայական նախադասություններին և այդպիսին էլ կդիտվեն, եթե երկրորդական նախադասությունը համարենք ոչ թե բաղադրյալ ստորոգյալի միայն անվանական բաղադրիչի լրացում, այլ ամբողջ ստորոգյալի լրացում՝ իր բաղադրիչներով հանդերձ։

ջում, որոշիչ երկրորդական նախադասությունը կանոնավոր կերպով հաջորդում է նրան: Որինակ՝ Եւ այս են նշանք շարժման երակացն վասն նեղերոյն, որ ի յլուղն լինի և կամ ջիլն (Պր., 6), Երանի տամ ևս այն մարդուն, որ լաւին լինեն ունենայի յայն լուսոյն տալօտուն (ԿՅ, 125):

Ի՞նչ գլխավոր նախադասության լրացյալը վերջում չէ, այլ սկզբում կամ միջում, երկրորդական նախադասությունը անմիջապէս հետևում է լրացյալին և դառնում միջադաս: Օրինակ՝ Այն մարդն, որ յինն վատ առնէ, Հանդիպի վատի մի նա այլ (ՀԾ, 156), Խրատա զոր զբեցի, բանք են պիտանի (Ն. տ., 106), Ճանապահ, որ ունիս յառջեւդ՝ հարն խիստ է, գեմ կու լրսես (Ֆր., 392), Նոպատեհ է, որ սովորական իրաններովն, որ ի վանդներոյն մէջն կայ սանմանած, իր ի տեղի բերէ (ՍՍԱ, 85):

Երբեմն որոշիչ երկրորդական նախադասության և գերսդասի կազմում եղած որոշյալի միջն ընկնում են նախադասության ուրիշ անդամներ և լրացյալի ու նրա լրացման՝ որոշիչ երկրորդականի, կապը ընկալվում է մտքով: Օրինակ՝ Սահիպ զիւանին ասենք, որ միլնեց զերկիր նա լուր (Ֆր., 371), Ոչ Լզրայր ու ոչ գո՛ւ ունիմ, Ու աւաղէ, ափսոսայ զիս (Ֆր., 264):

Այս վերջին նախադասությունները, ինչպէս նկատում ենք, տարբերվում են որոշիչ երկրորդականով բարդ կապակցությունների ընդհանուր սխեմայից նրանով, որ եթէ սովորաբար որոշիչ երկրորդական նախադասությունը անմիջապէս է հաջորդում գլխավոր նախադասության մեջ գտնվող իր որոշյալին, ապա այս նախադասություններում գլխավոր մասի որոշող գոյականը մէկ կամ ավելի բառերով առաջ է շարադասվել իր ընդարձակ լրացումից՝ երկրորդական նախադասությունից: Հմտ. Զքտ խրվմեպղ ևս դիտեմ, որ նիկերս ի փոքս Եփեւ է (ՆՔ, 72): Այն դեպքում, երբ լրացյալը շարադասված է նախադասության մէջ, վերջադաս որոշիչ երկրորդական նախադասությունները կապակցման ճշտեյալ յուրահատկությունն են ձեռք բերում. գլխավոր նախադասության մեջ լրացյալի վրա դրվող ձևական գույադիր որոշիչը տեղափոխվում է երկրորդական նախադասության սկիզբը՝ շեշտելու և հիշեցնելու համար որոշիչ կապը իր լրացյալին. այս ձևական գույադիրը, ինչպէս վերը նկատվել է, միանալով ահ հարսերականին, շաղկապային արժեք է ստանում: Որինակ՝ Եւ արժան է գիտել, որ մեծ հաւատարմութիւն կայ և կապակցութիւն, հայնց որ այլ մեծ չկարէ լինել (ՍՍԱ, 2):

ՌԱԳԱՀԱՅՏԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ, ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ

Բացահայտիչ են համարվում այն ստորադասական նախադասությունները, որոնք բացահայտում են գլխավոր նախադասության որեւէ գոյականի ով կամ ինչ լինելու ի տարբերություն գրաքարի և ժամանակակից պրական հայերենի, միջին հայերենում մշակվել է բացահայտիչ երկրորդական նախադասությունների կապակցման մի այնպիսի յուրահատուկ կազմարարային ձև, որի շնորհիվ այդ նախադասությունների ճանաչումը դառնում է դուրին:

Դասական հայերենում բացահայտիչ երկրորդական նախադասությունները կապակցվում էին այսինքն է, այս է, որ է, ասեմ, իմա բառերով: Գրանցիչ միջին հայերենը բացահայտիչ երկրորդական նախադասությունները կապակցելու դերով զործածում է միայն որ է, յուրահատուկ շաղկապական միացությունը: Հմտ.

Եւ նիզակակիցք զօրավարին հայոց, որ էին Բաղրատ Բաղրատունի, Մեհանդակ եւ Գարեգին Ըղըշտունիք եւ Վահան... հասանէին, հարկանէին, սատակէին զօրսն ալանաց (Քյուզ., 17):

Յատուջն այն է, որ գիտենայ զքո հիմն, որ է ըստույզսաբն. որ է հողն եւ քուրն եւ Բամիլն եւ կրակն (ԱՕԲ, 20), Եւ սքթէին՝ որ է խաղղիլ, սաւահին՝ որ է ղիւայնար, իւրեանց բնծայիլն է... (Գր., 61):

Ինչպէս տեսնում ենք, երկրորդական նախադասութեան անվանական ստորոգյալի հանդուցը միշտ կիրառվում է որ շաղկապից անմիջապէս նետո, ստեղծելով յուրահատուկ կադապարային պարտադիր մի կառուցվածք: Իսկ որ քառք բացահայտիչ երկրորդական նախադասութեանները կապակցելիս նույնպէս կորցրել է իր հարաբերական իմաստը եւ լինելին շաղկապական իմաստ ունի. այն հղումով համաձայնում է հազվադէպ, իսկ հոգով երբեք չի համաձայնում: Որ քառի թվական համաձայնութեան օրինակներ, ճիշտ է, ոչ նետեղականորեն, հանդիպում ենք Մխիթար Հերացու երկերում: Օրինակ՝ Իսկ երրորդ բաժինն չոր եւ պինդ անդամունքն են, որք են ոսկերքն եւ ջիւքն, կապքն եւ յարքն եւ այլ զոր նման է սոցա (ՂՀ, 74), Ցիշել կամիմք զչորս նիւթն, որք են արիւնն, պալղամն, մաղձն եւ սատայն (ՄՀ, 14): Բայց՝ Զի բաղնիքն յերեք իրոյ կատարի, որ են որմունքն, ջուրն եւ օդն (ՄՀ, 5):

Ինչպէս տեսնում ենք, հիշյալ հեղինակը այս որ շաղկապը գիտակցում է ռոմանտիկ բայի հետ որպէս մի միասնութիւն, այսինքն՝ նրա բաղադրիչները որպէս առանձին-առանձին միավորներ չի բժրոնում: Որ է քառակապակցութիւնը այնպէս է կայունացել տվյալ շրջանի լեզվական նորմայում, որ երբ անհրաժեշտ է լինում որ-ը համաձայնեցնել զխաղղի նախադասութեան որոշյալ առումով զրված բացահայտյալին, այն դարձյալ անհոգ է կիրառվում: Օրինակ՝ Այլ Գաղիանոս յառաջին մակալաթն, որ է ճառ՝ ասէ (ՄՀ, 4):

Այսպիսով, որ է կապակցութիւնը (որտեղ ռոմանտիկ բայը թվով կարող է փոխվել հանդէս դալով որպէս բացահայտիչ երկրորդական նախադասութեանները կապակցող հիմնական միջոց), գիտակցվում է որպէս մի ամբողջութիւն, որ փոխարինում է ռոր նշանակում է, այսինքն՝ քառերին: Որ է քառերով ստեղծվող կապակցութիւնը ցույց է տալիս, որ բացահայտվող առարկան կամ երեւոյթը իր հատկանիշներով նույնն է երկրորդական նախադասութեամբ արտահայտվածի նետ: Օրինակ՝ Իսկ զլուխն Գ փորվածս ունի, ի միջի փորվածն րղիւղն է, որ է խելքն. որով իմանայ գամենայն (ԱՕԲ, 47), Առիծն եւ գայլն եւ աղուէսն եղեն եղբարք եւ ելեալ յորս՝ եւ գտին խոյ մի եւ ոչխար մի՝ որ է մաւրի եւ զառն մի (ՎԱԼԼ, 20): Ինչպէս տեսնում ենք, «ըզեղն» եւ «խելքը», այլն՝ «ոչխար» եւ «մաքի» նույնիմաստ քառեր են:

Նշված կապակցութեամբ իրացվող բացահայտիչ երկրորդական նախադասութեանները, քացի նույնութեանից, ցույց են տալիս նաեւ նետեղյալ հարաբերութեանները:

ա) Մեկնում են բացահայտյալի իմաստը: Այսպիսի նախադասութեաններն ամենից շատ հանդիպում են գիտական ժանրի ստեղծագործութեաններում, որոնց մեջ հեղինակներն ստիպված են լինում հաճախ բացատրել անհասկանալի տերմիններ: Օրինակ՝ Լատիֆ, որ է Լուրբ. այնոր ասեն, որ դեռ մեր բնական տարրութիւնն ի նա չէ հասել (ԱԼԼԼ, 15), Եւ որ երենայն ի նոցանէ արտաքոյ մարմնոյն այսեր են, որ անուանին ճրտարի, որ է ծաղիկ, ճրտամ, որ է զոլոլոլին. պաշար, որ է պիսակ, պահաղ, որ է փառտաղ սե զոլն, եւ տայ-

յարազ, որ է ազունսգաւ... և այլ, որ լինի ի յերեսն, որում ասեն քրքրի-
որ է ֆերչաձ (Գր. 33—34):

Ինչպես նկատում ենք, վերջին օրինակում հեղինակը օգտագործել է նաև
որում ասեն դրաբարյան ձեր, որ իր ժամանակին ըստ երևույթին արդեն քա-
րացած ձև է եղել: Այսպիսի արտահայտություններն արդյունք են այն բանի,
որ միջնադարյան հեղինակները վերջիվերջո գրաբարով էին կրթություն ստա-
նում և հաճախ էին դիմում գրաբարյան լեզվական ձևերին:

բ) Երկրորդական նախադասության բովանդակությամբ մասնավորեց-
նում, կոնկրետացնում են գլխավոր նախադասության բացահայտչայի արտա-
հայտած իմաստը: Օրինակ՝ Ու գտներսն իրաւունք է, որ ի նահապետութեան
ուն կարգի, որ է, բազաւոր կամ բրինձ կամ մարգիզ կամ այսպիսի (ՍՍԻ,
16):

դ) Բացահայտում են գլխավոր նախադասության գոյականը կազմության
տեսակետից: Օրինակ՝ Դսունայ պուռքն ի ծնողքն, կամ ի բուն ու ի մօտեոր
ազնն պարթև ի պատկեկացն և ի բաղնեց ըռահէն, և յայդ ցեղ սարութենէդ,
որ է, պաղին, սատր, սաւան (ՍՍԱ, 45):

Որպես շարահյուսական վերլուծական ձևի արտահայտություն, երբեմն
այսպիսի կապակցություններում գլխավոր նախադասության բացահայտիչը
լինում է մի գոյական, որն իմաստով հոգնակի է (թեև այդ հոգնակիությունը
կարող է քերականորեն արտահայտված չլինել), և նրա բաղադրիչները բացա-
հայտվում են առանձին-առանձին թվարկման միջոցով: Ընդ որում, երկրորդա-
կան նախադասության ստորոգելիական վերադիրը լինում է ցուցական դերա-
նուն, իսկ բուն բացահայտիչները համաձայնությամբ համապատասխանում
են գլխավոր նախադասության ստորոգչային: Օրինակ՝ Այս Շմաւոնս... որ Երե-
վան այ, որ Գ խանի դուլուդ արաւ, որ է այս՝ նաջաֆղուլի խանին, Աբասղուլի
խանին, Սէֆիդուլի խանին (ԶԱԾ, 80):

դ) Բացահայտում է գոյականի բուն հատկանիշը կամ պարզում նրա ներ-
քին բովանդակությունը: Օրինակ՝ Գրեցաւ գիրս յարքեպիսկոպոսութեան...
առաջնորդի Հաղբատայ, որ է եղբայր Գրիգորի (Վիմ. տար., 28):

Քննվող տիպի երկրորդական նախադասությունները, քնական է, ունենում
են ևտադաս շարադասություն: Դրանք անմիջապես հաջորդում են գլխավոր նա-
խադասության այն բառին, որին լրացնում են. ինչպես՝ Կապիկն որ է ապուզ-
նայն սովորութիւն ունի, որ զինչ և տեսցէ ի մարդն զոր առնէ՝ զնոյն և ինքն
առնէ (ՎԱԱ, 60):

Սակայն հանդիպում են այնպիսի օրինակներ, որոնցում բացահայտիչ
երկրորդական նախադասությունը անմիջապես չի հաջորդում գլխավոր նախա-
դասության բացահայտչային: Այս դպքում ստեղծվում է շարահյուսական սխալ
ոճ՝ մտքի անհետևողականություն: Օրինակ՝ Ասէ Զաքարիայի որդին, թէ
զգործդեղն թնթեցնել և համառոտ այնել կու պիտի, որ է հալիլաւներն, և մա-
հուշակն և վաւղի շաւապն և քալուրն և սապոն, աֆրիմոն... (ԱՕՐ, 63), Եւ
թև վերաբերութեան ղեղ առնես՝ նա քիչ և համառօտ արաւ, որ է սրբնուպին և
լողկի ջուրն և կամ հունդն և որ սոցին նման է (ն. ա., 72): Առաջին օրինա-
կում՝ որ է հալիլաւներն և սապոն, աֆրիմոն բացահայտիչ են զգործդեղն
բացահայտչայի համար, բայց բանի որ նրան անմիջապես չեն հաջորդում, ուս-
տի հաղորդվող միտքը հստակ չի դառնում: Այդպես էլ երկրորդ նախադասու-
թյան մեջ վերաբերութեան ղեղ բացահայտչայի համար բացահայտիչ են վեր-
ջին բնորոշված բառերը:

Քննվող շրջանում հատկացուցիչ երկրորդական նախադասությունը շարահյուսական կառուցվածքների կիրառությունն առանձնապես տարածված չէ։ Շարահյուսական առումով հետաքրքրություն ներկայացնող կառուցվածքային առանձնահատկությունը այսպիսի բարդ կապակցությունների զխավոր մասում հանդես եկող հատկացուցիչ պաշտոնով բառերի կիրառությունն է։

Առհասարակ հատկացուցիչ երկրորդական նախադասության կապակցությունը իրացվում է զխավոր նախադասության կազմում դերանվան միջոցով արտահայտված որևէ ձևական հատկացյալի և երկրորդական նախադասությունը միավորող ով, որ, ում, դինչ հարաբերականների միջոցով։ Գլխավոր նախադասության կազմում հանդես են գալիս տարբեր դերանուններ, ով որ սրտով սեր ունի, իր սրտին երակն է կանանչ (ՆՔ, 38), Յով սէր կա յիբ սըրտին, նա զիս նորա կամօք տանին (ՀԵ, 143), Զինչ աշխարհքս դաշինք ու ուխտ կա դրած, Ամենին կապն տմուր հավատն է դրած (ՀԵ, 197)։

Հաճախ հատկացուցիչ երկրորդականով նախադասությունն իր գերադասմասում ձևական հատկացուցիչ չի ունենում։ Օրինակ՝ Ով որ արտով սեր չունի, սիրտն է սև, Երեսն է կանանչ (ՆՔ, 38)։

Սակայն երբեմն այսպիսի դեպքերում, երբ զխավոր նախադասության մեջ հարաբերյալ բառ չի լինում, նախադասությունը երկիմաստ է դառնում։

Ձայն երախտիքն է՝ր մոռանանք, որ զայս ամէնն մեզ կամեցաւ (Յր. .333)։

Այս նախադասությունը կարելի է մեկնաբանել երկու ձևով։

1. Այն երախտիքը ինչպես մոռանանք, որ այս ամենը մեզ կամեցավ։

2. Ինչպես մոռանանք նրա երախտիքը, որ այս ամենը մեզ կամեցավ։

Պարզ է, որ առաջին իմաստը անհնձեթ է, ճիշտ է երկրորդը։

Նախադասության երկիմաստությանը նպաստել է այն, որ ով կամ որ հարաբերականի փոխարեն գործածված է որ բառը։

Միջին հայերենում հատկացուցիչ երկրորդական նախադասությունները բարդ կապակցության մեջ շարադասվում են երկու դիրքով։ Դրանք կարող են լինել առաջադաս և վերջադաս։ Օրինակ՝ Զինչ սլոռչի ու իւր տաբել լինի առայրիկն, ամենին կէսն այրկանն է (ՍՍԱ, 55), Դու լեր քաւիչ մեղաց նոցա, ու լիւր աղաւթն յիչէ զիս (Յր., 72)։

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն

Ուսումնասիրել բարդ ստորադասական նախադասությունների որևէ կոնկրետ տիպ, նշանակում է ըննել այն քերականական օրինաչափ երևույթները, որոնք տվյալ բարդ նախադասության համար կառուցվածքային նշանակություն ունեն, որպեսզի հստակորեն տարբերակվեն տվյալ կապակցության շարահյուսական փոփոխականներն ու անփոփոխականները։

Ենթակալի լրացում դարձող երկրորդական նախադասությունների ուսումնասիրությունը պայմանավորված է կառուցվածքային այնպիսի տարրերի բնույթով, որոնք հրեման անհրաժեշտ չեն երկրորդական նախադասությունների մյուս՝ ստորոգյալի լրացում դարձող խմբի համար։ Այսպես՝ ԼՔԵ ստո-

րողչալների եղանակային ու ժամանակային հարաբերությունը բարդ նախադասության մեջ կառուցվածքային բնորոշ դիժ չէ ենթակա, բացահայտիչ, որոշիչ երկրորդական նախադասությունների համար, ապա ընդհակառակը, պարզա և մասամբ խնդիր երկրորդական նախադասությունների համար այն կառուցվածքային առանձնահատկություն է։ Այս առումով, ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կառուցվածքային ամբողջությունը պարզմանավորված է՝ ա) գլխավոր նախադասության բայ-ստորոգյալի քերականական իմաստով (դրա մեջ են մտնում եղանակային-ժամանակային հարաբերումն ու բայական սեռը), բ) բարդ ամբողջության կապի իրականացման միջոցներով (շաղկապներ և հարաբերական բառեր), գ) երկրորդական նախադասությունում մեջ հանդես եկող բառային կազմի որոշ տարրերով (հարցական զերանուններ, մակբայները անուղղակի հարցում արտահայտող նախադասություններում) և դ) գլխավոր և երկրորդական մասերի դասավորությամբ։

Այժմ տեսնենք, ինչպես են հանդես գալիս միջին հայերենում ուղիղ խնդիր երկրորդական նախադասության ամբողջությունը կազմող կառուցվածքային հիշյալ առանձնահատկությունները։ Ամենից առաջ, ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կառուցվածքային ձևերի տարբերությունները սերտորեն առնչվում են գլխավոր նախադասության բայ-ստորոգյալի արտահայտած բառական և քերականական իմաստների հետ։ Այս առում էլ միջին հայերենի ուղիղ խնդիր պարունակող բարդ ստորադասական նախադասությունները բաժանում ենք երկու հիմնական՝ հարաբերական և շաղկապական խմբերի։ Խմբավորման ընթացքում նկատվում է հետևյալ օրինաչափությունը. եթե գլխավոր նախադասության ստորոգյալը ֆիզիկական գործողության իմաստ ունեցող ներգործական բայ է, ապա նրա ստորադաս երկրորդական նախադասությունն իր գլխավորին կապվում է հարաբերական բառերով, իսկ այն ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները, որոնց խնդրառու բայը գլխավոր մասում հոգեկան կամ մտավոր գործողության իմաստ ունի, կապակցվում են շաղկապներով։ Հմտ. Ջարկամն դայդ շէր անէր. գինչ որ դուն կանես (ՀԹ, 151), Զինչ գործած մեղք կայր յաշխարհիս, Ամէն զտաւ ստեղծողն առ իս (ՀԱԳ, 15), Այր մի ելալ շրջէր յերկրէ երկիր և զոր ինչ կին ֆէլեր այնէր, դայն գրէր ի թուխթ (ՎԱԱ, 181), եւ յիմացիր. որ պնդերուն ազդ մըն այլ պատմութիւն կայ (ԱԱԱ, 9), Գառն, որ գայլին հետ բաս անի, Տեւ. թէ դայլն օնց ստաւ անի (ՆՀ, 111)։

Ինչպես տեսնում ենք, անել. գտնել. գրել բայերը կապակցվել են հարաբերական բառերով, որոնք իրենց հարաբերյալներն ունեն գլխավոր նախադասության կազմում (զայդ... զինչ. ամեն... զինչ, գայն... գոր ինչ), մինչդեռ իմանալ. տեսնել բայերն ունեցող գլխավոր նախադասությունը խնդիր երկրորդականի հետ միացել է որ. ք. շաղկապներով։ Ընդհանուր առմամբ կանոնից շեղումներ հնարավոր են այնքանով, որքանով բայերի իմաստային տարբերակումը բացարձակ բնույթի չունի (իմաստափոխություններ, փոխաբերական կիրառություններ և այլն)։

Շաղկապական կապակցությամբ իրացվող ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններ. — Սրանք կապակցվում են, որ. ք. երկ. զլ. շաղկապներով։ Եթե քննարկվող բարդ նախադասության գլխավոր մասի ստորոգյալի արտահայտած բառական իմաստով որոշվում են ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների՝ իրենց զերադասի հետ կապակցվելու վերահիշյալ երկու

տեսակները, ապա այդ ստորոգյալի ավելի կոնկրետ բառական իմաստները տարբերակում են կապակցական առավել կոնկրետ ձևեր՝ Այսպես՝ ստորոգյալի իմաստային առանձնահատկությամբ պայմանավորված՝ ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների մի որոշակի խումբ իր գլխավորի հետ կապակցվում է որ շաղկապով, Այս շաղկապն իրենով կապակցվող նախադասությանը տալիս է իրական երանդ, ցույց է տալիս, որ երկրորդական նախադասությունը հաղորդում է որոշակի, անկասկածելի փաստ։ Որ շաղկապով կապակցվում են.

1) Կամքի և ցանկության խնդիր երկրորդական նախադասությունները։ Սրանք խնդրառվում են ուզեմալ, կամիլ, լողով, հրամայել, բույլ տալ և նման բայերով։ Օրինակ. Կու հրամայե՛ք օրէնքն, որ զքահանայի տուն և ապրանք չգնէ այլ ոք (ՄԳԴ, 44), Եթէ Կամիլս, որ յիմանաս զքերմն, թէ ի բորբոսեալ մաղձոյն է, թէ ոչ՝ նշանն այս է... (Գր., 22), Եթէ որ տուն վարձէ տարոյ կամ ամսոյ պոմնով, և վարձվորն այլ կանուխ ուզեմայ, որ Լինէ... նա պատեհ է, որ զիր ամէն վարձն վճարէ (ՍՍԱ, 71), Նամուս-դայրաթի լաւ մարդն այն է, որ զիշերն ի բուն բարակ միտք անէ, Մտքով իր բանն ի դուխ հանէ, Ի ապա թույլ տայ, որ քունն տանէ (ՆՇ, 86), Որդի, դուն իմ աղաչանացն ոչ լսեցիր, խնդրեմ յաստուծոյ, որ յանօրինաց ի ձեռն անկանիս (ԷՄԱ, 79)։

Որ-ով կարող են կապակցվել այնպիսի խնդիր երկրորդական նախադասությունները, որոնց ստորոգյալները արտահայտում են կամական գործողություն։ Հմմտ. Եւ լիճ հորտն պարտի, որ ի յայն օրն երթայ անսղալ (ՍՍԱ, 2)։

2) Որ շաղկապով են կապակցվում գլխավոր նախադասության մեջ իմացական նշանակությամբ բայ-ստորոգյալ պարունակող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները։ Օրինակ՝ Գիտացիր, որ լեզուին բնութիւնն տաք և չոր է (ԱՕԲ, 34), Գիտացիր, որ այս պատճառս շատ գլխացաւութիւն բերէ, և բերայնոյն չորութիւն և ծարաւ (ՄՇ, 7), Աս ամէն ալամ գիտէ որ տղա եմ զքեզ սիրեր (ՆՔ, 47), Դու լաւ իմացիր, որ նա վասվաս է, Մատնիչ Յուդայ է... (ՆՇ, 93), Բէ որ խիզանն դառն և տխուր է, Տես, որ իւր խնդրին փերկէշն ծուռ է (ՆՇ, 84)։

Նկատենք, որ տեսնել բայն այս նախադասության մեջ ունի իմանալ, գիտեմալ նշանակությունը և ոչ ֆիզիկական իմաստ։

3) Որ շաղկապով են կապակցվում նաև զգացական բայերի խնդիր երկրորդական նախադասությունները։ Օրինակ՝ Այա թող տեսնու՛մ, որ թուղթն վստահ լինի ու բղորդ (ՍՍԱ, 39), Լրսես, որ մեծ մարդ ձգել են փառաց, Դու մարդոյ շասես շուտով յիմարաց (ՆՇ, 91), Յայն ժամ ճգնաւորն հայեցաւ որ շատ ծառեր կա ի քարայրին քով, ասաց ծառերուն (ԷՄԱ, 79)։

Վերջին օրինակում հայիմ բայը, որ շեղոք սեռի է, ունի տեսնել համանիշի նշանակությունը, և կամ էլ կարելի է ենթադրել, որ տեսնել բայը զեղշված է։ Այդպես է և հետևյալ օրինակում՝ Աստված, մէկ ի վար հայէ, թէ ինչ ողորմ բաներ կու լինի (ՆՔ, 63)։ Հմմտ. Աստված, մէկ ի վար հայէ, տես, թէ ինչ ողորմ բաներ կու լինի։

Քննվող իմաստային նախադասությունների կարող են և այնպիսին լինել, որ ստորադասական մասի ստորոգյալն արտահայտված լինի ղերբայական ձևով. այսպես՝ Մեկ էլ կու տեսնես, որ նա յետ դառցած, Եւ դայլի նման զքեզ պատառած (ՆՇ, 91)։

4) Որ շաղկապով է կապակցվում ուղիղ խնդիր երկրորդական նախադասությամբ բարդ կապակցությունների իմաստային մի խումբ, որ կարելի է

անվանել տեղեկանքի, վկայության նախադասություններ. դրանցում տեղեկություններ են հաղորդվում որևէ դեպքի կամ իրողության վերաբերյալ: Օրինակ՝ ...և, վկային ՚ի մէկ խօսք վկայեն, որ այսել լինի հիւլայածն ըզսպանութիւնն (ՍՍԱ, 35):

Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կապակցության միջոցներից է նաև քվ. շաղկապը: Այս շաղկապով կապակցվում են.

1) Ամենից առաջ ուրիշի խոսք ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները: Հենց սկզբից նշենք, որ ուրիշի խոսք ասելով հասկանում ենք և՛ ուղղակի, և՛ անուղղակի խոսքեր. քանի որ դրանց շարահյուսման կանոնների մեջ եղած այն տարրերությունները, որ կան ժամանակակից հայերենում, քրն-նրվող շրջանում գոյություն չունեն: Ժամանակակից դրական հայերենում որպես բարդ նախադասության ստորադասական բաղադրիչ ուրիշի անուղղակի խոսքը ավելի սերտ է ձուլված բարդ ամբողջության մեջ, քան ուղղակի խոսքը, որովհետև առաջինը հեղինակային խոսք—գլխավոր նախադասության հետ կապվում է հնչերանգով և շաղկապով. իսկ երկրորդը՝ ուղղակի խոսքը, առավել ինքնուրույնություն ունի, և երբեմն լիովին հնարավոր է լինում առանձին նախադասություն համարել: Սա այսպես է ժամանակակից հայերենի համար: Սակայն ուրիշի անուղղակի խոսքը միջին հայերենում քերականորեն պահպանում է ուղղակի խոսքի հատկանիշները, այլ կերպ ասած՝ ուրիշի ուղղակի խոսքը անուղղակի հաղորդման քերականական ձև չունի: Ուրիշի խոսքի ուղղակի հաղորդման ձևը (բայ-ստորոգյալների և դժբանությունների զեմբերի՝ ուղղակի խոսքին բնորոշ հարաբերումը հաղորդող անձի խոսքին), ավելի սերտ ամբողջություն է առաջացնում երկրորդական և ղերադաս նախադասության՝ հեղինակային խոսքի միջև: Օրինակ՝ Հազար մարդ կռվին, կրակ տան դուռն... Մէկն էլ չի ասեր, թէ ես եմ ծուռն (ՆՀ, 84), Այլ Գաղիանոս վասն երեք ուղղ քերմերոյն դիրքն, յառաջին մականաղաթն՝ որ է ճառ՝ ասել. երեք աղէկ իմացիւր և միտ առ, յորժամ առնուս քերմն ջուր և աւելանես ի հով պուտուկ, անպատեհառ տաճնայ (ՄՀ, 4):

Ուրիշի խոսք-ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների խնդրառուն գլխավոր նախադասության մեջ լինում է որևէ ասացական բայ, ինչպես օրինակ՝ ասել, պատմել, պատասխանել, բարբառել, ավետել, վրդել, ձայնել, աղաչել, պատմել, գոչել, կանչել, հառաչել, հարցնել և այլն:

Թե՛ ով կապակցվում են նաև այն ուրիշի ուղղակի խոսքը վերաբառադրող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները, որոնց գլխավոր մասում ասացական բայը զեղչված է: Օրինակ՝ Ի չորեք դին աշվին շուռ տայ, Թէ մեծ գաւաթն երր տո իս գայ (ՄՂ, 98): Հմմտ. Ի չորեք դին աշվին շուռ տայ, ասէ թէ մեծ գաւաթն երբ առ իս գայ: Առէք զիս յիմ յարն տարէք, թէ հազար կողերս է յոսած, Զերևսս երեսին դնեմ և երդնում, քէ տեղ չի ցաւաց (ՆՔ, 41), Զերայ վարդապետն Մեկբումն ուղեր, զաշտեցիք Մեկբումն ուղին ոչ, քէ՝ մեք Մեկբումն ուղում չէնք, դու էլ ուղիլ մի (ԶԱՅ, 77), Իմ եխպայր Սիմոն է ուղարկել, քն ալ եխպայր Զաքարիայ, հալրաթէ շուտ եկ, որ բան ունիմ (Ն. տ. 70):

2) Այն ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները, որոնց գլխավոր մասում ստորոգյալը արտահայտված է լինում ժխտական ձևով: Օրինակ՝ Զեն խոնարհիլ, որ տան թասն, Զեն դիտել, քէ զինչ է մասն (ՆՀ, 120), Զինքեանս բարերարոյս կարծեն և ոչ դիտեն, քէ ինքեանք են պատեհառ վատութեան իւրեանց (ԷՄԱ, 19):

3) Այն ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են հարցում: Այս նախադասությունների համար կառուցվածքային հատկանիշ է երկրորդական մասում հարցական ու հարաբերական դերանունների կամ մակրայների առկայությունը: 'Իրանք են՝ զինչ, ուր, որչափ, ուստի, ով, որ, ով: Օրինակ՝ Տե՛ս զԿայեն եղբայրաստան, Թէ զինչ գործեաց, որ չէր արժան (ՄՆ, 14), Զմիտրդ արթուն կալ ըննէ, Թ՛ ուր ևս դնալու (ՄՆ, 6):

4) Այն կառուցվածքները, որոնցում արտահայտված գործողությունը իրականում չի կատարվում, նրա իրագործումը կախված է ինչ-որ պայմաններից: Այդպիսի նախադասությունների իմաստը բխում է ընադրի նախորդ մասից: Դրանցում կամ ապացուցվում է մի բան, ինչպես՝ Ապա եկեղեցովն կարէ կեցցենել, թէ այր չէ, և առնէ աղատության թուղթ և այնով ամուսնանալ կարէ (ՍԳԴ, 54), և կամ եղրակացություն է արվում: Այսպիսին են մեծ մասամբ վարդան Այգեկցու առակների վերջում հանդես եկող խրատական բնույթի նախադասությունները: Յուցանէ առակս՝ քէ որ զրկէ զմարդն յանմեղուց՝ զմեղրն՝ ի հետ զրկանացն լինքն առնու (ՎԱԱ, 6), Յուցանէ առակս, քէ մահու չափ ճգնէ նմա, որ յառաջն քեզ բարի արար (ՎԱԱ, 46):

Ինչպես հայտնի է, Այգեկցին այսպիսի նախադասությունների միջոցով խորհրդանշական կերպով ամփոփում է առակի հիմնական գաղափարները: Համառ. Յուցանէ առակս՝ քէ առիժն մահն է, և քարայրն զերեզմանն է (ՎԱԱ, 4):

Այսպիսով, ուր և քէ շաղկապներով կապակցվող ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններում շաղկապի ընտրությունը կամայական չէ. այն պայմանավորված է նախադասությունների կառուցվածքային ու իմաստային հատկանիշներով: Եվ երբեմն հենց նույն տիպի նախադասություններում շաղկապի ընտրությունը ցույց է տալիս հնդինակի վերաբերմունքը իր հաղորդած մտքի իսկություն նկատմամբ:

Վերլուծենք հետևյալ նախադասությունը: Հրամայէ աստուածային օրենքըս, որ այրն գլուխ է կնոջն (ՍԳԴ, 47):

Սմբատ Սպարապետը, շարադրելով օրենքի պահանջը, միաժամանակ ցույց է տալիս իր վերաբերմունքը՝ հրամանը փոփոխության ենթակա չէ, ինքն էլ այդ նույն կարծիքին է: Խոսքի այդ հաստատական բնույթը նա շեշտում է ու շաղկապի միջոցով: Այս առումով շատ հետաքրքրական է և հետևյալ օրինակը. Եւ թէ այլ ասէ զեռ, քէ հիւանդ եմ. նայ զրկէ զարուսան երկու լիճ ճորտ այլ՝ որ երթան առ ինք ու տանին բժիշկ մի... և ասէ այն երդմամբն՝ որ ցաւ ունի, նա եղաւ ի ժամն (ՍՍԱ, 25):

Դժվար չէ նկատել, որ առաջին նախադասությունը, որ քէ-ով է կապակցվել (քէ հիւանդ եմ), կասկածանքի երանգ ունի. զեռես պարզ չէ. թե ճորտի ասածը իրականության համապատասխան է, թե՛ ոչ, մինչդեռ երկրորդ ուղիղ խնդիր ստորադաս նախադասությունը (որ ցաւ ունի), որ կապակցվել է ու-ով, արտահայտում է այնպիսի եղելություն, որը հաստատվում է որպես ճշմարտություն:

Այս առումով քէ-ի փոխարեն ու շաղկապով կարող են կապակցվել այնպիսի նախադասությունները, որոնք բերականական-շարահյուսական ձևավորման տեսակետից ուրիշի խոսք-ուղիղ խնդիր նախադասության տեսք ունեն, սակայն իմաստային առումով արտահայտում են գոյություն չունեցող գոր-

ծագություններ կամ հղելություններ. Օրինակ՝ Տէրտէր, բնդ ով ասաց հայալ, մե ինձ գրեւ շոյլ-պոյլ (ՆՇ, 115)։

Նաղաշ Հովնաթանը երգծական այս ոտանավորում բոլորովին էլ տերտե-
րին հղելով ուրիշի խոսքը չի հաղորդում։ Դա ժամանակակից հայերենում ևս
գոյութուն ունեցող ճարտասանական հարցի ոճով ձևակերպված նախադասու-
թյուն է, ինչպես օրինակ՝ Ֆեզ ով ասաց, որ զնաս այնտեղ, և ցույց է տալիս
հեղինակի բացասական վերաբերմունքը երկրորդական նախադասությամբ
արտահայտված գործողության նկատմամբ։

Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները միջին հայերենում
կապակցվում են նաև երբ շաղկապով Այս շաղկապն առանձին իմաստ չի հա-
ղորդում ավելի կապակցությունը, այլ փոխարինում է րէ-ին, առանց իմաս-
տային տարբերություն առաջացնելու։ Դեռևս գրաբարում րէ և երբ շաղկապ-
ներն իրենց շարահյուսական դերով ունենին զուգահեռ գործածություն։

Միջին հայերենում րէ կամ երբ շաղկապներով կապակցությունները կա-
ռուցվածքա-իմաստային առումով տարբերություն չունենալով հանդերձ, հե-
ղինակների ոճական նախասիրությունը որոշող գործոն են դառնում։ Այսպես՝
երբ (Եթե) գործածում են հիմնականում գրաբարախոն լեզվով գրող հեղի-
նակները, իսկ րէ-ն՝ ժամանակի բանավոր խոսակցական ոճին տուրք տվող
հեղինակները։

Երբ շաղկապով կապակցվող ուղիղ խնդիր երկրորդական նախադասու-
թյուններ ամենից շատ հանդիպում են Մխիթար Հերացու ստեղծագործության
մեջ։ Օրինակ՝ Արդ սկիզբն առնեմ օգնութեամբն աստուծոյ և ասեմ կարճառօտ,
երբ ուստից բնծայի ջերմն (ՄՀ, 6)։ Քանզի ասացին բնութանց իմաստա-
սէրքն, երբ կենդանի մի կայ ի ծովն, ի յորում ատուր բնծայի, ի նմին ատուր
մեռանի (Ն. տ., 7)։ Ապա պատեմ է հարցանել զհիւանդն և զիտենալ, երբ ի
յայս պատճառանացդ, զոր յիշեցաք, յօրոյ եղաւ ջերմն (Ն. տ., 15)։

Իհարկե, սխալ կլինի նգրակացնել, թե միջնադարյան որոշ հեղինակներ
բոլորովին էլն գործածում երբ շաղկապը։ Այնպիսի ստեղծագործություն, ինչ-
պիսին է «Անսիգ Անտիոքայ»-ն, որն իր բառապաշարով ու ոճով այնքան տար-
բերվում է ներսես Շնորհալու կամ Մխիթար Հերացու ստեղծագործություննե-
րից, սկսվում է հետևյալ նախադասությամբ. «Յառաջ պարտ և արժան է զի-
տել, երբ ի նշ կապակցություն կայ բնդ պարոնն և բնդ լիճ ճորտն» (ՍՍԱ, 2)։

Սակայն պարզ է, որ երբ-ն այս հեղինակի համար լեզվական սովորու-
թյան կամ նմանվելու ձգտման արդյունք է և հազվագյուտ կիրառություն ունի
բուն ստեղծագործության մեջ։

Միջին հայերեն բնագրերում հանդիպում են նաև ուղիղ խնդիր երկրոր-
դական նախադասությունների զի շաղկապով կապակցություններ, քայց սրանք
մաքուր գրաբարյան արտահայտություններ են։ Ար-ն դրանցում ունի «ինչ-
պես», «թե ինչպես» նշանակությունը որով նախադասության արտահայտած
գործողությունը ձևորդ է բերում նկարագրական, շարունակական իմաստ։ Օրին-
ակ՝ Տեսանէք աչօք ձերովք, զի մեծատունք ի ձեռն մշակաց գործեն դայգի և
զդրախտ (էՄԱ, 10)։ Եւ զի լսէր, զի աղքատն այն նստեալ առ թոնիր ուրախա-
նայր բնդ որդիս իւր... (Ն. տ., 18)։

Շաղկապական կապակցությամբ իրացվող ուղիղ խնդիր ստորադասական
նախադասությունները միջին հայերենում ունենում են ետադաս շարադասու-
թյուն։ Օրինակ՝ Կարդալով իմացաւ, որ աշխարհս անցաւոր է և յետքն մեռնիլ

(ԷՄԱ, 79), Ասէ Զաքարիային որդին, քլ. ով որ ուզէ որ հետոս հաճապարհ եւրայ՝ կու պիտի որ յառաջն դանձն յատկէ ի լաւելիւածոց խառնութէ (ԱՕԲ, 65), Տէր Անդրիասենց Սահակ կտրի կուզէ, որ ղասն զուրաւնով վարի (ՆԶ, 116):

Երբեմն երկրորդական նախադասութիւն չաջորդումը գլխավորին միջնորդավորվում է մի ուրիշ նախադասութիւնով: Օրինակ՝ Սուտ կասես, որ վասսարտիս ջուր մաղէ, Խէ իմ թշնամին՝ Բաղդաժ ղուքսաղ է (ՆԶ, 91):

Ինչպէս տեսնում ենք, գլխավոր և երկրորդական նախադասութիւնների միջև ընկել է մի երրորդ՝ նպատակի պարագայական նախադասութիւն (ու վստ սրախս ջուր մաղէ): Շարադասութիւն աշտպիսի խախտումների ժամանակ, երբ երկրորդական նախադասութիւնը շարադասվում է գլխավորի մեջ և կամ էլ գլխավորն է պարտուվում երկրորդականով, առաջանում է խոսակցական ոճին հատուկ անհետևողութիւն (անկապակցութիւն): Օրինակ՝ Զաղն անհամ ո՞վ է տեսել, թէ լինի նա պիտանացու (ՀԵ, 149):

Շարահյուսական անկապակցութիւնն աշտեղ արտահայտվել է նրանով, որ երկրորդական նախադասութիւնն ենթական կրկնվել է. այն հանդես է դառնում անգամ գլխավոր նախադասութիւնն կազմում, ավելի ճիշտ՝ նրանից առաջ, իբրեւ պարզ նախադասութիւն խնդիր (զաղն), ապա՝ իր նախադասութիւնն մեջ դերանվան միջոցով:

Ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնների շաղկապավոր տեսակի մեջ պէտք է դասել միջին հայերենում գործածվող այն նախադասութիւնները, որոնք կապակցվում են զինչ, ոնց բառերով: Այս դերանունները կապակցում են քննվող նախադասութիւնների որոշակի իմաստային խումբ, որոնց մեջ երկրորդական նախադասութիւններն արտահայտում են անուղղակի հարցում և կամ էլ խնդրավելով գլխավոր նախադասութիւնն մեջ եղած իմացական կամ զգացական բովանդակությամբ բայ-ստորոգյալով, ցույց են տալիս գործողութիւնն առարկան պատմողական բնույթով: Ընդ որում, առաջին հայացքից զինչ, ոնց բառերը կարող են ընդունվել որպէս շաղկապ, սակայն փաստորեն շաղկապի զեղչման հետևանքով է, որ այդ հարաբերականները բռնել են նրա տեղը: Օրինակ՝ էշն ի՞նչ դիտէ, զինչ է տօմարն, Նո խոզն ի՞նչ գիտէ մարդարտի շարն (ՆԶ, 79), Հաց և բաղջր խոսք տուր պատասխանի, Տես, ոնց կու զղջալ և փոշիմանի (Ն. ս. 90), Թէ հարցանես, թէ ի՞նչ է բժշկութիւն՝ և չի գիտէ զինչ գործէ և ոչ կարէ պատասխանի տալ (ԱԱԱ, 19):

Աշտպիսի կապակցությամբ իրացվող բարդ նախադասութիւնները հարաբերական չենք համարում այն հիմունքով, որ, ինչպէս ասվեց, դրանցում պարզապէս շաղկապը զեղչված է: Հմտ. Գառն, որ գայլին հետ քաս անի, Տես, թէ գայլն ոնց սուս անի (ՆԶ, 111):

Հարաբերական կապակցությամբ ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնները. — Ամենից առաջ, հարաբերական կապակցութիւնն ունեն այն ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնները, որոնց գերադաս մասում գործածված են լինում ոչ միայն մտավոր ու շոգեկան, այլև ֆիզիկական գործողութիւնն իմաստ ունեցող բայ-ստորոգյալներ: Որպէս ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնները կապակցող հարաբերականներ միջին հայերենում գործածվում են ու (զուր. զուր ինչ), ով, զինչ, զինչ ու, զինչ բառերը, որոնք հանդես են գալիս բարդ կապակցութիւնն մեջ ստորադասականի սկզբում: Որինակ՝ Սպանէք ի հոս արտասուաք, Զինչ մեղաց սրդուներ որ ունիք (Յր., 461):

Թուղթ և թանաքն շատ տեսար. Գրեցիր, զոր ինչ կամեցար (ՆՁ, 147), Զինչ զովութեան զուռն և բանի. Զամէնն արայ յիմի յայտնի (ԿՆ, 121):

Ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնները կապակցող այս հարաբերական բառերը հաճախ գլխավոր նախադասութեան մէջ ունենում են դերանուններով արտահայտուած համապատասխան հարաբերչալեւոր. Դրանք տվյալ նախադասութեան կազմում ձևական ուղիղ խնդրի պաշտոն են կատարում: Զեական ուղիղ խնդրի ներկայութեամբ գլխավոր և երկրորդական նախադասութիւնների կապն ավելի սերտ է լինում, քան երբ գլխավորի մէջ այն չկա: Օրինակ՝ Զինչ որ կարիք կայ այս գերոյս, Զամէն ձրգեմ եյնեմ ի յոյս (Յր., 331), Զարկամն զաչղ շէր անէր, զինչ որ զուն կանես (ՀԽ, 151):

Երբ գլխավոր նախադասութեան մէջ հարաբերչալ չի լինում, իսկ որպէս հարաբերական գործածված է լինում ուր-ը, վերջինս հստակորեն չի գիտակցվում, այն կարող է շփոթվել շաղկապի հետ: Օրինակ՝ Եւ թէ ուրդի, որ լին ճորտն իրք ասէ լեզուովն, կամ գործէ այնեւեալք, որ վեմ իւ պարոնին լինի... նա դարպասն պատեհ է, որ դատէ (ՍՍԱ, 15):

Դժվար չէ նկատել, որ գլխավոր նախադասութեան մեջ բացակայում է էական ուղիղ խնդիրը (ասենք՝ քնդհանուր, վերացական իմաստով մի գոյական, ինչպես, օրինակ՝ բան բառը): Գլխավոր նախադասութեան կազմում անորոշ առումով գոյականի գիտակցման հետեւանքով էլ ու հարաբերականը անորոշ առումով է գրված, թեև երկրորդական նախադասութեան մեջ այն ենթակայի պաշտոն ունի:

Հարաբերական կապակցութիւն ունեցող ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնների շարադասութիւնը միջին հայերենում ազատ է. բարդ ստորադասական նախադասութեան կազմում այն կարող է հանդես գալ և՛ առաջադաս, և՛ միջադաս, և՛ հտադաս դիրքով: Առաջադաս են լինում այն ուղիղ խնդրի երկրորդական նախադասութիւնները, որոնցով հեղինակը ցանկանում է շեշտել գործողութեան առարկան, ուստի և այն առաջին պլանում է դնում: Օրինակ՝ Եղուկ է մորս կուսի, Զինչ որ կամիմ, չկատարի (ՀՆ, 242), Զինչ սիրտ նեղած կայ և բուրուշ. Առ քեզ ունիս յուրախութեան (ԿՆ, 132):

Միջադաս շարադասութիւն ունեցող ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնները առավել ժողովրդական-խոսակցական ոճին են հատուկ. Երկու բերից քեզ հարցմունք, և այս երկուսով. զինչ կամիս, ահա (ԷՄԱ, 30):

Երկրորդականի միջադաս դասավորութիւն է ստացվում և այն դեպքում, երբ հարաբերչալ բառը գլխավոր նախադասութեան կազմից տեղափոխվում է երկրորդական նախադասութեան մեջ. այսպես՝ Առնու կնիկն զինչ իսկի հետ իր կումաշ լինի բերել այրիկն զամէնն (ՍՍԱ, 45):

Բերենք նաև ուղիղ խնդիր երկրորդականի հտադաս շարադասութեան օրինակներ՝ Եւ ուննայ յիր ամէն կենդանութիւնն՝ զինչ ցեղ իւ պիտի և հետ կնկանն մահուն դառնայ ի մօտևոր աղղն (ՍՍԱ, 45), Զայս որ ես հետ ինձ արի, չէր արեր այլ աղամօրդի, Ու շիչ մի հալած ոսկի ի գետինն ի վայր վաբցի (ՀՆ, 155):

բ) Անուղղակի խնդիր երկրորդական նախադասութիւն

Կառուցվածքային առումով ուղիղ և անուղղակի խնդիր երկրորդական նախադասութեամբ բարդ կապակցութիւնները միջին հայերենում իրար նման

են, Անուղղակի խնդիր երկրորդականով նախադասությունները քննարկվող յուրանի լեզվի շարահյուսման մեջ սահմանափակ կիրառություն ունեն։

Անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունները փոխարինում են գլխավոր նախադասության մեջ հանդես եկող այն ձևական անուղղակի խնդրին, որն իր վրա կրելով ստորոգյալի գործողությունը, ինքն իր հերթին բացահայտվում է երկրորդական նախադասության գործողությամբ։

1. Ստացվում է մի բարդ շարահյուսական կառուցվածք, որի մեջ գլխավոր մասի միտքը թերաւարտ է թեկուղ և այն ձևական րստի պատճառով, որը գլխավոր նախադասության անուղղակի խնդրի պաշտոնն է կատարում։ Այսպիսի ձևական խնդրի դերով միջին հայերենում հանդես են գալիս մեծ մասամբ անձնական, և ապա՝ ցուցական, ստացական, որոշյալ ղերանունները, որոնց համապատասխանում են ու (սուլս նշանակությամբ), ուլ, ուլ ու հարաբերականները՝ ստորադասականի կազմում։ Օրինակ՝ Ամլն ցաու ղեղ ես լինիմ, Ուլ է յուսուլ՝ իր հասանիմ (ԿԵ, 122), Քո ուժով յաղթեմ նոցա, ու ղլս լսուրէին յարածամ (Ֆր., 260)։

Ինչպես երևում է վերջին օրինակից, ու հարաբերականը իր հարաբերյալի հետ (նոցա) թվով անհամաձայն կիրառություն ունի։ Այս երևույթը, որ նկատվում է նաև որոշիչ երկրորդական նախադասությունների կապակցության մեջ, ու հարաբերականի՝ որպես շաղկապ կիրառվելու միտումի արտահայտությունն է։

2. Բարդ նախադասության գլխավոր մասում հանդես եկող ձևական անուղղակի խնդիրը երբեմն արտահայտված է լինում որեւէ գոյականով կամ գոյականաբար պործածված ուրիշ խոսքի մասով, մի բան, որ առաջին հայացքից շարահյուսական երկիմաստություն է առաջացնում, ստեղծելով այն տպավորությունը, թե անուղղակի խնդիրը իմաստի առումով սպառված կերպով արտահայտված է ղերագաս մասում։ Սակայն իրականում այդ անուղղակի խնդիրը լրացուցիչ բացահայտվում է երկրորդական նախադասության միջոցով։ Օրինակ՝ Հոգի հասար երես շատոց. պայծառ լոյս աշերուն, Ու սիրով մրնաց լուսոյն (ԿԵ, 125), Ու իմ ողորոյս ականջ ղնէ, ես լրսողին ծառայ կենամ (Ֆր., 156)։

Այսպիսի նախադասությունները պարզեցնելիս երկրորդական նախադասությունները կգրավեն գլխավոր նախադասության անուղղակի խնդրի բացահայտյալի տեղը։

3. Սակայն պարտադիր չէ, որ անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն պարունակող բարդ նախադասությունը իր գլխավոր մասում անպայման ունենա ձևական անուղղակի խնդիր։ Վերջինիս բացակայությամբ ստեղծվում է քննվող կապակցությունների կառուցվածքա-իմաստային այն տիպը, որի մեջ գլխավոր մասում հարաբերյալը կամ ձևական անուղղակի խնդիրը բացակայում է. ժամանակակից հայերենում էլ նման տեսակի կառուցվածքները տարածված են բանավոր-խոսակցական լեզվում։ Օրինակ՝ Հոգիս է տրտում նըստեր, զուլ տեսնուլ լալուլ զունգասիլ (Ֆր., 422)։

Ժամանակակից հայերենում անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունները իրենց արտահայտած շարահյուսական իմաստային առանձնահատկություններով որոշակիորեն տարբերակված են և ղանազան անվանումներ են ստացել, որոնք համապատասխանում են նրանց ղերագաս մա-

սում գոյություն ունեցող բայ-ստորոգյալի արտահայտած իմաստներին՝ Այս-
պես, օրինակ, զլխավոր նախադասություն ստորոգյալին առնչվելու տեսակե-
տից զանազանվում են մատուցման, հանգման, շահի, ստացական, միջոցի,
անջատման իմաստ ունեցող և ներքին ձգտում, հոգեկան օրոշ արամադրու-
թյուն, հույս, հավատ և այլն արտահայտող բայ-ստորոգյալների հետ կապ-
ված անուղղակի խնդիր ներկրորդական նախադասություններ¹։

Միջին հայերենում ևս քննվող տեսակի կառուցվածքների մեջ ըստ իրենց
արտահայտած շարահյուսական հարաբերությունների կարելի է առանձնաց-
նել հետևյալ իմաստային խմբերը։

ա) Անջատման անուղղակի խնդիր նախադասություն՝ նա երբ ու գտն
տէրքն յառաջ, հա չկարեն ուզել գհայրենիքն ի յայն, որ ուննայ (ՍՍԱ, 71)։

բ) Ստացական անուղղակի խնդիր նախադասություն՝ Ֆրիկ, ցանկացար
դու խիստ մեծութեան՝ քեզ ո՞վ կամի տալ, Ամնիկ ևս այդոր, զինչ որ քաղե-
ցիւ ու դեռ կամի դալ (Ֆր. 360)։

գ) Մատուցման անուղղակի խնդիր նախադասություն՝ Հոգի հասար
երևտ շատոց, պայծառ լոյս աչերուն, Ով սիրով մրնաց լուսոյն (ԿՅ, 125)։

դ) Հանգման անուղղակի խնդիր՝ Ամէն ցառու դեզ ևս լինիմ, Ով է յուսով՝
իր հասանիմ (ԿՅ, 122)։

ե) Վերաբերության անուղղակի խնդիր նախադասություն։ Սրանք կապ-
վում են ասացական, իմացական նշանակությամբ բայ-ստորոգյալների հետ։
Որպես զլխավոր նախադասության խնդրառու այս կապակցություններում
հանդես են գալիս նաև ասացական բայերի համարժեք՝ հարադիր կաղմու-
թյամբ բայեր ու դարձվածներ՝ լուր գալ, զիր գալ, նուղալ տալ, ինչպես և քա-
ցատրական, մեկնական նշանակությամբ բայեր՝ համար տալ («համրել»),
մեկնութիւն ասել։ Օրինակ՝ Հոքտեմբերի մէկումն բռաղամ Եկաւ ամէն երկիր,
թէ Շահարաւ մեռով (ՁԱՕ, 68), Թվին Ռժժէ յունիսի Իջումն Ագուլիս այսօր
խաբար Եկաւ, թէ Գիլանայ ծովէն Իմ դադախ է դուս էկէլ, Ըռէշտ քաղաքն
չափմիշ արել (ն. տ., 76), Ծրնել ևս ՚ի աշխարհ եկել, Տուր խապար, թէ ուս-
տի՞ կուդաս (ՇԵ, 144), Ասէ՛ Եկայք տուլի համար, Թէ ո՞րչափ է շարթուս
դուրպան (ՄՂ, 84), Հարցանողին նուղալ շի տայ, Թէ ուր էր նա, կամ ուստի՞
դայ (ն. տ., 98)։

Վերաբերության անուղղակի խնդիրը կարող է խնդրառվել նաև ասել («հա-
մարել, բնդունել, հաշվել» նշանակությամբ) բայի միջոցով։ Օրինակ՝ Լավ
մարդ ևս նորա ասելով, որ բանայ զրեւանն համով (ԿՅ, 149)։

զ) Ներքին ձգտման, ցանկության հետ կապվող անուղղակի խնդիր նա-
խադասություն։ Սրանց զլխավոր նախադասության կաղմում լինում են աղա-
չել, երճել տալ, խնդրել և իմաստով սրանց նման այլ բայ-ստորոգյալներ։
Օրինակ՝ երճել ևս նորա կուտալ, որ բզսէրն ի սիրտն ունենայ (Ֆր., 299),
ես աղաչեմ դամենեսեան, ով զիմ ողբանքս յրսենայ (Ֆր., 290)։

է) Որևէ բացականչության հետ կապվող անուղղակի խնդիր, Այս նախա-
դասությունները կապակցվում են շաղկապներով։ Օրինակ՝ Ի՞նչ շահ, որ ունիս
դու գանձ և կումաշ ու դեռ կու մորաւս (Ֆր., 457), Նրկինք՝ երկիր վրկայ, որ
կու սիրեմ զքեզ (ՇԵ, 145)։

Անուղղակի խնդիր նախադասությունների տեսակների մեջ սակայն ա-

¹ Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 2, 1964, էջ 169։

ռանձին հետաքրքրություն են ներկայացնում բացառման-անուղղակի խնդիր
երկրորդական նախադասությունները, ուստի անհրաժեշտ է նկարագրել
դրանք քիչ ավելի մանրամասնորեն:

Քաւել (Գաւել ք.), մակար (մակար ք.), քաղ ք., շաղկապնեւով բացառ-
ման անուղղակի խնդիր նախադասություններ:

Միջին հայերենի բարդ նախադասությունների ձևավորման շարահյուսա-
կան միջոցների մեջ մեծ տեղ են դրավում մյուս խոսքի մասերից վերցրած
այնպիսի կառուցածքաբառեր, որոնք կապակցելով բարդ կառուցվածք-
ները, գլխավոր նախադասության բովանդակությունը լրացնում են՝ մի բա-
ցառիկ հանդամանք ավելացնելով նրա արտահայտած գործողությանը: Կապ-
մըվում են բացառման խնդիր ստորադասական նախադասություններ, որոնց
կառուցվածքը բնորոշվում է հետևյալ կերպ. գլխավոր նախադասությունը ի
պարունակում որեւէ ձևական քերականական միջոց (ցուցիչ-բառ), որը կան-
խաղեն իմաստով կամ հնչերանդով հուշի երկրորդական նախադասության
գոյությունը. գլխավոր նախադասությունն այս դեպքում բառական և հնչե-
րանդային ուղղումով համարյա ավարտուն ամբողջություն է: Դրա փոխարեն
երկրորդական նախադասությունն ինքը, որ կցվում է վերջից, շարահյուսորեն
ինքնուրույն չէ. նախ, այն սկսվում է մի շաղկապային բառով, որի նշանակու-
թյունը առանց գերադաս նախադասության անորոշ է և հենց այդ բառը՝ շաղ-
կապը, ստեղծում է կապ նախորդ նախադասության հետ: Այդ շաղկապային
բառերն են՝ Գաւել (Գաւել անցյալ զերբայի ձևից), Գաւել քէ, մակար, մա-
կար քէ, որոնք ընդարձակ իմաստ են պարունակում, կարելի է ասել՝ մի ամ-
բողջ բարդ նախադասության բովանդակություն: Օրինակ՝ Ի մոտ թագաւորի
մի իշխանսն ոք նստել, Գաւել ք, ինքն հրամմէ (ՍԳԴ, 17), հի վարդապետի
բանադրածն շիշխէ լուծել այլ վարդապետ, Գաւել մեռած լինի այն, որ կապեց
(ն. տ., 23):

Ինչպես տեսնում ենք, այս նախադասությունները կապակցող Գաւել շաղ-
կապը իր մեջ ամփոփ ձևով պարունակում է՝ ...բացի այն դեպքից, երբ...
ընդարձակ իմաստը:

Քաւել, Գաւել ք, բառերով առաջացող կաղապարային կապակցություն-
ները, որ Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» և «Անսիգ Անտիոքայ»-ի
համար գործնական ոճի արտահայտություն են դարձել, շարահյուսորեն սեղմ
ձևով արտահայտում են օրենքով սահմանվող այս կամ այն դրույթի մաս-
նակի բացառությունները: Ընդ որում, մեծ մասամբ այն ընդհանուրը, որ
մխտվում է գլխավոր նախադասության բովանդակությամբ, որպես բացա-
ռություն հաստատվում կամ ընդունվում է երկրորդականի միջոցով: Բերենք
մի քանի օրինակներ ևս՝ Ոչ է իրաւունք, որ ամէն իշխան կարէ սպանութիւն առ-
նել, Գաւել որք ազգաւ թագաւորութեան ինքնակալ լինին (ՍՍԴ, 18), Եւ թէ ոք ի
կարգէ ձգած լինի զինչ և լինի կարգն, և նա ջանայ այլ ուրեք երթալ առնուլ, նա
չէ իրաւունք, որ տան, Գաւել թէ աղաչանք զրեն կապողն որ արձակէ (ն. տ. 37),
Զթերհաւատ մարդոյ վկայութիւն բնաւ չէ պարտ առնուլ և ոչ զմեկ հաւատա-

Օ Ն. Ա. Պառնասյանն իր «Մարահյուսական համաեփները մամանակակից հայերենում»
(Երևան, 1970) աշխատության մեջ բացառման խնդիր է դիտում բացի, չնաչված և այլ կապերի
խնդիրները (էջ 246): Այստեղից էլ մենք միջին հայերենին հատուկ այս բարդ նախադասու-
թյունների երկրորդական մասերը անվանում ենք բացառման անուղղակի խնդիր նախադասու-
թյուններ:

ցնչույ, փառել թէ սուրբ եկեղեցին վկայէ, որ աղէկ մարդ լինի (ն. տ. 23), եւ ոչ է պատեհ, որ երկու կոյր գիրար առնուն, փառել թէ մէկն աշօք լինի, որ կարէ զտղայն ի հուն հանել (ն. տ., 57):

Պետք է ասել, որ փառել, փառել թէ բառերով բարդ կապակցութիւնները օգտագործում են նաեւ միջին հայերէնով գրող ուրիշ հեղինակներ, սակայն շատ սակավադեպ և ոչ այնպիսի որոշակի տարբերակված նշանակութեամբ, ինչպէս Սմբատ Սպարապետը: Այսպիսի օրինակների հանդիպում ենք ուշ շրջանի բանաստեղծների գրվածքներում: Բաժին շունիս ի քրիստոսէ, Քառել դառնաս՝ ապաշխարես (ՄՆ, 21), Լար շրթնովըդ վարդ թափես, Ճօճուն վզովըդ բերդեր քակես: Ամեն անձամբդ էս գեղեցիկ, Քառել թէ քեզ նրման դու ես (ՀԹ, 127):

Բացառման խնդիր երկրորդական նախադասութիւնների շարքը պետք է դասել նաեւ այն կառուցվածքները, որոնց երկրորդական մասը ստորադասական դարձված է, Այս դեպքում նկատի է առնվում այն հանգամանքը, որ ստորոգման բացակայութիւնը չի փոխում այս նախադասութիւնների կառուցվածքը. ստորոգյալը կամ նրա զեղչված բաղադրիչ մասը առանց դժվարութեան կարելի է վերականգնել: Հմմտ. Կու հրամայէ օրենքն, որ զքահանայի տուն և ապրանք չգնէ այլ օք... և ոչ եկեղեցոյ հող, փառել եկեղեցի կամ եկեղեցական (ՍԳԴ, 44), Նա դեռ թէ կամենայ տիաթիկ այնել՝ ի յիրայրկանն ի կենդանութիւնն, Նա չկարէ այնել, փառել թէ իր այրկանն կամօքն (ՍՍԱ, 53), Եւ չէ պատեհ՝ զհայր փոխել, փառել փանց մեծ պատճառի (ՍԳԴ, 43):

Մակար (մակար թէ) շաղկապի ցույց տված շարահյուսական իմաստը ևս քննվող տիպի նախադասութիւններում առաջին հայացքից դժվար է ընկալվում: Մակար-ը հավանաբար Թուրքերեն մեհեր բառն է, որ մեր ժամանակակից բարբառներում էլ պահպանված է որպէս եղանակավորող բառ: Ուր. թէ շաղկապների հետ միանալով, և ըստ երևույթին նրանցից էլ ստանալով իր շաղկապական գործառույթը, մակար բառը առանձին ևս կատարում է խնդիր երկրորդական նախադասութիւնները կապակցելու դեր, տալով դրանց յուրատիպ շարահյուսական իմաստ: Մակար բառով շաղկապվող երկրորդական նախադասութիւնը արտահայտում է այնպիսի գործողութիւն, որի գոյութիւնը շեշտվում է որպէս բացառվող, շնախատեսվող իրողութիւն: Այս բառին հաջորդող նախադասութիւնը արտահայտում է մի գործողութիւն կամ եղելութիւն, որի տեղի ունենալը տվյալ դեպքում կարևոր չէ այն իրադրութեան համար, որի մեջ և որի դեպքում հաղորդվում է տվյալ միտքը: Օրինակ՝ Եւ բաժանումն այս Բ ցեղ ցաւուն այն է, որ արիւնն ի յաղեց խոցէն գայ՝ ի հետն պալղամ և դաթիբայ խառն գայ, արիւնն քչիկ լինի, մակար երակ բացվի որ արիւնն շատ գայ (ԱՕԲ, 358):

Ինչպէս տեսնում ենք, հեղինակը սովորեցնում է տարբերակել հիվանդութիւնն առաջ բերող երկու պատճառները. մի դեպքում, երբ արիւնը աղիքի խոցի պատճառով է գալիս, քիչ է լինում, իսկ երբ այն լյարդի խոցից է (բնագրի նախորդ մասի բովանդակութիւնն աղապիսին է), շատ է գալիս: Բացի այս երկու պատճառից, շատ արիւն կարող է գալ նա մի երրորդ պատճառով՝ երակ պայթելու պատճառով: Այս վերջին պայմանը (երակ պայթելը) պարտադիր չէ, բայց կարող է լինել:

Բերենք մի քանի օրինակներ ևս, որոնցում մակար, մակար թէ, մակար

որ շաղկապներով կապակցվում են այնպիսի գործողություններ, որոնցից մեկը շեշտվում է իր բացառիկության հանդամանքով. այսպես՝ Եւ գլխու ոսկորն ի վրին ողաշարն ի կից է. թէ ամէնն մէկ կտոր լինէր՝ նա մարդն ի վեր չէր կարել նայիր, և ոչ ի վայր, ոչ ի յաջ դիհն և ոչ ի ձախ... և յերկինքն շէր կարել նայիլ... մակար ի վրայ կոնակին պառկէր և ապա թէ տեսանէր վերկինքն (ԱՕԲ, 29), և ամուսն շողուն և ձմուսն ցրտին զեղ առնելն վնաս է, մակար որ խիստ պէտք լինի (Ն. տ., 61), Հունան ասէ, թէ պատեհ է, որ ի միւր զմիւրքն բան ղկերակուրն յառաջ ուտէ, մակար որ ի թիւ մրդանց լինի և բռնող, որպէս զսերկեիլ և կամ խնծոր (Ն. տ., 56):

Ժամանակակից հայերենով այսպիսի կապակցությամբ իրացվող նախադասությունները կարելի կլինի արտահայտել շիջված բառի միջոցով կամ նկարագրական եղանակով. այս դեպքում մակար բառը կփոխարինվի «ի բացառյալ այն պայմանը, երբ...» կապակցությամբ, Հմմտ. և այս ամէնն պեղծ նշան է, գուշակ, վատուծություն բնութեանն... և թէ ավելի է պակաս լինալն՝ այսպէս է, որ թէ աւելի դաւ և ի շաբէ անցնի՝ գէշ է ախոր համար, որ բնութիւնն վատուծել է և ցան յաղթել է, մակար թէ բնութիւնն ուժով լինի որ պատն ի յանձնէն հանէ (ԱՕԲ, 79):

Մակար շաղկապի վերը բերված իմաստային կիրառությունն ակադմիում է Ամիրգովլաթ Ամասիացու բժշկարանում: Միջնադարյան մյուս հեղինակները սյո շաղկապը համարյա չեն գործածում, իսկ գործածելիս էլ այդպիսի տարբերակված շարահյուսական իմաստ չեն դնում: Հմմտ. Ասի, թէ հանեմ զնա, ցաւ կուտա ինքն ի մէջ սրտիս, Մակար զինքն ընդ յինք թողում, որ էրի և սենա կաշիս (ՆԲ, 62):

Բացառման խնդիր երկրորդական նախադասություններ կազմելիս միջին հայերենը գործածում է նաև թող թէ, շաղկապային կապակցությունը, որը տվյալ շրջանում ունի զրաբարից քիչ փոփոխված իմաստային կիրառություն: Հմմտ. Իսկ ո՞վ եմ ես, զի կարեմ զոք օրհնել կամ անիծանել, թող թէ զայր եպիսկոպոս:

Փառնաստու Բյուզանդից բերված այս օրինակում թող թէ-ն նշանակում է «ինչ մնաց թէ...» օտաովել ես» (վերջին իմաստն այն դեպքում, եթե կապակցության մեջ ստորոգումը զեղչված չհամարենք): Միջին հայերենում թող թէ-ն, ճիշտ է, գործածվում է մոտավորապես «թեկուղ», «եթե նույնիսկ» իմաստներով, սակայն ավելի հաճախ այն նշանակում է «չհաշված», «բացի նրանից, որ...»: Այս շաղկապով ես կապակցվում են բացառման խնդիր երկրորդական նախադասություններ, որոնց արտահայտած իմաստն այն է, որ ղխավոր նախադասության գործողությանը հարադրվում է մի գործողություն, որը շեշտվում է որպես բացառիկ, չնախատեսված ժրինակ՝ Զիմաստունն ով է յաղթել, թող թէ հընար բերեն չարով (ԿՅ, 170):

Այս նախադասությունը ունի հետևյալ իմաստը. իմաստունին ոչ ոք չի կարող հաղթել, բացի այն դեպքից, երբ «հնար բերեն չարով», այսինքն՝ իմաստունին կարող են հաղթել միայն խաբեությամբ: Այս վերջին գործողությունը (չարով հնար բերելը) բացառիկ գործողություն է, որ նախատեսված չէ որպես օրինաչափ մի բան:

Երբեմն սակայն թող թէ, շաղկապային կապակցությամբ ստեղծվում են

Դ Ա. Արամյան, Գրարարի ձեռնարկ. 1968, էջ 339:

նախադասություններ, որոնց մեջ բացառման խնդրի այսպիսի հարաբերությունը այնքան էլ հստակ չի արտահայտվում, այլ այն մոտենում է գիշման հարաբերությանը: Օրինակ՝ Որդունքն չեն ինձ ողորմիլ, թող թէ հազար երդումն տամ (Ֆր., 253):

Այս նախադասությունը կարելի է հասկանալ երկու ձևով՝ 1) Որդերն էլ չեն գթա, բացի այն ղեպքից, երբ հազար երդում տամ, 2) Որդերն էլ չեն գթա, եթե նույնիսկ հազար երդում տամ: Ըստ էության ճիշտ պետք է համարել երկրորդ իմաստը, քանի որ առաջինը անտրամաբանական է:

Անհրաժեշտ է նշել, որ այս բաժնում քննված շաղկապների իմաստային նշանակության ու կապակցական ղերի ըմբռնման հարցում միանգամայն պարզորոշ կողմնորոշվելը դժվար է, որովհետև կենդանի, խոսակցական լեզուն այնպես, ինչպես կիրառվել է ժամանակին, մենք պատկերացնել չենք կարող: Քանի որ դործածված օրինակներն էլ սահմանափակ են, ապա հնարավոր է սխալվել այդ շաղկապների իմաստային նրբերանգները բմբռնելու հարցում:

ՊԱՐԱԴԱՆԱԲԵՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարադայական ստորադասական կառուցվածքների շարահյուսական դերը նախադասության ստորոգյալի կամ որևէ բայական անդամի բացահայտումն է դանադան առումներով:

Միջին հայերենի մատենագրության քնննած նյութերը ի հայտ են բերում պարադայական կառուցվածքների լայն դրսևորում:

ա) Ժամանակի պարագա երկրորդական նախադասություն

Առաջին յուրահատկությունը, որ աչքի է ընկնում, միջին հայերենի ժամանակի պարագա ստորադասական նախադասությունների կապակցության միջոցների հարստությունն է, որը բնականաբար նպաստում է նաև իմաստային հարաբերությունների առավել տարբերակված դրսևորմանը: Ընդ որում, կապակցական բառերից շատերը կիրառվում են միայն ժամանակի պարագա նախադասությունները միավորելու նպատակով: Դա նշանակում է, որ միջին հայերենում դործածվող շաղկապների ու հարաբերական բառերի բազմազոր-ձառույթային (բազմաֆունկցիոնալ) բնույթի պայմաններում, ժամանակի պարագա նախադասությունների կապակցության համար համեմատյան ղեպս մշակվել են կառուցվածքային յուրահատուկ ձևեր՝ կապակցության իրենց յուրահատուկ միջոցներով:

Ընդհանուր առմամբ երեք պահերի (ներկա, անցյալ, ապագանի) մեջ ամփոփվող ժամանակ հասկացությունը դրսևորվում է առավել կոնկրետ ու տարբերակված իմաստային հարաբերություններով, որոնք իրենց լեզվական արտահայտությունն ստանում են նաև ժամանակի պարագայական նախադասությունների կառուցվածքա-իմաստային տեսակների միջոցով: Վերջիններս լեզվի մեջ առաջանում են քերականական շարահյուսական միջոցների յուրահատուկ գույքորդությունների շնորհիվ: Դրանք են՝ բարդ նախադասության բաղադրամասերի բայ-ստորոգյալների եղանակա-ժամանակային կիրառությունները, շարադասությունը և կապակցման դերով հանդես եկող շաղկապներն ու շաղկապական բառերը: Ըստ այդմ ժամանակի պարագայական նախադաս-

սությունները հանդես են գալիս նետելու հիմնական կառուցվածքա-իմաստա-
լիս տեսականերով.

ա) Գլխավոր նախադասութիւնը բառական կազմի արտահայտած իմաս-
տով համեմատաբար ավարտուն է, այնտեղ գոյութիւն չունի իմաստի և հնչե-
լանդի տեսականից սպասում առաջացնող միավոր, որը լրացուցիչ մեկնա-
բանման կարիք ունենաւ Ուրիշ խոսքով, երկրորդական նախադասութիւնները
ժամանակի առումով ընդարձակում են այն գլխավոր նախադասութեան գոր-
ծողութեան իմաստը, որտեղ ժամանակի պարագայի պաշտոնով բառ չկաւ
Օրինակ՝ Երբ սերն ի յաշխարհս եկավ, եկավ իմ սիրտս բնակեցավ (ՆՔ, 37),
Լիլիշդէտ ամառն է, պէտ արա, որի ի ձրմեռն շանկանիս (Յր., 269), Երբ գո-
ղրն դայ մրտնէ ի տուն, նա զաղաղակ բառնայ ի բուն (ՆՇ, 635):

բ) Երկրորդական նախադասութիւնը ճշտում, բացահայտում է գլխավոր
մասում արդեն գոյութիւն ունեցող ժամանակի պարագան, ինչպես՝ Եւ թէ
առաջ իննի ցաւդ դիպել, որ Լիլիկն շիլիկ լսել, նա ի ծնօղթն դառնայ (ՍԳԴ, 48):

Ժամանակային հարաբերութիւնը վերոհիշյալ կառուցվածքային տիպերի
ղեպքում հստակ է արտահայտվում՝ դրանք կապակցող շաղկապների՝ ժամա-
նակային հարաբերութեան իմաստ ունենալու (առաջին ղեպքում) և գլխավոր
մասում ժամանակի իմաստ արտահայտող բառական բաղադրիչի առկայու-
թեան (Երկրորդ ղեպքում) շնորհիւ:

Միջին հայերենում գործածվում են նաև ժամանակի պարագայական հա-
րաբերութեամբ այնպիսի բարդ ստորադասական կառուցվածքներ, որոնց ժա-
մանակային իմաստը մաքուր ձևով չի արտահայտվում, այն բարդացվում է
ղանաղան ածանցյալ իմաստային երանդներով, ինչպես՝ հետեանքի, պայմա-
նի և այլն: Օրինակ՝ Երբ մահու օրն դայ և կոչնականն կոչէ, թէ լաւ մարդ է,
թէ տկար՝ պիտի մեռանի (ԷՄԱ, 28), Յորժամ այլ ոչ կարեմ վաստակել, պիտ
որ մորթես և զմիսս ուտես (Ն. տ. 29), Մանուկ սիրո տեր եմ ես, կու վախեմ
հանեն արեես, Երբ զիս արեես հանեն, թող հանեն սերն աստընվորես (ՆՔ, 52):

Ժամանակի պարագա ստորադասական նախադասութիւններն արտա-
հայտում են ժամանակային երկու տիպի հարաբերութիւններ՝ 1) միաժամա-
նակյա, երբ գլխավոր նախադասութեան գործողութիւնը ժամանակի առումով
համընկնում է երկրորդական նախադասութեան գործողութեանը և 2) տարա-
ժամանակյա, երբ երկրորդական նախադասութեան գործողութիւնը կատար-
վում է գլխավոր գործողութիւնից առաջ կամ հետո: Ինչպես նշվեց, իմաստա-
յին այսպիսի հարաբերութիւնները որոշվում են կառուցվածքային մի քանի
հատկանիշներով՝ շաղկապների ու կապակցվող բառերի բնորոշումը, գլխա-
վոր և ստորադաս մասերի շարադասութեամբ և նրանց ստորոգյալների եղանա-
կաժամանակային կիրառութիւններով: Նշված առաջին գործոնը (ժամանակի
պարագա ստորադասական նախադասութիւնների կապը իրագործող միջոցնե-
րի բնորոշութիւնը) վերոհիշյալ իմաստային խմբերի դասակարգման հարցում
որոշող դեր ունի: Լեյզ պատճառով էլ ժամանակի պարագայական նախադա-
սութիւնների վերոհիշյալ իմաստային խմբերը միջին հայերենում պետք է
դասավորել բոտ իրենց կապակցութեան միջոցների, իսկ մյուս գործոնների՝
բարդ նախադասութեան քաղաղրիչների բայ-ստորոգյալների քերականական
ժամանակների և շարադասութեան մասին կիսովի բոտ անհրաժեշտութեան:
Որպես ժամանակի պարագա երկրորդական նախադասութիւնը կապակցող
շաղկապներ քննվող շրջանում հանդես են գալիս եւր, որ, եւր որ, իւրեւ, հաճ

որ. ոնց որ. մինչ, մինչդեռ, մինչև, ինչ որ, ինչու, շուրի, քանի, քանի որ բաներու Բարդ նախադասության կաղմում սրանք առաջին հայացքից ըմբռնելի ու որոշող այն կառուցվածքային միջոցներն են, որոնք անմիջական կերպով արտահայտելով իրենցով կապակցվող նախադասությունների արտահայտած գործողությունների կամ նդելությունների զանազան ժամանակային հարաբերությունները, երբեմն իմաստային նրբություններ են հանդես բերում: Բարդ կապակցության բաղադրիչների նախադասությունների ստորոգյալների գործողությունները կարող են արտահայտել միաժամանակյա, իրարից առաջ կամ հետո տեղի ունեցող ժամանակային հարաբերություններ: Այսպես՝ գործողությունների միաժամանակյա շարահյուսական հարաբերություն արտահայտելու համար գործածվում են երբ (եվ. երբ, յեյ և այլ դրություններով), երբ որ, քանի, յորժամ, մինչդեռ, ոնց որ շաղկապային բաներու հարաժամանակյա գործողությունների կապ արտահայտվում է՝ երբ, յորժամ, ինչու (ինչի), ոնց որ, որ, քանի (քան, քան որ) շաղկապների միջոցով: Ինչպես տեսնում ենք, հնարավոր է, որ միևույն շաղկապները գործածվեն երկու դեպքում էլ, Հետևաբար, տվյալ դեպքում ժամանակային նրբերանգները այդ կապակցություններին հաղորդվում են շարահյուսական այլ միջոցներով ևս, ինչպես՝ ստորոգյալների քերականական ժամանակները և շարադասությունը, որոնց մասին նշվեց:

Փորձենք առավել մանրամասն ընթերցել ժամանակի պարագա ստորուղասական նախադասությունները կապակցող շաղկապների արտահայտած շարահյուսական իմաստները:

Երբ շաղկապը, որ ամենագործածականն է գործառական և տարածական առումով, այսինքն՝ գործածվում է տարրեր ժանրերի ու տարրեր բնույթի ստեղծագործություններում և մեծ հաճախականությամբ, հիմնականում ցույց է տալիս դերադաս նախադասության արտահայտած գործողության հաջորդման գաղափար: Երկրորդական նախադասությունը, որ սովորաբար շարադասվում է սկզբում, ցույց է տալիս այն գործողությունը, որի կատարումը նախորդում է դերադասի գործողությանը: Օրինակ՝ Երբ սերն ի յիսն է նլավ, յոթն տակ մուշտակ կարեցի (ՆՔ, 58), Երբ էանց գիշերն յերկար՝ նըշան նդե առաօտուն (ԿՆ, 124):

Երբեմն գլխավոր նախադասությունը սկսվում է ապա համադասական շաղկապով, որը գործողության հաջորդման գաղափարը ավելի ակնառու է դարձնում: Օրինակ՝ Երբ այլ բազում աւուրք և ի յուսումն վարժեցայ, Ապա ղմբտաւ ածի ու զայն խորհուրդն հասկացայ (ԿՆ, 190):

Երբ շաղկապով երբեմն ընդգծվում է գլխավոր նախադասության և երկրորդականի գործողությունների միջև եղած անմիջական կապը: Գլխավոր նախադասության գործողությունը տեղի է ունենում հենց այն րոպեին, երբ սկսվում և կատարվում է երկրորդականի գործողությունը: Ստացվում է գործողությունների վայրկենական հաջորդում: Օրինակ՝ Զսիրտն երբ սիրով դէմ իր բանայ, Յանուշ հոտեն թէ՛ դ մ՝ արբենայ (ԿՆ, 121):

Երկու կամ ավելի գործողությունների միջև ժամանակային հաջորդականություն արտահայտելու համար այսպիսի կառույցներում շարահյուսական արժեք ունի նախադասությունների շարադասությունը և ստորոգյալների բույական ժամանակների կիրառությունը: Առաջադաս նախադասությունը, լինի այդ գլխավորը, թե երկրորդականը, կանխորոշում է նախադասի ստորոգյալի

րայական ժամանակը՝ Սյուսյան՝ եթե երկրորդական նախադասությունը առաջադաս է, ապա նրա ստորոդյալի քերականական ժամանակը պետք է լինի կամ նույնը գերադասի հետ, կամ էլ նրա նկատմամբ անցյալում կատարված։ Եթե առաջադաս երկրորդական նախադասության ստորոդյալը արտահայտված է լինում անցյալ կատարյալով, գերադաս նախադասության ստորոդյալն էլ ունենում է անցյալ կատարյալ ժամանակ։ Օրինակ՝ Երբ սերն ի յաշխարհս եկավ. եկավ իմ սիրտս բնակեցաւ (ՆՔ, 37), երբ իմ աչերս ի քեզ դիպաւ. նայ վառեցայ գէտ մոմեղէն (ՀԲ, 149)։

Պատահում է այնպես, որ եթե առաջադաս երկրորդական նախադասության ստորոդյալը դործածված է լինում անցյալ կատարյալով, ապա գլխավոր նախադասության ստորոդյալը ունենում է ներկա ժամանակ։ Օրինակ՝ Եւ մեռելն զգլուխն ի վեր իկաւ և առաց. թէ ես այլ շատ բան ունէի, երբի գրողն էրէկ, զամէնն ի տեղն բողի և կերքամ յետոյ (ՎԱ, 309)։

Երբ շաղկապով կապակցվող ժամանակի ստորադասական նախադասությունները կարող են նաև արտահայտել գլխավոր նախադասության գործողությունը համընթաց կատարվող գործողության դադարի։ Օրինակ՝ Նրբ վարթրնի տղայն ու լայ, Գեմ ծրծեցնէ իւր մայրն ըզնա (Ֆր., 323), Նրբ գահաւոր դատողն յիշեմ՝ ես յայն յահէն քան զուռ դողամ (Ֆր., 251), Որ երբ յառնէր յօրրն վերջի, նա շերեիք ծառ շորացեալ (ԿԵ, 123)։

Ինչպես տեսնում ենք, այս կապակցությունները նախորդ խմբից (ետժամանակյա հարաբերություն արտահայտող) քերականական ձևավորմամբ որևէ տարբերություն չունեն։ Գործողությունների միաժամանակյա հարաբերություն առաջանում է այս նախադասությունների ստորոդյալների արտահայտած իրական բովանդակության հետևանքով։ Բացի դրանից, եթե սլարզեցնենք, ապա առաջին խմբի նախադասությունները կունենան այսպիսի տեսք՝ Սերը աշխարհ գալուց հետո եկավ իմ սրտում բնակվեց, իսկ երկրորդ խմբինը կարտահայտվի հարակցական⁸ դերբայի միջոցով կազմվող ստորոդյալով, ինչպես՝ Ահավոր դատողին հիշեցիս, այն ահից ուռի նման դողում եմ։

Լրիվ միաժամանակյա հարաբերություն առաջանալուն նպաստում է այս նախադասությունների գլխավոր մասում յայնժամ զուգադիր մակրայի դործածությունը։ Օրինակ՝ Յայնժամ ինձ աղվոր թվիս, երբ էլնես ձեր դուռն կանգնիս (ՆՔ, 104)։

Երկրորդական նախադասության գործողությունը այսպիսի նախադասություններում նախորդում է գլխավորին. սակայն գլխավորը միաժամանակ պայմանավորված է նրանով։ Ընդհատ է, գլխավորի կատարած գործողությունը երկրորդականից հետո է կատարվում, բայց այն տեղի չի ունենա, եթե երկրորդականը չկատարվի։ Այս դեպքում արդեն առաջանում է մասնակի միաժամանակայության հարաբերություն։ Համախառն առաջին նախադասությունների ստորոդյալը արտահայտված է լինում տեղական գործողության իմաստ ունեցող բայով։ Օրինակ՝ Բազան երբ քաղցած լինի, զորսն սուռու՝ այնով զըմպաղի, Մանուկ՝ սիրո սեր լինի, պազն առնու՝ կարոտն անցանի (ՆՔ, 120)։ Այնժամ ասաց վարդապետն, թէ շես կարիկ թարկեր, դու դայս բանս սոսայ, յեր ի գողութիւն երթաս (ՎԱԱ, 186)։

⁸ Անկատարի - լիս վերջավորությամբ դերբայական ձևի այս անվանումը գործածում ենք Ս. Աբրահամյանի օրինակով (տե՛ս ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1970)։

Եւր շաղկապով կապակցվող և գերադասի ժամանակային հաջորդակա-
նութիւնն արտահայտող նախադասութիւնները մեծ մասամբ ունենում են ետա-
դաս շարահասութիւն, բայց կարող է պատահել նաև, որ գլխավոր նախադա-
սութիւնը շարահասված լինի սկզբում: Պետք է ասել, որ ժամանակային հա-
ջորդականութեան գաղափարը արտահայտելու համար այսպիսի նախադասու-
թիւններում շարահասութիւնը այնքան էլ վճռական դեր չունի. կարևոր դեր
խաղում են շաղկապի բառական իմաստը և նախադասութեան արտահայտած
իրական բովանդակութիւնը: Համեմատենք նախադաս և ետադաս շարահասու-
թեան դեպքերը՝ եւ եւր խաղղի ջերմն. արկ ի վերայ գլխոյն եղկ ջուր (ՄՀ, 8),
եւ եւր ջերմն ի վնար գայ, ի բաղանիս մտո, և զգլուխն այս քրովս ծնվիէ, զի
փորձով օգտակար է (ն. տ. 9). Դու պինդ ու ամուր կեցիր, եւր սիրով հլում
նզեցիր (նՔ, 51):

Եւր շաղկապի համեմատութեամբ շատ սակավ դործածութեամբ և դրա-
բարատիպ բնադրերում հանդիպում է նաև դրաբարյան իրէն շաղկապը նույն
գործածութեամբ: Օրինակ՝ եւ իրէն դնաց գայն ի դիդն, թափեցան ի վերայ նո-
րա շունքն, և խածատնայ վիրավորեցին զնա (ՎԱԱ, 34):

Հաճախ եւր-ին հարադրվում է ուր շաղկապը, որի միջոցով բարդ նախա-
դասութեան մասերի ժամանակային հարաբերութեան մեջ շեշտվում է այն, որ
գլխավոր նախադասութեան գործողութիւնը տեղի է ունենում անմիջապէս
երկրորդականից հետո: Օրինակ՝ եւր ու հոգոց ևս կու հանիմ, գայ առնու հո-
գիս բերանիս (ՀԱԳ, 15), Այնժամ կենդանի եղա, եւր ու քս ձայնդ լսեցի (նՔ,
90), եւր ու առափոտանայր, ևս ի բունս ճրովրոտայի՝ եւր ու լուսն լուսանայր,
աշխարհիս վրա ժուռ գայի (նՔ, 101):

Յորժամ շաղկապը ևս ճիշտ միևնույն կիրառութիւնն ունի, ինչպէս եւր-ը:
Սրանց գործածման տարբերութիւնը գրվածքի բնույթի մեջ է: Յորժամ շաղ-
կապը գործածվում է հիմնականում գրաբարամտ տեքստերում: Օրինակ՝ Յոր-
ժամ ծերանա արծին, բարձրանա մերձ ի շող արեգական (ՀՄԱ, 12): եւ յոր-
ժամ բերին՝ խածնալ եհատ զքիթ մօրն (ՎԱԱ, 278):

Այս շաղկապը գործածում են Մխիթար Հերացին ու Ֆրիկը. բայց նաև՝ ուշ
շրջանի հեղինակ Նահապետ Քուչակը Բերենը մի բանի օրինակ՝ Յորժամ էլին
տաքն ու կակուղն, դեմ հովն ու շորն անպիտեկայ (Ֆր., 296), եւ պատրաստե-
ցո ի կերակրէ, յորժամ հիւանդին զօրիթիւնն ուժով լինի (ՂՀ, 82), Յորժամ
մեջլիս նստիս, հարբենաս, ուղղել կարես ոչ, Զպաղն ի պարծանք հաշվես, դա-
մոթուդ տեղն դիտես ոչ (նՔ, 42):

Ինչպէս տեսնում ենք, յորժամ շաղկապը արտահայտում է գլխավոր նա-
խադասութեան ժամանակային հաջորդականութիւն: Բայց ինչպէս ասվեց, եւր
շաղկապի նման, այն կարող է նաև միաժամանակութեան դադափար արտա-
հայտել. ինչպէս՝ Յորժամ երթաս հիւանդն ի մոտ, ևս երկիմ բեզ (ՀՄԱ, 28):

Սրբեմն նույնժամանակյա գործողութիւնների կապը ցայտուն դարձնելու
նպատակով գլխավոր նախադասութեան կազմում գործածված է լինում յայն-
ժամ գոյականութիւնը: Օրինակ՝ Յորժամ փորձութեան մէջն անկանի, հայնժամ
խրատն յիշէ, փոշիմանի (նՀ, 87):

Մինչև, մինչ, ինչու, ինչ ու, մինչ ու նույնիմաստ շաղկապներով կա-
պակցվելիս ժամանակի պարադայական նախադասութիւնները հիմնականում
արտահայտում են տարաժամանակյա հարաբերութիւն: Գլխավոր նախադա-
սութեան արտահայտած գործողութիւնը կատարվում է այն ժամանակ, երբ

դեռևս չի կատարվել կամ կատարման ընթացքի մեջ չի գրվել երկրորդականում արտահայտված գործողությունը կամ եղելությունը: Օրինակ՝ Հաստատեցւք դձեզ հետ ինձի, Մինչև հետ մ' այլ գարուն լինի (ԿԾ, 123), Մինչ խելքն ի վերայ եկաւ, նա գնաց ճուհարն ի ձեռաց (ՀԾ, 160), Բայց կապածն այն կապած կմնայ, ինչուր իր տան արձակել (ՍԳԿ, 36), Թէ տղայքն դիրենց հասակն չունենան՝ նա չկայ յանսիղն որ իսկի իրենց պացխուն պարտին որ այնեն, ինչուր դիրենց հասակն տունուն (ՍՍԱ, 51): Որ թէ մեռնի ճորտն և իր կնիկն, և ժառանգքն տղայքն լինին, նա պարտութիւնն պայտաթեամբ պահէ զպարանքն և իր տղայոց տայ յայսրնացն դիրենց սննդեանն պէտքն, ինչով լինին տղայքն ու զան ի հասակ (ն. տ. 17):

Այս շաղկապներով կապակցվող նախադասությունների կառուցվածքա-
իմաստային նման տիպերը ժամանակակից հայերենում վ. Առաքելյանի կող-
մից տիպական ու բնորոշ կերպով սահմանվել են որպես «ժամանակի տեա-
կանություն չափի պարագայական նախադասություններ»⁹: Իսկապես, այսպի-
սի նախադասություններում հատկապես ընդգծվում է ոչ թե այն, որ գլխավոր
նախադասության գործողությունը կատարվում է այն ժամանակ, երբ երկրոր-
դականին է կատարվում, այլ՝ տևում է այնքան ժամանակ, ինչքան երկրոր-
դականն է կատարվում: Այդպիսի կոնկրետ իմաստային հարաբերություններ
արտահայտող օրինակներ շատ կան միջնադարյան բնագրերում: Բերենք մի
րանիսը՝ Կենդանին նստաւ վեր մեռածին, Եւ երգուաւ յաստուածածին, Թէ
յայնչափ շնչնեմ աստից ի վեր, Մինչ որ հանեմ դմեռածն ի վեր (Աս. Մնաց.,
Հանելուկներ)¹⁰, Ինչուր աչքն չի հալներ, չի խաբեր հաղար լեզու դիս (ՆՔ,
61), Երբամ քաջ արծիւ լինամ, զամ կոռիմ, մինչ որ յուսանայ (ՆՔ,
204), Մինչ չի հանդիս՝ կերակուր մի ուտել (ԱՌԲ, 65), Եթէ որ մարդոյ իրք
տայ ի պահ, ու գողնի... նա թող երկուքն զգողն փնդուեն, ինչուր գտնուն
(ՍԳԿ, 67):

Ժամանակի տեականության չափի այս նախադասություններում գլխավոր
մասում երբեմն գործածված են լինում ալեչափ, հանչա՛մ զուգադիրենք, որանց
ներկայությունը այս տիպի նախադասությունները ավելի մոտեցնում է չափի
պարագայական նախադասությունների: Բերենք օրինակներ՝ Այնչափ էլ ու
մուտ ատենեմ, լինչ որ քո սիրոյդ տիրանամ (ՆՔ, 204), Այնչափ այբուրեն ա-
սեմ, ինչ որ քո ծոցոյդ տիրանամ (ն. տ., 64), Ապա թող հանչար համբերլ ոս
իր խամին, ինչուր վկայք չինէ և ապա հիւսջլ (ՍՍԱ, 33):

Ժամանակի պարագա ստորադասական նախադասությունների կառուց-
վածքա-իմաստային խումբ են կազմում Բանի, Բանի ու, Բան շաղկապական
բառերով կապակցվող նախադասությունները: Այս շաղկապների միջոցով ընդ-
գծվում է գլխավոր և երկրորդական նախադասությունների գործողությունների
միասնականությունը:

Փանի (Բան), Բանի ու շաղկապները ցույց են տալիս, որ գլխավոր նա-
խադասության գործողությունը տեղի է ունենում երկրորդականի կատարման
ամբողջ ընթացքում, ինչպես՝ Փանի զու ինձի էիր, նա կանաչ ու ցողն ի վրա,
Երբ զու յիսենն ելար, ձյուն երեկ եղեմն ի վրա (ՆՔ, 99), Փանի մարն դիս բե-

⁹ Վ. Առաքելյան, *Նշգ. ալե...* էջ 137:

¹⁰ Այս համառոտագրությամբ օրինակները քաղված են Աս. Մնացականյանի հավաքած
Շեքոհայու հանելուկների անսխալ ժողովածուից, որը հեղինակը տրամադրեց մեզ ծանոթանալու
վեցվական ելույթին:

րեր, քահանի չեմ խոստովաներ (ՆՔ, 68), Քանի տեսնում, կու սարսափիմ, Սիրտս ի փորիս կառնու դալար (ՀԺ, 132), եւ ասէ երէցն ցժողովուրդն, Ով մոլորեալք, Բանի որ սաղմոսէի և աղաթի, նա սատանայ կապել էր զսիրտն ձեր և բարացուցել (ՎԱՄ, 266):

Մինչդեռ շաղկապով ևս ընդգծվում է գլխավոր և երկրորդական նախադասութիւնների գործողութիւնների կամ եղելութիւնների ճիշտ և ճիշտ միաժամանակ կատարվելը: Օրինակ՝ Մինչդեռ ամառն է, պետ արա, որ ի ձմեռն շանկանիս (ՀԱԳ, 17):

Երբեմն այս բառի բաղադրիչները տարրալուծվում են, հանդես գալով միևնույն նախադասութիւն կազմում տարրեր տեղերում, ինչպես՝ Մինչ ար փրկութեան է դեռ, հառաչէ լալով, թէ մեղայ (Ֆր., 339):

Քանի, մինչև և այդ խմբի մյուս շաղկապներով կապակցվող նախադասութիւնների իմաստային խմբի ձևավորման համար շարադասութիւնը կարելու է, սակայն նախադասութիւն ստորոգյալների բերականական ժամանակների համադասասխանութիւնը կարելու է: Գլխավոր և երկրորդական մասերի ստորոգյալները պետք է արտահայտված լինեն միևնույն ժամանակներով: Այն դեպքում, երբ այդ համադասասխանութիւնը խախտվում է, առաջանում է տարածամանակյա հարաբերութիւն: Օրինակ՝ Ջանա և լող տուր շուտ և ել. Քան սուր ու ձեռքդ չէ կապել (Ֆր., 410):

Ժամանակի պարագա նախադասութիւնները կապակցող շաղկապների մյուս խումբը կազմում են ոնց ու. հաճ ու բառերը՝ Սրանցով կապակցվող նախադասութիւնները արտահայտում են տարածամանակյա հարաբերութիւն, ընդ որում, այս շաղկապներով ընդգծվում է այն պահ, երբ տեղի է ունենում գլխավոր նախադասութիւն գործողութիւնը, վերջինս վայրկենական հաջորդումն է երկրորդականով արտահայտված գործողութիւն կամ եղելութիւն: Օրինակ՝ Հաճ ու տեսաւ դմանուկն արդար, Վազեաց : ի դիրկն էառ խաղայր (ԵՇ, 636), Ոնց ու տեսան զվարդն պայծառ, Մաղկունքն առին թէզ մի սուար (ԿԻ, 120):

Սովորաբար այսպիսի նախադասութիւններում գլխավորը շարադասվում է երկրորդականից հետո, քանի որ վերջինս է սահմանում այն պահ, երբ տեղի է ունենալու գերադասի գործողութիւնը, հետևաբար և այն առաջ է դրվում: Օրինակ՝ Ասցի, թէ երթամ հեռու, ու կտրի սրտիկս ի սիրու, Ոնց որ զնացի հեռու, լո՛ւ դաբձաւ կրակն ի հուրու (ՆՔ, 60), Ոնց որ դու ելնես քալիս, աբեգա-կակեւ պ կու փայլես, Ոնց որ դու ի տուն մտնուս. իսաւաբի ամեն աստիւն ուր: Ոնց որ առավոտ լինի, զամ ի դուռդ, առնմ թէ՛ աւրի... (ՆՔ, 107):

Ուր շաղկապը ժամանակային հարաբերութիւն արտահայտող նախադասութիւնների կապակցման դերով միջին հայերենում համեմատաբար քիչ է գործածվում: Այս շաղկապի գործածութեամբ ընդգծվում է այն պահ, որի ընթացքում կատարվում է գլխավոր նախադասութիւն գործողութիւնը: Օրինակ՝ եւ թէ առաջ լինի ցաւդ դիպել, որ էրիկն շինի լսել, նա ի ծնողքն դառնայ (ՈԳԳ, 48):

բ) Տեղի պարագա երկրորդական նախադասութիւն

Տեղի պարագա երկրորդական նախադասութիւնները բացահայտում են, ինչպէս արձակում կամ ճշտում այն տեղը, որ տեղի է ունենում գլխավոր նախադասութիւն գործողութիւնը: Ընդ որում, երկրորդական նախադասութիւնը գլխա-

վոր նախադասության ստորոգյալի հետ կապվում է կամ անմիջապես, կամ էլ ղլխավոր նախադասության մեջ առկա տեղի պարագայի պաշտոնով բառի (մեծ մասամբ մակբայի) միջոցով:

Միջին հայերենի տեղի պարագա երկրորդական նախադասությամբ բարդ կառուցվածքները քննելիս նկատվում է, որ այսպիսի նախադասությունների հատակ կերպով տարբերակված իմաստային տեսակ թիշ է գործածվում: Ըիշու է, շատ սահմանափակ կիրառությամբ հանդիպում է զրարարում ևս գոյություն ունեցող հետևյալ կառուցվածքը, որի մեջ ղլխավոր նախադասությունը ունեւում է մակբայով արտահայտված հարաբերյալ բառ—տեղի պարագա, իսկ երկրորդական նախադասությունը կապակցվում է շաղկապով, ինչպես՝ Ուր բուրաստան կայ ու պարտէղ, ու շատ դայար և կանուշ, սէղ, Անդ կու ճեմի և շտայ բարտեղ... (նՇ, 636):

Այս դեպքում գերադաս նախադասության ձեական տեղի պարագան երկրորդականի իմաստը ակնառու է դարձնում: Սակայն այսպիսի սակավադեպ կառուցվածքի դիմաց միջին հայերենը ավելի շատ հանդես է բերում տեղի պարագայական նախադասությունների հետևյալ կառուցվածքային տեսակները.

ա. Ստորադասական մասում առկա է լինում հարաբերական բառ, որին որպես զուգադրություն սպասվող հարաբերյալ բառը ղլխավոր մասում րացականում է, սակաղծելով վեղշված (էիպտիկ) կառուցվածք: Օրինակ՝ Այսօր մարդիկ ուրախանան. Որտեղ ընկեր ունին սիրուն (Կն, 136), Տորտեղ կու նստիմ, ղլս կլմոռանամ ես (ՀԹ, 159), Ուր որ դու կանգնած լինիս, չէ պատեն վատեն մոմեղեն (ՆՔ, 71):

բ. Տեղի պարագա երկրորդական նախադասությունների մյուս տեսակը կարծես անցումային, շտաբերակված մի տիպ է, որի մեջ թեն ղլխավոր նախադասության կաղմում տեղի պարագայի պաշտոնով բառ է գործածվում, որը գոյական է, սակայն վերջինս իր նյութական իմաստը կորցնելու ճանապարհին է: Որինակ՝ Յայնժամ ոսէ սուրբ թագաւորն «Քաջ էիպարիս, մեծ գօրական, Հեծելս քեզ համար եկան Սինշ յայս տեղիս. ուր կանգնեցան (ՀԹ, 201), Յայն տեղն, ուր ետուր զդրամն ի դայ, մարդ կայր ի մօտն (ՎԱԼ, 250):

Յայս տեղիս և յայն տեղն բառերը վերոհիշյալ օրինակներում երկրորդական նախադասության ուր հարաբերյալի զուգադրությունն են և գոյականական արժեք չունեն: Դրանք փաստորեն այստեղ, այնտեղ գերանունների գործառույթն են կատարում:

Տեղի պարագա երկրորդական նախադասությունների շարադասությունը ղլխավորի նկատմամբ ազատ է և կառուցածքային առանձին նշանակություն չունի: Գերակշռում են նախադաս շարադասության դեպքերը:

դ) Պայմանի պարագա երկրորդական նախադասություն

Միջին հայերենի պայմանի պարագա երկրորդական նախադասությունների աչքի ընկնող առանձնահատկությունը այն է, որ դրանք անխառն շարահյուսական հարաբերություն չեն արտահայտում, այլ շատ հաճախ հանդես են բերում ինչպես ժամանակի, այնպես և պատճառի զիջական ու այլ հարաբերություններ: Պատճառի և պայմանի նախադասությունները նման են նրանով, որ երկուսին էլ հատուկ է գործողությունների պատճառական կապը. մի գործողության կատարումը սերտորեն կախված է լինում մյուսից, իսկ դրանք՝ այդ գործողությունները, միշտ էլ ժամանակի ընթացքում հաջորդական կապի մեջ են գտնվում:

Պայմանի հարաբերությունն արտահայտող նախադասությունների լրացուցիչ շարահյուսական հարաբերություններով բարդացվելը խոսում է այն մասին, որ միջին հայերենում պայմանի ու ժամանակի (մասամբ նաև պատճառի) երկրորդական նախադասությամբ բարդ կառուցվածքները դեռևս որոշակի շարահյուսական իմաստային տարբերակման չեն ենթարկվել: Պայմանի, պատճառի, ժամանակի երկրորդական նախադասությունները այստեղ կառուցվածքային շատ ընդհանրություններ ունեն, որից բխում է և նրանց բերականական-տրամաբանական ու իմաստային առնչվածությունը:

Պայմանի նախադասությունների կառուցվածքում շատ կարևոր գործոն է բարդ նախադասության բաղադրիչ մասերի բայական ստորոպայաների բերականական ժամանակը և առանձնապես եղանակը: Լեյդ տեսակետից պայմանի երկրորդական նախադասությունները հիմնականում բնորոշվում են բղձական եղանակի ժամանակներով արտահայտված բայական ստորոպայաների կիրառմամբ: Ընդ որում, բղձական եղանակի ժամանակներով օգտագործվող բայական ձևերը պայմանի նախադասություններին տալիս են համեմատաբար անխառն պայմանականության իմաստ: Օրինակ՝ Թէ հփեն զիս կրակով, շարպով շինեն ի շուկանին, նա զընեն զիս և տանին՝ ամէն ցաւու զեղ հիւրնդին (ԿԾ, 144), եթէ ոք վատ աւել ի վզնկելոցն՝ նա Աստուծոյ իրաւանցն աւել և ոչ ինձ (ՍՍԱ, 3), Լկալ թէ ի գողութիւն բռնվի, նա զկարգն առնուն ու դարպասն նոմոսով խրատ ստղայ այնեն զէջ գողոյ կամ անհավատի (ՄԳԻ, 22):

Պայմանի ստորադասական նախադասությունների շարահյուսական կապը իրացվում է շաղկապների ու շաղկապական բառերի միջոցով: Միջին հայերենում պայմանի նախադասությունները կապակցող միջոցները շաղկապներն են, որոնցից մի քանիսը իրենց բաղմագործառական բնույթի հետևանքով շարահյուսական մի քանի իմաստներ ունեն և նախադասությունների արտահայտած իմաստային հարաբերությունների բարդացնում են այլ ածանցյալ իմաստներով: Դրանք են՝ ուր (ուր քէ), եւր, յուրժամ շաղկապները, որոնք առհասարակ կապակցում են նաև պատճառի, հիմունքի, նպատակի և այլ հարաբերություններ արտահայտող ստորադասական նախադասություններ:

Նշած շաղկապներից յուրաքանչյուրը յուրատեսակ նուրբ իմաստային երանդ և ոճական առանձնահատկություն է հաղորդում իրենով կապակցվող բարդ նախադասությանը: Զուտ պայմանի շարահյուսական իմաստը բարդ նախադասության մասերի միջև ստեղծվում է քէ (թե) կամ եքէ (եթե) շաղկապների գործածությամբ:

Թէ. այս շաղկապը կիրառության հաճախակիության տեսակետից պայմանի ստորադասական նախադասությունները կապակցող ամենադործածական շաղկապն է: Բերենք մի քանի օրինակ՝ Թէ կամիս հանգիստ կենալ, որ չմաշես զուրկ զոգով, Մի՛ փառաց զուր հետեիլ, մի անդանիլ անեղր ի ծով (ԿԾ, 175), Լկալ քեզ վայ հապար բերան, թէ խոսով կենաս կամ ո՞ր պահես՝ Մի, 21): Փամբարությունն էու սիրէ, քէ զբառասնիցն ամէն իւր տան (ՄՂ, 35), Բող զայս խաւար աշխարհս ի բաց, լուս աշխարհի քէ ակն ունիս (ՀԱԳ, 17), Մի լինել կեղծաւոր և անձնահաճոյ, Թէ զուր ևս քրիստոնեայ ևս տառաւոր (Յր., 250), Եւ քէ կուլանկուպին տաք ջրով խմես, զստամոքն ուժովցնէ և այնոյ օգտէ, որ ստամոքն խիստ տաք չի լինի (ԱՌԲ, 300):

Թէ. շաղկապը հաճախ գործածվում է ուր, ու շաղկապների հարադրությամբ, որոնք սակայն իմաստային որևէ էական երանդ չեն հաղորդում քէ-ով

կապակցվող պայմանի ստորադասական նախադասություններին, դրանք մեծ ճատամբ թարմատար ղեր ունեն և առհասարակ խոսակցական ոճ են առաջացնում: Օրինակ՝ Ապա թէ ով գիտե, որ չեսի այրկանն դստերքն մեռնին, նա րև, ու կենայ հայրն կենդանի, նա մենակ դռնայ հայրենիք ի յառաջի այրկանն դստերքն (ՍՍԱ, 39), Որ թէ կամենայ լիճն տալ զիր ասրանքն ի պահ, և գայ առջև պարոնին և ասէ, թէ եկել եմ... (ՍՍԱ, 11):

Երև. զբարարում պայմանի պարագա երկրորդական նախադասությունները կապակցող ամենագործածական շաղկապն է, Միջին հայերենում նման կառուցվածքները կապակցելիս օգտագործվում է րև շաղկապին հար և նման շարահյուսական իմաստով: Տարբերությունը այս երկու շաղկապների գործածության հաճախականության և տեղի մեջ է, երև-ն գործածվում է գրաբար բնագրերում, իսկ րև-ն դուռ միջին հայերենի Օրինակ՝ Ով բարի թապաւոր, երև նեղեն զմեզ արծիւքն՝ դու գինչ սղնթիւն կարես առնել մեզ (ՎԱԱ, 14), Երև, անձրև ոչ գայ, ջուր ոչ բմւլեմ (էՄԱ, 6), երև զձի քո կամիս տալ ինձ, եւ զմեզս քո յոժարութեամբ առից ի վերայ իմ (ն. տ., 26):

Երբ շաղկապով կապակցվելիս, պայմանի ստորադասական նախադասության բաղադրիչները ձևոք են բերում որոշակի ժամանակային հարաբերություն, այսպիսի՝ երբ դիս ի քենէ պատեն, քան զմեռնելն այլ ճար չի լինի (նՔ, 50):

Այս նախադասության մեջ պայմանի հարաբերությունը ավելի քիչ է ակնառու, բայց՝ ժամանակին:

Երբեմն պատահում է, որ պայմանի հարաբերությունը Երբ-ով կապակցվող ստորադասական նախադասություններում համեմատաբար անխառն է արտահայտվում. դրան նպաստում է բարդ նախադասության բաղադրիչների բառային կազմի արտահայտած իրական բովանդակությունը: Օրինակ՝ Երբ սերն ի երկուքն լինի, քան զնուշն ու շաքարն անուշ է, երբ սերն ի մեկեն լինի, քանց մահուն օրն դժար է (նՔ, 48), երբ դու այգպես սրանչեյապործ մարդ ես, րնդէ՞ր իմ ծառայքէն շաղատեցար (էՄԱ, 78):

Երբ շաղկապին զուգահեռ և նույն իմաստով ու շարահյուսական գործածությամբ հանդիպում է նաև յորժամ շաղկապը, որը նույնպես գրաբարախառն բնագրերում է գործածվում: Հմմտ. Եւ յորժամ որ օթիս ի ճանապարհն՝ լվա զերեսդ հով ջրով (ԱՕԲ, 65), Ապա լինիս մարդ կատարեալ, յորժամ առնես ուսուցանես (ԲՆ, 20):

Որ. պայմանի երկրորդական նախադասությունները միջին հայերենում կապակցվում են նաև որ շաղկապով, Ինչպես և ժամանակակից հայերենում, այստեղ ևս որ-ը տվյալ դեպքում խոսակցական լեզվին հատուկ շարահյուսական միջոց է, Որ-ով կապակցվող պայմանի նախադասությունները պայմանի իմաստը բացարձակ չեն արտահայտում, այլ բարդացվում են պատճառի, նպատակի, ժամանակի հարաբերություններով: Օրինակ՝ ...Որ մի շերտ պանիր ոչ կարացեր պահել, դու զիրարդ կարես պահել թագավորութիւն (ՎԱ, 76), Մինչև չի հանգիստ՝ կերակուր մի՛ ուտել, և որ ուտես՝ թթվով կեր, որ գտաՔրան խաղեղնէ (ԱՕԲ, 65), Աշխարհս, ամ, ալ ի՞նչ ազվոր, որ լինի երկու՝ սերն նոր (նՔ, 40), Որ մեռաւ մեծատունն՝ փառք ու պատիւով թաղեցաւ (ԳՔԱԵ, 9):

Պայմանի հարաբերությամբ ստորադասական նախադասությունների համար շարահյուսությունը կական ղեր ունի: Պայմանի երկրորդական նախադասությունը կարող է լինել առաջադաս և վերջադաս, բայց շատ ավելի տարած-

ված է առաջադաս կիրառությունը, ինչպես՝ Թէ սերն գինով լինի. դու գնէ, ան-
սեր մի մնար (ՆՔ, 54), Ու նենգաւոր, երբ պարկ լինի մարք բո՝ ոչ հաւատամք
քեզ թէ թողուս դու զսովորական շարութիւնդ քո (ՎԱԱ, 32), Ի տղայութեան
ժամանակին օձէլ քէ կարացիր քափել. նա բան զքեզ մեծ թաղաւոր լինի (ԷՄԱ,
65), Բայց ի վերոյ գրեալ ժառանգութիւն զստերացն հորեղբարք և հորեղբո-
րորդիք շունին բաժին, երբ դուստր կենայ (ՍԳԴ, 57):

Ընդամին, պայմանականության ևրանգը ուժեղացնող գործոններից է
բարդ նախադասության երկրորդական մասի առաջադաս դիրքը, եթե պայ-
մանական նախադասությունը ետադաս է, պայմանականության իմաստը
աղտոտանում է. Հմմտ. Մուռ բանին խօսի՝ սկսին բարկանալ, Թէ որ չը խօսի՝
սիրտն չի հովանալ (ՆՀ, 83), Թող զայս խաւար աշխարհս ի բաց, լուս աշ-
խարհի քէ ալն ունիս (ՀԱԳ, 17):

Նախադասության քերականական-շարահյուսական այս գործոնը կարևոր
դեր ունի նաև ժամանակակից հայերենի նույնադնույթ կառուցվածքներում:
Այդ մասին Վ. Առաքելյանը գրում է. «Սովորական է նաև երկրորդական նա-
խադասության ետադաս դիրքը. այս դեպքում արդեն ուշադրության կենտրո-
նում է առնվում գլխավոր նախադասությունը, և որովհետև գլխավոր նախա-
դասությունը ուշադրության կենտրոնում է առնվում, արտաբերական որոշ
ինքնուրույնություն է ձևւթ բերում, ուստի և կապը երկրորդական նախադա-
սության հետ մասամբ թուլանում է»¹¹:

Այս առումով միջին հայերենում պայմանի երկրորդական նախադասու-
թյունները աչքի են ընկնում առաջադաս կիրառության բարձր համախականու-
թյամբ, որը թերևս բացատրվում է պայմանականության շարահյուսական-
տրամաբանական իմաստը առավել ճշգրտությամբ ու անխառն հաղորդելու
ձգտմամբ:

դ) Թէ (որ, երբ, յուրժամ)... նա (ապա) գուգալիւ շաղկապնեւով կազմվող
պայմանա-և ճշմանգման նախադասություն

Պայմանի ստորադասական նախադասությունների դարգացումը միջին
հայերենում, ինչպես տեսանք, ընթացել է ստորադասական շաղկապների ու
շաղկապական բառերի գործառական տեղադնումներ զուգահեռ լինելու
մով, միջին հայերենի քննվող նախադասությունները աչքի են ընկնում նաև
համադասական շաղկապների կիրառությամբ, որով ստեղծվում են շարահյու-
սորեն խառը տիպի կառուցվածքները: Դրանք կազմում են պայմանի ստորա-
դասական նախադասությունների կառուցվածքա-իմաստային մի այնպիսի
խումբ, որը առաջանում է զուգադիր շաղկապների միջոցով: Ստորադասական
նախադասության առաջին մասում գոյություն ունեցող պայմանի շաղկապը
հուշում է պայմանի հարաբերություն, որին որպես հետևանք, եզրակացու-
թյուն կամ եզրահանգում, հաջորդում է նա, ապա, նա ապա շաղկապներով
սկսվող մասը: Օրինակ՝ Հնցկուն աղվորիկ յարուկ քէ ի խուցդ գա, նա թողուս
(ՆՔ, 67), Թէ որ ծառէ ի վայր բնկնի ու մեռնէ, նա զծառն կտրեն (ՍԳԴ, 45):

Այսպիսի նախադասությունները իրենց շարահյուսական բնույթով խիստ
մոտենում են համադասությանը, որովհետև կապակցությունն իրապնով շաղ-
կապական զուգադրության երկրորդ բաղադրիչը (նա, ապա) սովորաբար կա-

¹¹ Վ. Առաքելյան, Եզգ. աշխ., հ. 2, էջ 219:

տարում է համադասական կապակցություն շաղկապելու գործառույթ: Նա. ապա շաղկապների գոյությունը պետական նախադասություն մեջ միաժամանակ ուժեղացնում է բարդ նախադասության բաղադրիչների բերականական ու իմաստային կապը, անկասկած ու դիպուկ է դարձնում պայմանի հարաբերությունը, վերացնելով պայմանի շաղկապների գործառական բաղադրանքային ու անբավարար տարբերակվածության հետ կապված թերությունը, որի պատճառով այս նախադասությունները ձեռք էին բերում պատճառային, նպատակային, ժամանակային և այլ լրացուցիչ հարաբերություններ:

Պայմանա-հետևանքային կամ պայմանա-եզրահանգման ստորադասական նախադասությունները ամենից շատ շաղկապվում են՝ քէ (էքէ)... նա զուգադրությամբ: Օրինակ՝ Թէ չկար սէր յիմ սըրտիս, ու ես ունի անհոգութիւնն, Նա ես է՞ր ի կախ լինի զօրն ու գիշերն ի մեջ փրշին ԿԾ, 142), Երէ այգի մտնես, որ քո չէ, նա դու փորովդ կեր, քեզ հալալ է (ՍԳԴ, 78), Երէ քրիստոնէ զքրիստոնէ սպաննէ կամօք, նա նորա արևուն վրեժխնդիրն թագաւորն է (ՍԳԴ, 17), Չդիտէք քէ աշաքս առնեմ, նալ կուտամ զձեր հողն ի քամիր (Յր., 349), Նոյնպես և քէ անպատիւ բանադրէ, նա զինք բանադրեն՝ որ ապաշխարէ (ՍԳԴ, 36), Եւ քէ ուտէ, նա ալանի թող ուտէ (Ն. տ. 38):

Հաճախ բարդ նախադասության բաղադրիչների միջև պայմանա-հետևանքային շարահյուսական հարաբերություն արտահայտող ալոպիսի կառուցվածքներում շաղկապական զուգադրության առաջին բաղադրիչը (քէ, էքէ) հարադրվում է ապա, ու, իսկ, նա համադասական շաղկապներով, որոնք տրվյալ բարդ կապակցության համար կառուցվածքային դեր չունեն, սակայն ցույց են տալիս հակադրության կամ միավորման հարաբերություն նախորդ ասվածի նկատմամբ: Հմմտ. Ապա քէ չկենայ որդի և ոչ դուստր և եղբոր որդիք լինին, նա հայրապետին և այլ եկեղեցոյն և իշխանաց ու երկրին տեսողն առնուն մէկ մի, յոր հաճին (ՍԳԴ, 16), Ու քէ խալապայ (խալապալայ) լինի և յանդգնեալ քշտէ իրիցուն, նա ձեռքն կտրվի, ապա քէ զղջայ ու մեղայ ասէ, նա եպիսկոպոսն կարգ դնէ, որ ապաշխարէ (Ն. տ., 36), Նա քէ յուղարկողին արտորցնելոյն լինի լեալ, նա պատռեցնողին մեղ չկայ, ապա քէ յազփրթովենէ լինի, նա այն ի դատավորին խեղճն է (Ն. տ., 78), Իսկ թէ ջերմն ի տաքութենէ լինի, նայ աշուն դորփեալ և խորվեցեալ և գիջացեալ լինի (Գր., 15—16), Իսկ քէ տաքութիւնն ի սրտմտութենէ լինի, նայ նշանքն այս են, որ աշլին պոպգեալ լինի և երեսաց զոյնն շառայգոյնեալ (Ն. տ., 15):

Պայմանա-եզրահանգման կամ պայմանա-հետևանքային հարաբերությամբ բարդ նախադասություններ են կազմվում նաև յորժամ... նա. երբ... նա. ուր... նա զուգադրիչ շաղկապներով: Սրանցից յորժամ և առանձնապես երբ շաղկապներով կապակցվող պայմանի երկրորդական և զերադաս նախադասությունների միջև ակնհայտորեն արտահայտվում է և ժամանակային հարաբերություն: Դրան նպաստում է նաև նախադասությունների քառային կազմի իրական բովանդակությունը, ժամանակի պարադայական նախադասությունները կապակցող շաղկապների գործածությունը, ինչպես և բարդ ամբողջության մասերի շարադասությամբ արտահայտված գործողությունների ժամանակային հաջորդականությունը, որը փաստորեն այստեղ կառուցվածքային դեր է կատարում: Օրինակ՝ Եւ երբ ի վերայ քլին լինի խայթած, նայ մարդն զխելսն կորուսանէ և ընկնի (Գր., 49), Յորժամ զաստուծոյ անունն յիշէք, նա աստուած պիտի զձեզ յիշէ (ՎՍԼ, 167), Ապա Լոյ ծնողքն մեռնին, նա կարե-

նան ջախջեղ՝ ի վերայ հայրենեցն, և բլայթել (ՎՍԱ, 19), Անոր համար... ևս գրել, որ յորժամ վերավորանք հանդիպի ի մեր մէջս, նայ դայս թուղթս կարդամ և զսերն շաիրեմ (ՎԱԱ, 308):

Որ... նա զուգադիր շաղկապներով կապակցվող պայմանա-հետևանքային նախադասութիւնները միջին հայերենում ավելի շատ խոսակցական լեզվին հատուկ ունիվերսում ունենւմ էմատ. Աստված է վերն վկա, որ զբեզ մեկ սրտով կու սիրի, Հանկարծ ու երկուք ըինէր, նա հանի զմեկն ու մորթի (ՆՔ, 173), Որ այս անճարակ տեղիս դեմ չի գաս, նա այլ չի պիտիս (ՆՔ, 165):

Վերոհիշյալ շաղկապային զուգադրութիւններով իրացվող բարդ կապակցութիւններին որպէս շարահյուսական համանիշ կիրառվում են նաև՝ քէ (Երկ, ԼԵԲ, յորժամ)... ապա զուգադիրներով առաջացող կապակցութիւնները Այսպիսով առավել պարզ է դառնում, որ նա շաղկապը միջին հայերենում կատարում էր ապա շաղկապի իմաստային զործառույթը, որովհետև ինչպես կուսենէր, նա և ապա շաղկապներով կապակցվող նախադասութիւնները կառուցվածքային և իմաստային ոչ մի էական տարբերութիւն հանդէս չեն բերում էմատ. Երբ տաքութիւն հասնի ի քնական լերկորդ զիճութիւնն՝ որ ի միտն լինի և ի փոր կարսիքն, ապա այն նշանին՝ զոր տաքսար ի յատաջին հալւամաշն, ի յայս ի յերկորդ ցեղս այլ ի բաց լինի (ՂԷ, 79), Խ՛կ կարիք ունի արին հանելոյ և օգնէ ումն և տարին և ժամանակն, ապա արին հան ըստ կարւալն և որպիսութեանն (ՂԷ, 82), Ապա քէ կարիք է որ ուժովցենա զմարմինն, և իւր ջերմն չլինի ուժով, ապա տուտաճ տուր և հաու ձագ (ՂԷ, 81):

Կառուցվածքային տեսակետից հետաքրքիր են քննվող տիպի այն նախադասութիւնները, որոնք կազմվում են վերոհիշյալ շաղկապային զուգադրութիւնով աչնպես, որ Երկրորդ բաղադրիչը իմաստային առումով կրկնադիր զործածութիւն է ունենում. նա շաղկապի կողքին որպէս ավելագորութիւն օգտագործվում է նաև ապա-ն, ինչպէս՝ Ամ դայս ասէք, քէ որ դայս միութիւնս կու քակեն ու կու այլայլեն, որ է մայր մեր ս. և կեղեցի և հայր բանն Աստուծոյ Քրիստոս, նա ապա զմեզ զքրիստոնէքս ի մեր հօրէն և մօրէն կու քակտեն (ՍՍԴ, 29):

Հաճախ նա և ապա նույնիմաստ շաղկապների կրկնադիր զործածութիւնը պայմանավորված է լինում տվյալ բարդ ստորադասական նախադասութիւն կառուցվածքային առանձնահատկութիւնով. Այսպէս՝ նա... ապա շաղկապները զործածվում են պայմանա-հակադրական կամ պայմանա-եզրահանգման աչնպիսի նախադասութիւններում, որոնց կառուցվածքը թույլ է տալիս մեկից ավելի համաստորադաս նախադասութիւնների առկայութիւն, որոնք ստորադասվում են միեւնոյն զերադաս նախադասութիւնը. Ստացվում է, որ նա... ապա հարադրութիւնով սկսվող հետևանք կամ եզրակացութիւն արտահայտող զործողութիւն իրականացումը կախված է լինում մեկից ավելի և տարբեր բնույթի պայմաններից. Այսպիսի դեպքերում որպէս շաղկապային զուգադրութիւն առաջին բաղադրիչ տվյալ ստորադասական նախադասութիւնները օգտագործում են պայմանի տարբեր շաղկապներ (որ. քէ): էմատ. բահանայ, որ թողնայ, նա ժ տարի ապաշխարելով և տրօք քէ կենալ, նա ապա հաղորդելոյ կարէ արժանատրել՝ որ յկեղեցի մացէ և հաղորդի (ՍՊԴ, 38), Խ՛կ որ ծառէ ի վայր քնկնի ու մեռնի, նա զծառն կտրեն և ԼԵԲ մուրդ հանէ, նա ապա ուտվի պտուղն (ն. տ., 45):

Երբեմն վերոհիշյալ նա ապա-ի համարանութիւնով կազմվում է նաև նա ու

ձևը, որի միջոցով կապակցվելիս բարդ նախադասությունը ստանում է հետևյալ շարահյուսական իմաստը. զլխավոր նախադասության և նախորդ՝ պայմանի պարագա երկրորդական նախադասության արտահայտած գործողությունները իրար նկատմամբ ձևը են բերում լրացման, հավելման հարաբերություն։ Օրինակ՝ ի մեր հօրեն և ի մօրեն կու քակտեն, պի երբ յիրացմէ կու քակտենք, նա ու նոցանէ կու քակտինք, զէդ այն, որ Լրբ զիր հայրն ևս զմայրն կորսնէ, նա զայլն և զազանք կու յափշտակեն (ՍԳԴ, 30)։

Այսպիսով, նա. առաջ շաղկապները միջին հայերենում բարդ ստորադասական նախադասության զլխավոր և երկրորդական մասերի գործողությունների միջև պայմանի հարաբերություն առաջացնող քէ, ու, երբ, յուրմամ շաղկապների հետ պոպադրություն կազմելով, կապակցում են բարդ ստորադասական նախադասությունների այնպիսի տեսակ, որը իր կառուցվածքա-իմաստային հատկանիշներով տարբերվում է պայմանի ստորադասական նախադասություններից, իր շարահյուսական հատկանիշներով մոտենալով համադասությանը։

և) Պատճառի պարագա երկրորդական նախադասություն

Պատճառի պարագա երկրորդական նախադասությամբ բարդ ստորադասական կառուցվածքների շարահյուսական դերը երկու կամ ավելի գործողությունների պատճառական կապի իմաստային արտահայտությունն է։ Բարդ կապակցության բաղադրիչների կապը իրացվում է շաղկապներով։

Ինչպես հայտնի է, պատճառի տրամաբանական կատեգորիան առաջացել է մյուս կատեգորիաների՝ տարածության և ժամանակի համեմատությամբ վերացական մոտադրության պարզացման առավել ուշ շրջանում։ Ռուս լեզվաբան Յակուբինսկու դիտողությունները ցույց են տալիս, որ պատճառային հարաբերություն արտահայտող շատ շաղկապներ իրենց ծագումով ժամանակա-տարածական կապերից են առաջացել. «Բուն պատճառական (կաուզալ) կապերի գիտակցումը, — գրում է նա, — որպես մտքի պատմության նոր դարաշրջան, առաջանում է արդեն համակենցության գիտակցական կապերի հիմքի վրա՝ իրականության առավել խոր և ընդհանրացված ընկալման հետևանքով, արտադրության և հասարակական հարաբերությունների զարգացման հետ միաժամանակ։ Ահա ինչու ամենատարբեր լեզուներում պատճառային հարաբերություն արտահայտող նախդիրների մեծ մասը իրենց ծագմամբ տարածական և ժամանակային նախդիրներ են»¹²։ Այսպես էլ՝ ժամանակակից հայերենում պատճառական հարաբերություն արտահայտող ուրվհետև շաղկապը առաջացել է ուրի հետևով կապակցությունից¹³, որը, ինչպես տեսնում ենք, տարածական իմաստ է պարունակում։ Այսպես է բացատրվում միջին հայերենում պատճառի երկրորդական նախադասությունների կապակցման նպատակով գործածվող շաղկապների բազմազորածական բնույթը։ Միջին հայերենը ունի սահմանափակ թվով միջոցներ, որոնք բարդ ամբողջության բաղադրիչների միջև արտահայտում են համեմատաբար անխառն պատճառականություն հարաբերություն։

Ինչպես նկատվել է, ստորադասական նախադասություններում շաղկապների ընտրությունից է կախված տվյալ շարահյուսական իմաստի ճիշտ դրսև-

¹² Մ. И. Якубинский, История древнерусского языка, М., 1953, стр. 255

¹³ Վ. Առաքելյան, Եզվ. աշխ. էջ 209։

վորման ու ընկալման պրոցեսը: Այդ պատճառով էլ միջին հայերենի ուսումնասիրվող կապակցությունների տեսակները կփորձենք բննարկել ըստ այն շաղկապների, որոնցով դրանք կապակցվում են:

Քննվող շրջանի պատճառային շաղկապները ըստ ծագման և կիրառության կարելի է բաժանել երեք խմբի.

1) Գրարարում ամենագործածական և միջին հայերենի համեմատաբար վաղ շրջանի և գրաբարախառն ընկալներում դործածվող շաղկապներ: Դրանք են՝ զի, վասն զի, քանզի:

2) Մեր լեզվի համարյա բոլոր շրջաններում կիրառվող ու, քէ, եւր բաղմագործառական շաղկապներ:

3) Միջին հայերենում և արեւմտահայ բարբառներում դործածվող զերայ (զէւէ) շաղկապը, որը փոխառյալ է թուրքերենից:

Բարդ կապակցության քաղաղրիչների միջև պատճառային մաքուր ու անխառն շարահյուսական հարաբերությունն արտահայտելու տեսակետից դեռապատվությունը պետք է տալ առաջին խմբին՝ դրաբարից տվանդված շաղկապներին: Բերենք օրինակներ՝ Յամենայն կորնչի, զի ոչինչ բերաք աշխարհ և ոչ տանիլ ինչ կարասցուր (էՄԱ, 11), Եւ թէ հայրապետն հրամանք տույ, նա և մեռոն էլ կարեն օրհնել, վասն զի եպիսկոպոսութեան օծումն ունին (ՍԳԴ, 41), Պարտ է դիտել, որ ժողովարան թարգմանի, որ հանիլ լինի ամենայն ազգաց հաւատացելոց միասիրտ և միակամ և միտհաւատ ի մօր մեր հանդչիլ ի դիրկ, և չամբել ի կաթին տեղ դս. մարմին և դարին հօրն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր վասն մեր եհեղ և այնով միանալ ի մէկ, վասն զի առաքեալքն ի մէկ կեցան և գմեզ ի մէկ ուսուցին (ն. տ., 30):

Իսկ զի և քանզի բառերը, որոնք արդեն իսկ դրաբարում համարյա կորցրել էին իրենց գործառական սահմանները և իմաստային տարբերակումը, պահպանելով միայն ոճական կիրառման առանձնահատկություն, միջին հայերենում էլ նույնն էին: Հմմտ. Սկսան ելանել ի լեւոն՝ տեսանիլ զնա, քանզի ցանկային մեծ փափագանօք պատկերաց զեղոյ նորա (էՄԱ, 13), Ոչ թէ միայն Գողթայն տունս, այլ ամենայն երկիրս այսպէս. Թարվեզու մինչև Երևան, Զորսու մինչի Գանջայ, ևս առաւել Գողթան տունս, քանզի անցեալ տարոյն երաշտութիւն եղև (ՁԱՕ, 114), Եւ աշխատիլն ի կերակրէն յառաջ պիտի, զի լաւ է (ԱՕԲ, 60), Նոյնպէս և մօտեջն ոչ է պարտ ամուսնացնել բնաւ, զի տղայ չհանէ ի հուն (ՍԳԴ, 57):

Ինչպես տեսնում ենք, քանզի և զի շաղկապները որեւէ իմաստային ներքինանգ չեն ցուցաբերում իրենցով կապակցվող նախադասությունների արտահայտած շարահյուսական հարաբերություններում: Ուրիշ խոսքով, միջին հայերենում դրաբարից մատանդված այս երկու շաղկապներն էլ հավասարապես դիտվել են որպէս պատճառի հարաբերություն արտահայտող միանման կապակցական միջոցներ: Տարբերությունը թերևս այն է, որ զի-ն քանզի-ի համեմատությամբ ավելի շատ է դործածվում, քանի որ այն կիրառվում է նաև բարբառային ու խոսակցական առանձնահատկություններով բնորոշվող գրավոր աղբյուրներում: Հմմտ. Կու հրամայէ օրենքս, որ երկու բոյր մէկ հղբօր բաժին առնուն, զի երկու աղչիկն մէկ կարիճ է համարած, և կինն կէս այրկան է համարած օրենքս (ՍԳԴ, 57), Թէ ու կենայ հայրն կենդանի, նա մենակ դառնայ հայրենիք ի յառաջի այրկանն դստերքն, զի վերջին այրիկն ի հօն հասոյթքն շունի (ՍՍԱ, 39), Խիստ սովամահ էի բեկեալ, Բըրգեա րզհաց, զի եմ

քաղցած (Ֆր., 314), Օ վարդ, աղվոր դոյնով ի լի, Սաղկանց պարծանք և դովելի, Մեծ գովութեան ևս արժանի, Զի ևս տեսով խիստ սիրական (ԿՆ, 133):

Պատճառի պարագա երկրորդական նախադասութիւնները միջին հայերենում, ինչպէս ասվեց, կապակցվում են նաև ու շաղկապով, վերջինս սակայն շատ թույլ է կատարում բարդ նախադասութեան բաղադրիչների միջև պատճառականութեան շարահյուսական հարաբերութիւնը արտահայտելու իր գործառույթը, ուր-ով կապակցվող այսպիսի բարդ նախադասութիւններում մասերի արտահայտած գործողութիւնների պատճառական կապը ավելի շուտ ընկալվում է այդ մասերի բառական կապի արտահայտած բովանդակությամբ, ինչս շաղկապով կապակցվող պարագայական նախադասութիւնները իրենց ձևով և արտահայտած իմաստով երբեմն շատ մոտենում են որոշիչ երկրորդականին, ինչպէս՝ Ես մեղավոր Պարսամ գերի, Ու զակոսնիս իմ զովեցի Բնաւ զհոգիս իմ շիշեցի. Որպէս ճուղապ տամ Քրիստոսի (Տվա, 595):

Երբեմն այսպիսի նախադասութիւնների գլխավոր մասում առկա է լինում որևէ ցուցական դերանուն, որը որպէս պատճառականութեան ցուցիչ՝ հուշում է երկրորդականի արտահայտած շարահյուսական իմաստը. Օրինակ՝ Եւ այսով մտաւ այրի կնիկն ի կոյս աղջկին աստիճանն՝ որ տղայ եղաւ ի յիրմէ (ՍՍԱ, 55):

Ու շաղկապով կապակցվող պատճառի երկրորդական նախադասությամբ բարդ կապակցութիւնների կառուցվածքային փոփոխակ է հանդիսանում այսպիսի նախադասութիւնների գլխավոր մասում վասն այն, վասն (վանց) այնորիկ, իսկ համեմատաբար ուշ շրջանի աղբյուրներում նաև՝ այնոր համար կապակցութիւններով կազմվող բարդ նախադասութիւնը. Օրինակ՝ Բայց վանց այնոր, որ անհամանք է ելել ճորտն, նա թող հայնց անէ, որ այս Ժէ աուրս ի ներքսէ դառնայ (ՍՍԱ, 13), Եւ ստուգն այն է, որ այս գործս խասիաթով է, և չէ ընութենով այնոր համար, որ իր ճոհն նուրբ է, շուտ կու մտէ ի անձն մարդուն (ԱԱԱ, 11):

Այսպիսի բառերով են կապակցվում այն բարդ նախադասութիւնները, որոնց բաղադրիչները երկուսից ավելի պարզ նախադասութիւններ են, ընդ որում, պատճառի և հետևանքի հարաբերությամբ միավորված գործողութիւնների միջև ընկած է լինում մի երրորդ նախադասութիւն, որը սովորաբար պայմանի զաղափար է արտահայտում. Եվ որովհետև այսպիսով առաջին երկուսը իրարից հեռու են ընկնում, ապա պատճառի երկրորդական նախադասութեան կազմում հանդես են գալիս վասն այնոր բառերը, որոնք բառական և նշարտարեական կախում են առաջացնում գլխավորի նկատմամբ, դրանով ամրացնելով նրա և ստորադաս մասի կապը. Օրինակ՝ Եւ զքիմն վասն այնոր ամուր և պինդ արար, որ երբ բերանն շունչ արգելք լինայ՝ նա ի քթն ելանէ շունչն (ԱՌԲ, 49):

Հետաքրքրութիւն է ներկայացնում այսպիսի բարդ նախադասութեան գերադաս մասում համար կապի, այն ցուցական դերանվան և սլատեառ բառի դուգակցությամբ առաջացող կապակցութիւնը, որը վերը բերված կառուցվածքա-իմաստային խմբի ոճական տարրերակ է. Հմմտ. Եւ այս ծակերն յրդեղէն հեռու է այն սլատեառին համար, որ յորժամ զշունչն ի վեր քաշէ՝ նա հով քամին ի յրդեղն շի հասնի (ԱՌԲ, 30):

Պատճառի, ավելի ճիշտ՝ հիմունքի, ստորադասական նախադասութեան կապակցման նպատակով նահապետ Քուչակը գործածում է այստ (այսպիսի պատ.

ճառով) բառը, որը գրվում է նախադաս գլխավոր նախադասության սկզբում՝ միանգամայն շեշտելով պատճառա-հետևանքային կապը, Օրինակ՝ Այստեղ չեմ գար ի քեզ, շատ շարկամ ունիս, կու վախենմ (ՆՔ, 187)։

Ներքև շաղկապով կապակցվող պատճառի երկրորդական նախադասություններն արտահայտում են նաև ժամանակի շարահյուսական իմաստը՝ Իսկ առաջանում է այս շաղկապի բառական բուն բովանդակության պատճառով, Օրինակ՝ Երբ չը բերիր գինեկը ի վերայ, Հոգիդ թող մէջ հրոյն լողայ (Ֆր., 324)։

Ներքև այս դեպքում փոխարինում է՝ Դանի ու, որովհետև բառերին, Համար, Դու պինդ ու ամուր կեցիր, Երբ սիրող հիմն ձգեցիր... (ՆՔ, 51)։ Երբ դու վարդին սիրուն հասար, Յերակ խօսէ դու բաղցրաձայն (ԿՅ, 132)։

Բարդ կապակցության բաղադրիչների միջև պատճառականության շարահյուսական իմաստը թույլ են արտահայտում նաև թև, շաղկապով կապակցվող նախադասությունները, Օրինակ՝ Յորդոր կաց, ուրախ, թև դալի աէր ես, նախիմ սիրով ի քեզ, աստուած վրկայ մեզ (ՀԲ, 146), Զաղեկն դու ստեղծեցիր, ինձ է՛ր մեղք դնես, թև սիրեմ (ՆՔ, 65)։

Իսկ շաղկապով կապակցվող բարդ նախադասությունները եւ իրենց բաղադրիչների գործողությունների պատճառական կապի հարաբերությունը մատնացույց անելու նպատակով երբեմն գլխավոր մասի կազմում ունենում են պատճառականության ցուցիչ-բառերը, Օրինակ՝ Կարծեմ վասն այնուր տարր, թև ի վեր քարշել գնա կարէ (ՀՆ, 162)։

Բացի այս թվարկած շաղկապներից, միջին հայերենում քննվող ախայի նախադասությունները կապակցելու նպատակով օգտագործվել է նաև գերայ (նաև՝ գլբլ, գրովյամբ) շաղկապը, որը ինչպես ասվեց, փոխառվել է և մեր լեզվի վարդագման հետագա շրջանում կիրառությունից դուրս է բնկել։ Այս շաղկապով կապակցվող բարդ նախադասություններում պատճառականության իմաստը պարզ է արտահայտված, դրան նպաստում են նաև բարդ նախադասության մասերի՝ պարզ նախադասությունների արտահայտած բուն իմաստները։ Բերենք օրինակներ՝ Շատ որդայիներ առնէ, վասն տյնոր՝ որ սէրն աիրի, Ահայ չի կարէ գործել շարասէր մարդն նայ բարի (Ֆր., 402), Հապար ուսուֆ է քեզ ծառայ, է արեղակն ու խույ սուրաթ, Ամէն աշխարհքս քեզ ֆրտէ, Ահայ շունիս իսկի զայստ (ՀԲ, 128), Շատ դիտուն մարդն չի ուրախանալ, Ահայ տղետքն չեն հաւան կենալ (ՆՀ, 83), Մեռելիքի գլուխ շունի, Ալբլ հեռու է գերեզման (ՄՂ, 85), Պաժուկ խօսք որ ասես՝ ցած խօսէ ճո տանն, Ահայ կու լսէ բո հարեանն, Քեզ խաշտառակեն, տանեն դիտանն (ՆՀ, 90)։

Պատճառի երկրորդական նախադասությունները, ինչպես ցույց են տալիս վերը բերված օրինակները, բարդ նախադասության մեջ ունենում են նախադաս և ետագաս դիրք, սակայն գերակշռությունը կազմում են երկրորդականի ետագաս շարահյուսության գեղերը, երբ փաստորեն տրամաբանական հետևանք արտահայտող գործողությունը կամ երևույթը նախորդում է պատճառին, ինչպես՝ Ելանէ բուխարն ի զուղն, և զուղն չկարէ վարել գվատն, զի վատում է (Գր., 57)։

Պատճառի երկրորդական նախադասության նախադաս դիրքը, որը գրաբարին հատուկ էր և այս շրջանի լեզվին փոխանցվել է գրաբարատիպ նախադասությունների ու դարձվածների կիրառության շնորհիվ, ինչպես ասվեց, ավելի հազվադեպ է, Օրինակ՝ Քսենոֆոնը է արդարապես նախադասության կորրեկտ... (էՄԼ, 11), Բայց վասն զի ելան եկեղեցիէն իրենց սահմանէն,

նա ելան և թագաւորքն յիրենց եղևալ կանոնացն և աստիճանաւորքն զկնի իրեանց, Յունացն և մերս (ՄԳԴ, 42):

զ) Նպատակի պարագաւ երկրորդական նախադասութիւն

Նպատակի պարագաւ երկրորդական նախադասութիւնները ցույց են տալիս գերազանց նախադասութեան գործողութեան ինչ նպատակով կատարվելու՝ Բնական շրջանում զրանք կապակցվում են ինչպես պարարից ավանդված զի շաղկապով, այնպես էլ խոսակցական լեզվում տարածված ուր. ք, շաղկապներով: Օրինակ՝ Վարդիս Եփր կանաչ վրան, Ուր դայ բաղմի գերդ հուր վառել (ԿԵ, 119), Արեկ մոտ ի յիս նստիր, ու տամի ի բեղ սիրու խաղար (ՆՔ, 54) էր թագաւոր մի մեծ և ունէր որդի մի, և դայն որդին ոչ թողոյր փաղաւորն, որ երթայր ի պինարբուս և ի մճիւս, ու շատ զրոյց չէ ուսանէր (ՎԱԱ, 182), Եւ զիր հատն որսորդին կտնեն, և զիրենց որսած մսին մեջն դնեն, ու չի հոտիր (ԱԱԱ, 98), Այս Ավդուլէն Զունուզ այնչափ պահեցին Բուխավում, մինչի թիւն Ռճիժ սեպտեմբերի մէկն միայն Ավդուլէն դուցուդ տարան Ըսպահան, ու զի վան անեն (ԶԱՍ, 112):

Միջին հայերենի ինչպես վաղ, այնպես էլ հետագա շրջանների համար ուր շաղկապը նպատակի երկրորդական նախադասութիւնների կապակցման ամենատարածված ու գործուն միջոցն էր, որ բանավոր խոսքում համարյա դուրս էր մղել պարարյան զի շաղկապը: Վերջինս գործածվում էր հիմնականում այն պարագայում, որոնք տեղ-տեղ մարտը զրաբար են, կամ պարարին հարադատ: Դա նկատվում է մեծապես առակադրութեան ժանրում՝ Վարդան Այգեկցու ստեղծագործութիւններում, ինչպես և «էջեր հայ միջնադարյան զեղարվեստական արձակից» ժողովածուի նյութերում, որոնց լեզուն բաց երևութին զրիչների ջանքերով հետագա «մշակման» է ենթարկվել: Բերենք օրինակներ՝ Եւ տեսաւ շունն և ընկեց զինքն ի ծով, զի առցէ զմարմին տեսաւ իւրոյ... (ԷՄԱ, 18), Ասայ ինձ զպատճառն, զի և ևս արարից ձայնից իմոյ զգեղն զայն (Ն. տ., 5—6), Թագավոր մի բարկացաւ ումեմն իշխանի և արկ ի բանտ և ասաց ոչ տալ նմա կերակուր, զի ՚ի սովոյ մեռցի (ՎԱԱ, 275), Ապա պարտ է յայս կեանքն ժողովել, որ է ամառն, իմաստութեամբ և աշխատութեամբ՝ զհոգևոր կերակուր, զի մի դատաստանի օրն սովամահ ի դժոխս արկանեն զմեզ (ՎԱ, 12):

Ինչպես նկատում ենք, այս բնագրերի լեզուն համարյա զրաբար է:

Միջին հայերենի նպատակի պարագաւ երկրորդական նախադասութիւնները կապակցող հաջորդ շաղկապը քէ-ն է: Այս շաղկապի գործածութիւնը ևս խոսակցական լեզվից է դալիս, ինչպես և ժամանակակից հայերենում է: Օրինակ՝ Փափաքել եմ ի ջուրն, յուսով կու գնամ, Թէ հասնիմ ի յայն աղբիւրն, որ կենդանանամ (ԶԱԳ, 23), Թոչ ի երկնօրն երթի, քէ սիրո ալնատն շընկենի (ՆՔ, 58):

Թէ, շաղկապը համարյա առանց իմաստային ու գործառական զուգահեռի գործածում է Զարարիա Ագուլեցին: Այս Բանաշահ Մ տարի որը մնաց, պատճառ հայրենի տներն ու տղերքն, քէ աչոյց ձեռք չի բնկնի (ԶԱՍ, 92), Այն Ամիրխանն կու գայ, քէ Աղամիրի յիսէն տէրութիւն անէ (Ն. տ., 92), Եւ Զարարիա զնացի Թարվեզ, քէ գնամ Ըսպահան (Ն. տ., 83):

Ինչպես տեսանք, միջին հայերենում նպատակի պարագայական նախա-

դասութիւնները կապակցող ուր. յ՛ւ. շաղկապները բառական կոնկրետ իմաստ չունեն և շարահյուսական առումով բազմադործառական են: Հետեւաբար շարահյուսական տվյալ հարաբերության դրսևորման համար այս նախադասութիւններում կարեւոր է դառնում բառական կաղմի ունալ բովանդակութիւնը, ինչպես և նախադասութիւն բաղադրիչների ստորոգյալների քերականական ժամանակը:

Նպատակի պարագա երկրորդական նախադասութիւնների համար կառուցվածքային միջոց են ծառայում բարդ կապակցութիւն գլխավոր ու երկրորդական մասերի բայերի եղանակա-ժամանակային կիրառութիւնները: Ընդհանուր առմամբ, նպատակի երկրորդական նախադասութիւնը գլխավորի նկատմամբ ունենում է ժամանակային հաջորդականութիւն իմաստ, մանավանդ որ երկրորդականի արտահայտած գործողութիւնը որոշ չափով նաև հետևանք է գերադաս նախադասութիւն արտահայտած գործողութիւն նկատմամբ: Ահա այս հետևանք գործողութիւն բայը անպայմանորեն ըղծական եղանակով է արտահայտվում: Սրինակ՝ Ետուր բրդխումն ինձ արտասուաց, որ ի հրրոյն անան մնամ (Ֆր., 255), Յէզգէն հոգսն այսաւր արա. որ շայրիս ի հուրն անիհուն (ն. տ., 345), Այս շար ցանկութիւնս է յիս բընակել ու զիս կու տանի Հանցեղ կու ջանայ հետ ինձ, որ գերի տայ զիս սատանի (ն. տ., 363), Այ իմ մարգարտէ շարոց, պագ մի տուր, որ ես մեռնիմ ոչ (ՆՔ, 42):

Շարահասութիւնը նպատակի պարագա երկրորդականով բարդ նախադասութիւններում կայուն է. ստորադաս մասը միշտ հաջորդում է գերադասին: Հմմտ. Զայս արի ինձ ապաւէն, քէ անումէկ ես չը մրնամ (Ֆր., 257), Զաստուած անցել զոք մի սիրել, ու դու ապա մաւղ երեկիս (Ֆր., 270):

Իրրեմն պատահում է, որ երկրորդական նախադասութիւնը հեռու է ընկնում գերադասից, որի գործողութիւնն նպատակը ինքը բացահայտում է: Այսպես է լինում, երբ գլխավոր նախադասութիւն մեջ շրջում կա, որի հետևանքով բարդ նախադասութիւն բաղադրիչների միջև կապը իմաստային առումով թուլանում է. ստացվում է երկիմաստութիւն. ինչպես՝ Վայ, եղբայր, մի ուտէր, ուրբաթ է օրս՝ ու շի բարկանայ քեզ աստուած (ՎԱԱ, 36):

«Որ շի բարկանայ քեզ աստուած» նպատակի պարագա երկրորդական նախադասութիւնը, որ բացահայտում է մի ուտէր բայի գործողութիւնն նպատակը, նրանից հեռու է ընկել և կարելի է մտածել, թե աստծու բարկանալու պատճառը ուրբաթ օրն է:

Սա շրջասութիւն (ինվերսիա) երևույթ է, որ ինչպես կտեսնենք, որպես շարահյուսական անկապակցութիւն, հատուկ է միջին հայերենին:

է) Ձևի և բաղդատուրյան պարագա երկրորդական նախադասութիւն

Ձևի պարագա ստորադասական նախադասութիւնները գլխավոր նախադասութիւն գործողութիւնը մի ուրիշ գործողութիւն կամ երևույթի հետ համեմատելու միջոցով բացահայտում են այդ գործողութիւնն ձևը, կատարման որակը: Ձևի պարագա ստորադասական նախադասութիւնները շարահյուսորեն նման են բաղդատական ստորադասական նախադասութիւններին. երկու դեպքում էլ բարդ նախադասութիւն բաղադրիչների արտահայտած գործողութիւնների կամ եղելութիւնների միջոցով համեմատութիւն է արվում այդ բաղդարամասերի արտահայտած գործողութիւններին կամ եղելութիւններին միջև:

Ընդհին հայերենում ձևի և բաղդատութիւնն պարագայական ստորադասա-

կան նախադասութիւնների կապն իրակաւնանում է հարաբերյալ ու հարաբերական բառերի միջոցով:

Նախադասութեան գերադաս մասում հարաբերյալների դերով հանդես են գալիս հաւնց (հաւնց, էնց), հաւնցկուն (ընցգուն) բառերը, որոնց ստորադաս մասում համապատասխանում են ուր. զինչ, զեւղ (զիւարդ դերանվան հնչյուն-նախօխված ձևն է, որ ունի նաև զեղ, զեւտ ձևերը):

Իերենք սրինակներ՝ իմ յարն ի յարանց տանեն հաւնց եւալ, զինչ նաւն ի ծովեն (ՆՔ, 81), Հաւնցկուն թռլումու կելներ, զինչ մանուկն ելներ ի գինուն (Ն. տ., 105), Հրամայէ աստուածային օրէնքս, որ այրն դուիս է կնոջն և պատեհ է, որ կինն հայնց կենայ ի յայրկան հրամանքն, զէտ ոտքն ու այլ դողուածքն զլիւոյն (ՍԳԴ, 47):

Ինչպէս տեսնում ենք, ընդգծված բառերը, որ ղխաւոր նախադասութեան ստորոգյալի համար ձևի պարագայի պաշտոն են կատարում, իմաստային և արտաբերական առումով ստեղծում են սպասելիք և ստորադաս մասով տրվող լրացուցիչ բացատրութեան կարիք: Այդ առումով էլ հարաբերյալ-հարաբերական բառերի գործածութիւնը այս տիպի նախադասութիւնների շարահյուսական կառուցվածքի ձևաւորման մեջ ընդգծված դեր ունի և իմաստային նորոգութեան է հաղորդում կապակցութեանը:

Երբեմն այս նախադասութիւնների ղխաւոր մասի հարաբերյալը զեղչված է լինում. այդ դեպքում դրանք քննվող շարահյուսական հարաբերութիւնը մաքուր չեն արտահայտում: Հմմտ. Այսօր խօսի բլրուն համով, Որ զհոտ առ ինք բուրես բամով (ԿԵ, 32): Սա յուրատեսակ պակասաւոր կառուցվածք է, որի արտահայտած շարահյուսական իմաստը ինչ-որ րանով թերի է. թերի լինելուն նպաստում է այն, որ այս նախադասութիւնը կապակցվել է ու բազմիմաստ շաղկապով և հետո՝ ղխաւոր նախադասութեան մեջ պարզ զգացվում է հարաբերյալ բառի պակասը: Հմմտ. Այսօր հաւնց խօսի բլրուն համով, Որ զհոտ առ ինք բուրես բամով:

Ձևի պարագա երկրորդական նախադասութեամբ բարդ կապակցութիւնների կառուցվածք-իմաստային մի ուրիշ խումբ կարելի է համարել այնպիսի կառուցվածքը, որի մէջ ղխաւոր և երկրորդական մասերի կապն իրականանում է հարաբերյալ բառերի ու հարաբերականների միասնութեամբ: Հարաբերյալը ղխաւոր նախադասութիւնից տեղափոխվում է երկրորդական նախադասութեան սկիզբը և միանում հարաբերականին: Օրինակ՝ Կամով ծածկի ի մէջ փրշին, Ձեւդ ուր ի յամբ մըտնու յուսին (ԿԵ, 119), Եւ շաւուշն թէ լինի լիճ ու թէ ոչ, երբ երդնու՝ նա ընդունվի իր երդումն թէ ճայնց ու լիճն շերդնու (ՍՍԱ, 11), Հեղու բոլոր մարմինդ ամէն, զինչ որ հալի մոմն ի հրրոյն (Յր., 308):

Ստացւումով այս նախադասութիւնները առաջին խմբի տեսակներից են, այսինքն՝ սկզբնապէս զինչ, զեւղ. հայնց բառերը գտնվելիս են եղել ղխաւոր նախադասութեան բայի կողքին կամ մի այլ տեղ, իսկ ուր-որ որպէս հարաբերական կապակցել է երկրորդական նախադասութիւնը և ունեցել արտասանական ինքնուրույնութիւն: Հետագայում ու շաղկապը հարադրութեան բաղադրիչ է դարձել:

Ձևի պարագա ստորադասական նախադասութիւնների միջին հայերենում տեսնում են ետագաս շարադասութիւն: Օրինակ՝ Ապա թէ ապաշխարէ երկու

տարի մեծ հնազանդութեամբ յեկեղեցոյ դուռն և ի ներք շմտնէ ու ելնէ հետ ալ ապաշխարողացն, հալնց ու հանեցնէ իւր սրտին ջերմութեամբն և աղօթիւմն գլուխդս, նա ապա հաղորդութեան արժանի լինի (ՍԳԿ, 38)։

Վերեւում նկատվեց, որ ձևի պարագա ստորագրասական նախադասություններն մի տարատեսակն են կազմում բաղդատության կամ համեմատության պարագա նախադասությունները։

Բաղդատության պարագա ստորագրասական նախադասությունները ձևի պարագա ստորագրասական նախադասություններից առանձնացվում են իրենց կապակցող շաղկապների իմաստային առումների շնորհիվ։ Ըստ էության ձևի պարագա և բաղդատության պարագա երկրորդական նախադասությունները ոչ մի էական կառուցվածքային տարբերություն չունեն, պարզապես վերջիններս՝ բաղդատական երկրորդական նախադասությունները, իմաստային առումով, հենվելով Երևույթների դուրրգական (ասոցիատիվ) կապի վրա, գլխավոր նախադասության գործողությունը որակավորում են համեմատության միջոցով, որի բնկացքում բացահայտվում է այդ գործողությունների կամ նմանությունն ու համապատասխանությունը, կամ անհամապատասխանությունն ու տարբերությունը։ Ըստ այդ հատկանիշի՝ բաղդատության ստորագրասական նախադասությունները լինում են հետևյալ տեսակների.

1) նմանության բաղդատական նախադասություններ. — Սրանք կապակցվում են ինչպես, որպես, նույնպես գեմ, զինչ, գերդ (զվդ, գետ), զկս ու բառերով, որոնցից յուրաքանչյուրը իմաստային յուրատեսակություն է առաջանում կապակցության մեջ։

Այսպես օրինակ, զինչ, որպես, նույնպես բառերով առաջացող կապակցության բաղդատականները կազմված են Երկու այնպիսի նախադասություններից, որոնց արտահայտած գործողությունները կամ Երևույթները իրար համեմատվում են ըստ նմանության կամ համապատասխանության։ Օրինակ՝ Թէ խելք ունինք, նա հանց կենանք, զինչ Աստուծոյ սիրտն ուղենա (Ֆր., 300), Որպէս սիրես զու զիս, սիրեմ ես ըզքեդ (ՀԹ, 146), Այս է, զի յարն դատաստանին ոսկրոտ ծանդրամարմին անդեղջ մեղաւորքն իջանեն ի դժոխս, որպէս կուպարն իջանէ յատակս ծովուն (ՎԱԱ, 28)։

Այս խմբի նախադասությունների մեջ զատվում է դրանց իմաստային մի տարբերակը, որի արտահայտած շարահյուսական հարաբերությունը փոքրինչ տարբերվում է համապատասխանությունից կամ նմանությունից։ Այդ նախադասություններում երկրորդականի արտահայտած գործողությունը արդեն եղած, կատարված մի եղելություն է, որի հետ համեմատվում է տվյալ գեարում գերադասի արտահայտած գործողությունը։ Օրինակ՝ Դարցեալ, շորէղէնն, ինչպէս ես վեր առի, նույնպէս Սիամոնի կնիկն, որդիքն վեր առին (ԶԱՅ, 115)։

Այսպիսի նախադասությունները երբեմն արտահայտում են նաև իմացական տեղեկություններ, որը ժամանակակից հայերենում կատարվում է ինչպես շաղկապի միջոցով։ Այդ շաղկապը, ինչպես դրում է Ս. Աբրահամյանը, արտահայտում է լրացուցիչ իմացական-տեղեկատվական տվյալներ՝ նշելով մտքի հայտնի լինելը բնգհանրապես կամ սրել մեկին, և կամ տվյալ մտքի արտահայտված լինելը որևէ մեկի կողմից¹⁵։ Միջին հայերենում այս տիպի

15 Ս. Աբրահամյան, Զինքով խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 478։

նախադասությունները կազմվում են որպես, ինչպես գէղ (գէղ ուր), զետ քառն-
բալ: Օրինակ՝ Այն որ տուում է, այնոր համ կու տանն, և զինքն թ է բաժնած, որ-
պես գրել ենք վերն (ԱՅԱ, 15), Ու զկնքադրամն և զայլ մտերոյն բաժինն սի-
րով և անխաղաղալոյ, որպես գրել ենք, առնու ամէն մէկ զիր բաժինն սալար
(ՍԳԴ, 28), Ապա թէ տղայ լինի, նա ի հասակն հայել պարտ է, և ի վերայ հա-
սակին ունել, զետ այլ ենք գրել (ն. տ., 75), Եւ սուրբ պատարագն սիրով ա-
ռանց նախանձու տնեն, զկ. ուր գրեալ կայ (ն. տ., 28):

Համեմատության կամ տեղեկատուական այսպիսի հարաբերություն է
առաջանում նաև գեմ բառով կապակցվող նախադասությունների մեջ: Գեմ-ը
միջին հայերենում հանդես է գալիս որպես եղանակավորող բառ: Սակայն, մեր
կարծիքով, հետևյալ նախադասությունների մեջ նա ունի այն իմացական-տե-
ղեկատուական շաղկապի նշանակությունը, որի մասին նշվեց: Հմմտ. Գեմ ևս
յառաջէ ասի՝ իմ բանս քեզ ղժար կու թլի (Ֆր., 491), Ճանապարհն, որ ունիս
յառջևդ, ահըն խիստ է, գեմ կու լըսես (Ֆր., 392):

Բաղդատության պարագա ստորագասական նախադասությունների այս-
պիսի կապակցությանը երբեմն հատուկ է զխառնոր մասում անվանական ըս-
տորոգյալ ունենալը: Դա պայմանավորված է նրանով, որ բաղդատությունը,
համեմատությունը ավելի հաճախ արվում է առարկաների, երևույթների, քան՝
գործողությունների միջև: Հմմտ. Եւ առնու խիսմն ի դարպըսէն զիր համբ-
րութեններն հետ իրաց մէկ հետ մէկի, զետ սահմանն է (ՍՍԱ, 23):

2) Անհամապատասխանության կամ տարբերության բաղդատական նա-
խադասություններ:—Սրանք շաղկապվում են բան, բանց, բան ուր, բան քէ
բառերով, որոնցով կապակցվող նախադասությունների արտահայտած գործ-
ղությունների միջև համեմատությունը կատարվում է զխառնոր նախադասու-
թյան գործողության զերադասությունը շեշտելու նպատակով: Որպես կառուց-
վածքային հատկանիշ, այսպիսի նախադասությունների զերադաս մասի բա-
ռային կազմին հատուկ է, որ ստորոգյալը ունենա որեւէ անվանական բաղադ-
րիչ, մեծ մասամբ՝ ածականով արտահայտված: Ընդ որում, ստորոգյալի այդ
բաղադրիչը պետք է որ հնչերանգով հատուկ շեշտված լինի, ստեղծելով ինչ-
պես հնչերանգային, այնպես էլ իմաստային սպասելիք: Օրինակ՝ Լալ աղւորին
մալ մսխին, քանց սիրեն զգեշն ըոնկան (ԵԲ, 87):

Ինչպես տեսնում ենք, այս նախադասության զերադաս մասում գոյու-
թյուն ունեցող լավ բառը համեմատության պաշտպանը շարահյուսորեն ավելի
բացահայտ է դարձնում: Սակայն երբեմն այդպիսի բառ զխառնոր մասում չի
լինում, որի հետևանքով բարդության բաղադրիչների շարահյուսական հարա-
բերությունը աղոտ է դառնում: Օրինակ՝ Քո ցաւոյդ այդ զեղ չկա՝ քան որ զի-
շուն ականջսն կտրեն և զսիրտն հանեն (ՂԷ, 290): Հմմտ. Քո ցաւոյդ այդ ա-
ւովելի լալ զեղ չկա, քան այն, որ զիշուն ականջսն կտրեն և զսիրտն հանեն:

Բաղդատական և առհասարակ ձևի պարագայական նախադասություննե-
րի շարքում պետք է նշել նաև բաղդատական դարձվածները, նկատի ունենա-
լով, որ դրանց ստորոգում շունենալը պայմանավորված է ստորոգյալի բաղա-
դրիչ մասերից մեկի զեղչմամբ: Օրինակ՝ Այս նոր ծագեց լոյս, քան դարեգակն
ու այլ պայծառ (ԿԵ, 129), Աղքատ իմաստուն լալ է, քան հալար անգէտ դան-
ձաւոր (ՀԱԳ, 9): Կայր պատանեակ մի խարտիշակ, Հայնշափ փոքրիկ, քան
ըզթրգակ (ՆՇ, 617):

Երբեմն այսպիսի նախադասությունների ստորագաս մասում ստորոգյալի

բաղադրիչի ղեղշումը միանգամայն ակնհայտ է: Համառ. Ամպոյն հաւատար էր նա սատակ. Զէդ մընարա էր, հայնց շիտակ (Աս. Մնաց., Հանելուկներ), Տես, թէ յուսկից ինք ժողովի Զեդ բամբակ ու բուրդ. հայնց կու դիզվի (ն. տ.):

բ) Հետեանքի պարագա երկրորդական նախադասություն

Ըստ իրենց կապակցական առանձնահատկությունների այսպիսի ստորադասական նախադասությունները միջին հայերենում հիմնականում նմանվում են ձևի պարագայական նախադասություններին, որոնք, ինչպես տեսանք, հարաբերական կապակցությամբ են իրացվում: Այս դեպքում ևս բարդության գլխավոր մասում կիրառվում են այնչափ, էնչափ, հանչափ, փանի, այնպիս, հանց, հանց ու. հենց հարաբերյալները, իսկ ստորադաս մասում դրանց համապատասխանում է ու հարաբերականը: Օրինակ՝ Ջանա տունն այնպես շինել, որ հազար ղեկան մըսխես (ՀԵ, 155), Ֆրիկն հանց պարզ է խոսել, ու՝ ամենայն մարդ (իմանայ (Ֆր., 296)։ Անշաքնա սուրբ երեկցաւ, Որ պառզանն իւր ծաղկեցաւ (Աս. Մնաց., Հանելուկներ):

Շատ հաճախ էլ հարաբերյալն ու հարաբերականը միասին հանդես են գալիս երկրորդականի սկզբում, ինչպես՝ Սառն էր կապել և սղաղ և քար, Հանց ու չկար բոյս մի դալար (ԿԵ, 217), Հանց ու չկայ սեղ մի ծարաւ, Ամէնն են բարութեամբ լըցել (ԿԵ, 118):

Հետեանքի պարագայական ստորադասական այսպիսի նախադասությունների շարահյուսական իմաստի ձևավորման համար կարևոր դեր ունի զերայա մասում հարաբերյալի ընտրությունը. վերը թվարկված հարաբերյալներից ամեն մեկը յուրատեսակ իմաստ է առաջացնում բարդ նախադասության բաղադրամասերի միջև, Բացի այդ, իմաստի ու հնչերանգի այն սպասումը, որ առաջացնում են այս բառերը բարդ կապակցության առաջին մասում, միշտ չէ, որ նույն ուժգնությունն են ունենում: Այսպես օրինակ, այնչափ, էնչափ, հանչափ հարաբերյալներին համապատասխանող ստորադասական նախադասություններում արտահայտվում է նաև չափի ու քանակի ինչ-որ իմաստ, ավելի ճիշտ, այսպիսի նախադասությունները ցույց են տալիս այնպիսի հետեվանք, որը առաջանում է գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության տեսականության չափի հետեանքով: Օրինակ՝ Հանչաք ևս հայրեն տաի, որ զբաջերն ի քարն ուսուցի (ՆՔ, 63), Ասաւենց Յակոր բանրասանք ճարի, էնչափ խօսի, որ ժամրն վրճարի (ՆԶ, 176), Եւ թէ զեն առնէ նա, այնչափ առնէ, որ սպանէ նա, ասեն թէ յերեք տարածան է (ԱԱԱ, 9):

Մինչդեռ այնպիս (այնպես), հենց հարաբերյալներով կազմվող բարդ նախադասություններում հետեանքի հարաբերությունը նման է լինում ձևի պարագային: Նմանությունն առաջանում է հարաբերյալի զերով հանդես եկող բառերի գործածման պատճառով, որոնցով կապակցվում են նաև ձևի պարագայական նախադասությունները: Հետեանքի պարագայական նախադասությունների իմաստն այս դեպքում առաջանում է գլխավոր նախադասության ստորոգյալի կատարման ձևից. գործողության կատարման ստատկությունն է, որ առաջ է բերում հետեանքը: Այդ հետեանքն էլ հենց արտահայտվում է երկրորդական նախադասությամբ, Օրինակ՝ Աքուլիս հենց ողբատ լցաւ, որ մարդ զրին, դուս արարին (ԶԱԹ, 117), Քանզի ասեն բնութեան քրննիչքն, թէ կաքան այնպես ոգահ է, որ զձուս ալլոց հաւու, զորս գտանէ՝ ծողովի ի բունն իւր (ԷՄԱ, 11):

Խերեա ալելի ճիշտ կլինի նման տիպի երկրորդական նախադասութիւնները համարել այնպիսի հետեանքի պարագա, որը բացահայտում է գլխավոր նախադասութեան գործողութիւնը ձեռք կամ շափի ու քանակի առումով: Հմմտ. Արուիս հենց շատ աղբատ լցաւ, որ մարդ դրին դուս արարին:

Երբեմն հետեանքի ստորադասական այսպիսի կառուցվածքներում, ձեռք պարագայական նախադասութիւններին նման, հարաբերյալ բառը գլխավոր բաղադրիչում բացակայում է: Քանի որ կապակցութիւնն էլ իրադրութիւնում է ու բազմապարփառական շաղկապով, այսպիսի նախադասութիւնները աղետ են արտահայտում քննվող շարահյուսական հարաբերութիւնը: Հմմտ. Մութն ու խատուն է դիս պատել, ու այլ լուսոյ ճար շունենամ (Յր., 253), Ամուր եմ բարիդ նման, ու մըճիկն ի յիս չի բանի, Բարձր եմ թուխ ամպիդ նման, ու ոչ ով ի յիս չի հասնի (ՆՔ, 42):

Հարաբերյալ-հարաբերական բառերով կապակցվող հետեանքի պարագայական նախադասութիւնները ունենում են երկրորդականի ետադաս շարադասութիւն: Օրինակ՝ Հանչաք ջանացի հետ իր, ու յաւմէն պազիկ մի առի (ՆՔ, 112): Հետեանքի պարագայական պետք է համարել նաև ժողովրդական ոճի արտահայտութիւն հանդիսացող հետեանքի յուրատիպ կառուցվածքով նախադասութիւնը. Երկու տերանց ո՞վ կարաց ծառայել, որ դուն կարենաս (Յր., 4):

Այս նախադասութիւնն իր բնույթով ժխտական է (հմմտ. Երկու տերերի ոչ ոք չի կարող ծառայել, հետեանքար դու էլ չես կարող), սակայն ժխտական բովանդակութիւնը արտահայտվում է հարցման միջոցով, որի հետեանքով և նախադասութեան կառուցվածքի համար հնչեանքը դառնում է ամենադիտավոր տարրերից մեկը: Այսպիսի կառուցվածքներ գոյութիւն ունեն նաև ժամանակակից հայերենի խոսակցական ոճում. Օր.՝ Ո՞վ կարող է շրտիւնլ Ձեզ. Չրտրկանալ Ձեր կամքին... (Վ. Տէրյան, Երկեր, 1956, էջ 264):

բ) Չափի ու քանակի պարագա երկրորդական նախադասութիւն

Չափի ու քանակի պարագա երկրորդական նախադասութիւնները լրացնում են գլխավոր նախադասութեան ստորոգյալի հատկանիշը շափի տեսակետից: Այսպիսի նախադասութիւնների կառուցման համար կարեոր են քարոյ նախադասութեան մասերը կապակցող բառերի իմաստային ներութիւնները: Այս տեսակետից շափ ու քանակի ստորադասական նախադասութիւնները միջին հայերենում հանդես են գալիս կառուցվածքա-իմաստային երկու հիմնական տեսակներով՝ հարաբերական և շաղկապային կապակցութեամբ:

Հարաբերական կապակցութեան դեպքում գլխավոր նախադասութիւնը, որ առաջագաս է լինում, ունենում է շափի պարագայի պաշտոնով բառ՝ այնչափ, հանչափ, որոնց փոխարինում են երկրորդական նախադասութիւնները: Վերջիններիս կազմում էլ լինում են ուշափ, Բանի («ինչքան» իմաստով) հարաբերականները: Օրինակ՝ Այլոց այնչափ բառցիր, ուշափ քնդ են բեռնը դրել (Կե, 176), Ու հանչափ ծախ է զրականէն Բանի գինք վճարել կարէ (ՍՍԱ, 77):

Պետք է ասել, որ շափի պարագայական շարահյուսական հարաբերութիւնը այսպիսի կապակցութիւններում ավելի արտահայտված է, քան շաղկապական կապակցութեան դեպքում:

Որպես շափ ու քանակի ստորադասական նախադասութիւնները կապակցող շաղկապներ միջին հայերենում գործածվում են Բանի, մինչև բառերը: Հանդես գալով ստորադասական նախադասութեան սկզբում, տարրերակված

իմաստ ունեցող այս բառերը միանգամից արտահայտում են չափի հարաբերություն, որ բնկալվում է առանց ամենայն երանգների Օրինակ՝ ես տղա ու դու տղա, սիրելուն ասենք է հիմա, Մեջկունքդ աղեղան նման, Բանի ևս բաշեմ, նա կու գա (նՔ, 84), եւ Բանի որ սղան մեծնայ, դու ղկերակուրն յաւելցուր ի կաթն և այլ Բանի մեծնայ՝ կերակուրն յաւելի տուր (ԱՕԲ, 67)։

Զափ ու րանակի երկրորդական նախադասությունները այս դեպքում (շաղկապավոր կապակցության ժամանակ) մեծ մասամբ ունենում են առաջադաս, իսկ հաղվաղեպ՝ հետադաս շարադասություն։ Սակայն երկրորդականի դիրքը այսպիսի բարդ կապակցություններում կառուցվածքային էական դեր չի կատարում, հետևաբար դրան առանձնակի ուշադրություն չենք դարձնի։

ժ) Զիջական երկրորդական նախադասություն

Զիջական հարաբերություն արտահայտող ստորադասական կապակցությունները միջին հայերեն մատենագրությամբ բիշ են ավանդված։ Զիջման իմաստային հարաբերությունն արտահայտվում է ինչպես պայմանի ստորադասական, այնպես էլ համադասական նախադասությունների միջոցով։ Այստեղից էլ զիջական ստորադասական նախադասությամբ բարդ կապակցությունների հարադասությունը այս երկու վերահիշյալ տեսակի նախադասությունների հետ։ Եթե պայմանի ստորադասական նախադասություններում մի երևույթի իրականացումը ներառվոր է դառնում որևէ պայմանի առկայությամբ, ապա զիջական նախադասությունը ցույց է տալիս, որ սրե է դործողության կամ եղելության իրականացումը կատարվում է որևէ պայմանի բացակայությամբ։ Հայտնի է, որ տրամաբանորեն պայմանի հարաբերությունը մտածողության մեջ նախորդել է զիջման հարաբերությանը, որը փաստորեն առաջինից է բխում։ Այս իսկ օրինակաբանությամբ էլ զիջման հարաբերությունն արտահայտող բարդ կառուցվածքները լեզվական մտածողության մեջ առաջացել են ավելի ուշ, քան պայմանի ստորադասական նախադասությունները։ Այդ այդպես է նաև ուրիշ լեզուներում, ինչպես օրինակ, ռուսերենում, որի մասին Յա. Սայրինսկի գրում է. «Զիջական նախադասությունները հին ռուսերեն լեզվում սերտորեն կապված են պայմանի ստորադասական նախադասությունների հետ և սկզբնապես նրանցում զործածվում էին պայմանի շաղկապները։ Հետևապես զիջման և պայմանի նախադասությունների տարբերակումը կատարվել է հետագայում ռուսերեն լեզվի բարդ ստորադասական նախադասության պատմական զարգացման պրոցեսում»²⁴։

Ռեբես աշսպես կարելի է բացատրել քննվող շրջանում զիջման նախադասություններին՝ շարահյուսորեն բացահայտ տարբերակված ձևի սակավ գործածությունը։ Որպես զիջական երկրորդական նախադասության կապակցության միջոց, կիրառվում է թէպէտ (թեպետ) շաղկապը։ Թեպէտ-ով սկսվող նախադասությունը ցույց է տալիս մի գործողություն կամ եղելություն, որի առկայությունը որպես պայման ոչնչով չի նպաստում հաջորդ նախադասությամբ արտահայտված գործողության կամ եղելության իրականացմանը։ Օրինակ Թեպէտ լինիս շատ սիրելի՝ Մի հաւատար սրտովդ ի նա, Ամէն զիհաց փորձէ և տես Ապա խորհուրդ ասու նորա (ՀԹ, 191)։

Սակայն միջին հայերեն մատենագրությունից մեր քաղած օրինակների

²⁴ Очерк русского исторического синтаксиса, Киев, 1960—1964, стр. 90.

մեծ մասում զիջման հարաբերությունը արտահայտվում է նախադասությունների շարանշուտորին հավասարազոր մասերի զուգակցությամբ: Կապակցության ստորադաս մասում առկա է րէպէտ (րէպէտ ե) շաղկապը, որը և տվյալ զեպքում ստորադասության հարաբերություն ստեղծող միակ ցուցիչն է բարդ նախադասության մեջ: Թէպէտ բառով սկսվող նախադասությունը բարդ կապակցության մեջ շարադասվում է սկզբում, իսկ դրան հաջորդող նախադասությունը կապակցվում է համադասական շաղկապով: Վերջինս մեծ մասամբ լինում է՝ բայց: Այսպիսով, ստեղծվում է րէպէտ... բայց յուրատեսակ զուգահիշ շաղկապներով կառուցվածքային կաղապար: Օրինակ՝ Զի րէպէտ ե յառաջն գրած կենայ, բայց և յետինն պիտի որ շատնան (ՍԳԴ, 80), Ասէ թագաւորն. րէպէտ նա ոչ էր արժան, բայց ինձ արժան է գլխեցիկ իբրն տալ (ՎԱ, 284), Զի րէպէտ նոմոսով է գանդրանիկն կացուցանել յաթոն ինքնակալութեան, բայց վասն օգտութեան աշխարհաց իրաւունք է, որ աղէկ տեսնու հայրն իր ամէն գաւառօրն և գաւառապետացն տեսովն... (ՍԳԴ, 16), Թէպէտ արաք պատկերն սակի Յանուն կրնոջրն դրշխոյի, Բայց ինքն եղի շորքոտանի, եզն և առեւծ ի մի տեղի (ՆՇ, 632):

Նրբեմն այսպիսի շարանշուտական իմաստով կառուցվածքներ ստեղծվում են նաև րէպէտ... այլ շաղկապային զուգակցությամբ, որտեղ այլ-ը միջին հայերենին հատուկ շաղկապային փոխանցումների օրինաչափությամբ կատարում է բայց-ի իմաստային զործառույթը և համանիշ է նրան: Օրինակ՝ Զի րէպէտ անարժան էմք յերկնից արբայութեանն, այլ նմա վայել է տալ մեզ պարբայութին (ՎԱ, 289):

Զիջման հարաբերությամբ են կապակցվում բարդ նախադասության բաղադրիչները նաև այն զեպքում, երբ կապվում են րանց ու բառով: Թանց-ը, որ Առձեռն բառարանում բացատրվում է որպես նախդիր ռառանց, ի զատ, դուրս նշանակությամբ, կարող է առաջացած լինել թէ-հանց (ի(յ) + անց) բաղադրիչներից, որի մեջ թէ-ի իմաստը ձուլվել է Այս շաղկապը զործածում է Հովհաննես Թլկուրանցին՝ Զարխի զեղած նհտով սիրտրս խոցեր ես, Պագով սիրտրս լափէ րանց ու հաւան ես (ՀԹ, 146), հիստ եմ քեզ հաւան, րանց ու դու ինձ ես... (Ն. տ., 145), Թողում գրեղ ի րաց, րանց ու ինձ նենդէս (Ն. տ., 145):

Զիջական երկրորդական նախադասությունների կապակցման դերով միջին հայերենում զործածվում է նաև հազար թէ շաղկապական կապակցությունը: Հազար բառը, որ զործածվում է Ֆրիկը, Թուրքերենի միջոցով արված փոխառություն է, և այժմ էլ հայերենի բարբառներում օգտագործվում է եղանակավորող բառի դերով: Այս շաղկապով կապակցվող նախադասություններում զիջման հարաբերությունը պարզ է, տկնհայտ: Օրինակ՝ Հազար թէ մանուկ ես զեռ, ես կասեմ դու քեզ ճար արա, Քակէ զքո մեղաց արմատն ի տակաց, որ այլ չի մնայ (Ֆր., 380), Հազար թէ ֆայար եմ ես՝ չեմ կարող որ տամ քեզ կրտոր (Ն. տ., 377):

ժա) Այլ շաղկապներով կապակցվող կողմնակի հաղորդման երկրորդական նախադասություններ

Իբիջին հայերենում լրացուցիչ հաղորդման երկրորդական նախադասությունների ու զարձակածքների կապակցման դերով զործածվում են մանրամասն

որ. առավել լ՛է. զարդ¹⁷, զարդել¹⁸ քողզ (սա պահպանվել է արեւելյան բար-
բառներում՝ «բաքի» նշանակութիւմը) շաղկապներով: Մանաւանդ որ, առաւել
լ՛է շաղկապներով կապակցվելիս բարդ նախադասութիւնն ստանում է կողմ-
նակի, հարակից պատճառի կամ պայմանի շարահիշուական իմաստ. երկրոր-
դական նախադասութիւնն արտահայտում է այնպիսի գործողութիւն, որի առ-
կայութիւնը արդեն ոչ մի բաց տեղ չի թողնում գլխավորի գործողութիւն կա-
տարման համար, սա մի հավելյալ պայման է, առանց որի էլ առաջինի գոր-
ծողութիւնը պետք է որ իրագործվեր:

Օրինակ՝ Ապա կարէ եպիսկոպոս զայլ եպիսկոպոս հարկերէլ և մեծարել
սիրելարար, մանաւանդ որ եպիսկոպոսն զարհի եպիսկոպոսն մեծարէ (ՍԳԴ,
24), ... Զայս տեղս օրէնքս դժար սաստ և հրամայել, զի զրել է որ մեռնի, կամ
ի պակասն ձգերն կտրեն, առաւել յլ զահրայ բան լինի արել (ն. տ., 52):

Այսպիսի կառուցվածքներում սովորաբար երկրորդականը վերջապես է
լինում. միայն երբեմն այն մտնում է գլխավոր նախադասութիւն մեջ, ստեղ-
ծելով շարահիշուական իմաստային անկապակցութիւն. Օրինակ՝ Եթէ դա-
տքստնի վասն սպրնաց և որ ինչ նման է սոցա, մանաւանդ երբ դա-
տքստնվորքն ազգակից շիւնին և ոչ կարեւորք, զայ խիստն և ուզէ զճանշաց համ-
բերութիւնն (ՍՍԱ, 65):

Քան թէ շակապով կապակցվող հարակից երկրորդական նախադասու-
թիւնն գործողութիւնն արտահայտում է բացառված պայմանի հարաբերու-
թիւն: Օրինակ՝ Կու հրամայէ օրենքն, որ զքահանայի տուն և ապրանք զգնէ
այլ որ. ներքոյ կենայ, քան թէ երէց և պաշտօնեայ եկեղեցոց (ՍԳԴ, 44):

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Միջին հայերենի լեզվական նյութը վկայում է բարդ նախադասութիւն-
ների՝ համադասական կապակցութիւն լայն դրսևորում: Թեև դժվար է առանց
վիճակագրական տեղեկութիւնների վստահորեն հայտարարել, բայց դիտում-
ները ցույց են տալիս, որ համադասական կապակցութիւնը մեր լեզվի այս
շրջանում ավելի մեծ կիրառութիւն ունի, քան ստորադասականը: Բարդ ստու-
րադասական նախադասութիւն ձևավորման համար անհրաժեշտ է կառուցված-
քային մի շարք հատկանիշների առկայութիւն, ինչպես՝ երկու կամ ավելի ստու-
րուպային կենտրոններ ունենալը, հնչերանդային ավարտութիւնը, բար-
դութիւնն բաղադրիչների ստորոգյալների եղանակաժամանակային որոշակի
հարաբերումը, շաղկապների, շաղկապական ու հարաբերական բառերի՝ որպէս
կապակցման միջոցի, կիրառութիւնը, բաղադրիչների որոշակի շարադասու-
թիւնը: Բայց կառուցվածքային այս տարրերի անհրաժեշտութիւնը յուրա-
քանչյուր կոնկրետ դեպքում տարբեր չափով է հանդես գալիս. այսպես, եթե

17 Նշանակում է «բաքի» (տե՛ս Ալիշան, Միսուան, 1885, էջ 387, որտեղ բացատրվում է
«դաս», իս.)

18 Այս բարդ նկատված է հետևյալ հեղինակների կողմից՝ Ա. Այտընեան, քննական քերա-
կանութիւնն արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 133, 2. Անադոյան, Լիակատար քերականու-
թիւնն հայոց լեզվի Դ. 5, էջ 373, որտեղ տալիս է նաև զարբել, զարդի (փոխ. զատ ի) կիրա-
ռական տարրերակներու յորայր թիւովանդաջի, Բաղդիրք ստորին հայերէնի ի մատենագրու-
թեանը ԺԱ. Ժէ դարուց, ձեռագիր բառարան (թղթ. 235, վավերագիր 258, էջ 416, Մատենադա-
րան):

ստորագրասական նախադասությունների տեսակների ձևավորման համար անհրաժեշտ են նաև երկրորդական զործոններ, ինչպես օրինակ՝ զերադաս մասի բառային կազմի որոշակի համալրում (իմաստային որոշ խմբի բառերի ներկայությունը ենթակա, ստորոգյալ, ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունում ստորագրասական կապակցությունների մեջ), ապա բարդ համադասական նախադասության ձևավորման համար այսքան շատ շարահյուսական կառուցվածքային զործոնների առկայություն անհրաժեշտ չէ: Բարդ համադասական նախադասության բաղադրիչների շարահյուսական կապը համեմատաբար թույլ է: Ճիշտ է, տվյալ դեպքում բարդ նախադասության մեջ մտնող պարզ նախադասությունները ևս պալմանավորված են մեկը մյուսով, որքանով որ «քերականորեն, իմաստով և հնչերանդային մի ամբողջություն են կազմում»¹⁹, սակայն ընդհանուր առմամբ բարդ համադասության բաղադրիչների կապը պարզ է: Մանրամասներն առայժմ մի կողմ թողնելով՝ կարելի է ասել, որ բարդ համադասական նախադասությունների կառուցվածքում դեր ունեն շարահյուսական երեք հիմնական զործոններ. դրանք են՝ բաղադրիչների հնչերանդային կապը, դրանց շարահյուսությունը և շաղկապները, որով միավորվում են: Ընդ որում, շաղկապի ընտրությունը համադասության մեջ կարևոր է, քանի որ տվյալ հաղորդակցական միավորի նպատին ու միանգամից ընկալվող տարրն է: Այսպես՝ ուշադրությունը ցրած լսողը կամ ընթերցողը կամ... կամ. ոչ... ոչ շաղկապներով կապվող բարդ կապակցության մեջ լսելով շեշտված ու սուսակիբ պահանջող առույտությունը արտասանվող այդ բառերը, կարողանում է ընկալել մտքի հիմնական շեշտը:

Մյուս կարևոր գործոնը բարդ համադասական կառուցվածքի ձևավորման համար հնչերանդային ավարտունությունն է, որով ամբողջականանում է բարդության բաղադրամասերի իմաստային կապը: Այս առումով քիչ առաջ ընկնելով, նշենք միջին հայերենի հատուկ բարդ համադասական այնպիսի կապակցական տեսակի առանձնահատկության մասին, որում թեև բարդ նախադասության մասերի կապն իրականանում է շաղկապների միջոցով, բայց կապակցությունն ամբողջացնող հիմնական դերը մնում է հնչերանգին: Այսպես՝ եթե մի փոքր ավելացվի հնչերանգային դադարը՝ նետելով բարդ համադասական նախադասության բաղադրիչների միջև, որոնք կապակցվել են և շաղկապի անընդհատ կրկնողությամբ, առաջացնելով շղթայական ընդլուծում (հյուսվածք²⁰, ինչպես՝ եվ ինքն մեկ ազգ սխտոր է, և հինգ կամ վեց ճուղ կունենայ, և յերկայնություն մէկ թիգ կու լինի, և ի ցաներուն ի փոս տեղրանք կու բուսնի, և տերինն համն զղթորի համ կու նմանի (ՂԷ, 370), բարդ նախադասության առանձին բաղադրիչները կարելի է լիովին ինքնուրույն նախադասություններ դիտել: Հմտ. և ինքն մէկ ազգ սխտոր է: Եւ հինգ կամ վեց ճուղ կունենայ: Եւ ի ցաներուն ի փոս տեղրանք ու բուսնի: Եւ տերինն համն զղթորի համ կու նմանի: Սակայն հնչերանգի այսպիսի ընդգծված դերը հրկում է միայն այս բնույթի նախադասություններում, որոնք ժամանակակից հայերենի համար բնորոշ չեն:

¹⁹ ՏՃ՝ ԵՄ. Գ. Առաքելյան և Վ. աշխ. էջ 294:

²⁰ Թուսերենում այս կրկնությունը անվանվում է «цепное наименование» (А. Н. Стеценко, Сложно-сочиненное предложение в древнерусском языке, М., 1962, стр. 53; В. И. Боровский, Н. С. Кузнецов, Историческая грамматика русского языка, М., 1965, стр. 503, Т. М. Ломтев, Очерки по историческому синтаксису русского языка, М., 1969, стр. 185):

Բարդ կապակցության, որպես շարահյուսական միավորի իմաստային հարաբերություններն առաջանում են հիմնականում դրանք կապակցող շաղկապների շնորհիվ: Հետևաբար և համադասական նախադասության բնությունը տարվում է ըստ այն շաղկապների, որով միավորվում են համադասական նախադասությունների բաղադրիչները:

Քննվող շրջանի լեզվական նյութը ի ցույց է դնում համադասական շաղկապների ամբողջ մի համակարգ, որ կապակցում է պարզ նախադասությունները մի բարդ ամբողջության մեջ՝ հաջորդելով նրանց շարահյուսական դասական իմաստային հարաբերությունները: Ինչպես և ժամանակակից հայերենում, միջին հայերենի համադասական նախադասություններում զործածվում են զուգադրական, հակադրական, տրոհական և հարակցական շաղկապների խմբեր: Սակայն, որովհետև ի տարբերություն ժամանակակից հայերենի, միևնույն շաղկապը միջին հայերենում հաճախ իմաստային փոխանցումների է ենթարկվում և իր հիմնական դերից բացի բարդ համադասական նախադասության բաղադրիչներին ուրիշ իմաստային հարաբերություն հաղորդելու զործածությամբ էլ է կատարում, սակայն ավելի հարմար է միջին հայերենի համադասական նախադասությունների բնությունը կատարել ըստ առանձին կամ միմյանց նման շարահյուսական դեր ունեցող շաղկապների:

ՐԱՐԻ ՀԱՄԱԳԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ, ՈՒ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ

Միջին հայերենին, որպես ձևավորվող ու ներքին աշխույժ պարզացում ապրող լեզվական համակարգի, շատ հատկանշական է ու բնորոշ և, ու շաղկապների կիրառության յուրօրինակությունը: Համարյա տեսանելիության չափ պարզ է այդ շաղկապներից մեկի՝ և-ի զործածության իրավունքների նեղացումն ու ոճական կիրառության սահմանափակումը և դրա փոխարեն մյուսի՝ ու-ի այսօրվա իր հիմնական զործածությամբ զործածությունը: Իհարկե, և-ի սահմանափակ կիրառության դեմ կարելի է առարկել, եթե միայն պարզ լեզվական հաշվումներ անենք. քանի որ և-ը կիրառվում էր զրաբարախառն բնագրերում, սակայն «Անսիգ Անտիոքայ»-ի, Ջաքարիա Ազուլեցու «Օրադրություն», միջնադարյան տաղարանների և նման այլ հիշատակարանների հիման վրա, սրանք զգալիորեն ներծծված են խոսակցական ու բարբառային տարրերով, կարելի է եզրակացնել, որ ու-ն ժամանակին լիովին ժողովրդի լեզվական սեփականությունն էր դարձել:

Համեմատենք հետևյալ օրինակները.

Թագաւոր մի, որ տիրէր տմենայնի, արար երկու ապարանս զեղեցիկս և կարգեաց զարս Թ. զաս յապարանս իւր, զի կացցեն ի հրամանս Թագաւորին և հմանք ի գաւրաց Թագաւորին հպարտացան և անկան ի փռուաց և ի միւս ապարանսն պահապանս կացուց, զի պահեացեն և եկեալ զարաց իշխանն տոմիւս ապարանից պահապան և խառնաց և Էհան զէտց յապարանիցն և իմարեալ զխաբհութիւնն իւր՝ պահապանն և Թագաւորն արսորեաց զնա և Էհան յապարանիցն և նա յալով ել և զնաց յաւտար աշխարհ (ՎՊԽ, I), կու հրամայէ արևնս, որ թէ որ կենայ ու երթայ իր ճամբովն և այլք կենան ու պահեն զճանապարհ, որ սպանութիւն անեն կամ զոգութիւն, ու այլ հալով զնացողն յաջող լինի ու զնաքա սպաննէ, նա չէ արեան պարտական, այլ զովելոյ և օծիթք տալոյ արժան (ՍՍԽ, 21):

նվ կամ ու շաղկապների գործածությունը պայմանավորված է ոչ միայն տվյալ բնագրի ստեղծման ժամանակով ու տեղով կամ ժանրային առանձնահատկություններով, այլ նաև ղուտ ոճական նախասիրության արդյունք է:

Ինչպես տեսանք վերը բերված օրինակից, Վ. Այգեկցու առարկներում որպես նախադասությունների և նրանց համազոր անդամների կապակցման միակ միջոց գործածվում է և-ը: Սա բերևա մասամբ արդյունք է Այգեկցու ստեղծագործության «մշակման» հետագա գրիչների կողմից, որոնք առհասարակ «զրաբարացրել են» այն: Բացի դրանից, բառերի, Այգեկցին Վ. այս երկու համադաս շաղկապներից գերապատմությունը տվել է և-ին, որովհետև այնպիսի տոտեկներում, որոնք բառական տեսակետից հաղեցած են խոսակցական տարրերով, դարձյալ գործածվում է և: Հմմտ. Առիծն հիւանդացու և երաքն ամենայն դա՛յ ի տես. և աղուէսն յամենաց և առն շարայխաւսեաց զնայ. և յորժամ ևկ աղուէսն, բարեկամք նորա ասացին զշարայխաստութիւն արջոյն (ՎԱ., 114), Կայր խիստ շէն զօղ մի. և կայր ի յայն զեղն ջուհի մի և խիստ ծաղր առնէր զայն զեղացիքն և ուրախանային իւրմովն (ՎԱ., 27):

Մինչդեռ աշխարհիկ, խոսակցական լեզվի առանձնահատկություններով բնորոշվող Երզնկացու տաղերում ու-ն կիրառության տեսակետից զգալի գերակշռություն ունի և-ի նկատմամբ: Հմմտ. Երկիր պապի իրենն ի յայն պահուն ոնց ինր տեսայ, Ու իրեք խնդրուածով հողոյն հաւար խոնարհեցայ (Կն., 188), Գու կաց իմաստութեամբ, որ քեզ գրտեռու հանգիստ բարի, Ու թող մաւ-դիկ տսէն՝ թէ՛ ին է նա ու խելք շունի (Ն. տ., 197):

Այս առումով Ս. Գունդուտարը հետաքրքիր ոճ է ստեղծում այս շաղկապների կիրառմամբ, օգտագործելով դրանք որպես պեսպիսություն: Օրինակ՝ Եւ ժողովուրդն չէ իրաւունք, որ բնտրեն, թէ նայ երէցն լաւ է, քան զտայ. կամ այլն անուշաձայն և զմէկն թողուն ու ի մէկայն հակին ու խալապալայի պատճառ լինի և մեղաց (ՍԳԿ., 27), Եւ ի վերայ այսր ամենայնի հարցնեն ընդ կնի. կրն, և զոր այր ուղէ, հեա այնոր երթայ, ու թէ որդիք կենայ, նա ի հայրն տայ (Ն. տ., 50):

Ինչպես տեսնում ենք, այստեղ պարզորոշ կերպով նկատվում է նաև և-ի և ու-ի՝ նույն նախադասության կազմում տարբեր գործառնություններով կիրառելու միտում. նախադասության համազոր անդամները կապակցվում են ու-ի, իսկ նախադասությունները՝ և-ի միջոցով:

Իսկ Կ. Երզնկացին և, ու շաղկապների գործառնության այսպիսի տեղայնացման փորձ կատարում է հակառակ ձևով՝ ու-ով կապակցում է նախադասություններ, իսկ և-ով՝ համազոր անդամներ: Օրինակ՝ Իրենց բէորն թէթե՛ ծանդրր կամին այոց համար, Ու երեին դիտուն և իմաստուն, որ են յիմար (Կն., 201), Ժողովեցան զինչ որ ծաղկունը կան ի յերկրի զարնանային, Ու զխորհուրդն շարութեան և նենգութեան վարդին կամին (Ն. տ., 139): Նվ, ու շաղկապներով կապակցվող նախադասությունները կարող են լինել երկանդամ, երբ շաղկապում են երկու նախադասություններ (պարզ կամ բարդ), և բազմանդամ, որի մեջ այդ շաղկապները (առանձնապես և-ը), անբնական կրկնվելով, կապակցում են նախադասությունների շղթա, որն անվանեցինք «շղթայական բնդնություն» (շղթայական շարվածք):

Երկանդամ կառուցվածքը իր հերթին կարող է բաղկացած լինել՝

1) Երկու պարզ նախադասություններից.

Կաքան ի բարին նստել||

Ու գանդատ կայնեք հաւերուն (ՇՄԺԵ., 218):

2) Մեկ պարզ և մեկ բարդ նախադասությունից.

Զբամբակն ի յափիդ ունիս||

Ու ասես, թէ մարդ չգիտէ (ն. տ., 336):

3) Երկու բարդ նախադասությունից.

Եւ քահանայ որ ծոյլ կենայ, նա խրատէ և յանդիմանէ զինք Գ. Նա|| ու
թէ չլանայ, նա յեկեղեցոյն մտացն իրեն փող մի շտան (ՍԳԳ, 27):

1. Եւ-ը իբրեւ համադասական նախադասություններ կապակցող
հարակրկնական շաղկապ

Միջին հայերեն բնագրերում, մանավանդ Ամիրդովլաթ Ամասիացու և Գրիգորիսի գրվածքներում, հաճախ հանդիպում են համադասական հարաբերությամբ կապակցված խոսքային երկար շղթաներ, որոնք միավորված են լինում և շաղկապով Եւ-ով սկսվող մի ամբողջ շարք պարզ կամ բարդ նախադասություններ միանում են նախորդներին շղթայական ընդելուզման ձևով, Շարահյուսական տարրությունը այսպիսի կապակցություններում անսահման է, դա նշանակում է, որ կապակցության բաղադրիչները ավելի շատ լինելու պոտենցիալ հնարավորություն ունեն։ Օրինակ՝ Եւ նշանն այս նեղոյս այն է, որ դոր և եյն է ի մարդոյն կամ վերս և կամ ներքն, նայ կաշնու ծարաւ և շողըռոյի. և այս նեղս ընդ յառաջն իւր ցաւն քիչ լինի և յայնժամն, որ ի ստամոքն է եղել, եթէ ի վեր ելանէ, նայ ստուկքն կսկծայ, զի մողձն թթու է և լեղի. եթէ ի ներքե էլնէ, նայ այրէ զորովանն, և թէ ի ստամոքն դադրի, նայ ցաւ այրնէ և թալուկ, և բոլորնայ երեսն և փոքրնայ, խորվընայ աշուին, և սրի քիթն և պաղէ մատունքն. և այս ամէն նշաննիս ի յայնժամն երենայ՝ երբ նեղն ուժով լինի, և մողձն սարել է, որ շրջի (Գր., 136), Եւ պաղ ջուր լից ի զլուխն, և մանուշկի և զգմի ձէթ օժէ ի զլուխն, Եւ տուր աղոխի և գդմի ապուր և տուր հապար, Եւ զինչ որ տաս՝ տուր նշի ձիթով, Եւ տուր զմանուշակն սնուցած (ԱՌԲ, 356):

Ծագմամբ աստվածաշնչական լինելով, այսպիսի ոճը միջնադարյան հեղինակների մոտ վեր է ածվել ժողովրդականի։ Եւ-ը այս դեպքում նաև փառտորեն այն հարակրկնական շաղկապը չէ, որ ժամանակակից հայերենում հատուկ է պոետիկ ոճին։ Վերջինում Ե-ի կիրառությունը, բացի միավորելուց, նրպատակ ունի նաև բանաստեղծության մեջ չափ ու ուրիշ ստեղծել, ինչպես նաև նպաստել հանգի ձևավորմանը Հմմտ.

Ձգվում էր ահա քո դեմ ուղիղ

Դեպի նոր, անհաս բարձրություններ,

Եվ զգվում է քեզ բույրը հողի

Եվ դադաթների շունչը ձյունն,

Եվ մենակ ես դու կրկին ահա,

Եվ դարերն են քո շուրջը երգում,

Եվ արեղակն է որպես վահան,

Բարձրանում քո նոր այս եղերքում (Ն. Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1955, էջ 176):

Քննվող շրջանում Ե-ի կիրառությունը բոլորովին այլ է, այն ժողովրդական պարզունակ խոսքին է հատուկ. Ե-ի բաղմադիր կրկնությամբ ստեղծվում է մի տեսակ արտասանական հենք, որի վրա շարվում է միևնույն թեմայով

կապակցվող նախադասությունների երկար շղթան: Ընդհանուր առմամբ կապակցություններում երբեմն շարահյուսությունն ուղղորդվում է դառնում, այնպես որ եթե մտովի մի կողմ թողնենք այն, ապա նախադասությունները հնչարտարիությունը կառանձնանան, և ոճը համեմատաբար հստակ կդառնա: Բերենք մի օրինակ ես.

Մասին ասե՛ք, ի՞նչ է, որ յուծումն առնէս հապի դուդիայով. և տուր գինի անպակ հին, և սուտանի և բողկի ձէթ կաթնցու. և յետոյ քրտնի և ի բաղնիսն անօթեց հին կուլանկուպին ուտէ. և զկորեկն և զաղն տաքացու և զիւր ի վերաւ կանջին. և պապունաճի և ետսամինի և խրու ձէթն յականջն կաթնցու. և տաք ճաշերն տուր. և թանծր և անհալ կերակուր մի տալ. և շատ շուտէ. և սիսուան ջուր տուր, որ եփած լինի, շուրվայ, և տուր տաք զեղերով... (ԱՕԲ, 224):

11. Եւ, ու շաղկապները իբրեւ համադասական նախադասություններ միավորող շաղկապներ

Եւ, ու շաղկապների հիմնական շարահյուսական գործառույթը, ինչպես տեսանք, նախադասությունների միավորումն է: Իրենք՝ այդ շաղկապները, տարբերակված բառային իմաստներ չունեն. բայց կապակցության բաղադրամասերի բառական ռեալ բովանդակությունների հիման վրա դրանցով կապակցվող նախադասությունները արտահայտում են շարահյուսական զանազան իմաստային կապեր:

Նախ խոսենք պարզ միավորման մասին:

Երկու կամ ավելի պարզ կամ բարդ նախադասություններ և կամ ու շաղկապով միավորվում են առանց որևէ ուրիշ հարաբերություն արտահայտելու: Արանք միևնույն գործողության կամ երևույթի մասին արվող դասողություններ են և շարահյուսորեն ու ռեալ իմաստով բացարձակորեն համազոր. ինչպես՝ Եւ հաքիմն ալ կու պիտի որ ուսումն և իմաստութիւն ունենայ Եւ ճարտար լինենայ ի յիր արուեստն (ՂԶ, 349), Երկիր կենդանացաւ ու լեռն ու դաշտ կանաչ բուսան (ԿԵ, 128):

Փողովորդական ոճի զրկածքներում երբեմն և-ը հանդիպում է նաև այնպիսի կապակցություններում, որոնց մեջ միահյուսվում են միասնական կամ բնականորէն թեմայից բխող գատողություններ: Արանք իրար նկատմամբ ունեն հավելման իմաստային հարաբերություններ: Օրինակ՝ Նշանն այն է, որ երեսն կարմիր լինայ և շատ ի քուն լինի և հոգս շատ ունենայ և ի ժիր բերանն քաղցր լինի և յուլ լինի և բանն. և ուզէ որ հով տեղեր նստի (ԱՕԲ, 86):

Սակայն և, ու շաղկապներով շատ հաճախ կապակցվում են նախադասություններ, որոնց միջև ակնհայտ են ժամանակային, պատճառահետևանքային, որոշչային հարաբերությունները, որոնք երբեմն այսպիսի նախադասությունները շատ են նմանեցնում ստորադասական կապակցությունը, ինչպես այդ կանանեք և-ով կապակցվող և որոշչի շարահյուսական իմաստ ունեցող նախադասությունների բաժնում:

ա) Ժամանակային հարաբերությունները և, ու շաղկապներով միավորվող նախադասություններում.— Ժամանակային հարաբերությունները քննվող նախադասություններում հաճախ են դալիս բարդ նախադասության մասերի ստորոգյալների արտահայտած քերականական ժամանակների, ինչպես նաև նախադասությունների բառական կողմի արտահայտած իրական բովանդակության միջոցով: Ըստ այդմ էլ ստուգանում են՝ ա) միաժամանակյա հարաբե-

բությամբ և Բ. ժամանակային հաջորդականությունն արտահայտող բարդ համադրասական նախադասություններ:

ա) ի՞նչ համադրվող նախադասությունների ստորոգյալները արտահայտված են միևնույն ժամանակով, ապա մեծ մասամբ առաջանում է դրանց գործողությունների կատարման միաժամանակյա հարաբերություն: Օրինակ՝ Իբեր գէն նոան գիւնին Ու իդիր այմաստ փիայա (ՀՄԺ, 227), Հարբեր են յանուշ հոտուն ու նստել ի վրայ վարդին, Ու անդադար քաղցրաձայնեն՝ քունն է հատել ի գիշերին (ԿՆ, 138):

Եւ, ու շաղկապներով բարդ համադրասական նախադասություններում միաժամանակյա հարաբերություն դիտվում է մեծ մասամբ այն դեպքերում, երբ բարդ կապակցություն մասերի ստորոգյալները արտահայտված են լինում սահմանականի ներկայով կամ ըզձական եղանակի ապառնիով. ինչպես՝ Եւ եւ առանց սրէհ ու մերկ եւ յանդիման կանգնել, Հաղար զէհաց խոցեն ու չերկի թէ են խոցել (ԿՆ, 183), Բայց զայս վասն այնոր պրեցաք, որ դոքա շատ ազգի կերպով կու շրջեն, և պամէնն այդ ձևովդ իմացեք, ու թող ի ձեր քսակդ չմտնէ ի յայն հարամ իրացն (ՄԳՅ, 45), Ապա երէցն պարտ է, որ երբ զայս առնու, նա ճերի՛՛ք աճէ, ու այլ մարմնավոր գործ չայնէ (Ն. տ., 44):

Միաժամանակության հարաբերություն կարող է առաջանալ նաև, եթե բարդ նախադասության բաղադրիչների ստորոգյալները արտահայտված լինեն անցյալ ժամանակով կամ նույն եղանակի տարբեր ժամանակներով, ինչպես՝ անցյալ կատարյալ—ներկա, անցյալ անկատար—անցյալ կատարյալ, ներկրպագէ դու, Կոստանդին, Մեծ դոհովեամբ տեստն արարչին, Որ արժանի հղեր վարդին Եւ լրսեցիր բոլրուլի ձայն (ԿՆ, 133): Այս մի աղքատ խորովէր սակաւ միս չանապատի միոյ և ահա արծիւ մի անկարծակի եկն ի վերուստ և էաւ զմիսն (էՄԱ, 9), Ժողովեցա՛ն ինչ որ ծաղկունք կան ի յերկրի դարնանային, Ու ղխորհորդն շարութեան և նենդութեան վարդին կամին (ԿՆ, 138):

Ինչպես տեսնում ենք, վերը բերված երկրորդ նախադասության մեջ առաջին գործողությունը համեմատաբար երկարատե է, իսկ երկրորդը՝ հանկարծակի կատարվող և առաջինի հետ համընկնում է շատ փոքր ժամանակահատվածում: Մինչդեռ երրորդ նախադասության մեջ, որի բաղադրիչների ստորոգյալները դրված են անցյալ կատարյալ—ներկա ժամանակներով, թվում է թե ժամանակային հաջորդականությունն պետք է արտահայտեն, բայց այդպես չէ, որովհետև երրորդ նախադասության ստորոգյալը բառական իմաստով այնպիսի բայ է, որի արտահայտած գործողությունը ինչ-որ ժամանակով սահմանափակված չէ, այնպես որ կարող էր առաջինի գործողությունը տեղի ունենալ, երբ երկրորդը ավելի շուտ էր սկսվել և դեռ չէր վերջացել:

Բայց լինում են դեպքեր, որ և, ու շաղկապներով համադրասական կապակցություններում առանձին նախադասությունների ստորոգյալները արտահայտված լինեն միևնույն եղանակա-ժամանակային միավորներով, սակայն արտահայտեն ժամանակային հաջորդականություն. ինչպես՝ Քո սերդ ալ ոսկի աբիւ, իմ սրախս քուրան ճալեցիւ, Դարձար դան հալխա աբիւ ու իմ սրախս ակունչն անցուցիւ (ՆԺ, 39), Զմարդն սիրու տեր կամենն ու կուտան ճամփան թէ՛ դնա (Ն. տ., 231), Սակաւ մի համբերէ, թող եւրան հիւրքս և ևս բեզ ասեմ, այժմ ամոթ է առաջի նոցա ասել բան (ՎԱ, 162), Ընդուն տղան դաւադեկան մի կարմիր և ձայնեաց մեծաձայն, թէ ևս փող մի դտայ (ՎԱ, 185):

Դժվար չէ նկատել, որ ժամանակային հաջորդականության շարահյուսա-

կան իմաստոր բերված օրինակներում առաջացել է ոչ թե համադասության բաղադրիչների ստորոգյալների եղանակա-ժամանակային բերականական միջոցով, այլ՝ բաղադրիչների բառական կազմի իրական բովանդակության շնորհիվ, ինչպես և դրանց շարադասությամբ, պարզ նախադասությունների շարադասությունն այստեղ անմիջականորեն համապատասխանում է գործողությունների ընթացքի հաջորդականությունը՝ Հմմտ. 1. Զմարդն սիրու տեր կանեն||2. ու կուտան ճամփան. .

Նւ. ու շաղկապներով կապակցվող բարդ համադասական նախադասությունները իրենց բաղադրիչների՝ միեւնույն ժամանակով արտահայտված ստորոգյալների ղեկբույմ ժամանակային հաջորդականության զաղափար կարող են արտահայտել նաև այն դեպքում, երբ և. ու շաղկապներից չեռո գրվում է յետոյ (յետ)՝ հաջորդականություն (տեղի, ժամանակի և այլն) արտահայտող կապական բառը Յրինակ՝ եւ գիտացիր, որ առաջն այս ուսումն Հեղինացուց եղաւ, եւ յետո ուսան ի նոցանէ հեղիկքն. և յետ այնոր ուսան Հոռոնց իմաստաւէրքն (ՂԸ, 347):

Այս բառերի գործածությունը ակնհայտ է դարձնում գործողությունների հաջորդական ընթացքը՝ Քանի որ խոսք եղավ ժամանակային հաջորդականության հարաբերություն արտահայտող համապատասխան կապակցությունների մասին, այստեղ կարելի է ուշադրություն դարձնել նաև և ապա. ու ապա հարադիր շաղկապներով իրացվող նախադասություններին, որոնք նույն շարահյուսական իմաստն ունեն։ Ապա բառի գործածությունը և. ու շաղկապների չեռ տայիս է այն իմաստը, որ մի գործողություն տեղի է ունենում վերջանում և նոր միայն սկսվում է մյուսը՝ Օրինակ՝ Մի անմիտս և յիմարս, յառաջն պարտ էր ինձ ուտել և ապա զոհանալ զսատուծոյ (ՎԱ, 59), Որ դեռ ոչ գեռսուն տարին մարդն չէ լցել, հա երէջ շանեն, ինչուր այլ աւագ լինայ ու դիր անձն փորձեն ու ապա անեն (ՍԳԴ, 39):

Ինչպես տեսնում ենք, համադասության մասերի գործողությունների ժամանակային հաջորդության զաղափարը այս նախադասություններում արտահայտվել է նախ և առաջ միավորող շաղկապի արտահայտած իմաստի շնորհիվ. հավանաբար և ապա, ու ապա բառերը հնչերանդային արտաբերությամբ առանձնահատուկ տեղ են զբաղեցրել այս նախադասություններում։

Այսպիսի նախադասությունների բաղադրիչները կայուն շարադասություն ունեն, ընդ որում, սովորաբար և ապա-ով սկսվող մասը դուրկ է այն համեմատական ինքնուրույնությունից, որ ունեն և-ով կամ ու-ով կապակցվող նախադասությունները համադասության կազմում։ Այլ ապա շաղկապային հարադրությունը անպայմանորեն շեշտում է, որ իրեն նախորդում է մեկ կամ մի քանի գործողություն։ Որինակ՝ Տուք գիմ ցորեանն և ապա երթամ ի ձեզնէ (ՎԱ, 27), Աղաչեմ զքեզ վասն Աստուծոյ հան զայս խոցս յոսից իմոց. եւ ապա կեր դիս (ՂԸ, 278), Յառաջն զչուր աղոցիս արբցուք. զի արինախառն է և ապա կերիցուր զկաշին (ՎԱ, 128):

Ինչպես քիչ չեռո կտեսնենք, և. ու շաղկապով ժամանակային հաջորդականություն արտահայտող բարդ համադասական նախադասություններում իմաստային հարաբերությունները բարդացվում են գանազան երանդներով, որոնք հաճախ բավականաչափ ստորերրակված են լինում։ Նույն ձևով էլ և ապա շաղկապով կապակցությունները թննվող շրջանում հանդես են բերում նուրբ արտահայտված այլ իմաստային երանդներ, ինչպես՝ պատճառա-չեռն-

վանքային կամ պայմանա-հետևանքային իմաստային հարաբերություն։ Օրինակ՝ Յուդանէ առակս, թէ մեղաւորն ի մեղաց դառնայ, և ասլա աստուած աղաթից նորա լսէ և այլ ոչ յիշէ զմեղս նորա (ՎԱ, 167), և այլ պատեհ այն է՝ որ յառաջն մարդոյն անձն առողջ լինի և ասլա աղօթիլ առ աստուած (ՂԶ, 346)։

Ինչպես տեսնում ենք, և ասլա-ով սկսվող մասի արտահայտած գործողությունը ժամանակային առումով հաջորդելով առաջին նախադասությանը, ցույց է տալիս, որ առաջին գործողությունն անհրաժեշտ պայման է երկրորդի համար, իսկ վերջինս նպատակ է, որ բխում է առաջինից։ Այդպիսի կապակցության բաղադրիչները կարող են և շարահյուսորեն միավորված լինել զուգորդա-հակադրական հարաբերությամբ, ինչպես՝ Ասէ Լզն. ամէն աշխարհիս էն ևմ ես, վաստակիմ և շարչարիմ և խոնջիմ. և ասլա դու և քու թաղաւորն ուտէք (ՎԱ, 151), Աղուէսն էառ կաքաւ մի ի բերանն, կամէր ուտել զնա. և ասէ կաքաւն, աւրհնեալ է աստուած, որ կոչեաց զիս յիւր արքայութիւն. զի զերծանիմ ի յայս չարեացս. և ասլա դու, աղվէս, գոհացիր զաստուծոյ և ասլա ուտես զիս (ն. տ., 58)։

բ) Պատճառա-հետևանքային հարաբերությունները և, ու շաղկապներով միավորվող նախադասություններում.—Այս շաղկապներով կապակցվող համադասական նախադասությունները, ինչպես ասվեց, երբեմն արտահայտում են նաև այնպիսի քերականական-տրամաբանական հարաբերություններ, որոնք կարելի է պատճառա-հետևանքային համարել։ Համադասության առաջին մասով հայտնվում է մի գործողության կամ Լեղելության մասին, որը պատճառ է դառնում հաջորդ հետևանք-գործողությանը։ Օրինակ՝ Գնա՛, ծո տղա՛ տըխմար, շի վայլես տաճրիս լուսարար, Երթաս դուն խաղով լինաս ու թողուս տաճարս ի խավար (ՆՔ, 68), Վախեմ թ'աներեց մեռնեմ, ու տանեն թաղեն անօրեն (ն. տ. 181), Արա մեզ դատաստան և տամ քեզ տիկ մի պսնիք (էՄԱ, 29), Խաւարն հերքեցաւ ու ցընծացաւ աշխարքս ամէն (ՀԵ, 128)։

Այս նախադասությունների բաղադրիչներն իրար նկատմամբ ունեն նաև ժամանակային հաջորդականության իմաստ։ Գործողությունների՝ իրականության մեջ կատարվող հաջորդականությունը հենց ստեղծում է պատճառա-հետևանքային հարաբերություն։ Երբեմն այս նախադասություններում պատճառա-հետևանքային հարաբերությունն այնքան ակնհայտ է, որ եթե և շաղկապը փոխարինենք ուրվհետև բառով, կապակցությունն իր բոլոր հատկանիշներով ստորադասական կդառնա, ինչպես՝ Խեւօքն շի գայթակղիր, 'ա իւրն աստուած է հովանաւոր (ՀԱԳ, 9) Այսօր հոգովս ուրախ եմ՝ և ի մեծ մուրատ հասա (ԿԵ, 191)։

Այսպիսի կառուցվածքների շարահյուսական միջոցներն են համադասական մասերի շարադասությունը, նրանց ստորոգյալների արտահայտած քերականական ժամանակը, և որ ամենահիմնականն է՝ բաղադրիչների բառական ունալ բովանդակությունը։

գ) Որոշչային հարաբերությունները և, ու շաղկապներով կապակցվող նախադասություններում.—Այսպիսի նախադասություններն իրենց շարահյուսական իմաստով նմանություն ունեն որոշիչ ստորադասական նախադասություններին։ Եվ շաղկապով միավորված նախադասությունը փաստորեն լրացնում է առաջին նախադասության որևէ գոյական անդամին, բացահայտում նրա ինչպիսին լինելը։ Օրինակ՝ Կայր խիստ շէն գող մի, և կայր ի յայն գեղն չուհի մի և խիստ ծաղր առնէր զայն գեղացիքն և ուրախանային իւրմովն (ՎԱ,

27) Ընդգծված առաջին նախադասությունը որոշիչ է, որ լրացնում է նախորդ նախադասության ջուճի գոյականը, իսկ երկրորդը, նույնպես որոշիչ լինելով, լրացահայտում է զեւլապի՛՛՛ն գոյականը: Այս նախադասության իմաստը ճիշտ չի ըմբռնվի, եթե պատկերացնենք, որ և շաղկապը միավորման, հավելման գաղափար է արտահայտում, ինչը որ հատուկ է այդ շաղկապի դործառույթին մեր լեզվի ժամանակակից նորմայի համար: Սակայն միջին հայերենում շաղկապների գործառույթային փոխանցումները այնտեղ են հասել, որ համադասական շաղկապը փոխարինում է ստորադասականին: Եւ շաղկապը այս դեպքում փաստորեն կապակցում է որոշիչ երկրորդական նախադասությունը հենց նույն համաբանությամբ, ինչ ուր և ու շաղկապները, որ նույնպես հաճախ փոխարինում են իրար: Այս առումով նույնիսկ հարց է ծագում, թե այս տիպի նախադասությունները ավելի հարմար չէ՞ր արդյոք ստորադասականների տակ դնելը:

Բերենք այլ օրինակներ՝ Եւ հհար սատակեաց զօձն և սկսաւ դալարիլ (ԷՄԱ, 29): Փոխակերպենք՝ Եւ հհար և սատակեաց զօձն, և (նա) սկսաւ դալարիլ: Որպեսզի երկիմաստություն չառաջանա, այնտեղ է ընդունենք, որ երկրորդ տարբերակը ավելի ճիշտ է: Այսպիսի դեպքում երբեմն և շաղկապը ուր-ով փոխարինելու նախադասության արտահայտած իմաստի առումով ուղղակի անհրաժեշտ է դառնում: Այսպես՝ Այրի կին մի ունէր գտղայ մի, և սկսաւ գողանալ միրգ և բանջար (ՎԱ, 72): Կարելի է հասկանալ, որ այրի կինն է գողանում միրգ և բանջար, մինչդեռ երկրորդական նախադասության արտահայտած դործողությունը փաստորեն որոշիչ է առաջին նախադասության գտղայ մի գոյականի համար: Հմմտ. Այրի կին մի ունէր գտղայ մի, որ սկսաւ գողանալ միրգ և բանջար:

111. Եւ, ու շաղկապներով կապակցվող բախադասություններ՝ հարակցական հարաբերությամբ

Այս շաղկապներով կարող են միավորվել նաև ոչ թե նման կամ սպասելի գործողություններ արտահայտող նախադասություններ, այլ բնդհանուր թեմայից բխող, նրա հետ շանջվող, բայց հավելյալ տեղեկություն հաղորդող դատողություններ, որոնք գործողությունների հաջորդական շարքի մեջ առանձնահատուկ տեղ են զբաղում իրենց անսպասելիությամբ, մտքի հանկարծակի անցումով կամ փոփոխումով: Օրինակ՝ Իսկ զեղին մաղձն, որ է սաֆրան, տաք է և շոր, և տունը նորա լեղին և (ԱՕԲ, 95), Զաքարիայի որդին ասէ, թէ այս ցաւս աշացն վախմն հասնելու լինի, պտուղն լաննայ և իրք մն չի տեսնու, և լինի որ շատ ցաւ դիպի ի յաշքն և լինայ այս ցաւս մաւղուն (ն. տ., 13):

Այսպիսի նախադասություններում սովորաբար համադասության այն մասը, որ հաջորդում է շաղկապին, ավելի շեշտված միտք է արտահայտում. ինչպես՝ Մի գալ ձիով, Մի գալ ջորով, կըտրի՞ճ, Ու մի գալ հետեակ (ՀՄԺԵ, 113):

Երբեմն մի բանի նախադասություններից հետո և-ով հարակցվում է մի դատողություն, որը ևզրափակում, ամփոփում է նախորդ ասվածները: Օրինակ՝ Եւ որոյ աշքն կարմրի, և կրակնին կանգնի և լարի, և փախչի ի յուսոյ տեղացն, և ջերմն և զխաղաուլիւն լինայ՝ և այս ամէնն նշան է սարսամին (ԱՕԲ, 82):

Եւ շաղկապով կապակցվող բարդ համադասական այսպիսի նախադասություններում, որոնք հավելման գաղափար են արտահայտում, երբեմն առանձ-

նացվում են այնպիսի նախադասություններ, որոնց իմաստը բխում է նախորդում արտահայտված գործողությունից սպասվող հետևանքից: Այս դեպքում և շաղկապը կարելի է փոխարինել *և-ով*: Այսպիսի նախադասությունները որոշակիորեն հարակցական հարաբերություն են արտահայտում:

Որոշ դեպքերում էլ այս կառուցվածքի համադասական նախադասություններում *և-ով* սկսվող բաղադրիչը արտահայտում է հավելյալ գործողություն, որը բացահայտում, մասնավորեցնում, մեկնաբանում է առաջին մասով տրված գործողությունը կամ երևույթը: Հմմտ. *Եւ ասէ որդին. ո՞վ հայր, զարմացումն է. զի հօրն ոչ կիզեց զմեզ վասն քո անդէպ խորհրդոցն, և սուրբ հոգին զիա՞րդ երեւր ընդ (ՎՄ, 48), Եւ թէ ոք երթայ յայլոց երկիր և որս այնէ, նա ի տասնէն մէկն մեղույ տիրոյն տայ, և թէ ձուկն որսայ, նոյնն է, ի տասնէն զմէկն տայ զէջ զցամաքոյն որսն (ՄԳԴ, 20):*

**11. *եւ*, ու շաղկապներով համադասական նախադասություններ՝
զուգադրա-հակադրական և զիջական հարաբերությամբ**

ա) եւ. ու շաղկապները միջին հայերենում կապակցում են այնպիսի բարդ համադասական նախադասություններ, որոնցում ականհայտորեն երևան է պալիս զուգադրության իմաստային հարաբերություն: Բարդ նախադասության առաջին մասով հաղորդվում է մի գործողություն կամ երևույթ: Ընդ որում, կարող են հակադրվել ինչպես համադաս նախադասությունների տարրերն անդամները՝ ենթակաները, ստորոգյալները, պարագաները, այնպես էլ՝ բոլորը միասին: Այսպիսով առաջանում են համեմատվող նախադասություններ, որոնց քերականական կապն արտահայտվում է նրանց կառուցվածքների զուգադրությամբ, նմանությամբ: Այսպիսի կառուցվածքներին հատուկ է բարդ նախադասության բաղադրիչների կազմում նույն իմաստի կամ նույն իմաստային խմբի բառերի առկայություն: Ընդ որում, այդ բառերը երկու մասում էլ նույն պաշտոնն են ունենում: Հմմտ. *էչն ի՞նչ գիտէ, զինչ է տօմարըն, Եւ խոզն ի՞նչ գիտէ մարգարտի շտրն (ՆԶ, 79), Էաւ ի հոս աշխատիս, և ի հոն հանգչիս, Էավ ի հոս մեռնիս, և ի հոն ապրիս (ՄՆ, 24):*

Երբեմն զուգադրվում են ոչ թե քերականորեն միասնական նախադասություններ, այլ՝ իմաստով նման և իրար յրացնող գաղափարներ: Այսպիսի կառուցվածքներ ամենից շատ հանդիպում են բանաստեղծական խոսքում: Օրինակ՝ *Անմահ արքայ և տէր Երկնի Ազգի մարգկան կենաց յոյս ևս, Եւ իաւարեալ սրբոց մարդկան Անշիջելի վառեալ յոյս ևս (ԿԵ, 231), Ես չունիմ հանգրստութիւն ու օրախոթեալ ինձ շրկայ ճար, Որ մի պահ հանգիստ առնում, կամ դուրանայ կեանքս զըժար (Ն. տ., 192):*

Այսպիսի զուգադրական կապակցությունների երկրորդ բաղադրիչի արտահայտած համեմատվող գործողության շնորհիվ իմաստային ու հաղորդակցական առումով շեշտվում է առաջինի միտքը, այն կարծես հիմնավորվում է: Հմմտ. *Նա կէսք մ՝ ասէն՝ Դա է յիմար ու խն մաղաս կաթել, Ու կէսք մ՝ ասէն, թէ՛ Պարտ է զայսպիսոյս արիւնն հեղել (ԿԵ, 183):*

բ) Միջին հայերենի գրավոր աղբյուրներում ավելի շատ տարածված է և, ու շաղկապներով կապակցվող համադասական նախադասությունների այն տեսակը, որում բարդ նախադասության բաղադրիչների արտահայտած գործողությունների միջև ընդգծված կերպով առկա է հակադրության հարաբերու-

թյունը նվ, ու շաղկապները այսպիսի նախադասություններում ազատ կերպով կարելի է փոխարինել իսկ-ով, Օրինակ՝ Իմաստնոյն միտքն առատ խիստ լիութեամբ կուշտ և ուժով, 'ս անմիտն է քաղց ու ծարաւ ակն է աղահ և լի սովով (ԿՆ, 172), Եւ հնշտ կենայն լնու զմարմինն պիջութեամբ, և շատ աշխատիւն հանէ զաւելուած մաղձերոյն բնդ բիրտն և բնդ մութն (Գր., 179):

նվ, ու շաղկապներով բարդ համադասության երկու մասերի միջև ստեղծվող հակադրությունն արտահայտում է երկտեսակ հարաբերություն. մի դեպքում այդ հակադրությունը խիստ որոշակի է, մի գործողությունը ամբողջապես հակադրվում է մյուսին, իսկ երկրորդ դեպքում հակադրությունը մոտենում է պիջականության, ավելի ճիշտ՝ հակադրությունը համեմատաբար թույլ է: Եթե առաջին դեպքում և-ը կամ ու-ն կարելի էր փոխարինել իսկ-ով, ապա այս դեպքում այն դառնում է **բայց-ի** համանիշը: Այսպիսի համադասական նախադասությունների բաղադրիչների միջև առաջանում է գործողությունների այնպիսի իմաստային կապ, ըստ որի առաջին նախադասության բովանդակությունից բխում է ինչ-որ գործողության իրադրծում, որը որպես հետևանք պետք է հաջորդեր առաջինին և որը սակայն չի կատարվում: Օրինակ՝ Թագաւորն ու թագուհին բազում խոստմունք արարին աստուծոյ և սրբոց և նոցա պաւակ ոչ լինել (ՎՄ, 307), Զուր, գրգռլալեն կու դաս, ի դետի որ՝ ակնեն կուդաս. Խրթաս այդ ձորերդ ի վայր, ձայնդ գա, ու դուն չընես (ՆՔ, 237): Եւ իջեալ ծառէն կապիկն և էառ զուռկան և նման ձկնորսի ձգել ի վերայ ձկանցըն կամեցաւ և ինքնն բմբռնեցաւ ի նման (ՎՄ, 120), Եվ բնութեամբ խոզն ի վար հայի և Լուսն զհետն, որ զիւն մտեսւ էր, այլ չէր Լելայ, և ասէ ածն թ՝ մուտ. ասէ խոզն, աստ մեռանիմ և ոչ մտանեմ (ՎՄ, 91):

Ինչպես տեսնում ենք, այս օրինակներում և-ը իսկ-ով փոխարինել հնարավոր չէ, ճիշտ այդպես էլ այնտեղ, որտեղ այդ շաղկապն ունենում է իսկ-ի իմաստ, **բայց-ով** փոխարինել չի կարելի: Հմմտ. Աղվո՛ր, բեզ քան մի կասեմ, հորդ ահուն չեմ իշխել ասել. Անոր համար չեմ ասեր, դուք հարուստ եք, ու մենք տառապել (ՆՔ, 210):

Նման կառուցվածքներում երբեմն և շաղկապին հավելադրվում է իսկ-ը, և այս դեպքում երկուսը միասին կատարում են նույն գործառնություն՝ Եւ նալ ասէ ով բարի թագաւոր, ի գալ սաստիկ հողմոց ծառն հպարտութեամբ հակառակին բնդդեմ նոցայ, նայ բեկէ և ձգէ զնոսա. և իսկ ես խոնարհիմ ի կամս հողմոյն, նա ոչ բեկեն զիս (ՎՄ, 121):

նվ, ու շաղկապներով կապակցվող և հակադրության իմաստ ունեցող համադասական նախադասությունների կառուցվածքա-իմաստային մի տեսակ է կիրառվում, որի դեպքում հակադրությունը ոչ թե համադասության մասերի արտահայտած գործողությունների միջև է, այլ՝ համադասության առաջին մասով հաղորդվող գործողությանը հակադրվում է գործողությունների մի խումբ (կնթաղրվում է մեկից ավելի պարզ նախադասություններ), որոնցից առաջինը պարունակում է պայմանի իմաստ: Այս դեպքում և, ու շաղկապներին միանում է լև պայմանական շաղկապը. Ինչպես՝ Ես սիրով կամ կենդանի, Ու սերենիս սիրով սիրին, Ու թէ սէրն յիսնէ զատի՝ նա պիս տանի հողմ ու քամին (ԿՆ, 142):

Ինչպես տեսնում ենք, համադասության երկրորդ մասը մի ամբողջ ստորադասական նախադասություն է: Շատ հաճախ այս վերջինը կառուցվում է ու րև... նա զուղադրական շաղկապների միջոցով առաջացող կաղապարով (որի մասին տեսանք ստորագրասական նախադասությունների բաժնում):

Ինչպես տեսանք, բարդ նախադասությունները կապակցելիս միջին հայերենի համար սովորական են շաղկապների գործառության լիտանցումները: Բացի դրանից, հաճախ հանդիպում են նաև այնպիսի շաղկապներ, որոնք որսակա այդպիսիք չեն գործածվում մեր լեզվի մյուս շրջաններում: Այդպիսին է նա շաղկապը, որի կիրառություններից մեկն էլ համադասական նախադասությունների կապակցելն է: Այս առումով այն կատարում է և-ի փնջող շրջանում ունեցած իմաստային գործառությունները, որի մասին խոսվել է և, ու շաղկապներով կապակցվող նախադասությունների բաժնում, հետևաբար այստեղ անհրաժեշտ է միայն թեթևակի անդրադառնալ դրանց:

Նա շաղկապը կապակցում է նախադասություններ, որոնք միմյանց հետ կապվում են պարզ միավորման հարաբերությամբ: Բարդ կապակցության մեջ մտնող սլարդ նախադասությունները արտահայտում են միանման գործողություններ, միանման երևույթներ: Օրինակ՝ Երբ մարդ կացին ած է ու ճուղ կըտրէ, նա անցնի կացինն և ընկերոջն դիպի ու սպաննէ, և գան ազդ նորա և ասէն թէ կամաւ սպաններ (ՄԳԴ, 26), և երկրորդ ջերմն որ ընծայի ի խարտէջ մաղձէ բորբոսոյն և ինքս անուանի զըպ... և այս ջերմս կարճ լինի և է անվնաս, վասնզի օրն ընդ մէկն մարմինն հանքի ի ջերմէն, նա ուժն չյատնի (Գր., 17):

Նա շաղկապով միավորվում են նաև նախադասություններ այսպես կոչված շղթայական ընդելուզման ձևով, երբ կապակցվում են բազմանդամ համադասական նախադասություններ: Այսպիսի կառուցվածքներ հանդիպում են միջանդարյան սլոգիկայում, օրինակ՝ Նա կէսք մ՝ ասեն՝ Դա է յիմար ու խնմաղաս կաթել, Ու կէսք մ՝ ասեն, թէ Պարտ է զայսպիսոյն արիւնն հեղել (ԿԾ, 183), Նա ինձ պատասխանեց, քաղցր ձայնով ասաց՝ Դրնա, Նա իր բարբառն ահեղ զարհուրեցոյց դիս, որ զտրթայ (Ն. տ., 189), Նա վարդըն զարգարեց Ըզրուրաստանքն ու դրաղչանին, Ու շարժեց տերև հազար, կարմիր՝ նրման նրուան հատին. Նա սլլոյուն երէկ նրստաւ, ու հարբեցաւ յանուշ հոտին (Ն. տ., 140):

Նա շաղկապով կապակցվելիս բարդ համադասական նախադասությունները ստանում են նաև հարակցական, լրացուցիչ հաղորդման, ինչպես նաև հետևանքի շարահյուսական հարաբերություն: Օրինակ՝ Մառն էլ զիս դժար դահրեց, Նայ հս էլայ ի բարձր սարեր, Մտիկ սարերուն արի, Նայ սմէնք տրտում են դարձեր (ՀՄԺՆ, 263):

Ինչպես տեսնում ենք, այս բարդ նախադասության առաջին մասում նա շաղկապով կապակցվել է նախադասություն, որը առաջինի հետ հետևանքային հարաբերությամբ է կապված, մինչդեռ վերջինը նախորդներին միացել է հարակցական իմաստով:

Իսկ շաղկապը միջին հայերենում կապակցում է բարդ համադասական նախադասություններ, որոնց մասերը միմյանց նկատմամբ ունեն հակադրության կամ դուդադրության հարաբերություն: Օրինակ՝ Ձշամփուրն յիշեմ, զի մերոց անթիվ են խորովեալ, իսկ ի բազէից և ոչ մի (էջեր, 8), Ոմն եկ առ Աղեկսանդր թագաւորն, զի էր յոյժ առատ, և խնդրեաց ի նմանէ սակաւ ինչողորմություն, իսկ նա ետ նմա քաղաք մի գեղեցիկ (ՎԱ, 284):

Առաջին օրինակում իսկ շաղկապը կապակցում է հակադիր նախադասութիւններ, որոնցում հակադրութեան իմաստն առաջացել է նախադասութեան մասերի արտահայտած իրական բովանդակութեան շնորհիւ, իսկ երկրորդ օրինակում այդ նույն շաղկապը կարելի է փոխարինել րայց-ով, որով նախադասութեան բաղադրիչների միջև զիջման իմաստ է առաջանում, այստեղ համադասութեան մասերի միջև չկա այն հակադրութեան հարաբերութիւնը, ինչ առաջինում: Հակադրութեան շարահյուսական հարաբերութիւնը բարդ համադասութեան բաղադրիչների միջև լինում է լրիւ և մասնակի: Լրիւ է, երբ այդ բաղադրիչները հակադրվում են իրենց բոլոր անդամներով, ամբողջովին: Իսկ-ով վատվող մասերի միջև առաջանում է քրտականական ու քառական զուգահեռութիւն: Երկու նախադասութիւնների ենթակաները լինում են քառական իմաստով հականիշներ, նման են լինում նաև ստորգայլների քերականական ձևերը, ինչպես և պարզ նախադասութիւնների անդամների շարահասութիւնը: Այս առումով գեղեցիկ օրինակներ կան Կոստանդին Երզնկացու բանաստեղծութիւններում: Խմաստունն է առաւօտ, աւետաւոր է ցրնծալով, Իսկ անմիտն ի խաւարի կայ թանձրացել յերազ քրնով (171), Խմաստունն պրտող բարի՝ անմահութեան ճաշակ տալով, Իսկ անմիտն է անպրտող, դատարկացել և յի փրշով (171), Ահա բարի սեւմանահանքն հընձնացն զպրտող բարեաց, Իսկ սեւմանողքն շաւուրեան ժողովեացն փուշ խոպանաց (151):

Մասնակի հակադրութիւն առաջանում է, երբ հակադրվում են համադասութեան առանձին մասերի ոչ բոլոր անդամները: Օրինակ՝ Հողադործ ոմն իշխան ցանեաց առ գետովն բակլայ և սիսեռն, իսկ սաքերն ու կոռնկնին ելեալ ի խարձէն, յեզր գետոցն, քաղեալ ուտէին զամենայն (ՎԱ, 193):

Զսկետք է կարծել, որ հակադրութիւնը իսկ-ով կապակցվող նախադասութիւնների միջև միշտ արտահայտվում է նախադասութիւնների այսպիսի զուգաչափութեամբ (սիմետրիայով): Ավելի հաճախ են, մանավանդ արձակում, այնպիսի կապակցութիւնները, որոնց բաղադրիչները անհամապատասխան են լինում, ավելի շուտ՝ առաջին բաղադրիչը (իսկ-ից առաջ եղած մասը) սովորաբար ընդարձակ է և կազմվում է մի քանի պարզ նախադասութիւններից: Օրինակ՝ Ամենայն ցեղ հիւանդութիւն ի յանդամ մի լինի կամ ի յերկուս, կամ ի սուկաւ մասունս մարմնոյն գործնն զցաւն: Իսկ քերմն բովանդակ ընդ ամենայն մասունս մարմնոցն լինին (ՂԶ, 73), Իսկ յորժամ զնացին ամէնքն, էհան արտաքս զամէն ընտանիքն և փախեալ ամուր զդուռն, էառ ի ափ զվատ կինն ըստ խրատու աղօրին, ջարթեց զամենայն ոսկւրս և վարեաց ի բաց: Իսկ կինն զղջացեալ անկանէր ի ոտս նորա յալով (ՎԱ, 162):

Իսկ-ով շաղկապվող բարդ համադասական նախադասութիւնների բաղադրիչները կարող են արտահայտել նաև պարզ զուգադրութեան իմաստ: Պրանցում խոսվում է այնպիսի զործողութիւնների կամ երևույթների մասին, որոնք իրար չեն հակադրվում, այլ պարզապէս զուգադրվում են, որի ընթացքում երևում է մեկի առավելութիւնը մյուսի նկատմամբ: Օրինակ՝ Մարմինտ որ էր տըղայ՝ նման ծաղկի գեղեցկացել, Իսկ այժմ ահա հասեր՝ և երիտասարդ ես կատարել (ԿՆ, 178):

Միջին հայերենում, որքան կարելի է եզրակացնել դիտումներից, գործածական չէ սակայն շաղկապը: Հազվադեպ օրինակներ կան Մխիթար Հերացու ձեռագրային տարբերակներից մեկում, որ բերում է Ղ. Հովնանյանը՝ Թէպէտ եւ ասացաք զքնութեան զործերն որ խափանին ի քերմնոյն և ի յայլ ամե-

նայն ցեղ հիւանդութենէ, սակայն ոչ կատարեալ խափանումն, այլ մասնական ինչ (22, 74):

ԲԱՐԻ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ, ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ, ԲԱՀՐԱԿ(ԲԱՀՐԱԿ ԻՆ) ԵՆԴԱԿՈՎ

Այս շաղկապը իր արտահայտած շարահյուսական իմաստով երբեմն դժվարութիւն է առաջացնում իրենով կապակցվող նախադասութիւնները դասակարգելիս: Բահրակ բառը Հր. Աճառյանի բառարանում²¹ բացատրված է՝ «Մանավանդ, ամենից ավելի»: Աճառյանը նշում է նաև, որ այն հանդիպել է երեք անգամ Սմբատ Գունդստարի մոտ: Սակայն հենց նույն Սմբատ Գունդստարի «Դատաստանագրքում» այս բառի երեք կիրառության ենք հանդիպել: որոնցից երկուսը նշանակում են՝ «իսկ եթե» իսկ երրորդը՝ «գուցե թե»:

Բահրակ ք. շաղկապով կապակցվող նախադասութիւնները առաջին շարահյուսական առանձնահատկութիւնն այն է, որ դրանք կազմված են լինում երկուսից ավելի բաղադրիչներից: Այսպես, բահրակ ք.-ն առաջացնում է հակադրության հարաբերութիւն, բայց առաջին մտքին հակադրվող միտքը (բահրակ քէ-ին հաջորդող մասը) մի յրացուցիչ, բացառիկ պայման է: Վերջինս իր հերթին պայմանա-եզրահանգման նախադասութիւն է (որի մասին խոսել ենք ստորադասական նախադասութիւնների բաժնում) երե (քե)... նա (ապա) կաղապարով: Ընդ որում, այս շաղկապային գուպադրության առաջին բաղադրիչը հենց կազմում է բահրակ քէ-ն: Օրինակ՝ Ու թէ վարողն մեռնի ի վերայ պնդելոյն, նա գրաստուն տէրն անպարտ է, ապա թէ ոչ, նա պարտական է մեղացն, բահրակ ք. տղայ լինի ու անպէտ, նա զթշկաց վարձն ու պղնդպինն ինք պարտի որ տայ (ՍԳԴ, 78). Ինչ յուղարկողին արտորոցնելոյն լինի լեալ, նա պատուեցնողին մեղ չկայ, ապա թէ յաղփրթութենէ լինի, նա այն դատաւորին խեղճն է որ քստ մեղանացն չաքուցն տուղանէ՝ զմեղկանն, բահրակ քէ զգուշացուցել լինի տերն ու պնդել ի վերայ իրացն զտանողն ու նշան տել: ու նա այլ ազգ անէ, նա այնոր վստահ վճար պիտի (ն. տ., 78): Վերջին օրինակը դիտավորյալ ընդարձակ է բերված, որպեսզի պատկերացում կազմենք պայմանի ստորադասական նախադասութիւնների ամբողջ շղթայի մասին, որը ինչ-որ տեղ կապակցվում է բահրակ քե-ով: Այս բառերով սկսվողը արդեն նոր պայման է, որը հակադրվում է առաջիններին որպես բացառիկ. շնախատեսված մի պայման:

Որոշ դեպքերում բահրակ ք. շաղկապը կապակցում է ոչ թե բարդ համադասական նախադասութիւններ, այլ՝ պարզ նախադասութիւն: Այս դեպքում տվյալ նախադասութիւնը ավելի շուտ որպես միանգամայնի ստորադասական նախադասութիւն կդիտվի: Այսպես օրինակ, դարձյալ Սմբատ Սպարապետի հիշյալ աշխատութեան մեջ հանդիպած երրորդ օրինակում բահրակ քէ-ն ունի «գուցե թե» իմաստը՝ նա կիսավճար տայ իր, ապա թե ոչ, որ լով լուծի լինի և թողն անփոյթ, նա ի լմանն վճարէ, բահրակ ք. վասն շարութեանն լինի արել (83): Այս նախադասութիւնը կարելի է հասկանալ այսպես: Ապա կիսավճար տա իրեն, իսկ եթե ոչ, միայն տրձակած լինի և անփոյթ թողած, ապա ամբողջովին վճարի, գուցե թե շարութեան պատճառով է արել (խոսքը ուրիշի ձին քչելու պատճառով սատկեցնելու մասին է, որի համար տիրոջը պետք է վարձատրել):

²¹ Հ. Աճառյան. Հայերենի արմատական բառարան, հ. 1, 1926, էջ 219.

Միջին հայերենի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լայն շաղկապով համադասական նախադասությունների կառուցվածքային հիմնական տեսակները, որոնք համապատասխանում են ժամանակակից հայերենում դոյություն ունեցող նախադասություններին, գործառում էին:

Բայց և իսկ շաղկապների իմաստային ու զործառությային առումների մասին ժամանակակից հայերենի շարահյուսության²² մեջ բավարար բացատրություն կա, ուստի դրա մասին խոսելու անհրաժեշտություն չենք դնում: Պետք է միայն նկատարել, որ բայց-ով կապակցվող բարդ համադասական նախադասությունների կառուցվածքային ու իմաստային հատկանիշները:

Բայց շաղկապով կապակցվող բարդ համադասական նախադասությունների ամենազործուն կառուցվածքա-իմաստային տեսակն այն է, որը համադասության բաղադրիչների միջև արտահայտում է հակադրության շարահյուսական հարաբերություն: Բայց-ով շաղկապվող շարահյուսական բարդ կառուցվածքները բաղադրամասերի պարունակության առումով կարող են կազմված լինել.

ա) Երկու պարզ նախադասություններից.

Իր խայթածն կարմրե՛լ և չուռննայ՝ բայց սիրտն շարժի և դարցնէ շատ (Գր., 50):

բ) Մեկ պարզ և մեկ երկանդամ նախադասությունից.

Շատք խաբեն և այլ բնդ յայլ մեկնեն դստուն՝ բայց այս է կատարեալ միտքն. պի շատ արդար մարդիք դատին և մեռանին անիրաւ և ընդվար (ՎԱ, 127), Պատասխանի ետ առիծն հանդարտայբար և ասէ, այո, մի կորիւն ծնանիմ՝ բայց առիծ ծնանիմ և ոչ աղուէս քան զքեզ (Ն. տ. 117):

գ) Պարզ և բարդ նախադասությունից.

Աբեղայ մի ցանկայր առաջնորդութեանն վանաց՝ բայց զի դիտէր. թէ ի կենդանութեանն հօրն ոչ կարէր յայնմ հասանել, հնարս իմացավ ի ձեռն ուրումն մանկանն (էՄԱ, 23):

դ) Երկու երկանդամ նախադասություններից. որոնցից մեկը ստորադասական է, մյուսը՝ համադասական.

Եւ այն նեղերն. որ ի սարսամն յիշեցար. նայ ի պրսամն կայ՝ բայց ի պրսամն այլ վատուծ լինի և տաքութիւնն այլ հոյով (Գր., 57):

Ընդ որում, ավելի շատ գործածական է բայց շաղկապով համադասական նախադասությունների այն կառուցվածքային տեսակը, երբ բայց-ին հաջորդող երկրորդ բաղադրիչը պարզ է, իսկ նախորդող մասը համադասական, ստորադասական կամ բաղմարարդ նախադասություն է: Այսպիսով, բայց-ին նախորդող նախադասություններով հաջորդվում է միայն ընդարձակ գործողություն, ավելի ճիշտ՝ պարզությունների դումար, որոնց ամբողջապես հակադրվում կամ զուգահրվում է բայց-ին հաջորդող գործողությունը կամ երևույթը: Համար. Մարդ կայ, որ սուրբ է և ծաղկանց դաշտ է, Անուամբ «ճղնաւոր», «աստուածապաշտ է», Բայց յոյժ մեծամիտ և կամապաշտ է (ՆԶ, 84), Երբ մարդ կացին ամէ ու ճուղ կտրէ, նա անցնի կացինն և բնկերոջն դիպի ու սպաննէ, և

22 Վ. Առաքելյան, Եզփ. աշխ. հ. 2: Ս. Արեւմամյան, Զբեքվող խոսքի մասերը..., Երևան, 1965: Ն. Պառնասյան, Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասությունում, Երևան 1961: Դ. Գալեզիկյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան 1963 և այլն:

զան ազդ նորա և ասեն թէ կամաւ սպանենք, բայց դատաւորն և եկեղեցին շատ փնտռումն պատեհ է, որ առնեն (ՍՍԴ, 26)։

Ինչպես տեսնում ենք, լրաց-ով կապակցվող նախադասութիւնների այսպիսի կապը արտահայտում է ղեջման հարաբերություն. առաջին մասի գործողութիւն կամ եղելութիւն իրագործման համար բայց-ին հաջորդող մասի արտահայտած գործողութիւնը կամ եղելութիւնը խոչընդոտ է դառնում։ Առաջինը տեղի կունենա, եթե երկրորդը չկատարվի։ Սակայն բայց շաղկապը կարող է և հակադրութիւն հարաբերություն արտահայտել, այս դեպքում ավելի մոտենալով իսկ-ի շարահյուսական գործառույթին։ Այս առումով հետաքրքիր են միևնույն աղբյուրում հանդիպող հետևյալ նախադասութիւնները. Մեծատունք ի ձեռն շարամիտ ծառայից և նենգաւոր մշակաց փշօք պատեն դայդին և զղբախտն և նորօք պահեն զմիւրպն, բայց ի ժամ ճաշակման մրդին և ողկողքացն ոչ յիշեն զմշակս (էՄԱ, 10). Դարձեալ և իշխանք ի ձեռն շանց և գիշակեր թռչնոց որսան զերայս և զթռչունս անուշահամս, իսկ ի ժամ ճաշակման մատչն ոչ շունքն դովեն և ոչ թռչունք (ն. տ., 10)։

Բայց շաղկապով նախադասութիւնների համար կառուցվածքային հատկանիշ է համադասութիւն անդամներից մեկում բայի ժխտական ձևով կիրառութիւնը։ Օրինակ՝ Եւ իբրև զխորովեալն հաւն բերէին առաջի նորա, կտրեաղ զանդամն, եղ ի բերան և սկսաւ ուտել, լրաց ոչ կլանել կարաց և ոչ յետս դարձուցանել (էՄԱ, 23)։

Ընդ որում, կառուցվածքային առումով այնքան կարևոր չէ, թե ժխտական բայ-ստորոգյալը այս շաղկապով կապակցվող նախադասութիւնների առաջին բաղադրիչի կազմում է գտնվում, թե երկրորդ, թե և այդ հանգամանքը իմաստային որոշ նրբութիւն է առաջ բերում։ Մի դեպքում, երբ մի բան ժխտվում է նախադասութիւն առաջին մասում, հաստատվում է երկրորդ նախադասութիւն բովանդակությամբ. Ինչպես՝ Զի թէպէտ և յառաջի կանոնքն չկայ այս, որ կարէ վասն անհնազանդութեան թողուլ, բայց հետև վասն տնկարդութեան, որ տեսան, թե այլ մեծ վզէն կայր ի ծայրն, նա զայս թուլցուցին (ՍԳԴ, 48)։

Այսպիսի կառուցվածքներում առարկայի, երևույթի որևէ հատկանիշ ժխտվում, մերժվում է համադաս նախադասութիւններից առաջինով, բայց դրան հակադրվում է մի գործողութիւն, եղելութիւն կամ հատկանիշ, որ առաջինից բխելի չէ։ Օրինակ՝ Եւ այրն ասաց, թէ դու ոչ մտեր ի հարսանիսն իմ, բաց²³ քո շարութիւն և շմորութիւն էմուտ և շատ շարիս և աղմուկ և վնաս արար (ՎԱ, 183), Նոցա ամենեցուն ոչ հասանի, որ հարսն առնուն, բաց քեզ հասանի (ն. տ., 166)։

Մյուս դեպքում, երբ ժխտական ձևով արտահայտված բայական ստորոգյալը գտնվում է այդ շաղկապով կապակցվող նախադասութիւն երկրորդ բաղադրիչի կազմում, ապա այն, ինչ հաստատական եղանակով հաղորդվում է առաջին մասով, սահմանափակվում, ժխտվում է լրաց-ին հաջորդող մասով։ Սովորաբար այսպիսի նախադասութիւնների առաջին բաղադրիչի կազմում չեն եղել ևն ամէն. բացում. շատ բառեր, որոնց ներկայութիւնը մատնացույց է անում, որ խոսքը վերաբերում է գործողութիւնների, եղելութիւնների կամ հատկանիշների դումարին, որոնց մեջ բացառվում է այն, ինչ արտահայտված է համադասութիւն երկրորդ բաղադրիչի միջոցով։ Օրինակ՝ Եւ պարտէ մար-

²³ Երբեմն ձեռագրերում բայց բառը հանդիպում է բաց ձևով։

դոյն և բազում բարոյթիւն առնէ կնոջն, զի մի մարմին են. բաց զսրտին խորհրդոցն ոչ յայտնէ կնոջն իւր (ՎԱ, 158), Բայց զոչն արժանէ որ ամէն երկրակալ խրատէ, բայց իրեն ճորտերն չխրատեն առանց իրենց պարտին (ՍԳԴ, 18):

Կառուցվածքային այս տեսակին նման են միջին հայերենում գոյություն ունեցող բարդ համադասական նախադասութեան այն տիպերը, որոնցում բայց-ով հակադրվող երկու նախադասութիւնների ենթակաները կամ նախադասութեան այլ համապատասխան անդամները բառական հականիշներ են: Օրինակ՝ Տէր, գըթա յիս ի ծառայս, և տուր քաժին ինձ յայն հոգոյն, Որ շատո՞ւ ին ցանդացեալ, բայց քիչ՞ հասան առաւօտուն (ԿԾ, 127), Ի՞նչ դու ի սրբաւանց քննես՝ այս կենցաղս յերակ խաբող է, Պահիկ մի խրնդալ կու տա. բայց յետեւ ի լաց կու պահէ (Ֆր., 346):

Բայց շաղկապով համադասական նախադասութիւնների մեծ մասում հակադրութեան իմաստային հարաբերութիւնը ածանցվում է սահմանափակման-բացառման լրացուցիչ հարաբերութեամբ. բայց-ով սկսվող երկրորդ նախադասութիւնը իր մեջ ունի այնպիսի նշանակութիւն, որ բացառում է այն գործողութեան կամ երևույթի իրականացումը, որի մասին խոսվում է առաջին նախադասութեան մեջ: Օրինակ՝ Եւ էր թագաւոր մի և ոչ ունէր ժառանգաթոռոյն իւրոյն՝ ոչ կտրիճ և ոչ աղչիկ. բաց քուրոչ որդի միմիայն ունէր և զնայ կամեցաւ ժառանգ առնել իւրոյ թագաւորութեան (ՎԱ, 142), Եվ զայն որ թանձր միս ունի և զորկուտ մի տաս, այլ զաղի ձուկն և մանանեխ տալ մարթի, բայց ժամ ժամ (ՂԶ, 81):

Այսպիսի կառուցվածքով նախադասութիւններում երբեմն բացառութեան իմաստային հարաբերութիւնը առաջանում է առաջին նախադասութեան կազմում որեւէ առարկայի՝ մտքով ընկալվող հասկանիշներից մեկը երկրորդ նախադասութեան բովանդակութեամբ բացառելու միջոցով: Վերջինիս միջոցով վերապահութիւն, սահմանափակում է արվում նախորդ ասվածի վերաբերյալ: Օրինակ՝ Եւ տերեւն նման է ջղախոտին տերեւին, բայց գոյնն քիչ մի սեւութիւն կու քշտէ (ԱԱԱ, 469). Եւ տերեւն նման է բրնձի տերեւին, բայց՝ սպիտակ կու լինայ (Նույն, 85), Զամէն աղբի արուեստավոր սլատուեցէք, բայց զղարբինն, զհիւսն և զքարգործն՝ ավելի (ՍԳԴ, 19):

Բացի մինչև հիմա քննված կառուցվածքային այս հիմնական տեսակներից, միջին հայերենում գոյութիւն ունեն նաև բայց շաղկապով կապվող համադասական այնպիսի նախադասութիւններ, որոնց արտահայտած հարաբերութիւնը կարելի է տնվանել միավորման, ինչպես և հարակցա-որոշչային: Բայց-ի շարահյուսական այսպիսի գործառույթը ևս կապված է միջին հայերենում համադասական շաղկապների բազմազործառական բնույթի հետ: Այսպես՝ հետևյալ նախադասութիւնների բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերութիւնը ոչ այնքան հակադրական է, որքան միավորող: Օրինակ՝ Ֆալար, քեզ մեղ ով զնէ, զինչ առնես ամէնն է աղւոր, Բայց ի մեր մեղացն յինի որ հայի Աստուած մեզ խոլոր (ՀԱԳ, 9): Երբեմն այսպիսի դեպքում բայց-ին հարադրվում է քիչ շաղկապը՝ Դու այն կորած առաջնորդ ես, մարդկան կապես բեռ ու շայտկ, Դու մատեամբ ի հատ շաւղնիս, բայց թէ խաբող ես՝ անառակ (ՀԹ, 193):

Միավորման հարաբերութիւն արտահայտող այսպիսի համադասական նախադասութիւններում, ճիշտ է. նույնպես աղոտ, երբեմն նկատվում է նաև որոշչային հարաբերութիւն, որը մենք տեսանք և-ով շաղկապվող համադաս-

սական նախադասութիւններում: Օրինակ՝ Ով այր դու, դքս էշն ես եմ գտեալ, բայց ի տիղմն էր մխեալ (էՄԱ, 8):

Միջին հայերենում բայց շաղկապի հակադրական իմաստային գործառույթը կատարում է նաև նա շաղկապը. նա-ն բարդ համադասական նախադասութեան բաղադրիչների միջև առաջացնում է զիջա-հակադրական հարաբերություն: Օրինակ՝ Դեռ ամառն չէր եկած, նա տվին ինձ վարդ մի հոսած: Դեռ ի մուրազ չէի հասել, նա առին զան վարդն ի ձեռացս (ՆՔ, 208):

ԲԱՐԻ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ԱՊԱ ՇԱՂԿԱՊՈՎ

Ասլա շաղկապը միջին հայերենում ընդունակ է արտահայտելու բայց, իսկ շաղկապների շարահյուսական իմաստները. Նման նկատի ունենանք, որ քննվող շրջանում սակայն շաղկապը դորձածական չէր, կարելի է մտածել, որ ասլա-ն էր կատարում շարահյուսական այնպիսի կառուցվածքների միավորման դերը, որպիսիք մամանականից հայերենում կազմվում են սակայն շաղկապի միջոցով: Ասլա-ով կապակցվում է մի գործողություն, որը նախորդից սպասվող արդյունքին տրամաբանորեն հակառակ է: Օրինակ՝ Ցուցանէ առակս, թէ դամե-նայն կերպ թագաւորութեան ետ մեզ տատուած իւր գայատեամքն. սպա խե-լաց դարութիւն բնաւ ոչ ունինք. զի հանապազ լսեմք և հաւանիմք սուտ և խա-րող բանիցն սատանայի (ՎԱ, 29). Ասացաք թե՛ չէ, մենք մեղաւոր մարդ ենք, ասլա զատուածախոս մարդկանց գիրքն կարդացել ենք (ՂԶ, 238):

Կառուցվածքային տեսակետից ասլա շաղկապով կապակցվող բարդ համադասական նախադասութիւնները նման են իսկ. բայց շաղկապով կապակցվող նախադասութիւններին, ուստի առանձին վերլուծության կարիք չկա: Պետք է նշել միայն, որ ասլա շաղկապը իր տվյալ հակադրական իմաստով երբեմն ոճական ու իմաստային նրբութիւններ է հանդես բերում: Այսպես՝ մի դեպքում ասլա-ով կապակցվող համադասական նախադասութիւններում այն կարելի է փոխարինել բայց շաղկապով, որի դեպքում համադասութեան բաղադրիչներն իրար նկատմամբ ունենում են հակադրական հարաբերություն՝ սահմանափակող-բացառող իմաստային նրբութեամբ: Օրինակ՝ Ասէ աղուէսն ընդ աղռան, թէ ձայնդ աղէկ է՝ այոյ. դամենայն տեղիքդ յաւել ունիս թագաւորութեան. ասլա խելք բնաւ ոչ ունիս դու. ա. շերտ պանիր ոչ կարացիր պահել դու, գիարդ կարես պահել զթագաւորութիւն (ՎԱ, 29), եվ թէ հայր շորդի ի խրատ կամ զինչ որ լինի այսպիսիք նա կարգ քաշէ, զինչ նպիսկողոսն ու վարդապետ կենդեցոյ զնեն. ասլա այլ տուժանք չկրէ ի դարպսէն՝ որ ի յուսուցանելն սպաննէ, ասլա զբահնայութեան գործն այլ շայնէ (ՍԳԴ, 26): Այս օրինակում առաջին ասլա-ն բայց-ի շարահյուսական իմաստն ունի, իսկ երկրորդը՝ կարելի է փոխարինել սակայն-ով. Իսկ ասէ էշն. զոհանամ զաստուածոյ, երբ զրեզ առ իս. և ես ուրախ եմ. զի կերիցես զիս և գերծուցանես զիս ի յայս սուտ կենացս. զի նեղեալ է այս շարշարանացս. ասլա աղաչիմ զքեզ բաղում պաղատանօք. ողորմեաց ինձ և հանես ի յիտին ոտից զրեւոն (ՎԱ, 57):

Մյուս դեպքում, ասլա շաղկապը կատարում է իսկ շաղկապին հարանման գործառույթ, այսինքն՝ իրենով կապակցվող բարդ համադասական նախադասութիւններին հաղորդում է ավելի կտրուկ հակադրության հարաբերություն: Օրինակ՝ Ձայն ի կանոն չար մի զրեցար, ասլա զմէկայն ի սահմանածն զնայք մի սատ միոջէ (ՍՍԴ, 43), Իսկ ամենայն թռչունք երթան և բնակին ի նմայ և ի հովանի

նորա և կերակրին ի պտղոյ նորա. ապա որ յարտաքսն ելանէ ի հովանոյ նորա, նա աւօք խարայմանիք հարեալ սպանցեն զնայ (ՎԱ, 46), նա հրամայէ օրէնքս, որ այնպիսիք, որ յԱստուծոյ լինին, նա Աստուած միայն կարէ զինքն արսորել, թէ լաւ է, ու թէ վատ. ապա զայնոնք, որ մարդիկք զնեն... կտրին արսորել (ՍՍԳ, 46), Բայց որդիքն ի հոր մահապարտութիւնն բռնվին և կինն, ապա այնոնք որ յառջև լինին ծնած՝ ազատ են, մահ չպարտին (Ն. տ., 60):

Երբեմն քէ շաղկապի հետ միանալով աւլա-ն բարդ համադասական նախադասութեան բովանդակութեանը հաղորդում է այլ ածանցյալ հարաբերութեան, ապա քն-ով սկսվող մասը համադասութեան մեջ ստեղծում է հակադիր պայմանի շարահյուսական իմաստ. Հմմտ. Յորժամ առնուն ջերմն ջուր և արկանեն ի հով պուտուկ, անպատճառ տաքնայ հով պուտուկն ի ջերմ ջրէն. ապա թէ առնուն հով ջուր և արկանեն ի տաք պուտուկ, նոյնպէս տաքնայ հով ջուրն (ՂԶ, 76): Իսկ այն դեպքում, երբ ապա քէ հարադիր շաղկապին միանում է նաև ոչ մասնակիր, համադասութեան մասերի միջև հակադրութեան իմաստն ավելի սաստկանում է. ապա քէ ոչ քնդարձակ շաղկապով միավորվող մասը հավելյալ մի պայման է, որ փաստորեն առաջանում է գործողութեանը շիրադործվելու դեպքում. Հմմտ. Ապա թէ յայրկնէն լինայ պատճառն, նա զպոռ-դացն յերկր բաժնէն մէկն տուպանք տայ կնոջն՝ իր անձին զին, որ թէ կոյս լինի զինք տուել, ապա քէ ոչ. նա շտայ (ՍԳԳ, 49). Ապա թէ կինն օտար այրիկ լինի առել և շկենայ տղայ, նա ի կնկանն բնշիցն ի շորք բաժնէն զմէկն տան այրկանն, թէ կալել լինի զայն կնիկն և ի յանձնէ հանել, ապա քէ ոչ. նա զիր իրքն ամէն առնու ու ելնէ (Ն. տ., 58):

ԱՊԱ, ԱՊԱ ԹԷ (ՀԱՊԱ ԹԷ) ԵԱԳԱՊԱՆԵՐՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՋՈՒԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հենց սկզբից նկատենք, որ այստեղ ուշադրութեան է դարձվում աւլա. ապա քէ շաղկապներին՝ նախորդ վերնագրի տակ քննված նույնանուն շաղկապներից շարահյուսորեն բոլորովին տարբերվող գործառնութիւն: Խոսքը վերաբերում է աւլա. ապա քէ շաղկապային բառերով կապակցվող այն բարդ համադասական նախադասութեաններին, որոնց բաղադրիչների միջև դրոշմութեան ունի գործողութեանների ժամանակային պարզ հաջորդականութեան հարաբերութեան:

Ապա շաղկապով կապակցվող այսպիսի շարահյուսական իմաստ ունեցող նախադասութեանների իմաստային մի խմբի մասին խոսվեց և, ու շաղկապների բաժնում՝ և աւլա. ու ապա բառերով միավորվող համադասական նախադասութեանների բաժնում: Այսպիսի բարդ նախադասութեան առաջին մասով հաղորդվում է մի գործողութեան կամ եղելութեան, որին հաջորդող մի այլ գործողութեան կամ եղելութեան ժամանակի իրական ընթացքի մեջ նրանից հետո է տեղի ունենում: Նման շարահյուսական կառուցվածքների գործածութեան նպատակը հենց այդ ժամանակային հաջորդականութեանը շեշտելն է: Օրինակ՝ Մէկ քանի բան գրուցէ հոգեոր, ապա քէ ննջիր (ԷՄԱ, 85), Զիմ զլսուն անցած հալն ասեմ, ապա զենէ դու դքո Եղբայր (Ֆր., 551), Թէպէտ լինես շատ սիրելի՝ Մի հաւատար սրտովդ ի նա, Լեմէն զիհաց փորձէ և տես, Ապա զխորհորդ ասա նորա (ՀԲ, 191):

Ժամանակային հաջորդականութեան արտահայտող բարդ համադասական այսպիսի կառուցվածքները երբեմն կարող են այլևայլ իմաստային հարաբերութեաններ արտահայտել, իշարես՝ պայմանի, հետևանքի, Օրինակ՝ Աղէղն

ևղենների լինի. ու լարն ի վերա դալենի. Քաշողն բաջորդի լինի, հապա լլ, իմ սիրուն հասնի (Քն., 42):

Այս նախադասության մեջ որոշակի է պայմանականության շարահյուսական իմաստը, որի առաջացմանը նպաստել են նաև բարդ նախադասության մասերի բառական կազմի արտահայտած բովանդակությունը և դրանց բայ-ստորոգյալների ըղծական եղանակը:

Կապակցության մասերի իրական բովանդակությունից էլ առաջանում է նաև հետևանքային հարաբերություն, ինչպես՝ Ծա Լրեր որ աշխատեցայ, ապա լլ կարացի ի շամբէն հանել և վարժու տեղն դէշն կերա (էՄԱ, 8), Երդվրնքիւր, երդում արայ, Ապա հետ քեզ գամ (ՀՄԺԵ, 135):

ԱՅԼ ՇԱՎԿԱԳՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՐԱՐԻ ՀԱՄԱԿԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝
ՀԱՄԱԿԱՅԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅԱՆ

Այստեղ նկատի է առնվում այս շաղկապի այն կիրառությունը, որ համա-նիշ է բայց-ին: Այլ շաղկապով միջին հայերենում կապակցվում են բարդ հա-մադասական այնպիսի նախադասություններ, որոնց արտահայտած գործո-ղություններն իրար նկատմամբ գտնվում են հակադրական հարաբերության մեջ: Համադասության առաջին մասով հաղորդվում է մի գործողություն, որին հաջորդող գործողությունը թեև կատարվում է, սակայն իրականում տրամա-բանորեն արգարացված չէ: Պետք է ասել, որ այլ շաղկապը հիմնականում գործածական է դրաբարին շատ հարազատ տեքստերում: Օրինակ՝ Նոյնպէս հոգևորապէս տիգրիս գաղանն ցուցանէ զառաքինի և զապաշխարհողն մարդն, որ քաղում հոգևոր ձագս հանեն բարեգործութիւամբ, այլ յորժամ ՚ի դուրս ելա-նեն ՚ի բունէն, նոյն ժամայն մոռանան զհոգիս իւրեանց (ՎԱ, 289):

Երբեմն բարդ նախադասության մասերի միջև առկա է լինում պարզ հա-կադրության հարաբերություն. ինչպես՝ Յորժամ պտեմարտին, մերկանան, զի կարասցեն յաղթել, այլ նոքա որ զղեցեալ են, շուտով անկանին (Ն. տ. 291):

Այս նախադասության մեջ այլ-ը նշանակում է «իսկ»: Սակայն նա կարող է կատարել նաև ասյա շաղկապի իմաստային գործառույթը, կապակցել նա-խադասությունները պատճառա-հետևանքային հարաբերությամբ: Օրինակ՝ Եվ իբրև ևկին առաջի դատաւորքն, պատմեցին նմա զօրքն զսքանչելիսն. զի այլ մարդ ոչ անդ գոյր առ՝ ի վկայութիւն սորա. այլ հրամայեալ ծառերուն զի դան վկայութիւն տան (Ն. տ. 294):

Թէ Զէ (Թի Զի). Թէ ՈՉ ՇԱՎԿԱԳՆԵՐՈՎ ՐԱՐԻ ՀԱՄԱԿԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Հակադրական հարաբերությունը այսպիսի նախադասությունների բաղա-դրիչների միջև արտահայտվում է նրանով, որ բարդ նախադասության մի մա-սի գործողությունը կամ եղելությունը գտնվում է միտական պայման մյուս մասի գործողության կամ եղելության իրադրոժման համար. եթե համադասու-թյան առաջին բաղադրիչի արտահայտած գործողությունը չկատարվի, ապա կիրադրոժվի երկրորդի միջոցով արտահայտված գործողությունը: Օրինակ՝ Այլոց այնչափ բառցիր որչափ քեզ ես բնորն ուրել. Թէ չէ զհողդ հողի ընդդեմ մարդկան ես ցուցուցել (ԿՅ, 176), Ամ, սերն հեցկուն պիտի, որ աստված ու մարդն հավնի. Թէ չէ զսասակ այլ սերն՝ շունն ու գայլն, աղվեսն այլ ունի (ՆԲ, 219), Յայդ Լրեք տեղդ հանց արա, ևղբայր, որ դուն այլ չի վախես, Թէ չէ ի տեղին մրնաս, դրժոխքն է. գինչ որ կու չսես (Յր., 392), Իայց վանց այնոր որ անհամանք է ելել ճորտն, նա թող հայնց այնէ, որ այս փէ աուրս բնդ ներքսէ

դառնայ. թի չի՝ կորույս (ՄՍԱ, 20), Հիւանդանոց ուր կենայ, նա չէ պատեհ ամենեւեմ անտից հարկ առնել ոչ հիւանդէ և ոչ իւր սպասաւորէ. Թէ ոչ՝ թող համարի թէ դժբիւստու կու կողոպտէ (ՍԳԴ, 34):

Թէ չէ շաղկապով կապակցվող այսպիսի համադասական կառուցվածքներում երբեմն հակադրութեան շարահյուսական հարաբերություններ մոտենում է հավիլման հարաբերություններ, նման վերջ բերված օրինակներում ընդհանուր, ընդ շաղկապները նշանակում էին ժայռապես, հակառակ դեպքում, ապա այս դեպքում թէ չէ-ն համանիշ է իսկ-ին, և իրենով կապակցվող գործողություններ ոչ այնքան հակադրվում է. որքան ավելացնում է առաջին նախադասությամբ սրված ինֆորմացիայի ծավալը, չմատ. Ասէ այրն. ով դատաւոր, թէ պակաս կայ, ի բղուղն է, թէ չէ յիմ պիրն պակաս չկայ (ՎԱ, 254):

ՈՉ (ՈՉ Թէ, 2է)... ԱՊԱ (ԱՅԼ, ԲԱՆՑ) ԱՌԻԴԱԿԻՆԻՍԻՎԸ ԿԱՎՄԱՎՈՂ ԻԱՐԳ
ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Այս դուզադիր բառերի միջոցով կապակցվող համադասական նախադասության բաղադրիչների միջև գոյություն ունեն տարաստիճան հակադրության հարաբերություններ, որոնք ներքինաստիճան են ստանում հենց նույն բառային զուգադիրներից մեկի կամ մյուսի գործածման շնորհիվ:

Այսպես՝ ոչ... այլ, չէ... այլ զուգադրությամբ կազմվող համադասական նախադասությունների մեջ սովորաբար հակադրվում են երկու գործողություններ, որոնցից մեկը ժխտվում է առաջին նախադասության բովանդակությամբ և դրա փոխարեն հաստատվում է մի ուրիշ գործողություն: Ընդ որում, առաջին մասի ստորոգյալն անպայման ժխտական ձևով է արտահայտված լինում. հենց ստորոգյալի վրա դրվող ոչ կամ չէ մասնիկներն են, որ տվյալ դեպքում դառնում են շաղկապային զուգադրության առաջին եզր, Օրինակ՝ Թէ հանդերձն երկայն է, ոչ կարէ վազել, այլ պարտ է կամ կրել կամ ի վեր վազել (ՎԱ, 291), Ոչ էր կտրուսեալ գիմաստութիւնն, այլ միայն լեզուն կապեալ էր (նույն, 293), Զի չկարէ լսել զրոյց, և ոչ հայել ի լոյս, այլ սիրէ զլուռ կենալն և զմութն տեղիսն (Գր., 55), Ոչ ետես զանգէտն արժան, որ դինք յայտնէր ճանաչելով, Այլ եթող ի խաւարի կոյր՝ անյիմայ մեռած հոգով (ԿԵ, 172), Եւ ես գիտեմ, որ այս չէ թաղաւորական իրք, այլ ոսկեգիր պիտէր եւ ճարտար գրչի (ՂԷ, 236), Թի որ կենայ ու երթայ իր ճամբովն և այլք կենան ու պահեն զճանապահն, որ սպանութիւն անեն կամ գողութիւն, ու այն հալալ զնացողն յաջող լինի ու զնորա սպաննէ, նա չէ արեան պարտական, այլ գովելոյ և օժիթք տալոյ արժան (ՍԳԴ, 69):

Ոչ... այլ զուգադրությամբ կապակցվող համադասական նախադասությունների մեջ որպես առանձին կառուցվածքա-իմաստային խումբ առանձնանում են ոչ... ոչ... այլ բառերով կազմվող նախադասությունները, որոնց առանձնահատկությունն այն է, որ հակադրվող առարկան եզրը բաղկացած է լինում մեկից ավելի միավորներից: Այսպիսի դեպքում ստացվում է շարահյուսորեն բաց կառուցվածք. համադասության բաղադրիչներից մեկը կարող է բաղկացած լինել հարաբերականորեն անսահման թվով ստորոգյալին միավորներից: Օրինակ՝ Դու քաջ դիտես, զի ես ոչ քաջիւյս ուտեմ և ոչ սիսեառն, այլ եմ քո քաջ բարեկամ, զի քաղեմ զօձ և զմուկն... (էՄԱ, 11), Ի ժամ ճաշակման պարարտ և անուշահամ մսոյն ոչ զշունսն յիշեն և ոչ զգիշակեր սիրելի թրուշունսն, այլ միայն իշխանք լինին շնորհակալ... (Ե. տ., 10):

Նրբ քննվող նախադասություններում որպես շաղկապային առաջին բաղադրիչ գործածվում է ոչ թև գուգադիրը (ոչ թև... այլ կապի մեջ), դրանով հակադրության հարաբերություն արտահայտող համադասական նախադասություններում շնչավում է այն իմաստային նրբերանդր, որ հակադրությունը արվում է հնարավոր գործողություններից կամ եղելություններից միայն մեկի նկատմամբ: Օրինակ՝ Եւ զայս ասելով ոչ թև վասն փրկութեանն հիւանդին, այլ զի առցէ զձի նորա (ԷՄԱ, 26): Ոչ թև արուեստն է անկատար կամ խիւարան, այլ ի համար հաշուոցն յինին մոլորական (ՎԱ, 291), Ոչ թև եկեղեցին տօնիցս է, այլ տօնքն եկեղեցոյն (ՍԳԴ, 30):

Վերահիշյալ համադասական նախադասությունների իմաստային խմբի մեջ են մտնում այնպիսի կառուցվածքները, որոնց առաջին բաղադրիչում ստորոգյալը ժխտական ձևով է արտահայտված: Դա լինում է կամ չէ, չէ թև, շուգադիրների միջոցով (չէ թև... Բանց, ապա գուգադրության մեջ) կամ էլ ստորոգյալի վրա մի եղանակիչի ավելացմամբ: Քանց, ապա բառերը այս նախադասություններում ունեն շարահյուսական նույն նշանակությունը և դորձառոյթը, ինչ՝ այլ-ը ոչ... այլ կապակցության մեջ: Օրինակ՝ Եւ թև վասն անհավատութեան չէ մեռել հայրն ի պարոնէն, ապա լոկ վասն իրիք բարկութեան, կամ այլ ցեղ մեղանաց, նա ոչ ի հետ ծնած որդիքն կորսնեն... (ՍԳԴ, 12): Եւ թև Յովհաննէս անտարանիչն աթոռն յնփեսոս, ու ի կոստանդնուպոլսէ ի Հոռն և անտի դարձեալ ի Բիւզանտեայ փոխեցաւ, նա չէ թև վասն կաթողիկոսութեան պատճառանաց փոխեցաւ, Բանց որ երկու հարկիքն մէկ եղաւ (ՍԳԴ, 37):

Բարդ համադասական նախադասությունների այսպիսի իմաստային խմբում առանձնանում են միջին հայերենում դործածվող այն կառուցվածքները, որոնց մեջ համադասության առաջին բաղադրիչում ստորոգյալն արտահայտված է ոչ թև վերլուծական ձևով (որից, ինչպես ասվեց, առաջացել են այս նախադասությունները կապակցող շաղկապային գուգադրության առաջին բաղադրիչները՝ ոչ, չէ, բառերը), այլ համադրական: Այսպիսի կառուցվածքներում պարտադիր է, որ առաջին բաղադրիչի ստորոգյալը ժխտական ձևով արտահայտվի (թև քրականական ինչ ձև կունենա այդ ժխտումը, էական չէ, այն կարող է առաջանալ ոչ, մի բառերով կամ բայական ստորոգյալին կըցվող չ մասնիկի միջոցով), իսկ երկրորդ նախադասությունը դարձյալ սկսվում է ապա, այլ, Բանց բառերով: Կապակցությունը րնականաբար ստանում է նաև յուրահատուկ հնչերանդ, որի մեջ առանձնապես շնչաված են արտասանվում այս ժխտական մասնիկներով բառերն ու կապակցող բառերը: Օրինակ՝ նա կու պնդէ, օրէնքս, երբ ի վանքն իջնուն, նա թև կին կենայ ի հետն, շնչել ի շուրջ դալ ի վանքն, ապա հարկօք, որ ծածուկ կենայ (ՍԳԴ, 34), Եւ բահունայ բր ծոյլ կենայ, նա խրատէ և յանդիմանէ զինք Գ, հետ ու թէ չլանայ, նա լեկեղեցոյն մտոցն իրեն փող մի չտան, ապա ի վերայ արիականաց քաժենն դիր բաժինն (ՍԳԴ, 27):

Այս կառուցվածքա-իմաստային խմբի մեջ պետք է դասել և հակադրական հարաբերություն ունեցող համադասական այն կապակցությունները, որոնցում առաջին բաղադրիչի ստորոգյալը կազմվում է հրամայական եղանակի մի ժխտական եղանակիչի միջոցով: Հմատ, Զանցած մեղքքն մի յիշեր, այլ բաւեալ կհամայ զակամայ (Յր., 339), Եւ թև ծառայ որ ի տաճկաց փախչի, նա մի մատներ զինք, Բանց հողա և կերցո, որ ազատի իր ծառայութենէն (ՍՍԴ, 66):

Վսամ շաղկապով կապակցվող բարդ համադասական նախադասությունները միջին հայերենում արտահայտում են տրոհման հարաբերությունները Այդ շաղկապով տրոհվում, բաժանվում են համադասության կապում Երկու կամ ավելի բաղադրիչներ, որոնց արտահայտած գործողությունները իմաստով նման են: Դրանք արտահայտում են առանձին-առանձին, փոփոխակի կերպով իրար հաջորդող գործողությունների կապ: Օրինակ՝ Գիտես թէ ծարված եմ ես, կամ աղբիւրդ ի ջուրն եմ Եկել (ՆՔ, 176), Մուար Ֆրիկ, ինչ եղար, որ չը բերես թղխելքդ ի վերայ, Յէզուց Աստուծոյ առջեւն բեղ հաւն ճար ինչպես լինենայ, Վսամ ինչ պատասխան ունիս, Երբ դատողն ի բեղ նայենայ (Ֆր., 337):

Այդ նախադասությունները կարող են նաև արտահայտել փոխադարձ-բար իրար բացառող հարաբերություններ՝ որպես ենթադրական դատողություններ: Օրինակ՝ Երեկ ցորեկով բարով տանեին մեկ յար մի ճորով, Զնա ճորով է տարած, կամ խարած է գինքն զրամով (ՆՔ, 53), Զիմաստունն ու է յաղթել, թող թէ հընար բերեն շարով, Վսամ դուպեն բանք աղտեղի և բամբասեն սուտ խօսելով (ԿԵ, 170):

Վսամ շաղկապը շատ հաճախ հարադրվում է և. ու շաղկապներին, որով ավելի է շեշտվում նման գործողությունների՝ միմյանց զուգահեռան գաղափարը: Ընդ որում, այսպիսի հարադրությամբ կամ շաղկապի կիրառությունը ավելի տարածված է, քան միայնակ գործածությունը: Օրինակ՝ Յուցանէ առակս, թէ կարի անպատշաճ է, յորժամ տղար խրատ տան ծերոց և կամ տղէտքն դիտնականաց (ՎԱ, 122), Ով գող է այս գանձիս, ու կամ նենգով ինձ լինայ, Աստուծոյ է հակառակ՝ ինք դատաստան առնէ նորայ (ԿԵ, 188), Արդ եթէ շենք ինչ պիտանի, Եւ կամ շունինք գործ ինչ բարի, Կամ քո սրտիդ եմք ատելի, Որ շարարար ըստ հրամանի (ՀԱԳ, 3):

Վսամ շաղկապը ավելի հաճախ գործածվում է նաև կրկնադիր ձևով՝ կամ... կամ: Այսպիսի կիրառությամբ կամ շաղկապով կապվում են բարդ համադասական նախադասության հետևյալ իմաստային ձևերը.

1. Բացառող կառուցվածքներ, որոնց դեպքում կամ շաղկապով կապակցվող համադաս բաղադրիչները իմաստային տեսակետից բացառում են միմյանց. Եթե մի բաղադրիչի արտահայտած գործողությունը տեղի ունենա, ապա մյուսը չի կարող կատարվել, և ընդհակառակը: Օրինակ՝ Այս ֆոանսիս մեծ մարդն օսմանցիք բռնէն, թէ՛ կամ բերին տուր կամ չի՝ ես մարդս տալ չեմ (ԶԱՕ, 88), Ես չունիմ հանգստութիւն՝ ուրախութեան ինձ չկայ ճար, Որ մի պահ հանգիստ առնում, Վսամ դուրանայ կեանքըս զըժար (ԿԵ, 192), Եւ ինձ տարտիք շատ ունիմ, կամ սիրէ, կամ թող գիս ի բաց (ՆՔ, 169), Զճիկարն առյուծո առնում, դամ մտնում ի մեջ քո բերդին, Կամ առնում գրեզ Լինեմ, կամ թողում զղլուխս ի տեղին (Ն. տ. 206), Վսամ առ դիս ի ծոցդ ի քուն, կամ տեստուր արա, թէ՛ զնա (Ն. տ., 115):

Ինչպես տեսնում ենք, համադաս կապակցության բաղադրիչները ունեն բառա-իմաստային զուգահեռություն:

2. Վսամ շաղկապով կապակցվող համադաս նախադասությունները արտահայտվում են նաև մի ուրիշ կառուցվածքա-իմաստային տեսակով, երբ արդեն բաղադրիչները պտնվում են ոչ թե բացառման, հակադրման հարաբերության մեջ, այլ՝ փոխադրման: Այսպիսի նախադասություններում շարահյուսորեն այն միտքն է արտահայտվում, որ մի գործողության կամ նշանակության կատա-

որումը կարող է փոխարինվել ուրիշ, հաճախ միանման գործողությունների իրագործմամբ: Այսպիսի համադասական նախադասությունները արտահայտվում են թվարկման միջոցով: Դրանք բաց կառուցվածքներ են և այդ առումով շատ համազոր բաղադրիչներ պարունակելու պոտենցիալ հնարավորություն ունեն: Օրինակ՝ Եղբայր ականջ դիր ու լքսէ, որ ես ասեմ զմէկնութիւն, թէ ո՞վ է վարդըն կարմիր, կամ որ ոք են այն ծաղկընին, կամ ո՞վ է սէրըն վարդին, կամ ո՞վ է ձայն բըլբուլին, կամ ո՞ր ոք են այն ծաղկընին, որ ի վարդէն փախուստ առին (ԿԵ, 145), Երկու կամաց ծառայ դըժար է ինձ յիրաց սազել... կամ մարմնաւոր ոտօք վերայ ծովուն թէթև քայլել, կամ զհողմն արագընթաց մարդ ընդ ձեռամբն է արգիլել (ԿԵ, 182), և կամ լինի ամէն մարմինն այս մաղձերովս, և կամ լինի, որ զօրութիւն գլխոյն վատուծ է, և կամ լինի, որ յովով տաքութենէ է, որպէս ի յայն ջերմն՝ որ ղըպ ասէն (ԳԲ, 50):

Իմաստային առումով այսպիսի կառուցվածքները ևս կազմված են մեծ մասամբ իրականում նույնանման բովանդակություն ունեցող, բայց տարբեր բառական կազմով բաղադրիչներից. Հմմտ. Մարդ չեղնամ, թէ էլ յար սիրիմ, կամ զքո սերն մոռանամ, կամ զքո անուշիկ պաղիկն թէ սըրտես հանեմ, ուրանամ (ՆՔ, 232):

Թէ (Թէ... Թէ) ՇԱՂԿԱԳՈՎ ԲԱՐԻ ԶԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Այս տրոհական շաղկապով համադասական նախադասությունները սահմանափակ կիրառություն ունեն միջին հայերենում:

Ինչպես ժամանակակից հայերենում, թէ շաղկապով կազմվող բարդ կառուցվածքները կամ շաղկապով կապակցվող նախադասությունների նման արտահայտում են իրար փոխարինող գործողությունների կամ եղելությունների կապ: Ընդ որում, կապակցությունն առաջանում է այն հիմունքով, որ իրականում նշանակություն չունի, թե թվարկվող գործողություններից որ մեկը կիրագործվի: Սակայն եթե կամ շաղկապով տրոհվող նախադասություններում ավելի հաճախ առկա է բացառման հարաբերություն, ապա այստեղ համադասության մասերի արտահայտած գործողությունների միջև առկա է լինում թվարկման հարաբերություն: Ընդ որում, երբեմն թէ-ն հարցական հնչերանդ է ունենում: Հմմտ. Յարիկ մի յինեն դնաց, բյուր հազար ծաղկունք զինքն ի լաց Զի գիտեմ կամավն դնաց, թէ իրենն սեր չի պիտաց (ՆՔ, 237):

Թէ... թէ կրկնադիր շաղկապներով կապակցվող համադասական նախադասությունները արտահայտում են գործողությունների կապ, որոնք իրար չեն բացառում, այլ կարող են առանձին-առանձին տեղի ունենալ որոշ պայմանականությամբ, փոփոխակիորեն. Ինչպես՝ Այս նման շողշող կտուս Յորժամ սիրով զաչերդ յածես, Թէ զիս յիշես, թէ չյիշես, Ես կուսիրեմ սրտովս զքեզ (ՀԱԳ, 85):

ՇԱՐԱԶԱՐԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջին հայերենում լայնորեն գործածվում է նաև բարդ նախադասության շարահարական կամ անշաղկապ կապակցության ձևը: Շարահարական կապակցություն են ունենում երկու կամ ավելի մասերից կազմված բարդ նախադասությունները, որոնց բաղադրիչները միավորված են իմաստային ընդհանրությամբ և հնչերանդով: Փաստորեն շարահարական կապակցությամբ

քարդ նախադասությունների համար (մանավանդ անկախ շարահարության դեպքում) կառուցվածքային էական հատկանիշ են դառնում բարդ նախադասության մասերի բառա-իմաստային փոխադարձ կապը և հնչերանգը:

Շարահարական կապակցության՝ որպես շարահյուսական կարգի դասակարգման հարցը դրավել է հայագետների ուշադրությունը²⁴։ Պատճառը թերևս շարահյուսական կամ անշաղկապ բարդ նախադասության բաղադրամասերի իրար նկատմամբ ունեցած շարահյուսական համեմատական ինքնուրույնությունն է՝ շաղկապներով և հարաբերական բառերով իրացվող կապակցությունների նկատմամբ։ մի կողմից՝ երբեմն շատ դյուրին է դառնում շարահարության մեջ մտնող մասերը անկախ նախադասություն համարելը և գրավոր խոսքում կարելի է ազատորեն վերջակետով բաժանել դրանք (սա մեծ մասամբ վերաբերում է, ինչպես կոեսենսը, անկախ շարահարությամբ կապակցվող նախադասությունների խմբին), մյուս կողմից՝ շարահարությամբ կապակցվում են նախադասություններ, որոնց իմաստային և շարահյուսական կախվածությունը միանգամայն ակնհայտ է:

Համեմատենք հետևյալ օրինակները։ Ահա ևղև պայծառ գարուն, Ծաղկեաց յաղին ու պաղլանին, Դաշտ ու լերունք զարդարեցան, Արօտ հանին ըզխիլանին, (ՀԹ, 139) և՝ Սիրես զիս՝ շուտով սիրե, հան իոգիս, յետ քեզ է ի քաշ (ՆԲ, 138):

Առաջին նախադասության մեջ միավորված բաղադրիչները (պարզ նախադասությունները) փաստորեն միայն հնչերանգով և հաղորդակցման լիմա-յով են կապվում, մինչդեռ երկրորդ դեպքում շարահյուսական կախումը միանգամայն ակնհայտ է:

Միջին հայերենում գործածվող անշաղկապ նախադասությունները երկու խումբ են կազմում. ա) շարահյուսորեն համադր հարաբերությամբ նախադասություններ, որոնց մասերը իմաստային առումով հավասարաչափ են վերաբերում բարդ նախադասության ամբողջական բովանդակությանը և բ) շարահյուսորեն կախյալ հարաբերությամբ բարդ նախադասություններ, որոնց մասերը տարբեր կերպ են նպաստում բարդ կապակցության ամբողջական բովանդակության ստեղծմանը:

ԱՆԿԱԽ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջին հայերենում անկախ շարահարությամբ կապակցվող բարդ նախադասությունների գործածումը ոճական նշանակություն է ձեռք բերել առանձնապես բանաստեղծների գրվածքներում:

Ինչպես ասվեց, շարահարությամբ կապակցված բարդ նախադասությունների այսպիսի խումբը ընդգրկում է կապակցության բաղադրիչների շարահյուսական ինքնուրույնությամբ: Բարդ ամբողջության մեջ միավորվում են նախադասություններ, որոնք հենց այդ միավորման շնորհիվ ստեղծում են տրվյալ դեպքում անհրաժեշտ իմաստային ու հնչերանգային ամբողջությունը: Ըստ որում, այսպիսի կապակցության ներսում հանդես են գալիս իմաստային

24 Տե՛ս Մ. Արևիյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, վ. Առաջինը, Էջ. ախ., հ. 2, և, Պառնասյան, Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում, «Լեզվի և ոճի հարցեր», 1964, հ. 2, Արտ. Պապոյան, Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում, Երևան, 1963:

ու ոճական վանազան նրբերանդներ, որոնք առաջացնում են քննարկվող կապակցությունների կառուցվածքա-իմաստային ենթամասեր:

Թվարկման հարաբերությունն արտահայտող նախադասություններ

Սրանք առաջանում են երկու կամ մի քանի գործողություններ ու երկվայթներ արտահայտող նախադասությունների միավորման, հավելման միջոցով, որոնք հնչերանգով կապվելով, ստեղծում են ամբողջական բովանդակություն: Այսպիսի նախադասություններ հատուկ են մեծ մասամբ ժողովրդական բանահյուսությանը: Օրինակ՝

Նազ արէ, նազ արէ,
Նազրդ վերցընեմ,
Եկու՝ քեզի նուշ ու
Շէքէր կերցընեմ (ՀՄԺԵ, 136),
Ախշի, հարսնարդ էկաւ վերին կալերէն,
Քեզ հինայ բերին թղթի ծաւերէն (ՀՄԺԵ, 251)

Այսպիսի նախադասությունների միավորումը կամ թվարկումը երբեմն ձևոք է բերում զգայական խոսքի հատկություն: Դրան նպաստում է իմաստային առումով նույնաբնույթ նախադասությունների հաջորդական կապը, ինչպես և դրանց հնչերանգի շարունակվող իջեցում-բարձրացումը: Այդ տեսակետից շատ հետաքրքիր են Նահապետ Քուչակի հետևյալ տողերը.

Ով որ սիրու տեր մարդուն շողսրմի, թող զինքն մեռնի,
Իր մահն ի մորին լինի, յուր բերնին հաղորդ չդռնվի,
Ազվեսն յուր լալկան լինի, դայլ ու աղաւն յուր հաբեղանի,
Շուն ալ յուր մատաղ լինի, ու աղին զետ մոմ թող վառի (188):

Թվարկման հարաբերությունն արտահայտող շարահարական այսպիսի կապակցությունների համար կառուցվածքային արժեք ունի նախադասությունների բայ-ստորոգյալների քերականական ժամանակը, որի միջոցով ստեղծվում է գործողությունների միաժամանակության կամ հաջորդականության հարաբերություն: Վերջին դեպքում բացառված չէ, որ բարդ ամբողջություն մասերի բայ-ստորոգյալների արտահայտած քերականական ժամանակները միեւնույնը լինեն: Հմմտ. Իմ յարն այլ ի դուրս ելաւ, շորորաց ի պաղշան դնաց, Ձեռքն այլ ի ծառն ձգեց, ծառերու ճղերն երերաց (ՆՔ, 73), Երբ սերն ի յաշխարհս եկավ, եկավ իմ սիրտս բնակեցավ, Հապա յիմ սրտես ի դուրս՝ յերկրն յերկիր թափեցավ, Աշիցս արտասուք ուզեց, նա արյուն ի վար վաթեցավ (ն. տ., 37):

Ինչպես երևում է, շարահարական կապակցությամբ բարդ նախադասության մասերի արտահայտած ժամանակային հաջորդականությունը վերջիվերջո որոշվում է նրանց արտահայտած բառա-իմաստային բովանդակությամբ: Այսպես՝ միաժամանակություն են արտահայտում մեծ մասամբ միեւնույն երևույթի կամ առարկայի տարբեր կողմերին վերաբերող մտքերի միջոցով ստեղծվող նկարագրական ոճա-իմաստային կառուցվածքները: Օրինակ՝ Գոյնդ է կարմիր վարդին, հոտովդ անուշ ես, Դրբախտ ես ու պաղշայ, ծաղկի նըման ես (ՀԻ, 144), Ֆրիկ, դու է՞ր խաբեցար ի մեղաց մէջըն կապեցար, Դիշեր ի քուն

չեղար ու ցերեկն ի բուն դատեցար, իրաւ ու սուտ խաւանցար ու ետեւ դու ինչ շահեցար (Ֆր., 395), Որպէս տիկին յուշիկ զընայ, Պարան յետեւն ի բարշ կու գայ, Բաղմի յսակի բարձի վերայ, Որսիկ առնէ քան ըզբաղայ (ՆՇ, 64):

Այսպիսի բարդ նախադասութիւններ շարահայտական կապը շատ թույլ է, ցանկացած պարզ նախադասութիւնից հետո կարելի է վերջակետ դնել և այդ դեպքում բաղադրիչները լիակատար ինքնուրույնութիւն ձևոք կրերեն, որովհետև դրանց կապը միայն հնչերանդն է:

Հակադրական հարաբերությունն արտահայտող նախադասություններ

Միջին հայերենում այսպիսի կապակցությունը իր շարահայտական իմաստով շատ նման է հակադրական հարաբերությունն արտահայտող համադասական նախադասութիւնն: Ըստ էության, սա բարդ համադասական նախադասութիւնից տարբերվում է բայց, իսկ շաղկապների բացակայությամբ: Համադասական լինելու փոխարէն լինում է ընդհանուր լինելու (Ֆր., 254), Սա ողորդելով խնդրեաց, և ես խղեացի և ետու, աչժմ ուրանայ (ՎԱ, 251):

Սխալ կրկնի կարծել, որ սրանք զեղչված կառուցվածքի նախադասութիւններ են, որոնցում վերոհիշյալ շաղկապները վերականգնելու հնարավորութիւն ունեն: Եթէ փորձենք վերականգնել, ապա ճիշտ՝ տեղադրել այդ շաղկապները, ապա այդ նախադասութիւնների ոճական արժեքը կկորչի: Տվյալ դեպքում հակադրվող նախադասութիւնից առաջ հնչերանգի իջեցում-բարձրացումը շարահայտական և ոճական դեր է կատարում, այն նպաստում է հաղորդվող մտքի դիպուկ դառնալուն: Համադասական լինելու դիմ յարին սուրաթն, տարան Զինմաչին արմաղան. Տարան և ի ժուռ ածին, սուրաթին նման չգտան (ՆՔ, 74), Հազար յար փոխան կուտան, չեմ առնոյր զքեզ չեմ ի տայ (Ն. տ., 155), Դու պիտես՝ քո յափինդ ինչ է. Ես, չի տեսած, դիտեմ, որ ձու է (ՀՄԺԵ, 352), Բարձր ես նըստեր ի վերայ խալուդ՝ Յետեւ տի գաս աղկից ի վեր (Ֆր., 479), Զարն քո կամաւ գործես՝ րզաստանայ պատճառ զրնես (Ֆր., 392), Մեռանիմ ու մահանամ, Դարձեալ յառնեմ կենդանանամ Զաշս ի յերկինս համբառնամ, Բազմաստեղօք պայծառանամ (ՆՇ, 66):

Հակադրական հարաբերությունն արտահայտող շարահայտական կապակցությունների մեջ առանձնանում է կառուցվածքա-իմաստային խումբ՝ զուգահրեայական հարաբերությամբ: Այսպիսի բարդ նախադասութիւնը աչքի է ընկնում մասերի քառային կազմի զուգահեռությամբ, որն ստեղծում է նաև իմաստային զուգահեռություն: Զուգահեռությունը արտահայտվում է.

ա) Բարդ նախադասութիւն մասերում շարահայտական միենույն պաշտոնով գործածվող բառերի հականիշությամբ՝ այսպէս՝ Գիտուն մարդն յարն նըման, խօսքն պէս արև կու ծագէ, Լենդէտ մարդն օձու նըման, հանապաղ րզմարդ կու խոցէ (ՀՆ, 157), Ես քեզ կենաց պըտուդ տվի, Դու րզմահուն ճաշակեցիր, Ես զքեզ լուսով զարդարեցի, Դու րզխաւարն սիրեցիր (Ն. տ., 232), Ներքսեղ է խիստ խաւար, զարտաթինդ ևս ճըրաղ վառել (ԿՆ, 179):

բ) Բարդ նախադասութիւն բաղադրամասերի նույն պաշտոնով գործածված անդամների զուգահրեայ կրկնությամբ, ինչպէս՝ մէկն... մէկն, մինն... մինն, մէկն... մէկայն, ոման... ոման, աստ... անդ, աստեն... անդեն և այլն: Օրինակ՝ Մինն ի յանդունս տառապէր, Մինն ի յերեսն թրքանէր (ՆՇ, 635), է սըրած գետ հայկի Եւ ունի զձեւ սուրբ նըշանի, Մէկին զերթ զեղբայր հասնի,

Զմէկալին կինն առնէ գերի (ն. տ., 637), Ոման՝ փրոհն տերն գոյնըզգոյնով զեղեցկացել, Ոման՝ շոր անպիտան են մահաբեր փուշ բուսուցել, Ոման՝ արեգական պես շառաւել են յարձակել, Ոման՝ խաւարային՝ անդրնդասոյզ են նուազել (կն, 178), Ոմանց թրիմ խելօք, ժմանց խիստ խն ու անյիմայ, Ոման՝ շարին հետ ինձ, կրճեն ասամն ի յիմ վերայ... (ն. տ., 191), Ոսկի սընդուկ է տեսողաց, Մէջըն պեղծ աղբով լըցած, Աստ վայելուէ է ունողաց, Անվէն հանէ դրախտէն կենաց (նՇ, 624), Աստենս շունիմ հանգստութիւն, անդ վիշապաց կեր լինենամ (Ֆր., 254):

Հաճախ է պատահում այսպիսի նախադասութիւններում օժանդակ բայի զեղչում, որի հետեանքով այդ նախադասութիւնները առաջին հայացքից շարահյուսորեն լիիմաստ չեն երևում: Սակայն դրանք պետք է ինքնուրույն նախադասութիւններ համարել, ինչպես՝ Մէկն ի պապանց պարոնորդի, Մէկն ի հարանց մուրող լինի, Մէկին հազար ձի ու ջորի, Մէկին ոչ ու մի ոչ մաքի (Ֆր., 535):

Հակադրական հարաբերությամբ կապված անշաղկապ կապակցութիւնների տակ պետք է դասել միջին հայերենում գործածվող շարահյուսական շատ հետաքրքրական մի կառույց: Վերջինս իր շարահյուսական իմաստով նման է քննարկված բացառման խնդիր նախադասութիւններին (որոնք, ինչպես տեսանք, կապակցվում էին քաւել (թէ), մակար (թէ) շաղկապներով): Բայց այս դեպքում հակադրութիւնը ավելի ցայտուն է արտահայտված: Այսպես՝ եթե քաւել (քաւել յէ), մակար (մակար թէ) շաղկապները փոխարինվում էին՝ ...բացի այն զեսլից, երբ... կապակցությամբ, ապա շարահարական այս տեսակի մեջ կարելի է վերականգնել բայց շաղկապը: Օրինակ՝ Աճապ, ամ, ես ինչ անեմ, որ քո տերն գրեզ ինձի տա,—իմ տերն դիս քեզ չի տար. լինի՝ քեզ պարտկան լինա, Պարտուցն ալ վճար չըլլա, պարտուցն դաս դու հալալա: Անճրկի, լուկ դիս քեզ տա, ապա քո բանդ լինանա (նՔ, 210), Աճապ, ամ, ես ինչ անեմ, որ քո տերն գրեզ ինձի տա,—իմ տերն դիս քեզ չի տար.—(բայց— է. Կ.) լինի՝ քեզ պարտկան լինայ...

ԿԱՆՅԱԼ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսին են այն նախադասութիւնները, որոնք կազմված են շարահյուսորեն ոչ անկախ միավորներից: Ձևով էության այսպիսի նախադասութիւնը մոտենում է բարդ ստորադասական կապակցությանը, միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում բացակայում են շաղկապներն ու կապակցող բառերը²³:

Ի տարբերութիւն դրաբարի, որտեղ բարդ նախադասության՝ շարահյուսորեն անիրավահավասար մասերի անշաղկապ կապակցական եղանակը հա-

²³ Վ. Առաքելյան, Եզգ. աշխ., էջ 369:

²⁴ «Հաւերենի լեզվական իրողութիւնների ուսումնասիրութիւնը եւ ցույց է տալիս, որ հին շրջանում (գրաբարում) շատ տարածված են եղել նախադասութիւնների շաղկապներով եւ հարաբերական բառերով կապակցութիւնները: Շատ դեպքերում նույնիսկ առանձին նախադասութիւնները սկսվում են շաղկապներով: Անշաղկապ բարդ նախադասութիւնները գրաբարում հանդիպում են շատ սակաւ, այն էլ մեծ մասամբ համադասական հարաբերությամբ, իսկ ստորադասական հարաբերության անշաղկապ արտահայտման դեպքերը հազվադէպ են» (Ն. Ա. Պաքեանյան, Անշաղկապ բարդ նախադասութիւնները ժամանակակից հայերենում, «Լեզվի եւ ունի հարցեր», 1964, հ. 2, էջ 19):

մարյա կիրառություն շուներ²⁶, միջին հայերենի լեզվական նյութը ցույց է տալիս այսպիսի շարահյուսական կապակցության լայն դործածություն:

Այս աիպի բարդ կառուցվածքների օգտագործման համեմատական հաճախականությունը միջին հայերենում պայմանավորված է բանավոր-խոսակցական լեզվին հատուկ ոճավորմամբ և մատենագրության ժանրային առանձնահատկություններով: Առհասարակ կախյալ շարահարությանը բարդ նախադասությունները շատ դործածական են բանահյուսության լեզվում:

Հետաքրքրական է նշել, որ Վ. Առաքելյանի հիշյալ աշխատության մեջ «կախյալ շարահարություն» բաժնում օրինակները մեծ մասամբ քաղված են ժողովրդական առածներից և մեր դասական այն դրույների նրկերից, որոնք իրենց ստեղծագործական ոճով ու ժանրային առանձնահատկությամբ այս կամ այն կերպ ժողովրդական են (Պ. Պուշյան, Հ. Թումանյան և այլն):

Սակայն միջին հայերենում քննվող նախադասությունները լիակատար ու կազմակերպված կառուցվածքային այն ձևերը չունեն, ինչպես ժամանակակից հայերենում: Ընդ որում, կառուցվածքային որոշ ձևեր (ինչպես՝ ենթակայի, ստորոգելիական վերագրի հարաբերությունն արտահայտող կառուցվածքները) առհասարակ չեն հանդիպում, իսկ որոշ ձևեր համեմատաբար շատ են տարածված:

Բացի այդ, կախյալ շարահարության կապակցման ձևերի օգտագործման հաճախականությունը պայմանավորված է նաև ստեղծագործության ժանրային առանձնահատկություններով, ինչպես և հեղինակների նախասիրությամբ, որովհետև շարահյուսման այս ձևը վերջիվերջո նաև ոճական միջոց է:

Ենթակայի իմաստային հարաբերությամբ կախյալ շարահարություն

Ինչպես ասվեց, այսպիսի կապակցությունները հազվագեղ կիրառություն ունեն:

Ենթակայի իմաստային հարաբերություն են առաջացնում այնպիսի անշաղկապ բարդ նախադասությունները, որոնցից մեկում գոյություն ունի ձևական ենթակայի պաշտոնով որևէ դերանուն: Վերջինիս իրական բովանդակությունը բացահայտվում է շարահարությամբ միացած նախորդ նախադասությամբ: Ընդ որում, նախորդ է ասվում, որովհետև, ինչպես ցույց են տալիս դիտողությունները, այսպիսի կառուցվածքները կայուն շարահարություն ունեն, շարահյուսորեն համեմատաբար կախյալ մասը դրվում է սկզբում. օրինակ՝ Զուր անմահութեան կասեն, այն ի քո ծոցեն կու րխն (ՆՔ, 88), Կաթիկ մ'արյունիկ ունիմ, քո սիրուդ ան ալ ցամաքել (Ն. տ. 246):

Այսպիսի նախադասությունների կառուցվածքային հատկանիշներն են՝ այդ մասերի (պարզ նախադասությունների) շարահարությունը, երկրորդ նախադասության կազմում գերանվան ներկայությունը և հնչերանգը, որով այդ միավորները կապվում են: Օրինակ՝ Ութը կանոն սաղմոս ուսույ, Զան ալ ի քո սիրուս մոռցայ (ԿԾ, 170):

Եւ այլ դրանից, միջին հայերենում հանդիպում է ենթակայի իմաստային հարաբերությամբ շարահարական կառուցվածքային այն տեսակի նախատիպը, որը ժամանակակից խոսակցական հայերենի համար ևս քնորոշ է. անկախ մասում (սա մեծ մասամբ սկզբում է շարադասվում) հանդես է գալիս միայն ստորոգյալը, իսկ ենթական արտահայտվում է հջորդ նախադասությամբ: Հմմտ. Հանդիպեցաւ, ար մի մեռաւ ի յայն գեղին խիստ ազնուական

տանուտէր մի (ՎԱ, 27) և Հանդիպեցաւ, որ աւր մի մնաւ ի յայն գեղին խիստ աղետական տանուաէր մի:

Որոշիչ-որոշյալ իմաստային հարաբերությամբ կախյալ շարահարսւթյուն

Այսպիսի նախադասութիւնները նման են որոշիչ երկրորդական նախադասութեամբ բարդ կառուցվածքներին: Տարբերութիւնը փաստորեն կապակցող շաղկապի բացակայութիւնն է, որը բանավոր խոսքում փոխարինվում է հնչերանդով: Որոշիչ-որոշյալ իմաստային հարաբերութիւնն արտահայտող շարահարական նախադասութիւնները արտահայտում են մի ամբողջական միաս, որի մասերից մեկի գոյական անդամը լրացուցիչ բացատրվում, մեկնարանվում է մյուսի միջոցով: Օրինակ՝ Թագաւոր մի և թագուհին բազում խոստմունք արարին աստուծոյ և սրբոց և նոցա զաւակ ոչ լինէր. բայց յետ մամանակի ևզ ւարու զաւակ՝ ոչ աշխ ունէր և ոչ լեզու (ՎԱ, 307):

Քննվող նախադասութիւնների իմաստային և գործառական համանիշը հանդիսացող որոշիչ ստորադասական նախադասութիւններում կառուցվածքային դեր ունի զլխավոր նախադասութեան մեջ հարաբերյալ բառի՝ ձևական որոշիչ ներկայութիւնը: Այստեղ այդ բառը չկա: Երբեմն այսպիսի կապակցութիւններում առաջին նախադասութեան մեջ որոշվող բառի (որոշյալի) կողքին հանդիս է գալիս մի անորոշ դերանունը կամ այն ցուցական դերանունը: Այս բառերի ներկայութիւնը ստեղծում է այնտալվսութիւնը, որ զրանք հարաբերյալներ են, որոնց համապատասխանորեն զուգորդվելու են հարաբերականները երկրորդ նախադասութեան մեջ: Օրինակ՝ Մանիշակն, որ ժողովեց հաւտար դամենայն ծաղկընին Այն Յուզայն էր աշակերտ, մատենաց ի մա՛: զարքայն վերին (ԿԾ, 146), Մի աստղ ելաւ պայծառ առջև Արուսեկին լուսոյն, Ունէր լոյս գեղեցիկ, քան զաստեղացն՝ այլ գերագոյն (ԿԾ, 124), Հյուրասէր ծեր նազկի Զենոյր խօսուն դառն ի սեռի. Ունէր ամուլ կին մի բարի, էր ծիծաղկոտ՝ առարինի (ՆՇ, 610):

Շատ հաճախ իմաստային տեսակետից անկախ համարվող այս նախադասութեան մեջ որոշվող բառի կողքին հանդէս եկող բառը կանխորոշում է երկրորդ նախադասութեան կառուցվածքը: Օրինակ՝ Որդիք ունէր երկու մանուկ Մինրմ յիմար, մյուսըն խաբուկ (ՆՇ, 635):

Որոշիչ-որոշյալի իմաստային հարաբերությամբ կախյալ շարահարական նախադասութիւնների ամենատարածված կառուցվածքա-իմաստային տեսակը միջին հայերենում այն է, երբ առաջին նախադասութեան (ինչպես նկատվել է, քննվող նախադասութիւնները միջին հայերենում ունեն կայուն շարադասութիւն՝ համեմատաբար անկախ կամ «զլխավոր» համարվող նախադասութիւնը առաջադաս է) կազմում գոյութիւն ունեցող այն բառը, որը որոշվում է երկրորդ նախադասութեան բովանդակությամբ, հանդէս է գալիս միայնակ, առանց մատնացայց անող բառի: Օրինակ՝ Ահա եղև ինձ ժամանակ, Գան և բաղին զիս համարձակ (ԿԵ, 122), Մտիկ իմ յարին արեք, զինչ հուզեր՝ ամենն է կանանչ: Հաղեր զոյնգոյն կապա, կոճակ շարեր՝ օղակն է կանանչ. Առեր ու պաղչան մտեր, ցուր կերթա՝ եղերն է կանանչ Մտիկ ծառերուն արեք, ծառն ծաղկեր՝ տերեն է կանանչ (ՆՔ, 72), Հաշտենք թէ անպըտուղ փայտ ես՝ կրրակին լինիս վառելիք (Ֆր., 351), Կարգացող շատ կայ, խելքն թելքն է (ՆԶ, 83), Կէսը մ'են րժիշկ եղել, Թէ գեղ ունիմ խիստ օղտակար, Խոցին զառուղջն ի սիրտն, ու հիւրնդին են մահարար (ԿԵ, 200):

Միջին հայերենում հանդիպում է նաև այս տիպի նախադասությունների կառուցվածքա-իմաստային մի տեսակ, որը հատուկ է խոսակցական ոճին և ունի յուրահատուկ կաղապարային կառուցվածք՝ Սրինակ՝ Մառ մի կա՝ նա-
րինճ կուտա, ծառ մի կա՝ նարինճ ու թուրինճ (նՔ, 134), Ձաղ մի կա՝ պուլ-
պուլ կասեն, դինչ կասեն՝ ամենն սիրո (նՔ, 221)։

Խնդրային հարաբերությամբ կախյալ շարահարություն

Ուղիղ խնդրի շարահյուսական հարաբերությունը շարահարությամբ կա-
պակցվող բարդ նախադասություններում ակնառու է նախ և առաջ դրանց ա-
ռաջին բաղադրիչում հանդես եկող առաջական-իմացական բայերի պատճա-
ռով։ Այսանդից էլ՝ նման տիպի նախադասությունների կառուցվածքային
հատկանիշներից ամենապլևափորը՝ բարդ նախադասության կազմում շարա-
հյուսորեն ինքնուրույն միավոր-նախադասության բառական որոշակի կաղմբո-
կառուցվածքային առումով մյուս կարևոր հատկանիշներն են՝ բարդ մասերի
շարահասությունը և հնչերանցը։

Քննվող տեսակի նախադասությունները բնորոշվում են կայուն շարադա-
սությամբ՝ կախյալ մասը ևտաղաս է։ Ուղիղ խնդրի հարաբերությունն արտա-
հայտող շարահարական նախադասությունները շարահյուսորեն նման են խըն-
դիր երկրորդականով բարդ ասորադասական նախադասություններին. տարբե-
րությունը միայն կապակցման միջոցի՝ շաղկապի բացակայությունն է։ Շա-
րահարական կապակցությամբ իրացվող նախադասության մեջ անկախ բա-
ղադրիչի կազմում անպայման գործածվում է ներգործական սեռի բայ։ Օրի-
նակ՝ Այ սարեր, այ ձորեր, զխուցեմ՝ յար եմ կորուսել (նՔ, 239), 'Իխեմ'՝
սիրու տեր ես դուն, ի օտար աշխարհ կու գնաս (ն. տ., 237) Գիտեմ՝ մարմին
եմք մըսեղի (Յր., 542), Սուտ կասես, որ վառ սրտիդ ջուր մաղէ, Թէ իմ թշնա-
մին՝ քանգած դուխաղ է Տեսնես՝ նա դուրս դայ, ուրախ ձիծաղէ, Դու կաց ա-
մաղէ, երեսդ դաղ է (նՇ, 91), Լերի ու կանգնե. ի՛մ յար. տե՛ս քո սերդ զիս ինչ
կանէ (նՔ, 49)։

Հետաքրքրություն են ներկայացնում ուղիղ խնդրի հարաբերությամբ շա-
րահարական այնպիսի նախադասությունները, որոնց առաջին մասով հա-
ղորդվում է մի գործողության կամ երևույթի մասին, որը տրամաբանորեն երկ-
րորդ նախադասության խնդիրն է։ Օրինակ՝ Ո՛ւր էիր, ո՞ւսկից եկիր, անծանոթ,
ըգիս սիրեցիր, Կրակն ի թեղնիքդ ուն՛իր, ի ծոցիկս ի վար թափեցիր (նՔ, 39)։

Երբեմն այսպիսի բարդ նախադասությունների երկրորդ բաղադրիչում ու-
ղիղ խնդիր է լինում, որի էությունը, նրա բուն կամ համեմատելի հատկանիշը
նկարագրվում է առաջին նախադասության քովանդակությամբ։ Օրինակ՝ Հայ
իմ պողպատէ ուրազ, ես թաց փետ, զիս առեր ի տաշ Սիրես զիս՝ շուտով սի-
րէ, հան հոգիս, լետ քեզ է ի քաշ (նՔ, 138)։

Պարագայական հարաբերությամբ շարահարություն

ա) Պ ա յ մ ա ն ի հ ա ռ ա ռ ե ռ ո ս թ յ ո ն

Պայմանի հարաբերությունը շարահարական կապակցության մեջ շարա-
հյուսորեն արտահայտվում է որոշակի միջոցներով։ Այդպիսի նախադասու-
թյունների համար կառուցվածքային դեր է խաղում բարդ նախադասության
բաղադրիչների ասորոգյալների բայական եղանակա-ժամանակային հարաբե-
րումը։ Այս առումով միջին հայերենի նման կառուցվածքի նախադասություն-

ները մեծ մասամբ կազմվում են ըղձական եղանակի ապառնիով, ինչպես ժամանակակից հայերենում է՝ Օրինակ՝ Տաբէկ մի ծաւիած կենամ.—չի խմմ կարիլ մի Բեճէ (ՆՔ, 157), Սիրէս զիս՝ շուտով սիրէ, հան հոգիս, յետ քեզ է ի քաջ (Ն. տ. 138), Մսիկս է լեղի դարձեր, շնեռուն ձգեմ՝ շեն ուտել (Ն. տ., 157)։

Այսպիսի նախադասութիւնների կապակցութեան մեջ մեծ դեր ունի նաև հնչերանդը, որով նրա միավորները կապվում են և ապա՝ բարդ նախադասութեան մասերի շարադասութիւնը։

Քանի որ սովորաբար շարահյուսորեն ինքնուրույն, բառական կազմով ավարտուն նախադասութիւնը ետագա շարադասութիւն է ունենում, առաջին նախադասութեան վերջում հնչերանդը բարձրանում է և սատիճանաբար ընկնում երկրորդ նախադասութեան վերջում։ Առանձնապէս բարձր է շեշտվում առաջինում եղած ըղձական եղանակի բայը։ Օրինակ՝ Մեկիկ մ'ես երեկ տեսա... Զմեռելն այլ ի զիրկն առնուր, ի ժոցուն հաներ կենդանի (ՆՔ, 75), Եւ դրամ յիրեն տաս՝ աւգտէ ամենայն զազանահարին. եւ զսլաքն եւ զփուշն հանէ, սպեղանի առնելով (ԱԱԱ, 11)։

Երբեմն այսպիսի բարդ նախադասութիւնների երկրորդ մասը հարցական բնույթ է ունենում, այդ դեպքում հնչերանդը դառնում է իջնող-բարձրացող։ Հմմտ. Թէ՛ գան տան հաղար կարմիր, քո մազեղ մազ չի փոխիմ, Հետ քեզի խոով կենամ, հաշտ հետ ո՞ւմ երթամ զրուցեմ (ՆՔ, 187)։

Պայմանի հարաբերութեամբ շարահարական, ինչպես և շաղկապավոր նախադասութիւնների շարահյուսական դերն այն է, որ բարդ նախադասութիւնների մի մասով հաղորդվում է որեւէ պայման, որի առկայութեամբ տեղի է ունենում կամ տեղի է ունենալու մի այլ գործողութիւն։ Այս առումով, պայմանի հարաբերութիւն կարող են արտահայտել նաև այնպիսի կապակցութիւնները, որոնց երկրորդ մասը ունենում է ժխտական բնույթի բայ-ստորոգյալ. ինչպես՝ Բերէք ինձ մըրդաց այգոյս, Վարդ և գոյնըզգոյն ծաղկունս, Առնում, հոտոտիմ անուշս. Այլ չեմ ելներ ի յայդոյս (ՀՄԺԵ, 441)։

բ) Պ ա տ ճ ա ու ա ճ ե տ ե ա ն ք ա յ ի ն հ ա ր ա ր ե ր ու թ յ ու ն

Այսպիսի հարաբերութեամբ շարահյուսական կառուցվածքները միջին հայերենում պայմանի իմաստ արտահայտող նախադասութիւնների նման ավելի հաճախ են հանդիպում։ Դրանց շարահյուսական առանձնահատկութիւնն այն է, որ արտահայտում են գործողութիւնների, երևույթների պատճառա-հետեւականքային փոխադարձ կապ։ Այս տեսակետից էլ պատճառա-հետեւանքային հարաբերութեամբ միավորվող նախադասութիւնների իմաստային խմբավորումը հարաբերական բնույթ ունի։ Այն, ինչ մի կողմից պատճառ է, մյուս կողմից հետեւանք է, և ընդհակառակը։ Հետեւաբար, քննվող տիպի նախադասութիւնները մի դեպքում պատճառային, իսկ մյուս դեպքում հետեւանքային համարելիս փաստորեն հիմք ենք ընդունում նրա բաղադրիչների՝ պարզ նախադասութիւնների արտահայտած բովանդակութիւնը և նրանց շարադասութիւնը։ Այն դեպքում, երբ առաջին նախադասութեան գործողութիւնը, սրանք կապված են լինում պատճառա-հետեւանքային հարաբերութեամբ, որի մեջ շեշտվում է առաջին (պատճառային) իմաստը, իսկ հետեւանքային իմաստն ընկալվում է այն դեպքում, երբ առաջին պլանում դիտվում է այն գործողութիւնը, որի իրադարձման համար պատճառ է հանդիսանում երկրորդ նախադասութեան արտահայտած գործողութիւնը։

1. Պատճառի պարագայական անշաղկապ նախադասություններում բաղադրիչներից մեկն արտահայտում է մի գործողություն կամ երևույթ, որի իրագործումը անհրաժեշտ պատճառ է մի այլ գործողության կատարման համար: Այսպիսի իմաստային կառուցվածքներում կախյալ մասը (պատճառ հանդիսացող գործողությունը) շարադասվում է ետադաս՝ ինքնուրույն մասից հետո: Օրինակ՝ Լուսին, չեմ սիրեր զԼԵՂ. դուն սովաք էս խոռ կենալուն (ՆՔ, 75), Ջանա ու Բեզ ճար արա՝ կեանքս չէ մարդուս մընալիք (Ֆր., 352), Գանգատ ու դրոկած մարդիկ անճարակ են առ ձեղ եկեղ, 'Իրեք միս ու դատ արեկ', զիդ աստուած Լն առ ձեզ եկել (ՀԵ, 147):

Երկրորդ բաղադրիչը այսպիսի բարդություններում կարող է երկանդամ լինել՝ Այս կենցաղս յերակ խաբող է, Պանեկ մի խընդալ կու տայ, Բայց յետեւ ի լաց կու պահել (Ֆր., 346):

Պատճառական կապով կապակցված այսպիսի կառուցվածքներում սովորաբար երկրորդ բաղադրիչը, որ պատճառաբանում, բացատրում է առաջինում տրված գործողությունը, լինում է մի գործողություն կամ երևույթ, որ իր բնությամբ բնահանուր է, ժամանակային առումով ավելի տեսական գործողություն է: Սրա բայ-ստորոգյալը մեծ մասամբ անվանական բաղադրիչ է ունենում: Օրինակ՝ Ջուր տուր ծաւում լերդիս՝ փալիաք եմ ես քեզ (ՀՔ, 146), Ոչ ծլիմ, ոչ բուսանիմ, զերտ դաղնձած սերմ եմ գերիս (ՀԱԳ, 14):

Այսպիսի նախադասությունների երկրորդ մասով հաղորդվող գործողությունը առարկայի սովորական, տեսական վիճակի արտահայտությունն է, որը փաստորեն ժամանակի իմաստով մշտական պատճառ է առաջին մասում նշված գործողության համար:

Երբեմն պատճառ դարձող գործողությունը բարդ կապակցության մեջ արտահայտված է լինում հարցական հնչերանդով: Այդ դեպքում նախադասության բայը ժխտական ձևով արտահայտվելու փոխարեն հարցական է ընդունել: Օրինակ՝ Իմ վրա դամ մի բռնեք, Դո սերդ ինձ խելի՛ ե՞րբ է քողիլ (ՆՔ, 177):

Ինչպես ասվեց, այսպիսի կառուցվածքներում շարահյուսորեն կախյալ նախադասությունը միշտ ետադաս է լինում. ինչպես՝ Լեզուն է յորդ քամի. ծովուն խրոսկութիւն բերել. Ի դատ կաց ի նքմանէ՝ յատակ ծովուն քօհաք պահել (ԿԵ, 180), Ու թէ քամեն զիմ ջուր սըրաիս և զիս լընուն ի շիշանին, Նա ծախեն զիս վարդէջուր՝ ես հոտ ունիմ աւամահութիւն (ԿԵ, 144), Երբ անձդ մտաւ սլաքաւ նետրն, էնտուց յետ կուղնս՝ խրատ տա վարպետրն, էլ հէրկիւղ պէտր չէ, ընկել ԼԵ զետըն (ՆՀ, 87):

Սակայն հազվադեպ, երբ նպատակ է դառնում այս կապակցություններում պատճառի գործողությունն իր վրա կրող նախադասության իմաստը շեշտել, այն նախադաս է լինում՝ Կի՛նն սատանի՛ն բնկեր է, Լեստուած փրկէ կեկան շառէ (ՀԻ, 188):

Միջին հայերենում գործածվում է նաև պատճառային հարաբերությամբ միավորված անշաղկապ կապակցությունների այնպիսի տեսակ. որի անկախ մասում առկա է շափ ցույց տվող դերանուն: Այդ դերանունը ցույց է տալիս գործողության կամ եղելության սաստկության աստիճանը, որը և պատճառ է դառնում մյուս գործողության կամ եղելության իրագործման: Օրինակ՝ Այն շափ ունի, ր ալկն ու զոհաք. Կապա հագնէր ցւղթ ի ցւղաց (Ֆր., 479), Մէկ մի այլ ի յայս նման վերի յագգեն Արշակունեան Հանշա՛ր՝ մահուկ ու իշխսն Ընդ Իփրատ վաղեց քայլ մի լըման (ԼԵ. Մնաց. Հանկուկներ, 53):

2. Հետևանքային հարաբերությամբ շարահարական կապակցություններում միավորվում են երկու գործողություններ կամ եղելություններ, որոնցից առաջինը պատճառ է դառնում, իսկ երկրորդը՝ սրանից բխող հետևանք: Օրինակ՝ Զիմ ցատուն դեղն դու պիտես, ինձ ստաւ հեւիւմ շի բերես (ՆՔ, 64), Այն մարդն է յիմար և տղէտ, զայն բոնեցիւմ ի մեջ որմին դրեւ կենդանի (ՎԱ, 257), Հառաչեմ, նա կուգա արշուն՝ աղվորին իր շատ արեուն. Հառաչս ի յերկինք ելել, երկնուց ի վար կուգա ձյուն (ՆՔ, 56):

Երբ դու մանուկ էիր ու տղայ, Անդ պէտ շարիր՝ աստ ճար չր կալ (Ֆր., 324), Ես այլ հին էմ յանսիգս և իմ սիգեղն այլ հին է, քան զայլ անսիգվորացի, ամ առջև զիս վճարլ (ՍՍԱ, 45):

Այսպիսի կապակցություններում, ինչպես նկատվեց, հետևանք դարձող նախադասությունը միշտ էստացան է. Մեծացա՝ սիրու տեր եղա, երեսիս գոյնն կու գնա (ՆՔ, 49):

գ) Ն պ ա տ ա կ ի հ ա ր ա ր և ր ո յ ո յ ն

Այսպիսի իմաստային հարաբերությամբ կառուցվածքներում առկա է այնպիսի գործողությունների, եղելությունների կապ, որոնցից մեկը կատարվում է այն նպատակով, որ իրագործվի մեկ ուրիշ գործողություն կամ եղելություն: Մարիկն անիծեց զորդին. թիմ որդի, դու զարիպանաս. Երթաս ի յօտար երկիր, զղարիպին դատրն գիտեմաս (ՆՔ, 245), Խն Յովհաննէս Թուրկուրանցի, Զօրն ի բուն ընդ այլ մի տար, Հան ի սրտեւ սէր աշխարհիս՝ Տէրն շտանի զկամեղ ի կատար (ՀԹ, 133), Յըցուր մեկ մի քեզ նման, զայն սիրեմ ու քեզ մոռանամ (ՆՔ, 29), Աստէնս արայ քեզ ճար շուտով Անդլէն առնուս պսակ փառաց (ՀԹ, 130):

Շարադասության առումով հետաքրքիր կառուցվածք է առաջանում ժողովրդական-խոսակցական ոճի այնպիսի արտահայտություններում, երբ զերազաս և կախյալ մասերի միջև բնկնում է միջադաս նախադասություն կամ դարձվածք, որը պետք է ավելի առաջ շարադասված լիներ, որովհետև իր իմաստով նպատակը իրագործող պատճառի մասն է կազմում: Հմմտ. Ճրագ, քեզ ականջ պիտեր, ու լսելի զիմ զանգտնիս. Երթիր իմ յարին, ասիր, խոռվ է, հաշտէ հետ յիս (ՆՔ, 163):

Սովորաբար քննվող տեսակի նախադասություններում բաղադրիչների բայ-ստորոգյալների հարաբերումը այնպիսին է, որ առաջին նախադասության բայը ինչ եղանակով ու ժամանակով էլ արտահայտված լինի, երկրորդ նախադասության բայը պործածվում է ըզձական եղանակով. ինչպես. Ասի, թէ ի հետ երթամ, լոք առնում պապիկ մի ճորով (ՆՔ, 54):

Սակայն, կարող է պատահել, որ կախյալ նախադասության ստորոգյալը արտահայտվի հրամայական եղանակի բայով՝ Զիմ յարն ամանաթ կուտում, ի վարդին մեջն պանեցեւ (ՆՔ, 234):

Նպատակի պարագա շարահարական կառուցվածքների մեջ կարելի է առանձնացնել շարահայտական իմաստային մի տեսակ, որը կառուցվածքային յուրահատուկ հատկանիշներ չունի, սակայն իմաստով ավելի շատ մոտենում է ձևի պարագայական հարաբերությանը. այս նախադասություններում այն գործողությունը, որ տեղի է ունենում նպատակի իրագործման համար, այնպիսին է, որի կատարման ձևից կախված է այդ նպատակի իրագործումը: Օրինակ՝

Մեռնիմ՝ յանդենն յերթամ, քեզ ի հոն տանիմ, թէ կարեմ ի յանանցական հրոյն զիս ղեմ տամ՝ զԲեզ ազատեմ (ՆՔ, 174):

դ) Ժ ա մ ա ն ա կ ա յ ի ն հ ա ր ա ր ե ր ո յ թ ո յ ն

Պատուցվածքային ընդհանուր հատկանիշներով ժամանակային հարաբերությամբ միացած շարահարական նախադասությունները նման են ժամանակակից հայերենում գործածվող նախադասություններին. կախյալ նախադասությունը առաջադաս է, այդ նախադասության ստորոգյալը կարող է լինել բաղադրյալ կամ բայական, բարդ նախադասության մասերի ստորոգյալները մեծ մասամբ միաժամանակություն են արտահայտում: Օրինակ՝ Վառդն ալ ի փշի միջին՝ սուտ բուն էր, զայն իմացաւ, խզանց զյուր կանանչ շապիկն, զկարմիր մի շոտով հագավ (ՆՔ, 221):

Նրբեմն այսպիսի կառուցվածքային տմբողջությամբ արտահայտված ժամանակային հաջորդականությունը ձևոր է բերում պայմանականության հարաբերություն. ինչպես՝ Ղարիպին աչեր խոցուէր ի լացէ, Որտեղ որ կերդայ համբան ի թաց է, Շապիքը կրտրտեր, մըսիկը բաց է, Կրողնկ, էրդաս անդին, քսես մօրերուն (ՀՄԺԾ, 248):

Հարակցական հարաբերությամբ շարահարական նախադասություններ

Հարակցական հարաբերություն է դիտվում շարահարությամբ միացած այնպիսի նախադասությունների միջև, որոնք շարահյուսական և իմաստային հատկանիշներով կախված չեն իրարից: Նրանց կապը արտահայտվում է հրնչերանգային միասնությամբ, որը ևս թույլ արտահայտություն ունի:

Միջին հայերենում հարակցական հարաբերությամբ շարահյուսական կապակցությունները մեծ մասամբ բացատրական բնույթի են. մի նախադասությամբ տրվում է գործողության, երևույթի նկարագրություն, որին հաջորդող նախադասությունը մի որևէ տեսակետից պարզաբանում, մեկնաբանում կամ հավելյալ միտք է ավելացնում այդ նախադասությանը: Նրբեմն շատ դյուրին է այսպիսի նախադասությունները խնքնուրույն համարել, և մե նշված տեղերում հնչերանգային դադարը մի փոքր ավելացվի: Օրինակ՝ Խելօքն ի յանդէտն ի մօտ, միտք արա թէ ինչ նըման է, ճըրագն ի յառջև կուրին կու վառի՝ ինքն չըդիրտէ (ՀԾ, 157), Քո սերն է իմ մորս կաթն, Ժուժ եղեր՝ ոսկերքս է մտեր, Ձկա բաժնեկու հարակ, զայդ ի քու միտդ մի ձգեր (ՆՔ, 47), Թէ դու ի սրտանց քրնենս՝ այս կենցաղս քերակ խաբող է, Պահիկ մի խրնդալ կու տայ, բայց յետեւ ի լաց կու պահէ (Ֆր., 346), Ձագուկն առյուծոյն եմ ես, զով սիրեմ՝ ի հուն հանեմ ես (ՆՔ, 205):

ՀԱՎԵԼՎԱԾ

ՈՒՐԻՇԻ ԽՈՍՔԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Միջին հայերեն բնագրերում, որոնք տարբերվում են մեզ ավանդված գրարար մատենադրությունից իրենց ժանրային բաղմամբությամբ, շարահյուսական-ոճական այս միջոցը անհամեմատ լայն ծավալ է ստանում։ Միջին դարերի պատմական, ղեղարվեստական, իրավաբանական, բժշկական գրականությունն լեզուն իր ժանրային բաղմամբությամբ զրոնորում է քերականական շարահյուսական հետաքրքրական երևույթներ։ Այդպիսին է ուրիշի խոսքի քերականական արտահայտությունը։

Քերականագիտության մեջ ուրիշի խոսքը բաժանվում է երեք տեսակի՝ ուղղակի, անուղղակի (որի մեջ է դասվում նաև գործարարական-անուղղակի խոսքը) և անիսկական ուղղակի։

Ուղղակի խոսք.—Ուրիշի ուղղակի խոսքը հնդկական խոսքի հետ կապակցվում է ասացական կամ իմացական բայերով և անջատվում նրանից հնչերանգային հատուկ դադարով։ Միջին հայերենում այդ նպատակով ամենից հաճախ կիրառվում են ասել, պատասխանել (պատասխան, պացխուն տալ)։ բարբառել, պատմել, ասել, փողել, ձայնել, պատուիրել, աղաղակել, հարցնել (հարցուկս լինել), գոչել, կանչել, հառաչել, հնչել, հիլայել (ամբաստանել) և այլ բայեր։ Օրինակ *Եւայ պատասխանե ետ նրմա. Օձն խաբեաց զիս և կերայ (ՀԵ, 232), Յալաքն պացխուն կուտայ. մի՛ հաչեր, անդեու հալեուր (Յր., 376), Սիրեցնալն տարփմամբ անձկալոյն բարբառուր՝ մի յիս Յերձենար (ՆՇ, 433), Պատմէին դասուց մետասանիցն, ցցրնծացէք, յարեաւ տէրն ի մեռելոց (ՆՇ, 391), Նոր ձայն անտեաց հրեշտակապետն այսօր... խաչելեալն յարեաւ, ձեզ մեծ տեախս» (ՆՇ, 425), Հայցելին առ նա ձայնէր. Ով դու Մարիամ, Զիս՝ որ յարութիւն և կյանք՝ զի ողբաս մեռեալ (ՆՇ, 394), Եթե որ լիճ ճորտ հիլայէ զլիճ ի մարդասպանութիւն, թէ թինայ մարդն սպաննել է զիմ որ, կամ գորդի, կամ զօտար...», Նա բերէ ի դարայասն զհիլայածն (ՍՍԱ, 33), Եւ ի ժամ մահուան կոչեսց զանդրանիկն և ասէ.—Ահա, որդեա՛կ, ժառանգութիւն բազում թողում քեզ (ՀՄԱ, 21)։*

Այս ասացական բայերը կիրառվում են ոճի բաղմազանության համար։ Ուրիշի խոսքը կազմելիս նրանք օգնում են միտքը ավելի համարժեք ու ճիշտ արտահայտելուն։ Օրինակ, երբ ասում ենք նայնել, ապա դրա հետ միասին ընկալում ենք նաև ասելու գործողությունը, որը այս դեպքում օժտված է որոշակի հուզական երանգով։ Այդպես նաև՝ աղաղակել՝ աղաղակելով՝ գոչել, գոչելով՝ ասել և այլն։ Ի՞նչ ասա թե ինչ է նկատվում միջին հայերենում. ասել բային

փոխարինող մյուս բայերը ավելի շատ կիրառվում են այն դորժերում և այն հեղինակների մոտ, որոնք ավելի մոտ են զրաբարին, այսպես կոչված «ռամ-կախառն» զրաբարով են գրում, ինչպես օրինակ, Ներսես Շնորհալին, Մխիթար Հերացին և այլն: Մինչդեռ որքան բնագիրը մոտ է ժողովրդական խոսքին՝ «ռամկորեն» կամ «զրաբարախառն ռամկորեն» է, այնքան շատ, որպես ուրիշի խոսքի կառուցման միջոց, օգտագործվում է ասել բայը՝ 'Կա ժողովրդական պարզ ու չմշակված ոճի ազդեցություն է:

Ուրիշի խոսքի աղբյուրը մատնանշող բառերը կարող են մեկից ավելի լինել և յրացնել իրար: Այս երևույթը, որ կոչվում է հավելագրություն, դեռևս զրաբարի ամենասիրած ոճական ձևերից է չմտ. ...և այսպես հրապուրէր և յուրուրէր հանապաղ. եթե միայն, ասէ, զօրէնս մոգութեան յանձին կալիք, և գծեր մոլորութիւնդ սրտի մտօք դարձուցանիցէք ի ճշմարտութիւն... (Նղիշէ, 27): Արդ յետ այս ամենայնի հաւանութեանց յամառեալ ի մէջ բերէն. բնութեամբ են, ասեն՝ շարիք և ոչ կամածինք (Նղիշէ, 32): Նտ պատասխանի զինուորն Քրիստոսի և ասէ. թեթէ հաւատարիմ են քեզ մարմնաւոր շարշարանք նորայ. հաւատարմադոյն ևս լիցի քեզ ևրկրորդ ահաւոր գալուստն նորա» (Նղիշէ, 21):

Միջին հայերենում ևս կան ուղղակի խոսք առաջ բերող այսպիսի հավելագրություններ. հեղինակային խոսքը ունենում է մեկից ավելի ասացական բայեր, որոնք կամ դիմավոր ձևով են կիրառվում, կամ էլ նրանցից մեկը օգտագործված է լինում դերբայով, ընդ որում հաճախ այդ ասացական բայերից մեկը մտնում է ուղղակի խոսքի մեջ: Որինակ՝ Նա ինձ պատասխանեց բաղբուր ձայնով, ասաց. դեռ (ԿԵ, 189), Սրտի անձկալեալ առ բաղձկալին դիմեալ. Մի յիս մերձենար, ասէ, չեմ ելեալ առ հայր (ՆՇ, 392), «...Անկաւ ի վերայ մորենոյն և ձայնեաց ասելով. Թէ այր ես, և ունիս կարողութիւն դու ընթացիր ուր ես եմ (ՎԱ, 6), խնդրում էր կանչելով. հայր ասում էր Աբրահամին, Դժոխքի տաքութիւնից լեզուս, բերանսս պատկանին (ԳՔԱԵ, 9):

Միջին հայերենում և գրաբարում ուրիշի խոսքը մատնանշող ասացական բայի յրացման դերով կարող է հանդես գալ մի ուրիշի խոսքի մաս, ինչպես, օրինակ, ցուցական դերանունը: Օրինակ՝ Իսկ պատուիրեաց առ հայրն աշուպէս.— Եւ զի փառս սիրես մարդկային, վասն առաջին աշխատութեանց քոց և բաղմադէմ բաղաբաւարութեանցն... ի ծագաց ևրկրի բերեմ մարդիկ, որ պովեսցեն գրեզ (ԷՄԱ, 125), Տամբ պատասխանի և ասեմք այսպես. Եթե յոր օր ընծայի ցան, նոյն ի յօրն այն լինի՝ ջերմն, և ի յոր օր ողջանայ ցան, ի նոյն օրն արձակի ջերմն (ՄԶ, 23):

Ուրիշի խոսքը նշող բայերը կարող են լինել անենթակա նախադասության բայ-ստորոգյալներ՝ նուեռաւանն կալ գրած. Զինչ որ քեզ կայ՝ տուր աղբատաց (Ֆր., 314):

Միջին հայերենում հաճախ ուրիշի ուղղակի խոսքը հեղինակային խոսքին միանում է առանց ասացական բայ-ստորոգյալի. այդ դեպքում խոսքը ուրիշին պատկանելի հասկացվում է զխավոր նախադասության բովանդակությունից. որտեղ ասացական բայի նշանակությամբ դոյական է լինում, Օրինակ՝ Խոսքն ինձ հասաւ քո բերանին. «Եւտ բարն հասցի Հովնաթանին» (ՆԶ, 10):

Սրանից պետք է տարբերել այն երևույթը, երբ ասացական բայը զեղչվում է՝ երկխոսությունների ժամանակ կրկնությունից խուսափելու նպա-

տակով: Օրինակ՝ Ասէ.— Ի՞նչ ունիս որ և կարենոր: Անդամայոյձն՝— Որ՝ գժրիս-
տոս ունիմ և կարենոր՝ զիմ խոցերս. ծնող՝ զիմ սովս և զկարօտութիւնս, և
կեանք զկուրութիւն աչացս և զտկարութիւն մարմնոյս: Ասէ Յիսուս.— Որ համ-
բերէ իսպառ՝ նա կեցցէ: Անդամայոյձն՝— Մինչև ե՞րբ համբերեմ (ԷՄԱ, 208):

Հեղինակի խոսքի և ուրիշի խոսքի շարադասութիւնից կախված է այն
հնչերանգային կապը, որ գոյութիւն ունի այդ երկու խոսքերի միջև: Միջին
հայերենում հեղինակային խոսքի և ուրիշի խոսքի շարադասութիւնը հիմնա-
կանում բնութագրվում է ուրիշի խոսքի ետադասութեամբ: Օրինակ՝ Գարձեալ
կու ասէ ֆալաքն ընդ աղքատս և թաղաւոր. «Աստուած է արտող բարեաց. որ
սունէ՝ զամէն զսուրաւոր...» (Յր. 377), Եւ նա ասէ. մի բարկանաւ ինձ ով բա-
րի բազաւոր. զի սմա եղնում ի զլուխ քո՝ որ աշխատութեամբ շրջեցայ ես
յամենայն բժշկապետս. վասն քո (ՎԱԱ, 50), Աղաղակէր պրկուլն ի վարդն.
— Առանց բեկ յո՞նց ելնում ի հուն (ԿԵ, 135):

Ինչպես տեսնում ենք, հնչերանգային դադարն այստեղ մեծ է: Պատա-
հում է նաև, երբ ուրիշի խոսքը իր մեջ է առնում հեղինակային խոսքը: Այս
դեպքում դադարն աննշան է: Օրինակ՝ Ես կրսիրեմ, սակայն զճշմարիտն ա-
սեմ:— Ասէ,— թուի. թէ մտաթափ եղիր, զի թէ դու ոչ տաս վասն քո, ես զիարդ
տացից (ԷՄԱ, 22):

Երբևէն էլ ուրիշի ուղղակի խոսքը մտնում է հեղինակային խոսքի մեջ,
ձուլվում նրան: Օրինակ՝ Երբ ծրնայ ու զգտնացայ յիշեմ զՔո պոթն ու զսղամ.
«Մի ուտեր» պատուիրեցէր Քո հրամանիդ ես ոչ անսամ (Յր., 257):

Միջին հայերենում ավելի հազվադեպ են շրջուն շարադասութեան որի-
նակները, այսինքն՝ երբ հեղինակային խոսքը հաջորդում է ուղղակի խոսքին,
ինչպէս՝ Այ յորդորէ. զետ յորդորէ, Գետ Յորդանան. Աւետաւոր ձայնի երգէր
Լեծ Կարապետն Յովհաննէս (ՀԵ, 219):

Անուղղակի խոսք.— Ուրիշի անուղղակի խոսքն այն է, որ հանդես գալով
հեղինակային խոսքի հետ, դառնում է լրացում զլիսավոր նախադասութեան
որնէ ասացական քայի: Այս դեպքում հեղինակային խոսքի և ուրիշի խոսքի
կապը շարահայտական տեսակետից ավելի սերտ է դառնում: Ուրիշի խոսքը
փաստորեն ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւն է, որը կապակցվում
է իր զլիսավոր նախադասութեան հետ շաղկապով:

Միջին հայերենում հեղինակային խոսքի և անուղղակի խոսքի կա-
պակցման դերով հանդես են գալիս քէ (եքէ), որ շաղկապները, առաջինի շատ
ակնհայտ դերակշռութեամբ: Օրինակ՝ Եւ ասէ աղուէսն ցոյայն, քէ ուրբաթն
այդ է, որ ի պարանոցդ անկաւ. և այդ է բարկութիւն աստուծոյ (ՎԱԱ, 36):

Բացի շաղկապից, ուրիշի անուղղակի խոսքի քերականական հատկանիշ-
ներն են՝ բայերի եղանակի և զեմքերի՝ հեղինակային խոսքին համապատաս-
խան հարաբերումը, ուրիշի ուղղակի խոսքի ժամանակ օգտագործվող հուպար-
տահայտական ոճի դրսևորման միջոցների վերացումը և այլն: Ահա այս տե-
սակետից մոտենալով միջին հայերենի ուրիշի անուղղակի խոսքի բնութիւնը,
նկատում ենք, որ այստեղ հանդես են գալիս մի շարք առանձնահատկութիւն-
ներ, որոնք որակական փոփոխութիւն են առաջացնում քերականական այս
կապակցութեան սահմաններում:

ա) Անուղղակի խոսքում հանդես եկող առաջին և երկրորդ զեմքի դերանուն-
ները և բայերը մնում են նույնութեամբ, փոխանակ վերածվելու երրորդ զեմ-

քի՛ Լեյզալեա պատահում է նաև գրաբարում: Օրինակ՝ Քանզի յոյժ սիրելի էր նմա խոռվութիւն, արինհեղութիւն, վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր, Եթէ յո՞ թափեցից զգառնութիւն թիւնից. կամ ուր լացատրեցից զրազմութիւն նետիցն (Եղիշե, 12):

Սակայն միջին հայերենում այս երևույթը օրինաչափություն է, Օրինակ՝ ...Մեկայլն որ խիսմն լինի՝ ասէ, թէ ես որ յիմ ապրանքն և ի հարկիքն կամ. ես չպարտիմ որ քեզ պացխուն այնևմ. բաւել թէ առջև իմ լիճ պարոնին (ՍՍԱ, 21), Եւ ասէ արագիլն ողորմելի ձայնիւ, թէ՛ ով բարեակը հողագործ, դու քաջ պիտես. դի ես ոչ բակլայ ուտեմ և ոչ սիսեառն (ԷՄԱ, 11):

Ուրիշի անուղղակի խոսքի մեջ բայի ու դերանվան այսպիսի դիմափոխությունը երբեմն երկդիմություն է առաջացնում: Լեյզալեա, օրինակ, երբ ուրիշի խոսքի հեղինակը կրկնում է դիմացինի միտքը, որանդ խոսքը դնում է իր՝ հեղինակի մասին, ապա այդ խոսքում օգտագործվող դերանունը պետք է առաջին դեմքով դրվի: Մինչդեռ միջին հայերենում ուրիշի խոսքը այս դեպքում եւս մնում է բառացի. այսպես՝ Սուրբ կոյսն ասաց Գարբիէլի, թէ «Այդ բանիդ ով հաւատայ: Զարմանալի բան կու խաւիս, թէ Տէրն ի քեզ խոնարհանայ, նրբ եւ մեղաց տեղեակ չըլնիմ, դիտրդ յինէն զայ մարմնանայ» (Ֆր., 282):

Միայն միջին նախադասությունից է հասկանալի դառնում. թե տերը պետք է Սարիամին խոնարհվի և ոչ թե Գաբրիէլին:

բ) Միջին հայերենում անուղղակի խոսքի մեջ, ուղղակի խոսքի նման, հանդես են գալիս բացականչական արտահայտություններ, կոչականներ, հարցական, հանդիմանական բառեր: Օրինակ՝ Յորժամ հարցանես ըզքեզ, թէ ըզՏէրն ուստի՞ ճանաչես, Բանին պատասխան ի՞նչ տաս, է՛յ ևսգար զորժամ սեւեւես (Ֆր., 393—4), ...Ի՞նչ կարենան գտնուլ զինք ի տեղն, նա մեկն ասէ ու երկուքն վկայեն թէ, «Փուլան. քո պարոն ժողվել է զգարպասն վասն քո, որ ասցել եւս ու այրել եւս զիսայ ու զիսայ... (ՍՍԱ, 16), Բըրբուլն ասէ, թէ՛ Վա՛րդ անկառ. Սիրարդ զեղին, ի՞նչ է պատճառ, Քեզ ի՞նչ իննար առնեմ ու ճար... (ԿՍ, 121), Եւ զայ վասն այնոր առջև պարոնին կամ պալլոյն ու ասէ, թէ «Լիմ պարոն, եւ աւղղած եմ ի ֆուլան կապլվոր, ու բաժին մի այլ անսիղվորք կան և կու առջընտրեն զիս» (ՍՍԱ., 41), Գարբիէլեան փողն գոչէ, թէ՛ Ահայ գայ Քրիստոս արքայ (Ֆր., 285):

գ) Ուղղակի խոսքին հատուկ հարցական, հրամայական նախադասությունները այստեղ մնացել են նույնը, փոխանակ վերածվելու պատմողականի: Օրինակ՝ Իշուն ավետիս մատուցին՝ թէ՛ ցնծա և ուրախ լեւ և տուր մեզ օժիտս. զի թողն ծնաւ քեզ (ՎԱԱ, 88), Եւ դարձեալ ասէ առիծն ընդ ազուէսն՝ թէ՛ բաժանէ՛ զոչխարսդ ի վերայ մեռ (ն. տ., 20), Դարձաւ զայն ճուղապ երես. թէ՛ Ինչ անեմ. լեզուս կապեցաւ... (ՆՔ, 44):

Ինչպես տեսնում ենք օրինակներից, միջին հայերենում ուրիշի անուղղակի խոսքի և ուղղակի խոսքի սարքերությունը զուտ կապակցական բնույթ է կրում: Նախադասության կազմի մեջ բերականական տեսակետից գրեթե նյութական փոփոխություններ չեն նկատվում. բայերի դիմափոխություն չի կատարվում, բացականչական բառերն ու նախադասությունները, կոչականները, հրամայական նախադասությունները և այլն մնում են անփոփոխ:

Այլ խոսքով, ուրիշի անուղղակի խոսքը պահպանում է ուրիշի ուղղակի խոսքի բերականական-չարահյուսական բոլոր առանձնահատկությունները.

ստացվում է այնպիսի կառուցվածք, որի մեջ միայն քէ շաղկապի առկայությունն է նրան նմանեցնում ուրիշի անուղղակի խոսքին:

Բնականորեն առարկություն կարող է առաջանալ միջին հայերենի ուրիշի խոսքի նման տեսակը առանձնացնելու հարցում, քանի որ ուրիշի խոսքը տրվել էր դեպքում նույնությամբ պահպանված ուղղակի խոսքն է: Անհրաժեշտ չէ՞ արդյոք այն համարել ուղղակի խոսք, անտեսելով քէ շաղկապի առկայությունը:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ միջին հայերենում անհրաժեշտ է տարբերել այսպիսի ընդհանուր, դեռևս չտարբերակված կառուցվածքների երկու տեսակ՝ ա) ...ասացական բայ + շաղկապ + ուղղակի խոսք և բ) ...շաղկապ + ուղղակի խոսք:

Մագումով առաջին տեսակը յուրահատուկ անցումային վիճակ է ուրիշի ուղղակի խոսքից անուղղակի խոսքին հատուկ հատկանիշների պատճառով և միևնույն ժամանակ ուղղակի չի կարելի համարել, որովհետև ուրիշի խոսքը հեղինակային խոսքին միանում է շաղկապով, ինչպես՝ Կասեմ քէ Աղեկ ես դու: Նա կասէ քէ Տէրն է տվեւ (ՆՔ, 106), Զայս յիմարն կու ասէ, թէ անաշխուտ հաւրստանամ (Ֆր., 263):

Այսպիսի կառուցվածքներ հանդիպում են նաև գրաբարում, որտեղ հեղինակային խոսքում ասացական բայի կամ նրան փոխարինող բառի հետ միասին կարող է օգտագործվել նաև շաղկապը՝ Բայց քանզի պատուիրանապահք էին սուրբ կտակարանացն Աստուծոյ, հանապազ յիշէին զպատուիրեալսն ի Պաղոսէ, եթէ, Մառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց (Եղիշէ, 18):

Երկրորդ կառուցվածքը (...շաղկապ + ուղղակի խոսք) ավելի մոտենում է ուղղակի խոսքին: Եթե առաջին տեսակի մեջ շաղկապը կապակցում է ուրիշի խոսք—երկրորդական նախադասություն, ապա երկրորդ դեպքում, շաղկապը արդեն ասացական բայի պաշտոն ունի և մատնացույց է անում ուրիշի խոսքը: Այն էլիպտիկ համարել չի կարելի, որովհետև այնտեղ ասացական բայը զեղչված չէ վերականգնման հնարավորությամբ: Այսպես՝ միջին հայերենով խոսող կամ գրող անհատը քէ—ն առանց ասացական բայի կարող էր օգտագործել որպես ուրիշի խոսքը նշող բառ: Օրինակ՝ Զերայ շատ մարդ բռնեցին, շատ տուն կոխեցին, թէ Ավդուլէն ձեր տուն այ կամ դու խաբար ես (ԶԱՕ, 1:2), Դարպասն պատեհ է, որ առջի տարւայն ավտայ իր և յուղարկէ հետ մի այլ- քէ Արեկ, քո խըսմին իրաւ արա (ՍՍԱ, 25), Մնալըն ի ծունկն անկաւ որդոյն, քէ մեկ խընդիր ինձ առ բեզ կայ, Թող զիս ի յայս տեղիս թաղեն, ինձ գերեզման այս լինենայ (Ֆր., 284), Կեսք մեն բժիշկ եղել, քէ դեղ ունիմ խիստ օգտակար, խոցեն զառողջն ի սիրտն, ու հիւրնդին են մահարար (ԿՆ, 200), Մարմինն ի հողուն ի դուրս մէկ խօսք զհոգին վրճարեց քէ թն հող էի՝ հող դարձայ, քո ամալն է, ըզքեզ բռնեց» (ՀԾ, 158):

Նույնիսկ միևնույն տեքստը երկու տարբեր ձևադրերում հանդիպում է հետևյալ կառուցվածքներով:

Ասէ թագաւորն.—Երբ դու այդպէս սքանչելագործ մարդ ես, ընդէ՞ր իմ ծառայքէն չազատեցար, որ այդպէս հրապարակաւ և կապանօք բերին զքեզ (ԷՄԱ, 78, ձև. ա):

Ասէ թագաւորն, թէ.—Թէ դու այդպէս սքանչելի շնորհք ունիս, ինչո՞ւ իմ ծառանուն ձեռացն չի ազատեցար, որ անառակ հրապարակ բերին զքեզ (Ն. տ., 80, ձև. Ե):

Այսպիսով, ուրիշի անուղղակի խոսքը միջին հայերենում դրսևորվում է այնպիսի կառուցվածքով, որի քերականական հատկանիշներից փաստորեն միայն մեկն է պահպանվում՝ ուրիշի խոսքը որպես երկրորդական նախադասություն իր գերադասին միանում է քվ. շաղկապով: Եվ միայն այդ հատկանիշի շնորհիվ է, որ քննվող կարգի շարահյուսական կառուցվածքը տեղադրում ենք «Ուրիշի անուղղակի խոսք» բաժնում: Եթե հիշենք նաև, որ միջին հայերեն մեզ ծանոթ դրականության մեջ չի հանդիպել ուրիշի խոսքի իսկական (իր բոլոր հատկանիշները պահպանած) տեսակ, ապա կարելի է ասել, որ ուրիշի խոսքի սկզբում հանդես եկող քվ.-ն հեղինակային խոսքին կապակցում է ոչ թե անուղղակի, այլ ուղղակի խոսք: Պատահական չէ, որ միջնադարի առավել ուշ շրջանի ստեղծագործություններում, որոնց մեջ մոդովորական խոսվածքի կնիքը ավելի ուժեղ է արտահայտված, քվ.-ի՝ ասացական բային փոխարինելու այս դերը քերականորեն ավելի է ամրապնդվում: Եթե վաղ շրջանից քաղված օրինակներում քվ.-ն ասացական բայի հետ հանդես է գալիս որպես ավելադրություն, ապա հետագայում նա առավել ցայտուն է դրսևորում ուրիշի ուղղակի խոսքը միայնակ կապակցելու իր դերը, այսինքն՝ շարահյուսական ավելադրությունից վեր է ածվում քերականական ինքնուրույն միավորի: Համեմատենք հետևյալ օրինակները: Ո՞ր մեղադրեք Մարտիրոսիս, քվ. կարճառոտ ասիր ըզդա (ՄՂ, 99), Աղաչեք գղռնապանն, զի ազդ արասցէ հօրն, եթէ՝ «Աղաչատ ոմն ծեր, երբեմն ընկեր և ծանօթ քո լեալ, առ դրան է» (ԼՄԱ, 124), Ելնես դու ի ձեր տաննն, լուկ աշորդ անես, թէ սիրէ (ն. տ. 48): Այս ֆոանսիս մեծ մարդն օսմանցիք բռնեն, քվ. կամ բերթն տուր, կամ չի՝ ես մարդս տալ չեմ (ԶԱՌ, 99):

Ուրիշի խոսքի նկարագրված տեսակը բնորոշվում է շարադասության հետադասությամբ (նախադաս գործածությունը բացառված է):

Դոյություն ունի ուրիշի անուղղակի խոսքի մի այլ տեսակ ևս, որ ժամանակակից քերականության մեջ կոչվում է գործարարական-անուղղակի խոսք: Այսպիսի խոսքը մեջ բերելիս հեղինակը նպատակ ունի ճշտորեն վերարտադրել ուրիշի խոսքի բովանդակությունը, կարևորություն չտալով այդ խոսքի ոճական, ձևական կողմին: Սա ավելի շուտ գործածվում է գիտական, պատմական աշխատություններում: Այդպիսի անուղղակի խոսքի հաճախագեղ կիրառություն ենք նկատում Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» գորքում, ինչպես և առհասարակ բժշկագիտական գրականության մեջ: Օրինակ՝ Ապուճեբրիճն ասէ, եթե այս ցերմս որ իր պատճառն ի սովոյ և ի յանաթի կենալոյ լինի, իւր պատճառն այն է, որ գոլորշին որ է պոխարն ամենայն մարմնոյ ցերմացեալ սրանան... (ՄՀ, 26), Սահակ ասէ, թէ իւր ստածումն այն է, որ ի բաղանիս կիսատաք ջրով յաւազան մտէ, և զմարմինն մանուշակի ձիթով օծանէ, և հանապաղ ի հով և ի դիճային ծաղկունս հոտոտայ (ն. տ., 19):

Բժշկապետի նպատակն է եղել տալ ուրիշ բժիշկներին խորհուրդները հիվանդությունների առաջացման և բուժման մասին, և տվյալ դեպքում բուրբուռվին էլ կարևոր չէ, թե ինչպես են իրենց մտքերն արտահայտել: Որոշակալի որդին կամ Սահակը, այլ կարևորն այն է, թե ինչ են ասել:

Ընդհանրացնելով ուրիշի անուղղակի խոսքի մասին մեր դիտողությունները, կարող ենք ասել, որ ուսումնասիրվող շրջանում այն գտնվում է իր ձևավորման նախնական շրջանում: Ընդհանուր է, որաբարում ևս նկատվում են ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքերի նման խառն կառուցվածքներ, երբ անուղղակի

խոսքը հեղինակային խոսքի հետ կապակցվում է շաղկապով՝ մնացած բոլոր հատկանիշներով մնալով ուղղակի խոսք. ինչպես՝ Խոսեր ընդ նմա և ասէր՝ եթէ, բնդէր մոռացար զտէրն և թողեր զպատուիրանս նորա... (Բյուզ., 110), սակայն ի տարբերություն միջին հայերենի, զրաբարին խորթ չէ նաև ուրիշի անուղղակի խոսքի այն տեսակը, որն իր բոլոր սրինաչափություններով համապատասխանում է քերականական այս երևույթին տրվող սահմանմանը (ունի ասացական բայ, կապվում է ստորադասական շաղկապով, ասվում է երրորդ զեմբով և այլն)։ Օրինակ՝ Ապա իբրև յանհարին մտանէին իրքն և պնդեալ համառէին ամենայն բազմութիւնքն՝ զի մի զայրն սպանցէ... (Բյուզ., 99)։

Անուղղակի խոսքի այս տեսակը ժամանակակից զրական հայերենի համար եւս ամենաբնութագրականն է։ Օրինակ՝ Մի անգամ այսպիսի այցելություններ ունենալուց հետո հայտնեց, թե Եզյանից համաձայնություն է ստացել, և պետք է պատրաստություն տեսնեմ մեկնելու Կարին՝ Սանատարյան վարժարանի իբր ուսուցիչ հայերեն լեզվի (Հ. Անադյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1968, 1938)։

Միջին հայերենում, ինչպես ասվեց, ուրիշի անուղղակի խոսքի այսպիսի ձև մեզ զեռես չի հանդիպել։

Անխկալաճ ուղղակի խոսք. — Ուրիշի խոսքի հաղորդման մի ձև եւս դոյություն ունի՝ անխկական ուղղակի խոսքը։ Ինչպես երևում է անվանումից, այսպիսի խոսքը նման է և՛ ուղղակի, և՛ անուղղակի խոսքին։ Ուղղակի խոսքին նման է այն զեպքում, երբ ուրիշի խոսքը մեջ է բերվում ուղիղ ձևով, սակայն առանց ասացական բայի։ Բացառված չէ նաև, որ անխկական խոսքը կարող է ստորադասական նախադասության նման շաղկապով կապվել՝ զխառնոր նախադասություննր։ Այդ զեպքում այն կնմանվի անուղղակի խոսքին։ Երբ ուրիշի խոսքը չունի ոչ ուղղակի խոսքի, ոչ էլ անուղղակի խոսքի բոլոր անհրաժեշտ հատկանիշները, դառնում է անխկական ուղղակի խոսք։ Այսպիսի խոսքը միաժամանակ լեզվի ոճական առանձնահատկություն է, զրական լեզուներում այն առաջացել է ուշ շրջանում, որովհետև կապված է համեմատաբար բարձրարժեք ու զարգացած զրականության ստեղծման հետ. փաստորեն զրոգի ստեղծագործական հմտության շնորհիվ է, որ ստեղծվում են տարբեր մտածողական պլաններ։ Այս զեպքում բնթերցողը պետք է տարբերի, թե որն է հեղինակի անվերաբերմունք խոսքը ընդհանրապես, և որը՝ հերոսի ներքին հուզաշխարհի արտահայտությունը։

Հայոց լեզվի պատմության քննվող շրջանում վերոհիշյալ անհատական տարրեր պլանների օգտագործման շարահյուսական միջոցի կիրառման առաջին աղոտ նմուշները նկատվում են Հովհաննես Երզնկացու և Ֆրիկի մոտ, որոնք իրենց ռատնավորների մեջ հաճախ ընդհատում են նկարագրական, պատմական խոսքը և դիմում ուրիշի խոսքի։ Օրինակ՝

Յատար աշխարհւ եմ վրտարած,
հաշն արածել ի յոչ կամաց.
Պուտ եմ կերել հացի փոխան,
Զայն որ խոզիցն էր հա կերած,
Ըզարբութիւն ես տուի շանց,
Ըզմարդարիտն արկի խոզաց,
Բեր մէկ ար զխելքդ ի վերայ,
Թէ էր կու կենամ ես աստ սոված (Ֆր., 313)։

Հեղինակը իր խոսքի մեջ ինքն իրեն (որ է՝ իր հերոսին) խրատում է, և այս դեպքում բայի ու դերանվան առաջին դեմքերը օգնում են հարցը տպավորիչ դարձնելու, ընդգծելու հեղինակի ցանկությունը, որ «սոված կենդանիները ղզա, իներ մտածի իր վիճակի մասին»։ Այսպիսի խոսքերի զուգադրությամբ միջնադարյան րանաստեղծները կարողանում են արտահայտել ինչպես սեփական, այնպես էլ իրենց հերոսի ներաշխարհի բազմազան տպավորություններն ու ապրումները։ Ոկզբունքորեն այսպիսի խոսքը շատ է նման ուրիշի ուղղակի խոսքի շարահյուսական կառուցվածքին։ Հմմտ.

Գոչեր ձայնի ողբալի,
Ջրանսն որ ասէր սոսկալի,
Շարժեր զամէն մըսեղի,
Յողը և ի կոծրս բանի.
«Յիսուս որդի անձկալի,
Իմ միածին քաղձալի,
Ընդէ՞ր կաս մերկ ի խալի,
Ու բեռեալ ի փայտի» (ՀՆ, 243)։

Անիսկական ուղղակի խոսքի արտահայտությունն ձևերով ևս միջին հայերենը տարբերվում է ժամանակակից հայերենից։ Անիսկական ուղղակի խոսքը, ինչպես ասվեց, իր բնույթով երկակի է. որոշ հատկանիշներով նա նման է ուղղակի խոսքին, այլ հատկանիշներով՝ անուղղակի խոսքին։ Վերջին տեսակն այն է, երբ հեղինակը իր պատմության մեջ օգտագործում է բառեր ու արտահայտություններ, որոնք հերոսինն են։ Թվում է, թե հերոսն է խոսում, բայց իրապես հեղինակը հերոսին պատկանող կամ նրանից սպասելի արտահայտություններով կարողանում է յուրահատուկ կոլորիտ ստեղծել։ Հմմտ. «Այդ էր նրանց վիճակը և նրանցից շատերը նույնիսկ ամուսնու պայտոնը չգիտեին, այլ միայն գիտեին, որ նա դավթարխանայի մեծերից է, և նրանցից քարձր միայն երկու բնյ կա՝ այսինչը և այնինչը, իսկ մնացած բոլոր բնյերը նրանից քաշ են, նրանց կանայք իրենից քաշ են, նրանց երեխաները ինչ են, որ խաղան իր երեխաների հետ» (Բակունց, Երկեր, 1955, 330)։

Այս խոսքերի ետևում երևում են բնյերի սահմանափակ կանայք իրենց հոգեբանությամբ, աշխարհայացքով, ի՞նչ այս արդյունքը ստացվել է անիսկական ուղղակի խոսքի օգտագործման շնորհիվ։ Այս տիպի անիսկական ուղղակի խոսք (կրկնենք՝ որը նման է ուղղակի խոսքին), միջին հայերեն մեզ ծանոթ գրականության մեջ չի հանդիպում։ Ի՞նչ այս առանձնահատկությունը, և այն, որ անուղղակի խոսքը նման է ուղղակի խոսքին, միջին հայերենի համար պատահական չեն, այլ պայմանավորված են նրանով, որ լինելով ժողովրդական խոսվածքին շատ հարազատ, «զեղչուկ բան»՝ միջին հայերենը ժառանգել է նաև այն տրամաբանական, շարահյուսական արտահայտչական ձևերը, որոնք հատուկ են ժողովրդին։ Հիմա էլ մեր բարբառներում և հասարակ ժողովրդի համար խորթ է ուրիշի խոսքի անուղղակի հաղորդումը։

Այս ևս ապացուցում է, որ միջին հայերենում ուրիշի խոսքի՝ որպես ասույթի կառուցման շարահյուսական միջոցը իր լինելիության վիճակում է գտնվում։

Միջին հայերենի բարդ նախադասությունների շարահյուսական ձևավորման ամբողջական պատկերը կազմելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նաև շարահյուսական անկապակցությունների բրևույթը, որ մեր լեզվի այդ շրջանին շատ բնորոշ է:

Գրական լեզվի նորմավորման բացակայության պայմաններում միջին հայերենը լայնորեն ներթափանցված էր խոսակցական լեզվի տարրերով: Վերջիններս որպես կենդանի, ժողովրդական զգացական խոսքի արտահայտություն յուրատեսակ գունավորում են հաղորդում ժամանակի լեզվին, որը դրսևորում է լեզվական յուրօրինակ հնարանքներ ու ոճական բազմապիսի ձևեր: Խոսակցական լեզվի ազդեցությամբ գրական լեզվի մեջ հանդես են գալիս նաև քերականական, շարահյուսական կապակցման այնպիսի ձևեր ու միջոցներ, որոնք գրաբարի և ժամանակակից հայերենի համար լինելով շեղումներ՝ միջին հայերենի համար սովորական են: Այդ շեղումները կոչվում են անհետևություններ կամ անկապակցություններ, որոնց լեզվական վերլուծությունն ու նկարագրությունը խիստ անհրաժեշտ է ինչպես գործնական, այնպես էլ տեսական առումով:

Շարահյուսական անհետևողություն կամ անկապակցություն անվան տակ հասկացվում են քերականորեն կամ տրամաբանորեն ոչ ճիշտ լեզվական ձևերն ու կառուցվածքները: Անկապակցություն ասելով չպետք է հասկանալ գրվածքի ոճական առանձնահատկությամբ պայմանավորված երևույթ: Որովհետև եթե ոճը իմաստային ու կառուցվածքային առումով համանիշ բառերի կամ կապակցությունների միջև ընտրության արտահայտությունն է, իսկ այդ բառերն ու կապակցությունները վերջիվերջո քերականորեն ու շարահյուսորեն ձևավորվում են լեզվի ընդհանուր օրինաչափությունների համաձայն, ապա անհետևողությունը վերաբերում է լեզվի կամ տվյալ շրջանի ընդունված նորմայից կատարվող շեղումներին:

Միջին հայերենի շարահյուսական անհետևողությունների դեպքերը վերաբերում են մեծ մասամբ նախադասությունների կառուցվածքին և բարդ նախադասության բաղադրիչների կապակցության միջոցների գործածությանը: Շարահյուսական անկապակցություն է առաջացնում նախադասության կազմում հաղորդակցական առումով անհրաժեշտ բառերի կամ դարձվածների փակասը, որոշ բառերի կամ դարձվածների անհարկի ներկայությունը, ստորոգյալի դիմավոր ձևով արտահայտված նախադասության և դերբայական դարձվածի կառուցվածքային հատկանիշների չտարբերակումը, ուրիշի ուղղակի խոսքի և անուղղակի խոսքի հատկանիշների խառնումը և այլն:

Բարդ նախադասության կապակցման միջոցների անհետևողություններն առաջ են գալիս շաղկապների ու հարաբերական բառերի սխալ ընտրության, գեղջման, ավելորդ գործածության և այլ պատճառներով:

Բարդ նախադասության կառուցվածքային մասերի անհետևողությունը հիմնականում առաջանում է այդ մասերի անդամների քերականական ձևավորման անհամապատասխանությամբ: Այդ անհամապատասխանությունը հանդես է գալիս այնպիսի ձևերով, ինչպիսիք են՝ տարբեր կառուցվածքների խառնումը, իմաստի տեսակետից անհրաժեշտ բառերի կամ կապակցությունների փակասը կամ ավելադրությունը, բարդության մասերի թվական անհամաձայնությունը և այլն:

1. Կառուցվածքների խառնուրդ.—Սա հանդես է գալիս այն դեպքում, երբ բարդ հարաբերություններ միավորված նախադասությունները իրենց քերականական ընդգրկումը չեն համապատասխանում միմյանց։ Այսպես՝ բարդ նախադասության առաջին բաղադրիչը արտահայտվում է դիմավոր ստորոգյալով, իսկ երկրորդը՝ զերբայական դարձվածով, թեև կապակցվում է ստորադասական շաղկապով։ Օրինակ՝ Այս քիչ ժամկետի թողու, նա զիջ մարդասպան դատեն զինքն զի կարևոր, որ ասել զմարդ, և բարություն անել, որ զինք... (ՄԳԻ, 52)։ Ինչպես տեսնում ենք, ուր շաղկապի ներկայությունը պահանջում է, որ երկրորդական նախադասության ստորոգյալը արտահայտված լինի դիմավոր ձևով՝ «կարևոր, որ ասել զմարդ»։ Հակառակ դեպքում անհարկի է շաղկապի զործածությունը։ Նախադասությունը քերականորեն ճիշտ ձևակերպված կլինի այսպես՝ «կարևոր ասել զմարդ»։

Երբեմն քերականորեն անհամապատասխանություն է առաջանում նախադասության մեջ ստորոգելիական հանգույցի ղեղչման պատճառով։ Օրինակ՝ Այլ զեռ վասն հարաբերությանն եկեղեցականաց կու հրամայէ օրէնքս, որ ուտելն և խմելն չէ քանց վասն այնոց, որ մարմինն լցվի և կշտանայ, և որ ավելի է, նա պնդծ է և աղահոսթին պատճառ ամէն շարեաց (ՄԳԻ, 69)։

Կառուցվածքային անհետևողություն է առաջանում նաև շարահարական կապակցության ժամանակ։ Ինչպես գիտենք, շարահարությունը կապակցված նախադասությունների միջև զուգադրա-հակադրական հարաբերություն արտահայտվում է բարդ նախադասության մասերի բառական համապատասխան համամասնությունների (սիմետրիայի) շնորհիվ։ անհրաժեշտ է, որ հակադրվող դասողությունների համապատասխան անդամները շարահյուսվեն համապատասխան ձևով։ Այս կանոնի զանցառումը առաջացնում է շարահյուսական անհետևողություն նման կապակցությունների սահմաններում։ Օրինակ՝ նման էր այն պտղոյն, որ Աղամ կերավ խաբանօք, Կերավ, ի դրախտէն ելավ, ևս ի քո ծոցոյդ կարոտով (ՆՔ, 132)։

Ընդգծված շարահարական նախադասության երկու մասերում զուգաշարժորեն իրար համապատասխանում են՝ Երկու մասերի տեղի պարագաները (ի դրախտէն, ի քո ծոցոյդ), որ ճիշտ է, և մասերից մեկի ստորոգյալը—մյուսի՝ ենթական (կերավ, ևս), որ սխալ է։ Բացի դրանից, երկրորդ նախադասության կերավ ստորոգյալը, որ կրկնված է նախորդ նախադասությունից, այստեղ ավելորդ է։ Ի վերջո, երկրորդ նախադասության մեջ զեղչված են և՛ ենթական (Աղամ), և՛ ստորոգյալը (կերավ)։ Դրեք քերականորեն և տրամաբանորեն անթույլատրելի է։ Այս նախադասությունը քերականորեն ճիշտ կլիներ հետևյալ տեսքով։

«Նման էր այն պտղոյն, որ Աղամ կերավ խաբանօք, Նա (կերավ) ի դրախտէն ելավ, ևս՝ ի քո ծոցոյդ կարոտով»։

2. Պակասավոր կառուցվածքներ.—Այն դեպքերում, երբ բարդ նախադասության բաղադրիչներից մեկի կազմում զեղչվում է այնպիսի անդամ, որի հաղորդակցական դերը անհրաժեշտ է տվյալ բարդ կապակցության ամբողջական իմաստի ձևավորման մեջ, ստեղծվում է թերիմաստ, երբեմն անհասկանալի կապակցություն։ Օրինակ՝ Եւ չէ ջուրն քանց այնոր, որ տարաւ զայն ջուրն հայրենիք իւր սեփական (ՄԳԻ, 20)։ Հմտ. Եւ չէ այն ջուրն ուրիշի, քանց այնոր, որ տարաւ զայն ջուրն հայրենիք իւր սեփական։

3. Լիկնույն բառերի կամ դարձվածների կրկնությունը բարդ նախադասու-

քյան տարբեր մասերում.—Երբեմն դրողը կամ խոսողը մոռանում է, որ այս կամ այն անհրաժեշտ բառը կամ արտահայտությունը արդեն դործածել է, ուստի կրկնում է այն: Այդ կրկնությունը արվում է նույն ձևով կամ այլ ձևակերպումով:

ա) Նույնաբանական կրկնություն.—Այսպես է անվանվում կրկնության այն տեսակը, երբ միևնույն նախադասության կաղամում ճիշտ նույն ձևով արտահայտված շարույթները կրկնվում են: Օրինակ՝ Նա ունի անսխալ համանք որ կար է այնել, ապա ի վերայ իր բաժնին, որ է իր բաժնին ի յամէն իրացն և ի հայրենացն յերեք բաժնէն մէկն (ՍՍԱ, 49), Եթէ լինի դատըստընել ի դարպասն որ լիճ ճորտեր իրաց ուժ լինան արել, կամ անլիճ լճի, կամ լիճ անլճի, գինչ ու լինի որ ուժ լինան այրել, և կամ խլոցք, որ դատըստընի մեկն, ու մէկայլն լսէ, նա պատե՛հ է որ մենակ գայ մէկայլն յառաջ և տֆնդէ... (ն. տ. 27):

Կապակցման այս ձևը ժողովրդական կենդանի խոսքի յուրահատուկ արտահայտություն է, որտեղ պարզ երևում են խոսողի մտքի բոլոր նրբերանգները: Այսպես՝ գործողության ենթական (լիճ նորտեր) ու ստորոգյալը (ուժ լինան արել) արտասանելուց հետո խոսողը կամ գրողը անհրաժեշտ է համարել ենթականի իմաստը բացատրել, պարզաբանել (լիճ անլիճ կամ անլիճ լճի), և որովհետև փաստորեն ենթական ասել է, հետևաբար ստորոգյալը նորից է կրկնել, որպեսզի նրա արտահայտած իմաստը շմուռացվի: Փորձներ վերադասավորել այս նախադասության բաղադրիչները, Եթէ լինի դատըստընել ի դարպասն գինչ ու լինի՝ լիճ ճորտեր կամ անլիճ լճի կամ լիճ անլճի, որ իրաց ուժ լինան արել և կամ խլոցք, որ դատըստանի մէկն, ու մէկայլն լսէ, նա պատե՛հ է որ մենակ գայ մէկայլն յառաջ և տֆնդէ:

Նույնաբանական կարելի է կոչել նաև այն կրկնությունը, երբ նախադասության մեջ ենթական կամ խնդիրը կրկնվում են դերանվան միջոցով: Օրինակ՝ Դրբի զիմ որդին գըրաւ, ուստի ճուղապ գընալուն, Միթէ թագաւորն երկնից՝ նա բերէ զիմ որդին ի տուն (Ֆր., 342), Այն, որ ատում, է այնոր համ կու ասեն (ՍՍԱ, 15):

բ) Ավելաբանական (պլեոնաստիկ) կրկնություն.—Այս դեպքում որպես ավելադրություն կրկնվում են նույնարմատ բառերը, տարբեր քերականական կազմությամբ: Օրինակ՝ խաղ խաղալ, զիծ զծել և այլն: Միջին հայերենում վերլուծական խոսքի հատկությամբ հաճախ անորոշ դերբայով արտահայտված խնդիրը շարույթի հաջորդ մասում կրկնվում է դիմավոր ձևով: Սա իր հերթին առաջացնում է շարահյուսական կապակցությունների խառնում: Օրինակ՝ Եւ ի դրաստնոյն հանելն որ ի յերկրես կու հանեն նա կու տան ի ձին ու ի ջորին.—չորս և ի յէշն նոր պրամ հինգ (Ալիշան, Սիսուան, 387): Բայց դայս դեղերուն դիտենալն՝ հինգ ցեղ իրօք կու գիտենան (ԱԱԱ, 5):

գ. Բակառություն.—Այս տերմինով տեղանվում է նախադասության անդամների թվական այնպիսի անհամաձայնությունը, երբ, օրինակ, ստորոգյալը հոգնակի թվով է դրվում եղակի ենթականի բառական իրական իմաստի պահանջով, ինչպես, օրինակ՝ մեծ մասը Լեւան: Մենք այսպես ենք անվանում նաև բարդ նախադասության մասերի թվական անհամաձայնությունը, որը մեծ մասամբ հանդես է գալիս կախյալ կապակցության մեջ. գերադաս մասի ստորոգյալի արտահայտած քերականական թիվը պահանջում է կախյալ մասի համապատասխանություն, մինչդեռ քերականական թվային համապա-

տասխանությունը խախտվում է տրամաբանական թվային համաձայնությունամբ: Որինակ՝ Կարգավոր շատ կա, անեփ, անխաշ են, թալիմ չեն առել քաղում դումաշէն (Ն2, 83):

Ինն իմաստային առումով նախադասության բովանդակությունը հասկանալի է, այնուամենայնիվ քերականորեն ճիշտ չի ձևակերպված: Այս նախադասությունը կարելի է լինի փոխակերպել՝ ա) Կարգավորը շատ կան, անեփ, անխաշ են, բ) Կարգավոր շատ կա, անեփ, անխաշ է:

Շարահյուսական այսպիսի անկապակցություն նկատվում է և պարզ նախադասության սահմաններում, երբ նախադասության ենթակայի և ստորոդայի քերականական թվերը համաձայնեցված չեն:

5. Խոսքի շղթայի անմիակցվածություն.— Ժողովրդական-խոսակցական ոճի արտահայտություն է, երբ արտասանության կամ գրության սահմանում բողջական միտքը խիստ դանդաղ է ձևակերպվում: Խոսքային շղթան կազմող նվազագույն ասույթների միակցումը թույլ է. ամբողջական միտքը զարգանում է դանդաղ ու աստիճանաբար: Այդպիսի ոճով են գրված Սմբատ Սպարապետի «Դատաստանադիրքն» ու «Անսիդ Անտիոքայ»-ն: Այս ստեղծագործությունները կարգայիս ստանում ենք այն տպավորությունը, որ խոսքը քանավոր է, և խոսողը հետևելով իր մտքում առաջացող զուգորդություններին, արտաբերում է դանդաղ ձևակերպվող մտքերն ու դատողությունները, ուշադրություն չդարձնելով նրանց քերականական ձևավորմանը: Ընդ որում, այսպիսի կապակցությունների մեջ կարելի է հանդիպել շարահյուսական անհետևողությունների մի քանի ձևերի: Օրինակ՝ եւ այն, որ գրաստ վնասի. նա դէտ որ դրեցաք, թէ բանտվողէն լինի, ու ասէ, թէ գտնէ կամ վարէ, և նա զհրամանն կատարէ ու մեռնի, նա անսպարտ է, բայց ի հրամանաց ելածն և ընդ ակփրթութենէ պատահածն, ու ընդ այլ դեհն գնացածն քան ընդ պարոնն հրամայէ, նա լման վճար պիտի անէ (ՍՍԳ, 78), եթէ ուրդի, որ ոք մի սայգած լինի զինչ ու լինի դատատնիլ ու ի ուզել զիրաւունքն ի յիւր խամէն, որ շիինին երկու խիսմն կարեորք իրաց (ՍՍԱ, 33), Եթերորդն այն է. որ ասեն թէ այս դեղերուս մուտն եւ գործն կայ, հանապաղ է. եւ թէ ուտէն մի լինի եւ ուտեն մին շիինի, դու դիտացիր, որ այսոր գործն ի յատար իրաց է, որպես ի վերն յիշեր եմ (ԱԱԱ, 4):

6. Շրջադասություն (ինվերսիա).— Շրջադասությունը նախադասության անդամների շարահյուսության ընդունված կարգի փոփոխությունն է: Ուստի հնարանք է և նպատակ ունի շարահյուսության խախտմամբ ուշադրություն հրավիրել այն բառի կամ արտահայտության վրա, որը տվյալ դեպքում կարևոր է: Օրինակ՝ Քաղաքից լսվում է մի ձայն: Կարծես աղաղակ է. Ահով է լցված օդը (Չարենց): Հմմտ. Մի ձայն է լսվում քաղաքից: Կարծես աղաղակ է: Օդը լցված է ահով:

Վերջին նախադասությունը ձևակերպված է հայերենի շարահյուսության կանոնների պահպանմամբ, բայց չունի այն արտահայտման պատկերավորությունը, ինչ որ բնօրինակը:

Շրջադասությունը շարահյուսական անհետևողականություն համարելիս նկատի ենք ունեցել միջին հայերենում շրջադասության այնպիսի արտահայտությունները, որոնք առաջանում են ոչ թե որպես խոսքի հնարանք, այլ որպես քերականական և ոճական սխալ կամ անկապակցություն: Նախադասության անդամների սխալ շարահյուսությունը այստեղ ստեղծում է անհասկանալիու-

թյուն և ոճական անհարթություն: Այսպես, օրինակ, հայերենի զարգացման բոլոր շրջաններում էլ ընդունված կանոն է նախադասության մեջ համադասական շաղկապով համագործանգամների իրար մոտ շարադասվելու: Այս սկզբունքի խախտումը առաջացնում է շարահյուսական անհետևողություն. ինչպես՝ Ապա թէ ուրդի, որ ի ճանուպահ հարամիք ի վերայ ընկնին ու կամ յայլ տեղ, որ կամենան զինքն ու զիր ընկերքն սպաննել, նա վասն այնոր սպաննել զթշնամին անձին իւրոյ, Երթայ առ Եպիսկոպոսն (ՍԳԳ, 37): Հմմտ. Ապա թէ ուրդի, որ ի ճանապարհ ու կամ յայլ տեղ հարամիք ի վերայ ընկնին, որ կարենան զինք ու զիր ընկերքն սպաննել...

Նրբեմն շարադասության խախտումը արտահայտված այսպիսի շարահյուսական անհետևողությունը միացնում է նախադասության որոշակի իմաստը: Օրինակ՝ Եւ յորժամ այս խոտէն յում զլուխն ցաւի՝ կախեն, զլխուն ցաւիլն խաղուի (ԱԱԱ, 84):

Ժամանակակից հայերենով այս նախադասության իմաստը կարելի է մեկնարանել՝ ա) Երբ ում զլուխը այս խոտից (իմա՝ խոտի պատճառով) ցավի, կախեն, զլխի ցավը խաղաղվի, բ) Երբ ում զլուխը ցավի, այս խոտից կախեն, զլխի ցավը խաղաղվի:

Առաջին իմաստը, պարզ է, հակասում է բնօրինակի ներքին բովանդակությանը, որովհետև Լամիրզովյաթ Լամսիացին «Լեռնդիտաց անուկտ» բժշկական աշխատանքում նույնպես ունի բնության մեջ գտնվող բոլոր բույսերի ու դեղամիջոցների օգտակար կողմերի նկարագրությամբ օգնել հիվանդությունների բուժմանը, հետևաբար նա խորհուրդ չէր տա զլխացավով հիվանդին կախել, իմաստ, որ անհեթեթ է, բայց բխում է նախադասության քերականական ու շարահյուսական կառուցվածքից: Հետևաբար այս նախադասությունը շարադասված պետք է լիներ այսպես. Եւ յորժամ յում զլուխն ցաւի՝ այս խոտեն կախեն, զլխուն ցաւիլն խաղուի:

7. Ուղղակի և անուղղակի խոսքի Բերականական հատկանիշների խառնում.— Միջին հայերենին ուրիշի խոսքի անուղղակի հաղորդման ձևը հատուկ չէ՝ նույնիսկ ու. զի. րլ. շաղկապներով կապակցվելիս՝ ուրիշի անուղղակի խոսքը պահպանում է ուղղակի խոսքի բոլոր հատկանիշները, այն է՝ դերանվան ու բայական ձևերի ուղղակի խոսքին հատուկ դիմային հարաբերումը, կոշականների, բացականչությունների պահպանումը և այլն: Օրինակ՝ Շահ Սլէյման թագաւորէն բռաղամ Եկաւ Երևան, Սէֆիդուլի խանին վերայ, րէ այդ հայ զառարի խօջայ Սիւմոնտ զայ Ըսպահան (ՋԱՌ, 82):

Նրբեմն հեղինակային խոսքի և ուրիշի ուղղակի խոսքի արտահայտման պլանների այսպիսի խառնումը առաջացնում է երկիմաստություն: Օրինակ՝ Եւ մարդ մի այլ կայր յիմ ժամանակին, Եւ կարծեր թէ Լեռնդիտի Լամ, բայց բժշկապետերն ճարտար էին, յարճըճէ սաղաւարտ զուղեցին և ի զլուխն Եղին և երբ ի զլուխ ծանրացաւ՝ ապա զիտաց թէ զլուխ ունիմ (ՂՀ, 362): Կարելի է սխալ կերպով կարծել, թե զլուխ ունենալու կամ չունենալու մասին կասկածում է խոսողը՝ հեղինակը, միևնույն ժամ մարդերը «մարդուն» են: Այս նախադասությունը քերականորեն ճիշտ կլիներ այսպես. Եւ մարդ մի այլ կայր յիմ ժամանակին, և կարծեր թէ Լեռնդիտ է, բայց բժշկապետերն ճարտար էին, յարճըճէ սաղաւարտ զուղեցին և ի զլուխն Եղին և երբ ի զլուխ ծանրացաւ՝ ապա զիտաց թէ զլուխ ունի:

Բայց սա կլինի ուրիշի անուղղակի խոսք, որը միջին հայերենում, ինչպես ասվեց, գոյություն չունի:

Շարահյուսական կառուցվածքային անհետևողություն է առաջանում նաև այն դեպքերում, երբ ուրիշի ուղղակի խոսքը հեղինակային խոսքին միանում է առանց ասացական բայի կամ նույնիսկ շաղկապի, որը միշտ հատուկ է քննվող այսպիսի կառուցվածքներին: Օրինակ՝ Օրիկ մի շելար շեկիր՝ ինչ կանես կամ ոնց կու լինիս (ՆՔ, 166): Եթե այս նախադասության առաջին և երկրորդ մասերը կապակցվեին ասեիք կամ շախի բառերով, ապա այն կլիներ ուրիշի ուղղակի խոսքի բնորոշ արտահայտություն: Բայց միջին հայերենում այդպիսի փաստի չենք հանդիպել:

Շաղկապներն ու կապակցող բառերը բարդ նախադասության մեջ իրենց հատուկ շեշտված դիրքով ու հնչերանդով դառնում են այն հիմնական մեխք, որ ամրացնում են նախադասության մասերը: Դրանց սխալ գործածությունը կամ զեղչումը առաջացնում է շարահյուսական անկապակցություն, որն արտահայտվում է հետևյալ ձևերով.

1. Հարաբերյալ ու հարաբերական բառերի զեղչում.— Մեծ մասամբ կապակցման միջոցների պատճառով շարահյուսական անհետևողություն ստացվում է այն դեպքերում, երբ հարաբերական կապակցության մեջ բաց է թողնվում դիտվոր նախադասության հարաբերյալ բառը: Օրինակ՝ Մուկն ու խաւարն է գիս պատել, որ այլ լուսոյ ճար չունենամ (Ֆր., 254): Այս նախադասությունը շարահյուսորեն ճիշտ ձևակերպված կլիներ, եթե երկրորդ նախադասության մեջ ուր-ը չլիներ. Մուկն ու խաւարն է գիս պատել, այլ լուսոյ ճար չունենամ: Սակայն ուր բառի ներկայությունը հուշում է, որ նախադասության առաջին և երկրորդ մասերը կապված են ստորադասական հարաբերությամբ և զրկիտվոր մասում հարաբերյալի առկայությունը անհրաժեշտ է: Հմտ. Մուկն ու խաւարն գիս հանց է պատել, որ այլ լուսոյ ճար չունենամ: Այսպիսով, ստորադասական նախադասության դիտվոր մասում հարաբերյալ բառի բացակայությունը առաջացրել է հնչերանգային ու իմաստային անավարտություն, նպաստել նախադասության ամբողջական իմաստի քաղման շանակությանը:

Երբեմն կառուցվածքային տարրերից մեկի այսպիսի զեղչումը խիստ ազդում է իմաստի վրա: Օրինակ՝ Ու կարեն ձեռնադրել Լպիսկոպոսունք, օրհնել մեռոն, բայց ոչ յայլ մեռոնէն մասն ունենան, որ խառնեն ի ներք (ՄԳԴ, 40): Գիշտ կլիներ՝ Ու կարեն ձեռնադրել Լպիսկոպոսունք, Օրհնել մեռոն, բայց հայնց, որ յայլ մեռոնէն մասն ունենան, որ խառնեն ի ներք:

Հանդիպում են նաև հարաբերական բառի բացթողման դեպքեր, ինչպես՝ նա երբ կարէ հանց բան ասել, ով որ կարդայ արհնէ դնա (Ֆր., 287): Հմտ. նա երբ կարէ հանց բան ասել, ուր ով որ կարդայ արհնէ ըզնա: Հարաբերական բառի զեղչումը այս նախադասության մեջ արդարացվում է զրվածքի բնույթով. ուր բառի ավելացմամբ բանաստեղծության հանգր խախտվում է: Բացի դրանից, կառաջանար նույնանման բառերի (ուր, ով ուր) կրկնություն: Սակայն նույն այս նախադասությունը կարելի է փոխակերպել այնպես, որ բերականորեն և բովանդակությամբ ճիշտ լինի՝ նա երբ կարէ հանց բան ասել, որ ով կարդայ արհնէ դնա:

2. Կապակցական միջոցների գործառուրան խախտում.— Այս երևույթը տարրելվում է շարահյուսական անհետևողության մյուս արտահայտություններից նրանով, որ այն հանդես է գալիս ոչ թե որպես պատահական

սխալ, այլ տվյալ շրջանի համար որպես սովորական երևույթ, խոսքն այն-
դեպի մասին է, երբ ստորագասական նախադասությունը կապակցող հարա-
բերական բառը հանդես չի գալիս իր բուն դերով. դրա փոխարեն գործածվում
է մի ուրիշ բառ, մեծ մասամբ՝ անձնական դերանուն, որը իր վրա է վերցնում
երկրորդական նախադասության բառական միջավայրում քերականական հա-
մաձայնության դերը: Քերականական-ոճական այսպիսի արտահայտությունը,
ինչպես տեսանք, շատ գործածական է որոշիչ երկրորդական նախադասու-
թյունների կապակցման մեջ: Օրինակ՝ Ի հոն հանցեղ բաղնիք մի կայր, որ իր
նման իսկի չկայր (Ֆր., 474), Եւ դտնօղն, որ դրաստն առին յիրմէ, երթայ հետ
այնոր (ՍՍԱ, 63):

Ինչպես տեսնում ենք, որոշիչ երկրորդական նախադասությունը կապակցող
հարաբերական բառը իր նախադասության ստորոգյալի հետ թվով և զլխավոր-
նախադասության որոշյալի հետ հոլովով համաձայնելու դերը բաժանել է
նույն նախադասության մեջ հանդես եկած անձնական դերանվան հետ: Բեր-
ված նախադասությունները կարելի է փոխակերպել հետևյալ ձևով՝ Ի հոն հան-
ցեղ բաղնիք մի կայր, որոյ նման իսկի չի կայր, Եւ գտնօղն, որոյ դրաստն ա-
ռին, երթայ հետ այնոր:

3. Շաղկապների գործածության սկզբունքների խախտում.— Բարդ նախա-
դասության կապակցության միջոցների մեջ առանձնահատուկ տեղ են զրա-
վում շաղկապները՝ իրենց տարբերակված գործածությամբ: Նրանք շաղկապը
հաղորդվելիք խոսքին տալիս է իմաստային այնպիսի նրբություն, որը մի այլ
միջոցով վերարտադրել հնարավոր չէ, երբեմն էլ նախադասության արտա-
հայտած իրական իմաստը քերականական ձևակերպման այնպիսի պահանջ է
առաջացնում, որի դեպքում շաղկապի գործածությունը ընտրությամբ չի որոշ-
վում այլ անհրաժեշտարար: Այս սկզբունքների խախտումը առաջացնում է
շաղկապների սխալ գործածության մի քանի դեպքեր:

ա) Շաղկապների գործառնական փոխանցումներ.— Միջին հայերենին բնո-
րոշ է բարդ նախադասության կապակցման դերով հանդես եկող շաղկապների
ու շաղկապային բառերի բազմագործառնական կիրառությունը և դրա հետ
կապված՝ դրանց բազմիմաստությունը: Շաղկապների սխալ ընտրությունը
երբեմն հասցնում է այնտեղ, որ շաղկապի արտահայտած իմաստը բացահայ-
տորեն հակադրության մեջ է մտնում նախադասության իրական բովանդակու-
թյան հետ: Օրինակ՝ ...Ձի ղեղերուն բնութիւնն զետ սլեհ է, ու կռվուն ժամն
հաքիմն որպես սլեհտար է (ՂԶ, 18): Ինչպես տեսնում ենք, նախադասության
արտահայտած իրական բովանդակությունը թելադրում է հակադրա-դուգա-
դրական հարաբերությամբ կապակցություն: Հմմտ. ...Ձի ղեղերուն բնութիւնն
զետ սլեհ է, իսկ կռվուն ժամն հաքիմն որպես սլեհար է:

Ըստ ընկալման, շաղկապի սխալ գործածություն կարելի է համարել նաև
հետևյալ օրինակները. Ապա թէ կինն մեռել լինի՝ նա ազատ է այրն, որ կարէ
այնել զիր անծառութիւն իրրն և զուպրանքն՝ զինչ իր պիտիք (ՍՍԱ, 21), Եւ
երբ փոխեցի ես՝ յուղարկեցի դարձեալ ի յԱնտաքոյ դարպասն, որ զիմընդդի-
մեցին և հաստատեցին իրենց ձեռնդրերովն և վկայութեամբն ու ստոյգ է և
ըզորդ բան բանիք (ն. տ. 3): Հմմտ. Ապա թէ կինն մեռել լինի՝ նա ազատ է
այրն և կարէ այնել զիր անծառութիւնն..., Եւ երբ փոխեցի ես՝ յուղարկեցի
դարձեալ յԱնտաքոյ դարպասն, որ զիմընդդիմեցին...

Պետք է նկատել, որ այս առումով ու շաղկապը ամենից շատ է իր վրա

վերցնում ուրիշ շաղկապների իմաստային դերը: Օրինակ՝ Արդ, դրեցաւ սուրբ և աստուածաշունչ մատենաս առ ոտս սուրբ առաքելոյս Գամաշիէլի... ի դառն և վշտաբեր ժամանակիս, որ (երբ—Լ. Կ.) աշխարհս լի էր տառապանօք՝ երաշտութեամբ, գերութեամբ» (ԺԿ, Հիշատակարաններ, 514):

Նրբեմն շաղկապի ոչ թէ լիովին սխալ, այլ անհամապատասխան գործածությունն առաջացնում է բարդ նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերության բազմիմաստություն: Այսպես, օրինակ՝ պայմանի ստորագոյսական նախադասությունները միջին հայերենում կապակցվում են զուգադիր շաղկապներով. զուգադրության առաջին բաղադրիչները լինում են ու, թէ, յո՞ժամ, երբ շաղկապները: Այն դեպքում, երբ սրանց իմաստային տարբերությունները նկատի չեն առնվում, և մի շաղկապի փոխարեն գործածվում է մյուսը (հատկապես ու բազմադործառական շաղկապը), առաջանում է երկիմաստություն: Օրինակ՝ եւ արդ որ կամի ճշմարտութեամբ ուղղել զԱնսիզն և զիրաւունքս, նայ այս է ըղորդ Անսիզն Անտաքոյ (ՍԳԴ, 3): Այս նախադասությունը կարելի է հասկանալ երկու ձևով՝ 1) եւ արդ, ով կամենում է ճշմարտութեամբ ուղղել անսիզները և իրավունքները, ապա այս է Անտիոքի ճիշտ անսիզը, 2) եւ արդ, եթէ կամենում է ճշմարտութեամբ ուղղել անսիզները և իրավունքները, ապա այս է Անտիոքի ճիշտ անսիզը:

Շաղկապային փոխանցումների այսպիսի դեպքերը մասամբ բացատրվում են նաև նրանով, որ որոշ շաղկապներ դեռևս կայունացած չեն իրենց հիմնական ֆունկցիաների մեջ:

բ) Անշաղկապություն.— հոսքն այստեղ վերաբերում է այնպիսի անհետևողության, երբ շաղկապը բաց է թողնված, բայց նրա անհրաժեշտությունը կա նախադասության ամբողջական իմաստը ըմբռնելու և կապակցությունը շարահյուսորեն ճիշտ ձևակերպելու համար: Օրինակ՝ Բայց պիտի, որ սլնհտարն գիտուն լինի զպետքն որպէս տան զսլնհն (ՂԷ, 351): Հմմտ. Բայց պիտի որ սլնհտարն գիտուն լինի զպետքն, թէ որպէս տան զսլնհն:

գ) Բազմաշաղկապություն.— Շարահյուսական այսպիսի անհետևողությունը հանդես է գալիս միեւնույն նախադասության կազմում տարբեր շաղկապների՝ իրար կողքի գործածությամբ, որ ճապաղ ոճ է ստեղծում: Օրինակ՝ Ապա թէ ով գիտէ որ յետի ալրկանն դստերքն մեռնին, նա թէ ու կենայ հայրն կենդանի, նա մեռակ դառնայ հայրենիքն ի յառջի ալրկանն դստերքն (ՍՍԱ, 39):

դ) Շաղկապի ավելորդ գործածություն.— նախադասության անդամների միջև առանց անհրաժեշտության դրվում է շաղկապ, մեծ մասամբ և համադասական շակապը: Օրինակ՝ Եթէ այրն և եթէ կինն որ ու լինի և ունենան որդիք և կամենան տիաթիկ այնել, ու տաույելցել լինան և անճարկել... (ՍՍԱ, 53), իմաստուն մարդն ու սուրբ աղբիւր ջրոյ է, Որ ծարաւ լինք դիմէ, զնա արքուցանէ (ԶԵ, 188):

Ամփոփելով նշենք, որ նկատված փաստերը չեն սպառում միջին հայերենում սեղ գտած շարահյուսական, առհասարակ քերականական անկապակցությունների բոլոր դեպքերը: Միևնույն ժամանակ մասնաճիւղային ուսումնասիրությունը և լեզվական վերլուծությունը անհրաժեշտ է ոչ միայն հայերենի զարգացման քննվող շրջանի մասին մեր ըմբռնումները հարստացնելու, այլև ընդհանուր լեզվաբանական այնպիսի հարցերի մեկնաբանման համար, ինչպիսիք են խոսքի հոգեբանությունը, լեզվի նորմավորումը և այլն:

ՕԴՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբելյան Մ.. Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940:
2. Աբելյան Մ.. Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
- Հա. Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:
3. Աբրահամյան Ա.. Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ (ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 4):
4. Աբրահամյան Ա.. Գրարարի ձևակերպ, Երևան, 1958:
5. Աբրահամյան Ա., Հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962:
6. Աբրահամյան Ա.. Չթերվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965:
7. Աբրահամյան Ա.. Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969:
8. Ալիշան Ղ.. Սխառան, Համագրություն Հայկական Կիլիկիոյ և Լևոն Մեծագործ, Վենետիկ, 1885:
9. Ակնարկներ միջին զրական հայերենի պատմության, Ա, Երևան, 1972:
10. Աղայան Է.. Որակական անցումները լեզվի մեջ (ԳԱ «Տեղեկագիր», 1952, № 9):
11. Աղայան Է.. Հայ լեզվաբանության պատմություն, Երևան, հ. 1, 1958, հ. 2, 1962:
12. Աղայան Է.. Հայոց լեզվի պատմության հարցերը նորագույն ուսումնասիրություններում (Պատմա-բանասիրական հանդես, 1962, № 1):
13. Աղայան Է.. Գրարարի քերականություն, հ. 1, գ. Ա, Երևան 1964:
14. Աղայան Է.. Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:
15. Անառյան Հ.. Արմատական բառարան, հ. 1—7, Երևան, 1926—1935:
16. Անառյան Հ.. Հայոց լեզվի պատմություն, Երևան, հ. 1, 1940, հ. 2, 1951:
17. Անառյան Հ.. Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1—5, Երևան, 1952—1965:
18. Այտրենյան Ա.. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866:
19. Առաքելյան Վ.. Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957:
20. Առաքելյան Վ.. Հայերենի շարահյուսություն, Երևան, գ. Ա, 1958, գ. Բ, 1964:
21. Առձեռն բառարան հայկազենեան լեզուի, Վենետիկ, 1865:
22. Բիւլանդացի Ն., Բառագիրք ստորին հայերենի ի մատենադրութեանց ժԱ—ԺԷ դարուց, Ստոկհոլմ, 1884 (ձևագիր):
23. Դուրկանյան Գ.. Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963:
24. Դրիզոբյան Ա.. Ս. Ղազարյան, Միջին հայերեն (գրախոսություն), Պատմա-բանասիրական հանդես, 1962, 3—4:
25. Կաբուտ Յ.. Հայերենի էր. նի. ուի. տի հոգնակերուները («Ցանդիս ամսօրեայ», 1903):
26. Դուզարյան Ա.. Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954:
27. Դուզարյան Ա.. Միջին հայերեն, գ. Ա, Երևան, 1960:
28. Դարբիրյան Ա.. Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937:
29. Դարբիրյան Ա.. Հայերենի անվանական հոլովման զարգացման երկու ներքին օրենքները (ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 8):
30. Մալխասեանց Սո.. Գրարարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892:
31. Մելիս Ա.. Աշխարհաբարի մէջ աղգական անուան սեռական «ոչ»-ով («Բանասէր», հ. 2, 1899):
32. Մելիս Ա.. Հայերենի մէջ «յամսեան» ներգոյականը («Բանասէր», հ. 2, 1899):

33. Յովնանեան Ղ., Միջնադարեան ազգային տաղաչափութիւն («Յանդէս ամսօրեայ», 1895—1896)։
34. Յովնանեան Ղ., Հետազոտութիւնք նախնեաց ռամկերէնի վրայ. մասն առաջին, տետր Ա և Բ, Վիեննա, 1897։
35. Շաքաբխանյան Պ., Դրաքարի ուղեցոյց. Երևան, 1967։
36. Զարիսխան Վ., Քերականութիւն հայկազնեան լեզուի, Վիեննա, 1885։
37. Պապոյան Ա., Կախալ շարահարութիւյամբ բարդ նախադասութիւնները արդի հայերէնում, Երևան, 1968։
38. Պառնասյան Ն., Ստորադասական կապակցութիւնները արդի հայերէնի բարդ նախադասութիւնում, Երևան, 1961։
39. Պառնասյան Ն., Անշաղկապ բարդ նախադասութիւնները ժամանակակից հայերէնում («Լեզվի և ոճի հարցեր», ժողովածու, հ. 2), Երևան, 1964։
40. Պառնասյան Ն., Շարահարական համախնները ժամանակակից հայերէնում, Երևան, 1870։
41. Պելեցարն Հ., Նպաստ մը հայ լեզուի պատմութեան, Վիեննա, 1904։
42. Ջանուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատութիւնները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954։
43. Ջանուկյան Գ., Հայոց լեզվի պատմա-համեմատական քերականութեան հիմունքները (ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 4)։
44. Ջանուկյան Գ., Հին հայերէնի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Երևան, 1959։
45. Ջանուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969։
46. Տաշեան Յ., Կիլիկեան հայերէն («Յանդէս ամսօրեայ», 1900)։
47. Автандилян В. А., Историческое развитие склонения имен существительных в армянском языке (автореф. канд. дисс.), Ереван, 1955։
48. Атаян Э. Р., Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, 1968։
49. Бабасян А. С., Грамматическая категория числа в армянском языке (автореф. канд. дисс.), Ереван, 1953։
50. Борковский В. Н., Кузнецов П. С., Историческая грамматика русского языка, М., 1965։
51. Буслев Ф. Н., Историческая грамматика русского языка, М., 1875։
52. Бардуль И. Ф., К вопросу о явлении эллипсиса, «Инвариантные синтаксические значения и структура предложения», М., 1969։
53. Karst J., Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901։
54. Кусикьян Н. К., Очерки исторического синтаксиса литературного армянского языка, М., 1962։
55. Ломтев Т. Г., Основы синтаксиса современного русского языка, М., 1958։
56. Петросян А., Категории определенности и неопределенности, лица и вещи в армянском языке (автореф. канд. дисс.), Ереван, 1954։
57. Пешковский А. М., Русский синтаксис в научном освещении, М., 1938։
58. Руднев А. Г., Синтаксис современного русского языка, М., 1968։
59. Современный русский язык. Синтаксис, под ред. Е. М. Галкиной-Федорук, М., 1957։
60. Спринчак Я. А., Очерк русского исторического синтаксиса, Киев, 1960—64։
61. Стеценко А. Н., Сложно-сочиненное предложение в древнерусском языке, М., 1962։
62. Туманян Э. Г., Очерки исторического развития падежных форм новоярмянского литературного языка, М., 1962։
63. Туманян Э. Г., Артикли в современном армянском языке, М., 1963։
64. Якубинский Л. П., История древнерусского языка, М., 1953։

ԱՆՎՐԱՆԱԳՐՑՈՒՐՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՀԱՄԱԽՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԱԱԱ — Ամիրտովյարի Ամասիացւոյ Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, Վիեննա, 1926:
2. Ագաթ. — Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:
3. ԱՕԲ — Ամիրտովյար Ամասիացի, Օգոստ բժշկութեան, Երևան, 1940:
4. Բիւզ. — Փառատոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:
5. ԳԱ — Գրիգորիս Աղթամարցի, Ուսումնասիրություն, քննական քնադրեր և ծանոթագրություններ Մայիս Ավդալբեգյանի, Երևան, 1963:
6. ԳՎ — Գիրք վաստակոց *Знаменное*, իարգմանութիւն նախնեաց յարարացի լեզուէ, Վենետիկ, 1877:
7. Գր. — Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց, Աշխատասիրությամբ Ա. Ա. Կժոյանի, Երևան, 1962:
8. ԳՔԱԵ — Գամառ Փաթիպա, Ազգային երգարան հայոց, Ս. Պ. -բուրգ, 1856:
9. ԴԶՎ — 1 — Դիվան հայ վիմագրության, պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966:
10. ԴԶՎ — 2 — Դիվան հայ վիմագրության, պրակ II-ր Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960:
11. ԴԶՎ — 3 — Դիվան հայ վիմագրության, պրակ III, Վայոց ձոր, Եղեղնաձորի և Աղիդրեկովի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967:
12. Եզն. — Եզնեկայ վարդապետի Կողբացւոյ Նշծ աղանդոց, Թիֆլիզ, 1914:
13. Եղիշէ — Եղիշէ, Վասն վարդանայ և Հայոց պատերազմին:
14. ԶԱՕ — Զաքարիա Ազուլցու օրագրությունը, Երևան, 1938:
15. ԷԴ — Edouard Dulaurier, Recueil des Historiens des Croisades, Documents Arméniens, Paris.
16. ԷՄԱ — Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, խմբագրությամբ և առաջաբանով Կ. Մելիք-Յահնջանյանի, Երևան, 1957:
17. ԽԿ — Մ. Թ. Ավդալբեգյան, Խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958:
18. ԿՆ — Կոստանդին Նրզնկացի, Տաղեր, աշխատասիրությամբ Արմենուհի Սրապյանի, Երևան, 1962:
19. ՀԱԳ — XIII — XV դարերի հայ աշխարհիկ գրականություն, Ընտիր նմուշներ, կազմեց՝ Մ. Մկրյան, Երևան, 1938:
20. ՀԵ — Արմենուհի Սրապյան, Հովհաննես Նրզնկացի, Ուսումնասիրություն և քննադրեր, Երևան, 1958:
21. ՀԹ — Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, աշխատասիրությամբ Էմ. Պիվադյանի, Երևան, 1960:
22. ՀՄԺԵ — Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956:
23. ՀՍ — Հովասափ Սեբաստացի, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ Վ. Պ. Գևորգյանի, Երևան, 1964:
24. ՂԸ — Ղևոնդ Վ. Յովնանեան, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, Ուսումնասիրութիւնք և բաղոյածքներ, մասն առաջին, Ռամկօրէն մատենագրութիւն, տետր Ա և Բ, Վիեննա, 1897:
25. ՄԸ — Միսիթարայ բժշկապետի Հերացւոյ Զերմանց միսիթարութիւն, Վենետիկ, 1832:
26. ՄՂ — Ա. Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, Ուսումնասիրություն և քննադրեր, Երևան, 1958:
27. ՄՆ — Մկրտիչ Նաղաշ, Աշխատասիրությամբ Էդ. Խոնդկարյանի, Երևան, 1965:
28. ԵԿ — Josef Karst, Historische Grammatik des Kilitisch-Armenischen, Strassburg 1901.

29. ՆԸ — Նաղաչ Հովնաթան. Թանաստեղծություններ. Ժողովածուն պատրաստեցին Ասատուր Մնացականյան և Շուշանիկ Նաղարյան, Երևան, 1951:
30. ՆՇ — Տն. Ներսեսի Շնորհալույ Հայոց կաթողիկոսի Բանք չափաւ, Վենետիկ, 1928:
31. ՆՔ — Նախապետ Քուչակ, Հայրենի կարգավ, Երևան, 1957:
32. ՆՔԴ — Նահապետ Քուչակի Դիւանը, հրատարակեց Արշակ Զոպանեան, Փարիզ, 1902:
33. ՍԻԴ — Դատաստանագիրք Սմբատ Իշխանի (Գունդուտարի), Կիլիկեան դատաստանագիրք XI-րդ դարի, ձեռագրի համեմատութեամբ լոյս ընծայեց վարդապետ Ղյտենեան, Էյմիածին, 1918:
34. ՍՍԱ — Սմբատ Սպարապետ, Անսիզ Անտիոքայ, Վենետիկ, 1876:
35. ՍՍԴ — Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Հավաքական տեքստը, ուսուցիչներ Բարգմանությունը, առաջարկներ և ծանոթագրությունները Ա. Գ. Դալստյանի, Երևան, 1958:
36. ՍՍՏ — Տարեգիրք Սմբատայ Սպարապետի, Փարիզ, 1859:
37. ՎԱԱ — Հատընտիր առակք Վարդանայ վարդապետի, Փարիզ, 1825:
38. ՎԱ կամ ՎԱԱ — Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ. Ս. Պետերբուրգ, 1894:
 ՎԱ-2 — Ն. Մառ, Ժողովածոյք..., հավելված II:
 ՎԱ-3 — Ն. Մառ, Ժողովածոյք..., հավելված III:
 ՎԱ-5 — Ն. Մառ, Ժողովածոյք..., հավելված V:
 ՎԱ-6 — Ն. Մառ, Ժողովածոյք..., հավելված VI:
39. Վիմ. տար. — Վիմական տարեգիրք, Յուդայի Ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913:
40. ՎԼ — Victor Langlois, Le Tresor des Chartes L'Armenie ou Cartulaire de la chancellerie Royale des Roupeniens, Venise, 1863:
41. ՏՎԱ — Տաղ վասն ակոյաի (Յանդէս ամսօրեայ, 1930):
42. Ֆր. — Ֆրիկ, Դիւան, ի լոյս ընծայեց Տիրայր արքեպիսկոպոս, Նյու-Յորք, 1952:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՁԵՎԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ ո յ ո Վ ու մ

Հոլովման համախառն խմանական առանձնահատկությունները	7
Անվանական հոլովում	9
Հոլովման տիպերը	9
Թվի քերականական կարգը	34
Հոլովի քերականական կարգը	63
Որոշյալության քերականական կարգը	72
Անունների հոլովման հարադրույթները	80
Դերանվանական հոլովում	83
Դերանունների հոլովման հարադրույթները	91
Միջին հայերենի հոլովման համակարգի պատմական զարգացումը	100
Հավելված (Ի հոլովման պատկանող անունների ցանկ)	110

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Պարզ նախադասություն

Պարզ նախադասության տեսակները	133
Իրկկազմ և միակազմ նախադասություններ	133
Համառոտ և ընդարձակ նախադասություններ	141
Թերի նախադասություններ	143
Նախադասության տեսակներն ըստ բնույթի	149


Նախադասության անդամների շարահյուսական հաջորդությունները

Ինքնակալական հարաբերություններ	153
Որոշյալին հարաբերություններ	162
Խնդրային հարաբերություններ	171
Պարագայական հարաբերություններ	179
Կոչականը միջին հայերենում	187
ՆՔՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	189

Թարք նախադասություն

Ձ ո ղ Վ ա ձ ո Վ Ի պ ա կ ց ու յ ու մ	192
Թարք ստորադասական նախադասություն	192
Ինքնակա երկրորդական նախադասություն	192
Ստորոգյիական երկրորդական նախադասություն	197
Որոշիչ երկրորդական նախադասություն	199
Բացահայտիչ երկրորդական նախադասություն	204
Հատկացիչ երկրորդական նախադասություն	207
Խնդիր երկրորդական նախադասություններ	207

Պարագա երկրորդական նախադասություններ	220
Րարդ նամականական նախադասություն	245
Շ ա ր ա ֆ ա ր ա Կ ա ն Կ ա ղ ա Կ ց օ ր Ե ւ Ն	270
Անկախ շարահարության րարդ նախադասություններ	271
Կախյալ շարահարության րարդ նախադասություններ	274
Հ ա Վ Ե Ղ Վ Ա Ժ	282
Ուրիշ խոսքի քերականական արտահայտությունը <i>ձիւղն</i> հայերենում	290
Օգտագործված դրականության ցանկ	295
Սկզբնաղբյուրներն ու նրանց համառոտագրությունները	300



ԱԿՆԱՐԿՆԵՐ ՄԻՋԻՆ ԳՐԱԿԱՆ
ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Բ

Տպագրվում է Հայկ. ՍՍՀ ԳԱ
Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
Գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Հ. Գ. ՀԱԿՈՐՑԱՆ
Կարիշ
Հ. Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ԶԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ Մ. Վ. ՀԱԿՈՐՑԱՆ

ՎՅ 04122

Պատվեր 998

Հրատ. 3819

Տպաքանակ 1500

Հանձնված է չարվածքի 30. 12. 1974 թ., տարագրված է տպագրության 24. 10. 1975 թ.:


Տպագրական 19,0 մամուլ, հրատ. 22,1 մամուլ, պայման. 28,6 մամուլ:

Թուղթ N 1, 70X1081/16, գինը 2 ռ 17 Կ.

Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան—19, Բարեկամության 24դ

Издательство АИ Армянской ССР, Ереван, Барекамутян 24г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



FL0073728

A ^{III}
4366